Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

766

202.3
П-75

1880

2010

ԻՐՔ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԱՇԽԱՐՀԻՆ

ՕՐԱԳԻՐ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

202.3
Ч-75

ԻՐՔ

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԱՇԽԱՐՀԻՆ

ՕՐԱԳԻՐ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

ԳՐԵԱՑ

ՏԷՐ ՊՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ

ՎԱՂԵՄԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԹՈՌԱԿԱԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
ԲԱՐԻՋՈՒ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԹՈՌԱԿԱԼ ՊՈՐՏՈՅԻ, ՎԱՐԺԱՊԵՏ Ի ՍՈՐՊՈՆ
ՄԵԾԱՒՈՐ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԺԻՒԻԼԵԻ
ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԱԻՔՍԵՆՏԻՈՍ Վ. ԳՈՒՐԳԵՆԵԱՆ

281



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

20389-60

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1880

ՀՀ030.ա.հ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Տէր Պոթէն քահանային այս գիրքս՝ զոր այժմ կը հրատարակեմք՝ ինքն մեռնելէն քանի մի շաբաթ յառաջ ամբողջապէս աւարտած և ձեռագիրն իր տպագրողին յանձնած էր. և մեծ ուրախութիւն կիմանար իր կենաց ընթացքն այս գործովս աւարտելուն համար՝ որ իր կրօնական և իմաստասիրական երկասիրութեանց համառօտութիւնն է, և որոյ մէջ կերևի սուրբ ծերութեան պատկանաւոր՝ հեզութեան և հասուն մտաց դրոշմն. ինքն ստէպ կը խօսէր այս իւր գործոյն վրայ իր բարեկամաց հետ 'ի վերջին աւուրս կենաց իւրոց՝ զոր հաւատարմութեամբ նուիրեալ էր ընդ ամս քառասուն և աւելի ի քարոզել զՅիսուս Քրիստոս բանիւ և գրով։

Ուստի մեք ալ այնոր հրատարակութեանն ձեռք զարկինք՝ որդիական սիրոյ նուիրական պարտքերնիս կատարելու դիտմամբ։

ՏԷՐ ՏԸ ՌԷՆԵԻ ՔԱՀԱՆԱՅ
Պատուոյ Կանոնիկոս Վերտեօնի

Ի Ժիւիլեի 19 Մարտի 1868։

ԻՐՔ

ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԱՇԽԱՐՀԻՆ

ՕՐԱԳԻՐ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

Արդի վիճակ

2 Նոյեմբեր:

Պլատոնի Տրամախօսութեանց միոյն մէջ ասացեալ է թէ Դելփիսի պատգամն հրամայել էր որ տաճարին վրայ այս խօսքս գրեն. γνῶθι σεαυτόν Ծանիր ղքեզ: Եւ յիրաւի ծանօթութիւն անձին իմաստասիրութեան հիմն է. բայց նոյն իսկ իմաստասիրի համար՝ դիւրին բան չէ՝ որպէս որ կարծուի: Եւ սակայն ես պիտի ջանամ այսոր հասնելու. որովհետև ուրիշ ժամանակներէ աւելի՝ այժմ առաւել կը զգամ այնոր հարկաւորութիւնն. վասն զի ամենևին ոչ գիտեմ թէ ո՛ւր եմ, և ի՛նչ եմ: Ահաւասիկ երեսուն տարի է որ իմաստասիրեմ կամ այլոց ուսուցանեմ իմաստասիրել, և շատ հին և նոր գրքեր կարդալէն ետև՝ յորոց իմ ուսուցածներուս նիւթն քաղած եմ, իմ խորհուրդներս զարթուցանելու համար՝ այլոց

խորհուրդներն որոճալով, տակաւին կենաց ծանր առաջարկներն լուծելու հասու եղած չեմ։ Այլ և այլ դարձուածքով զրուցել և կրկնել եմ՝ յառաջ քան զիս եղողներուն հնարած կարծիքն. և սակայն հիմն որ բնառես՝ անձնական կարծիք, ևս առաւել ստուգութիւն մի ունեցած չեմ։

Այս բանս զիս կը ձանձրացնէ, մանաւանդ հիմա որ կենացս կէսն անցած եմ, և դէպ 'ի վախճանն կը խոնարհիմ, և կուզեմ որ պատշաճապէս աւարտեմ այս կեանքս, և այնպիսի կերպով որ ապագայս ապահով լինի. վասն զի քանի որ կենացս յիսուն տարին կը մօտիմ՝ միշտ այս բանիս վրայ կը դառնան իմ մտածմունքս։ Աշխարհիս վրայ այլ մեծ բան մի վաստկելիք չմնաց. ինչ բան որ կարէի յուսալ ընկերական կենաց վիճակի և բաղդի կողմանէ՝ ամենուն ալ հասի. հայրենեացս ունեցած պարտքս ալ վճարեցի իմ ունկընդիրներս ուսուցանելով, և ըստ կարի գերդաստանս պահելով. մանաւանդ որ մի միայն աղջիկ զաւակ ունիմ՝ որոյ դաստիարակութիւնն ալ ինձ բեռն չէ՝ որովհետև արդէն մայրն ուսեալ և առաքինի կին մի է։ Քսան տարիէ 'ի վեր իմաստասիրութիւն ուսուցանեմ՝ որչափ որ կարեմ. և թէպէտ ամենայն ջանքս այս բանիս գործածել եմ՝ սակայն բոլորովին ապահով չեմ. որովհետև շատ կարևոր գիտութիւն մի է, և երկնից և երկրիս ամեն խնդրոց հետ յարաբերութիւն ունի։ Այսչափ տարի ինձ ունկնդիր եղող երիտասարդք՝ տարակոյս չկայ որ իմ կարծիքս իրենց ընթացից հիմն և իրենց գործոց պատճառ բռնած են. ապա ուրեմն զայնս ընդունողաց պատասխանատուութեանն ալ կերպով մի մասնակից եմ. և այս պարտակցութիւնս իմ խիղճս անհանգիստ առնէ։ Արդեօք ինչ որ կարէի առնել արարի՞, մանաւանդ ո՛րչափ որ լաւ կարէի։ Այս բանս ոչ համարձակիմ հաստատելու. և հաւանական է որ պակսած եմ. որով-

հետև մինչդեռ այլոց կենաց գիտութիւնն և զկեանքն իւր ճշմարիտ վախճանին հասուցանելու արուեստն վարդապետելու կը պարտաւորիմ, որ է ասել զիմաստութիւն կամ լաւ ևս ասել զիմաստասիրութիւն, կը տեսնեմ որ ես իմ անձիս համար դեռ նորա ճշմարիտ ճամբայն բնառելու կարօտ եմ, որ իմաստութեան կը հանէ, և ուստի պէտք է որ յառաջ երթամ։

Ի՞նչ է կեանքն, և ի՞նչ է մահն. եթէ ինչպէս որ ասի կեանքն բարիք մի է, ինչո՛ւ ապա մահն զայն կը խզէ. արդեօք միայն կը փոփոխէ՞ զայն և կայլայլէ ու կերպարանափոխէ, թէ ոչէութեան մէջ զայն կը դահավիժէ։ Արդեօք մահն էակաց վերջին վախճա՞նն է, թէ նոր աշխարհի մի դուռն. արդեօք ոչնչութի՞ւն մի է՝ թէ վերանորոգութիւն. և եթէ այս վերջինս է՝ ի՞նչ առնելու է որ մահն պտղաբեր և դեղեցիկ լիցի։ Ահագին և խորհրդաւոր խնդիրներ, զորս փոքր 'ի շատէ խորախորհուրդ կերպով յուզել էի իմ ուսմանցս ժամանակ՝ որովհետև իմ դասախօսութեանցս ալ հարկաւոր էին, բայց պարզապէս իբրև հայեցողական խնդիրներ կենթադրէի՝ որոց առժամայն գործադրութիւնն իմ վիճակիս կարօտ չէի համարել. որով և իմ խորհուրդներս տարտամ և անստոյգ մնային, և նոցա լուծումն այլ ժամանակի թողուի։

Իսկ այսօր ոչ գիտեմ ի՞նչ բանի համար տեսարանն փոխուած կը տեսնեմ։ Հայեցողութիւնն ինձ բաւական ոչ երևի. այլ կուզեմ գործնական հետևանաց հասնել, և բաւական չսեպելով այս կարևոր նիւթոցս վրայ ինչ որ կարէ մարդ խորհիլ և խօսիլ՝ կուզեմ գիտել թէ ի՞նչ բանի հաւատալու է և ի՞նչ գործելու է։ Քանի որ հասուն հասակս հասի՝ կարծես թէ տարուան մէջ տասն տարի ապրել եմ, և ես ալ կը զարմանամ թէ ինչո՛ւ մահուան վրայ կը մտածեմ՝ թէպէտ և առողջութիւնս տեղն է և կեանքս իւր առոյգութեան մէջ։

Բայց գիտելով որ մարդ ամեն հասակի մէջ ալ կարէ մեռնիլ, ուստի ոչ կամիմ մահուանէ ետև գալիքներուն վրայօք ագիտութեան և անստուգութեան մէջ մեռնիլ: Եւ եթէ մարդս ապագայ մի ունի՝ որոյ վրայ ամենևին տարակուսած չեմ, կարժէ որ այս ապագայս պատրաստելու համար սակաւ մի նեղութիւն յանձն առնու՝ և նորա վրայ խորհի: Վասն զի իմաստասիրի մի անարժան և անբանաւոր բան է՝ ուրիշ աշխարհ մի մտնելու համար այս աշխարհէս ելնել՝ առանց կանխաւ այս կարևոր անցից վրայ խորհելու, և առանց մտածելու իւր նոր բնակութեան վրայ՝ ուր որ կարէ տանիլ զինքն այն անցքն, և ուր որ նոր շարք մի իրաց 'ի պատրաստի կան, և թերևս յաւիտենականութիւն մի երջանկութեան կամ թշուառութեան: Երբ այս աշխարհիս մէջ տնէ մի կելնեմք, ամենայն հոգ և խնամք կը բանեցնեմք որ յարմարագոյն բնակարան մի գտնեմք և լաւ կերպով տեղաւորիմք. նոյն բանն առնելու չեմք մեր յետին տեղափոխութեանն համար, և կարեմք այնչափ կոյր և անխոհեմ լինել՝ որ ամենևին չմտածեմք թէ արդեօք ինչ պիտի գտնեմք այս աշխարհէս ելնելէն ետև:

Ահաւասիկ այսպիսի խորհուրդներ են՝ որ ժամանակէ մի 'ի վեր մտացս մէջ կը շրջին, և ոչ գիտեմ թէ ինչու և ուստի յառաջ եկած են: Եթէ սնոտիապաշտ մարդ մի լինէի՝ մօտաւոր ապագայի մի նախազգածմունք պիտի սեպէի, և կամ խորհրդաւոր զօրութեան ազդեցութիւններ, որպէս Սոկրատայ ոգւոյն համար կը զրուցուի: Եւ միթէ այսպիսի բան մի ոչ կարէ լինել. քան Յունաց իմաստունն աւելի իմաստուն լինել միտքս չեմ դրած, որ ամեն բանի մէջ այս անեւոյթ առաջնորդին թելադրութեանցն կը հպատակէր: Բայց որ ինչ և է, որովհետև այս խորհուրդներս ակամայ կերպով իմ հոգիս կը խռովեն՝ սիրտս հանդարտեցնելու համար՝ կուզեմ նոցա ամեն կողմն

համարձակ նկատել իմ ներքին ատենիս՝ այսինքն խղճիս մէջ, զգուշանալով այլոց հետ չխօսելու, որպէս զի ընտանիքս անհանդիստ չլիցի. իսկ պաշտօնակիցքս որ նոյն հոգւոյ տրամադրութեանց մէջ ոչ դտանին՝ եթէ իրենց միտքս բանամ՝ որոց համար թերևս վիճել ալ հարկ լիցի, պիտի ասեն պարզապէս թէ ցնորել սկսել եմ, և այնոր համար կրօնասիրութեան և խորհրդաւորութեան տուել եմ ինքզինքս:

Եւ ոչ իսկ իմ անձիս հետ կուզեմ այս նիւթոցս վրայ վիճաբանիլ. հակառակամարտ պատճառանքէ ալ ձանձրացած եմ, որ իրարու ուժն կոտրելով՝ շատ անգամ զմեզ անստուգութեան մէջ կը թողուն, որով և ըստ պարագայից զիրար չբռնող բաներ կը խօսիմք առանց ներքին համոզումն ունելու: Միայն կուզեմ օր ըստ օրէ թղթի մի վրայ նշանակել՝ ինչ որ մտքէս կանցնի կամ սիրտս ինքնաբերաբար կը զգայ այս նիւթոցս վրայ, առանց խորհրդածութեան, և մանաւանդ առանց հակաճառութեան. վերջապէս Օրագրի մի ձեռք պիտի զարնեմ՝ որ իմ ներքին զգածմանս անդրադարձութիւնն կամ լուսանկարն լիցի՝ ինչ որ մտքէս և սրտէս կանցնի: Իմ գոյութեանս վախճանին վերաբերեալ ճշմարտութիւնն ճանաչելու, և այն վախճանին հասնելու միջոցներն բանեցընելու համար մեծ՝ եռանդեամբ յօգնութիւն անձինս կոչեմ սրտի մտօք այն սուրբ ճշմարտութիւնն՝ ինչ որ է, և իմ հոգիս նորա առջև կը դնեմ հայելւոյ մի պէս, և կաղաչեմ որ ինքն նորա վրայ ինքզինքն տպաւորէ լուսաւոր կերպով, որպէս զի կարացից պարզապէս ընթեռնուլ՝ ինչ որ ինքն յինէն կը պահանջէ. և մանաւանդ ուժ և զօրութիւն տայ զայն կատարելու:

Ի՛նչպէս ճանաչելու է միւս աշխարհի իրերն

3 Նոյեմբեր։

Իմաստասէրք կան որ հաստատեն թէ մեք յաւիտենական նիւթէ մի ելած եմք, և երկրաւոր կենաց փոփոխութիւններէն ետև՝ նորէն ՚ի նոյն պիտի դառնամք։ Եթէ այդպէս է՝ ելնելն ինչ բանի համար է, և ինչ է դարուց այս շարժումս որ առ ոչինչ պիտի աւարտի. յիրաւի ոչ ինչ բանի համար՝ մեծ շփոթութիւն։ Մարդուս խելքն իսկ ցուցանէ՝ որ ամենայն արդեանց՝ պատճառ մի հարկաւոր է, և պատճառ բաւական առ յառաջ բերել զնոյն. Եպիկուրոսի հիւլէից անսահման բաղկացութիւններն՝ իրենց կցորդութեանց կամ ձգողութեանց ձեռօք իր մի չեն կարող յառաջ բերել, և հետևապէս բան մի չեն կարող մեկնաբանել. յաւիտենական և կուրօրէն յուզում մի է՝ որ երեկուան գործածն այսօր կեղծանէ. որով և տիեզերք Պենելոպեայ գործած կտաւին կը նմանի՝ որ ցերեկ գործածն՝ գիշերն կը քակէր։ Այս անպատճառ արտադրութեան օրէնք մի տալու համար՝ դիպուած կամ պատահար բառն հնարուած է. որ այն ալ դարձեալ անտեղութիւն է. վասն զի պատահարն իմաստ չունող բառ է, կամ առ վախճան ինչ հասցնող միջոցներն երբ ոչ գիտեմք՝ պատահար է ասեմք։ Շատ զարմանալի բան լինէր՝ որ մինչդեռ մեր մարդկային փոքրիկ աշխարհին մէջ կամ ընտանեաց և ընկերութեան մէջ արդարութիւնն՝ խաղաղութիւնն և բարութիւնն ուրիշ բանով ոչ պահի՝ բայց եթէ խելքով խորհրդով և նախահոգութեամբ, մեծ

աշխարհին մէջ որ տիեզերք ասի և յորում զարմանալի կարգն յայտնի երևի՝ չլինէր ոչ տեսչութիւն, ոչ նախախնամութիւն, և ամենայն ինչ կոյր և անսանձ զօրութեանց խաղ լինէր։ Այս բանս անհնարին է, և կամ ասելու եմք թէ ուրեմն թէ մեր սահմանել ջանացած կարգն ու կանոնն՝ բոլորովին տիեզերաց ընթացիցն հակառակ ու ներհակն է։

Որչափ ալ ոչ սիրեմ և ոչ ըմբռնեմ՝ սակայն համաստուածութիւնն ինձ աւելի ընդունելի կերևի. գոնէ ըստ այսմ՝ անհրաժեշտ հարկի փոփոխութեան մէջ հաստատ և կարգաւոր ընթացք մի կը տեսնուի, և այս անհուն և յաւիտենական միութեան մէջ՝ մեծութիւն մի կերևի, որ դարերու ընթացքով կընդարձակի և իւր էութեան լրութեամբն՝ իւր ամենայն զօրութեանց գիտակցութիւնն կը ստանայ, և իւր ամենայն ուժն կը բարգաւաճի։ Եւ սակայն հիմն եթէ ընտուս՝ այսու ևս չեմք կարող զամենայն ինչ բացատրել՝ ինչպէս որ պատահարի համար ասացաք. և այս դրութեամբս ալ դարձեալ ոչ հասկանամ թէ կեանքս ինչ բանի կը ծառայէ։ Առ ժամ մի ելանել մեծ Համայնէն՝ նորէն այնոր մէջ ընկղմելու համար, և անձին գիտակցութիւնն՝ կատարելութիւնն և երջանկութիւնն կորուսանելով՝ երթալ այնոր մէջ անհետ լինել՝ խեղճ արարածոյ մի համար շատ մխիթարական և ուրախալի բան մի չէ, այն արարածն որ ուրիշ բան չէ բայց եթէ այն մեծ Համայնին մի մասն՝ որ եմք մեք։ Եւ այս իմաստասիրութեամբ մեզ պահուած ապագայն վարձատրութիւն կամ նախանձելի վիճակ մի չսեպուիր, որովհետև մեր անձնաւորութիւնն ՚ի մէնջ հանելով՝ պիտի ընկղմիմք անհունին մէջ, և պիտի զրկիմք ՚ի բանաւոր մտաց և յաղատութենէ՝ զորս աշխարհիս մէջ վայելէաք։

Ինչպէս որ աստուածութեան հետ միաւորիլն զիս գոհ ոչ առնէ, նոյնպէս և աւելի ոչ գոհացնէ զիս իմ

էութեանս՝ նիւթոյ հետ նոյնանալու գաղափարն։ Երկուքն ալ հակառակ ուղիղ բանի կերևին. որովհետև միտք մարդոյ ոչ ընդունի «ոչ այն չափազանց պատիւն, և ոչ այն անարգանքն». և երկոցուն մէջ ալ չափ չկայ։ Մեր ուղածն աստուածներ և աստուածութեան մասեր լինել չէ. բայց միանգամայն կը բողոքեմք որ քար, բոյս և կամ անասուն լինել ալ ոչ կամիմք. որովհետև բանաւոր և աղատ էակներ եմք՝ իրաւունք ունելով ճշմարտութեան, արդարութեան և երջանկութեան։

Այս նկատմամբ որ և է կրօնք աւելի համաձայն են ուղիղ մտաց և պիտոյից բնութեանս՝ քան թէ իմաստասիրութիւնն։ Ամենայն կրօնք ընդունին հանդերձեալ աշխարհ մի, ուր որ մարդս այս աշխարհիս մէջ խնդրած զերջանկութիւնն պիտի գտնէ՝ ըստ իւր գործոց՝ եթէ արժանի եղած է այնմ, և կամ զթըշուառութիւն 'ի պատիժ իւր չարութեանն. որով կենթադրուի թէ մարդուս անձնաւորութիւնն պիտի յարատևէ, և երկու զանազան կենաց մէջ ալ իւր նոյնութիւնն և պատասխանատուութիւնն պիտի պահէ ու յարատևէ։ Ամեն կրօնից մէջ ալ գտանին Ելիւսեանց, Տարտարոսաց, արքայութեան և դժոխոց նմանութիւններ. և նկարագրութեանց տարբերութիւնն՝ իւրաքանչիւր ժողովրդոց յատուկ պարագայներէն և անոնց երևակայութեան զանազանութենէն կը փոխուին։

Այս անդրադարձութիւնս ինձ խորհել կուտայ՝ թէ ուրեմն մարդուս իրական կեանքն կրօնիւ աւելի լաւ կարէ բացատրուիլ՝ քան թէ իմաստասիրութեամբ. և կրօնից մէջ աւելի անկեղծ և աւելի կամակար կուռճանայ որպէս և քերթողութեան մէջ, և ժողովրդեան հաւատոց և ներշնչմանց մէջ շատ աւելի ճշմարտութիւն կայ՝ քան թէ իմաստասիրաց վերլուծութեանց և վերացմանց մէջ. որ շատ անգամ կե-

նաց ինչ լինելն իմանալու համար այնչափ կը ճղճղէ որ կը սպաննէ զայն, և կամակարութիւնն կամ ինքնայօժարութիւնն խորհրդածութեանց մէջ կը խղդէ։

Կրօնից մէջ ալ քրիստոնէական կրօնքն ամենէն գերազանցն է այս բանիս կողմանէ. թէ և զայն հաւաքումն սեպես յիւրմէ առաջ եղած կրօնից լաւագոյն մասանցն, որպէս ոմանք համարին, և թէ գերբնական յայտնութենէ մի յառաջ եկած համարիս՝ որպէս իւր հաւատացեալքն կը դաւանին։ Այս ստոյգ է որ միայն քրիստոնէական կրօնքն է՝ որ հանդերձեալ աշխարհի և ապագայ կենաց վրայ անզուգական իշխանութեամբ կը վարդապետէ, անդիմադարձ բանախօսութեան ուժով, երբ միանգամ մարդ նորա սկզբունքն ընդունի։ Այս ալ յաւելումք որ կրօնք մի եղած չէ՝ որոյ պատուէրքն այնչափ համաձայն լինին ուղիղ մտաց թելադրութեանցն և մարդկային սրտի պիտոյիցն, որպէս քրիստոսական կրօնից պատուէրքն, ուստի կարժէ որ վրան մտածեմք. և կը զարմանամ որ մինչև ցայսօր յոյժ սակաւ խորհել եմ այնոր վրայ։

Յետահայեաց տեսութիւն

4 Նոյեմբեր։

Եւ սակայն ես ալ քրիստոնէութեան մէջ սնայ ու մեծցայ. իմ հոգւոյս վրայ հաւատոյ առաջին տպաւորութիւնն բարի պառաւ աղախնոյ մի ձեռօքն եղև՝ որ ամեն օր ժամն վեցին անխափան պատարագ լսելու կերթար մօտ եկեղեցին. շատ անգամ ձմեռն եկեղեցւոյն դրան առջև ծնկան վրայ եկած կըսպասէր որ դռներն բացուին. մանկութեանս ատեն ինչ ասացածն միտքս չէ, բայց անշուշտ աղօթել ուսուցանէր

ինձ, բայց իւր կերպարանքն և քաղցր աղդեցութիւնն սրտիս մէջ տպաւորած են: Յետոյ իմ առջի խոստովանութիւնս կարդէ դուրս յուղեց զիս. դեռ աչքիս առջև կու գայ՝ այն ալևոր ծերունի քահանայն՝ որուն ոտից առջև ծնրադրած կուլայի վարժարանիս փոքրիկ սենեկին մէջ: Առաջին հաղորդութիւնս կրցածիս չափ կենդանի հաւատքով և եռանդուն սիրով պատրաստուելէն ետև՝ շատ բարեպաշտութեամբ ընկալայ. դեռ ևս գորովանօք կը յիշեմ այն ժամերն որ կանցուցանէի առանձինն՝ կարդալով Յաղագս նմանողութեան Քրիստոսի գիրքն, առանց ձանձրութեան աղօթելով, և խղճմտութեամբ մտածելով այն մեղքերն զորս ընդհանրական խոստովանութեանս մէջ պիտի զրուցէի: Առաջին անգամ սուրբ սեղանոյն մօտենալուս՝ դողն ու երջանկութիւնն միանդամայն զիս պաշարեցին, ինքն իրմէս դուրս ելած և այլայլած. և ինչ որ այն ատեն զգացի մտքէս ամենևին պիտի չելնէ:

Այլ աւաղ, այս եռանդս տակաւ պաղեցաւ՝ երբ զգայութեանց խռովութիւնն սկսաւ. սիրտս մրրիկ մի դուշակող հովէ զարնուածի պէս խռովեցաւ: Անբանական մարդուն խրոխտ ձայնն՝ հոգեկան մարդուս անոյշ ձայնն խափանեց, և երբ բանավարութեանս հասակն հասնելով ամեն բան դատելու և մեկնելու յանդգնութիւնն ալ վրայ հասաւ, միտքս մարմնոյ կողմն սկսաւ բռնել, թէպէտ և սրտիս եռանդն և երևակայութեանս ցնորքն սակաւ մի կը մեղմացնէին այնոր պահանջմունքն, կարդացած վիպասանութեանց զիս յարմարցնելով և քերթողութեան տալով ինքզինքս. մինչև որ յետոյ բոլորովին աղատութիւն վայելելու համար՝ իմաստասիրութեան ասպարէզն իջայ, և մինչև այն ատեն որ հաւատացեալ էի՝ պատիւ համարեցայ ինձ լինել անսանձ աղատախոհ: Ալ մի անգամ իմաստասիրական ուսմանց զիս տալէն ետև՝

բոլորովին նորա մէջ ընկղմեցայ իմ մտացս բովանդակ զօրութեամբն. և վարժապետացս դասուց և օրինակին հետևելով՝ կը համարէի թէ իմ խելքս բաւական էր՝ առանց յայտնութեան օգնականութեանն, իր լուսովն միայն վերանալ՝ ի ներհայեցութիւն բացարձակ ճշմարտութեան. ալ անտի և անդր կրօնքն ու քրիստոնէութիւնն՝ ի բաց թողի, որովհետև վարժապետութեան աստիճան հասնելու համար անցած դպրոցներուս մէջ՝ այնոր խօսքն անգամ ոչ լինէր, իբրև թէ աշխարհիս մէջ այնպիսի կրօնք մի չկար: Եւ համարէաք թէ կրօնքն՝ մեր պարունակէն դուրս էր և մեզ հետ վերաբերութիւն չունէր. պատճառաւ որ կենթադրէաք թէ հաւատոց ներքոյ անկեալ միտքն՝ կատարեալ իւր ազատութեան իրաւունքն չէր կարող բանեցնել. և երկրորդ կը համարէաք թէ բացարձակի գաղափարին ներհայեցութիւնն զմեզ շատ աւելի վեր կը բարձրացընէր՝ քան թէ հաւատոյ մութ վարդապետութիւնն՝ զոր նոցա միայն օգտակար կը համարէաք որք չէին կարող գիտութեանց գագաթն բարձրանալ: Որով և զմարդիկ երկու դասուց կը բաժնէաք. առաջին իմաստասիրութեան համբակներն որ զգիտութիւն ունին յանձինս և զնոյն պիտի ուսուցանեն աշխարհի. և երկրորդ կրօնից հետևողներն՝ որ հաւատալ միայն կարեն, որովհետև գիտել կարող չեն, և հաւատքն յարամնաց անչափահասութեան մէջ ունի զնոսա՝ որ է տեսակ իմն տղայութիւն: Այսօրինակ տեսութեանց մէջ շատ տարիներ շարունակեցի, և մեծ պարծանք համարէի ինձ որ այնպիսի գերազանց ու կարևոր դասու մի կը պատկանիմ. ուստի գիշեր ցորեկ կաշխատէի որ հրապարակական դասախօսութեամբս արժանի լինիմ նորա փառացն, և սնապարծութեամբ կը յուսայի նորօրինակ վարդապետութիւն մի հնարել և իմաստասիրական դրութիւն մի հաստատել՝ որ իմ դարուս լոյս և

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922

հնարողիս փառք համարի։ Ամեն տարի դասերս սկը-
սելուս՝ Սիսիփոնի պէս կը ջանայի իմ ժայռս լերին
գլուխն հանել, և ամեն տարի կը տեսնէի որ այն դար-
ձեալ վար կը գլորէր մեծաւ շառաչմամբ. այնպէս որ
ստիպեալ էի միշտ նորէն սկսանիլ իմ տաժանական և
անպտուղ աշխատութիւնս։ Վերջապէս հասակն ու
փորձառութիւնն իմացուցին ինձ թէ ո՛րչափ ընդու-
նայն էին իմ սնապարծութիւնս ու ջանքս. ուստի ի-
մաստասիրական աղանդի մի գլուխ լինելէն հրաժա-
րեցայ. և այժմ մտքէս ևս ոչ անցանէ նոր իմաստա-
սիրութիւն մի հնարել և պանծանօք զայն աշխարհի
ուսուցանել. և սակայն գոնէ ես ինձ համար կուզեմ
իմաստասիրութիւն մի ունել՝ որ իմ կենացս կարաս-
ցէ առաջնորդել, որպէս զի վերջապէս գոնէ գիտա-
ցից թէ զի՛նչ եմ ես և ո՛ւր եմ, և կենացս մնացորդն
ի՛նչպէս գործածելու եմ որ իմ ապագայիս օգտակար
լիցի։

Քրիստոնէութիւնն նոր բանի մի պէս քննելու բե-
րում մի կը զգամ՝ որոյ հաւատքն և գործադրու-
թիւնն զիս երջանիկ արարեալ էին 'ի մանկութեան,
և զոր յետոյ անտես արարի, և շատ անգամ ալ թիւր
կերպով դատեցի և զրպարտեցի՝ աւելի նախապա-
շարմամբ և տգիտութեամբ քան թէ համոզմամբ և
չարակամութեամբ։ Արդեօք իմաստասիրական խու-
զարկութիւններն չե՞մք կարող քրիստոնէութեան
ալ մերձեցնել և գիտութիւն մի յօրինել՝ իմաստա-
սիրութիւն քրիստոնէութեան անուամբ։

Իմաստասէրն եւ ժողովրդապետ

5 Նոյեմբեր։

Շատ անգամ ինք զինքս գիւղի երիցու հետ կը
բաղդատեմ, և հարկ է խոստովանիմ որ զիս շատ վար
կը գտնեմ։ Մ'եր հրահանգաց մէջ երկուքնիս ալ նոյն
խնդրոց վրայ կը խօսիմք. միայն կերպերնիս տարբեր
է, և եղանակն զանազան։ Երկոցունցս ալ վախճանն
նոյն է, որ է ուսուցանել զմարդիկ՝ զիրենք լաւա-
գոյն և երջանիկ առնելու համար։ Բայց երէցն այս
առաւելութիւնս ունի՝ որ իւր խօսքն քան զիմս աւելի
հեռուն կը ծաւալի. որովհետև այս աշխարհիս երջան-
կութենէն աւելի՝ յաւիտենական երջանկութիւնն
իրեն նպատակ եդեալ է։ Ապա ուրեմն իւր վարդա-
պետութիւնն քան զիմս աւելի ընդարձակ է, և մար-
դոյ սահմանեալ վիճակէն ալ անդին կանցնի։

Բաց աստի իւր խօսքն աւելի հաստատ է, և աւե-
լի վստահութիւն կուտայ. որովհետև եկեղեցին կա-
տարելապէս ճշդած և սահմանած է զայն, որ աւան-
դապահ է այն խօսքին որ յերկնից իջած կը համա-
րուի։ Արդ երէցն թարգման լինելով եկեղեցւոյ՝
ամենևին չտարակուսիր իր 'ի պարտուց ուսուցա-
ծին մէջ. ինչպէս որ ինձ շատ անգամ կը պատահի,
որ իմաստասիրութեան վարժապետ լինելով, և ծանր
նիւթոց վրայ ըստ հարկի աւուրց խօսելով, իմ
հաստատութեանցս ուրիշ ապահովութիւն չունիմ՝
բայց եթէ մտացս աշխատանքն, և այլոց խորհուրդ-
ներէն և գրքերէն քաղածներս՝ որք վերջապէս որ-
պէս զիմս մարդկային մտածութիւնք են։ Անոր հա-
մար շատ անգամ հանգիպած է որ նիւթոյ մի վրայ

յանպատրաստից և եռանդեամբ խօսած ժամանակ՝ և առաջարկութիւն մի իբրև ճշմարտութիւն հաստատած առնես՝ ես ինք իրենս զարմացմամբ հարցուցած եմ՝ թէ արդեօք ապահո՞վ եմ ասացածիս վրայ: Որչափ անգամ կարծելով թէ անսխալ տեսութիւն մի գտեր եմ գիտութեան մի մասն բացատրելու համար, և երբ զայն ուզեր եմ ի գործ դնել, տեսել եմ որ իմ կարծեալ սկզբունքս որ միայն ի պարզ բանէ մտաց յառաջ եկած էր և կամ հանրական փորձով հաստատեալ՝ անբաւական եղած է ուզած բացատրութեանս, կամ այն է որ շատ գործոց չյարմարելով և կամ այն է որ ծանր և անլուծանելի ընդդիմութիւններ առջիս ելնելով:

Քահանայն և իմաստասէրն աստուածախօսութեան, բնազանցութեան, մարդաբանութեան և բարոյականի վրայ կը խօսին. բայց որչափ տարբեր ելանակաւ, և որչափ զանազանութեամբ իրենց հրատարակութեանց մէջ: Առաջինն Աստուծոյ, տիեզերաց, մարդոյ և աշխարհիս կառավարութեան վրայ որ խօսի՝ միշտ ճիշդ և որոշ պատասխաններ ունի՝ որ Քրիստոնէական վարդապետութիւն ասացեալ գրքուկին մէջ ամփոփուած են, որոց մէջի հաւատոյ ինդիրներն իբարու համաձայն և ճշդիւ իրարու հետ կապակցեալ՝ այնպէս պարզ են՝ որ նոյն իսկ տգիտաց և տղայոց հասկանալի են: Իսկ ընդհակառակն իմաստասէրն գիտութեան շքեղութեամբ շլացեալ և իբր հակառակամարտ կարծեաց ամբոխէն շուարեալ՝ ոչ կարէ իբր ուսուցածն ճշդիւ ամփոփել և ամենուն հասկացողութեանն յարմարցնել. այնպէս որ նոյն իսկ ազատական կրթութիւն մի առնող չափահասից մէջ շատերն կան՝ որ իմաստասիրաց ճառերէն և գրքերէն բան մի ոչ հասկանան: Այսոր համար է որ մեր երկրին ամենէն անուանի իմաստասէրներէն մին ասէր, թէ բոլոր Եւրոպիոյ մէջ հազիւ տասն հոգի

գտանէր զինքն հասկցող, թէ և իւր ունկնդիրք յոյժ շատուր էին: Իսկ Հէկէլ ալ աւելին կը զուսցէր՝ հաստատելով թէ մարդ մի ևեթ զինքն հասկցեր էր՝ այն ալ ոչ բովանդակապէս:

Իրաւ որ երկրագունս վախճանն զմարդիկ իմաստուն առնել չէ՝ այլ հաւատացեալ. բայց ինչ հոգ. կենաց ընթացից մէջ հաւատքն ալ նոյն արդիւնքն յառաջ ածէ՝ ինչ որ գիտութիւնն, այսինքն ընդունած ճշմարտութիւնն գործով ալ կատարել. որոյ մէջ հաւատքն աւելի ուժով կը յաջողի, ինչպէս որ կը ցուցանէ աշխարհիս պատմութիւնն, և մանաւանդ քրիստոնէութեան վէպքն՝ իւր ամեն սեռէ հասակէ և պայմանէ ունեցած անթիւ վկայներովն: Վասն զի հաւատքն ամենուն դիւրամերձ են՝ նոյն իսկ տղայոց. մինչդեռ գիտութիւնն վերագոյն է մարդկանց մեծագոյն մասին. և իւր պարունակին մէջ այնպիսի բարձրութիւններ կան՝ ուր յոյժ սակաւք կարեն հասանել: Ասոր կը հետևի որ բազմութեան վրայ ազդեցութիւն առնելու համար՝ աւելի հաւատոյ դիմելու է՝ քան թէ բանաւորութեան. և այսոր համար ամեն ժամանակ և ամեն ազգաց մէջ կրօնից հետևողներն շատ աւելի են՝ քան թէ իմաստասիրութեան, և իւր ազդեցութիւնն յոյժ առաւել հզօր եղած է մարդկային գործոց վրայ:

Բայց մեք իմաստասէրքս իրաւունք չունինք պահանջելու՝ որ մեր խօսից հաւատք ընծայուի. նախ որ մտքերնիս գրած ենք զամենայն ինչ բանաւորութեամբ գործելու. և երկրորդ որ խօսածնիս մեր խօսքն է՝ որով և մարդկային մեր նմանեաց պէս, և հետևապէս միշտ սխալական և տարակուսական: Ուսոմն ստիպուած ենք՝ զրուցածնիս միշտ հաստատելու և ապացուցանելու. և շատ անգամ խօսից ազդեցութիւնն հակառակամարտ պատճառներով կը թուլնայ, և անոնց յառաջ եկած տարակոյսն ու երկմտութիւնն՝ գործադրութեան եռանդն ալ կը դադրեցնէ:

Իսկ քահանայն այսպիսի չվոթձուԹիւն ոչ գիտէ. ինքն խօսի յանուն Աստուծոյ՝ որոյ խօսքն ՚ի ձեռն եկեղեցւոյ իրեն հասած է, որով իրաւունք ունի հաստատելոց հրամայելու որ հնազանդին, եթէ ճըշմարտապէս աստուածային է այն խօսքն և անպայման ընկալեալ ՚ի նմանէ: Արդ ինքն քահանայն արդէն համոզուած է նորա աստուածայնուԹեան վրայ՝ աստուածաբանուԹեան ցուցած փաստերով, և ապահով ալ է զայն անխաւն աւանդելու՝ եթէ ճշդիւ հետևի եկեղեցւոյ վարդապետուԹեանն՝ որ նորա է բաշխաւորն է: Ի՞նչպէս կարես դիմադարձել մարդու՝ որ գայ քեզ հաստոյ իշխանուԹեամբն զուցե. լուսարուբ՝ Աստուծոյ խօսքն է որ ձեզ կը քարոզեմ: Իսկ արդ Աստուած անհուն ճշմարտուԹիւն է. և եթէ յիրաւի Աստուած խօսած է քանի մի մարդկանց ձեռքովը, ինչպէս որ ամենայն կրօնք կը համբերին, հաստատողին ուրիշ բան ոչ մնայ առնելու՝ բայց խոնարհիլ և հնազանդիլ. ապա Թէ ոչ ուր որ ոչ հաստոյ՝ լինի անհաստատ և խմաստասէր, այսինքն իբր խելացի հետևող կամ պարզապէս խօսելով ազատախոհ, որ մարդկանց շահերուն համար աւաղելի բան է, որովհետև շահերն կամ ամենևին կամ յոյժ սակաւ կը խորհին և կամ վատԹար կը խորհին: Աստի յառաջ գան այնչափ մարդկային մտաց ցնորմունք որոց շատ գիւրամէտ են մարդիկ և նոյն իսկ խմաստասէրք. որովհետև արդէն կիկերոն իւր ժամանակին համար ասացած էր Թէ չկայ անհեթեթ վարդապետուԹիւն մի որ իրենց վարժոցաց մէջ աւանդուած չլինի: Աւրեօք մեր ժամանակին համար ինչ պիտի ասէր:

Իմաստասէրն եւ ժողովրդապետ

(շարայարուԹիւն)

6 Նոյեմբեր.

Երիցու և իմաստասիրի բաղդատուԹիւնս առաջ կը տանիմ. և որչափ ալ իմաստասէր եմ՝ նորա բաղդին կը նախանձիմ հոգևորական իրաց հրահանգին մէջ ասել կուզեմ:

Նախ կը նախանձիմ նորա հաստատոց վրայ՝ որ հանդերձեալ աշխարհի ամեն կարևոր խնդրոց վրայ առաձեռն պատրաստ լուծում մի ունի, մինչդեռ մեք ուրիշ բան ոչ առնեմք՝ բայց եթէ պատանձիլ մնալ և կամ վիճաբանիլ և ցնորաբանել: Իսկ քահանայն ամենայն գիտէ կարևոր նիւԹոց պատասխանն ունի. և քան զմեզ լաւ գիտէ՝ որովհետև իւր պատասխանները որոշ և գործադրելի են: Եւ լաւագոյնն այն է՝ որ իւր ամենայն ասացածները ՚ի գործն կ՚առաջնորդեն. իսկ մեք հայեցողականէն դուրս ոչ ելանեմք, մարդկանց կեանքն ինչպէս կուզէ Թող լինի, վարժապետն այս բանս ոչ հոգայ: Մեր իմաստասիրուԹիւնն՝ միայն դաս տալու և գիրք հրատարակելու վրայ է. և նոյն իսկ մեր վարդապետուԹիւնն մեր անձին վրայ ալ մեծ ազդեցուԹիւն մի չունի. այսօր ապագոյցն ալ այն է որ՝ ես շատերն ճանաչեմ որ եպիկուրեան լինելով հանդերձ՝ բարի մարդիկ են, և պլատոնեաններ՝ որ վատԹար կեանք կ՚անցընեն:

Երբ մեք իմաստասէրքս դասերնիս ծախեցինք աշարտեցինք կամ գրուածնիս հրատարակեցինք՝ ալ ես մեր ունկնդիրքն կամ ընԹերցողներն տեսնելիք չունինք, այնպէս որ մեր խօսքն կամ նոցա մտաց մէջ ցանած սերմանքն՝ ինք իրեն պիտի բուսանին առանց

մշակութեան, ինչպէս որ բուսնին: Մեք մեր պարտքն կատարեցինք, կամ ինչպէս չարաճճի մի կարէ ասել՝ մեր խաղն խաղացինք, որովհետև լաւ խօսեցաք լաւ գրեցաք, և յոյս ունիմք որ պտղաբեր լինի. այլ ուրիշ հոգ չունիմք և չեմք կարող ալ ունել, որովհետև մեր իմաստասիրութեան վարժոցներն Պիւթագորայ դպրոցաց չեն նմանիր, և ոչ իսկ Սոկրատայ՝ գոնէ ինչպէս կը նկարագրէ զնոսին Պլատոն:

Իսկ քահանային կերպն ուրիշ է. վասն զի իւր ժողովրդեան երկնային նիւթոց վրայ խօսելէն ետև՝ նոցա հոգւոյն մէջ ցանած սերմն կը մշակէ՝ անձամբ այց ելնելով, մանաւանդ իրենց կենաց ծանր պարագայներուն մէջ, իրենց վշտաց հիւանդութեանց և մահուան ժամանակ. սիրով նոցա հետ կը խօսակցի կը մխիթարէ և քաջալերէ զերիտասարդս և զծերս, զմեծն և զփոքրն, զարս և զկանայս. միշտ պատրաստ է առանձին օգնութիւններ ալ առնելու, և կարօտելոց ընտանեկան խորհուրդներ ալ տալու, և իւր հրապարակաւ առ հասարակ տուած հրահանգներն՝ մտերմական խօսակցութեանց մէջ կը բացատրէ և իւրաքանչիւրոց պիտոյիցն կը յարմարցնէ: Այս կերպով ամենեցուն ամենայն լինի, և չկայ վշտացեալ ու բարեզդած հոգի մի՝ որ չընդունի 'ի նմանէ սփոփանս առաջնորդութիւն և օգնութիւն:

Ի՛նչ գեղեցիկ հաստատութիւն է խորհրդական խոստովանութիւնն, և ինչպիսի՛ զօրութիւն ունի հոգիներն ուղղելու ամրացնելու և լաւացնելու: Հաւասարապէս օգտակար քահանային՝ ինչպէս իւր ապաշխարողաց. որովհետև այնու ինքն ալ անհամեմատ փորձառական ծանօթութիւն մի կը ստանայ մարդուս վրայ. և յերկնից ընդունած իշխանութեամբն խղճմտանաց ձեռօք ուղղակի նորա կամաց վրայ կաղդէ: Երբ քահանայն ասէ թէ Աստուած այսպէս կամի՝ ո՛վ կարէ առանց խռովելու հակառակն գործել: Իսկ

ապաշխարողն որ խորին քննութեամբ իւր յանցանքն խոստովանելու պիտի պատրաստուի, քան զայս աւելի ինքզինքն ճանաչելու լաւ միջոց կարէ՞ լինել. ո՞չ ապաքէն Դելփիսի պատգամին ճշմարիտ գործադրութիւնն է այս՝ թէ Ծանի՛ր զքեզ. որովհետև ինքզինք ճանաչելու միջոցն՝ զանձն գիտելն է, և խղճի քննութիւնն ամենէն նուրբ և բարակ դիտողութիւնն է: Շատ անգամ ասացած եմ որ խոստովանութեան հաստատութիւնն մեծ իմաստասիրական գիւտ է յաշխարհի. և եթէ Աստուած հաստատած ոչ լինէր զայն՝ իմաստասէրք պէտք էին հնարել: Բայց դըժբաղդաբար նոքա քահանայից պէս խոստովանահայրեր չէին կարող գտանել, որովհետև այսպիսի պաշտաման իշխանութիւնն՝ յերկնից միայն կարէ տրուիլ:

Քահանայն իւր աշակերտելոց մէջ կապրի, և ամեն դիպաց մէջ զիրենք իւր խօսքովն կը սնուցանէ, և այսոր համար է որ իւր ոչխարներն կամ իւր հօտն կը կոչուին. և երբ կը քարոզէ ու կը յորդորէ՝ խորհրդոց տուած շնորհօքն ալ զնոսա 'ի բարեգործութիւն կը քաջալերէ: Ոչ միայն ինչ որ պէտք է առնել կը զրուցէ, այլ և նոցա կամացն ալ կօգնէ ասացածն կատարելու, մինչև վերջն հասնելու պէտք եղած ուժն ալ տալով: Իսկ մեք դասերնիս աւանդելէն ետև, և եթէ հարցանող գտուի քանի մի ընդհանուր բացատրութիւններ տալէն վերջ, և մեր չճանչցած մարդոց քանի մի տարտամ խորհուրդներ տալով մեր պարտքն վճարած կը համարիմք, և մնացածին վրայ հոգ չեմք առներ և պատասխանատուութիւն մ'ալ չունիմք. և տներնիս դառնալով մեր աշխատանաց կամ մեր զուարճութեանց կը նայիմք. և հանդիստ քուն ալ կը քաշեմք՝ առանց կասկածելու որ մեր ունկնդրաց թշուառութիւնն խղճմտանքն կամ հիւանդութիւնն գիշերն մեր քնոյն արգելք պիտի լինին կամ զմեզ արթնցնեն: Իսկ ժողովրդապետ քա-

հանայն՝ ամենևին ոչ գիտէ թէ արդեօք գիշերն իւր անկողնոյն մէջ պիտի անցնէ թէ չէ. մարմնոյ բժշկի պէս՝ ինքն ալ հոգւոյ բժիշկ լինելով՝ միշտ պատրաստ պիտի կայ՝ հոգեվարքաց խրատուց մխիթարութիւնն և կրօնից յետին օգնութիւնները հասցնելու:

Վերջապէս ինչ մեծ տարբերութիւն խմաստասիրին և քահանային անցուցած կենաց մէջ: Սենեկայ զեղխութեան փափկութեանց մէջ և հարստութեան շքեղութեանց մէջ կը ցանկար հարստութիւնն արհամարհել և աղքատութեան սիրող լինել. ինքն իւր ամեն հաճոյքն ունենալով և բանի մի կարօտ չլինելով՝ ինչ լաւ կը քարոզէր այլոց չափաւորութիւն՝ի ցանկութիւնս և զբաղեխառնութիւն: Տարակոյս չկայ որ մեր աւուրց խմաստասէրք Սենեկայի պէս հարուստ չեն, և սակայն շատերն լաւ թօշակներ ունին. և ոմանք ևս, մանաւանդ երևելիներն՝ քանի մի պաշտամանց վարձատրութիւններն միանգամայն կը վայելեն. և ընկերութեան մէջ հանգիստ պատուաւոր ալ կը համարուին:

Իսկ քահանայից շատերն՝ մանաւանդ մեծ քաղաքներէն դուրս՝ հազիւ թէ օրական ապրուստնին ունին. և գիւղօրէից երիցոնք գրեթէ ամենքն ալ աղքատ են և միանգամայն ստիպեալ են իրենց հարկաւորն օտարի ալ տալ: Այս բանս գիւղի մէջ բնակած ատենս շատ անգամ կը տեսնեմ, որովհետև հոն ընտանեկան գաղտնիք չկայ, ամեն մարդ դրացւոյն ինչ լինելն լաւ գիտէ: Այս խեղճ քահանայք չեն կարող երկու սակ իրարու վրայ դնել՝ իրենց ծերութեան նպաստ լինելու համար. որովհետև արդէն թօշակնին ոչինչ է, և աղքատներն ալ բոլորնին պատած են: Ցիրաւի ինձ շատ դժուար պիտի լինէր եթէ նոցա պէս ապրելու ստիպուած լինէի, միշտ օտարի ծառայելով, և իմ վիճակս բարւոքելու յոյս մի չունենալով: Ինձ մեծ անիրաւութիւն կ'երևի և ընկերութեան նախատինք կը համարիմ՝ որ մարդ երեսուն,

քառասուն, յիսուն տարի Ժողովրդեան ծառայելէն ետև՝ ծերութեան առեն կտոր մի հաց ապահով չունի ուտելու: Եւ սակայն այս է ժառանգաւորաց վիճակն, որք ծանրութիւն որ գայ՝ հասարակաց պաշտօնեայ կը համարուին, ամեն աշխատանք վրանին բեռնաւորելով, իսկ վարձատրութիւնն զլանալով. ո՛րովհետև քահանային համար՝ ուրիշ պաշտօնատարաց պէս անկարողութեան ասացեալ հասոյթն չկայ. և երբ հասակն առնելով կամ հիւանդութեամբ անկարող լինի աշխատելու՝ ստիպեալ է Տէրութենէն կամ թեմին մուրանալ, որ ձիշդ այնչափ միայն կուտայ որ անօթութենէ չմեռնի:

Իմաստասէրն եւ ժողովրդապետ

(շարայարութիւն)

9 Նոյեմբեր.

Քահանային վրայ աւելի նախանձելի բանն՝ իւր պաշտամանն յառաջ բերած արդիւնքն է՝ երբ մարդ նորա իշխանութիւնն պատուէ, և խօսիցն ունկնդիր լինի: Տարակոյս չկայ որ շատերն ոչ միայն չեն երթար նմա մոխիկ առնելու՝ այլ և կը ծաղրեն. և այս բանս բնական է, որովհետև ինքն ժողովրդեան բարեկարգութեան և արդարութեան առաքեալն լինելով, և իւր պաշտօնին անկարգութեանց դէմ կռուիլ և զայնս արգիլել լինելով՝ հարկ է որ անկարգութեան մէջ ապրողներն՝ նմա դէմ ելնեն, որ ոչ կամին իրենց ախտերն սանձի տակ ընկճել և նեղել:

Մեք խմաստասէրքս այս հոգէս ազատ եմք. որովհետև մարդու վրայ ծանր աղդեցութիւն մի չունենալնուս՝ չեմք նեղեր ընդսա: Եւ որչափ ալ միաքս դրած եմ որ ունկնդրացս սակաւ մի օգուտ գործած եմ,

օակայն այն ալ այնպէս ընդհանուր կերպով եղած է և անյայտ՝ որ չեմ կարող ասել թէ ո՛ւմ և ո՛րչափ բարիք գործած եմ այս իմ պաշտամանս երկայն ժամանակին մէջ։ Իմաստասիրութեան դասերն ալ գրականութեան և ճարտարխօսութեան դասերուն պէս կ՚աւանդուին, և եթէ համալսարանի աստիճանի մի հասնելու՝ անմիջապէս հարկաւոր չդատուէր, շատերու համար գոնէ՝ այնոր համար ծախուած ժամանակն անօգուտ կը սեպուէր. ինչպէս որ կան մարդիկ որ առանց այնոր օգնութեանն ալ ուղած պաշտամանն կը հասնին. թէպէտ և կընդունին որ իմաստասիրութեան կարգաւորեալ դաս մի, երիտասարդաց շատ օգտակար է։

Բայց ճշդիւ խօսելով արդեօք իմաստասիրութեան դաս մի կարէ՞ բաղդատուիլ առաջին հաղորդութեան արդեանցն՝ որ բոլոր կենաց վրայ մեծ ազդեցութիւն ունի 'ի բարին կամ 'ի չարն՝ ընդունողին տրամադրութեանցն համեմատ։ Առաջին հաղորդութեան մէջ գերազանց և գերմարդկային մանաւանդ թէ աստուածային ազդեցութիւն մի կայ՝ որ հոգւոյն մէջ թափանցելով՝ անեղծանելի կնիք մի կը տպաւորէ։ Ինչպիսի՞ խորհուրդ է՝ ընդունել զԱստուած իւր սիրտն, այնպէս որ եթէ սիրով և հնազանդութեամբ հաւատարիմ լինիմք նմա, նորա շնորհած զօրութեամբն կարող լինիմք զամենայն ինչ կամակար 'ի ծառայութիւն և 'ի փառս նորա նուիրել։ Որպիսի՞ սանձ է ընդդէմ չարեաց երկիւղն ամենագիտին և ամենակարողին՝ որ իւրաքանչիւրոց իրենց գործոց համեմատ պիտի վճարէ։ Որպիսի՞ յորդոր բարեգործութեան՝ սէր այնորիկ որ 'ի սիրոյ ստեղծ զմարդ, և դարձեալ 'ի սիրոյ փրկանաւորեց զնա իւր կենօքն, թէպէտ և նա ապերախտ դտեալ էր։ Քրիստոսի կեանքն և մահն՝ եթէ յիրաւի այնպէս են՝ որպէս ուղղափառք ուսուցանեն, քան զամենայն իմաստա-

սիրութիւն սուրբ են և վսեմագոյն. և չեմ զարմանար որ զայն ընդունողաց մէջ այնչափ անձնանուիրման և դթութեան հրաշք գործուին։

Իմաստասէրք աշխարհի՝ իմաստութեան սիրողք և արուեստագէտքն են, և այսու է որ երբեմն զարմանալի գործեր ալ կը կատարեն՝ մանաւանդ գեղագիտութեան նկատմամբ, որ աւելի ժողովուրդն հրահանգելու և զուարճացնելու կուգան քան թէ նոցա բարքն ուղղելու և լաւացնելու։ Իսկ քրիստոնէութեան ուսմունքն զմարդ արդար և սուրբ առնէ. և որովհետև առաջին առաքինութիւնն զոր հրամայէ խոնարհութիւնն է, արմատ ամենայն առաքինութեանց և էական պայման հաւատոց, ուստի և աւետարանական կատարելութիւնն ալ աւելի ներքսապէս քան թէ արտաքսապէս աշխատելու վրայ կայանայ։ Մարդոց հաւնելուն չհաւնելուն չնայիր, այլ աստուածային պատուիրանաց պահպանութեամբն և Յիսուսի Քրիստոսի սիրոյն ներշնչմամբն իւր խիղճն գոհացնելու կը ջանայ։

Վերջապէս քրիստոնէական կրօնքն ամեն ժամանակ և ամեն պայմանէ վկայներ մարտիրոսներ յառաջ բերած է. տղայք, կանայք, ծերք, տգէտք, իմաստունք, աղքատք, հարուստք իրենց մարդացեալ Աստուծոյն օրինակովն ու խօսքովն զօրացած՝ յանձն առած են մահն ու քստմնելի տանջանքն, ոչ միայն իրենց հաւատքն բռնութեանց դէմ պաշտպանելու համար, այլ և զայն տարածելու համար 'ի փառս Աստուծոյ և մարդկանց փրկութեան դիտմամբն։ Այս կրօնիս մէջ ամեն ժամանակ տեսնուած են և հիմա ալ ևս կերևին շատ մարդիկ՝ որ հրաժարելով կենաց ամեն օգտակարութենէն, վայելքէն և երջանկութենէն՝ ինքզինքնին նուիրած են Աստուծոյ և ընկերաց ծառայութեանն՝ ամեն տաժանելի և ըստ աշխարհի անարդ գործեր յանձն առնելով։ Շատ ան-

գամ լսած եմ որ բողոքականութիւնն իւր ամեն ճոխութեամբն և ձեռքն ունեցած ժամանակաւոր իշխանութեամբ՝ չէ կարողացած Քոյր դթութեան մի յառաջ բերել. ես ալ երեսուն տարուան փորձովս համոզեալ եմ՝ որ իմաստասիրութիւնն մարտիրոս մի պիտի չունենայ:

Կէտ մահուան

10 Նոյեմբեր:

Լսեցի որ Եակար մեռնելու վրայ է. պէտք է երթամ զինքն տեսնեմ. բայց ի՞նչ պիտի ասեմ զինքն մահուան պատրաստելու համար. և ի՞նչ բանի կուգայ այս պատրաստութիւնս, և ինչո՛ւ ես տամ իրեն այս գոյժս և վերջին մնացած վայրկեաններն վշտացընեմ, և ինչո՛ւ զինքն խռովեմ մահուան և նորա հետևանաց յիշատակովն, քանի որ ես ալ մխիթարութիւն յոյս և զօրութիւն մի չունիմ իրեն տալու: Ինչպէս որ թոքախտութենէ բռնուողներուն բնական է՝ ինքն ալ ինքզինքն կը խաբէ, և կենաց տապն որ զինքն կը լափէ՝ կարծէ թէ այնու կեանքն պիտի երկարի: Ինչո՛ւ չթողում զինքն իւր երևակայեալ ապահովութեան մէջ. որովհետև ձեռքէս ալ բան մի ոչ գայ՝ իւր կենաց սպառնալից վտանգին առջևն առնլու:

Եթէ իրեն իմացնեմ թէ ա՛լ աշխարհքս պիտի թողու երթայ, հարկաւ տագնապելով ինձ պիտի հարցնէ՝ թէ արդեօք ինքն ի՞նչ պիտի լինի. արդեօք ոչ ի՞նչ, թէ բան մի, և ի՞նչ. պիտի հարցանէ թէ արդեօք մահն պիտի խզէ՞ այն կապն որ զինքն իւր կնոջ և զաւակաց հետ կապած է, թէ գերեզմանէն անդին ալ հաղորդակցութեան կերպ մի կա՞յ իւր աշխարհիս

վրայ թողած սիրելեաց հետ: Պիտի հարցանէ ինձ թէ արդեօք մեր բարեկամութիւնն պիտի շարունակի՞ հեռաւորութեան մէջ. և ա՛յլ հաղարումի հարցումներ պիտի առնէ՝ որոց ամենևին ստոյգ պատասխան մի չունիմ տալու:

Երբ մեր քաջողջութեան ժամանակ իրարու հետ այս նիւթոց վրայ կը խօսէինք՝ խելքերնուս փչածն կը զրուցէինք, և մեր խօսքն հետևանք մի ոչ ունէր. երևակայութեանցս սանձն թողած կը վազէինք՝ առանց իրականին վնաս մի տալու: Դեռ առոյգ կեանք և առողջութիւն ունելով և մահն 'ի մէնջ հեռի համարելով՝ հանդարտ և անհոգ այնոր վրայ կը խօսէինք՝ ծածուկ մտքերնէս անցընելով որ դեռ ժամանակ ունէինք այնոր վրայ մտածելու, և թէ նոյն ժամուն խօսածնիս ու խորհածնիս կարէաք յետոյ ետ առնուլ:

Իսկ այսօր խնդիրն ծանր է և շատ ծանր: Սհաւասիկ իմ խեղճ Եակարս իր ասպարիզին ծայրն հասել է, և սակաւ ատենէն զինքն հանդերձեալ աշխարհին զատող դուռն պիտի բացուի. ա՛լ ժամանակ չէ ցնորած կերպով ենթադրութիւններ և մտացածին դրութիւններ հնարելու. որովհետև անհրաժեշտ հարկին առջև հասած եմք՝ որոյ կատարումն բան մի կարող չէ արգիլելու: Ուրեմն ամեն խօսք կարևորութիւն մի ունի այս ժամուս մէջ, մանաւանդ իմիններս, որովհետև զիս իւր վարժապետն կը կոչէ, և իւր պատանեկութենէն 'ի վեր առանց իմ խորհրդոցս բան մի գործած չէ, և իմ ուղղութեանս հետևելու վարժած է: Տաս տարիէ 'ի վեր մեծ ազդեցութիւն ունեցած եմ իր վիճակին վրայ նախ իմ ուսուցածովս և յետոյ իմ բարեկամութեամբս. և զինքն սրտանց կը սիրեմ, որովհետև սիրտ և տաղանդ ունի. բայց այս սէրս որ մինչև ցարդ քաղցր էր ինձ՝ կը սկսի զիս խռովել՝ երբ հետևանքն կը մտածեմ:

Եակար տանուվեց տարուան էր՝ երբ իւր լեռնա-
յին գաւառէն իմ քովս հասաւ՝ լի հաւատով և ողջ-
մտութեամբ. ինչքն բարի կաթողիկեայ մի էր՝ որպէս
իւր հայրենակիցքն և իւր իսկ գերդաստանն, և որ-
չափ ալ խելացի էր՝ սակայն կրօնքն քննելու և գա-
տելու ոչ գործածէր զայն. ինչ որ իւր պապերն հաւ-
տացել էին և իւր ծնողքն կը հաւատային՝ ինքն ալ
պարզապէս այնոց կը հաւատար: Իմաստասիրութեան
ուսումն իւր խելքն արթնցուց, և ուսոյց նմա որ իւր
մտաց իրաւունքն և ազատութիւնն բնաւէ: Ես նմա
ուսուցի որ կարդեսիոսի պէս իւր հակացողութիւնն
նորոգէ, բայց ոչ նորա պէս հաւատոյ նիւթերն՝ ի
բաց առնելով: Ուսաւ ամենայն ինչ ուշադնուս պէս
քննեցինք գտաւեցինք վճռեցինք, և մեր յանդուգն
և յամառ խուզարկութեանց արդիւնքն ուրիշ բան
չեղաւ՝ բայց եթէ շատ բան աւրել և քիչ բան շինել.
մեր հոգւոյն և մտաց մէջ մեծ խանգարմունք գործե-
ցինք, որոյ կերպով մի գարման չկարացաք առնել և
ոչ աւելն ուրիշ բան դնել, մեր վերլուծութիւնն ա-
մենայն ինչ անդամատեց կտրատեց, և իրական
կեանքն վերացմանց մէջ ընկղմեցաւ: Կարճ խօսելով
խելք Եակարս որ հաւատով և գործով քրիստոնեայ
էր՝ եղև ինձ հետ և ինձ պէս բանաւորական, ընտրա-
կան և աղատախոհ, միով բանիւ Թերահաւատ. մի-
այն իւր վսեմ հոգին միշտ սարսափմամբ կը փախ-
չէր ի զգայականութենէ և ի գրականութենէ, և
նիւթն ոչ երբեք նորա վրայ իշխեց. Թեպէտ և քրիս-
տոնէական հաւատքն կորուսանելով՝ կորոյս նաև
մարմնոյ վրայ ունեցած իշխանութիւնն. և իւր մտաց
բարձրութիւնն գիտելով և իւր գիտմանց յանդգնու-
թիւնն ինձ ծանօթ լինելով՝ կասկածիմ թէ աւելի
համաստուածութեան, բնութեան իմաստասիրու-
թեանն և Հէկէլի աղանդոյն կը հակամիտէր:

Ինչ որ է՝ իւր հոգւոյն այժմեան կացութեան մէջ

ես ալ մեծ մասնակցութիւն ունիմ, և այս օրս ոչ
միայն իրեն համար այլ և անձիս համար կը վախեմ՝
տեսնելով այս հոգիս որ մեծ է աշխարհքէս էննելու
տարակուսական վիճակով մի՝ որոյ մէջ գտնուելուն ես
ալ մասնակից եղէ, և որ նոր կենաց սկիզբն պիտի
լինի:

Եւ սակայն ինչ արարից, ինչ ասացից զինքն լու-
սաւորելու, և այս սարսափելի անցից մէջ զինքն
սրտապնդելու համար. որովհետև վերջապէս իմաս-
տասիրի մի ոչ վայելէ պատրանաց մէջ ապրիլ և այլոց
ալ պատճառ լինել. և եթէ մարդս պարտական է ծանր
պարագայից մէջ ճշմարտութիւնն ասելու իւր ընկե-
րոջն, տարակոյս չկայ որ այս պարագս այն մարդուն
վրայ աւելի կը ծանրանայ որ իմաստութիւն սիրող
համարելով ինքզինքն, պարտք ունի ճշմարտութիւնն
որոնելու, և երբ բարեբաղդաբար գտնիկայ գտնէ՝
այլոց ալ պէտք է որ ուսուցանէ:

Բայց իմաստութիւնն ինչ կարող է ասելու հոգե-
վարք մարդու մի, և ինչ ճշմարտութիւն ուսուցա-
նելու է նմա. խնդրոյն գժուարութիւնն հոս է, և
լուծումն գժուարագոյն: Երբ հրապարակաւ յընդ-
հանուրս կը խօսիմ կենաց և մահուան պարագայներէ
դուրս՝ ես ալ վստահութիւն ունիմ իմ գաղափա-
րացս կարծեացս և տեսութեանցս վրայօք, բայց հիմա
որ հոգեվարք բարեկամի մի պիտի խօսիմ՝ որոյ բնու-
թիւնն ու գոյութիւնն կը լուծուի կը քայքայուի՝ ա-
սելիքս ոչ գիտեմ: — Եւ յիրաւի վախն ու շփոթու-
թիւնն զիս պաշարած են. այս հանճարեղ տղայն որ զիս
Թողլուս վրայ է, այս երիտասարդ՝ զոր որպէս յորո-
րոցի իմ վարդապետութեամբս սնուցի, և երկար
ժամանակ իմ խօսքերովս մեծցուցի, այժմ տեսանեմ
որ մխիթարութիւն յոյս և զօրութիւն մի չունիմ նմա
տալու:

բաւն որ կը տարածուէր, և վերջապէս երկայն աշխատութեամբ և մեծ ջանքով յառաջ եկած ամեն յաջողութիւններ, այս ամեն բանս պիտի կորուսանէ. և տեսարանն բոլորովին պիտի փոխուի, և հոգին զմարմինն թողլով՝ նոր պարուրակի մի մէջ պիտի մտնէ՝ որ մեր աչքէն բոլորովին անտես է:

Թերևս այս նոր մտնելու աշխարհին վրայ խօսելու է, բայց եկէք որ այնոր վրայ ալ բան մի չեմ գիտեր. կը հաւատամ որ կայ, որովհետև կենաց բնազդեցութիւն մի է հաւատալն թէ կեանք ատացեալն պիտի մշտնջենաւորէ, և երկրորդ որ մարդուս արդի կեանքն լոկ կատարեալ բան մի ոչ երևի, և այս աշխարհէս ելած առեն որչափ որ ճշմարտութիւնն ճանչցած լինի և առաքինութիւնն գործադրած՝ սակայն տակաւին շատ հեռի է իր ըմբռնած կատարելութեան գալափարէն: Բայց ասոր այս կենացս անկարգութիւններն՝ հարկ է որ ուղղուին, բարին ճշմարիտն և գեղեցիկն իրենց բնիկ տեղն բռնեն: Բայց արդեօք ինչ պիտի լինի այս նոր վիճակս, և ինչպէս կարեմ գինքն յորդորել որ կամակար ընդունի զայն՝ զոր ես ալ ոչ գիտեմ, կամ գոնէ մութ և անստոյգ գաղափար միայն ունիմ: — Ո՛հ, եթէ անցեալ տարիներուս հաւատքն ունէի, ամեն բան կը դիւրանար. պիտի ջանայի իւր հաւատքն արծարծել՝ իւր առջևն դնելով Յիսուսի Քրիստոսի խաչն՝ զնշան և զգործի փրկութեան, և պիտի յորդորէի գինքն՝ եկեղեցւոյ օգնութեանց դիմելու՝ իւր հոգին մաքրելու համար, և հաղորդութեամբ փրկչին հետ միանալու, և այսպէս Աստուծոյ ձեռքն յանձնելու զայն: Անտարակոյս շատերուն համար այս բանս պարզ դիւրին և զբաւուր ճամբայ մի է. բայց այս բանիս համար հաւատք ունիլ պէտք է՝ զոր երկուքս ալ չունինք:

Սակայն գոնէ Աստուծոյ վրայ խօսելու եմ. որովհետև Աստուած ամեն տեղ լինելով՝ տարակոյս չկայ

Մահուան առջեւ ի՛նչ կարեմք առնել

11 Նոյեմբեր.

Հիւանդութիւնն ծանրացայ, մահն մօտենայ, և ես դեռ սիրտ չարարի երթալու աւանելուընա. արդեօք իմ կողմանէս վատութիւն մի է այս, և դժուարութիւն կը կրեմ հոգեվարքի տեսարանն տեսնելու: Իրաւ բնութիւնն այս բանէս կը սարսափի. բայց արդեօք բնական սարսափն է որ զիս կ'արգելու. ապա ուրեմն խմաստասիրութեամբս հանդերձ՝ սամիկ մարդ կանց չափ տկար եմ և ես. կարելի է որ... բայց ոչ, իմ տատամսութիւնս այսպէս յառաջ չգար, որ յիրաւի շատ ամօթ լինէր. ուրիշ պատճառ մ'ալ կայ՝ որ ես դիտեմ: այս է որ հոգեվարքին քով գտնուիլը զիս պիտի չվոթէ:

Ինձ անվայել բան է՝ իւր վիճակին յիրմէ ծածկել, և սակայն խմացնելն ալ ինչ բանի կուգայ, որովհետև այս գոյժէն յառաջ գալու չարեացն ալ դեղ մի, ճար մի չունիմ: ապա ուրեմն զուր տեղ զինքն պիտի խռովիմ, եթէ հարուածն անուշցնելու և ցաւն մեղմացնելու համար միխիթարութիւն և յուսոյ նշոյլ մի չունիմ: Երթամ ևս ինչ ասացից իրեն, աշխարհիս սովորական խօսքերն. այս պարագային մէջ ես չեմ կարող, նմա ալ բոլորովին անօգուտ լինին ասելիքս. յայտնի բան է որ մերկ աշխարհ եկող մարդ մի՝ որ ամեն բան կը ձգե կերթայ՝ աշխարհիս մէջ թողածներուին միխիթարել ոչ լինի: Մարգիօրէն մահուան մէջ իրեն համար ցաւին և կսկիծէն զատ ուրիշ բան չկայ, կորուսանել սիրելի կին մի և զաւկներ՝ որ նմա կարօտութիւն ունին, բաղդն զոր հաղիւ սկսեալ էր վայելել, վիճակն որ այն ինչ կարգի կը մնայր, համ

որ աշխարհիս հրաժարած առեն իր առջևն պիտի ելնէ։ — Բայց խմաստասիրաց մէջ ամենէն աւելի հոգեկանութեան հաւատացողներուն Աստուածն ալ՝ վերացական բան մի է և հակ մտաւորական, իսկ նորա անձնաւորութիւնն ևս ճանաչողներուն համար ալ ցուրտ և անկարեկիր և ումպէտ հակ մի։ Իրաւ է որ մեք նորա գոյութիւնն կը հաստատեմք բնաշխարհական բարոյական և տիեզերագրական ամեն փաստերով, բայց նորա էութիւնն և բնութիւնն և մանաւանդ մեզ նկատմամբ ինչ լինելն ամենևին ոչ գիտեմք. ուստի որչափ ալ բանաւարութեամբ իւր գոյութիւնն կընդունիմք երբև բանախօսական հետևութիւն, սակայն սրտով սիրով և աղօթիւք երեսն չեմք մօտենար. և իւր մտածութիւնն անպտուղ կը մնայ մեր մտաց մէջ, և եռանդուն հաղորդակցութիւն մի ոչ հաստատուի նորա և մեր մէջ։

Մանաւանդ թէ Աստուծոյ ընդ մարդկան ունեցած հաղորդակցութիւնն ալ հանրական կերպով մի միայն կըմբռնեմք՝ ինչ որ ուրիշ արարածոց հետ ալ ունի՝ տիեզերական օրինաց ձեռքով, որք անփոփոխ և հարկաւոր լինելով՝ ամեն էակաց վրայ ալ առ հասարակ կը տարածուի՝ որոց զարգացումն ալ ճիշդ կերպով որոշուած է։ Ասոր համար է որ աղօթքն ալ անօգուտ կը սեպեմք և անվախճան բան մի, և մեզ այնպէս կերևի թէ աղօթքն ուրիշ արդիւնք մի չունի՝ բայց պատրանօք իւիք Թշուառացեալոց յոյսն արծարծել. բայց ըստ վախճանին անօգուտ և ընդունայն է՝ որովհետև մարդկանց պաղատանքն իրաց հարկաւոր ընթացքն և տիեզերաց անխախտ կարգն չէ կարող փոխել։ Ուստի չեմ կարող ասիպել զինքն որ աղօթէ. որովհետև համոզեալ եմ որ բանի մի չգայ, և ինքն ալ ինձ պէս կը մտածէ։

Աստուածային արդարութեան վրայ արդեօք խօսիմ. այլ ասա՛, ինքն ալ շատ լաւ գիտե այս բանս,

և շատ անգամ զրուցել եմ նմա որ Աստուծոյ արդարութիւնն, ճակատագրի ճշմարտութեան և բնութեան անբեկանելի օրինաց պէս անողոքելի է. այս կողմանէս ալ միխիթարական բան մի չունիմ նմա ասելու. և նախասահմանութեան առջև դլուխն խոնարհեցնելէն զատ ուրիշ բան չկայ առնելիք. եղածն եղած է և չէ հնար փոփոխել։ Արդիւնք ի պատճառաց յառաջ գան, հետևութիւնք ի նախադրելոց, և պատուէն ի սերմանէն։ Եթէ յանցանք գործած է՝ ինչպէս որ ամեն մարդ ալ կը գործէ, պէտք է որ քաւէ զնոսա, և ոչ ոք կարէ զինքն ազատ առնել՝ առանց արդարութեան դէմ գործելու։

Արդեօք աստուածային ողորմութեան վրայ խօսիմ, և այն միջոցներուն որովք իր հոգւոյն վրայ կարէ իջանել, որով և մահուան դառնութիւնն մեղմացնել, և նոր կեանքն գիւրացնել։ Բայց ողորմութիւն ասացածնիս ինչ է, բայց եթէ սրտի կարեկցութիւն այլոց թշուառութեան վրայ՝ որ ուրիշն վիշտն թեթևցնել կը ջանայ նորա կրնայն կարեկից լինելով. այս բանս կենդանի մարդկանց մէջ գտուելն խելքս կը պառկի, բայց ինչպէս նոյն բանն կարեմ մտածել տիեզերական էակին վրայ՝ որ բացարձակ սիրելն է ամենայն գոյացութեանց, և հաւասարապէս կենդանացնէ զնոսա իւր լուսոյն ջերմութեամբն և կենօք։ Եւ որովհետև իւր ազդեցութիւնն հանրական օրինօք կը ներգործէ՝ որ իւրաքանչիւրոց վիճակին հաւեմատ հարկաւ ասհմանեալ է, ինչպէս կուզես որ Աստուածայն գրած կարգն գագրեցնէ փոխէ կամ չափաւորէ՝ մահկանացուաց իրարու հակառակամարտ ըղձից համեմատ։ Այս փոփոխականութիւնն ի վերկաւարութեան աշխարհի՝ տիեզերաց տիրոջն համար անվայել բան է, և այնու նոյն իսկ իւր էութիւնն չկարէ պատուել։

Անհաւասիկ այսոր համար է որ մեք հրաշից ալ ոչ

հաւատամք, և զնոսա անհնարին համարիմք, և աղօթիւք զնոյն հայցելն ալ անմտութիւն կը սեպեմք: Եթէ ջնտկարն յորդորէի իւր առողջութիւնն ընդունելու համար աղօթելու, ոչ ապաքէն անտեղի բան մի նմա առաջարկած լինէի, որովհետև ըստ օրինաց բնութեան և ըստ վճռոյ բժշկական դիտութեան ալ պիտի ջապրի:

Վերջապէս ինչ կարացից ասել զինքն մխիթարելու համար ընդ կորուստ կնոջն և որդւոց և բարեկամաց: Կարեմ վստահացնել զինքն որ օր մի զնոսա պիտի տեսնէ, և հաստարակաց երջանկութեան մէջ նորէն պիտի գտնէ այն քաղցր ղգացմունքն՝ որ իւր վայելքն էին աշխարհիս մէջ: Տարակոյս չկայ որ այս բանիս հաւատալն իրեն մխիթարութիւն մի պիտի լինի. բայց ինչ գիտեմ: Ես ալ նոյն նախազգացումն նոյն յոյսն և վախքն ունիմ, բայց ապահով չեմ, և գերեզմանէն անդին եղած հոգւոց վիճակին վրայ ինձ ամեն բան մութ ու խաւար է: Եթէ տակաւին քրիստոնէական հաւատքն ունէի՝ կարէի իրեն հետ խօսել երկնից և հոնտեղի ուրախութեանց վրայ, հոգւոց միանալուն վրայ Յիսուսի Քրիստոսի աստուածային փառաց և երջանկութեան մէջ: Գիտեմ որ այս գեղեցիկ նկարքս, այս յաւիտենական ճաճանչալոյս նկարագիրս սքանչելի ազդեցութիւն և քաղցր հրապոյրք մի ունի վառվռուն երևակայութեանց և բուռն սրտերու վրայ: Բայց իմաստասիրի մի համար՝ որ մաց տեսած դատած և հաստատածն միայն կընդունի՝ այսքիկ մտգական հայելւոյ հրաշալի երևոյթներ են, և քրիստոնէական քերթողութեան կեղծիք, հեթանոսաց ելլեսեան դաշտերէն սակաւ մի աւելի բանաւոր, և կամ աշխարհիս անուանի մարդկանց աստուածարեալն կամ աստուածոց կարգն անցնելուն նման առասպելներ:

Աւաղ, աւաղ. ապա ուրեմն այս գորովանօք սիրած հոգեվարքիս համար ձեռքէս բան մի չգաւ առնելու. ես որ մինչև ցայսօր կենաց ամեն դժուար պարագայներուն մէջ իրեն օգնեցի, հիմա դժուարագունին մէջ որ է իր մահուան ժամն, անկարող և զինաթափ դըտանիմ: Կարծեցի թէ նմա ուսուցի ապրիլն, բայց մեռնիլ ուսուցանել չեմ կարող: Ո՛վ Աստուած իմ, ինչ առնելու եմ այս ողբալի վիճակիս մէջ: Աւելի լաւ չէ որ զինքն ամենևին չտեսնեմ, երբ օգնութիւն մի չեմ կարող առնել իրեն, և իմ անկարող ներկայութիւնս արդեօք չաւելցնէ պիտի իւր տագնապն՝ զիս ինքն խռոված տեսնելով: Ոչ, այս բանս վատութիւն է. ուզեմ չուզեմ պիտի երթամ զինքն տեսնելու, որովհետև սիրտս զիս կը մղէ. պիտի երթամ գոնէ անգամ մի ալ իմ սէրս իրեն ցուցանելու, և իւր սիրոյն վերջին դրաւականն ընդունելու համար:

Վերջին տեսակցութիւն

12 Նոյեմբեր:

Տէսի զինքն. և հաւանական է որ ալ ևս չտեսնեմ. իմ այցելութիւնս կարծես թէ առջի բերան չատ հաճոյ եղև նմա, բայց յետոյ վերջն աստիճան տագնապ մինկարեցաւ իւրգիմաց վրայ և զինքն տխրեցուց: Հասնելուս պէս միտքս գրել էի որ իր գտնուած վիճակն և այնոր կարելի հետևանքն իրեն իմացնեմ, և կուզէի ձշմարտութիւնն իրեն զգուշել. ինչպէս մտերիմ բարեկամի ևս առաւել իմաստասիրի մի կը վայելէր: Բայց ներս մտածիս պէս իւր կինն ահռելողի մէջ բռնուած զիս դիմաւորեց ու ազաչեց որ և ոչ իրեն տեսեմ թէ ուրչափ փոխուած կը տեսնէի զինքն, որպէս զի իւր պատրանքն չփարատեմ և զինքն չկոր-

վեմ, որով կարէր իւր վիճակն ծանրանալ և կարճեցընել իւր մնացած օրերն: Սակայն ես նմա ցաւակից լինելով ևս՝ բան մի չխոստացայ:

Երբ անկողնոյն մօտ հասի՝ շատ այլայլած լինելուս՝ կը վախէի որ ինքզինքս չկարողանամ բռնելու, վախս նմա յայտնելով: Բայց շատ զարմացայ երբ զինքն ուրախ և հանդարտ գտի, թէպէտև ներսէն այլայլած էր: Զիս համբուրելէն և այցելութեանս շնորհակալ լինելէն ետև, շուտով սկսաւ իւր վիճակին ջերմագին եռանդեամբն՝ քաշածներն համրել, գործածած դեղերն, բժշկաց և ընտանեաց խնամքն պատմել, ասելով թէ հիւանդութիւնն անցած կերևէր, և ինքզինք աւելի լաւ կը գտնէր և կուրծքն ալ աւելի հանգիստ էր, և կուզէր Պիրենեանց ջրերն երթալ ժամ մի առաջ բոլորովին առողջանալու համար: Յետոյ սկսաւ իւր ապագայ յոյսերուն վրայ՝ գործոցն փափաքանաց և զուարճութեանց վրայ խօսիլ, այնպէս որ մահուան դրան առջև կենաց այս կռիւն տեսնելով՝ ապշած մնացի. և ինձ նոյն տպաւորութիւնն արար՝ ինչ որ կանթեղի մի պլպլացող բոցն որ մարելու մօտ աւելի կը լուսաւորուի, արագ կը թռչտի և բոլորովին խաւարելէն առաջ կայծեր ու լոյսեր կը ցայտեցնէ: Եւ այս բաներս այնչափ վստահութեամբ կը զրուցէր՝ որ սիրտս առաջ ոչ երթար իւր խաբուած լինելն իրեն իմացնելու: Ոչ գիտեմ թէ այս բանս իմ կողմանէս վատութիւն էր թէ մարդասիրութիւն. բայց յիրաւի անգթութիւն կը համարէի այս պատրանքս իւր մտքէն փարատել և այնոր տեղ տխուր ճշմարտութիւնն իրեն ցուցանել, որ այնչափ աւելի սրտին պիտի դպչէր և զինքն այլայլէր՝ որչափ որ մտքէն ոչ անցանէր: Այսոր համար 'ի բաց թողի ինչ որ միտքս գրել էի իրեն իմացնելու, որովհետև վրաս կարողութիւն ալ չէր մնացած այս բանս առնելու. և որպէս զի իւր խօսքերուն բոլորովին անզգայ լինելովս կամ

պաղ լռութեամբս և ձևացեալ խօսքերովս զինքն չվախցնեմ, ես ալ ուրիշներուն պէս ասացածներուն հաւանութիւն կը ցուցանէի, և սուտերով իւր յետին պատրանաց մէջ զինքն կը հաստատէի. բայց կը խոստովանիմ որ այս բռնադատեալ կեղծաւորութիւնս սիրտս տակնուվրայ առնէր, և ես յինէն և ասացած խօսքերէս կ'ամաչէի: Ինչ բանի կուգայ իմաստասէր լինելն, ասէի ինքնիրենս, երբ մեք ալ ուրիշներուն պէս գերի եմք շինծու պատշաճութեանց և նախապաշարմանց աշխարհի, թողլով բարեկամնիս մերձակայ վտանդի մէջ և չհամարձակելով գոնէ խօսքով մի վտանդն իրեն իմացնելու: — Այլ աւաղ, ուղիղն զրուցեմ, որչափ ալ որ կ'ամաչէի՝ վատութիւնս բանի տեղ չդրի, և թէպէտ խիղճս կը զարնէր լռութեանս և սուտերուս վրայ, սակայն հիւանդին ցուցած սիրովս ու խնամքովս կը ջանայի խղճիս ձայնն լռեցնել: Խեղճ Ետկարն ալ շնորհակալ լինէր. և թերևս այսպիսով բաժնուելէս յառաջ քանի մի քաղցր վայրկեաններ անցնել տուի իրեն. որովհետև ալ յոյս չունէի նորէն զինքն տեսնելու: Բայց ինչ բանի կուգային իրեն այս խօսքերս. անցեալ կենաց ամեն հաճոյական յիշատակութիւններն՝ ապագային մի յուսոյ ճառագայթ ոչ արժեն: Այն սարսափելի ապագայն որ սակաւ ժամանակէն ներկայ պիտի լինի՝ աչքերնուս առջև բերելու կը վախէինք, և սակայն նա մեր առջև կեցած է իւր խորհրդական մթութեամբն սպառնալից ուրուականի մի պէս:

Քառորդի մի չափ իր հետ մինակ մնացի, և պէտք է խոստովանիմ որ իրեն վրայ ունեցած սիրովս հանդերձ՝ շատ երկայն կ'երևէր ինձ այս ժամանակս, և կը նայէի որ կերպ մի գտնեմ կծիկն դնեմ հեռանամ՝ ոչ այնչափ մահուան մօտենալուն տխուր տեսարանէն փախչելու համար, այլ աւելի կեղծաւորական և իմ վիճակիս անպատիւ դիրքէս ազատելու համար:

Բարեբաղդաբար քանի մի բարեկամներ վրայ հասին և անկողնոյն բոլորտիքն շարուեցան՝ որոց ամենուն ալ խնտում երես ցուցնելով՝ գրէթէ ինձ ասացածներն իրենց ալ կրկնեց իւր առողջութեան ու ճամբորդութեան վրայ խօսելով։ Բայց խօսելէն հոգնելով՝ յանկարծ սաստիկ հազ մի բռնեց զինքն և սկսաւ արիւն փսխել, այնպէս որ կոնքն լեցուեցաւ, և ինքն անկաւ փռուեցաւ՝ հանդերձ ջերմի տաքութեամբ. կանայք վազեցին չորս կողմն առին կարելի եղած դարմաններն առնելու. իսկ ուրիշներն տեղերնին դամուած մնացին ինչ առնելիքնին և ասելիքնին չդիտելով ու ահուդողի մէջ անկանելով։ Իսկ հիւանդն գրեթէ բոլորովին անզգայացած ոչ կը լսէր ոչ կը տեսնէր, և եթէ խօսելու համար սակաւ մի ինքզինքն բռնադատէր՝ բանն բուսած էր. մեք ամենքնիս ալ լեզունիս կապուած՝ աչքերնիս հոգէվարքին վրայ տնկած՝ կարծէինք թէ հիմա պիտի մեռնի. իսկ ես առանձինն կը մտածէի թէ որչափ անզօր են բոլոր աշխարհիս օգնութիւնները մահուան ժամանակ. հոն եօթն ութ հոգի ողջ առողջ մարդիկ՝ որ սրտանց հիւանդն կը սիրէինք և կը փափաքէինք կերպով մի նմա օգնելու՝ և սակայն ասելիքնիս առնելիքնիս ոչ դիտէինք. և ակամայ մտքէս կանցնէր թէ կայ մարդ մի՝ որ ուրիշներուն բան մի չկրցած ատենն՝ ինքն կարէր կերպիւ իւիք օգնել իրեն՝ եթէ ոչ խօսքով՝ զոր հոգէվարքն կարողութիւն չունէր լսելու, գոնէ մօտեցնելով իրեն խաչելութիւնն զնշանն փրկութեան՝ զարթուցանելով իր հոգւոյն մէջ անցեալ յանցուածոց զիղջն և զփափաք քաւելու զնոսա իր մահուամբն, և տալով նմա նշոյլ իմն յուսոյ և ակնկալութեան։ Եւ ինքն իրենս ասէի թէ Յիսուսի Քրիստոսի քահանայն իւր պաշտաման իշխանութեամբն և խորհրդոց զօրութեամբ, կենաց և մահուան համար օգնութիւններ ունի՝ երբ աշխարհիս օգնութիւնները բանի ոչ գան.

և ես իմաստասէրս՝ որ 'ի բազմաց հետէ եկեղեցին ոտք կոխած չեմ, բայց մանկութեանս հաւատքովն քահանային ինչ լինելն կը ճանաչեմ, ակամայ կը ցաւէի որ մէջերնիս քահանայ մի չկար, և մահուան ամենէն աւելի հարկաւոր մարդն մեզ կը պակսէր։

Յետին օգնութիւն

13 Նոյեմբեր։

Ամեն բան աւարտեցաւ. Ետկար այս գիշեր հոգին աւանդել է. երեկուան իմ ականատես եղած ճգնաժամին չէ դիմացել, բայց մեռնելէն առաջ քահանայ մի գտնուել է քովն և մխիթարուել է. և եկեղեցւոյ պաշտօնէին ձայնն՝ նորա սրտին մէջ զարթուցանելով իւր մանկութեան հաւատքն՝ քրիստոնէական զգացմամբ վախճանել է. ուստի այն բանն զոր երէկ կը փափաքէի և կը ցաւէի՝ մերձակայից անկարողութիւնն տեսնելով՝ եղել կատարուել է. ես ալ ուրախ եմ, որովհետև մեր տալ չկարողացած խաղաղութիւնն ու մխիթարութիւնն ընդունել է. մնացածն ինչ որ կուզէ թող լիցի։ Եւ այնպիսի զարմանալի կերպով մի եղել է այս բանս՝ զոր չէի կարող գուշակել. այն բանն զոր իմաստասէր և իմաստուն ու գրագէտ բարեկամք չէին կարողացած շնորհել հոգէվարքին՝ որ է մահուան մօտ յոյս և խաղաղութիւն, բարի կին մի կարողացել է առնել, և այն վայրկեանին՝ որ հոգւոյ յաւիտենական ապագայն պիտի որոշուի՝ խեղճ աղախին մի պատճառ եղել է նորա փրկութեանն՝ եթէ փրկութիւն ասացած բանդ կայ. գէթ իւր հաւատքովն և քաջասրտութեամբ՝ զմեզ ալ մեծ տատամսութենէ ազատել է։

Եակարին առնն իրեն երկրէն սպասաւոր կին մի կար՝ որ ժամանակաւ իրեն ծծմայրն և իւր տղայութեան խնամածուն եղած էր, և իւր զաւկին պէս կը սիրէր, և թէպէտ աղախին էր՝ բայց իւր գրեթէ մայրութիւնն և սիրոյն ալ իւր վրայ ունեցած սէրն՝ տան մէջ տանտիկնոջ իշխանութիւն մի տուած էին իրեն. ուստի գրեթէ առանձնաշնորհութիւն մի ունէր սրտէն կամ խելքէն անցածն ըսելու. և ոմովհետև դերդաստանին բարօրութեանն բոլորովին ինքզինքն նուիրած անձն մի էր, և բարկէն զատ ուրիշ բան գործած չունէր՝ այնոր համար ըսուցածն ներն ծանր չէին գար և շատ անգամ ալ կը կատարուէին:

Տիրոջն հիւանդանալէն 'ի վեր՝ Կատարինէին բոլոր կեանքն զայն գարմանել, նորա մօտն հսկել և իրեն ծառայել էր. մանկութենէ նորա կազմուածքն գիտելով՝ խելքովն կը գտնէր թէ նա ալ պիտի չապրի, և մարմնոյն առողջանալէն յոյսն կտրած՝ եռանդեամբ նորա հոգւոյն փրկութիւնն կը հոգայր, զոր իւր բարի քրիստոնէութեամբն՝ կորսուեան ճամբուն մէջ կը համարեր, քանի որ իւր սէրն խմաստասէր լինելէն 'ի վեր առաւօտեան և իրիկուան աղօթքն ոչ կատարէր, և կիրակի օրերն պատարագ լսելու ոչ երթար: Արդէն շատ անգամ իւր տիկնոջն ասացել էր՝ որ այսպիսի ծանր հիւանդութեամբ բռնուած քրիստոնեայ մի, կրօնից օգնութիւններէն զուրկ թողուլն մեծ մեղք է. և թէ մարմնոյն հետ հոգին ալ հոգալու է, և թէ իր երկիրն հիւանդութիւն մի հասածին պէս՝ բժշկէն առաջ քահանային կը վազէին: Եակարի կինն իւր սիրուն կուրցած՝ և աւելի վախնալով որ մի գուցէ իւր այն խռովի ու վախնայ, նորա աղքատութեանցն ականջ չէր կախած, այլ պէս որ խեղճ Կատարինէն՝ որ իւր հաւատոց աչքն նորա վրայ կը հսկէր՝ անհանգարտ տագնապի մէջ էր

իւր տիրոջ անկողնոյն մօտ, գիտելով և առթի մի ըսպասելով որ նմա իւր սրտին անցածն ասէ, զնա առ Աստուած գարձնելու և քրիստոնէական պարտքերն կատարել տալու համար, ու գիշեր ցորեկ այս բանս կը մտածէր:

Երեկուան դէպքով ալ խեղճ պառաւն համբերութիւնն հատաւ. ժամանակն յարմար էր. ուստի իւր հաւատոց եռանդեամբն և գրեթէ մայրական իշխանութիւն մի ցուցանելով՝ իր տիկնոջ հետ վիճաբանել սկսաւ բարկութեամբ՝ որ պարագային ծանրութեան նայելով ներելի էր: Յայտնապէս զրուցեց իրեն՝ որ ալ ինքզինքն չկարէ, վասն զի Եակարին բանն լմնցած էր և քանի մի աւուր կեանք միայն ունէր, և եթէ ոչ կամէր որ նորա հոգւոյն կորուստն իրեն յաւիտեան խիղճ լլցի՝ պէտք էր որ անյապաղ քահանայ մի կոչէր տար Աստուծոյ հետ զինքն հաշտեցնելու համար, և թէ ամեն ոք մեծ մեղք էր թողուլ որ քրիստոնեայ մի առանց եկեղեցւոյ խորհուրդներուն մեռնի. և վերջապէս եթէ ինքն սիրտ ոչ առնէր հիւանդին հետ խօսելու՝ ինքն իր վրայ կառնուր այս բանս: Եւ այնչափ ուժով եռանդեամբ և միանգամայն խանդաղատանօք խօսեցաւ՝ որ տիկին Եակարին սիրտն շարժեցաւ ու տակնուվրայ եղաւ: Մարդկանց կողմանէ օգնութիւն մի չտեսնելով՝ Աստուծոյ վրայ դրաւ յոյսն, և իւր երկան խմաստասիրութեամբն իր Թմրած հաւատքն ալ վառնգն տեսնելով արթնցաւ՝ աղախնոյն եռանդուն հաւատքովն, ինչպէս որ գայլսխաղէն կայծ կը ցատքէ՝ երբ երկաթով կը զարնես: Իւր խիղճն ալ՝ որոյ դէմ կը բողոքեր այն բարի կինն, սարսափեցաւ՝ իւր պատասխանատուութիւնն տեսնելով. և ինքն ուժ չտեսնելով այս բանս առնելու՝ Կատարինէի Թողուց որ հիւանդին հետ խօսի:

Բարի կինն առանց տարտամելու՝ շիտակ ճամբայն բռնեց, առանց երկայն գարձուածներու մեղմ զուր-

ցուածներու և ճարտասանական պատրաստութիւն-
ներու, և կարուկ կերպով իր վախճանին հասաւ, ո-
րովհետև կորուսանելու ժամանակ ալ չկար, լալով
և առաւել ևս քրիստոնէական կարիճ խօսքով լմա-
ցուց սիրոյն որ պիտի մեռնէր, և մահուան պատ-
րաստուելու ժամանակ միայն մնացել էր իրեն: Յե-
տոյ առանց ուրիշ խօսքերու՝ առաջարկեց որ քահա-
նայ մի բերէ իրեն, որպէս զի պէտք եղածն կատարէ
ինչպէս որ իր երկիրն առնէին, և ինչպէս որ իր
ծնողքն և պապերն արարեալ էին, այսինքն բարի
քրիստոնեի մի պէս մեռնիլ:

Հիւանդին սիրտն շարժեցաւ այս խեղճ հնոյ հա-
ւատքին և քաղցր սիրոյն՝ որոյ բարեպաշտ ու պարզ
խօսքերն՝ կարծես թէ վնքն յանկարծ իր հայրենիքն
և իւր հայրենի տունն վոխադրեցին, և միտքն բերին
իւր մանկութեան կեանքն և հօրն ու մօրն քաղցր
յիշատակն՝ որ մինչև վերջի շունչերնին հաւատարիմ
կաթողիկեայ ապրած և եկեղեցւոյ միութեան մէջ
մեռած էին: Այս կենդանարար մտածութիւնս հան-
դերձեալ աչխարհէն վչած անուշ հովի մի պէս՝ իւր
հոգւոյն ամպերն վանեց վարատեց, զովացուց և քա-
ջալերեց, և պարզութեամբ հանդարտութեամբ և ա-
նանց պչպչելու պատասխանեց. Իրաւունք ունիս
Կատարինէ, գնա քահանայ մի բեր ինձ՝ որպէս զի
մեր երկիրն ինչպէս որ կը մեռնին՝ ես ալ նոյնպէս
կեանքս աւարտեմ:

Կատարինէն վազեց իւր խոստովանահայրն բերաւ՝
որ պատուական և սուրբ քահանայ մի էր՝ թէպէտ
լմաստուն չէր, որ մահուան առեն ալ աւելի լա-
ւագոյն է թէ իւր անձին և թէ այլոց համար. սա-
կայն խեղճ հնոյ մտատանջութիւնն այնու չըմնացաւ:
Երբ քահանայն հասաւ՝ հիւանդն ճգնաժամ մ'ալ
ունեցել էր, և բժիշկին աճապարանօք գալով և պէտք
եղած հանդարտեցուցիչ դեղերն տալով՝ ապսպրեց

էր որ ամենևին մարդ չմտնէ հիւանդին քով և չխօսի,
ասելով թէ իր կեանքն անոի կախուած էր, և խօս-
քով հոգնութիւն մի կամ ծր և իցէ յուզումն՝ կարէր
արիւն փսխել տալ՝ որ վերջինն պիտի լինէր: Պա-
տուական քահանային համբերութեամբ երկու ժամ
սպասեց՝ որպէս զի հիւանդն տակաւ մի հանգչի և զօ-
րանայ. և այս ժամերս իրեն աւելի ծանր եկին տիկին
Եակարինի հետ ունեցած վիճաբանութեամբն. վասն
զի այս կինս յուսահատութենէն ինչ ասացածն չգի-
տելով՝ կարծեր թէ քահանային իւր այրն վրկելու
դիտմամբ՝ նորա մահն պիտի փութացնէր: Քահա-
նայն քաղցրութեամբ բայց միանգամայն և հաստա-
տութեամբ դէմ դրաւ, և վերջապէս Թողութեն որ
ներս մտնէ, որ երբ անկողնոյն մօտեցաւ՝ հիւանդն
սիրով ընկալաւ զնա՝ նորա խօսքերն լսեց և խոստո-
վանեցաւ՝ խէչքն կատարեալ գլուխն լինելով՝ թէ-
պէտ և մարմինն տակը և ցաւոց մէջ էր, և ինչ ժամ
քահանային հետ մնաց՝ առանց արկած մի հանգիստե-
լու. այնպէս որ երբ իւր յուսահատ կինն ներս մտաւ
զինքն տեսնելու, զնա հանդարտ և զուարթ տեսնե-
լով չատ զարմացաւ: Սիրով և խանդաղատանօք հա-
բուրեց իւր կինն, և վերջին մնաս բարովը ասաց՝ նմա
յանձնելով իւր զաւկներն, ասելով թէ Աստուծոյ
նախախնամութիւնն զնրենք պիտի հոգար, որովհե-
տև այ հայրերնին կը կորուսանէին. չնորհակալ եղև
հնոյն որ Թողել էր քահանային իւր քովէն գալու,
որովհետև իւր այն վիճակին մէջ ամենէն մեծ ծառա-
յութիւնն արարեալ էր իրեն այն բանով:

Այս բաներս նոյն իսկ կինն պատմեց ինձ երկրորդ
օրն՝ երբ առաւօտուն գնացի հիւանդն հարցնելու.
որ նոյն գիչերն հանդարտ մարել մեռել էր գրեթէ
առանց հոգեվարք քաչելու, ձեռքին մին հնոյ ձեռայ
մէջ, և միւսովն կուրծքին վերայ սեղմելով փոքրիկ
խաչելութիւն մի՝ որ իւր առաջին հաղորդութեան

ատեն տուել էին իրեն, և զոր Կատարինէն բարեպաշտութեամբ պահել էր մինչև այն ատեն, երբ պառաւ աղախինն անկողնոյն ոտքն ծնկան վերայ եկած՝ բոլոր սրտով հոգէվարաց աղօթքն կը կատարէր:

Արդեօք աւելի քրիստոնեայ քան թէ իմաստասիրի պէս մեռնելն լա՞ւ արար թէ չէ, բան մի չեմ կարող զրուցելու, և ոչ կարեմ ալ զինքն մեղադրել: Այս միայն գիտեմ որ ես իմաստասէր և իւր վարդապետն լինելով՝ բոլոր իմ գիտութեամբս չկարացի բան մի ասելու և առնելու իւր վերջին վայրկեաններն քաղցրացնելու և ապագային վերայ յոյս մի տալու համար, մինչդեռ խեղճ ագէտ կին մի լի հաւատքով՝ իւր հաւատոց իրեն շնչած առաքինութեամբն և քաջութեամբ՝ եկեղեցւոյ օգնութիւններովն ետ նմա մխիթարութիւն զօրութիւն և յոյս:

Թաղումն

14 Նոյեմբեր:

Սաստիկ հոգնած եմ, ոչ այնչափ այս աւուր աշխատանքէն՝ որչափ սրտիս ալեկոծութենէն՝ ու անհանգստութենէն. մահուան երկայն ժամանակ տևած տեսարանն՝ վերջապէս զմարդ տրտմութեամբ կը լեցընէ. շատ տարիներէ՚ի վեր սիրելի եղած բարեկամի մի մահն սիրտս կը վիրաւորէ ու կեղեքէ, մանաւանդ երբ կը մտածեմ որ ա՛լ պիտի չտեսնեմ զինքն. իսկ իր վերջին ժամուց պարագայներն՝ զիս իր Թաղման հրաւիրեալ բարեկամաց առջև տագնապողական վիճակի մի մէջ ձգելով՝ աւելի կը վհատեցնէ: Այս բարեկամներէս ոմանք յիրաւի տրտմած կ՚երևէին Ետկարի վաղահաս մահուան վրայ, իսկ շատերն հոն կու-

գային՝ միայն ընկերական պատշաճից պարտք մի կատարելու դիտմամբ, իրենց երեսաց վրայ տրտմութիւն տպաւորուած, և սուգի զգեստներ հագած: Ցած ձայնով կը խօսէին վախճանելոյն քրիստոնէաբար մեռնելուն վրայ, և իրենց հայեցուածքէն կը հասկնայի թէ շատ զարմանք կը բերէր իրենց այս բանս, և զիս ալ այս եղածիս պատճառ կը համարէին, բայց յանիրաւի. կամ գոնէ կարծէին որ եթէ ես ուզէի՝ ուրիշ կերպով կարէր աւարտիլ այս բանս:

Կարելի է... բայց այսպէս ուզելու համար՝ ես ալ պատճառ ունելու էի՝ զոր չունիմ: Պէտք էր որ ես ալ համոզուած լինէի՝ որ իմաստասէրն ալ ստոյիկեանի մի պէս ամբարտաւանութեամբ մեռնելու է, կամ եպիկուրեանի մի պէս անհոգութեամբ, կամ վերջապէս անասնոյ մի պէս ապշութեամբ և անբանութեամբ: Իսկ արդ որովհետև ես ոչ Զենոնի աշակերտ եմ և ոչ Եպիկուրոսի և անբան անասուն մի չլինելուս վրայ ալ կը պարծիմ, ապա ոչ կարէի բարեկամիս այնպիսի խորհուրդ մի տալ՝ զոր ես ինքն չէի կարող գործադրել այնպիսի դիպուածի մի մէջ: Ի՞նչ առնելու էի ուրեմն՝ ես ալ ոչ գիտեմ. և հաստատապէս միտքս դրած եմ որ ինչ եղև՝ լաւ եղև, որովհետև գոնէ ամենէն աւելի ապահով կողմն է մեր տատամսութեանց մէջ:

Հրաւիրելոց մէջ կային նաև խելացի մարդիկ և շատ քրիստոնեայներ՝ յորոց ոմանք ասել կուզէին թէ ամեն մարդ ազատ է ուզածին պէս մեռնիլ, և ուրիշներն իրաւունք չունին այս բանիս մէջ խառնուելու, որովհետև վերջապէս ՚վնասն ու վտանգն իրեն անկանի. ոմանք ալ շատ գոհ կ՚երևէին որ վախճանեալն եկեղեցւոյ հետ հաշտուելով՝ որչափ որ կարէր իւր հոգւոյն փրկութիւնն հոգացել էր: Կային շատերն ալ որ կարծես թէ բան մի ոչ մտածէին, Թաղման համար հրաւիրուած լինելով՝ ներկայ կը գտուէին՝

որպէս թէ պսակի հանդէս մի լինէր, փոխանակ ուրախակցութեան ցաւակցութիւնին յայտնելով, և ուրախ դիմաց տեղ՝ արտում երես ցուցանելով։

Ճամբայ ելաք եկեղեցին երթալու՝ որ տնէն բաւական հեռու էր։ Թափօրին կարգի մտնելն, հրաւիրելոց տեղերնին զետեղիլն և բազմութեան շարժումն՝ սգոյ տխուր խորհուրդներն հանդիսականաց մտքէն սակաւ մի փարատեց, և բռնաղբօղած տըխրութենէն զիրենք ազատեց. Ճամբուն զով օդն ալ սրտերնին բացաւ, և ժողովրդեան բազմութիւնն որ իրարու վերայ դիզուած հանդիսատես լինէին՝ մըտքերնին սթափեց։ Եւ որովհետև մօտանց դիտող չկար որ զմեզ բռնադատէր՝ զսպուած բնութիւնն արձակութիւն գտնելով՝ փողոցին խառնաշփոթ աղաղակին մէջ՝ այր ընդ ընկեր խօսակցութիւնն սկըսաւ նոյն օրն հադիպածներուն վրայօք։ Թէպէտ և ցած ձայնով սակայն ամենքն ալ ժամանակին նիւթոց վերայ կը խօսէին, քաղաքականութեան, դրամատան և օրագրաց՝ որ աշխարհիս ամենէն աւելի կարևոր նիւթերն կը սեպուին. որովհետև պատշաճութեան համար թատրոններու և հանդէսներու վերայ չէր խօսուեր. այսպէս է ահա աշխարհիս ընթացքն գէթ աշխարհասիրաց և իմաստասիրաց մէջ։ Իսկ քրիստոնեայք պատկառելի լռութեամբ մի իրենց մեռելին ետևէն կերթային. իսկ ես որ ասես՝ այնչափ տրամած և շփոթած էի՝ որ բան մի ոչ գտանէի խօսելու։

Եկեղեցին հասնելով՝ խեղճ Ետկարիս մարմինն կառքէն վար առնլով տաճարն մտուցին՝ ուր որ՝ 'ի հող դառնալէն առաջ՝ ուստի որ առնուած էր, վերջին օրհնութիւն մի պիտի տրուէր իրեն։ Յիրաւի գեղեցիկ արարողութիւն՝ որ յայտնապէս ծանուցանէ որ մարդս ուրիշ անասնոց պէս անբան մի չէ, և թէ իւր մնացած մարմինն ևս նուիրական է՝ որով-

հետև զինքն կենդանացնող հոգւոյն վերջին մնացորդն է։ Մանաւանդ թէ նոյն իսկ մարմնոյն յարութեան նշանն ու ակնկալութիւնն կը համարիմ այս բանս. որովհետև եթէ այս ակնկալութիւնս չլինէր՝ պատճառ մի չկար այսչափ արարողութիւններ կատարել և այսչափ պատիւներ շնորհել փոշւոյ մի՝ որ քիչ ատենէն ուրիշ տարերաց հետ պիտի խառնուի և կորսուի։ — Շատ ատեն էր որ եկեղեցի մտած չէի՝ գէթ թաղման համար, ուստի շատ զգածուեցայ. պատարագն ազդու և վսեմ է, և եղանակներն ալ շատ լաւ յարմարած են սրբազան ասացուածներուն հետ. Օր բարկութեան երգն վսեմ, իսկ Ի Խորոց կարգացին զմարդ կ'ընկճէ ու կը ճնշէ։ Հոն կիմանաս անբողոքելի ու անողոքելի դատաւորին առջև կեցող մարդուն խեղճութիւնն։ Ակամայ կերպով միաքս եկան մանկութեանս հաւատոց յիշատակներն, և ատենօք ունեցած բարեպաշտութեանս եղծեալ գրերն երևակայութեանս մէջ նորոգուեցան, և այս ստուերակերպ պատկերներս Ետկարին ուրուականին հետ խառնուելով և նորա հանդստարանին շուրջը բոլորելով՝ այնպիսի ազդեցութիւն մի արարին վրաս՝ որ գրեթէ յանզգաստից և ակամայ եկեղեցւոյ աղօթից ձայնակից լինէի՝ իմ խեղճ բարեկամիս հոգւոյն համար։ — Աւաղ, ինձ հանդիսակից եղողներէն շատերն՝ իրենց աչաց առջին եղածներուն չէին մասնակցեր, թէպէտ և արտաքուստ պատկառանօք՝ արարողապետին նշաններուն հետևելով՝ ոտք կելնէին ծնրադրէին ու կը նստէին։ — Շատերն ալ կերևէր որ բան մի ոչ իմանային. ուրիշներն ալ անտարակոյս կորովամտութիւն ցուցանելու համար՝ և հաւատքն իրենց փոքրոգութիւն համարելով՝ կը ձևացնէին թէ ամենևին մասնակից ոչ լինէին արարողութեանց կատարուելուն. աչուընին ասդիս անդին նաև ետևնին դարձնելով, ձեռուընին դրպանն կամ կռնակնին գրած, որպէս զի

իրենց արհամարհութիւնն կամ գոնէ անտարբերութիւնն աւելի յայտնի ցուցանեն, որ ունայնամտութեան վերջի աստիճանն էր. և իրաւցնէ մարդ չկարէ հասկնալ թէ ի՞նչպէս բանաւոր արարած մի այս յիմարութիւններս իրեն պարծանք կարէ համարել. մարդկօրէն խօսելով երեսնին ապտակ զարնելս կուգար:

Որչափ որ անհաւատ եմ՝ այս բաներս զիս կը դայթակղեցնէ. վասն զի վերջապէս մարդս պէտք է որ պատկառելի բաներն պատուէ՝ եթէ ոչ համողմամբ գոնէ առ պատշաճի և մարդավարութեան: Այս մարդիկս իրենց աւուր գործն աւարտեցին՝ որ այնչափ անշնորհք կերպով կը կատարէին՝ շտապաւ օրհնեալ ջուրն սրսկելով դագաղին վրայ՝ առանց գործածնին գիտելու, այսչափ միայն հասկնալով որ զիրենք ձանձրացնող և խռովող հանդէսն աւարտելու վրայ էր: Բարեբաղդաբար քանի մի բարի հոգիներ ալ կային որ կուլային ու սրտանց կաղօթէին, և յուսամ որ իրենց արցունքն և աղօթքն՝ եթէ ուժ մի ունին, հանդիսականաց անհաւատութեամբ Աստուծոյ դէմ գործած նախատինքն քաւած լինի՝ իմս ալ միատեղ:

Գերեզմաննոցն հասնելնուս՝ յուղարկաւորաց շատերն թողել գնացել էին, և գերեզմանին բոլորտիքն քանի մի ազգականներէ բարեկամներէ ու ծառայներէ զատ ուրիշ մարդ չկար: — Ընտանիքն ինձ աղաչել էին որ դամբանական մի խօսիմ. բայց ես հրաժարեցայ. և անցած գնացածն գիտելով՝ շատ վրայ չտուին, և հասկցան հրաժարմանս պատճառն. և ի՞նչ կարէի խօսել: Այնոր տեղ երկու պաղապուր ճառեր խօսուեցաւ. ոմն որ հանդուցելոյն պաշտօնակիցն էր նորա վաղահաս մահն կողբար՝ որ ընկերութեան կարևոր անդամներէն մին յափշտակել էր՝ որ նմա շատ ծառայութիւն կարէր մատուցանել, և սոյն իսկ այս երիտասարդս իւր երկայն աշխատութեանց պըտ-

զէն կը զրկէր՝ ճիշդ նոյն ատենն երբ իւր ցանկացած վախճանին պիտի հասնէր: Ուստի այս խելացի պարոնն մահն ուրիշ բան ոչ համարէր՝ բայց եթէ յառաջադիմութեան արգելք ու խափան մի: Իսկ այս աշխարհէս ելնելէն ետև գալի ապագային վրայ բան մի չզրուցեց. հաւանականաբար այս բանս և ոչ մտքէն անցել էր: — Ազգականներէն մին ալ ճառ մի կարդաց՝ պարագային համեմատ սովորական սաղաւարտեալ խօսքեր ասելով, և յաւիտենական հրաժեշտի ողջոյն մի տալով Ետկարին, որով կենթադրուէր թէ զինքն երբէք նորէն տեսնելու ակնկալութիւն մի չունէր. և նորա արդի վիճակին վրայ ուրիշ բարեմաղթութիւն չունէր ասելու՝ բայց այս միայն որ իւր դիակին վրայ ծածկուելու հողն թեթև լիցի. Հողդ թեթև. — Զգայութենէ զուրկ մարմնոյ հողն ծանր եղել է թեթև եղել է, աստի ի՞նչ իրեն հոգւոյն՝ որ ալ հոն տեղն չէ: — Ահաւասիկ ամեն օր այսպիսի խենթուխելառ խօսքեր կը զրուցուին՝ ի՞ներքոյ արեգական՝ քրիստոնեայ երկրի մէջ մեռելոց շիրմին վրայ, գերեզմաննոցի խաչին առջևն և քահանային օրհնութենէն ետև: Եւ մինչդեռ բոլոր մեռելոց դաշտն՝ հոգւոյ անմահութիւնն և հանդերձեալ կեանքն կը տարփողէ՝ կը հասնի հոն տեղն Փարիզու քաղաքացի մի և կամ ռամիկ գործաւոր ոմն՝ որ ամենևին այս սարսափելի խնդրոցս վրայ մտացած անգամ չէ, և իւր ագէտ անհաւատութեամբն զանց առնել կը ձևացնէ՝ այնոր վրայ խօսելն, մանաւանդ թէ երբեմն անհանճար խօսքերով կը յանդգնի զայն ուրանալու: Եւ այս բանս կը լսեմք ու կը տեսնեմք իննևտասներորդ դարուս մէջ, և քաղաքակրթեալ աշխարհի մայրաքաղաք սեպուած երկրին մէջ:

Բարեբաղդաբար այս սգոյ կատակերգութիւնն՝ անկեղծ և ճշմարիտ ցաւոց տեսարանով մի գոցուեցաւ՝ որ իմ զգացած վշտացս ալ մեծ սփոփանք եղև:

Պառաւ աղախինն մինչև հոն իր տիրոջ մարմնոյն ե-
տևէն եկած էր՝ զոր մանկութեան ժամանակն իր
գիրկն մեծցուցել էր. ուստի երբ գագաղն հողն գրին
և ամեն մարդ օրհնեալ ննջումն սրսկեց, ինքն ալ յե-
տոյ մօտեցաւ և ջրոյն հետ՝ի միասին իւր արտասուքն
ու հեծեծանքն ալ եհեղ այնոր վրայ: Այս անկեղծ
ցաւոց արձագանքն ես ալ սրտիս մէջ զգացի և մխի-
թարուեցայ. արցունքն աչքերուս մէջ լեցուեցան, և
թէ որ տէրն անյարմար չլնէր՝ այն բարի կինն պի-
տի համբուրէի. բայց բաւական սեպեցի երթալու
ժամանակս նորա ձեռքն սեղմելու:

Գերեզման փորողներն իրենց գործն կատարեցին
հողն գագաղին վրայ ծածկելով, և այն ահագնագը-
ղրդ տխուր ձայնին՝ հանգիսակից ցրուեցան՝ ի-
րաքանչիւր ոք իւր գործին կամ զուարճութեանն
փութալով, մահուան տեսարանէն սակաւ մի տրխ-
րադէմ. բայց շատերն և ոչ անգամ մոածէին որ թէ-
րևս վաղն կարգն իրենց պիտի գար:

Մեռելոց հետ հաղորդակցութիւն

15 Նոյեմբեր:

Եակարն երազիս մէջ տեսի, և դեռ մինչև հիմա ա-
նուշ զգացում մի կը զգամ. ինչ և ինչպես լինելն
մոքիս եկնի, և մանրամասն չեմ կարող պատմել. այս
միայն միտքս մնաց որ ինքն թշուառ ոչ երևէր, և ինձ
սրդողած ոչ տեսնուէր. ընդհակառակն զիս տեսնե-
լուն վրայ շատ ուրախացաւ, և թէպէտ ամեն ատե-
ցածն միտքս չէ, սակայն իւր առջի սէրն ու բարեկա-
մութիւնն կը յիշէր: Ո՛հ սիրելի հոգի, ինչպես կու-
զէի գիտենալ թէ ո՛ւր է արդեօք հիմա և ինչպես է. ո՛ր-
չափ ցանկալի է ինձ մեր զգացմունքն և խորհուրդ-

ներն իրարու հաղորդել՝ ինչպես որ երկրիս վրայ ե-
կայն ժամանակ առնէինք. և որովհետև ինքն հիմա ազա-
տած է մարմնեղէն նիւթոյ երկրաքարշ ծանրութենէն՝
անշուշտ կարէ անդիսի աշխարհքին վրայ լուրեր տալ
ինձ՝ որոյ վրայ այնչափ կը ցնորաբանէինք մեր ի-
մաստասիրական խօսակցութեանց մէջ թերևս այն-
չափ ստոյգ տեղեկութեամբ որչափ որ կրնը մի գու-
նոց վրայ կարէ խօսիլ: Մեղք որ անդիէն մարդ մի ե-
կած չէ՝ որ հոն եղածներն մեզ պատմէ, արդեօք այս
արդարացի հետաքրքրութիւնս ամենևին պիտի չա-
գեներ՞: — Եւ սակայն պէտք է որ կերպ մի լինի ան-
դիի աշխարհին հետ հաղորդակցելու, և հոն եղող-
ներն բոլորովին անմասն լինել չեն կարող իրենց թո-
ղած աշխարհքին մարդկանց հետ: Մարդկային ազգի
մեծաւ մասն շատ աւելի բազմաթիւ են՝ քան թէ
նոքա որ կ'ապրին և պիտի ապրին՝ի ներքոյ արեգա-
կան, և անկարելի է որ մի և նոյն գերդաստանէ ե-
լեալ անհատքն՝ որ հետևապէս նոյն մարմնոյ անդամքն
են՝ իրենց մէջ կենդանի յարաբերութիւն սիրելու-
թիւն և մտնակցութիւն չպահեն. որովհետև ամե-
նայն ինչ որ՝ի միութենէ յառաջ գայ՝ դառնայ ան-
դրէն՝ի նոյն միութիւն. ապա ուրեմն և մարդկու-
թիւնն ալ՝ի սկզբան անդ մի լինելով՝ի կարողու-
թեան, պէտք է որ իրականապէս մի լեցի իւր կատա-
րեալ բարդաւաճութեան մէջ: Ապա ուրեմն կայ
տեղ ուր օր մի ամենայն մարդիկ պիտի համահաւա-
քուին այս կամ այն կերպով, և ուր որ ազգ մարդ-
կան իւր լրմանն պիտի հասնի: Անտարակոյս մինչև
այն ատեն՝ նոքա որ յառաջագոյն մեկնած են այս աշ-
խարհէս՝ փափաքանօք իրենց սիրելեացն կը սպասեն.
այս վերջիններս ալ զգալի կերպով իրենց սէրն փո-
փոխակի իրարու հաղորդել չկարողանալուն համար
միայն՝ ոչ ենթագրեն թէ իրենց սէրն բոլորովին մա-
րած է: Եթէ իրենց սէրն մաքուր է՝ իւր առար-

կայն նորէն տեսնելու յուսով կը պարարի. ինչպէս որ բացակայք՝ բացակայից դարձին յուսոյին կը մխիթարուին:

Ճշմարիտ ակն՝ որոյ արմատն հոգւոյն մէջ է՝ և ոչ թէ միայն զդայարանաց և երևակայութեան, իրաւ հետ զիրենք կը զոդէ, որովհետև քան զսէր աւելի հզօր բան չկայ, և զոր Աստուած միացուցած է՝ բան մի չէ կարող զնոսա անջատել: Մայրն կը յուսայ միշտ իւր կորուսած զաւակն գտնելու, որովհետև իր արգանդին պտուղն է, ոսկր յոսկերաց և մարմին 'ի մարմնոյ իւրմէ, և իւր արգանդին ու գրկոց մէջ կրելու ժամանակէն 'ի վեր՝ նորա հոգին իրենին հետ կապած է, և զայն իրրև իւր մասն պիտի պահանջէ. այնպիսի ներքին կապ մի չէ հնար որ բաւարարվին խզել: Կինն որ իւր ընտրած այրն ողջախոհ և միակ սիրով կը սիրէ՝ ամենևին ոչ հաւատայ թէ մահն 'ի սպառ պիտի բաժնէ զինքն 'ի նմանէ. իւր հոգւոյն կէսն միւսոյն կը ցանկայ, և այս աշխարհիս մէջ՝ զինքն օր մի գտնելու յուսով միայն կապրի, որ Ճշմարիտ և ստոյգ այրեաց մխիթարութիւնն է: Վերջապէս Ճշմարիտ բարեկամութիւնն ալ՝ որ սիրելոյն համար ամեն բան զոհելու պատրաստ է, այնչափ աւելի կենդանի է՝ որչափ որ աւելի մաքուր է և 'ի պատշաճից 'ի շահուց և յարկածից բաղդի աղատ, և մահուամբ ալ ոչ աւարտի, որովհետև աշխարհիս նիւթերէն աւելի գերազանց բարոյ վերայ հաստատեալ է. այնոր համար է որ մահուամբ բաժանումն զայն ոչ եղծանէ, թէ և կը տրամի առ ժամանակ մի իւր առարկային բաժնուելոյն համար: Եւ իւր տրամութեան մէջ՝ բարեկամութիւնն սրտի խորն կը քաշուի՝ մինչև ցարմատն բունը կտրուած ծառի մի հոյզին պէս. բայց ինչպէս ծառն՝ այսպէս ինքն ալ շուտով պիտի ծլի ու ծաղկի երբ իւր սիրելի առարկան առջևն տեսնէ, որում վստահութեամբ

կը սպասէ: Հիմա իմ յոյսս ալ ճիշդ այսոր պէս է. մահն իմ հոգւոյս հատորն և ամենէն գեղեցիկ ճիւղերէն մին կտրեց նետեց. բայց որովհետև մեր մէջ իւրաքանչիւր հաղորդակից հոգեկան հոյզ կայ՝ կը յուսամ որ հեռաւորութեան մէջ ալ կենաց սիրելութեան շղթան մի կայ մեր մէջ, մինչև որ նորէն նոյն բունին վրայ գտնուելու երջանկութիւնն ստանամք:

Բայց այս հաղորդակցութիւնս ինչքա՞վ լինի, արդեօք այս սիրելութեանս գիտակցութիւնն կարող եմ ունենալ և ինչ միջոցներով այս խորհրդաւոր հաղորդակցութիւնս հնար է հաստատել՝ մահուան անդունդով իրարմէ բաժանեալ երկուց հոգւոց մէջ, անդունդ մի որ մեր զգայարանաց անմերձենալի և մեր մտաց անչափելի է, և նոյն իսկ երևակայութեամբ անգամ չեմք կարող 'ի միտս պատկերել: Մարդկային գիտութեամբ բացարձակապէս բան մի ոչ գիտեմք՝ գերեզմանէն անդին եղածներուն վրայ. թերևս մեռեալք մեզ բոլորովին մօտ են, և քօղ մի միայն 'ի մէնք զնոսա կը ծածկէ. բայց վերջապէս ինչ ալ լինի այս քօղս՝ մթին է և անթափանցելի, և ամենէն աւելի սրատես մտաց աչքն բան մի չէ կարող տեսնել այնոր մէջէն:

Այսպ ուրեմն իմ մտացս բնական լուսոյն միջոց մի ոչ գտանեմ իմ բարեկամիս հետ հաղորդակցելու. աչքս բան մի ոչ տեսանէն և ականջս բան մի ոչ լսեն նորա վրայօք. իւր ներկայութեանն նշան մի չունիմ, և իմ սիրոյս խանդաղատանացն պատասխան մի ոչ առնում: Եւ միայն յիշատակով և երևակայութեամբ զինքն կրմբռնեմ. բայց այս յիշատակացս պատկերաւորութիւներս ալ ուրիշ բան ոչ ներկայացնեն՝ բայց եթէ անցելոյն նկարն և ապագային համար ենթադրութիւններ: Ինչ որ իւր վրայօք ես իմ մտացս մէջ կը զարթուցանեմ պարզ ենթակայական է, (այսինքն ես ինքն եմ իմ մտացս մէջ զայնս զար-

թուցանողն) շիրիմ մի է զոր խորհրդոցս մէջ կը բանամ՝ դէթ մի անգամ ալ իմ սիրոյս առարկայն տեսնելու և սիրտս գոհացնելու համար։ Բայց այս շիրիմս դատարկ է. այս դամբանիս բոլորն իմ տրտմութիւնս կը յածի կը թափառի կոչելով զհոգին որ հեռի է, և զոր ամեն ուժովս ալ չեմ կարող գոնէ վայրկեան մի հոն բերել՝ դէթ իւր ներկայութեան թեթև նշանով մի։ Ելեկտրական մալխոյ մի կարօտութիւն ունիմ այս երկու եղերքս իրարու հաղորդելու համար, որպէս զի այս զմեզ բաժնող Ովկիանոսէն անցուցանեմք մեր սրտից շարժմունքն և մեր մտաց և խորհրդոց նշանները։

Երազ

17 Նոյեմբեր։

Դարձեալ Ետկարն յերազեցի, և այս անգամ գոնէ երևոյթն միտքս մնաց. տրտում էր բայց ոչ յուսահատ. և թէպէտ ասացածներն միտքս չեն, բայց իմացայ որ իմ օգնութիւնս կը խնդրէր՝ աղաչելով որ աղօթեմ և աղօթել տամ։ Այսոր վրայ ապշած զարմացած՝ կարծեմ թէ երևակայութիւնս զիս կը խաբէ. աղօթել իրեն համար՝ մինչ ես ինձ համար ևս ոչ աղօթեմ, միտքս դնելով թէ անօգուտ բան է, և միայն տկարամտաց օգտակար՝ որ այնոր վրայ վստահութիւն ունելով այնու կը զօրանան։ Եւ յիրաւի իմաստուն մարդ մի ինչպէս կարէ հաւատալ՝ որ բարեմիտ կնոջ կամ որ և իցէ մարդու աղաչանօքն բնութեան կարգն փոխուի, և տիեղերաց ընդհանուր օրինաց զանցառութիւն լինի։ Կընդունիմ Աստուծոյ նախախնամութիւնն որ զաշխարհս կը կառավարէ, բայց նախախնամութիւն և անհուն իմաստութիւն լինելուն համար իսկ՝ պէտք է որ ինքն իր հետ միաբան լինի, և

իւր ծրագիրն և այնոր կատարումն՝ տգիտաց հակառակամարտ խնդրուածքովն և մարդկանց կրից համեմատ չփոփոխէ։

Եւ սակայն այս երազոցս կրկնութիւններուն մէջ՝ կարգէ դուրս բան մի կայ՝ որ զիս կը նեղէ։ Ես միշտ ուսուցել եմ որ երազն երկու տեսակ է, կամ թէ երազէն զանազանելու է տեսիլք ասացեալներն՝ որ աւելի կցորդութիւն և աւելի իմաստ մի ունին և զորս ամենայն ազգք մասնաւոր պարագայից մէջ՝ խորհրդական ազդեցութիւն մի համարած են՝ ուրիշ աշխարհէ առ մեզ հասեալ, որուն հետ կը հաղորդէ զմեզ քունն՝ որ ինքն իսկ խորհրդաւոր բան մի է։ Հրէից և յունաց հին քերթութեանց մէջ՝ ինչպէս որ Հոմերոսի և Աստուածաշնչի մէջ կընթեռնումք, տեսիլքներով շատ բաներ եղած կը սեպուին. գերագոյն աշխարհի բացուած դռներն են՝ ուստի կը հասնին առ մարդիկ Ոլիմպոսի աստուածներուն կամ Եհովայի երկնաւոր դեսպաններն. երբեմն ալ դժոխոց և նորա արբանեկաց թելադրութիւններ են՝ հոգիներն անկարգութեան և մեղաց մէջ ձգելու համար։ — Յիրաւի յինէն աղօթք խնդրելու մէջ չար բան մի չկայ. շատ շատ անխելքութիւն և անտեղութիւն մի է, որովհետև աղօթից զօրութեանն ես ոչ հաւատամ. ուստի քնոյ մէջ հանդիպած ցնորմանց ալ կարևորութիւն մի պէտք չէ որ տամ։

Սակայն որչափ ալ բանի տեղ ոչ դնեմ, այսու ամենայնիւ միտքս միշտ այնոր վրայ կը բանի... Երազ ասացածդ ընդհանրապէս աւուր մէջ հանդիպածներուն և տպաւորութեանց՝ պատկերողութեան մէջ խառնաշփոթ կրկնութիւնն է, որովհետև քնոյ ժամանակ կամքն ալ զպատկերողութիւնն ոչ կարէ ուղղել. շատ անգամ մարմնոյ վիճակէն և մանաւանդ մարսողութենէն առաջ կուգայ և մեր սովորութեանց

և սրտի և մտաց տրամադրութեանց հետևանքն է։ Բայց ինձ հանդիպածն բոլորովին տարբեր բան է, որովհետև ննջեցելոյ օգնութեան համար յինէն խնդրուած աղօթքն՝ իմ կարծիքէս ու տեսութենէս բոլորովին օտար է. և արթնութեանս ատեն այնչափ այնոր վրայ ոչ մտածեմ՝ որ երազիս մէջ յաւիտեան տեսնելիք չունէի. և շատ տարիներէ 'ի վեր ալ ամենևին այնոր վրայ մտածած չէի, և միայն երէկ չէ առջի օր ննջեցելոյն պաշտօնն կատարուած ժամանակ՝ ոչ գիտեմ ինչ զգացում մի եկաւ վրաս՝ որ միայն ցաւ չէր, այլ ջերմեռանդութեան պէս բան մի։ — Ուստի ես ալ ոչ գիտեմ թէ արդեօք սրտիս այլայլելուն հետևանքն է, թէ երկնային ազդարարութիւն երազի խորհրդական ճամբով ինձ հասած։ Որովհետև քունն այնպիսի զարմանալի վիճակի մէջ կը ձգէ զմեզ՝ գիտակցութիւնն և ազատութիւնն բառնալով, որ հոգին գրեթէ պարզ կրական էակ լինի՝ արթնութեան ատեն ունեցած յարաբերութիւններէն դադրած, և տարօրինակ ազդեցութեանց ներքոյ անկած, այնպէս որ ամենայն ինչ կարելի է, և ենթադրութեանց ընդարձակ ասպարէզ կը բացուի։ Եգիպտացւոց և Հրէից մէջ երազ մեկնելն աստուածային արուեստ մի էր, և եղան մեկնիչներ և մարգարէներ՝ որ կը համարէին թէ այն արուեստն ունին։ Յովսէփ երազի մեկնութեամբ մեծ բաղդի և հարստութեան տէր եղև Փարաւունի արքունեաց մէջ, և միւս Յովսէփ ալ Մարիամու այրն՝ երազի մէջ հրեշտակէն հրաման առաւ որ զինքն չարձակէ, և Մարիամու ու Մանկան հետ Եգիպտոս քաշուի՝ Հերովդեսի կոտորածէն ազատելու համար։

Վերջապէս թողունք ինչ որ է. եթէ ոչ ինչ և ունայն պատկեր մի է քունիս մէջ մտքէս անցածն՝ ինչպէս ամպն օգին մէջէն կանցնի, յետ սակաւուց պիտի ցրուի. իսկ թէ որ ուրիշ բան է, կամ այնոր տը-

պաւորութիւնն մտացս մէջ շարունակէ և զիս նեղելու որ լինի՝ այն ատեն կը խորհիմք ու կը մտածեմք։

Մեռելադարձ Ուրուականք եւ Ոգիներ

18 Նոյեմբեր։

Քանի մի օրերէ 'ի վեր միակերպ միտքս կուգան ինչ որ ուրուականներու վրայ լսեր եմ, մանաւանդ իրիկունները՝ իմ կանթեղիս առջին մինակ նստած ժամանակս և մութն կոխած ատեն՝ ինձ այնպէս կուգայ որ Ետկարն պիտի տեսնեմ այս կամ այն կերպարանօք. և այս տարօրինակ վիճակիս մէջ՝ թեթև ձայն մի որ լսուի կամ աթոռ մի որ ճռնչէ՝ անդէն դող կ'ելնեմ. և ես իմ իմաստասիրութեանս վրայ կը խպնիմ՝ այսպիսի ակարութեանց ներքոյ անկած լինելուս համար։ Թէ որ հրապարակաւ այս նիւթոյս վրայ խօսել պէտք լինէր՝ շատ պատճառներով կարէի այնոր պարապ բան լինելն ցուցանել և ծաղրել. և սակայն հիմա վրայն մտածելն անգամ զիս դող կը հանէ։ Աւաղ. հիմա կիմանամ որ մեք ուրիշի համար աւելի իմաստասէր եմք՝ քան թէ մեզ. ինչպէս բժիշկներն որ իրենց հիւանդներն կարճութեամբ կը դարմանեն, իսկ զիրենք խնամել ոչ գիտեն. վերջապէս գիտութիւնն ինչ ալ առնէ և խօսի՝ բնութիւնն միշտ նմա կը յաղթէ։

Բոլոր կենացս մէջ մեռելադարձ մի տեսած չեմ, և տեսնող մ'ալ ոչ գիտեմ. և սակայն հին և նոր աշխարհք նոցա պատմութիւններովն լի է։ Բայց տեսած չլինելէս՝ ոչ հետևի որ չկան և մանաւանդ չեն կարող լինել։ Կերևի թէ օրէնք է որ իրենց մարմնէն բաժնուելով այս աշխարհքէս ելած հոգիներս՝ նորէն հոս ոչ դառնան. որովհետև ալ իրարու հաղորդուե-

լու միջոցներն չունին։ Բայց արդեօք աւելի նուրբ և եթերական մարմիններ չկա՞ն՝ որոց ամպաձև շոգիատիպ ձևերն մեզ զգալի լինին, ինչպէս օրինակի համար հայելւոյ մէջ երևցած կերպարանքն կամ անապատներու մէջ կրկներևոյթ ասացեալ երևոյթն. բնաբանութեան ուրուադէտ ասացեալ գործին ինձ կասկածել կուտայ թէ այսպիսի երևոյթներ շատ կարեն լինել։ Կարելի է որ այս ուրուական ասացեալն 'ի մարմնոյ բաժանեալ հոգի մի է՝ որ էակաց սովորական կարգին զանցառութեամբն՝ կերպիւ իւիք կարողանայ իւր կերպարանօք մեր աչացն երևիլ, կամ զինքն յայտնել՝ օդոյ բաբախմամբ ձայնիւ խօսքով հեծութեամբ կամ ո՛ր և իցէ աղմկաւ. ո՛վ կարէ անհնարին համարել այս բանս, որովհետև հակախօսութիւն մի չկայ այնոր մէջ՝ որով անտեղի բան մի համարուի. մանաւանդ երբ այս անդիի աշխարհէ հասած երևութիս պատճառն՝ գերագոյն էակին կամքն յայտնել և կամ երկնից ազդարարութիւն մի մեզ իմացնելու համար է [1]։ Այս պարագայիս մէջ ուրուականներն՝ հրեշտակաց պաշտօնն կատարած լինին։

Ուրիշ պատճառ մի ալ կայ՝ որ աւելի իմաստասիրական կարէ երևիլ։ Մեք երկրիս վրայ ապրած ատեննիս՝ մեր հոգին և մարմինն միշտ հաղորդակցութեան մէջ են՝ կենաց պիտոյից կարևոր եղած նիւթերուն հետ՝ որովք կը սնանին ու կը վայելեն. մեր հոգին փոքր 'ի շատէ այս նիւթոցս հետ կը կապուի՝ թէ անձ լինի և թէ իր, մասնաւոր յարակցութեամբ մի՝ որ սիրոյ արմատն է, որ մինչև բուռն կիրք կարէ դառնալ, և հոգին գերի առնել իւր սիրածին։ Ուս-

1 Ընթերցողն պէտք չէ մոռնայ՝ որ գրոյս հեղինակ պատուական և իմաստուն քահանայն՝ դեռ անհաւատութեան մէջ գտնուող իմաստասիրի մի բերնէն կը զրուցէ այս խօսքերս։

(Ծն. Թարգմանչին։)

տի երբ այս երկրաւոր իրաց հետ բուռն սիրով կապուած ժամանակ՝ մահն զինքն բռնութեամբ կ՝անջատէ՝ որչափ ալ ստիպուի զայն թողլու՝ բուռն ցանկութիւնն իր մէջ կը մնայ. և ասկէց զիղջ մի առաջ կուգայ՝ որ զինքն յետս յետս կը ձգէ, և եթէ կարելիլինի կամքն ետ կը դառնայ իւր սիրածն գտնելու, ագահն զիւր գանձն, սիրելին զսիրելին, մայրն զիւր զաւակն, բարեկամն զբարեկամն։ Ուր ձեր գանձն է՝ հոն է ձեր սիրտն, ասէ Աւետարանն. ուստի եթէ սիրտն իւր բոլոր ցանկութեամբն հոն դառնայ՝ կարող չէ՞ կերպ մի գտնելու իւր դարձն և ներկայութիւնն իմացընելու։ Սակայն հոգւոյն համար այս բանս տանջանք մի պիտի լինի՝ որովհետև իւր ցանկացածն չէ կարող վայելել, և թերևս զարարածս և զկորստական իրս աշխարհի չափազանց սիրելուն համար ալ պատիժ մի։

Նախնիք ալ այսպիսի բանի մի կը հաւատային, և այնոր համար մեռելոց ուրուականներն Ստիւքսի եզերքն կը թափառին ասէին, մինչև որ նոցա ազատութեանն համար ողջակէզներ ու զոհեր մատուցուելով՝ Ելիւսեան դաշտերն կը մտնէին։ Արդ հոգւոյն ընդ մէջ երկնի և երկրի եղած վիճակին ժամանակ՝ որով դեռ նիւթականացս հետ կապուած է՝ իրեն կարելի է թերևս զգալի եղանակաւ մի յայտնուիլ չափով մի և ոմանց միայն՝ կամ անդիի աշխարհին իրերն յայտնելու համար՝ որ այն ատեն պաշտօն մի վարած լինին, և կամ իրենց դեռ ունեցած ցանկութիւնն կատարելու համար՝ որ այն ատեն իրենց պատիժ համարելու է։

Սակայն այս բանիս մէջ ալ կատարեալ տգիտութեան մէջ եմք, որովհետև այնպիսի աշխարհի մի մէջ կապրիմք՝ որոյ անհարթագոյն կերպարանքն միայն մեզ ծանօթ են՝ իսկ նուրբ մասունքն բոլորովին անըմբռնելի։ Դիտակի և մանրացուցի հնարուելէն 'ի

վեր՝ տեսանելի աշխարհիս սահմաններն ընդարձա-
կեցան՝ յանսահմանս մեծ և փոքր էակներու վրայ
տարածուելով։ Հիմա գիտեմք որ մեր բոլորն և մեր
մէջ բիւրաւոր անտեսանելի և անշօշափելի էակներ
կան՝ որ մեր բարեաց և չարեաց պատճառ լինին։ Այ-
սօր շատ հիւանդութեանց պատճառ կը համարուին
այն աննկատելի որդունքն՝ որ արեան հետ խառնուե-
լով զայն կապականեն, և բաց աստի սննդեամբ և
շնչառութեամբ մահուան անտեսանելի սերմունք միշտ
մեր գործարանաց մէջ մտնելու վրայ են։ Եթէ բնա-
կան կարգի մէջ այսպէս է՝ ինչ պիտի լինի ապա հո-
գեղէն աշխարհի մէջ՝ զոր մեք 'ի մեզ միայն գիտա-
կցութեան ըմբռնմամբը ճանաչեմք, իսկ արտաքուստ
միայն մեր նմանեաց խօսքովն՝ որով կարելի չէ զամե-
նայն զգացմունս և զխորհուրդս բացատրել։ Տարակոյս
չկայ որ շատ աւելի դժուարին է ըմբռնել զոգիս քան
զմարմինս՝ որչափ ալ այս վերջիններս նրբին և շո-
գետեսակ ալ լինին. և հետևապէս Թերևս կարեմք
հաւատալ՝ որ ամեն տեսակ ոգիներ մեր բոլորտիքն
առած կը շրջին՝ փոքր 'ի շատէ մեր հետ վերաբերու-
թիւն ունելով, և որոց նրբին ազդեցութիւնն խոր-
հրդաբար մեր հոգւոյն կենաց վրայ ալ կազդէ, ինչ-
պէս նաև այնոր տրամադրութեանցն որոշմանցն և
գործոց։ — Աստի յառաջ գան Թերևս գաղտնի շարժ-
մունք, ծածուկ մղմունք, անակնկալ ազդմունք, բա-
րի կամ չար Թելադրութիւնք, և վերջապէս օգտա-
կար կամ վնասակար ներշնչմունք մեր կենցաղավա-
րութեան մէջ կամ արուեստի գործոց և կամ հան-
ճարոյ յայտարարութեան մէջ՝ որովհետև ամեն ներ-
շընչմանց մէջ՝ ներշնչող մի պէտք է որ լինի, և ոգե-
ղէն իրաց մէջ՝ շարժումն տուողն պէտք է որ ոգի
լինի։ Ուստի քերթողն որ զմուսայն յօգնութիւն կո-
չէր՝ ցնորք մի չէր իւր կոչածն. և ասպուածայնագոյն միպգն
որում պէտք կը զգար՝ կենդանի միջնորդով մի իրեն

կը հասնէր։ Եւ հաւանական է որ նոյն բանն կը հան-
դիպի այն ամեն անգամ երբ օգտակար խորհուրդ մի
կ'ունենամք՝ որոյ վրայ ամենևին ոչ խորհէաք, կամ
մեծ բանի մի ձեռք զարնելու յորդոր մի կ'ունենամք՝
որում կարող և ձեռնհաս ոչ համարէաք զմեզ։ Սոկ-
րատ՝ իւր ժամանակաց ամենէն իմաստունն՝ ընտանի
ոգւոյ մի կը հաւատար՝ որ վտանգն իրեն ազդելով կը
զգուշացնէր, որ քրիստոնէութեան պահապան հրեշ-
տակաց հետ շատ նմանութիւն ունի, և այս երկու
օրինակս ալ ցուցանեն թէ՝ կը հաւատամք որ երկրիս
վրայ շատ անգամ առանց կասկածելու յարաբերու-
թիւն ունիմք ոգեղէն էակաց հետ՝ որ մերինին նման
մարմնոյ հետ կապուած չեն, կամ այն է որ մահուամբ
յայնմանէ մերկացած լինելով, կամ այն է որ ամե-
նևին մարմնազգաց եղած չեն, ինչպէս հրեշտակք։
— Արդ ով կարէ անհնարին համարել՝ որ այս ոգի-
ներս յորոց ըստ բնական կարգի ընդունիմք գիտա-
կցութեան և հանճարոյ ներշնչմունքն՝ չկարասցեն
յայտնուիլ մեզ գերբնական եղանակաւ՝ զգալի ե-
րևութիւ, կամ իրենց երկրիս վրայ ունեցած կեր-
պարանօքն՝ ինչպէս ուրուական ասացեալներն, կամ
ուրիշ որ և իցէ երևմամբ։ Դարձեալ ասեմ որ այս-
պիսի բան մի տեսած չեմ, բայց որովհետև շատերէն
լսած եմ որ տեսած են՝ այնոր համար ապահով եմ
որ օր մի Ետկարն ալ ինձ պիտի երևի՝ որոյ պատկերն
միշտ ետևէս կը շրջի։ Յիրաւի որչափ ալ զինքն կը
սիրեմ՝ սակայն այս բանիս ոչ փափաքիմ, և մտա-
ծելով միայն որ այս բանս օր մի կարէ հանդիպիլ՝ կը
փշաքաղիմ. որովհետև ինչ որ բնութենէ դուրս կամ
վեր է՝ զիս անհանգիստ առնէ ու կը վախցնէ։

Երկիւղ մահու

19 Նոյեմբեր։

Ուրիշ մտատանջութիւններն և անհանգստութիւնները հերիք չէին՝ մաղձացաւն ալ վրայ հասաւ. շաւերն կը բռնուին, չտեղն ալ կը մեռնին. բայց ինչ է արդեօք մաղձացաւն և ինչ առնելու է։ Նախ այն զրուցեմ որ բժիշկները իսկ ոչ գիտեն, և բժշկական դպրոցին մէջ որչափ գլուխ կայ՝ այնչափ ալ կարծիք կայ այս խնդրոյս վրայ. այս ալ գիտելու է որ բժիշկները երբ կը վիճեն՝ սովորաբար ոչ միաբանին, չատ չատ հիւանդի մը համար խորհրդակցութեան որ նստին նորա ընտանեացն առջին, այն ալ գայթակղութիւն չտալու համար. մանաւանդ թէ այն պարագային մէջ՝ իրենց մտաց հակառակ եղած կարծեացն ալ կը հաւանին, որովհետև խորհրդակցութեան համար կոչուած բժիշկին պատասխանատու չէ, և միայն իր կարծիքն զրուցելու պարտական է։ — Ասոնք բժիշկներն ոչ գիտեն մաղձացաւին ինչ լինելն, այս այս կերպով կը գարմանէ՝ այն այն կերպով. հիւանդներն ալ այս կամ այն կերպով կ'առողջանան կամ կը մեռնին։ — Բայց արդեօք խմաստասէրներն ինչ ասեն. սոքա ևս բժիշկներէն աւելի բան մի ոչ գիտեն. միայն խմաստասիրութիւնն այնպիսի խնդիրներ կ'առաջարկէ՝ որոց վրայ իր ընկերն ու համամիտն սեպուած բժշկութիւնն ամենևին չմտածեր։

Խմաստասիրութիւնն կը հարցանէ թէ ուստի կուգայ այս հարուածս, որ առեն առեն ոչ գիտես ուստի կելնէ և երկրիս վրայ չորքն մի առնելով՝ մարդկանց տանին մին կառնու կը տանի, և չիմացուիր ալ թէ ինչով այնոր չարգին առջևն առնելու է. յան-

կարծական հրոսակ մի է՝ որ ինչպէս սկսաւ այնպէս ալ կը դադրի առանց պատճառի։ Եւ սակայն առանց պատճառի արդիւնք ոչ լինի. ինչ է ուրեմն այս կատորածիս սարսափելի պատճառն. գարձեալ արդեօք դիպուածական և առանց պատճառի բա՞ն մի է որ բիւրաւոր մարդիկ յանկարծ երկրիս վրայէն ջնջուին։ Սակայն տիեզերաց մէջ զեկավարութիւն մի կայ, որ տովհետև արարիչ և նախախնամող մի ոմն է, և չեմք կարող համարիլ որ գոնէ առանց իւր թոյլտուութեան հանի այս գժբաղդութիւնս, եթէ իւր հրամանովն ևս չէ։

Արդեօք մաղձացաւն ալ իւր ձեռաց հարուածներէն է՝ յանցաւոր մարդիկն պատժելու համար, ինչպէս որ կը համարիմք ուրիշ ամեն մեծ թշուառութիւններն ալ՝ որ ընդհանուր կերպով աղգաց վրայ կը հասնին։ Այս բանիս վրայ տարակոյս չկայ. եթէ նախախնամական կառավարութիւն մի կայ՝ պէտք է որ իւր զօրութեամբն դրուած կարգն ու կանոնն պահէ, և անկարգութիւնն պատժելով իւր զօրութիւնն ցուցանէ։ Օրինազանցներն պատժէլն ամեն կառավարութեան հարկաւոր հաստատութիւնն է։ Չկին կառավարանն այսպիսի օրինակներով լի է, այնպէս որ Աստուծոյ ժողովուրդ կոչուածն՝ աստուածային պատուիրանքն արհամարհելուն պէս՝ սպառնացեալ պատուհասն անվրէպ վրանէն կը հասնէր։

Եւ յոյժ արդարացի ալ է այս բանս՝ եթէ յիրաւի օրինաց զանցառութիւն եղած է. միայն քննելու է թէ այս պատուհասս ալ անոի յառաջ կուգայ թէ չէ. եթէ զմարդկային գործս կառավարողն՝ աստուածային նախախնամութիւնն է՝ այս բանիս վրայ չեմք կարող տարակուսիլ։

Արդ հիմա ինչ առնելու եմք. նախ և առաջ դժբաղդութեան դէմ կարծութիւն բանեցնելու եմք, որպէս զի վախնալ չգուցանեմք, և քան զմեզ տկար-

ներն ալ որ են կանայք մեր և մանկունք և ծառայք քաջալերեմք: Արդէն ես նոցա մէջ եղած ատենս՝ անհոգ կերպ մի կը ցուցանեմ, որպէս թէ նոր բան մի կամ վախնալու պատճառ մի չկայ: Բայց ինձ որ հարցընես՝ ես ալ ուրիշներու պէս կը վախեմ, և ոչ հասկընամ թէ ինչպէս կան մարդիկ որ կը պարծին թէ վախ ասացած բանն չեն գիտեր: Ամենէն սարսափելի թշնամին այն է որ քու բոլորդ կը պտըտի՝ յանակընկալս քու վրադ յարձակելու համար, այնպէս որ միշտ նորա հարուածոցն ենթակայ ես և ինքզինքդ չես կարող պաշտպանել: Այսպէս է մաղձացուն ալ որ յանկարծ կը հասնի քաղքի գերդաստանի տան վրայ՝ առանց աստիճան պայման հարստութիւն և առողջութիւն խտրելու. իր հարուածոց դէմ եղած ամեն զգուշութիւն, և զինքն վանելու համար ամեն ջանք փուճ կը հանէ. այնպէս որ ուր որ այս հիւանդութիւնս կ'երևի՝ հոն եղող մարդիկ փարախի ոչխարներուն կը նմանին՝ որ այսօր կամ վաղն պիտի ելնեն՝ սպանդանոց երթալու համար, և ոչ ոք գիտէ թէ կարգն երբ իրեն պիտի գայ: — Խելացի մարդն անկարելի է որ այսպիսի պատուհասէ չվախէ՝ որով մահն միշտ վերահաս և սպառնալից զմեզ կը գիտէ: Իսկ արդ ամեն մարդ ալ թէ բնազդմամբ և թէ խորհրդածութեամբ երկնչի 'ի մահուանէ: — Բնազդմամբ՝ որովհետև ամեն կենդանի արարած ապրիլ կը ցանկայ, և բնականաբար կը վախէ ու կը փախչի այն ամեն բանէ որ իւր գոյութիւնն կարէ եղծանել կամ վնասել. այս բանս յառաջ գայ իւրաքանչիւրին կենաց պահպանութեանն համար տուեալ ինքնածին օրէնքէն: — Խորհրդածութեամբ ևս՝ վասն զի մահն բոլորովին կը փոխէ մեր ներկայ կեանքն՝ մարմինն 'ի բաց բառնալով՝ որ նորա կէսն կը սեպուի, թերևս շատերուն համար կէսէն ալ աւելին: Ուստի ռամկին ասացածին պէս կորուսածնիս գիտեմք՝ բայց վաստկե-

լիքնիս ոչ գիտեմք: Հոգւոյն մարմնէն բաժնուիլն ցաւալի բան է, և սարսափելի պատերազմ լինելն անտի ևս կ'իմացուի՝ որովհետև հոգեվարք կը կոչեմք զայն: Իսկ անդիի աշխարհի անցքն ալ մութ ու խաւար է, և ոչ ոք գիտէ թէ ծայրն ինչ պիտի գտնէ, և ինչ հիւրընկալութիւն պիտի ընդունի:

Անտարակոյս ոյք որ արդարութիւն գործած են, և միայն բարին կամել և գործել են՝ վստահ կարող են լինել, և մահուան մի միայն մխիթարութիւնն ալ այս բանս է՝ գիտեմ: Բայց մօտանց նայելով այսպիսիս քանի՞ հոգի կը գտնեմ՝ զիս ալ 'ի միասին հաշուելով: Ո՛վ կարէ պարծիլ թէ անիրաւութիւն մի չէ գործած, մանաւանդ օտարի վնասովն իր շահն չէ բնառած՝ նոյն իսկ արդարութեան՝ թերևս և գթութեան իսկ պատրուակաւ: Մարդս ինչ գիտէ արդեօք սիրոյ թէ ատելութեան է արժանի, ինչպէս որ ասէ Պաւղոս առաքեալ: Եւ երբ կը լսեմ որ նոյն իսկ սուրբերն՝ այսինքն նոքա որ ամենայն մաքրութեամբ յաշխարհէ հրաժարեալ ապրած էին՝ իրենք զիրենք մեծ մեղաւոր համարելով՝ մահուան ատեննին կը դողային կը սարսափէին, ես ինձ կը հարցնեմ թէ ո՛վ ուրեմն կարէ զինքն վտանգէ ազատ համարիլ և չվախնալ: Որատիոսի կեղծած ստոյիկեան արդարն՝ որ նոյն իսկ երկինք ալ գլխուն վրայ փլչելու լինէր՝ յօնքն ոչ կռնչմտէր՝ ինձ միշտ իմաստասիրական բանդագուշանք և քերթողական զրախօսութիւն կամ ապարթանութիւն մի երևցած է: Այսպիսի բաներ կը զրուցուին և կը գրուին՝ մարդկանց ցնցում մի տալու համար ինչպէս թատրոնից տեսարաններն, բայց իրօք եղած չեն, կամ յոյժ դժուարագիւտ են:

Ուստի ո՛վ որ կը պարծի թէ 'ի մահուանէ ոչ երկընչի՝ ստախօս է ինքզինք կը խաբէ. ևս առաւել այն որ մահուան կը փափաքի՝ նման այն փայտաւորին՝ որոյ բեռն շատ ծանր կ'ուգար և մահն կը կոչէր և

երբ մահն քովը հասաւ՝ շուտ մի բեռն կռնակն առաւ. ապա ուրեմն կամ խենթ է կամ խելառ: Կիրքն մարդուս խելքն գլխէն կ'առնու, և այն ատեն բնական է որ մահուան դէմ կը խիզախէ՝ կիրքն յագեցնելու համար. սակայն այս բանս ալ անտեղի և անմիտ բան է՝ որովհետև նոյն իսկ մահն իւր սիրելի առարկային ստացուածն իրմէ կը վերցնէ: Դարձեալ բնական է վտանգի վարժէլն՝ ինչպէս զինուորն և անփորձ տղան որ կրակի հետ կը խաղայ, բայց այս ալ 'ի տեղւորութենէ առաջ եկած անհոգութեան արդիւնք է կամ տգիտութեան հետևանք, և երկոցուն մէջ ալ պարծենալու բան մի չկայ. և երկուքն ալ անմտութիւն է՝ որովհետև իմաստութիւն չէ զինքն մահուան վտանգի մէջ դնել՝ առանց ճողոպրելու միջոցներն ալ մտածելու՝ եթէ վտանգն կարելի է, կամ կարճութեամբ պատերազմելու՝ եթէ անհրաժեշտ է:

Թերևս ասացեն ոմանք որ այս իմ ուզած մարդիկս կրկին զինուոր չեն կարող լինել. այլ ամեն վտանգի մէջ կանգ առնելով մտմտալու են, և զիրենք յառաջ վարելն խթաններու կարօտ է: Շատ դիպաց մէջ ասացածնիդ ըրաւացի է, այսինքն այն պատերազմներէն չատերուն մէջ որոց վախճանն անձին օրինաւոր պաշտպանութիւն կամ ժողովրդոց փրկութիւնն չէ, այլ կառավարութեանց և իշխանաց փառասիրութենէն ու կրից յառաջ եկած, ինչպէս որ շատ անգամ կը պատահի: Իսկ ընդ հակառակն արդար պատերազմաց մէջ ոչ միայն կենաց պաշտպանութեան վերայ է խօսքն՝ և ուրիշ ճար չկայ զոյն փըրկելու՝ քաջասրտութենէն չպակսիր. ինչպէս որ ամենէն տկար անասնոց վերայ ալ կը տեսնեմք: Բայց երբ զինուորն ոչ գիտէ թէ ինչո՛ւ և որո՛ւ դէմ կը պատերազմի՝ ինչպէս որ շատ անգամ կը պատահի մեր մշտակաց բանակներուն՝ քաջութեան տոյգ շարժառիթն պակասութիւնն լեցնել կը ջանամք՝ զինուորական պատիւ կամ դրօշակի փառք ասացեալ բառերով. և սիրտ տալու համար պէտք է զինեզինել զնոսա՝ զինուորներն նուագարանօք և վառօդախառն օդիով, իսկ սպայներն ոսանոցներով և շքանշաններով: Միով բանիւ քաջութիւնն կը յուզեմք փոքր 'ի շատէ վայրագ կրից դրգռմամբ, ուստի տեսակ մի ապշութիւն առաջ կուգայ՝ որով վտանգն ալ չտեսներ և մահուան դէմ կը խիզախէ. և այս բանս փառք կը սեպուի՝ քան զայլ ամենայն փառս գերազանց, հետևանքն ինչ որ կ'ուզէ թող լինի. մինչդեռ մահուան դիմագրաւելն այն ատեն միայն փառաւոր է՝ երբ ՀՀմարտութիւնն և արդարութիւնն պաշտպանելու համար է:

Շրջող սեղանք

20 Նոյեմբեր.

Երեկ շրջող սեղանի փորձն մի ներկայ գտնուեցայ՝ որ ծաղրածութիւն մի երևցաւ ինձ, ոչ եթէ փորձողներու կամքն և ուզելովն, այլ այս կողմանէ որ դրական հետևանք մի առաջ չէկն անտի, և նոր բան մի չկարացի իմանալ: Որովհետև գիտութիւնն ինձ միջոց մի ոչ ցուցանէր՝ մեռելոց հետ տեսնուելու՝ ինչպես որ կը փափաքէի՝ այս վախճանիս հասնելու համար խորհրդաւոր ճամբայներն ուզեցի փորձել, որովհետև ոմանք կը համարին թէ աս միջոցով հնարաւոր է անդիի աշխարհին հետ հաղորդիլ:

Կոմսն Ֆ... որ ընկերութեան մէջ պատուաւոր մարդ մի է և քրիստոնէութեան զգացողութիւն ունի՝ ոգեկոչութեան եռանդով մի բռնուած՝ ուրիշներն ալ կուզէ հաւանեցնել, ուստի զիս ալ հրաւիրեց որ իր տունն լինելու փորձերուն ներկայ գըտ-

նուիմ, անտարակոյս փափաքելով այս զարմանա-
լի յայտնութեանց վրայօք իմաստասիրի մի կար-
ծիքն ալ իմանալու։ Ես ալ հաւանեցայ՝ նախ 'ի
պարզ հետաքրքրութենէ՝ որովհետև իմաստասէրն
պէտք է որ քննէ իմանայ հոգեկան կենաց երևոյթ-
ներն, և երկրորդ այս ճամբով մեռեալներն և անդիի
աշխարհի հոգիներն կոչելու և նոցա հետ տեսնուե-
լու, ինչպէս որ ինքն կ'ապահովցներ թէ կարելի
է։ Եւ որովհետև զինքն անկեղծ մարդ կը ճանաչեմ՝
որ զիս խաբելու ալ շահ ու պատճառ չունի, ուստի
վստահ էի որ վախնալու բան մի չկար ոչ 'ի պատրա-
նաց և ոչ 'ի ճարտարահնար պատրաստութեանց և 'ի
շաղակրատութենէ, այլ շատ շատ համարէի թէ ինքն
և իւր բարեկամներն խաբուած երևակայութենէ
մի բռնուած էին՝ որ նոյն իսկ խելացի մարդկանց ալ
կարէ հանդիպիլ։

Ուստի երեկ երեկոյ իւր տունն գնացի՝ ուր տասն
տասուերկու հոգի ժողոված էին՝ ամենքն ալ պա-
տուաւոր դասէ մարդիկ՝ նուիրակներ դատաւորներ
գիտուններ, և բաց 'ի նոցանէ երկու ալ եկեղեցա-
կանք. ուստի որպէս ասացի այսպիսի պատուաւոր
ընկերութեան մէջ վախնալու բան մի չունէի, և
միաքս դրի որ ամեն բան լաւ գիտեմ և քննեմ ա-
ռանց նախապաշարման, և անկողմնասէր կերպով
ալ դատաստան առնեմ։

Ուստի փորձն սկսաւ՝ միայն մի յենարանի կամ ոտքի
վերայ կեցած կլոր սեղանի մի վերայ որ գրէթէ մի
մետր բարձրութիւն ունէր. այն անձն որ քան զա-
մենեսին յարմարագոյն միջնորդ կը համարուէր՝ ձեռ-
նածել սկսաւ առանց սեղանին դպչելու՝ մագնիսա-
կան շրջաններ տալու պէս ձեռքն շարժելով, և յե-
տոյ մատունքն սեղանին վերայ դրաւ առանց շարժե-
լու. քանի մի վայրկեանէն նայիս սեղանն սկսաւ դո-
ղալ, և յետոյ սկսաւ փորձառուին ձեռաց ներքևն

դառնալ. և պատգամին եռոտանին պատրաստ լինե-
լով՝ խորհրդաւոր ոգին սկսաւ յայտնուիլ։

Բայց որովհետև ոգին սեղանին միջնորդաւն կը
խօսէր՝ որ ձայն չունի՝ իր միտքն սեղանին զարնուած-
քովն կը յայտնէր՝ որ իւրաքանչիւր հարցման վեր
վեր կը նետուէր. և այբուբենի գրերուն որոշեալ
թուով զարնուածք սահմանելով՝ գանդաղ ու դժուա-
րին կերպով բառերն կը կապէին, և կրցածնուն
չափ կը բացատրէին։ Այս կերպս ինձ շատ տարտամ
շփոթ և մութ երևցաւ. մեկնութիւնն ալ իւրաքան-
չիւր ոք իր կողմն կը քաշէր։ — Երբ սեղանն շարժել կը
սկսէր՝ միջնորդն իրեն կը հարցանէր. Ո՛վ է հոն. և շատ
այլանդակ պատասխաններ կառնուր։ Եգիպտացւոց
և յունաց հին ժամանակներէն այլանդակ և անծանօթ
անուններ՝ որ կուգային քրիստոնեայ իննևտասնե-
րորդ դարու կենդանի մարդկանց հետ խօսակից լի-
նելու՝ աննշան ու պարապ բաներ իրենց զրուցելու
համար. և որչափ որ միջնորդը կը ջանար որոշ հար-
ցումներով կարևոր բան մի հասկնալ՝ այնչափ աւելի
պատասխաններն խառնաշփոթ և մթին լինէին։ Երկայն
ատեն անցուցինք այս խաւարին և տղայական թա-
փառմանց մէջ. և ինձ այնչափ անբանաւոր և ցատ-
կըտուկ երևցաւ այս ոգեկոչութիւնս՝ որ մասնակից
լինել չհամարձակեցայ, թէպէտ և շատ կը փափա-
քէի Եակարին և իւր նոր վիճակին վերայ տեղեկու-
թիւններ առնուլ. ինձ այնպէս կ'երևէր որ այս պա-
րագայից մէջ և այս եղանակաւ իւր հոգին կոչելն
սրբապղծութիւն էր, և միանգամայն ներհակու-
թիւն մի կը զգայի գերեզմանէն անդին գտուած ան-
ծանօթ հոգիներու հետ՝ զորս չէի կարող որոշել՝ որ
և իցէ եղանակաւ վերաբերութիւն ունել, և որոց
կարծեցեալ պատգամներն ալ՝ վստահութիւն մի ոչ
տային ինձ. ուստի լուռ կեցած կը դիտէի։

Սակայն չեմ կարող ուրանալ որ տարօրինակ և

արտաբնական (բնականէ դուրս) բան մի կայ այնոր մէջ։ Այն պատուաւոր և անկեղծ մարդն որ միջնորդութիւնն առնէր՝ ոչ խաբէութիւն կը գործածէր և ոչ շաղակրատութիւն, և իմաստուն մարդ ալ լինելուն՝ չէր կարող խաբուիլ, և ոչ ալ շահ մի ունէր՝ եղած հարցմանց պատասխան այնպիսի անյարմար բաներ հնարել։ Եւ որովհետև հանդիսականք ալ պատուաւոր և ուսեալ մարդիկ էին, և ոչ դիւրախաբ, ինձ հաւանական կ'երևի որ յիրաւի՝ այն սեղանին ձեռքով խորհրդաւոր հաղորդակցութիւն մի հաստատուեցաւ իրենց և անդիի աշխարհին էակաց մէջ, որոց եթէ կ'ուզես ոգի անունն տուր՝ որովհետև այսպէս կ'անուանեմք այն ամեն բան որ մեր ըզգայարանաց ներքև ոչ անկանին։ Բայց արդեօք ինչ տեսակ ոգիներ են, և տիեզերաց ո՛ր պարունակին կը վերաբերին այս անտեսանելի էակներս և ուստի կուգան. բարի՛ են թէ չար, ոգիք լուսոյ թէ խաւարի, հրեշտակ ճշմարտութեան թէ սատարք մոլորութեան, պաշտօնեայք երկնից թէ արբանեակք դըժոխոց։ Ահա զայսոսիկ կը մտածէի ես, և տեսածովս ու լսածովս չէի կարող այս բաներս որոշել։ Եւ բաց աստի՝ այս ոգւոց ասացածներն այնչափ մութ անորոշ և անիմաստ բաներ էին՝ որ այսպիսի պատասխաներ և լուրեր բերելու համար՝ անդիի աշխարհէն գալն ոչ արժէր։ Ահաւասիկ սոքա են՝ այս կարծեցեալ յայտնութեանց՝ իմ վրաս գործած տպաւորութիւններն։— Միայն հանդիսականաց մին իր սակաւ ինչ յառաջ վախճանեալ ազգականին վերայ հարցում մի առնելով՝ ընդունած պատասխանին վերայ շատ զարմացաւ և շատ այլայլեցաւ. որովհետև առած պատասխանաւոյն մէջ այնպիսի ծածուկ գաղտնիք կը նշմարէր որ միայն վախճանեալն կարէր գիտել, և այս բանս ամենուն վերայ մեծ տպաւորութիւն արար։

Այս փորձերուս մէջ գլխաւորապէս բան մի դիտեցի որ այս խաւարային գործոց սատարներն՝ ոյք որ են՝ քրիստոնէական նշաններէ մեծ խորշում մի ցուցանեն. Յիսուսի Քրիստոսի անունն զիրենք կը խռովէ, խաչակնքելն զիրենք կը շփոթէ. և երբ իրենց որոշակի հարցանես թէ արդեօք բարւոյ թէ չարի գործիք են, Աստուծոյ թէ սատանայի, իրենց պատասխաններն կը կամակորեն կը ծռմռկեն, ու այո՛ կամ ո՛չ պատասխան մի ոչ տան։ Տեսի նաև որ սեղանին վերայ սրբազան բան մի որ ուզեցին դնել՝ սեղանն ետ ետ կը նետուէր. և սեղանին վերայ դրուած կողովն՝ որ ձեռնածութեամբ սկսել էր դառնալ՝ երբ Աւետարանն իրեն մօտեցուցին, օձի պէս սողալով սկսաւ փախչիլ։

Ես առ այժմ պարզապէս տեսածներս և լսածներս կը պատմեմ, և ուրիշ հետևանք ոչ ուզեմ հանել՝ բայց այս միայն՝ որ յիրաւի կայ արտաբնական բան մի՝ զոր մարդուս միտքն չկարէ բացատրել, բայց միանգամայն իրաւունք չունի ուրանալու՝ թէ որ անկողմնասէր է, որովհետև եղածներն հաստատեալ բաներ են։ Եւ որովհետև ես բոլոր այս փորձերուս ժամանակ հանդարտ ու անխռով էի, ապահով եմ որ ամենևին պատկերողութեանս պատրանօք չշլացայ. որովհետև երևակայութիւնս ալ կերպով մի չայլայլեցաւ և հանդիսականաց ձեռնածութեամբն չպատրեցաւ. քանզի ամենքն ալ անկեղծ և անկողմնասէր մարդիկ էին, և անձնական շահ մի չունէին այս բաներուս մէջ։

Ուրեմն այս բանիս մէջ միջոց մի կայ վախճանելոց հետ յարաբերութիւն ունելու. սակայն այս միջոցս ինձ դժուարին շփոթ մութ և սակաւ ապահով կ'երևի. բաց աստի եթէ իրենց վիճակին վրայօք տեղեկութիւն ևս առնումք՝ այս անստոյգ և տարտամ ծանօթութիւնս մեզ դիւրութիւն մի ոչ տայ՝ իրենց

օգուտ և օգնութիւն մի առնելու. ապա ինչ բանի կուգայ: Ընդունայն հետաքրքրութիւն որ հաւանականաբար իւր վտանգներն ալ ունի, և մարդու օգուտ չունի ոչ կենդանեաց և ոչ մեռելոց:

Եւ սակայն այս բանս զիս ոչ արգելու հաւատալ որ կերպ մի կայ անդիի աշխարհին հետ յարաբերութիւն ունելու. և կը տեսնեմ որ այս բանիս միշտ հաւատացող եղած են թէ հեթանոսք և թէ հրեայք, և նոյն իսկ քրիստոնէից մէջ: Աստուածաշնչին մէջ կընթեռնում որ Սաւուղի ուղելովն՝ վհուկ կին մի նորա առջևն հանեց Սամուէլի հոգին, և այն սարսափելի խօսքերն զորս մարգարէն իրեն ասաց և ճիշդ ալ կատարուեցան նորա մահուամբն, կը ցուցանեն որ այս հոգեկոչութիւնս խաբէական ու շինծու բան մի չէր: Իսկ արդ Աստուածաշունչն՝ որ իսրայէլացւոց և քրիստոնէից իբրև երկնից յայտնութիւն տրուած է և իրենց կրօնից հիմն է՝ այսպիսի իրեր կը յիշատակէ, ապա պէտք է որ այս գործոց մէջ ճշմարտութեան հիմ մի լինի, զոր որչափ ալ ժողովրդեան պատկերողութիւնն այլայլած և չափազանցի տարած է՝ սակայն ռամկական սնոտիապաշտութեանց քօղին ներքև պահուած է՝ այսչափ դարերէ 'ի վեր և գրէթէ ամեն ազգաց մէջ:

Այսու ամենայնիւ իմ խեղճ Եակարիս վիճակին վերայ նոր բան մի ոչ ուսայ. ուստի պէտք է որ իմ խուզարկութիւններս շարունակեմ. թերևս համբերութեամբ և յարատևութեամբ վերջապէս դուռ մի գտնեմ որ իմ հոգիս գիտութեան հասցնէ:

Մագնիսութեան փորձ

23 Նոյեմբեր.

Երեկ ուրիշ փորձ մի ալ փորձեցի՝ բայց առջինին պէս այս ալ իմ խուզարկածնիւթոյս լոյս մի չտուաւ. մագնիսութեան պատգամներն ալ ոգեկոչութեան փորձերուն պէս արդիւնք մի չունեցան. բարեկամներէս միոյն տունն եղև այս փորձս՝ որ նոր եռանդեամբ այս բանիս ետևէ անկած է, և այլոց ալ հաւատացնել կը ջանայ. փորձն տնական և ինձ համար միայն լինելով՝ հրապարակաւ եղածներուն պէս պատրաստութիւններ չկար: Եւ բարեկամս որ լաւ գիտէ թէ ես ձևերով ու ճոռոմաբանութիւններով ոչ խաբիմ՝ անկեղծութեամբ առաջ կ'երթար. և որովհետև այն անձն ալ որոյ վերայ փորձերն լինէր բարի գեղացի աղջիկ մի է՝ որ հազիւ թէ ինչ լինելն կը հասկնայ՝ ուստի խաբէութեան և աչպարարութեան վախ չկար: Այս աղջիկս ջղային հիւանդութենէ ետև՝ յանկարծ և ինքնաբերաբար քնաշրջիկ եղել է, և այս բնութեան սկսածն՝ արուեստով զարգացել է. մագնիսացուցիչն սովորական ձեռնածութեամբ դիւրաւ զինքն կը քնացնէ, և սակաւ մի յետոյ յստակատես վիճակն մտնելով՝ ինչ որ հարցնեն՝ պատասխան կուտայ:

Ուստի կը յուսայի որ անդիի աշխարհին վրայօք քանի մի լուրեր տար ինձ, և առանձինն իմ բարեկամիս Եակարին վիճակին վրայօք. այս վախճանաւ շատ հարցումներ արարի բայց իր պատասխաներն այնչափ տարտամ, անորոշ, մութ և անկցորդ էին և այնչափ տատամսելով կը խօսէր՝ որ շուտով իմացայ թէ իր յստակատեսութիւնն շատ բարձրերն ոչ հա-

սանէր, և մեր հարցմանցն քան զմեզ աւելի տեղեկութիւն չունէր: Հաստատապէս իմացայ որ քնաշրջական տեսութիւնն որչափ ալ աստիճան մի գերզգայական լինի՝ որովհետև զգայութեանց բնական կարողութենէն անդին կ'անցնի և զգայարանաց ալ կարօտութիւն չունի գործելու համար, սակայն իր ազդեցութիւնն այս աշխարհիս սահմանէն անդին ոչ հասանէ, այնպէս որ առժամանակեայ կերպով այն ոգւով ոգևորած հոգին՝ մասնաւոր գրգռմամբ կարողութիւն կը ստանայ միայն աւելի նրբապէս և այլապէս տեսնելու՝ քան զայլս 'ի մարդկանէ: Կարեմք ասել թէ ոգւոյն տեսութեան վերայ մանրացոյց կամ հեռադիտակ մի աւելցած է՝ որով զօրութիւն կը ստանայ իւր սովորական վիճակին կարողութենէն հեռի եղած երևոյթներն տեսնելու: Կը հետևցնեմ ուրեմն որ եթէ արտաբնական բան մի ալ կայ այս բանիս մէջ այսինքն մեր ծանօթութեան կերպին սովորական պայմաններէն դուրս կամ 'ի վեր, սակայն գերբնական կամ բնութեան ուժէն դուրս բան չէ. ուստի այս ճամբով չեմք կարող անդիի աշխարհի իրերն նկատել և կամ այնու գերագոյն լոյս մի ընդունիլ գիտութեան կամ հաւատոյ վերաբերեալ նիւթոց վերայ:

Տեսածներէս համոզուեցայ որ ինքնաբեր կամ մագնիսութեամբ գրգռեալ քնաշրջութեան վիճակին մէջ ստացեալ երկրորդ տեսութիւն ասացեալն երբ յստակ է՝ կարէ տեսանել զիրս՝ զորս սովորական տեսութիւնն չկարէ տեսանել. և թէ այս աւելի նրբին տեսութիւնս՝ աչօք ոչ լինի՝ որ գոցուած են, այլ ուղղակի ջղային դրութեամբ առանց երևելի լուսոյ. և թէ այս տեսութիւնս դիմահար մարմիններէ ալ կը թափանցէ, և նոցա բաղկացութիւնն և վիճակն կ'որոշէ, մանաւանդ կենդանի մարմնոց ախտակրական կերպաւորութիւններն և նոցա յարմար

քանի մի դեղոց յատկութիւններն. դարձեալ նոյն տեսութիւնն ընդարձակութեան միջոցի մէջ փոքր 'ի շատէ հեռաւոր տեղեր կըտարածուի, և որպէս յական քթթել կը տեսնէ հեռաւոր տեղեր հանդիպածներն կամ սովորական տեսութենէ ծածկուած բաներն, ցուցանելով այնոց եղած տեղն որ մարդոյ մտքէն ոչ անցանէր:

Այս ամեն երևոյթներս տեսի և չեմ տարակուսիր. որով կ'երևի թէ մագնիսական ազդեցութեան գրգռմամբ՝ ուղեղն և բոլոր ջղային դրութիւնն այնպէս կը յուզուին՝ որ գործարանաց սովորական վիճակի մէջ գտնուած ժամանակին մէջ ունեցածէն աւելի կենդանութիւն և գերագոյն զօրութիւն մի կ'առնուն, և իրենց պաշտօնն տարօրինակ կերպով կը կատարեն: Այս վիճակիս մէջ՝ ընդ մարմնոյ միացեալ հոգին՝ որ սովորաբար նորա գործարանօք կը գործէ, այն գործարանաց շատ կարօտութիւն չունի և նոքօք չկաշկանդուիր. կամ թէ մարմինն մագնիսութեան զօրութեամբն այնպէս յուզեալ է՝ որ աւելի դիւրաւ կը յարմարի հոգւոյն կարողութեանց շարժմանցն և զարգացմանց: Այս վիճակս մտաց համար տեսակ մի յափշտակութիւն և վերացումն է՝ որ զինքն իր սովորական վիճակէն վեր կը հանէ, և կարծես թէ առ վայր մի աշխարհիս մթնոլորտին մէջ կը խոյանայ:

Մագնիսութեան՝ մարմնոյ վերայ ազդեցութիւնն երբեմն մեղմ է երբեմն բուռն՝ ենթակային և գործադրին տրամադրութեանց համեմատ: Ճիգն սկսելուն պէս աչքերն կամ կը գոցուին կամ չափազանց կը բացուին և անշարժ կը մնան ապակւոյ պէս փայլելով: Կերպարանքն ալ կ'այլափոխի. ատեն ատեն խաղաղ ժպտով մի երջանկութիւն մի կ'երևի վրան, որպէս թէ քաղցր ազդեցութեամբ լեցուելով. ատեն ատեն ալ տխրադէմ սահմռկած և խռոված կե-

բեւի, որպէս թէ սարսափելի տեսիլք մի ղինքն վախ-
ցնէր: Իմ տեսած ենթակայս այսինքն այն վերոյա-
սացեալ գեղացի աղջիկն՝ փորձին ժամանակ առաջ
ջղացին գրգռում մի ունեցաւ և յետոյ ուղղագա-
րութեան վիճակի մէջ անկաւ կէս ժամու չափ. և
այն միջոցին քնաշրջիկն անշարժ և անյարիր մնաց,
սրունքն առանց տեղ մի յենլոյ տարածուած, բա-
զուկներն առանց յենարանի վեր բարձրացած՝ հոգ-
նութիւն չիմանալով՝ որ սովորական վիճակի մէջ ան-
կարելի է: Երբ արթնցաւ ամենևին եղածէն բան մի
ոչ յիշէր, բայց բոլոր անդամներն ջախջախածի պէս
էին:

Վերջապէս այս փորձս ալ թէպէտ իմ դիտել փա-
փաքածս ինձ չսորվեցուց, սակայն ուրիշ նկատմամբ
ինձ օգտակար եղև: Կարացի ապահովապէս ստու-
գել այնպիսի տարօրինակ իրեր՝ որոց վերայ կը տա-
րակուսէի՝ թէպէտ և բացարձակ ոչ ուրանայի:
Եւ փորձով իմացայ թէ կայ ոգեղէն սկիզբ մի որ
բնականին վերայ կիշխէ՝ թէպէտ և նորա ազդեցու-
թեանն ներքոյ անկեալ է, և յորմէ երբեմն բոլորո-
վին կ՚ազատի՝ աւելի զօրաւոր կերպով յայտնուելու
համար: Ապա ուրեմն հոգի ասացեալն մասամբ և
առ ժամանակ մի ևեթ մարմնոյ գործարաններէն կը
կախուի. և որովհետև նոյն իսկ աս աշխարհիս մէջ
ալ սովորական միջոցներէ դուրս և աւելի բարձրա-
գոյն և աւելի հզօր կերպով կը գործէ, ապա ու-
րեմն կարեմք հետևցնել թէ՝ այն ատեն իւր ամեն
զօրութիւնն պիտի վայելէ՝ երբ բոլորովին 'ի մարմնոյ
ազատի, կամ անտի բաժնուելով և կամ այնոր վե-
րայ բոլորովին իշխելով: Ապա ուրեմն այս ալ աւելի
պատճառաբանութիւն և ապացոյց մի է ոգեկանու-
թեան կողմին՝ ընդդէմ նիւթականութեան: Շատ ու-
րախ եմ որ ուրիշ բան բնտռելուս ատեն՝ այս բանս
գտի: Նոյն բանն հանդիպած է տարրաբանուութեան

որ երկայն ատեն իմաստասիրական քարն գտնելու
աշխատելով՝ թէ և ոսկի շինելու մեծ արուեստն չգը-
տաւ՝ բայց մարմնոց բաղկացութեան գաղտնիքն ե-
րևան հանեց: Երանի՛ թէ հոգեխօսութիւնն ալ նոյն
բաղդին հանդիպէր:

Կաթողիկեայ յիշատակութիւն

25 Նոյեմբեր.

Միտքս եկն որ առաջին հաղորդութեան պատրաս-
տուելու համար ընթերցած Քրիստոնէական վար-
դապետութեան մէջ գրած էր թէ՝ մարդս կարէ
աղօթքով և սրբոց բարեխօսութեամբն մեռելոց հետ
հաղորդակցիլ. վախճանելոց դիտմանն աղօթք և բա-
րեգործութիւն առնելով, և սուրբերն բարեխօս բըռ-
նելով՝ որ փառաց մէջ են, որպէս զի իրենց միջնորդու-
թեամբն և իրենց արդեանց կերպով մի մասնակցե-
լով՝ շնորհաց օգնութիւնն ընդունին այն հոգւոց
համար՝ որ թէպէտ Աստուծոյ հետ հաշտուած են
բայց իրենց քաւութիւնն և մաքրութիւնն աւար-
տած չեն: Ուրեմն կաթողիկէ վարդապետութիւնն
ուսուցանէ՝ որ այս աշխարհս զոր զինուորեալ եկե-
ղեցի կ՚անուանէ՝ կենդանի յարաբերութիւն ունի
'ի միոյ կողմանէ ստորնագոյն և մթին աշխարհի մի
հետ՝ որ չարչարազգեաց եկեղեցի անուանի, և 'ի
միւս կողմանէ բարձրագոյն և լուսաւոր աշխարհի մի
հետ՝ անուանեալ յաղթական եկեղեցի՝ որ է արքա-
յութիւնն երկնից — : Այս անորոշ կերպով միտքս
մնացածին վերայ խորհրդածելով՝ ինձ այնպէս երևե-
ցաւ որ թերևս այնոր մէջ գտուի անդիի աշխարհին
հետ հաղորդակցութիւն առնելու փնտռած ճամբայս:
Բայց որովհետև շատ տարիներէ 'ի վեր քրիստոնէու-
թեան վարդապետութիւնն և ընթացքն 'ի բաց թո-

ղած եմ՝ վստահ չեմ թէ արդեօք այս է ստուգապէս Եկեղեցւոյ միտքն ալ. ուստի ամենէն առաջ հարկ եղև որ այս բանս իմանամ. և այս հասկնալու համար սաստիկ եռանդ մի ունելով՝ միտքս դրի՝ որ որչափ ալ ինձ ծանր դայ՝ անտարակոյս մարդկային նկատման համար, երթամ այս բանս հարցանեմ ինձ ծանօթ եկեղեցականի մի՝ որ քաջ աստուածաբան կը համարուի, և իրաւամբ մեծ համարումն ստացած է իւր գիտութեամբն և սիրով:

Այն արժանաւոր քահանայն որ իմաստասէր լինելս գիտէ՝ որ անտարակոյս բարի ընծայական մի ոչ համարուէր իր առջևն ելնելու, առջի բերան զարմանք եցոյց իմ այցելութեանս վերայ՝ չգիտելով թէ ինչ բանի համար էր: Բայց երբ գալուս պատճառն իրեն ծանուցի՝ վստահութիւն առաւ՝ ու նաև ուրախացաւ հաւանականապէս յուսալով որ աստուածային շնորհքն էր զիս հոն տանողն և դարձի գալու մտօք: Ես ալ պատշաճ չսեպեցի իւր այս յոյսն 'ի դերև հանել երևցնել, սակայն հաստատելու համար ալ բան մի չզրուցեցի: Մտքէս ասէի որ այսու աւելի հաճոյ կարեմ լինել, և նորա զիս համոզելու փափաքն աւելի եւս գրգռել, և համարէի թէ այսու իւր խօսքն ալ առաւել ևս եռանդուն և յստակ պիտի լինէին: — Ահաւասիկ գրեթէ իր ինձ տուած պատասխանն.

«Այս նիւթոյս վրայօք Եկեղեցւոյ վարդապետութիւնն քանի մի բառով ձեզ բացատրելն՝ ինչպէս որ կը փափաքիք, դժուար բան է, սիրեցեալ Տէր, որովհետև շատ խորին նիւթ է. և թէպէտ սովորական մտքերն ալ սոյն բանս չափով մի կ'ըմբռնեն, որովհետև նոյն իսկ փոքր տղայոց կը սովրեցնեմք զայն իբրև հաւատոյ մասն, սակայն այնոր գերազանց ճշմարտութիւնն այն մտքերն միայն կ'ըմբռնեն՝ ոյք որ նորա սկիզբն և բովանդակութիւնն կարեն հասկանալ:

Տարակոյս չունիմ որ դուք ալ կարէք զնոյն ըմբռնել եթէ ճշմարտութեան անկեղծ փափաքով փնտռելու ելած էք և ոչ յունայն հետաքրքրութենէ: Այսու ամենայնիւ Աստուծոյ ձեռք գործիք չպակսիր, և նոյն իսկ մարդկանց ունայնասիրութիւնն իրենց տատամսութիւնն և սրտին անհանգստութիւնն ձեռք կ'առնու՝ զիրենք առ ինքն դարձնելու համար, և ձեզ պէս շատ իմաստուններ ալ եղած են՝ որ իրենց տեղեկութեանն համար միայն Աւետարանն ընթեռնլու ժամանակ՝ և նոյն իսկ զայն դատաքննելու և հերքելու համար կարգացած ատեննին՝ այնոր ուռկանին մէջ բռնուած են: Բայց ինչ և իցէ՝ որովհետև դուք վարդապետութեան այն մասին վերայ իմ հաւատոյս հաստատութիւնն ու պատճառն կը հարցնէք, իմ ալ պարտքս է պատասխան տալ, և Աստուծոյ կ'աղաչեմ որ ընդունայն չլիցի: Խնդրոյն գլխաւոր կէտերն միայն բացատրելն՝ կարծեմ բաւական պիտի լինի զձեզ այս նիւթոյս մէջ լուսաւորելու:

«Եկեղեցւոյ վարդապետութիւնն հանրական է, որովհետև աստուածային խօսքին վերայ հաստատուած է՝ որ նոյն ինքն ճշմարտութիւնն է վերագոյն քան զժամանակս և զվայրս, յաւիտենական և բացարձակ որպէս ինքն Աստուած: Այս այսպէս լինելով բանն աստուծոյ բովանդակէ զտիեզերս ամենայն՝ իւր ամեն պարունակներովն և գիտէ որ ինչ 'ի նմա բովանդակի՝ որովհետև ամենայն ինչ եղև Բանիւն աստուծոյ. ապա ուրեմն ինքն միայն ուսուցանէ մեզ զամենայն ինչ՝ որ օգտակար է մեզ գիտել: — Ուստի մարդկային աղգի անցեալին ներկային և ապագային ալ գալով՝ ինքն ասէ մեզ թէ ուստի եկած է ուր պիտի երթայ և վախճանն ինչ է: Ինքն պատմութեան պէս մինակ այս ինչ երկրի և այն ինչ դարու մարդկանց վերայ ոչ խորհի, այլ յայտնէ մեզ զվախճան բովանդակ մարդկութեան, և զյարաբե-

րութիւն նորա ընդ աշխարհի՝ ուր որ հիմա կ'ապրի, և ընդ երկնից ուր որ պիտի հասնի:

«Քանի որ մարդիկ այս աշխարհիս մէջ կ'ապրին իրենց ազատ անձնիշխանութեամբն բարւոյ և չարի մէջ գտուելով՝ միշտ չարի հետ պատերազմելու հետ են՝ որ 'ի ծագման անդ իրենց յաղթեց, և ուստի բոլորովին չեն կարող ազատիլ՝ բայց եթէ շնորհիւ Աստուծոյ մարդացելոյ՝ զոր Եկեղեցին Փրկիչ կ'անուանէ, որովհետև 'ի միոյ կողմանէ մարդկանց տեղն անսահման արդարութեան հատուցմունք արար՝ նոցա անօրէնութիւնն քաւելով, և 'ի միւս կողմանէ իւր աստուածային կեանքն նոցա հաղորդելով՝ զիրենք իւր զօրութեամբն զօրացուց Աստուծոյ և մարդկան թշնամւոյն յաղթելու: Այսոր համար է որ մարդկային ազգի այն մասն որ դեռ մինչև հիմա չարի հետ կը պատերազմի 'ի ներքոյ արեգական՝ Զինուորեալ եկեղեցի կ'անուանի:

«Նոքա որ Աստուծոյ թշնամւոյն և չարի իշխանին հետ դաշնակցելով՝ նորա արբանեակներն եղած են՝ երկնային արքայութենէ դուրս անկած են և տեղի չունին յերկինս, որովհետև կամօք բաժնուած են 'ի Նմանէ որ հոն կը թագաւորէ: Սոքա են դժոխոց բնակիչքն որ արտաքին խաւարի թագաւորութիւնն է կամ վիհ անդարմանելի չարեաց. վասն զի նոքա որ հոն դահավիժած են՝ իրենց գլխոյն հետ միատեղ՝ ճշմարտութեան դէմ կատաղաբար պատերազմելով և արդարութիւնն մերժելով՝ աստուածային գթութեան ամեն միջոցներն ցամքեցուցած են: — Մարդկութեան այս աւաղելի մասն՝ երկրիս հետ ուրիշ հաղորդակցութիւն չունի՝ բայց եթէ փորձութիւններով զայն խռովելու համար՝ երբոր Աստուած թոյլ կուտայ: Երկնից հետ ալ ուրիշ յարաբերութիւն չունի՝ բայց եթէ այնոր անողոքելի արդարութիւնն իմանալով՝ որոյ գործադրութիւնն դատա-

պարտելոց տանջանքն է և Աստուծոյ փառք դժոխոց մէջ: — Եկեղեցին մեզ ոչ ներէ հաղորդակցելու՝ դժոխային աշխարհին հետ՝ ուր որ մեր նմանիք կը տանջուին, ընդ հակառակն կը հրամայէ մեզ բոլորովին փախչելու հեռանալու. այնոր համար կը դատապարտէ այն գաղտնորոգայթ գիտութիւններն և խաւարային արարողութիւններն զորս մարդիկ կը գործադրեն՝ կերպիւ իւիք այս մահաբեր վերաբերութիւնս հաստատելու համար:

«Մահուան մէջ ալ նոյն բանն կը հանդիպի՝ ինչ որ կենաց մէջ, իւրաքանչիւր ոք իւր ազատութեամբն իւր վիճակն և դիրքն կ'որոշէ: Այն հոգիք որ այս աշխարհէս մաքուր և անարատ կելնեն շիտակ կը վերանան առ Աստուած՝ զոր 'ի վեր քան զամենայն ինչ սիրեցին և հաւատարմութեամբ պատուիրանքն պահեցին և գթութիւն գործեցին. իրենց հողեղէն պատանքն մերկանալով՝ կը մտանեն 'ի փառս՝ հաղորդելով 'ի Յիսուս Քրիստոս աստուածային կենաց, և նորա երանութիւնն կը վայելեն. մարդկութեան այս փառաւորեալ մասն Յաղթական եկեղեցի կ'անուանի:

«Կան հոգիներ ալ որ 'ի չարիս աղտեղելով և յանկարգութիւնս խոնարհելով՝ մահուանէ առաջ իրենց յանցուածոց վերայ զղջացան, և անկեղծ խոստովանութեամբ սրտերնէն զայնս դուրս նետեցին, հաստատ կամօք քաւելու զնոսա, և որչափ որ կարեն ուղղելու: Սոքա ալ թէ և Աստուծոյ հետ հաշտուեցան՝ իրենց ապաւինած Փրկչին շնորհիւն, սակայն դեռ յԱստուծոյ հեռի են իրենց մնացած անմաքրութեանց և իրենց անցած կենաց արատներուն համար: Եւ որովհետև ոչ ինչ անմաքուր ոչ մտանէ յարքայութիւն երկնից, ապա ուրեմն հարկ է որ հոն մտնելու համար՝ իրենց պարտուց մինչև յետին բնիոնն վճարեն, և իրենց խղճին ամենայն աղտերն մաքրուին, որ մաքրողական հրով

լինի՝ որ զերեզք կայրէ մինչև 'ի խորս, պատուական մետաղն մի պէս՝ այնոր կղկղանքն զատելով՝ և երկնային զուտ ոսկի դարձնելով։ Այսոր համար է որ մարդկային ազգի այս մասին՝ քաւչական մաքրութեան ցաւերն քաշելու տէրն՝ Քաւարան կ'անուանի. և հոն եղողներն Եկեղեցի չարչարազգեաց։

«Այսպէս ահա այս երեք եկեղեցիներն զինուորեալ, չարչարազգեաց և յաղթական՝ մի եկեղեցի կը կազմեն՝ որ է ընդհանրական կամ կաթողիկէ Եկեղեցին՝ Յիսուսի Քրիստոսի խորհրդաւոր մարմինն։ Բայց այս սրբազան մարմնոյս մէջ՝ մինչև 'ի վախճան դարուց՝ յորում երկնից Թագաւորութեան միութիւնն չիւր լուծեան պիտի նորոգի, պիտի գտուին երեք վայրք զանազանք՝ նոյն կենաց կենդանացեալք, 'ի զանազան աստիճանս՝ ընորհաց ամեն մէջոցներով և փառաց չքեղութեամբն. ինչպէս որ ամեն կենդանի մարմնոց մէջ կան երեք գլխաւոր մասունք՝ զորս բնաթոյք եռոտանի կենսականութեան անուանեն, և որոց որիշ գործարանքն՝ զանազան սահմանեալ պաշտամունս վարելով՝ մի և նոյն վախճանի կը ծառայեն, 'ի միոյ սկիզբէ մղումն առնելով և նոյն արեան շրջանովն։

«Այսքիկ են երեք բաժանմունքն մարդկութեան վերսին ծնելոյ 'ի Յիսուս Քրիստոս, և որք բաժանակից են փոքր 'ի շատէ Ճշմարիտ կենաց՝ հեղմամբ հոգւոյ նորա և Ճաշակմամբ և զմայլմամբ աստուածային արեան։ Այսու նկատմամբ միայն կարես տեսութիւն մի ունել քոյ որոնած խնդրոյդ՝ թէ արդեօք կարելի՞ է իրական ինչ հաղորդակցութիւն կենդանեաց ընդ մեռելոց։ Մնայն ուշ դիր այս զբօսցած նախագրելոցս հետևանացն։

«Ամենայն հոգիք մկրտութեամբ վերածնեալք յարիւն Յիսուսի Քրիստոսի, և միացեալք միով հաւատով բանիցն նորա, կազմեն զսասցեալն Եկեղեցի

այսինքն զբովանդակութիւն անգամոց խորհրդաւոր մարմնոյն Քրիստոսի։ Այս հոգիներս իրարու հաղորդակից են՝ Թէ այս աշխարհիս մէջ Թէ անդին՝ կեդրոնին որ միացուցանէ զնոսա 'ի մի կեանս, որպէս ամենայն շառաւիղք շրջանակին իրարու հաղորդեալ են կեդրոնին՝ յորմէ յառաջ գան և յոր վերջ դառնան. կամ աւելի յայտնի օրինակաւ խօսելով՝ որպէս ամենայն գործարանք կենդանի մարմնոյ համակրութիւն և համազօրութիւն ունին 'ի ձեռն սրտի որ արեան ակն է և կենդանացուցիչ նոցին։ Ասոր կեդրոնին հետ խորհրդաւոր հաղորդակցութիւն ունենալով՝ տանջանաց մէջ եղող հոգիներն՝ կարեն աղօթիւք օգնութիւն հայցել 'ի նոցանէ՝ որ երկնային կեանքն կը վայելեն. և այս երանեալ հոգիներն՝ մաքրողական հրով տանջուողներուն վերայ խղճալով՝ կարեն ընորհաց ձեռքով նոցա խնդրած օգնութիւնն ընդունել յԱստուծոյ։ Երկրիս վերայ եղած զինուորեալ Եկեղեցին ալ՝ որ կրած պատերազմներուն դիմագրելու համար՝ ընորհաց ամեն միջոցներին ճոխացած է (և ուստի զրկ են քաւարանի ոգիք՝ իրենց փորձի ժամանակն անցած լինելուն համար) կարէ իւր աղօթիւքն և մաստուցմամբ արեանն Յիսուսի Քրիստոսի և արդեանց սրբոց և Ճգնութեամբք իւրոց հաւատացելոց՝ վասն ննջեցելոց՝ օգնական լինել նոցա՝ որպէս զի իրենց մաքրութիւնն կատարուն և իրենց տանջանքն Թեթևանան։ Այսպէս տիեզերական հաղորդակցութիւն մի կը հաստատուի որ մինչև 'ի վախճան դարուց պիտի յարատևէ այս և անդին աշխարհին մէջ, մեր երկրին և յայնմանէ վեր ու վար եղածներուն մէջ. այնպէս որ այս երեք պարունակացս հոգիներն՝ որ այժմ ժամանակաւոր արգելքով իրարմէ բաժնուած են՝ բայց աստուածային կենօք միացեալ գոլով որոմ ամենքն ալ աստիճանաբար կը մօտակցին, գոգցես այս կենաց

կենդրոնն դիմելով՝ հաւատով յուսով և սիրով, բարեբաղդաբար իրարու կարեն օգնել, երանելաքն իրենց բարեխօսութեամբ և զինուորեալք իրենց աղօթիւք բարեգործութեամբ և մատուցմամբ սուրբ պատարագին։ — Տարակոյս չկայ որ մարմնաւոր աչք այս հաղորդակցութիւնս ոչ տեսանեն ինչպէս զամենայն գերբնական իրս, բայց հաւատոյ աչաց առջև՝ այս բանս յայտնի է, որ հաւատայ թէ ամենայն նորածնեալ հոգիք զօրութեամբ արեան Յիսուսի Քրիստոսի՝ ի միութեան են ընդ նմա, և այսու կազմի գերդաստան որդւոցն Աստուծոյ, կամ խորհրդական մարմին նորոյ մարդոյն՝ որ է Եկեղեցի։

« Այսպէս, սիրելի Տէր. կենդանեաց և մեռելոց մէջ եղած հաղորդակցութիւնն՝ որոյ միջոցն գուք ճանաչէլ կուզէք՝ տեսական կամ պարզ ուսումնական հետազօտութիւն մի չէ, այլ իր գործադրական վախճանովն կենդանի և զօրաւոր գործ մի է. վասն զի ուսուցանելով մեզ թէ ինչպէս կարեմք գերեզմանէն անդին եղած մեր բարեկամաց հետ յարաբերութիւն ունել՝ ցուցանէ միանգամայն և կ'ամրանդէ մեզ յիրաւի զօրաւոր միջոցներ մեր սէրն նոցա յայտնելու, նոցա ազատութիւնն փութացնելու օգնելով, և նոցա փրկութիւնն կատարեալ առնելով։

« Արդէն ամէն բանի մէջ ալ այս է Աւետարանին ոգին. տեսական ճշմարտութիւն մի կամ վարդապետութիւն մի ոչ ուսուցանէ՝ որ գործնական վախճան մի չունենայ. այնպէս որ Աւետարանի դպրոցին մէջ՝ հաւատարիմ աշակերտն միշտ բարեգոյն լինի՝ աւելի ևս լուսաւորուելով։ Այս կնքովս է որ Աւետարանն էականապէս կը զանազանի ի գիտութենէ և ի պարզ մարդկային յիմաստասիրութենէ. և այս բանս մարդ դիւրաւ կ'ըմբռնէ՝ երբ յիշէ Քրիստոսի առաքման վախճանն որ էր աւետարանել աղքատաց և փրկութիւն ամենայն մարդկան »։

Որչափ որ կարացի ճշդիւ համառօտեցի այս պատուական քահանայիս խօսքերն՝ որ սիրտս թափանցեցին թէ իր ցուցած հաւատոյ եռանդեամբն որով խօսէր, և թէ տուած լուսաւոր բացատրութիւններուն։ Անցեալ հաւատոցս եղծեալ ընկճեալ հեաքն սրտիս մէջ նորոգուեցան, և կը սկսիմ խոստովանելու որ ճանչցած իմաստասիրութեանց և կրօնից միոյն մէջն անգամ չեմ գտած այսպիսի բացայայտ և ճշմարտանման մեկնութիւններ՝ մտացս մէջ եղած խնդիրն լուծելու։ Միայն այս չղթայաչար հետեւութիւններս ընդունելու և մանաւանդ գործադրելու համար՝ հարկ էր համոզուած լինել քրիստոնէութեան սկզբան ճշմարտութեան վերայ, պէտք է ընդունիլ որ Աստուած մարգացեալ է՝ անկեալ մարդկութիւնն վերականգնելու համար, որուն գեռ ևս խելքս չպառկիր՝ հաւասալու համար մարդուս անկմանն և Փրկչի կարևորութեանն. կամ գոնէ այնչափ դժուարութիւններ ու մթութիւններ կը տեսնեմ այս բանիս մէջ՝ որ ոչ գիտեմ թէ ինչ մտածեմ։

Նախախնամութիւն.

28 Նոյեմբեր.

Արդեօք այն քահանայն իրաւունք ունէր, և աստուածներն ճշմարիտ էին։ Արդեօք յիրաւի անդին աշխարհին հետ ապահով կերպով հաղորդակցութիւն չէմք կարող ունել՝ բայց եթէ զմեզ անոի բաժնող վէմն վերայ գերբնական կամուրջ մի միայն ձգելով. թէ մինչև որ անոի եկող մի չտեսնեմք ու չլսեմք՝ չէմք կարող հոն եղածներն դիտել ինչպէս Քրիստափոր Քոլոմպոս պարապ տեղ նոր ցամաքի վերայ կը մտածէր՝ մինչև որ անձամբ հոն երթալով և աչքովն

տեսնելով ապահով եղև թէ յիրաւի կայ եղել։ Բայց իր փնտռած ցամաքն մեր հողագնտիս վերայ էր, իսկ իմ փնտռած աշխարհս քաղաքն մեռելոց հողագնտէս անդին է. այնպէս որ մարդկանց կարծիքն որչափ ալ մեզ ցուցանեն այնոր գոյութիւնն՝ սակայն ստուգապէս չեն կարող զայն ապացուցանել և այնոր հետ զմեզ կենդանի յարաբերութեան մէջ մուծանել։

Այս ալ ստոյգ է որ ամեն ատեն մարդիկ հաւատացել են թէ երկինք երկրիս հետ կը հաղորդակցի, նաև երկիրս դժոխոց հետ։ Ամեն դիցաբանութիւնք այս հաւատքս կ'ենթադրեն, և որչափ ալ զանազան ու անտեղի բաներ ալ հնարած են իրարու հակառակ՝ սակայն այս նիւթիս մէջ կը միաբանին, և ամենքն ալ կընդունին թէ կայ հաղորդակցութիւն ինչ՝ նաև մարմնաւորապէս, ընդ մէջ աստուածոց և մարդկան, ուստի յառաջ եկած կը համարին երկրիս վերայ դիւցազանց և կիսաստուածոց աստուածային ձեռեր։ Հեթանոսական կրօնից մէջ կայ Աստուածութեան մշտնջենաւոր մարդակերպութիւն մի՝ միանալով ընդ մահկանացուաց, և մարդկութեան անդադար աստուածափոխութիւն մի՝ զորդիս աշխարհի աստուածարելով։ Տարակոյս չկայ որ այս ցնորական արարողութեանցս մեծ մասն երևակայութենէ յառաջ կուգայ, սակայն մէջն դանուած հիմնական գաղափարն՝ զոր ամեն տեղ կը տեսնես՝ կ'երևի թէ մարդկային մտաց հանրական թելադրութիւն մի է. այսինքն անխզելի հաղորդակցութիւն մի կայ մեր աշխարհին և վերնագոյն պարունակին մէջ յորմէ ինքն կը կախուի. կամ ուրիշ կերպ խօսելով՝ կարելի չէ որ արարիչն աշխարհի 'ի սկզբան մի անգամ նետած լինի զնա տիեզերաց ընդարձակութեան մէջ՝ թողլով զինքն այն շարժիչ զօրութեան ձեռքն զոր նմա շնորհել է և այն հանրական օրինաց՝ որք այս շարժումը պիտի բարեկարգեն, առանց իւր նախախնամու-

թեամբն նորա ղեկավարութիւնն շարունակելու, իւր զօրութեամբն զայն պահելու և իւր սիրովն ջերմացնելու։

Մեք իմաստասէրքս՝ թէպէտ և միշտ ոչ զրուցեմք, բայց կը համարիմք թէ Արարիչն այս մեծ ժամացոյցս այսինքն տիեզերքս ստեղծելով՝ զինքն մշտնջենապէս բանելու համար լարել է մշտնջենաւոր շարժում մի տալով իրեն, և որ մինչև ցլրումն դարուց պիտի չդադրի, եթէ կայ դարուց վախճան մի՝ զոր այն ալ ամենևին չեմք գիտեր։ Այսպէսով թէ և զԵպիկուրոս կը նզովեմք, սակայն մեր Աստուածն ալ այն իմաստասիրին Աստուծոյն կը նմանի, որ եթէ կայ ալ՝ երկրիս գործոցն ամենևին չխառնուիր, որպէս զի այնոր անընդհատ անկարգութիւններն իր երանութիւնն չխռովեն. որով երկնից թագաւորն ալ պարապորդ թագաւոր մի լինի, զոր մարդկանց ընդհանուր կարծիքն ոչ երբեք ընդունած է. և յիրաւի այսպիսի կարծիք մի ընդունելու համար իմաստասէր լինելու է։ Իսկ ոգեւորական իմաստունք՝ որ այս աստիճան անտեղութեան ոչ հասանեն, այս դըժուարութենէս իրենք զիրենք կ'ազատեն՝ երկրիս կառավարութիւնն նմանցնելով սահմանագրական կառավարութեանց՝ որք թագաւոր մի կ'ընդունին՝ բայց պայմանաւ որ գործի չխառնուի այսինքն թագաւորէ առանց կառավարելու, գոհ լինելով միայն ծիրանւոյ պսակի և գաւազանի փառքովն, և իւր պաշտօնէից թողլով ղեկավարութեան հոգն ու վըտանգներն։ Այսոր համար է որ մեք իմաստասէրքս՝ որ զմեզ ամենէն աւելի մարդկանց մէջ իմաստունի տեղ դրած եմք, և արարչին պաշտօնեայներն կը համարիմք, զԱստուած յերկինս տարագրելով՝ մեր նմաններն աշխարհիս վերայ կառավարել կ'ուզեմք, և մեր ուղածին և մեր գաղափարներուն համեմատ կը ջանամք աշխարհիս վախճանն ուղղել, դրսուանց շը-

նորհելով Աստուածոյ իւր անուան և պաշտամանց վերաբերեալ պատիւն:

Բայց այս խնդրոյս մէջ ժողովրդեան ողջամտութիւնն ոչ Եալիկուրոսի կը հաւատայ և ոչ մեզ. ոչ այն իմաստասիրին անտեղի կարծիքն կ'ըմբռնէ և ոչ մեր սահմանագրական կեղծիքն: Այլ կը մտածէ թէ մեքենայ մի որչափ ալ կատարեալ է՝ կարէ աւրուիլ, և պէտք է որ աւեն աւեն զայն շինողն զինքն նորոգէ ու լարէ. կը մտածէ որ արարածոց 'ի սկզբանէ 'ի վեր տրուած չարժումէն զատ՝ և զնոսա ուղղելու ընդհանուր օրէնքէն դուրս՝ պէտք է որ տիրող աչքն ալ միշտ նոցա վերայ լինի՝ ամբողջութեանն և իւրաքանչիւր մասանց վերայ հսկելու համար, իւր ձեռքն մերթ այս և մերթ այն կողմն տանելով, որպէս զի այնոր աւրուածներն չհկէ կամ առաջն առնու, և պէտք եղած աւեն նոր ուժ մի ալ տայ դիմակալութեանց յաղթելու համար, որպէս զի իւր դիտմունքն կատարուի և իւր գաղափարն գործադրուի. և այս բանս ժողովրդոյն նախախնամութիւն կ'անուանէ, ոչ եթէ իմաստասիրաց պէս վերացեալ բան մի սեպելով զայն՝ այլ իրական ինչ, մանաւանդ թէ իրական անձնաւորութիւն մի որոյ աչքն և ձեռքն ամեն տեղ է, նաև անտարակոյս հանրական օրինաց գործողութեան մէջ, և երբեմն ալ նոցա ազդեցութենէն դուրս ու գեր 'ի վեր: Ժողովուրդն այնպէս կը հաւատայ որ տիրոջն այս միջամտութիւնն օրէնքն չեղծաներ, այլ մանաւանդ պարագայից մէջ այն օրինաց գործն կը գագրեցնէ միայն կամ կը չափաւորէ, աստուածային կարողութիւնն աւելի ևս պայծառ երեւցնելու և մարդկանց աւելի օգտակար լինելու համար: Աստի յառաջ կուգան ամեն կրօնից մէջ հրաշք ասացեալներն որ աշխարհիս ղեկավարութեան մէջ տեսակ մի կառավարութեան անակնկալ յեղափոխութիւններ են. և ամեն տեղ այս յեղափոխութիւններս

կարելի և եղած կը սեպէ, և նոյնն ամեն տեղ ժողովրդեան աստուածային կարողութեան վերայ ունեցած հաւատքին ամրութիւնն է, այնոր ալօթիցն գլխաւոր չարժառիթն, և այս աշխարհէս անդին ունեցած յուսոյն հիմն:

Ուրիշ կողմանէ ալ՝ ինչպէս որ ժողովուրդք միշտ հաւատացել են թէ Աստուածութիւնն այս կամ այն կերպով մարդկութեան հետ կը միանայ, նոյնպէս հաւատացել են նաև թէ մարդկութիւնն ալ կարէ հաղորդակից լինել աստուածային բնութեան, և ասկէց առաջ եկած են այն հեթանոսաց մէջ յաճախեալ աստուածարարութիւնները, այսինքն զմարդիկ աստուածոց կարգն անցուցանելու սովորութիւնն: Հաւմայեցիք գրեթէ բոլոր իրենց կայսերքն կ'աստուածացնէին՝ նոյն իսկ նոցա կենդանութեան առեն, և երկնից պաշտօն կը մատուցանէին, թէպէտ և մեռնելնէն ետև նոցա արձաններն տաճարք մէջ 'ի բաց չ'ածէին: Երկինքն շատ մի փառաւորեալ մարդիկ կային կամ աստուածոց ընորհիւն կամ ժողովրդեան շողոքորթութեամբն. որ ցուցանէ թէ աստուածային և մարդկային բնութեանց միաւորութիւնն 'ի մի անձն՝ քրիստոնէութեան գիւտ չէ. և քրիստոնէութեան հիմնական վարդապետութիւնն որ կ'ընդունի թէ Աստուած մարդացեալ է՝ մարդկանց երկնից իրերն ուսուցանելու համար, և նոցա օգնելու համար որ կատարելութեան և գերագոյն բարեաց դիմեն, ամեն ժամանակ ընդունելի եղած է այս կամ այն կերպով, թէ և մեր աւուրց բանաւորականներն այս բանիս սասիկ կը հակառակին. որովհետև ժողովրդեան ողջմտութիւնն այնպէս կը հաւատայ՝ որ մինչև աստուած մի չգայ մեզ ուսուցանելու անդին աշխարհին իրերն՝ մեք այնոր վերայ ստոյգ բան մի չեմք կարող դիտել: Արդէն Պլատոն ալ նոյն բանն ասացած է, և Կիկերոն ալ անոի առեալ նոյն բանն կը կրկնէ կար-

ծեմ իր Տուսկուլեան ասացեալ գրոց մէջ։ Ապա ուրեմն ինչպէս լինի որ արդի իմաստասէրք՝ որ Պլատոնի աշակերտ լինելուն վերայ կը պարծին՝ որոց մէջն եմ ես ալ, ոչ կամին ընդունել զԱստուածն մարդացեալ Աւետարանի, որ անտարակոյս շատ աւելի գերազանց է քան հեթանոսաց մարդացեալ աստուածներն և աստուածացեալ մարդիկն, յորոց ոմանք անառակք էին և ոմանք ալ հրէշք կատաղիք, մինչդեռ Քրիստոս ասացեալն ով որ է՝ ամենէն աւելի վսեմ խօսքեր և ամենէն աւելի զարմանալի օրինակներ թողած է աշխարհի։ Յ. Յ. Ռուսոյ անգամ մի եռանդն բորբոքելով կը գոչէր. « Այո, եթէ Սոփոնիսբեայ [1] որդւոյն մահն՝ իմաստնոյ մահ է՝ Մարիամու որդւոյն մահն Աստուծոյ մահ է». քիչ մնայ որ ես ալ ասեմ. Եթէ Յիսուս Քրիստոս Աստուած չէ՝ Աստուած լինելու արժանի է, որովհետև մարդիկ միշտ աստուածացնել ուզած են զիմաստութիւնն և զառաքինութիւնն։

Յիշատակութիւն անցելոց.

1 Դեկտեմբեր.

Ես որ երեսուն տարիէ 'ի վեր Քրիստոսի, քրիստոնէութեան և եկեղեցւոյ վերայ ամենեւին ոչ խորհէի՝ ինչէն է որ հիմա միշտ այս բաներուս վերայ կը մտածեմ, որպէս թէ ուրիշ տեղ փնտռելով չըգտածս՝ այնոց մէջ պիտի գտնեմ։ Ժամասէրներն եթէ գիտէին՝ անշուշտ պիտի ասէին թէ Աստուծոյ շնորհքն իմ ետևէս անկել է զիս դարձի բերելու՝ և իմաս-

1 Յ. Յ. Ռուսոյ կը սխալի Սոկրատոյ մօրն անունն էր Փենարէտ մանկաբարձն, իսկ հօրն Սոփրոնիսկոս անդրիագործն 470 Ն. Ք. (Ծն. Բարգմ.)

տասէրն առաքեալ դարձնելու համար։ Բայց դեռ շատ հեռու եմք աստի, որովհետև անդիի աշխարհի ծանր խնդրոյն վերայ որչափ որ կը ջանամ լոյս մի ստանալու՝ այսու ամենայնիւ պայծառ բան մի ոչ տեսանեմ, և խաւարի մէջ շօշափելով քալող մարդու նմանիմ։

Արդէն երկայն ատենէ 'ի վեր Աւետարանի և Եկեղեցւոյ վերայ մտածած չլինելով՝ և առ այժմ իմ փնտռած նիւթոյս ալ շատ կարևորութիւն չունելով՝ առանց վնասու ուրիշ անգամի կարեմ թողուլ զայն. որովհետև պէտք է հանդարտութեամբ և խոհեմութեամբ ծանր ծանր մտածեմ այս բանիս վերայ առանց շտապելու, ինչպէս որ իմաստասիրի կը վայելէ. մանաւանդ որ արդէն ինձ ծանօթ աշխարհ մի է այն՝ որ իմ առջևս կ'ելնէ՝ թէ և շատ տեղեկութիւն մի չունիմ վերան. արդէն տղայութեանս ատեն հաւատք ունէի, և ասի թէ բոլորովին ոչ ջնջի նոցա սրտից մէջէն՝ ոյք 'ի մանկութենէ խելքերնին բացուած ատեն ընդունել են զայն։ Բայց պատանեկութենէս ետև՝ այս հաւատքս իմ սրտիս մէջ շատ դեղևեցաւ՝ երբ կրօնական կրթութիւններն 'ի բաց թողի, որ զդայարանաց և երևակայութեան եռանդեան մէջ՝ ինձ ծանր կուգային։ Կենացս այն մասին մէջ ամենէն աւելի չարագոյն եղէ, թէ որ անհաւատութիւնն յանցանք մի է՝ և ոչ անհրաժեշտ հետևանք հասակի՝ աճման մարմնոյ և մտաց։ Այս հասակս երիտասարդի համար վտանգաւոր հասակ մի է, որովհետև մարմնոյ տիրապետութիւնն՝ միաքն կը խաւարեցնէ և սիրտն կը խստացնէ, և անբանական զգածմանց եռանդեամբն՝ անասունի պէս բան մի կը դառնայ, և հոգեղէն ամեն ազդեցութեանց դէմ կը դնէ։ Այս հասակիս մէջ էր որ քրիստոնէութեան զգածմունքս շատ պակսեցաւ, և Եկեղեցւոյ թշնամի դարձայ՝ նորա լուծն թօթուել ուզելով, և

այս վախճանաւ իւր վարդապետութիւններն, պատուիրաններն և արարողութիւններն ծաղր առնէի՝ անպատշաճ կատակաբանութեամբ. բայց ամեն անգամ ալ սրտէս խռովութիւն մի կ՚իմանայի խիղճս զարնելու պէս:

Սակաւ մի յետոյ՝ երբ ինքզինքս իմաստասիրութեան տուի՝ կրօնից նկատմամբ լեզուս փոխեցի. իմ միտքս դիտութեամբ բարձրացած և առջի յաջողութիւններովն խրոխտացած՝ հաւատքն՚ի բաց թողուց, որ կանանց և մանկանց համար միայն կարևոր կը համարէր, և յանդգնեցաւ ամենայն ինչ իւր խորհրդոց ուժովն բացատրելու իրաւունքն և զօրութիւնն ձեռք առնլու: Այս սնապարծութիւնս ես իմ վարպետներէս ուսայ՝ որ հանճարեղ տաղանդաւոր մարդիկ էին և աշխարհի մէջ մեծ համբաւ ունէին, այնպէս որ առանց ետև առաջ մտածելու՝ ամեն տեսակ խնդրոց վերայ իմաստասիրեցինք, հետզհետէ կենաց ամեն կարևոր առաջարկներն քննելով՝ ու բան մի ևս չկարելով լուծանել, և առ ժամն ամենէն աւելի ճշմարտանման երևցած կարծիքն ընդունելով, կամ երբ բաւական լուծմունք չէինք գտներ՝ բան մի չէինք հաստատեր, այլ բաւական կը սեպէինք ուրիշներու կարծիքն ու սխալներն նշանակելու: Եւ դրական իմաստասիրութիւն մի յօրինել չկարելով՝ նորա պատմութիւնն կը գրէինք, որով բռնի ընտրական իմաստասիրութեան մէջ անկաք, որ փոքր՚ի շատէ մթին և հակառակամարտ դրութեանց խառնուրդ մի է, և որ ամեն ժամանակ նոցա վարդապետութիւնն եղած է՝ որ իրենց յատուկ իմաստասիրութիւն մի չունին: Բայց այս ալ պէտք է խոստովանիմ որ թէպէտ քրիստոնէութենէ դուրս կ՚իմաստասիրէինք՝ բայց այնոր հետ ոչ մտքառէինք, և պատկառանքնիս այնչափ էր որ այնոր վերայ չէինք խօսեր, ոմանք որովհետև չէին գիտեր ինչ ասեն, ոմանք ալ վախնալով որ չափէն աւելի չխօսին:

Վարժապետութեանս առաջին տարիներն այս կերպով յառաջ վարեցի՝ դպրոցիս մէջ սորվածներովս և երևելի իմաստասիրաց ասացուածներովն ապրելով. ուրիշ հոգ չունէի բայց եթէ իմ երիտասարդական հասակիս վրայ դրուած ծանր պաշտօնն կատարելու, զոր ըստ կարի առաջ կը տանէի անխոնջ ընթեռնլով և աշխատելով՝ որպէս զի ուրիշներու գաղափարներն ինձ յատկացնեմ և իմիններուս հետ ձուլեմ, որ թիավարութեան դատապարտելոց աշխատանքին կը նմանէր, ոտքս շղթայով ուրիշի հետ կապուած լինելուն համար. սակայն խղճմտութեամբ յառաջ կը վարէի՝ մեծ համարումն ունելով իմ կարծեցեալ առաքելութեանս վերայ՝ զոր համարէի թէ կը կատարեմ: Մրտքովս համոզուած լինելով թէ միայն իմաստասիրութիւնն կարէր յագեցուցանել մարդուս մտաւոր փափաքն, և թէ ես ալ կոչուած էի մարդկան ազգի բարձրագոյն դասուն ընտրելագոյն մասին վերայ նոյն գործն կատարել՝ ինչ որ կրօնք և քահանայք առնէին ժողովրդեան ստորնագոյն դասուն վրայ: Ինչպէս որ սովրած էի՝ կը համարէի թէ գիտութիւնն՚ի նկատողութիւնն բացարձակին բարձրանալով՝ դերազանց էր քան զկրօնս՝ որ միայն բացարձակի կերպարանքն կըմբռնէ. ուստի միտքս դրել էի՝ որ չէ թէ միայն մեք պէտք չունէինք կրօնից զմեզ լուսաւորելու համար, այլ թէ մեք այնոր աւելի պայծառ լոյս մի տալու էինք, և ձեռն տալ նմա որ աւելի բարձրերն ելնէ:

Մինչև հիմա ալ դեռ նոյն կարծեաց մէջ եմ, թէպէտ և ստացած փորձերովս՝ անձնապաստանութիւնս պակսած է. իմ խեղճ բարեկամս Եակար ալ՝ որուն հաւատոց տկարանալուն թէ ոչ բոլորովին մարելուն պատճառ եղէ, այն ալ ինձ պէս կը մտածէր՝ մինչև իւր մահուան հանդիսաւոր ժամանակն, յորում ինքն ալ իմացաւ թէ այն բանն որ լաւ ապրելու համար անբաւական սեպելով կարհամարհէր՝ լաւ մեռ-

նելու համար շատ հարկաւոր է եղել։ Հիմա այս երկու բանս զիս շատ անհանգիստ առնեն. առաջին այն մասնակցութիւնս որով այնպիսի ողջամիտ հաւատացեալ երիտասարդն անհաւատութեան փոխուեցաւ, և որոյ պատասխանտուութիւնն իմ վրաս անկանի, և երկրորդ նոյն իսկ իմ այժմու դտուած կեղակարծ վիճակս՝ այնպիսի վարդապետութիւն մի ուսուցանելով՝ որ հայեցողականի մասին միայն բան մի կարժէ, թէպէտ և մեք զայն իմաստութեան դպրոցի մի պէս կը ցուցանեմք, և որոյ մէջ օգնութիւն և մխիթարութիւն մի ոչ դտանի, ոչ կենաց վշտաց մէջ և ոչ մահուան տագնապից մէջ, ինչպէս որ աչօքս իսկ տեսի։

Ոչ հասկանամ թէ մեք ինչպէս մինչև հիմա քրիստոնէութիւնն անտես արարեալ եմք, որոյ մէջ կապրիմք, և որ մեր քաղաքականութեան օրէնդրութեանց սովորութեանց և դրականութեան յարդարողն եղած է, և որ այս օր իսկ իւր ոգւովն մեր ընտանիքն կը կառավարէ, և ընկերութեան մէջ կարգն ու խաղաղութիւնն և պատիւն կը պահէ, այնու հանդերձ որ քրիստոնէից շատերն՝ որ մեզ պէս անուամբ միայն քրիստոնեայ են՝ իրեն թշնամի են կամ դէթ անտարբեր։ Վասն զի վերջապէս գոնէ կանայք մեր քրիստոնեայ են, և վայ՛ էր մեզ եթէ չլինէին։ Նոյն իսկ կրօնից ամենէն կատաղի թշնամիներն՝ երբ իրենց զաւակաց դաստիարակութեան վրայ կուգայ խօսքն՝ կրօնից ազդեցութեանն կը թողուն զնոսա, և յոյժ սակաւք են այնոքիկ՝ որ ուզեն զրկել զնոսա 'ի մկրտութենէ և յառաջին հաղորդութենէ։ Եւ նոյն իսկ մեր մեռնելէն ետև կը պահանջեմք որ կրօնից արարողութիւնները մեր վրայ կատարուին՝ զորս 'ի կենդանութեան կարհամարհէինք. և գերդաստանք մեծ նախատինս կը համարին իրենց՝ եթէ Եկեղեցին իւր տաճարն չընդունի զդիակ միոյ յանդամոց նոցա, ուր 'ի կենդանութեան իւրեանց ոչ երբէք ոտք կոխած են։

Որպիսի ակնյայտնի հակախօսութիւն. կորովամիտ ասիմք և տկարամտաց ամենայն խեղճութիւններն ունիմք. կը պարծիմք թէ կրօնից ուսուցածին չեմք հաւատար, և սակայն հաւատոյ նախապաշարմունքն վրանէս ոչ կարեմք թօթուել. դառողութեամբ գերբնական իրերն կը մերժեմք՝ պատրանք շլացումն թերևս և անմտութիւն իսկ կոչելով զնոսա. և սակայն զկանայս մեր և զորդիս քան զամենայն ինչ սիրելիս՝ կը թողումք 'ի ձեռս մոլորութեան և ստութեան. և եթէ նոքա ևս մեր անհաւատութեանն ուզեն հետեւիլ այս բանիս մէջ՝ կը սկսիմք մեր և նոցա ապագային վրայ վրդովիլ ու խռովիլ, թէպէտ և մաքերնիս դրած եմք որ մեր անհաւատութիւնն ճշմարտութեան վերայ հաստատուած է։

Վերջապէս մեք ընտրողականքս որ կուզեմք կատարեալ իմաստասիրութիւն մի յօրինել՝ իմաստասիրական դրութեանց մէջէն ճշմարիտն հաւաքելով՝ աւետարանական վարդապետութիւնն բանի տեղ չեմք դներ։ Եւ սակայն այս վարդապետութիւնս ալ իմաստասիրութիւն մի է, որովհետև ուսուցանէ զիմաստութիւն գերազանց բնաղանցութեամբ և զառաքինութիւն անարատագոյն։ Որչափ որ հայեցողականի կողմանէ գերազանց է, այնչափ ալ անհերքելի է որ քան զամենայն իմաստասիրութիւնս աւելի գործնական և ժողովրդական է, և կենաց և մահու ամեն պարագայից մէջ քան զամենն օգտակար։ Եթէ անկեղծութեամբ հաւատայինք՝ թէ յայտնութեան ձեռօք ուղղակի յԱստուծոյ եկած է՝ մեր այնոր նկատմամբ բռնած լռութիւննիս հակախօսութիւն ոչ համարէր. իրաւունք ունէինք ասելու թէ գերբնականն՝ մտաց հասողութենէն վեր լինելով՝ իմաստասիրութիւնն այնոր վերայ չէր կարող զբաղիլ, որովհետև իմաստասիրութիւնն լուսով բանի և եթ կը գործէ։ Բայց այսպէս չէ. մեր գերբնական իրաց

նկատմամբ ունեցած անհաւատութիւննիս՝ զոր ան-
հնարին և անտեղի համարիմք, որովհետև մտաց հա-
կառակ կը սեպեմք, այս չքմեղութիւնս ալ 'ի բաց
բառնայ 'ի մէնջ. վասն զի որովհետև քրիստոնէու-
թիւնն հազար ութ հարիւր տարիներէ 'ի վեր աշխար-
հիս մէջ հաստատուած է՝ եթէ աստուածային գործ
չէ՝ ուրեմն պէտք է որ մարդկային գործ լինի, բա-
նաւոր մտաց ծնունդ մի, ինչպէս որ և իցէ իմաստա-
սիրական դրութիւն: Ապա ուրեմն այս ալ այլոց պէս
իմաստասիրութիւն մի է զոր մարդ ինչպէս որ կարէ
պիտի մեկնէ, և պէտք է որ այնոր ալ տեղի մի շնոր-
հեմք՝ իւր բովանդակած ճշմարտութեանն և գործած
բարւոյն համար, մեր յօրինել ուզած ընտրողական
իմաստասիրութեան մէջ, ասել կուզեմ այն դերա-
զանց իմաստասիրութեան՝ զոր մտքերնիս դրեր եմք
շնորհել աշխարհի:

« Զո՛ ասեն զինէն թէ իցեմ »:

3 Դեկտեմբեր:

Յիսուս Քրիստոս օր մի իր աշակերտացն հարցուց.
« Ժողովուրդն ինձ համար ո՛վ է ասէ »: Նոքա ալ պա-
տասխան տուին. « Ոմանք ասեն թէ Եղիան ես, ո-
մանք ալ թէ Յովհաննէս Մկրտիչն յարուցեալ 'ի մե-
ռելոց »: — « Հապա դուք ինչ ասէք », ասաց Քրիստոս
Պետրոսի: — « Ես ասեմ թէ դու Քրիստոսն ես որ-
դի Աստուծոյ կենդանւոյ » գոչեց պետն առաքելոց,
որ նախ առաջին բարձրաձայն դաւանեցաւ իւր տիրոջ
աստուածութիւնն: Ժամանակէ մի 'ի վեր ես ալ նոյն
հարցումն առնեմ, և բոլորտիքս եղածներուն կը հար-
ցանեմ առ անձինս կամ առ գիրս նոցա ուղղելով խօս-

քըս, և զանազան՝ մանաւանդ թէ հակառակախօս
պատասխաններ կը լսեմ:

Հրեայք և իրենց մերձաւոր Մահմետականք ինձ կը
պատասխանեն. Յիսուս ուրիշ մարգարէից պէս
մարգարէ մի է, ինչպէս Աբրահամ, Դաւիթ, Եղիա
կամ Յովհ. Մկրտիչ: Բանաւորական իմաստասիրաց
մէջ ամենէն աւելի բարեմարդիկներն ասեն. Յիսուս
իմաստասէր և իմաստուն մի է՝ զոր Ժողովրդեան սը-
նոտիապաշտութիւնն Աստուծոյ տեղ դրաւ: Սկեպ-
տականք կամ երկմտականք համարին թէ ճարտար
բանսարկի մի է՝ որ Ժողովուրդն և իւր աշակերտներն
շլացուց: Վերջապէս նոքա որ սպիտակ կամ սեաւ
ասացեալ մոգութեան կամ գաղտնորոգայթ գիտու-
թեանց կը հաւատան՝ համարին զինքն դիւթ կամ գո-
նէ մագնիսացնող և հոգեկոչ: Իսկ երբ Եկեղեցւոյ
կը հարցանեմ որ երկու հազար տարիներէ 'ի վեր
երկու հարիւր միլիոն կաթողիկեայ Ժողովրդով իրեն
երկիր պագանէ՝ իւր դլխոյն Պետրոսի հետ միաձայն
կը գոչէ. Ինքն է Քրիստոս որդի Աստուծոյ կենդա-
նւոյ:

Վերջապէս այսոց մէջ որո՛ւ հաւատալու է. ես ալ
ինչ պիտի ասեմ, որովհետև ինձ ամօթ մի կու գայ՝
որ մարդկութեան այսչափ կարևոր խնդրոյն մէջ՝ ո-
րոշ կարծիք մի չունիմ: Ոգեւորական իմաստասիրու-
թեան պատւոյն ալ նախանձախնդիր լինելուս՝ կը
ցաւիմ որ ինքզինքն կրօնագէտ ալ սեպելով՝ թէ և
ոչ բոլորովին կաթողիկեայ՝ այսպիսի նիւթի մի մէջ
չէզոք կեցել կը լռէ կամ առ պատկառանաց կամ առ
խոհեմութեան. առ պատկառանաց՝ թէ որ լռելուն
պատճառն այն է որ ոչ գիտէ թէ ինչ ասէ, առ խո-
հեմութեան՝ եթէ ոչ համարձակի յայտնապէս ու-
րանալու զոր ներսէն ոչ հաւատար, վախնալով որ
յանցաւոր անկանի տիրող կրօնից առջև կամ գոնէ
քաղաքական իշխանութեան դիմաց՝ որուն թերևս

աս վերջինս ալ ոչ հաւատայ՝ բայց ժողովրդեան կրթութեանն ու կառավարութեան համար հարկաւոր կը սեպէ։

Սակայն ինձ դժուար կերևի զՅիսուս ուրիշ մարդարէից պէս մարդարէ մի համարիլ։ Հին կտակարանի մարդարէից մէջ չկայ ոք որ նորա բարձրութեանն հաւասարի. ինքն ոչ միայն դուշակութիւններ և հրաշքներ արար՝ այլ և մարդկան ազգի քաղաքականութիւնն բոլորովին յեղափոխեց՝ նորա այնպիսի անծանօթ ճշմարտութիւններ և առաքինութիւններ ուսուցանելով՝ որ մտքերնէն անդամ ոչ անցանէր։ Եւ որ աւելի մեծն է և իրեն միայն սեպհական՝ երկրիս վրայ Եկեղեցի անուամբ նոր ազգ մի հիմնեց աննման այլոց, և հաստատելով յաշխարհի հոգևոր թագաւորութիւն մի՝ որ միայն հոգւոց վրայ իրաւասութիւն ունի, և զոր խօսքի ուժով միայն կը կառավարէ։ Ութեւտասն դարերէ 'ի վեր և աւելի՝ աշխարհիս մէջ կայ բարոյական ընկերութիւն և հանրական միաբանութիւն մի՝ որ ամեն երկիր կը տարածուի, և ամեն ժամանակ և ամեն տեսակ քաղաքական կառավարութեանց ներքև կապրի, և որուն մէջ կը մտցուի մկրտութեամբ, կը կապուի հաւատքով և կը հրահանգի խօսքով՝ որ աստուածային կը սեպուի և ամենևին ոչ փոփոխի. և այն հաւատացելոց խղճին, այսինքն իրենց հոգւոյն խորոց կառավարն՝ Հռովմայ մէջ նստող ծերունի մի է՝ փոխանորդ Յիսուսի Քրիստոսի և յաջորդ Պետրոսի, որ յաւիտենական քաղաքին բարձրերէն՝ կայսերաց պէս բոլոր աշխարհի կը տիրէ, ոչ եթէ բանակներով և բռնութեամբ՝ այլ ոգւոյ իշխանութեամբ և խօսքի ուժովն։ Պապերու իշխանութեանն ինչ անուն կուզեն թող տան, և իւր աշխարհի թագաւորութիւնն ժամանակաւոր տկարութեանն համար թող արհամարհեն, սակայն այսու ամենայնիւ այս իշխանութիւնս աշխար-

հիս ամենէն մեծ միապետութիւնն է, թէ իւր ընդարձակութեամբն որ մինչև 'ի ծագս աշխարհի հասանէ, և թէ իւր տևողութեամբն ընդ այնչափ դարս, և մաւանդ իւր ազդեցութեամբն՝ որ միայն մարդուս մըտացն և սրտին խօսելով՝ ուրիշ գործիք չունի ձեռքն՝ բայց միայն ճշմարտութեան համողումն և զտիրապետութիւն սիրոյ։ Այս բանս աշխարհիս մէջ մի միայն է, և այսպիսի մեծապանծ գործ մեկնելու համար՝ աւելի մեծ պատճառ պէտք է։

Միայն Մահմետն եղած է որ այսոր նման կամ մօտաւոր բան մի գործած է, բայց բոլորովին տարբեր միջոցներով. ինքն ալ կարացել է ընդարձակ տէրութիւն մի հիմնել՝ յոգւոյ կրօնից տիրապետեալ՝ յորում Ղուրանն հիմն և կանոն եղած է ամենայն օրէնսդրութեանց. բայց որչափ տարբերութիւն հիմնարկութեանն և արդեանցն մէջ։ . . . . .

Այս բանս մէկդի ալ ձգելով՝ մեք իմաստասէրքս որ գերբնականի չեմք հաւատար և անկարելի ալ համարիմք զայն՝ առանց ասելու թէ ինչու, մարդարէ ասացածդ ալ պիտի չընդունիմք՝ ինչպէս որ չեմք ընդունիր զԱստուած մարդացեալ. վասն զի մարդարէն ալ յանուն Աստուածութեան պիտի խօսի՝ ոչ ճիշդ իմաստնոյն պէս որ յանուն ճշմարտութեան կը խօսի, ինչպէս օրէնսդէան ալ յանուն արդարութեան, այլ դրական իմն առաքելութեամբ՝ որպէս դեսպան յանուն թագաւորի՝ որ նորա կամքն յայտնելու պաշտօնն ունի։ Ապա իւր խօսքն՝ աստուածային խօսք պիտի լինի, և այնպէս ալ ընդունուի, ինչպէս որ Աստուածաշնչի մէջ կը տեսնեմք հրէական ժողովրդեան մէջ, որ ըստ իս քան զամեն ազգս աւելորդապաշտ էր, թէ և հանճար կամ բաղդ ունեցել էր, միաստուածեան կրօնք մի ունելու՝ որ հին ատեն միակ էր։ Արդ իսրայէլացիք մարդարէներն յերկնից առաքեալ կը համարէին, մերթ նոցա խօսիցն պատ-

դամի պէս ունկնդիր լինելով և կառավարութիւննին նոցա յանձնելով, և մերթ երբ նոցա ձայնն զիրենք կը նեղէր՝ հալածելով և սպաննելով:

Ապա ուրեմն մեք զՅիսուս Քրիստոս և ոչ իբրև մարգարէ կարեմք ընդունիլ, որովհետև մարգարէութիւն ասացեալն ալ քահանայից և իշխանաց դիւտ համարիմք Ժողովուրդն զսպելու և ընկճելու համար հնարուած: Իսկ կանխասացութեանց գալով՝ մտաց կանխատեսութեանց միայն կը հաւտամք՝ որ փորձառութեան և դիտողութեան վրայ հաստատեալ են, նախատեսութիւնք փոքր 'ի շատէ հաստատեալք ըստ պարագայից, որք որչափ ալ մտացիք և խոհական ալ լինին՝ մեզ համար առաւել կամ նուազ հաւանականութենէ աւելի բան մի ոչ արժեն:

Ապահովագոյն է պատգամս քան զԿալքասին:

Արդեօք Յիսուս Քրիստոս իմաստասէ՞ր մի է:

4 Դեկտեմբեր:

Դարձեալ միշտ այս հետազօտութեանս ետևէ եմ՝ թէ արդեօք ո՛վ և ի՛նչ է այն Քրիստոսն՝ որ այսչափ մեծամեծ գործեր գործեց յաշխարհի, որովհետև ստիպուած եմք խոստովանելու որ իւր Աւետարանն աշխարհս կերպարանափոխ արար, և իւր հոգին մինչև հիմա զայն կը կառավարէ՝ սոյն իսկ իննեւտասներորդ դարուս լուսաւորութեան մէջ, թէ և արդի իմաստասիրութիւնն կը յամառի զայն բանի տեղ չդնելու, որպէս թէ ամենևին եղած չլինէր կամ առասպելեալ անձ մի լինէր, միաքն դնելով թէ առանց նորա ամեն մարդկային գործերն կարէ մեկնաբանել և ուղղել, թէ և բան մի ոչ գիտէ, ուստի զինքն ամեն կողմանէ նեղող քրիստոնէութիւնն վրայէն թօ-

թուել չկարելով՝ որ թէ'ի տեսականին և թէ'ի գործնականին զինքն կը ճնշէ, միաքն դրած է որ այնոր վրայ բնաւ չխօսի:

Սակայն կան անկեղծ իմաստասէրք ալ՝ որ պատրաստ լինելով գովելի բանն գովել ուր որ ալ գտնեն, քրիստոնէական վարդապետութեանց գերազանցութիւնն կը ճանաչեն, աւետարանի բարոյականին անարատութիւնն կը գովեն, և քրիստոնէութեան փրկարար ազդեցութեան վրայ կը զարմանան. կը խոստովանին որ նորա հիմնադիրն պէտք էր որ իմաստուն մի լինէր՝ Յունաստանի իմաստնոց պէս, թերևս նոցանէ աւելի բարձր, և Պիւթագորայ, Սոկրատայ և Պլատոնի պէս իմաստասէր մի՝ որք ժամանակակցաց վրայ մեծ ազդեցութիւն ստացան, և որոց գործերն կամ աւանդութիւնն դարերու մէջէն անցնելով և ամեն ազգաց մէջ սփռելով՝ հասին մինչև առ մեզ, որ իրենց վարդապետութեանն ալ տիեզերականութեան կնիք մի կը տպաւորէ: Միայն այս կայ որ Քրիստոս բազդ ունեցաւ իւր վարդապետութեան համար մեռնելու՝ որով և մարդկանց առջև ալ մեծ իշխանութիւն մի ստացաւ: Իր առաքեալներն ալ նոյն բանն առնելով՝ աստի առաջ եկաւ աշակերտաց յաջորդութիւն մի՝ որ այսպիսի օրինակներով վառուած ու գլուխնին տաքցած՝ իրենց արեան հեղմամբն Եկեղեցւոյ հիմունքն կանգաղեցին:

Ես ալ երկայն ատեն գրեթէ սոյն բանս ասէի և խորհէի ինքնիրենս, դրսէն մտածածս յայտնել չուզելով, որպէս զի եկեղեցականաց հետ և յետոյ տէրութեան հետ ալ չաւրուիմ: Իսկ այսօր ստիպեալ եմ խոստովանելու՝ որ այս մեկնութիւնս խարխուլ կերևի ինձ, եթէ չասեմ նաև բոլորովին անխելք, իբրև թէ մեզ նեղութիւն տուող ծակ մի՝ խիցով մի ուղէինք գոցել. որովհետև քրիստոնէութիւնն արդի աշխարհիս մէջ այնպիսի դիրք մի բռ-

նած է՝ որ եթէ ուղեմք ընա այն տեղէն վերցնել կամ այնոր ազդեցութիւնն ջնջել, ճշմարտապէս ասեմ որ տեղն դնելու բան մի չէինք գտներ, և ոչ գիտեմ այնոր բացուած վիհն ինչով պիտի լեցնէինք:

Նախ և առաջ այս Քրիստոսի ընծայուած իմաստասիրութիւնն՝ պարզ ենթադրութիւն մի է, և պատմական արձանագրութեամբ չէ հնար զայն հաստատել. մանաւանդ թէ քրիստոնէական վարդապետութեան կամ Աւետարանաց կերպն բոլորովին այս կարծեաց հակառակ է. վասն զի Նոր կտակարանաց գրոց մէջ գրութեան հետք մի կամ իմաստասիրական դպրոցի ուսուցման եղանակ մի ոչ գտանես. այնչափ որ քրիստոնէութեան ընդդիմախօսներէն շատն մեծ թերութիւն կը սեպեն իրեն այս բանս՝ ասելով թէ Աւետարանի գրոց մէջ ոչ կարգ կայ ոչ կապակցութիւն և ոչ եղանակ ուսուցանելոյ, մանաւանդ թէ շատ տեղ ընդդիմախօսութիւններ ալ կան այնոր մէջ:

Աւետարաններու մէջ տող մի չկայ՝ որով ցուցուի թէ Յիսուս Քրիստոս իւր ժամանակի դպրոցներն յաճախած լինի, կամ այս աւուր լեզուաւ խօսելով իր ճարտասանութեան և իմաստասիրութեան դասերն աւարտելով՝ համալսարանէ մի իւր ուսումնական աստիճաններն ու վաւերագրերն ընդունած լիցի: Այսու հանդերձ դեռ տասուերկու տարուան եղած ատենն՝ տաճարին մէջ Իսրայէլի վարդապետներն կը զարմացնէր՝ Գրոց վրայ տուած խորին մեկնութիւններովն: Ետքն ալ երբ իր լի խոհեմութեամբ հանճարով և իմաստութեամբ պատասխաններովն՝ փարիսեցիներն կը պապանձեցնէր, և իմաստնոց և ագիտաց երկնից և երկրի ճշմարտութիւններն կուսուցանէր, ժողովուրդն զարմանքով կը գոչէր. «Ի՞նչպէս սա՝ հիւսան որդին՝ այս ամեն բաներս գիտէ, որ ամենևին սովրած չէ»: Գոնէ իրեն համար ալ ասա-

ցեալ լինէր ինչ որ Մովսիսի համար գրուած է՝ թէ Եգիպտացւոց ամենայն գիտութիւններն և արուեստներն սովրած էր. բայց չէ՝ իրաւ Քրիստոս ալ Եգիպտոս տարուեցաւ՝ բայց իւր մատաղ մանկութեան ժամանակ, և այն ատենէն մինչև իւր առաքելութեան սկիզբն՝ ձեռագործ արուեստի կ՚աշխատէր Յովսէփայ հիւսան գործատունն:

Ուստի ուրեմն ստացաւ այս գերազանց իմաստութիւնն, այս վերամբարձ իմաստասիրութիւնն որ իւր ժամանակի գիտութիւններն կը յաղթահարէ, սակաւ ժամանակի մէջ յաղգս ամենայն կը տարածուի, և քաղաքականութեան ամեն մասերն կը նորոգէ: — Նոցա որ գերբնականի կը հաւտան՝ պատասխանն դիւրին է. Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ, Բանն մարմնացեալ և Աստուած մարդացեալ. և այսոր համար 'ի մանկութենէ իւրմէ հաղորդ է տիեզերական գիտութեան Հօր և Հոգւոյն սրբոյ: Ինքն իսկ է յայտնութիւնն կենդանի կամ ինքն իսկ ճշմարտութիւն որ 'ի զանազան ժամանակս զանազան եղանակօք խօսելով ընդ հարս մեր մարգարէիւք՝ 'ի վախճան ժամանակաց եկն անձամբ առ 'ի ուսուցանել զմարդիկ, և առ 'ի պատրաստել զնոսա յաղատութիւն և 'ի փրկութիւն. Աստուած խօսեցաւ յանձին Քրիստոսի:

Իսկ մեք որ ոչ գերբնական ինչ ընդունիմք և ոչ զյայտնութիւն, այս պատասխանս զօրութիւն մի չունի. ուստի կը ստիպուիմք միշտ նորէն նորէն մեք մեզ հարցնելու թէ ի՞նչպէս կարելի է որ աշխարհիս հեռաւոր ծայրն, հռովմայեցւոց իշխանութեան ներքև փոքրիկ ժողովրդեան մի մէջ, հեռի 'ի կեդրոնէ քաղաքականութեան այնց ժամանակաց, և զիրկ 'ի հաղորդակցութենէ գիտութեանց և գրականութեան յունաց և հոռոմոց, գտուի մարդ մի՝ որ ծանուցեալ վարժապետ մի չունելով և առանց վար-

ժէրոյ դպրոցաց, և առանց կարևոր հրահանգաց, և իւր առաքելութենէն առաջ տասլար, սղոց և ուռն միայն բանեցուցած լինելով, այսպիսի գերազանց վարդապետութիւն մի ուսուցանէ, և խմաստասէր բաց միոյն անգամ չեղած բաղդն այս իւր վարդապետութենն ունենայ՝ իրեն քաշելու ձգելու աշխարհիս ամեն կողմն գանուող հանճարեղ մարդերն և բարձրաթռիչ հոգիներն, և նոքօք կազմելու հոգևորական ընկերութիւն մի՝ որ կը յարատևէ իւր միութեամբն իւր կառավարութեամբն իւր հաւատքովն իւր բարոյականովն և իւր բարեկարգութեամբն երկու հազար տարիներէ 'ի վեր:

Այսպիսի բան մի ոչ երբէք տեսնուած է 'ի ներքոյ արեգական: Այն տեն Պիւթագորայ, Պլատոնի և Արիստոտելի հետևողներ եղած են, բայց պիւթագորեան պլատոնական կամ Ճեմական ազգ մի՝ տեղ մի տեսնուած չէ, իրենց վարժապետին խօսքեր բացարձակ հաւատք ընծայելով, և բոլոր կանիւք զայն կատարելու աշխատելով: Այլ յիմաստասիրաց դպրոց մի ունեցան՝ ոչ եթէ պետութիւն, աշակերտք՝ բայց ոչ և ժողովուրդ: Իսկ խմաստասէրն Յիսուս՝ եթէ խմաստասէր կարելի ասել, տիեզերական ընկերութիւն մի հաստատեց՝ Եկեղեցի անուամբ՝ յորում բիւրաւոր քրիստոնեայք իրենց հաւատոց համար կեանքերնին տուին և դեռ ևս կու տան: Իւր տեղն կամ աթոռն անանձնական յաջորդողներն ալ՝ այն տեղէն 'ի վեր Ճիշդ նոյն բանն ուսուցել են, որ այս ալ տեղ մի եղած չէ, և իննսատան դարերու միջոց՝ միլիարաւոր աշակերտներ յամենայն տեղ հաստակէ և պայմանէ՝ վարժապետին կամ նորա անուամբն խօսողներուն իշխանութենէն պատուելով ջանացել են ապրիլ և մեռնիլ ըստ օրինակի և ըստ պատուիրանաց նորա:

Եթէ Պրիստոս այս խմաստասէրն է՝ հարկ է խոստովանիլ որ միակ է իր ցեղին մէջ:

Ձմիաբանութիւն:

6 Դեկտեմբեր:

Անհաւատներն՝ ինչպէս նաև ես, թէպէտ և Քրիստոսի աստուածութենէն ոչ ընդունին՝ սակայն զինքն մեծ մարդ և խմաստուն կը համարին. կը խոստովանիմք որ ինքն մեծամեծ ծառայութիւններ արար մարդկութեան, և այսոր համար զինքն կը յարգենք և պատկառանօք կը խօսիմք իր վրայ: Մնայն անարժան բան կը սեպեմք՝ որ ինքզինքն աստուածացնել ուզել է, և այն մարդկան բաղմութիւնն որ իր առջին երկրպագութիւն առնէ՝ կռապաշտ կը թուին մեզ: Եկեղեցին ալ իւր բարձրագիտակ շինուածքոնէ՝ մարդկային հաստատութիւն կ'երևի մեզ՝ շատ լաւ կարգադրուած՝ ժողովուրդներն իրեն քաշելու և շնոսա կառավարելու համար, որ միշտ իշխանութեան և արտաքին ցոյցերու կարօտ են. բայց հանճարեղ մարդիկ որ խորհել գիտեն՝ խմաստասէրներն ասեմ՝ այս մեքենաւորութեամբ և դիւթական հայելոյ տեսարաններովն չեն խաբուիր՝ որուն թագուն զսպանակներն կը տեսնեն. բայց աստի, աւելի ոգւով ապրելով քան ձևով՝ բացարձակ ճշմարտութեան վերանալու համար այս մեքենայից կարօտութիւն չունին՝ որք ճշմարտութենն՝ թէ ոչ բոլորովին սուտ, գոնէ անկատար կերպով կը ներկայացնեն:

Ես սակայն՝ որչափ ալ ոչ ընդունիմք Եկեղեցւոյ իշխանութիւնն՝ մանաւանդ գործնականին մէջ, այսու ամենայնիւ բացարձակապէս ուրանալէն ալ կը զգուշանամք կամ առ խոհեմութեան կամ առ ակարութեան մտաց. թէպէտ և ներսէն թշնամի եմք իրեն, բայց դրսուանց իրեն հետ աւրուիլ ոչ կամիմք: Ուս-

տի նորա նկատմամբ բռնած դիրքերնիս կեղակարծ բան մի է, զինեալ չէզոքութեան նման, ոչ բարեկամ եմք և ոչ թշնամի: Հաշտութիւն չէ մերն, որովհետև բանի մի մէջ ոչ միաբանիմք, այլ պարզ զինագադար մի է, որ երկու կողմն ալ զիրար կը դիտէ, և կասկածանաց մէջ կապրի: Աստի յառաջ կու գայ մեր կողմանէ շատ անհետևութիւններ կամ չմիաբանութիւններ՝ մեր գաղափարներն ու գործերն իրարու հակառակ լինելուն պատճառաւ. հայեցականին մէջ անհաւատ եմք, որովհետև զամենայն ինչ գերբնական մերժեմք, իսկ գործնականին՝ այսինքն կենաց ընթացքին մէջ հաւատացելոց պէս կը վարուիմք, գոնէ նկատմամբ մեր կանանց և որդւոց: Արդ եթէ համոզուած լինէաք թէ կրօնից մէջ մոլորութենէ ստութենէ կեղծաւորութենէ ու պատրանքէ զատ ուրիշ բան չկայ՝ միթէ յիմարութիւն մանաւանդ թէ ոճիր չէ՞ր սեպուեր մեզ՝ մեր ամենէն աւելի սիրելիներն նորա ձեռքն յանձնել. և մի թէ ընդհակառակն ամեն ջանք առնելու չէ՞ինք զիրենք անտի հեռացնելու և զգուշացնելու համար: Այս չառնելնուս պատճառն այն է՝ որ մեք մեր կարծեաց վրայ վստահութիւն չունիմք. այս բանս զիս կամաչեցուցանէ:

Քրիստոսի գործոց զօրութիւնն:

7 Դեկտեմբեր:

Իրաւ է, մեք մեր կարծեաց վրայ վստահութիւն չունիմք, և մասամբ միայն իմաստասէր եմք. թէպէտ և կան ոմանք որ մինչև ծայրն կերթան՝ իրենց դրած սկզբանց հետևանքէն ետ չդառնալով, և սակայն որչափ որ իրենց ընթացքն բանախօսական ալ սեպեմ՝ սակայն իրենց հետևիլ ոչ կամիմ:

Սոցա ասացածն պարզապէս այս է. Որովհետև գերբնական բան մի չկայ՝ և դուք անհնարին ևս կը սեպէք զայն, ապա յայտնութեան վրայ հիմնեալ ամեն դրական կրօնք, և հետևապէս քրիստոնէութիւնն իսկ՝ մարդկային հնարք են քահանայից կողմանէ ստութեան և կեղծաւորութեան գործ՝ հաւատացելոց կողմանէ ալ երևակայութեան ու պատրանաց: Ուրեմն Յիսուս ալ ուրիշներու պէս բանսարկի մի է՝ որ ուզեց Հրէից թագաւոր լինել՝ գոնէ բարոյապէս՝ իւր վարդապետութեան գերազանցութեամբն, որոյ մէջ շատ լաւ բաներ ալ կան որչափ ալ չափազանցութիւն գտնուի, ինչպէս Արևելքէն եկած ամեն բաներու մէջ: Ինքն ճոխաբանութիւն շնորհք ճարտարութիւն և հմտութիւն ունելով և ժողովրդեան սէրն իրեն քաշել ուզելով՝ այս ամեն հնարքներս բանեցուց՝ այն կրօնից դէմ՝ զոր կուզէր տապալել: Բայց ռամկին վրայ չափազանց վստահացաւ՝ որ ամենէն վտանգաւոր ժամանակն՝ իշխանութենէ վախնալով զինքն երեսի վրայ թողուց, ինչպէս որ միշտ կը պատահի, մինչև ստիպուեցաւ ալ խնդրելու որ 'ի խաչ հանուի, զայն որ սակաւ մի յառաջ յաղթանակաւ Երուսաղէմ տարած էր. Տարպէական

ժայռն՝ Կապիտոլիոնի միշտ մօտ է: Սակայն պէտք է խոստովանիմք՝ որ Յիսուս քաջութեամբ մեռաւ և իր խօսքն ետ չառաւ: Համառօտ ասելով՝ ինքն ճարտար դաւաճան մի է կրօնից, որ հրէից ժողովարանն ուզեց կործանել այնոր տեղն անցնելու համար, և տանջանաց մէջ ալ մեռաւ:

Յիրաւի ասեմ որ այս խօսքերս զիս կը կատղեցընեն. Թէ Յիսուս Քրիստոս Աստուած չէ՝ կը հաւատամ, կամ գոնէ կարծեմ Թէ կը հաւատամ, որովհետև ստոյգ չեմ գիտեր. բայց ոչ երբէք կընդունիմ Թէ ինքն փառասէր ու նենգաւոր մարդ մի էր, և կուզէր ժողովուրդն խաբել վրանին տիրելու համար, և կրօնից իշխանութեամբ նոցա գլուխ և Թագաւոր լինել. և Աւետարանի պատմութիւնն ալ այս զրպարտութիւններս սուտ կը հանէ, և անվայել և անարժան բան է մարդու մի վրայ յանցանք ձգել՝ ենթադրելով Թէ ծածուկ դիտաւորութիւններ ունի՝ իւր գործերուն բոլորովին հակառակ: Ես այնպէս կը խորհիմ Թէ ինքն մարդ խաբել ուզած չէ, այլ իր ճշմարիտ հաւատացածն՝ ինչպէս որ կը տեսնէր՝ պարզապէս ուզել է քարոզել, և ժողովրդեան վրայ ալ այսոր համար մեծ ազդեցութիւն ունեցել է՝ որովհետև նախ ինքն համողուած կը խօսէր որով և պերճութեամբ, և երկրորդ որ իր ուսուցածներն ալ իր բարերարութիւններովն ու առաքինութիւններովն կը հաստատէր: Կը հաւատամ որ ինքն իւր վարդապետութեան անկեղծ վկայութիւն մի տալով մեռաւ, Սոկրատէն աւելի մեծանձնութեամբ՝ որ իւր վարդապետութեանց համար մոլեխինդ խմելն յանձն առել էր: Այսպիսի մեծապանծ գործի մի մէջ՝ ունայնամտութեան անարդ դիտմունք իրեն տալն՝ ցածութիւն ու փոքրոգութիւն է: Ճշմարիտն ասելով՝ Ռուսոյի պէս՝ ինձ ալ աւելի հրաշալի կերևի Քրիստոս՝ քան Սոփոնիսբեայ որդին (Սոկրատ). որով-

հետև նա խաչի վրայ հոգին աւանդեց լքեալ Թողեալ յամենեցունց, և մեծաց և փոքունց ծաղրուծանակ եղած և արհամարհուած, մինչդեռ Սոկրատայ մահն Թատերական փայլ մի ունի, որպէս նաև իւր աշակերտաց հետ խօսակցութիւնն, յորում փոքր 'ի շատէ սնապարծութիւն մի ալ կ'երևի՝ գոնէ Պլատոնի պատմութեանն նայելով:

Սակայն բան մի կայ որ Քրիստոսի վրայ ունեցած զարմանքս կը խռովէ, և կը վախեմ որ մի գուցէ նորա անկեղծութեան վրայ ունեցած համարումս նուազեցնէ: Մատենագիր ոմն[1] որ բոլորովին սուտ և աննման նկարագրութիւն մի արարեալ է Յիսուսի Քրիստոսի՝ զինքն հովիւ մանաւանդ Թէ շողոմարար մի ծպտելով ու ձևացուցանելով որ շողոքորդ խօսքերովն ամենուն սիրտն կը վաստըկէր, զնա անմեղադիր առնելու համար՝ կը հաստատէ Թէ ինքն իւր անձին ոչ երբէք Որդի Աստուծոյ անունն տուած է. բայց երբ իւր աշակերտներն իրենց կարգէ դուրս մոլեռանդութեամբն իրեն տուել են այս անունս՝ ինքն ալ դէմ չէ կեցած իրենց նախանձաւորութիւնն քաջալերելու և նոցա վստահութիւնն աւելցնելու համար: Վերոյիշեալ մատենագրին այս խօսքս բոլորովին սուտ է. և յիրաւի զարմանալի բան է որ Յիսուսի Քրիստոսի վարք գրել ուզող մարդն՝ Աւետարանն ուշադրութեամբ չէ կարդացել. որովհետև Աւետարանին մէջ շատ տեղ կը տեսնեմք որ Յիսուս Թէ իւր աշակերտաց մէջ և Թէ քահանայից և օրինաց վարդապետներուն և փարիսեցւոց առջև յայտնի կերպով կը զրուցէ որ ինքն Որդի է Աստուծոյ, մի ընդ Հօր, և ամենայն աստուածային կատարելութիւններն ունող:

[1] Կարծեմ Ռընանի համար է այս խօսքս որ այլանդակ վարք մի գրած է Յիսուսի:

(Ծանօթ. Թարգմանչին):

ջափ պրդիւնաւոր մահ բնաւ եղած չէ, և իբր ա-
րիւնն հաւատացեալոց սերմն եղած է: Իւր աշակերտ-
ներն չուտով բազմանալով՝ հոգևորական ընկերու-
թիւն մի կազմեցին՝ որով ձևացաւ քրիստոնէական
եկեղեցին, որ այսօր աշխարհիս ամեն դին տա-
րածուած է. որ ինձ մեծ յաջողութիւն կ'երևի,
տասնուվեց դարերու յաջողութիւն մի՝ աշխարհիս
ամենէն աւելի բարգաւաճեալ ազգաց մէջ՝ որոց
կենցաղն օրէնսդրութիւնն և քաղաքականութիւնն՝
քրիստոնէութեան ձեռօք բոլորովին այլափոխեցան:
Վերջապէս խմաստասէր մի եղած չէ՛ի ներքոյ արե-
գական՝ որ այսչափ ինչ գործելու փառք ու բաղդն
ստացած լինի, և ոչ իսկ այնոր կէսն:

Քրիստոսի զօրութեան բնութիւնն ի՞նչ է: —

8 Դեկտեմբեր:

Մարաւրոսաց վկայաբանութեանց մէջ կը կար-
գամք որ հալածողներն զերեզք ծաղրելով՝ կը խըն-
դրէին որ հրաշք մի առնեն՝ տանջանքէն ազատելու
և իրենց հաւատոց ճշմարտութիւնն ցուցանելու հա-
մար, և երբ ուզածնին կը գործէին՝ որ քրիստոնէից
սացացն նայելով՝ շատ անգամ կը պատահէր, զե-
րեզք կ'ամբաստանէին՝ որպէս թէ դիւթութեամբ
գործել են. ինչպէս որ փարիսեցիք ալ Քրիստոսի վե-
րայ ամբաստանութիւն առնէին՝ ասելով թէ Բէել-
զեբուղ ձեռօքն սատանայներն կը հանէր: Մեր
օրերս ալ նոյն բանն կը տեսնեմք. վասն զի կան մար-
դիկ որ կարծեն թէ Քրիստոս վհուկ մի էր՝ եթէ ոչ
որպէս Մովսէս որ եգիպտացւոց խմաստութեամբն
մեծցած էր, սակայն գանէ հրէից մէջ գործածուած
ամեն դիւթական արուեստներն գիտէր՝ ՚ի մանկու-

Արդ այն բանն որ այս մատենագիրս յանձահս
կ'ուրանայ՝ զՅիսուս իր խելքովն անմեղագիր առնե-
լու և արդարացնելու համար, սոյն բանն ինձ պատ-
ճառ կուտայ՝ Քրիստոսի գէմ բողոքելու և զինքն
ամբաստանելու. վասն զի այս իր պահանջմունքն և
աստուածային բնութեան թևակոխութիւնն՝ որ
ըստ Աւետարանաց անհերքելի է, և աստուածու-
թիւն յափշտակել ուզելն՝ կամ ամբարտաւանու-
թեան մոլեգնութիւն մի է՝ հռովմէական կայսերաց
գործածն պէս՝ որ իրենք զիրենք կ'աստուածացը-
նէին, կամ անկեղծութեան պակասութիւն և աստու-
թիւն իր գան յառաջ վարելու համար: Ինքն մարդ
լինելով՝ Աստուծոյ տեղ դնել տալ զինքն. այս ան-
դրադարձութեամբ իմ նորա առաքինութեան վերայ
ունեցած համարմունքս բոլորովին կը վերնայ. միայն
թէ իրաւ չըլլայ ասացածն, և յիրաւի Աստուած
չըլլայ. արդէն այս բանս հաստատելու կերպէն և
խօսքերէն ալ այնպէս կ'երևի ինձ՝ որ ինքն ալ այսպէս
կը մտածէր, այսինքն՝ ինքզինք Աստուած կը համարէր.
եթէ այսպէս է, աստուածութիւնն կ'արդարանայ, այս ինքն
սուտ զրուցած ոչ լինի, բայց յիմարութեան կելտով
կ'արդարանայ. այսինքն եթէ սուտղրուց ալ չէ՝ յի-
մար է: — Հապա թէ որ ասացածն ճշմարիտ է. այս
ինքն ճշմարտապէս Աստուած է. ո՛հ, ոչ ոչ, այս
բանս անկարելի է. բնաւ չեմք ընդունիր որ մարդ
Աստուած լինի, ապա թէ ոչ հեթանոսաց պէս կա-
պաշտ լինելու կինք, կամ ռամկի պէս յոյժ ակարա-
միտ որ առանց խորհելու կը հաւատայ:

Տանջանաց մէջ մեռնիլն ալ իրաւ է, որովհետև ա-
սացածներնուն նայելով շատ չարչարուած պիտի լի-
նի խաչ հընելէն առաջ և նոյն իսկ խաչին վերայ՝ իւր
վարդապետութեանն վկայ լինելով. քաշած տանջան-
քը մտածելն միայն զմարդ կը փշաքաղէ. բայց զուր
տեղն տանջուեցաւ ասելն՝ սուտ է. վասն զի այսօր

թենէ այնոց գաղտնեացն տեղեակ լինելով։ Այսով է որ ասեն այնչափ տարօրինակ և զարմանալի գործեր կը գործէր՝ հրաշից տեղ գնելով զնոսա, որպէս նաև իւր աշակերտներն առնէին։

Այս ալ կարծիք մի է. միայն հարկ է ապացուցով հաստատել զայն. վասն զի ես Աւետարանին մէջ Քրիստոսի վրայօք պատմուած գործերուն նըկատմամբ մոգութեան դիւթութեան վարպետութեան նման բան մի չեմ տեսներ։ Յիրաւի կան բաներ որ հրաշքի պէս կը պատմուին, յորոց ոմանք բնական կերպով ալ կարեն բացատրուիլ, ինչպէս որ բողոքական մեկնիչք գրոց փորձած են բացատրելու, և երբեմն ալ յաջողել են, բայց շատ անգամ բոլորովին ծաղրական մեկնութիւններ տալով։ Աւետարանի մէջ կան ուրիշ գործեր ալ՝ որ ինձ բոլորովին անբացատրելի կ'երևին. և ասեմ թէ աւելի կը հաւատամ որ տեսնողներուն կողմանէ պատրանք և շլացութիւն էր՝ քան թէ գործողին կողմանէ նենգութիւն և շաղակրատութիւն՝ անտարակոյս ժողովրդեան երևակայութիւնն՝ փոքր 'ի շատէ զարմանալի գործերն փօթորցուցել է, և բերնէ բերան անցնելով և երթալով գեղեցկանալով՝ գերմարդկային գործեր դարձել են։

Ուրիշ կողմանէ մեր խնդրոյն ի՞նչ դիւրութիւն կուտայ զՔրիստոս մոգ համարելն. մի թէ այս օրս մոգութեան հաւատացող կա՞յ. իմաստասէրք որ Որդի Աստուծոյ ոչ ընդունին զինքն՝ մոգի անունն ալ չեն կարող տալ իրեն, որովհետև ոչ մի աստիճան գերբնականի կամ արտաբանականի կը հաւատան. հրեայք և հեթանոսք որ այսպէս ասէին՝ մոգական արուեստի կը հաւատային, և Քրիստոսի և աշակերտաց վերայ այս անունս գնելով՝ գիտէին ինչ ասել կ'ուզէին. բայց մեզ համար անիմաստ բառեր են. և հետևապէս այս կարծիքս ալ տգիտաց և սնոտիապաշտից մէջ միայն զօրութիւն ունին։

Մոգութեան հաւատացողներէն ետև՝ որ մեր օրերն յոյժ սակաւ են, հոգեկոչ ասացեալներն կուգան, և այսպէս կոչուելնուն պատճառն այն չէ՝ որ ուրիշներէ աւելի խելք ունին, հապա որովհետև կ'ընդունին թէ ուրիշ աշխարհքի մի հոգիներն՝ միշտ այս մեր աշխարհքիս մէջ ալ կը թափառին, և կը համարին թէ այս ոգւոց մերձակայութիւնն կարեն զգալի առնել տեսակ տեսակ կերպերով՝ յորոց յառաջ կուգան տարօրինակ յայտնութիւններ՝ որք շատ նմանութիւն ունին Քրիստոսի և առաքելոց գործած հրաշքներուն։ Հոգեկոչներու այս վարկածն ինձ անհիմն կ'երևի. ինչ որ իրենք ասեն թէ կարեն առնել ոգւոց միջնորդութեամբն՝ ես զայնս ոչ կը մերժեմ և ոչ կը հաստատեմ, թէպէտ և ասացածներուն շատն ալ մութ շփոթ և անարդիւն լինելն ալ գիտեմ։ Բայց զայս ասեմ որ Աւետարանին մէջ երբէք տեսած չեմ որ Քրիստոս ալ նման միջոցներ բանեցուցած լինի՝ ինչ որ իրենք կը գործածեն՝ շրջող սեղաններ, պտըտող կողովներ և այլն, որ մեքենական այբուբենի ձեռքով ոգիներուն խօսիլ կուտան, և այլ ուրիշ նման կերպեր։ Քրիստոս պարզ խօսքով և դպչելով միայն կը գործէ. մատն խուլերու ականջն կը դնէ, 'ի ծնէ կուրին աչքին սակաւ մի թուք կը քսէ, տեռատես կինն իր զգեստուց դըպչելով կը բժշկէ, Ղազարու կը հրամայէ որ գերեզմանէն ելնէ. և ամեն գործածներուն մէջ պարզութիւնն պատիւն և մեծութիւնն կը փայլի. այնպէս որ եթէ մարդկանց մէջ գերբնական զօրութիւն ունեցող մի գտուէր՝ անշուշտ ինքն պիտի լինէր։ Բայց նորէն կը զրուցեմ, մեք այս աշխարհքիս մէջ գերբնականի արտայայտութիւն կերպիւ իւիք ոչ ընդունիմք, այնոր համար մոգ եղել է հոգեկոչ եղել է՝ խնդրոյն լուծումն քայլ մի ևս առաջ չերթար՝ բանաւոր և խելացի մարդկանց առջևն՝ որ ոչ այսց կը հաւատան և ոչ այնց։

Վերջապէս մագնիսութեան հետևողք ալ՝ իրենց կողմն քաշել ուզեցին զՔրիստոս՝ համարելով թէ իւր բազմաթիւ բժշկութիւններն այս հնարիւքս առնէր, եթէ մագնիսութեամբ բժշկութիւն լինի, զոր աչօքս տեսած լինելով՝ չեմ կարող ուրանալ։ Բայց մագնիսացուցիչ չեմ տեսել որ մեռեալներն յարուցանէ, և սակայն Քրիստոսի գործոց մէջ երեք հատ կայ այսպիսի գործ, և ասի թէ իւր մահուանէն ետև իւր աշակերտներն ալ շատերն յարուցել են, նա և մեզ մօտ ատեններու մէջ ալ. որ այս ալ շատ մեծ զանազանութիւն մի է. մանաւանդ կը տեսնեմք որ Յիսուս և իւր աշակերտներն և Եկեղեցւոյ սրբացուցած անձինքն՝ ոչ երբէք մագնիսացուցչաց կերպերն և ձեռնածութիւններն բանեցուցած են։ Իրաւ մագնիսութեան եռանդնոտք կը համարին թէ միայն կամաց ներգործութեամբ ալ առանց նիւթական միջնորդի կարեն ազդեցութիւն առնել, բայց դեռ մինն անգամ 'ի նոցանէ չկարէ պարծել թէ մեռեալ մի յարուցել է։ Սակայն ինչ և իցէ մագնիսացուցիչ, մոգ կամ հոգեկոչ սոքա ամենեքեան մի են իմաստասիրի առջևն՝ որ ուրիշ բան չընդունիր՝ բայց ինչ որ բանն՝ այս ինքն խելքն, կարէ ըմբռնել և բացատրել։

Արդեօք Քրիստոս գաղափա՞ր ինչ է կամ անձն առասպելեալ։

9 Դեկտեմբեր։

Նորէն կը հարցանեմ իմաստասիրութեան և դիտութեան ամեն արձագանգաց. Ի՞նչ է Յիսուս Քրիստոս, և կը լսեմ որ ոմանք ասեն՝ թէ Քրիստոս ասացածդ չկայ և եղած չէ, և իր անունն ալ, ինչպէս Հոմերոսի, Պիւթագորայ, Հռոմուլոսի և ուրիշ շատերու անուններ՝ զորս ժողովրդեան երեւակայութիւնն ազգաց նահապետներ համարեցաւ և ջահ մարդկութեան՝ ուրիշ բան ոչ նշանակեն՝ բայց եթէ որոշեալ դարու մի մէջ մարդկային մտաց զարգացման երևութից անձնաւորութիւնն՝ որում հիմա առասպելեալ անձն ասեմք, այսինքն գաղափար մի մասնաւորող ձև՝ ընդ կերպարանօք մարդոյ եկեալ յիրականութիւն։ — Այսու նկատմամբ Քրիստոս ասացեալն անձնաւորապէս եղած չէ, այլ ինչ որ իրեն կ'ընծայուի վարդապետութիւն և գործ՝ որ մասամբ իւիք ճշմարիտ են՝ որպէս մարդկային մտաց ծնունդ, և մասնաւոր ժամանակի մի մէջ մարդկութեան զարգացումն, 'ի բաց առեալ հրաշքներն և դերբնական իրերն՝ որ յետոյ յաւելեալ են 'ի սնոտիապաշտութենէ ժողովրդոց, որպէս միշտ պատահէ։

Այս կարծիքս մեզ հասաւ յամպրոպայինն Գերմանիոյ՝ որպէս նրբագոյն և եթերական մասն բողոքական մեկնաբանութեան գրոց, ևս և վերամբարձական իմաստասիրութեան՝ որոյ պատգամախօս եղև հռչակաւորն Հեկէլ։ Այս դրութիւնս իմաստասիրիս հնարած նոր համաստուածութեան հետևանքն է, յորում գաղափարէ զատ իրական բան

չկայ, այնպէս որ ենթակայականն և առարկայական բացարձակապէս նոյն լինելով՝ աշխարհքիս գոյութիւնն և զարգացումն ալ բանախօսական ինչ լինի մշանջենաւորապէս: Ըստ Հեկէլի նոյն ինքն Աստուած ուրիշ բան չէ՝ բայց եթէ անհուն բացարձակ գաղափար՝ յորմէ այլքն ամենայն յառաջ գան. տիեզերաց կեանքն ալ՝ սոյն գաղափարիս հարկաւոր շարժումն է, և մարդուս միտքն իւր խորհրդոյ աշխատութեամբն՝ այնոր սատարն է, և նիւթն իրեն ձեւն է: Ապա և անհատից կեանքն ալ՝ անհուն կենաց մասնական և անցողական արտայայտութիւնն է՝ որ անդրադարձութեամբ ինքն իր գիտակցութիւնն ստանայ, կամ ոչ եսին կ'ընդդիմանայ. որպէս զի գիտութեամբ նորէն այն անհուն գաղափարին հետ նոյնանայ և բացարձակ հանգստեան մէջն ընկղմի՝ նորա ինչ լինելուն ծանօթութիւնն ստանալով, որ է իւր շարժմանց և կատարելութեան գերագոյն վախճանն:

Ըստ այսմ մեք ամենքս ալ մի մի առասպելեալ անձինք եմք, այսինքն նշանակք և կոտորակք գաղափարաց. որ ուրիշ բանի համար ոչ երևիմք առ ժամանակ մի աշխարհքիս հորիզոնին վերայ՝ անցողական օդերեւութից և ժամանակաւոր աստեղաց պէս, բայց եթէ վայրկեան մի փայլեցնելու համար մի և տիեզերական գաղափարին մի մասն՝ որոյ ներկայացուցիչներն եմք մեք՝ իրականութիւն ասացելոյն մէջ որ է աշխարհքս: Եւ երբոր մահուամբ մեր խաղին մասն աւարտեմք և պաշտօննիս կատարեմք՝ պիտի մտնեմք մեծ բովանդակութեան կամ Համայնին և տիեզերական նոյնութեան մէջ: Բայց թէ ինչ պիտի լինի վերջապէս մեր անձնաւորութիւնն, այսոր վերայ բացատրութիւն տուող չկայ: Ապա ըստ այսմ Յիսուս ալ այլոց պէս մարդ է, այլ և քան զայլս աւելի մարդ՝ որովհետև բացարձակին աւելի մեծագոյն մասն յայտնելու համար երևցած է յաշխարհի. և որովհետև

քան զայլս աւելի գործակցութիւն ունեցած է մարդկութեան զարգացմանն գիտութեամբ և քաղաքականութեամբ, որով և տիեզերական գաղափարին կամ աստուածութեան փառացն՝ աշխարհիս մէջ, ապա իրաւամբ կոչեցաւ մարդարէ տեսանող և նոյն իսկ Որդի Աստուծոյ՝ որոյ ամենէն աւելի հրաշափառ մարմնաւորութիւնն և զօրաւոր գործիքն եղև մեր մէջ՝ 'ի զօրութենէ 'ի գործ անցած ժամանակն: Վասն զի ըստ Հեկէլի Աստուած է 'ի լինել[1], այսինքն Աստուած հետզհետէ կատարելագործուելու հետ է 'ի ձեռն խորհրդոյ մտաց մարդոյ, և Քրիստոս ալ աշխարհքիս ամենէն գերազանց միտքն եղեալ է:

Այս այլանդակ հրէշ վարդապետութիւնս ո՞ւր առեալ ածէ զմեզ. բայց եթէ դժուարութիւն դըժուարութեան վերայ կը դիզէ, ինչպէս Տիտանք կամ հսկայք որ զՊելիոն լեառն Ոսսայ լերին վերայ կը դնէին՝ երկինք հասնելու համար և ոչ հասանէին, և թերևս բացատրութիւնն՝ բացատրել ուզածէն աւելի անըմբռնելի է. զմեքինն մենագունիս մեկնաբանել ուզելով: Յիրաւի իմաստասիրութեան և պատմութեան հիմունքն քանդելու և ամենայն կարգ եղծանելու համար՝ զայնոսիկ ուսանելն չարժեր: Եթէ Քրիստոսի գոյութիւնն ոչ կարեմք ապացուցանել՝ ո՞ր բանի գոյութիւնն կարեմք ցուցանել. և ի՞նչ բանի կուգան պատմական վկայութիւնն և աւանդութիւն և դատաքննութիւն, եթէ ամենայն բացայայտութեամբ ցուցուած իրերն ալ կարեմք ուրանալ: Հոմերոս եղեալ է թէ չէ տարակուսելն՝ մինչև աստիճան մի կարեմ ըմբռնել՝ որովհետև ժամանակաւ այսչափ հեռի է 'ի մէնջ, և իւր քերթուածոց մէջ պատմուածներն՝ առասպելեալ ժամանակաց կ'երթան կը հասնին. այսու ամենայնիւ այնոր մէջն և՝

1 Gott ist im Werden. Աստուած 'ի լինել է:

ողջմտութեան և խելքի հակառակ մեծ աներկիւղութիւն պէտք է՝ հաւտալու համար որ այսպիսի զարմանալի և երկայն յարակից և շղթայաշար գրուած մի՝ որ ամենայն ազգաց քերթողութեան օրինակ եղած է, զանազան դարերու մէջ զանազան մարդիկներէ շարադրուած և յարմարցուցած լիցի, կամ թէ ինքնին եղած լիցի ռամկական երգերու և աւանդութեամբ եկած քերթուածոց պատահական հաւաքմամբն: Ճիշդ նոյն բանն ասել է՝ որ գիրք մի շարադրելու համար պէտք եղած տպագրութեան գրերը շատ անգամ յօգս նետելով՝ կարեմք զայն գիրքն շարադրուած գտնել երկրիս վերայ՝ առանց հեղինակին մտաց և գրաշարին ձեռաց օգնութեանն:

Դարձեալ ինչպէս զպատմութիւնն այսպէս ևս զիմաստասիրութիւնն ալ բռնազբօսել ասել է. որովհետև հոգեխօսութիւնն՝ գիտակցութեան վկայութեանն վերայ հիմնեալ, արդէն մարդկային անձնաւորութիւնն ցուցանէ՝ ներքին զգացման, խորհրդոյ և կամաց գործերովն՝ որովք մարդկային կեանքն կազմի: Յիշողութեամբ մեք ունիմք զստուգութիւն մեր անձնաւորական նոյնութեանն, և եթէ արդի գոյութեանս յաջորդական վայրկեաններու մէջ՝ այն նոյնութիւնն կը շարունակէ՝ ինչո՞ւ անտի ևս անդին ալ պիտի չյարատևէ: Դարձեալ եթէ մեր գոյութեան վախճանն՝ մեծ բովանդակութեան կամ համայնին մէջ խառնուիլ ըսել է, ուր մեր անձնաւորութիւնն պիտի եղծանի, ո՞ւր կը մնայ այս և անդիի աշխարհին մէջ բարոյական պատասխանատուութիւնն, և ինչ հաստատութիւն կը մնայ աստուածային և մարդկային արդարութեան: Եթէ ամենքնիս՝ ինչ որ առնեմք՝ բացարձակին մէջ պիտի կորնչիմք, ինչպէս գետք յՈվկիանոս, վտակք 'ի գետս, առուակք 'ի վտակս և կաթիլք ջրոյ յառուակս, ի՞նչ բանի կուգայ ապա բարւոյ և չարի, արդարոյ և անիրաւի, բարոյական զանազանութիւնն.

և ի՞նչ տարբերութիւն պիտի լինի ախտի և առաքինութեան թէ իրենց էութեան և թէ իրենց վերջնական վախճանին նկատմամբ: Այս գրութեամբս բարոյականութիւնն և ազատութիւն միանգամայն եղծանին. վասն զի այն ատեն մարդկային գործք՝ անբան և անկամք բնութեան շարժմանցն նման՝ անհունի հարկաւոր փոփոխմունքն լինին, և անհրաժեշտ հարկի արտայայտութիւններ, այնպէս որ աշխարհքիս և ընկերութեան մէջ ինչ որ հանդիպի՝ պիտի ասեմք թէ իր գոյութեանն հետևանքն է և իր գոյութենէն առաջ կուգայ: — Ամենայն դիմամարտք՝ գաղափարի վերամբարձական միութեան մէջ կ'ընկղմին՝ որ նորա սկիզբն է, և հակառակաց բացարձակ նոյնութիւնն՝ լրումն է ամենայն իրաց:

Բնազանցութեան բարձրաբերձ սանդուխ մի է այս բանս՝ ոտքն ոչնչութեան վերայ հիմնած՝ տիեզերքս վերաստեղծելու համար. վասն զի իմ խուզարկած խնդրոյս ի՞նչ բանի կուգայ ասելն թէ Յիսուս Քրիստոս առասպելեալ անձ մի է. մի թէ ասկէ ետև աւելի դիւրաւ կարե՞մք բացատրել նոյն իսկ առասպելեալ անձին կերպաւորութիւնն, այսինքն ցուցանել թէ ի՞նչպէս այն ատեններն, յանկեան ուրեք աշխարհքիս, անծանօթ փոքրիկ ժողովրդեան մի մէջ՝ յունաց և հռովմայեցւոց քաղաքականութեանն անհաղորդ, և 'ի ժամանակին յորում տիեզերակալ պետութիւն վերջնոցս կերպաւորէր, ի՞նչպէս ասեմ կը ձևանար գաղտնաբար ուրիշ պետութիւն մի՝ քանի մի անուսումն և անկիրթ ձկնորսաց խօսքովն և գործով, որ իրենք զիրենք կ'անուանէին առաքեալ և ներշնչեալ Որդւոյն Աստուծոյ որ աշխարհք եկել և մարդացել էր՝ լուսաւորելու բժշկելու և փրկելու համար զմարդկութիւնն անկեալ և թաղեալ 'ի ծառայութեան չարի և ստուերաց մահու: Եւ մեծապանծ գործոյս այսմիկ՝ որ հրէից գայթակղութիւն և հե-

թանոսաց յիմարութիւն էր՝ ձեռն արկին տկարագոյնքն և թշուառագոյնք 'ի մարդկանէ, և ոչ իսկ նոյն ժամանակի գիտութիւններն և դրականութիւնն իրենց օգնական ունելով, և հակառակ իսկ ամենայն պետութեանց ժամանակին, և մանաւանդ հռովմայեցւոց որ մինչդեռ ընկճէր զամենեսին՝ ինքն յաղթահարեցաւ 'ի նմանէ: Վասն զի մինչդեռ հռովմայեցւոց պետութիւնն զինու զօրութեամբ բոլոր աշխարհք կը տարածուէր՝ տէրութիւնն Քրիստոսի միայն բանի՝ այսինքն խօսքի զօրութեամբն կը ձևանար. և այս երկու պետութեանց մինչև 'ի մահ բացուած մենամարտին մէջ՝ տկարագոյնն հղօրագունին կը յաղթէր և կը տապալէր զայն՝ ընդդէմ ամենայն մարդկային կարծեաց և ճշմարտանմանութեանց, որպէս Դաւիթ զԳողիաթ. և նորա մայրաքաղաքն մտնելով՝ Կապիտոլիոնի մէջ նորա տեղն նըստաւ, և այնոր տեղն սկսաւ զաշխարհս կառավարել՝ զօրութեամբ ոգւոյ ևեթ, որ մինչև ցայնժամ եղած բան չէր:

Եւ իրաւցնէ այս բանս պարզապէս բաղդի խաղ համարելն կամ անհրաժեշտ հարկի անճողոպրելի արդասիք սեպելն՝ բանաւորութենէ հրաժարել ասել է՝ որ սովորաբար զհակառակսն հակառակօք ոչ մեկնաբանէ, այլ կը ջանայ իր բացատրութեանցն բաւական պատճառ գտնել: Ես որ ոչ հեկէլեան եմ և ոչ համաստուածեան, և չեմ կարող ալ ըմբռնել թէ ինչպէս ողջամիտ մարդն և մարդկային արժանապատուութիւնն գիտցողն՝ կարէ նոցա կարգն անցնիլ, շատ աւելի կ'ընտրեմ ասել թէ քրիստոնէութիւնն՝ որոյ ծագումն և հաստատութիւնն ոչ ըմբռնեմ, գործ է Նախախնամութեան՝ որ խաղ առնէ զիմաստութեամբ և զխորհրդովն մարդոյ՝ յորժամ կամի կերպարանափոխ առնել զաշխարհս, և դարձեալ կը հաստատեմ թէ Քրիստոս ալ ով և ինչ և է և ինչ ա-

նուն ալ իրեն տրուի՝ գործիք եղած է այս բանիս: Վերջապէս այս աւելի խելքի մօտ և աւելի պայծառ երևի ինձ, թէ և միտքս դեռ շատ մթին և անհասանելի բաներ կը գտնէ այնոր մէջ:

Վերջապէս մտադրութեամբ քննեմք:

12 Դեկտեմբեր:

Մինչդեռ ուրիշ աշակերտներն՝ վարդապետին այս հարցմանն թէ Ո'վ ասեն ինձ համար, ժողովրդեան կարծիքն կը կրկնէին, Սիմոն առանց տատամսելու պատասխանեց. « Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ »: Կը համարուի թէ այս պատասխանւոյս համար արժանի եղև գլխաւորութեան 'ի վերայ առաքելոց և արժանապատուութեան գլուխ լինելոյ Եկեղեցւոյ: Եւ յիրաւի Յիսուս յետ ասելոյ նմա թէ մարմինն և արիւնն չէր իրեն այս դաւանանքն սորվեցուցած՝ զինքն Պետրոս անուանեց և արար զինքն վէմ հաստատութեան Եկեղեցւոյ իւրոյ ասելով. « Դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ »: Այն ատենէն այսինքն տասնութ դարերէ 'ի վեր բովանդակ կաթողիկէութիւն կը կըրկնէ այս խօսքս, որ տիեզերաց առաջին տաճարին՝ այս ինքն Հռովմայու Սուրբ Պետրոս եկեղեցւոյն գմբէթին բոլորտիքն գրած է:

Այս բանս միանգամայն իմ դժուարութեանս լուծումն է. և հարկ է խոստովանիլ որ 'ի շրջանս դարուց և մեր օրերն իսկ յոյժ շատերն ունի իրեն կողմնակից. և գոնէ այս նկատմամբ՝ արժան է որ զինքն յարգեմք և մտադրութեամբ քննեմք:

Ապա ուրեմն Յիսուս Քրիստոս՝ որ ըստ իս ոչ մարդարէ է, ոչ իմաստասէր, ոչ մոգ, ոչ հոգեկոչ, ոչ

մաքնիսացուցիչ, ոչ գիւթ, ոչ խաբեբայ, և ոչ վերջապէս մարդ որպէս զայլս 'ի մարդկանէ, որովհետև իրմէ առաջ չտեսնուած գործեր գործած է, արդեօք յիրաւի Որդի Աստուծոյ է մարգացեալ կամ Բանն մարմին եղեալ, որպէս զառաջինն դաւանեցաւ Պետրոս, և որպէս վարդապետն իսկ յայտնապէս ասաց իւր սիրելեացն և թշնամեաց: Վասն զի ծաղրելի բան է համարիլն թէ ինքն այս անունս ոչ երբեք իրեն տուել է, այլ իւր աշակերտք եռանդագին զարմացմամբ իրեն այս անունն տալու առեն՝ տկարութեամբ նոցա հաւանել է: Սուտ է այս խօսքս. որովհետև կը տեսնեմք որ քահանայապետին առեանն առջև՝ հայհոյութեան յանցանօք ուրիշ բանի համար չմեղաստանուեցաւ ու չդատապարտեցաւ՝ բայց եթէ այսոր համար որ աստուածային բնութիւնն իրեն կը սեպհականէր:

Ուրեմն հիմա ինչի հաւատալու է: Այս խնդիրս արդէն տասնուերք դարերէ 'ի վեր արդեամբ լուծուած է՝ միլիարաւոր միլիար մարդկանց հաւատալովը, յորոց ոմանք իրենց հաւատոյն համար կեանքերնին տուած են, իսկ այլք ևս այս հաւատոյ մէջ գտած են զաղբիւր առաքինութեան, զմխիթարութիւն յարկածս կենաց և զքաջալերութիւն 'ի ժամու մահուան. և այս վերջնոցս մէջ գտանին յոյժ շատ մարդիկ անուանիք հանճարով գիտութեամբ և պերճախօսութեամբ. և անտարակոյս արդի աշխարհիս մէջ հանճարոյ առաքինութեան և զարդացման կողմանէ՝ ինչ որ շքեղ և լուսաւոր բան կայ՝ ամենքն ալ Աւետարանի կողմն է. և քաղաքականութիւնն զոր իր ոգւոյն վերանորոգած է՝ աշխարհօրէն Որդի Աստուծոյ դաւանած է զՅիսուս, և այնպէս ալ երկրպագութեան պատիւն մատուցած է իրեն: Միայն դարերու մէջ քանի մի ցիրուցան խմաստասէրներ, որ յետին երկուց դարուց մէջ սակաւ մի աւելցած են՝ յան-

դգնել են հասարակաց հաւատոց դէմ բողոքելու, և կամեցել են ժողովրդեան հոգւոյն մէջ դրդուեցուցանելու զայն և մթագնելու: Խմաստասէրք այս կողմանէս շատ կը նեղուին՝ որ հասարակ կարծիքն և ընդհանուր հաւանութիւն ժողովրդեան՝ իրենց հակառակ է, և նոցա գրոչակիրներն՝ որ կը պարծին թէ ճշմարտութիւնն ուրիշ ալ գտնեն իրենց ընդունելի է, պէտք է որ իրենց դասախօսութեան մէջ անկեղծաբար այս ծանր խնդրոյս վրայ խօսին՝ որպէս զի վերջապէս գիտասցուք և վստահութեամբ քարոզեսցուք թէ արդեօք իբրև զԱստուած պաշտելու է ըզՔրիստոս, թէ իբրև խաբեբայից ամենէն մեծն անարգելու է զնա:

Ես իմ կողմանէս՝ այս բանիս մէջ կ'ուզեմ սիրոս հանգարտեցնել՝ գոնէ ես իմ անձիս կառավարութեանն համար. վասն զի մինչև հիմա այս առարկութածէս վախուստ տուած չլինելուս վրայ ալ կ'ամաչեմ, որպէս թէ վախ ունէի այնոր երեսն նայելու: Այս ալ խոստովանելու եմ՝ որ ոչ միայն իմ անցեալ հաւատոցս յիշատակն և ներկայ կենացս անհոգութիւնն խղճիս կը զարնէ և զիս կը խռովէ, այլ և հոգւոյս մէջ ապագային վախ մի կը զգամ՝ որ խեղճ Եակարիս մեռնելէն 'ի վեր այլ աւելցաւ: Սակայն խոհեմութեամբ և լուսութեամբ առաջ երթամք. և զգուշանամք անխոհեմ խօսքերով իմ գիտասուրութիւններս հուչակելէ. որովհետև ինչպէս որ ասեն՝ այս տեսակ գործոց մէջ լուսութեամբ գործելն ամենէն լաւն է. աղաղակն լաւ գործ չգործեր, լաւ գործըն ալ աղաղակ չհաներ: Այս մեծ առաջարկութեանս վրայ ես իմ խղճիս մէջ պիտի խորհիմ՝ Աստուծոյ և յինէն գոնս ուրիչ մի չլինելով, և օտարի հետ ալ պիտի չխօսիմ՝ բայց եթէ պէտք եղած ժամանակն՝ երկու կողմանէ նայն նիւթոյն հմուտ մարդկանցմէ խորհուրդ հարցնելու համար, երբ զիս

համոզելու համար հարկաւոր սեպեմ։ Ահա այս դիտմամբ է որ այս օրագրիս ալ ձեռք զարկի, և զայն պիտի շարունակեմ՝ մինչև որ թէ միտքս թէ խնդիրն բոլորովին լուսաւորուի։

Քրիստոնէութեան իմաստասիրութեան գաղափարն։

15 Դեկտեմբեր։

Եթէ Քրիստոս Որդի Աստուծոյ է՝ որպէս ինքն հաստատէ, և Եկեղեցին դաւանի և ամենայն ճշմարիտ քրիստոնեայք կը հաւատան, կը հետևի ուրեմն որ շատ աստուածներ կան, կամ գոնէ երկու՝ Հայր և Որդի, որ զմեզ 'ի բազմաստուածութիւն տանի, ինչպէս որ յիրաւի մահմէտականք ևս և հրեայք քրիստոնէութեան վրայ այս կեղտս կը դնեն, և կամ Հայրն և Որդին մի Աստուած են գոյացութեամբ և բնութեամբ՝ զոր և Եկեղեցին կ'ուսուցանէ Երրորդութեան վարդապետութեամբն՝ ոչ միայն երկու՝ այլ և երեք անձինս ընդունելով յԱստուած։ Ապա զՅիսուս Քրիստոս կամ զՈրդին Աստուծոյ մարդացեալ ըմբռնելու համար՝ նախ պէտք է զինքն խորհիմ աստուածային որդիութեամբն իւր 'ի յաւիտենից ծընընդեամբն. որովհետև Բանին մարմնաւորութեան վարդապետութիւնն 'ի վարդապետութենէ Երրորդութեան յառաջ գայ։

Աստուածաբան չեմ և չլինելուս վրայ հիմա շատ կը ցաւիմ, որովհետև ակամայ կերպով ինքզինքս վերամբարձ խնդիրներու տուած եմ՝ որ թէպէտ աստուածաբանութեան առարկայներ են՝ սակայն իմաստասիրութեան ալ յոյժ կարևոր, գոնէ զինքն խռովելու չափ։ Ուստի իմ միտքս քրիստոնէութեան

հիմունքն քննել չէ՝ որ ինձ ոչ անկանի և կարողութիւն ալ չունիմ։ Միայն կ'ուզեմ որպէս իմաստասէր և իմ խիղճս դոհացնելու համար՝ պարզապէս և անկեղծաբար քննել թէ արդեօք յիրաւի քրիստոնէական վարդապետութեանց մէջ անտեղի կամ մարդկային մտաց հակառակամարտ բան մի կայ՞ թէ չէ։ Եթէ կայ, յայտնի է որ չեմ կարող զնոսա ընդունել, և իմաստասիրութիւնն որ բանիւ վարի յամենայնի՝ իրաւունք ունի հեռանալ 'ի նոցանէ. իսկ թէ չկայ, ինչու քան զհասարակաց միտս մարդոյ դժուարահաճ լինելու եմ, որ այսչափ դարերէ 'ի վեր այն վարդապետութիւններն կ'ընդունի և կը պատուէ։

Կան իմաստասէրք որ քրիստոնեայ լինելնուն վրայ կը պարծին, և քրիստոնեայք որք իմաստասէր կոչուելով հանդերձ՝ սրտի մտօք ոչ միայն Աւետարանի կը հաւատան, այլ և նոյն ճշմարտութիւնն իրենց գրեանց մէջ կը հաստատեն կրկին ճամբով, այսինքն յայտնութեամբ և բանիւ մտաց։ Մեր օրերս հանճարեղ մարդիկ մեծարոյ երևցուցին այս կարծիքս՝ յորմէ յառաջ եկն իմաստասիրութիւն քրիստոնէութեան ասացեալ գիտութիւնն, որոյ վախճանն ոչ այն է որ հաւատոյ վարդապետութիւններն բանիւ մտաց ցուցանէ՝ որ խորհուրդներն բնական գիտութեանց աստիճանն խոնարհեցնել լինէր, այլ Եկեղեցւոյ սահմանած աստուածային խօսքն հիմն բռնելով՝ մարդկային գիտութեան լուսովն ալ զայն աւելի լուսաւորել, որպէս զի մարդոյ և բնութեան խորին ծանօթութեան մէջ՝ աւելի պայծառ հաստատութիւն մի գտնեն յայտնեալ ճշմարտութեան։ Յիրաւի այս բանս գեղեցիկ ձեռնարկ մի է, և ես ալ ամենայն ըղձիւ այնոր յաջողութիւնն փափաքողներուն առաջինն եմ, որով մարդկային դիտելեաց երեք մասանց մէջ ալ՝ որ են աստուածաբանութիւն, իմաստասիրութիւն և տիեղերաբանութիւն, ներդաշնակու-

թիւն մի հաստատուելով՝ նոցա իրարու հակառակութենէն յառաջ եկած գայթակղութիւնն վերնայ։

Այս կերպով՝ ճշմարտութիւնն ամեն տեղ կարէր գտնուիլ՝ առանց իրարամարտ յարդարելու այն վարդապետութիւններն՝ որ զայնս կը սորվեցնեն՝ իւրաքանչիւրն իւր եղանակովն և իրեն յարմար երևցած կերպովն։ Քանզի ճշմարտութիւնն ճշմարիտ՝ անձնամարտ չէ կարող լինել՝ ինչ ճամբով ալ որ յայտնուի. վասն զի եթէ Աստուած նոյն ինքն ճշմարտութիւն է՝ ամենայն ինչ որ 'ի նմանէ յառաջ գայ՝ ճշմարիտ է, թէ ուղղակի իւր խօսքովն մարդուս ուսուցած լինի զայն, և թէ հոգեկան և նիւթական ըստեղծուածոց գործովն նոցա յայտնած։ Խոստովանիմ որ այս նոր ուղիս ինձ հաճոյական կ'երևի, և ինքզինքս երջանիկ պիտի համարիմ թէ որ այս ճամբէս վստահութեամբ յառաջ երթամ, գոնէ ես զիս գոհացնելու համար, և իմ առանձնական խորհրդածութեանցս մէջ։

Փորձելն վնաս չտար, որովհետև այլոց պիտի չիմացնեմ իմ միտքս. և վերջապէս պարզ և անվնաս փորձ մի է գործածս, որովհետև կ'ուզեմ ես իմ անձինս ցուցանել թէ մարդս կարէ միանգամայն քրիստոնեայ լինել հաւատով և իմաստասէր մտօք, կամ թէ ասեմք՝ կարելի է բանն ու հաւատքն 'ի համբոյր հաշտութեան ածել։ Այս բանիս կարելի լինելուն համոզուած՝ կը մխիթարուիմ. որովհետև ալ հոգնեցայ՝ որպէս իմաստասէր տարաձայն գտնուելովս թէ և ոչ թշնամի՝ այնպիսի վարդապետութեան մի հետ՝ որ աշխարհիս երեսն յեղափոխեց և այս աւուր քաղաքականութիւնս յառաջ բերաւ, և որ մինչև ցայսօր կը կառավարէ զայն իւր գաղափարաց բարձրութեամբն և բարոյականին վսեմութեամբն՝ զոր իւր թշնամիքն անգամ ճանաչեն և խոստովանին։

Երրորդութիւն։

18 Դեկտեմբեր։

Սրբոյն Աթանասի հանգանակն՝ յորում գտանի Երրորդութեան վարդապետութեան ամենէն ճիշդ սահմանն՝ ասէ. « Կաթողիկէ հաւատք պաշտէ զմի միայն Աստուած յԵրրորդութեան, և զԵրրորդութիւն 'ի միութեան։ — « Առանց շփոթելոյ զանձինս, և առանց անջատելոյ զգոյացութիւն. քանզի այլ է անձն Հօր, և այլ Որդւոյ և այլ Հոգւոյն սրբոյ. և սակայն Հայր Որդի և Հոգին սուրբ ունին զմի միայն աստուածութիւն, զփառս հաւասար և զվեծութիւն մշտնջենաւորակից։ — « Հայր է Աստուած, Որդի է Աստուած, և Հոգի սուրբ է Աստուած. և սոքա ոչ են երեք Աստուածք, այլ մի Աստուած »։

Եւ ահա այսպէս հաւատալ արժան է՝ առ 'ի գըտանիլ 'ի կաթողիկեայ ուղղափառութեան։ Այս լսելով՝ առջի բերան ես ալ կը ստիպուիմ աշակերտաց շատերուն պէս ասելու՝ երբ Յիսուս յայտնեց նոցա թէ ինքն էր հացն կենդանի իջեալ 'ի յերկնից, և զի առանց ուտելոյ զմարմին նորա և ըմպելոյ զարիւն նորա՝ անհնար էր նոցա ունել զկեանսն յաւիտենականս, զոր լսելով աշակերտք ասացին. « Խիստ է բանդ այդ »։

Երրորդութիւնն 'ի միութեան է և միութիւն յԵրրորդութեան. այս չէ որ մարդուս միտքն կը շփոթէ, վասն զի նոյն բանն գտանէ 'ի հոգեղէն և 'ի նիւթեղէն արարածս աշխարհիս, 'ի գործս բնութեան և արուեստի։ Գերդաստանն կազմի յերից անձանց որ են հայր մայր և զաւակ, և համաձայնութիւն երեցունցս սահմանէ զմիութիւն նորա։ Երեք եղերք են

'ի գիտակցութեան մարդոյ եսն խոհուն, եսն խոր-
հեալ և կցորդութիւն նոցա. ծանօթութիւն 'ի միտս
ձևանայ անդրադարձ ըմբռնմամբ ենթակային և ա-
ռարկային՝ միաւորութեամբ նոցին 'ի խորհրդեան,
որ և արտայայտի առաջարկութեամբ որ ունի ե-
զերս երիս: Ի բնական կարգի ևս ամենէն պարզ ձևն
երեք գծովք կերպաւորի, և ամենէն պարզ հաստա-
տուն մարմին երեք տարածութեամբ լրանայ, և մար-
մին ինչ հաստատուն կալոյ համար երեք յենարանի
կարօտ է: — Կարծես իմն թէ յաստուածային էու-
թեան ալ նոյնպէս է, և ըստ այսմ հանգիտութիւն
ինչ գոյ անհունի և հնաւորի գոյութեան մէջ: Բայց
այս հանգիտութեան չափն անցնելու չէ, և որք ան-
դըր քան զաշխարհս և զմիջոց և զժամանակ կամե-
ցան ձգել զնա՝ անկան 'ի մոլորութիւն՝ ասէ Եկեղե-
ցին, վասն զի այնու համարեցան ոչ այլ ինչ տեսա-
նել յԱստուած՝ բայց երրորդութիւն մի ստորոգե-
լեաց, կամ գլխաւոր երեք եղանակ յայտնի լինելոյ
և գործելոյ, որ է հերետիկոսութիւն միաւորակա-
նաց:

Հոս է ուրեմն դժուարութեան կնճիռն, այսինքն
թէ կաթողիկեայց դաւանած երրորդութեան երեք
անուանք ոչ եթէ մի և նոյն էակի արտայայտութեան
երեք ժամանակներ են, այլ իսկապէս երեք անձինք
զանազանք և անշփոթք 'ի մի և նոյն էակի, և՝ի միակ
գոյացութեան: Ամենայն դժուարութիւն անձն բա-
ռին վերայ է:

Արդ զինչ է անձն յաչս բանի, բայց եթէ էակ բա-
նաւոր ունող զգիտակցութիւն իւր, և այս գիտակ-
ցութիւն որ հաստատէ զիւր եսն՝ զանազանէ զնա
յայլմէ եսէ և յոչ-եսէ, այնպէս որ ունի ոգեղէն իմն
անթափանցութիւն, որպէս մարմինք ունին անթա-
փանցութիւն բնական. և արտաքուստ՝ որ և է կեր-
պաւորութիւն ալ որ ընդունի՝ ինքն նոյն ես մնայ,

և ոչ կարէ զայլ գոյացութիւն յինքն ընկղմել և կամ
յայլմէ գոյացութենէ ընկղմեալ լինել: Այսպէս բնա-
կան կարգի ներքին միութեան մէջ՝ հայրն որիշ է 'ի
մօրէ, մայրն 'ի հօրէ, և զաւակն յերկոցունց ևս, և
այսու է որ էակաց անհատականութիւնն պահի և
իւրաքանչիւրոց յատուկ պատասխանատուութիւնն
սահմանի անձնաւորական նոյնութեամբն:

Ապա ուրեմն եթէ երեք անձինք են յԱստուած,
ապա և երեք գիտակցութիւնք անձին Հօր, անձին
Որդւոյ և անձին Հոգւոյն սրբոյ. և այսպէս ալ կը
վարդապետուի՝ թէ իւրաքանչիւրն յաստուածային
անձանց՝ ճանաչելով զայլ երկուսն՝ որոշի 'ի նոցանէ
ծանօթութեամբ անձին իւրոյ և սեպհական ներգոր-
ծութեամբ 'ի ներքին կեանս Երրորդութեան. յորմէ
յառաջ գայ անշփոթ զանազանութիւն աստուա-
ծային անձանց անձնաւորական սեպհականութեամբ
և գործովք: — Բայց 'ի սեպհական գիտակցութե-
նէ նոցա որով որոշին՝ ոչ գայ յառաջ անջատումն
գոյացութեան նոցա՝ որպէս է յարարածս: Երեք
անձինքս մնան մի միայն աստուածութիւն՝ մի և նոյն
'ի յաւիտենական բնութեան՝ զանազանելով սակայն
'ի միմեանց՝ իւրեանց անձնաւորութեամբն: Եւ ահա
այս ինչ զոր ոչ ըմբռնեմ, և կարծեմ թէ բանն ոչ
երբէք խելամուտ լիցի այնմ:

Եւ ինչ կը հետևի աստի. մի թէ ասելո՞ւ եմ թէ
Երրորդութեան վարդապետութիւնն խելքի դէմ
է, որովհետև միտքն զայն չկարէ բացատրել, որպէս
թէ բանն մարդկային անսխալ չափ լինէր գերագոյն
Էակին, և որ և է կարելեաց: Ոչ. այլ անկեղծ և ան-
կողմնասէր իմաստասիրի մի պէս կը խոստովանիմ
որ յիրաւի այս նիւթոյս մէջ մեծ դժուարութիւն
միայն կայ՝ մարդկային մտաց համար. վասն զի տեսա-
նեմ որ այս վարդապետութիւնս յոյժ կարևոր իր
եղած է յաշխարհի, որովհետև հիմն է՝ երկրիս ամե-

նէն աւելի բանաւոր և ամենէն աւելի աղդու կրնայ՝ որ մարդկային բարոյականի կատարելութեան ամենէն աւելի ձեռնտու եղած է. և անկարելի է որ անմիտ և անտեղի սկիզբէ մի այնչափ գեղեցիկ հետևանք յառաջ գան, և կամ այնչափ ճշմարտութիւնք բղխեն ի մոլորութենէ և ի ստութենէ. կամ այլապէս խոսելով անկարելի է որ չար ծառ մի՝ այսչափ պքանչելի պտուղներ յառաջ բերէ:

Ուսասի իմ քննութիւնս ուրիշ կողմանէ ալ յառաջ կ'ուզեմ տանիլ, որպէս զի ստուգեմ թէ արդեօք այս առերևոյթ կամ իրական ընդդիմադրութեանս մէջ՝ յանցանքն մեր մտաց տկարութեան չէ, որ կ'ուզէ իւր չափն չափին և գործին գործածել՝ ի նոցանէ վերագոյն նիւթոյ մէջ. և անհուն էակին տիեզերական էութիւնն իւր բնական բանախօսութեան օրինաքն գտանելու ժամանակ՝ որոց կարողութիւնն այս աշխարհէս անգին ոչ հասանէ, իւր գործածն զԱստուած մարգակերպ համարել ոչ լինի: Եւ յիրաւի մեր մտաց գործածն ուրիշ բան չէ բայց եթէ հնաւոր արարածներէն որ աչքերնուս առջևն են՝ անհունին վերայ հետևանք հանել՝ որուն խելքերնիս ոչ հասանէ, որ անտարակոյս հակախօսութիւն է: — Բայց ասոր եթէ մարդս խելքն չհասնէ լուն համար՝ ուրանայ զերբորդութիւն ԱստուածՀապա ինչպէս կարէ ընդունել զվարդապետութիւն միութեան և աստուածայնին անձնաւորութեան՝ զոր սակայն կ'ընդունի բնական կրօնք ասացածին մէջ անաստուածութեան դէմ պատերազմելու համար, առանց կարելու անոն յառաջ եկած ամեն դժուարութենց բաւական բացատրութիւն տալու. զոր և կ'ուզեմ աւելի մօտանց քննել:

Բանաւորականութիւն:

20 Դեկտեմբեր:

Որգեւորական խմաստասիրութիւնն՝ որում պատիւ անհիմ պատկանելու՝ հանդէպ և ի վեր հնաւորին՝ ընդունի զանհունն. բայց երկու դէմաւոր դպրոց կը բաժնուի՝ իրարու հակառակ շաւղօք և վախճանաւոր հասանելն. մին ի սոցանէ որ թերևս աւելի տարածուած է՝ բանախօսական դպրոց անուանի, և իրեն գլուխ ճանաչէ զԱրիստոտել, և թէպէտ հնոց պէս նորա ամեն խօսքն պատգամի տեղ ոչ ընդունի՝ նա ասաց ասելով, սակայն նորա ոգին պահած է և նոյն ճամբէն երթալով աւելի բարձրերն հասած է: Բնական իրաց գիտողութենէն կը սկսի և դէմաւորապէս զգալի փորձերէ, և ի ձեռն վերացման հանրացման և բանաւորութեան՝ վերացեալ գաղափարներ կը ձևացնէ ի միտս՝ որք իրաւամբ էակք մտաւորականք անուանին: Այսպէս հնաւոր իրաց գոյութենէն՝ անհնոյ գոյութեանն կը հասնի՝ ի պատճառաւորութենէ սահելով. հետևապէս անհնոյ ծանօթութեան գաղափարին մէջ իրաւամբ ուրիշ որակներ ոչ հնար է ենթադրել՝ բայց եթէ հնաւորի որակներն՝ իրենց բարձրագոյն և վերջին զօրութեամբն մտածեալ, այսինքն զայն ամենայն կատարելութիւնս զոր կարծէ տեսանել յաշխարհի՝ անսահմանս չափի մէջ զնոսին ըմբռնելով. որովհետև սահմանաւորութիւնն անկատարութիւն կամ թերութիւն է: Այսու անհնոյ գաղափարն արուեստական գաղափար լինչ լինի՝ որոյ հանգէպ առարկան բան մի չկայ տիեզերաց մէջ. այս կերպով պարզապէս բանաւորական խմաստասիրութիւնն՝ միշտ

տարատեսակ անստուգութեան մէջ ձեռնհասամտութեան, հնոյ, որովհետեւ իւր պարզ ենթակայական խորհրդոյն՝ չկարէ Ճշմարիտ առարկայ մի գտանել՝ որոյ հետ գաղափարն բաղդատելոյս է՝ Ճշմարիտ լինելն Ճանաչելոյ համար: Միով բանիւ բանաիմաստական դըպրոցն անհնոյ սեղ անահմանն գնէ՝ հնաւորին որակներն յանհունս բարձրացնելով և յանսահմանն զնոսին հասուցանելով: — Ատի կը հետեւի որ անհնոյ և ամենայական էակի և Աստուծոյ վերայ ոչնել կարծեցեալ ծանօթութեան մէջ իրականապէս ուրիշ բան չկայ՝ բայց ինչ որ 'ի բնութեան կամ իւր մէջն գտանէ՝ անհուն առաւելութեամբ և առանց չափոյ և սահմանի:

Այսպէս է եւպէս բանաւորականութեան ընդունած Աստուածն ալ, որ է գաղափար ինչ՝ կամ լաւ ևս ասել ծանօթութիւն լոկ վերացեալ, բանաիմաստապէս սահմանեալ, օրինաւորապէս արտածեալ և ներածեալ, բայց ըստ էութեանն պարզ վերացումն մի՝ բոլորովին ենթակայական, որ ըստ ասելոյ Քանթի ոչ այլ ինչ է բայց մարդկային հասկացողութեան մէջ անհնոյ սաորոգութիւնն, զոր և բանաւարութեամբ հաստատել ուզած ժամանակ՝ որպէս հիմն գիտութեան՝ ընդհակառակն գրգռուեցաւ զայն իւր հակառիս օրինաքն, և 'ի հիմանց տապալեց՝ զայն հաստատողաց դէմ հակառակամարտ պատճառներ բերելով և ցուցանելով թէ այն գաղափարն պարզ ենթակայական էր և անհաղորդ առարկայի. և ինքն որ Աբիստոտէլեն եւս ամենէն հզօր բանասիրն կամ տրամաբանն էր՝ ակամայ անկաւ գաստաբննական տարակուսութեան կամ սկեպտականութեան մէջ: Եւ վերջապէս աւելի անհասկնալի հակասութեամբ՝ երբ իւր բարոյականն հաստատուն հիման մի վերայ ուզեց գնել, ընկալաւ զԱստուած կամ զէակն սիրելական ինքն յինքեան և 'ի վեր քան զմիտս՝ որպէս

սկիզբն պարտուց և որպէս հիմն և հաստատութեան բարոյական պարտաւորութեան՝ զոր ինքն պորգաման հրաման կ'անուանէր:

Բանաւորականաց համար Աստուծոյ գաղափարն՝ հետեւապէս և Աստուած ինքնին վերացական և մտաւոր ինչ էակ լինելով՝ ոչ ոյ վերայ շատ ազդեցութիւն չունի, և միայն գիտութեան դատարկութիւնն լեցնելու կը ծառայէ, և բանաւորական աստուածաբանութեան բանաիմաստական կատարքն կը համարի. էակ սրոյ վերայ ամենևին ազդեցութիւն չունի, որովհետեւ վերացեալ գաղափար մի՝ անձնաւորութիւն չունելով՝ ոչ կեանք ունի և ոչ զօրութիւն: Այսոր համար է որ բանաւորականք որչափ ալ կը պարծին Աստուծոյ գոյութեան հայեցողական ապացոյցեր գտած լինելնուն վերայ՝ սակայն գործնականի որ գայ՝ Աստուծոյ վերայ շատ ոչ մտածեն. վասն զի իրենց համար Աստուած սահմանագրական թագաւոր մի է՝ զոր մարդուս միտքն ստիպուած է ընդունել 'ի վեր քան զգոյութիւնս որ յաշխարհիս՝ այնոր մէջ երևցած սկիզբն և կարգն բացատրելու համար. բայց չեն կարող 'ի միտ առնուլ զարարչութիւնն որ զայն կարգս սահմանեց, և ոչ զնախախնամութիւն որ ըզնոսին պահպանէ: Աստուած մի է զոր բանաիմաստութիւնն կարևոր ճանաչէ, բայց չէ կարող ասելու թէ, ինչ է նորա էութիւնն և զինչ գործ նորա 'ի տիեզերս. և այս պատճառին չատերն կարծեն թէ Աստուած ալ երկրիս թագաւորաց պէս՝ որոց նախատիպն է, կը թագաւորէ առանց կառավարելու: Եւ այսպէս մտածելնուն պատճառն ալ այս է որ՝ ամենևին պաշտօն մի ոչ մատուցանեն նմա, ոչ աղօթեն և ոչ յօգնութիւն կոչեն զնա. անտարակոյս կարծելով թէ իւր տիեզերական լսութեան մէջ չկարէ անթիւ և յանհունս մանր էակաց վերայ խորհել որ յիւրմէ կը կախուին և իր առջև ոչինչ բաներ են. մանա-

ւանդ որ այս մասնական հոգերէն ազատելու համար ալ՝ ստեղծագործութեան ատենէն հանրական օրէնք սահմանած է, և այն օրէնքն այնպէս կարևոր գործադրութեամբ և անփոփոխ կարգով կը կառավարեն զաշխարհս՝ որ մահկանացուաց աղօթքն և պաղատանքը չէ կարող բան մի փոփոխել։

Այսպէս նկատելով զԱստուած՝ կը հետևի թէ կրօնք ասացեալն անօգուտ է, և իմաստասիրի միակ պաշտօնն այն պիտի լինի որ Աստուծոյ գաղափարն ցուցանէ և հռչակէ, որպէս կարևոր կատարք զուտ բանի և ստորոգութիւն անհնոյ յոր երթան յանգին մարդկային հոգւոց ամենայն զգածմունքն իղձք և երևակերպութիւնք։ Բայց որովհետև այս անփոփոխ էակիս համար բան մի չկայ առնելու, եթէ յիրաւի այնպիսի էակ մի կայ, և տիեզերաց հարկաւոր և անփոփոխելի օրինաց համար ալ՝ 'ի նմանէ բան մի չեմք կարող ընդունիլ՝ ուստի բոլորովին անօգուտ է մեծարել զնա և կարդալ յօգնութիւն, որպէս և ոչ իսկ սիրել զնա և երկնչիլ 'ի նմանէ. և ճշմարիտ իմաստասէրն՝ որ առանց պատճառի բան մի ոչ առնէ՝ այս ունայն արարողութիւններէ ազատ կը համարի զինքն։

Դարձեալ կը հետևի՝ (և այս բանս մեր ներկայ խնդրոյն կը վերաբերի) որ Աստուած կամ տիեզերական էակն՝ աշխարհիս մէջ գտուածներուն վերացումն և հանրացումն լինելով՝ յանհունս նոցա որակներն ընդարձակած և յանսահմանս տարածուած, ըստ ճշդագոյն բանախօսութեան Աստուծոյ գաղափարին մէջ ալ այն միայն կ՝ընդունուի՝ ինչ որ յիրս աշխարհի տեսանեմք։ Արդ հնաւորի պարունակին մէջ ոչ երբէք տեսանեմք մի էակ յերիս անձինս. ապա վարդապետութիւն Երրորդութեան՝ որ երիս անձինս դնէ 'ի միում գոյացութեան՝ եթէ ոչ հակառակ՝ դոնէ օտար է 'ի բանէ, վասն զի իւրաքանչիւր անձն

ունի զսեպհական գոյացութիւն, ապա ուրեմն այս կարծիքս ընդունելի չէ։

Այս է ահա Երրորդութեան խնդրոյն վրայօք՝ պարզ բանաւորականութեան մտածածն։ Ես ալ երբեմն այս մտաց համակարծիք էի մինչև 'ի կէտ մի, որովհետև որչափ ալ միտքս այնպէս կը ցուցանէր՝ սակայն խիղճս 'ի ծածուկ կը բողոքէր, և յետոյ աւելի լուսաւորուեցաւ, և իմաստասիրութեան վարդապետութեան մէջ աստիճանաբար յառաջ երթալով՝ տեսի որ այս բովանդակութիւնս կամ եզրակացութիւնս՝ բաւական պատճառաց վրայ հաստատուած չէր. ինչպէս որ պիտի ջանամ ես ինձ ցուցանել վաղուան օրագրութեանս մէջ։ Այս օր այսչափս հերիք է, գլուխս հոգնեցաւ։

Պլատոնականութիւն։

21 Դեկտեմբեր։

Երրորդութեան յԱստուած վարդապետութեան դէմ՝ բանաւորականութեան հանած բովանդակութիւններն կամ եզրակացութիւններն ընդունելի չեն ասացի, որովհետև բանն հնաւորն անհունի վերայ յարմարցնելով՝ ուրիշ բան ոչ առնէ՝ բայց եթէ մըտաց մէջ հնաւորի գաղափար մի տալ յանսահմանն ձգտեալ, որ պարզապէս բնութենականութիւն կամ մարդակերպութիւն է՝ անկարող տալոյ զճշմարիտ ծանօթութիւն անհնոյ։ — Իսկ ոգևորական պլատոնականութեան մէջ այսպէս չէ՝ որ անհնոյ առջև բանախօսութիւն ոչ գործածէ՝ այլ բնազանցութիւն և էակաբանութիւն, և ուղղակի առ նոյն ինքն էակն կը դիմէ՝ նորա զօրութեամբն հոգւոց մէջ այնոր ծընած գաղափարն ըմբռնելու համար։ Եւ այս գաղա-

փարս ամբողջ ձևացնելու համար վերացումն և հան-
րացումն ոչ բանեցնէ՝ յորոց ուրիշ բան յառաջ ոչ
գան՝ բայց եթէ մտաւորական էակներ՝ որ առար-
կայական գոյութիւն չունին:

Պլատոնականութիւնն որ աշխարհս լուսաւորող
իմաստասիրութեանց մէջ՝ ամենէն գերազանցն է՝ մը-
տաւորական ներհայեցութեամբ անցանէ անդր քան
զսահմանս աշխարհի զգայութեանց և բանի, և ուղ-
ղակի և վերամբարձ կերպով կը վերանայ 'ի գաղա-
փարն ինքն իսկ Էակին, յԷակն էակաց կամ Այնմ
որ էն: Այսու բարձրագոյն ներհայեցութեամբ կեն-
դանի վերաբերութեամբ կը հաղորդի ընդ Էակին
կենդանւոյ, և ոչ թէ միայն մարդկային հասկացո-
ղութեան ծանօթութիւններովն տարազներովն և ըս-
տորոգութիւններովն: Ըստ Պլատոնի՝ հոգին ոգե-
կան իմն աչք է՝ որ իւրաքանչիւր ինչ տեսանէ իրին
սեպհական զգայութեամբ, զբնական իրս բնական
տեսութեամբ, և զբարոյականն՝ բարոյական զգայու-
թեամբ կամ գիտակցութեամբ, զաստուածայինն՝
աստուածային զգայութեամբ, որ զմարդ բնականա-
պէս կրօնական էակ մի յարգարէ: Այս ամեն աստի-
ճաններուս համեմատ՝ փոքր 'ի շատէ լուսաւոր՝ և
ստոյգ ըմբռնողութիւն ունի՝ որ իւր ըմբռնածին ա-
ռարկայական գոյութիւնն աներկմիտ կերպով կը հաս-
տատէ՝ թէ և իւր փորձառութեան վկայութենէն
զատ ուրիշ ապացոյց չէ կարող ցուցանել: Եւ որպէս
զգալի իրաց համար՝ եթէ զգայութեանց ստուգու-
թեան վերայ տարակուսիմք՝ որ և իցէ պատճառա-
բանութիւն անբաւական է իրաց առարկայկանու-
թիւնն հաստատելու, այսպէս ալ յաստուածայինս
և 'ի բնազանցականս տիեզերական Էակին գաղափարն
կամ ծանօթութիւնն հաստատելու համար բերուած
պատճառաբանութիւններն՝ նորա առարկայկան ըս-
տուգութիւնն չեն կարող տալ՝ առանց աստուա-

ծային զգայութեան ներհայեցութեանն՝ որ է տրմատ
մարդկային հաւատոց գերմարդկային հաւատալեաց
համար:

Ուրեմն պլատոնականութեան մտաւորական և վեր-
ամբարձ ներհայեցութեամբ՝ որ 'ի մարդումս եղած
աստուածային զգայութեան գործն կամ պաշտօնն
է, հոգին անմիջապէս անհնոյն կը հպաւորի, և ոչ
թէ միայն նորա ստուերին և երկրաւոր ուրուակա-
նին՝ ինչպէս ճեմական աղանդն կը վարդապետէ:
Եւ անհունն՝ զոր հոգին տեսանէ և թափանցէ՝ ոչ
եթէ անսահմանն է, այլ տիեզերական Էակն ինքնին
բացարձակ՝ ունող զլիութիւն գոյութեան՝ որոյ ինքն
յաւիտենական աղբիւրն է, և այս Էակս կենդանի՝
որ քան զգոյութիւն գոյաւոր է՝ որովհետև ինքն իսկ
է կենաց սկիզբն՝ ունի անձնաւորութիւն անհուն, այս-
ինքն կամս ամենազօր, գիտութիւն անսահման, կարո-
ղութիւն անչափ, միով բանիւ զամենայն կարողու-
թիւնս էականս աստուածային բնութեան: Եւ այս
անձս՝ մեր անձին և աշխարհիս հետ հաղորդ է՝ իւր նա-
խախնամութեամբն և սիրով, ուստի և մարդիկ կա-
րեն իրենց պիտոյից և թշուառութեանց ժամանակ
դիմել առ նա՝ օգնութիւն և բարիք ընդունելու հա-
մար: Զի է 'ի նմա հոգի՝ մարդուս հոգւոյն պատաս-
խանող, և որպէս օրէնսդիրն կամ պետ՝ որչափ ալ
իւր դրած օրինացն հետևի, 'ի նոցանէ ոչ կաշկանդի
որովհետև ինքն է զայնս հաստատողն, ապա ուրեմն
կարելի և յուսալի է որ մարդ այն օրինաց անխու-
սափելի հարկէն ազատի՝ գերագոյն Էակին գթու-
թեան և բարութեան դիմելով, և այսոր համար կրօ-
նական պաշտամունք և նոցա ոգին սեպուած աղօթ-
քը՝ շատ բանաւոր է և զօրաւոր և յոյս տուող:

Ահաւասիկ այսոր համար է որ պլատոնականու-
թիւնն ամրացուցանէ զկրօնս և օժանդակէ նմին՝ փո-
խանակ տապալելոյ զնոյն և աւերելոյ՝ որպէս առնէ

բանաւորականութիւնն, որ զԱստուած վերացեալ ինչ համարելով՝ աղօթքն և պաշտօն անտեղի կամ գոնէ անօգուտ կը համարի։ Դարձեալ Երրորդութեան վարդապետութեան նկատմամբ՝ պլատոնականութիւնն այնոր դէմ առարկութիւններ ոչ հանէ աշխարհիս և մտաց օրէնքն նորա դէմ զինելով՝ որոց հակառակ կ'երևի վարդապետութիւնս, որովհետև ինքն իսկ այս օրէնքէս չկաշկանդուելով՝ մարդուս կատարելութիւն համարի զայնս խզելն՝ վերնագոյն աշխարհքին հետ հաղորդակցելու և աստուածութեան մերձենալու համար։ Կ'ուսուցանէ որ Աստուծոյ և երկնային իրաց վրայ մարդս բան մի չէ կարող գիտել՝ բայց ինչ որ Աստուած ինքնին ուսոյց մարդոյ անձամբ կամ 'ի ձեռն այնոցիկ զորս զրկեց յամենայն տեղիս և յամենայն ժամանակի. այսոր համար է որ Պլատոն այս նիւթոց մէջ 'ի վկայութիւն կոչէ զաւանդութիւնս նախնեաց և զմարգարէական յայտնութիւնս աստուածարելոց անձանց կամ ոգւոց՝ որ են պաշտօնեայք ընդ մէջ երկնից և երկրի։ Եւ այս խնդրոյս մէջ շատ բաներ ալ ուսոյց՝ զորս այսօր իւր աշակերտներն ոչ ընդունին, թէ և նորա դրած բարոյական և աստուածային զգայութիւններն կը ճանաչեն, բայց գերբնական իրաց և երկնային յայտնութեանց ոչ հաւատան։

Արդեօք իրաւունք ունիմք թէ չէ. արդեօք Պլատոն քան զմեզ տկարամիտ ոք էր, թէ մեք քան զինքն կորովամիտ. և աւելի ճշմարիտն այն չէ՞ որ մեր այս հակասական գիրքի մէջ գտնուիլնիս ուրիշ բանէ յառաջ չդար՝ բայց եթէ մեր ծածուկ ընդդիմութենէն զոր ունիմք քրիստոնէական յայտնութեան դէմ՝ նորա ազդեցութենէն և իշխանութենէն ազատելու համար։ Առ ժամս այսոր վրայ բան մի չեմ կարող ասել, և մեր խնդրէն ալ դուրս է, բայց զայս ինչ՝ կարեմ հաստատել՝ որ Պլատոնի ճշմարիտ աշակերտ

մի Երրորդութեան վարդապետութեան համար չէ կարող ասել թէ անմտութիւն կամ անտեղութիւն է և անընդունելի՝ թէ և զայն ինքն չընդունի. վասն զի նոյն ինքն Պլատոնի համար կը զրուցուի թէ այս խորհրդոյս վրայ նախազգացութիւն մի ունեցած էր և կերպիւ իւիք մարգարէացել էր թէ և շատ մթին խօսքերով՝ զորս ես ալ մինչև ցայժմ աննշան խօսքեր համարէի։

Միութիւն անհուն։

23 Դեկտեմբեր։

Որչափ ալ իմաստասէր եմ՝ սակայն չհասկցած կամ մեկնել չկարացած բանս ուրանալ կամ մերժելն ինձ իրաւունք ոչ համարիմ. և ոչ կարծեմ թէ իմ միտքս ճշմարտութեան չափն է, և այնչափ սնապարծութիւն չունիմ՝ որ ինքզինքս իրականութեան անբողոքելի դատաւորն սեպեմ. որովհետև թէ գիտութեանց և թէ գործնական կենաց մէջ՝ շատ սկզբունք և գործեր կան՝ որ ինձ համար անբացատրելի են, թէ և ամեն ատեն առջևս կ'ելնեն և ստիպեալ եմ զայնս գործածելու իմ միտքս բանեցուցած ժամանակ։ Այսոր համար է որ Երրորդութեան վարդապետութեան անհասանելի լինելն՝ ինձ բաւական պատճառ ոչ երևի՝ զայն մերժելու համար, մանաւանդ եթէ Պլատոն ալ ինչպէս որ կարծուի՝ գաղափար մի ունէր այնոր վրայ՝ թէ և շփոթ։ Մանաւանդ որ զայն մերժելով ալ շատ բան մի ոչ վաստկիմք. վասն զի նոյն կերպով և նոյն պատճառաւ Աստուծոյ միութիւնն և նորա գլխաւոր ստորոգելիքն ալ կարեմք հերքել. և այն ատեն՝ երեք աստուածներ ունելու վախէն՝ ինչպէս որ ասեն, ամենևին աստուած չեմք

ունենար, որ իմ իմաստասիրութեանս ոչ երբէք կը յարմարի:

Եւ յիրաւի թէպէտ և բանաւորականութիւնն՝ անաստուած լինել չուզելուն համար՝ կը ջանայ Աստուծոյ գոյութիւնն և միութիւնն ցուցանել ամենայն տեսակ պատճառաբանութեամբք՝ որոց զօրութիւնն ոչ ուրանամ, սակայն ինչ գիտէ և զինչ ուսուցանէ մեզ անհուն Իակին վրայ՝ ինքն յինքեան նկատեալ և այլ էակաց հետ ունեցած յարաբերութեան վրայօք: Ենթադրելով ևս թէ պարզ վերացեալ դաղափար մի չհամարեսցի զայն՝ իբրև բուրգի ծայրն յարմարագոյն կերպով աւարտելու համար դրուած, որով բանի մի բացատրութիւն չըտրուիր, և միայն զենթակայական ինչ պայման բացատրելուկու գայ կամ մարդկային հասկացողութեան ստորոգութիւն մի մեկնաբանելու կը ծառայէ, և համարելով ևս թէ բանաւորականութիւնն առարկայական ինչ իրականութիւն ևս շնորհէ աստուածային դաղափարին և էութիւն ինչ ևս գոյացական և անձնաւորական, այսու ամենայնիւ չկարէ ցուցանել թէ ինչ է այս Իակս էակաց և այս անհուն գոյացութիւնս, որ ամեն տեղ է, և 'ի նմա շարժին այլ ամենայն գոյացութիւնք եթէ ոգեղէնք և եթէ նիւթեղէնք, անդադար տիեզերական կենօք կենդանացեալք, և ոչ բնաւ 'ի նմա ընկղմեալք. և ուստի ամենայն էակք մշտնջենաբար ընդունին զիւրեանց սնունդ՝ առանց իրենց բնութիւնն նորա մէջ նոյնալու՝ թէ և միշտ առ այն դիմեն, որ այն իսկ պիտի լինէր իրենց կատարելութիւնն: Ինչ է արդեօք անձնաւորութիւն մի անհուն և տիեզերական՝ որ 'ի միջոցէ և 'ի ժամանակէ ոչ պարփակի և զամենայն ինչ լնու, և ինքն յայլմէ ոչ լնանի. ով կարէ 'ի միտ առնուլ զանբաւութիւնս զայս և զմշտնջենաւորութիւն:

Դարձեալ եթէ խորհիմք 'թէ այս տիեզերական գոյացութիւնս կենդանի խոհուն և սիրող անձնաւորութիւն ինչ է, և մեք մեզ հարցանեմք թէ ինչ է արդեօք նորա գործն իւր ամենուրեքութեան և յաւիտենականութեան մէջ՝ մանաւանդ յառաջ քան զստեղծագործութիւն հնաւոր էակաց՝ որ կերպիւ իւիք առարկայ եղեն իւր սիրոյն և մտաց և գործունէութեանն, այս ամեն հարցուածներուս մարդկային միտք պատասխան մի չեն կարող տալ և առիթ մի ցուցանել գործելոյ և պատճառ ինչ շարժման՝ այս տիեզերական միայնութեան մէջ և այս աստուածութեան անապատին մէջ, կամ թէ կ'ուզես համարիլ այս միայնակ գոյութեան լրութեանն մէջ՝ յորում չըկայ ինչ մի փափաքելի և խնդրելի, որովհետև այնոր մէջ բան մի ոչ պակասի և բան մի չկարէ յաւելեալ լինել:

Այս հարցմանցս պատասխան տալ ուզելով բանաւորականք՝ 'ի յաւիտենից այսպէս եղած է ասեն, և ստիպեալ իսկ են այսպէս ասելու. և որովհետև սկիզբն եղած չէ՝ վախճան ալ պիտի չլինի, այնպէս որ մարդուս միտքն՝ եթէ տիեզերաց օրինաց հարկաւորութիւնն և հանրականութիւնն քարոզէ՝ անճոզոպրելի հակառակամարտ օրինաց մէջ կը բռնուի: Առանց պատճառի արգասիք ոչ լինի ասէ միտքն, և ահաւասիկ այս գիպուածիս մէջ կ'ընդունի գործ մի՝ որ պատճառ չունի. և թէպէտ պատասխան տայ թէ գործս այս միակ յիւրում սեռի ոչ է արգասիք՝ որովհետև ոչ յումեքէ յառաջ եկեալ է, սակայն յայտնի է որ Ոչ արգասիք առանց պատճառի առածն կամ սկիզբն պատճառաւորութեան՝ որ մտաց և խորհրդոյ հիմնական օրինաց մին է, այս պարագայիս մէջ բացառութիւն մի կ'ունենայ՝ կամ գոնէ առժամանակեայ դադարում մի, զոր հրաշից վրայ զրուցուած ժամանակ ոչ ընդունի. և եթէ ընդհակառակն պատ-

ճառաւորութիւն ասացեալ օրինաց զօրութիւնն պահպանելու համար՝ զնոյն անհուն Էակին վրայ ալ դնէ՝ որպէս հնաւոր էակաց՝ հարկաւ համաստուածութեան մէջ անկանի՝ որ կը պարծի իւր աստուածագործութեան վրայ՝ թէ և մեզ ոչ ասէ թէ ուստի նորա նիւթն առած է: Եւ չմիաբանութեամբ կ'ուզէ աղատիլ ասելով թէ կարելի չէ յանհունս պատճառէ պատճառ վեր ելնել՝ այլ վերջապէս հարկ է 'ի վայր ինչ զկայ առնուլ. որում կարեմք պատասխանել թէ իմաստասիրաբար և թէ բանաւորաբար այս բացառութեանս հարկաւորութիւնն մեք ոչ տեսանեմք, որովհետև պատճառաւորութիւն ասացեալն տիեզերական օրէնք է:

Հապա ինչ ասելիք ունին նոքա որ զտիեզերս յոչընչէ ստեղծեալ կը համարին՝ որ բոլորովին քրիստոնէութեան գաղափար է, ինչպէս ոչնչիւ բան մի կարէ լինել: Յոչնչէ ոչինչ ասէ առածն բանաւորական, և ամենայն նախկին իմաստասիրութիւնն՝ Պլատոնին ևս 'ի միասին առեալ, այս առածիս վրայ հաստատուելով՝ կ'ընդունէին թէ աշխարհս իրէ մի եղեալ է, կամ որպէս արտադրութիւն կամ ծաւալումն ինչ անհնոյ՝ ուստի յառաջ գայր համաստուածութիւն՝ զտիեզերս յաւելեալ ինչ մասն համարելով Աստուծոյ, կամ որպէս կերպաւորութիւն կամ յարդարումն կանխագոյակ նիւթոյ՝ որով նիւթն մշտնջենաւորաբակից լինի ընդ Աստուծոյ գերագոյն ճարտարապետի, աստի ալ յառաջ գայր մանիքեցւոց մոլորութիւնն կամ երկաւորութիւնն: Արդ այս երկու կարծեօքս ալ արարիչ և արարչութիւն ոչ մնայ, հապա ըստ առաջնոյն՝ ծաւալումն ինչ անհնոյ, և ըստ երկրորդին գործածութիւն կամ յարդարումն նախագոյակ նիւթոյ: Այսպէս բանն չկարէ ընդունել զստեղծագործութիւն յոչնչէ՝ զի հակառակ է օրինաց Յոչնչէ ոչինչ. որովհետև բան մի ստեղծելու համար կամ հնաւորն յանհունէն հանելու է՝ որով լինի համաստուածեան, կամ յաւիտենական նիւթն գործածելու է՝ որով լինի մանիքէական:

Այս դժուարութենէս ուրիշ մ'ալ կը ծագի՝ նոյնչափ ծանր, որ է այս. Ինչո՛ւ Աստուածն միակ որ իւրով անբաւութեամբն զամենայն ինչ լնոյր և իւր միայնութեան մէջ անհուն երանութիւն կը վայելէր՝ այն երանութիւնն որ Էակին լրումն և կատարելութիւնն է՝ թէ և չեմք կարող հասկնալ թէ այն բացարձակ միայնութեան մէջ ինչ երջանկութիւն կարէր լինել, ինչո՞ւ ասեմ իր անհնութենէն և կատարեալ հանգստենէն ելաւ, և հնաւոր էակներ ստեղծեց՝ որ այնչափ սակաւ արժանաւորութիւն ունին իւր սիրոյն խնամոցն: Որովհետև ասի թէ անդէն 'ի սկզբան իրեն դէմ ապստամբեցան, և թէպէտ մարդ ինձ պէս սկզբնական մեղքն ալ չընդունի՝ զոր չեմ կարացած հասկնալ, սակայն չէ կարող ուրանալ որ այս էակներս իրենց անկարգութիւններովն և ոճիրներով՝ բիւր կերպերով անդադար զինքն կը նախատեն: Դարձեալ Ինքն որ անփոփոխելի է, և 'ի յաւիտենից ունեցած է զխորհուրդ և զկամս ստեղծելոյ հնաւոր էակս՝ ինչո՛ւ արար զնոսա աւելի այն ատեն և ոչ ուրիշ ժամանակ, կամ ուրիշ կերպ ասելով ինչո՛ւ իւր յաւիտենականութեան առջին զժամանակն կարգեց: Խոհուն էակ մի, ևս առաւել խոհականութիւնն գերագոյն անպատճառ գործ մի ոչ առնէ, և ոչ առանց բաւական պատճառի: Հապա իմաստասէրք՝ դուք որ ձեր մտաց վրայ կը պարծիք և ասէք թէ ամենայն ինչ մեկնելու էք, և ինչ որ միտքն կը մեկնէ զայն միայն ճշմարիտ համարելու է, եթէ ամենակարող Աստուծոյ կը հաւատաք որոյ անհուն իմաստութիւնն զաշխարհս ստեղծեց և իւրով նախախնամութեամբ զայն կը կառավարէ, կ'երդուընցընեմ զձեզ ծանուցէք ինձ թէ ընդէր և ինչպէս եղած է այս խորհրդա-

ւոր անցքս յԱստուած՝ յինքենէ առ արտաքս, որով Աստուած ելնելով իւր ինքնագոյութենէն և անփոփոխելիութենէն, իւր անհուն եսին առջև՝ որում բան մի ոչ պակասի ոչ փառք և ոչ երանութիւն, գրել է սահմանաւոր և անկատար ոչ-եսեր, որ զերկինս և զերկիր պիտի խռովէին:

Վերջապէս ինչպէս պիտի աւարտի այս ամեն բան, ո՛ւր պիտի յանգի ստեղծագործութիւնն և ի՞նչ պիտի լինի այնոր վախճանն: Տարակոյս չկայ թէ 'ի բարին, որովհետև Նախախնամութիւն մի կայ և գերագոյն իմաստութիւնն չկարէ վրիպել 'ի կատարումն ածելոյ իւր դիտմունքն և հասանելոյ 'ի վախճան իւր: Բայց ո՞յք են իւր վերջին վախճաններն, և ի՞նչ պիտի լինի արարչագործութեան մեծ արարուածոյն հանգոյցին լուծումն՝ այսչափ կրած և դեռ վերջն չհասած կրելի փոփոխութիւններէն ետև: Վասն զի չարն այս աշխարհքիս մէջ կայ և կարծես թէ կը տիրէ ևս: Մարդկանց կեանքն մշտնջենաւոր պատերազմ մի է ընդ երկնից՝ ընդ միմեանս՝ նաև իւրաքանչիւր ոք ընդ անձին: Ի՞նչ պիտի լինի վերջնական վախճանն այս մեծ պատերազմիս՝ որ անընդհատ կը նորոգուի դարուց 'ի դարս: Եւ եթէ անվախճանն որ է Աստուած վերջապէս յաղթող պիտի ելնէ՝ որում տարակոյս չկայ, ի՞նչ պիտի լինին յաղթեալքն 'ի տիեզերական նորոգութեան իրաց՝ երբ բարին յաղթէ և Աստուած թագաւորէ: Եթէ չարն իւր սկզբան մէջ պիտի ապրի մնայ՝ այսինքն յաղթահարելոց կամաց մէջ՝ որ թէ և յաղթեալ բայց միշտ ապստամբ պիտի մնան՝ թէ և ընկճեալ և անզօր 'ի զօրութենէ երկնից բարձանց՝ որ զնոսին պիտի նուաճէ՝ բայց պիտի չկարէ հնազանդեցնել, որչափ ալ այս ամբարիշտ հոգիներն թաղուած ևս լինին խաւարի և ցաւոց վհին մէջ՝ որ դժոխք կը կոչուի, սակայն այսու ամենայնիւ յաւէժական լուսոյն քով՝ ստուեր մի պիտի

չհամարուի՞, և հիւանդութի՞ւն տիեզերական կենաց մէջ, և արա՞տ աստուածային գործոց վրայ, թշուառութի՞ւն յերջանկութեան, և միով բանիւ չար մի 'ի բարւոջ: Արդեօք չարն ալ իւր յաւիտենականութեա՞մբն պիտի մշտնջենաւորէ:

Այս օր աւելի հեռի ոչ կամիմ երթալ: Ինձ կ'երևի թէ բաւական է այսչափս ցուցանելու համար՝ որ Եթէ վարդապետութիւն մի բացատրելու դժուարութիւնն կամ անհնարութիւնն բաւական պատճառ լինէր զայն ուրանալու՝ նոյն պատճառն կարէ նոյնչափ յարմարիլ աստուածութեան միութեանն վրայ՝ որչափ Երրորդութեան, որովհետև աստուածութեան երեք անձնաւորութենէն աւելի դիւրըմբռնելի չէ մի միայն և տիեզերական անձի վարդապետութիւնն ալ. և սակայն որչափ այս վերջինս ալ դժուարին և մթին է՝ սակայն ոգևորական բանաւորականք ընդունին զայն, այսինքն զմի Աստուած անձնաւոր. Թէ և ոչ գիտեն թէ ի՞նչ բանի գործածեն զնա՝ ոչ ինքն յինքեան իւր յաւիտենականութեան մէջ, և ոչ իւր յարաբերութեանց մէջ ընդ այլոց էակաց 'ի ժամանակի: Եւ հանրական օրինաց առջև՝ որոց անփոփոխութիւնն բարձրաձայն կը հռչակեն՝ Նախախնամութիւնն ալ զիրենք կը շփոթէ, և աստուածային գթութիւնն ու սէրն ալ չեն կարող ըմբռնել. բայց վերջապէս ինչ որ է կ'ընդունին՝ գոնէ տեղ մի լեցնելու համար՝ որ մի գուցէ ուրիշ բան նորա տեղն բռնէ: Այս բանիս համար ոչ հասկանամ թէ ինչո՛ւ այնչափ դժուարութիւն կը քաշեն Երրորդութեան նկատմամբ. ինձ այնպէս կ'երևի որ Երրորդութեան 'ի միութեան բացատրութիւնն կամ գոնէ մտօք յղացումն կամ ըմբռնումն՝ այլ աւելի ընդունելի է՝ քան թէ միութիւնն բացարձակ անբաւ անհուն և անփոփոխ յիւրում միայնութեան յառաջ քան զստեղծագործութիւն, առանց զանազանութեան առանց

յարաբերութեան և առանց իսկ պատճառ մի ունե-
նալոյ 'ի գործել, թէ և Աստուծոյ համար ասեն թէ
պարզ ոգի մի է միշտ գործօն։

Տեսութիւն 'ի վերայ Երրորդութեան։

27 Դեկտեմբեր։

Միաւորականաց և երրորդութիւն ընդունողաց
կարծիքն ինձ համար բոլորովին անտարբեր խնդիր մի
է, մանաւանդ թէ իմ նախընթաց իմաստասիրական
ասպարիզիս մէջ աւելի առաջնոց կարծիքն ինձ ընդ-
ունելի երեւցած էր։ Բայց հիմա շատ օրեր այսոր
վրայ մտածելէն ետև՝ ինձ այնպէս կը թուի, թէ ճշ-
մարտութիւնն այս երկու վարդապետութեանց միա-
ւորութեան մէջ է, զոր կարծես թէ կաթողիկէ Եկե-
ղեցին կը դաւանի Սրբոյն Աթանասի հանդանակին
այս խօսքերովս. Զերրորդութիւն 'ի միութեան պաշտեմք։ Մի
թէ չեմք կարող ասել թէ վարդապետութիւն Եր-
րորդութեան՝ աստուածային միութեան վարդապե-
տութեանն զարգացումն կամ բացայայտութիւնն է,
և մի Աստուած զոր միայն հրեայք պաշտէին յառաջ
քան զԱւետարանն՝ քրիստոնէական յայտնութեան
ձեռօք երրորդութեամբ յայտնուեցաւ. այնպէս որ
Յիսուսի Քրիստոսի բանիւն՝ զարգացում մի եղև՝ ոչ
յԱստուած որ անփոփոխելի է, և որ չկարէ լինել ա-
սէ Հէկէլ 'ի ժամանակի և 'ի միտս մարդկայինս, այլ
'ի գիտութեանն Աստուծոյ յաշխարհիս յայսմիկ, և
դրական ծանօթութեամբ աստուածայնոյ Էակին՝ որ
տուաւ մարդկան 'ի ձեռն Աւետարանի։

Տարակոյս չկայ՝ որ իմ ասացածս Աստուծոյ գոյա-
ցական գաղափարին համար է՝ որպէս ընդունէին
հրէայք և ճշմարիտ միաստուածեանք, և ոչ թէ բա-
նաւորականաց ընդունած աստուծոյ վերացեալ ծա-

նօթութեանն վրայ է խօսքս, որ մտաց անպտուղ
գիւտ մի է, և կենդանի հետևանք մի չունի, և այսոր
համար ալ բանաւորականութիւնն կրօնք մի սահմա-
նած չէ, և ոչ իսկ ողջամիտ բարոյականի հրահանգ մի
կարացել է տալ։

Իսրայելի Աստուածն ինքզինքն կը կոչէ Այն որ էն,
Աստուած կենդանի, Աստուած հզօր, Աստուած նա-
խանձոտ, Աստուած ոչ մեռելոց այլ կենդանեաց։
Եւ յիրաւի իր ընտրեալ ժողովրդեան հետ ունե-
ցած յարաբերութիւններն միշտ կենդանի են. իր
հրեշտակաց և մարդարէից ձեռօքն նոցա հետ կը խօ-
սի. և ծանուցանէ թէ ինքն է նոցա թագաւորն տէրն
և իշխանն, և այսու անուամբ տայ նոցա օրէնս և
հրամանս 'ի ձեռն Մովսիսի։ Քանի որ իր խօսքին կը
հնազանդին՝ կը ծաղկին կը բարգաւաճեն, բայց ան-
տի հեռացածնուն պէս՝ ամեն տեսակ թշուառու-
թիւն վրանին կը հասնի. այնպէս որ բոլորովին անձ-
նական կառավարութիւն մի է կամ թէ ասեմք աս-
տուածպետական. բայց որովհետև միայն հրէից հա-
մար է այս կառավարութիւնս, նոցա հետ ունեցած յա-
րաբերութիւններովն զինքն Աստուած ճանաչել կու-
տայ՝ որչափ որ հարկաւոր էր՝ իրենց մասնական ա-
ռաքելութեանն համար որ էր Աստուծոյ ճշմարիտ
գաղափարն աշխարհիս վրայ պահել։ Տէրն օրէնսդիրն
և դատաւորն՝ դեռ իբրև Հայր յայտնուած չէր ի-
րենց. բայց այս յայտնութիւնս երբոր հասնէր՝ աս-
տուածայնոց իրաց գիտութիւնն ալ ամենամեծ յա-
ռաջադիմութիւն մի պիտի առնէր, և աշխարհս նոր
յայտնութիւն մի պիտի ունենար։ Արդ նախ և ա-
ռաջ Յիսուս Քրիստոս եղև՝ որ Որդի Աստուծոյ
զինքն ծանուցանելով և մի ընդ Հօր իւրում, գործե-
լով ընդ նմա և վասն նորա, ասաց. « Հայր իմ հայր
ձեր է, և որպէս ես մի եմ ընդ նմա, դուք ևս պար-
տիք մի լինել ընդ մեզ »։ Որք հոգւովն Աստուծոյ

վարին՝ նորա որդիքն են, և իրաւունք ունին գո-
չելու յերկինս 'ի վեր Աբբայ, Հայր. Հայր մեր որ յերկինս
ես։ Այսինքն՝ թէ միայն Երրորդութեան վարդապե-
տութեամբն է որ աստուածային հայրութիւնն
յայտնի եղև՝ յայտնութեամբ խորհրդոց աստուա-
ծային ծննդագործութեանն՝ կատարելոյ 'ի յաւի-
տենից՝ զուգընթացութեամբ երից անձանց յԱս-
տուած, որ են Հայր, Որդի և Հոգի սուրբ։ — Յոր-
մէ յառաջ գայ՝ զի 'ի նմա՝ որ 'ի յաւիտենից է և
անսկիզբն՝ զի ինքն իսկ է սկիզբն էութեան, գոյ ար-
դարև ծննդագործութիւն՝ որ է գերագոյն գործ
կենդանութեան, և 'ի նմանէ է սկիզբն և պահ-
պանութիւն և յաւէրժութիւն կենաց։ — Ապա
ուրեմն գոյ յԱստուած գերդաստան իմն, որովհետև
յաւիտենական ծննդեամբն Որդին միշտ յանդիման
կայ Հօր, և սոքա անքակտելի միացեալք են սիրով
կամ Ոգւով կենաց բղխելոյ յանդրադարձ գործոյ
նոցին և 'ի հակագործութենէ։

Վասն որոյ անճահ է այլ ևս կոչել զԱստուած
մենաւոր մեծ. քանզի է 'ի նմա մշանջենաւոր և միա-
նական ընկերութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյ։
Եւ որպէս ամենայն ուրեք յաշխարհի միշտ երեք ե-
ղերք պիտին առ 'ի կազմել բնական ինչ կամ բարո-
յական գոյութիւն, այսպէս ևս երեք եղերք են 'ի
տիեզերական գոյութեան, որ և ամրագոյն է 'ի հաս-
տատութիւնս, քանզի 'ի նմա միայն երեք եղերք մի
են գոյացութեամբ կամ՝ թէ ասել համագոյական՝
որ ոչ երբէք գտանի 'ի հնաւոր արարածս։ Եւ աս-
տի մարթիմք համարել եթէ երրորդութիւն 'ի մի-
ութեան՝ միայն կրօնական վարդապետութիւն չէ,
այլ և նախակարգ և տիեզերական օրէնք կենաց, և
կրօնից հիմն լինելուն պատճառն ալ այն է՝ որ գոյու-
թեան ալ սկիզբն է։

Աստի դարձեալ 'ի միտ առնումք թէ ինչ գործէր

Աստուած յիւրում անբաւութեան՝ յառաջ քան
զստեղծագործութիւն. կեայր յանսպառ և 'ի յա-
ւէժական երանութեան իւրում վերանորոգելոյ
միշտ յաւիտենական ծննդագործութեամբ, այս մշ-
տաշարժ ծագմամբ իւրով յանձին Որդւոյ՝ որ է
լոյս փառաց և նկարագիր էութեան նորա և պատ-
կեր անթերի իւրոյ կատարելութեանն. և 'ի յաւէ-
ժական անդրադարձութենէ աստի Հօր և Որդւոյ՝
ցայտէր տիեզերական գիտութիւն Իակին, կամ ծա-
նօթութիւնն զոր աստուածութիւնն ունի զանձնէ
ներգործութեամբ Բանին իւրոյ, գիտութիւն ան-
հուն յանհուն միտս, և յանսպառելի լոյս աստուա-
ծային տեսութեանն յաւելոյր կցորդութեամբ Ոգ-
ւոյն՝ անճառելի փափկութիւն անսահման սիրոյ։
Արդ եթէ այսպէս է որպէս եսս համարիմ այժմ՝
ապա առաւելաւն իսկ գոն վայելք մտաց և սրտի ընդ
բովանդակ իսկ յաւիտենականութիւն. ապա 'ի զուր
է հարցանել թէ զինչ գործ էր Աստուծոյ միայնոյ
յառաջ քան զարարչագործութիւն տիեզերաց։

Տեսութիւն 'ի վերայ Երրորդութեան
(շարայարութիւն)։

30 Դեկտեմբեր։

Այս օրերս միշտ երրորդութեան 'ի միութեան
նիւթոյն վրայ կը մտածեմ, որ աստի ամիս մի յառաջ
մտքէս անգամ ոչ անցանէր։ Այս նիւթս գրեթէ իմ
մտաւորական կենացս կեդրոնն՝ և խորհրդածու-
թեանս միակ առարկայն եղած է, այնպէս որ ամեն
տեղ նոյնն կարծեմ թէ կը տեսնեմ՝ թէ յանձին ի-
մում և թէ յինէն դուրս։ Այս բանիս մէջ գոգցես
Բաղաամու կը նմանիմ՝ որ զԻսրայէլ անիծանելու հա-

մար կոչուելով զԱստուած կը փառաբանէր։ Բայց ես չէ թէ Աւետարանի Աստուծոյն թշնամի էի ; այլ միայն անտարբեր. որովհետև Քրիստոսի առաքելութեան և խօսքին վրայ հաւատք չունելով ամեն տեսակ յայտնութեանց և ամեն դրական կրօնից անխըտիր էի. և իմաստասիրական գիտութեամբս կը համարէի թէ Երրորդութեան վարդապետութիւնն որպէս նաև միւսերն քահանայից հնարք էին՝ իրենց անհասանելիութեամբն ժողովրդեան մտաց վրայ իշխելու և տիրապետելու համար հնարուած, Տակիտոսի ասացածին պէս Անծանօթն վսեմ համարի։ Նաև կէս մի համոզուած էի որ մասնաւորապէս Երրորդութեան վարդապետութիւնն բոլորովին ազատ չէր 'ի կռապաշտութեան մեղադրանաց՝ ինչպէս որ կը բամբասէին հրէայք, մահմետականք և միաւորականք։ Այս նախապաշարմունքս հիմա մտքէս փարատած կամ գոնէ տկարացած է, և այս վարդապետութիւնս՝ զոր իմաստասիրական ամբարտաւանութեամբս կարծէի թէ ստորին կերպարանք մի է բացարձակի պարզ գաղափարին, կամ անհունի մարդակերպական և գեղագիտական նշանակ մի է, այժմ պատկառանօք իմն կը հայիմ այնոր վրայ՝ տեսնելով անտի յառաջ եկած պաղաւէտ հետևանքն։

Օրինակի համար՝ տես ինչ անցաւ յանկարծ այս առաւօտ իմ մտքէս, և այն ինքնայօժար՝ այնպէս որ ոչ գիտեմ թէ ուստի ունեցայ այս խորհուրդս, որ լուսոյ ճառագայթի պէս յանկարծակի լուսաւորեց ծանր խնդիր մի՝ որ շատոնց 'ի վեր զիս կը տանջէր։ Թէ որ Աստուած, ասէի ինքն իրենս, իսկական գործունէութիւն մի է յինքեան, ապա ուրեմն չիք 'ի նմա անցք 'ի զօրութենէ 'ի գործ, ապա ուրեմն նորա համար չկայ ոչ ժամանակ ոչ յաջորդութիւն ոչ փոփոխումն և ոչ զարգացումն։ Եւ սակայն իսկական և անդադարելի գործն պէտք է որ առարկայ

մի ունենայ, առարկայ մի ծանուցեալ 'ի մտաց, սիրեցեալ 'ի կամաց և ծագեալ 'ի գործունէութենէ։ Արդ տիեզերական ծանօթութեան հարկաւոր առարկայն է ճշմարտութիւնն բացարձակ՝ որ ինքն իսկ Աստուած է։ Ապա ուրեմն Աստուած նկատէ զճշմարտութիւն յանձին իւրում, և նորա հաւասարաչափ ծանօթութիւնն ունի, երեք եզերօք որ են ենթակայն որ նկատէ, առարկայն նկատեալ, և զօդն միոյ ընդ միւսոյն. բայց այս երեք եզերքս յինքեանս մի են, որովհետև Աստուած է որ նկատէ զինքն, ապա և համագոյական ալ են՝ որովհետև ամենայն ինչ գոյացութիւն է յԱստուած, և միանգամայն որիշ են 'ի միմեանց և անշփոթ։ Արդեօք այս իսկ չէ՞ յԱստուած երեք անձինք ասացեալն կամ երրորդութիւնն 'ի միութեան։

Դարձեալ ինք իրենս ասէի. Աստուած պարզ սէր է, և սէրն պարտի ունել զառարկայ ինչ. առարկայն սիրոյ է բարին, և անհուն սէրն ոչ կարէ զայլ ինչ սիրել լիապէս՝ բայց զինքն, որովհետև ինքն միայն է բարին գերագոյն։ Արդ հարկաւորաբար երեք եզերք են 'ի սէր նորա՝ ենթակայն սիրող, առարկայն սիրեցեալ, և միութիւն երկոցունց որ անտի յառաջ գայ։ Այս երեք եզերք նոյնականք են 'ի գոյացութեան, որովհետև նոյն էակն են՝ բայց որիշք և անշփոթք իւրեանց գոյացութեամբն, են սոքա ճշդիւ երեք գոյացութիւնքն կամ ենթակայութիւնք ըստ յունաց՝ զորս լատինք կոչեցին անձինս։

Դարձեալ այսպէս ևս կարեմք ասել. իսկական գործն պարտ է յարդիւնս ածել զիմն. արդ յառաջ քան զարարչագործութիւն զինչ յարդիւնս ածէր գործունէութիւնն աստուածային, և զինչ էին արդիւնք պարզ և անդադարելի գործոյն։ Միաւորականաց աստուածախօսութիւնն շատ դժուարութիւն կ'իմանայ այս հարցմանս պատասխանելու. ո-

բովհետև ոչ համարձակի հաստատել որ անհուն գործունէութիւնն բան մի ոչ արտագրէր , և թէ իւր չարժումն աննպատակ առանց առարկայի էր, որպէս մեքենայ մի որ դատարկութեան մէջ գառնայ, որ անարժան և անվայել է սիւզերական զօրութեան: Դարձեալ իր բերանն առաջ չերթար ասելու թէ ոչ գիտէր, և իւր տգիտութեան վատթար ամօթն ծածկելու համար՝ կը սոսկալի ասելու թէ ՅԱստուած պարզ գործունէութիւնն ստեղծագործելու վրայ հաստատուած է, և աշխարհս է այնոր առարկայն. ասոր չառաջ գայ արարչութեան կարողութիւնն՝ որպէս անմտութիւնել լռուին աստուածային զօրութեան, և հետևապէս հարկաւորաբար անբաժան և կցորդ իւրոյ էութեանն: Ուրեմն ասէ, և սոսկալ նաև է ասելու թէ Աստուած 'ի չարիւթենից արարչագործէ. որովհետև չկարէ ներգործել առանց գործելոյ ինչ, և գործունէութիւնն չարակից է նմա:

Այս աստուածէն կը հետևի ուրեմն թէ արարածք միանգամայն արարչին և մասն բնութեան նորա՝ որ ստեղծելոյին զնոսին հաստանէ չիւր անթերի կատարելութիւնն. ապա թէ ոչ՝ անհուն գործունէութիւնն լինէր առանց առարկայի, առանց արգեանց, ուստի և ումպէտ և անպատճառ: Այս աւելն տեսակ մի անաստուածութիւն է, թերևս աւելի նրբին քան զծաւալումն և զարատագրութիւն անհնոյ համաստուածեանց, բայց միշտ գարձեալ կարծիք համաստուածեան: Այսոր համար է որ մեր օրերս անուանի իմաստասէր մի չամաչէց ասպագրութեամբ իսկ հրատարակելու թէ Երրորդութիւնն աստուածային ձևանայ՝ ՅԱստուծոյ 'ի մարդոյ և 'ի համագոյից, որով համագոյք և մարդկնոյնանան ընդ աստուածութեան, և լինին նմին համագոյակից. որ համ աստուածութեան ծայրայեղն և չափազանցագոյնն

է. ոչ արդարև Ավետնոզայի ասացեալ կերպովն, այլ ըստ Հեկելի որ Աստուած ասելով կը հասկնայ գաղափարի զարգացումն՝ որ իւրեան գիտակցութիւնն կը ստանայ ամբողջական չարժմամբ իւրով՝ որով գաղափարն լինի առարկայական, և գարձմամբն յինքն՝ որ այս գարձումնս ալ զինքն իր ենթակայութեան մէջ կը հաստատէ, կամ ըստ հեկելեան բառախոսութեան՝ նէ սիւզերական գոլով յինքեան 'ի խրբեսիան, ելանէ յինքենէ գոյանալ առ 'ի գառնալ անդրէն յինքն՝ առարկայականին և ենթակայականին բացարձակ նոյնութեամբն: [1]

Ահա այսպէս իմանան և բացատրեն իմաստասէրք ոմանք զԵրրորդութիւնն քրիստոնէական. որք եկեղեցւոյ նուիրական բառերն կը գործածեն՝ բոլորովին տարբեր իմաստ տալով նոցին և համակորելով և ոամկին կ'ուզեն կլլեցնել թէ անհասանելի խորհրդոյն հասու եղել են, և եթէ այս վարդապետութեանս մէջ ձշմարիտ բան մի կայ՝ երկնից ասացածն է, ուր ընդհակառակն զներհակն այսինքն զչերեակոսութիւնս ուսուցանեն: Կը խոստովանիմ որ այս կերպս զիս կը զայրացնէ, և որչափ ալ իմաստասէր եմ՝ բիւր անգամ աւելի լաւ կը համարիմ տգիտութիւնս խոստովանիլ կամ բոլորովին հակառակիլ, քան թէ քրիստոնէութեան սուտ երևոյթն վրաս առնելով և նորա վարդապետութիւնն ապաշաղելով և ծամածռելով՝ ժողովրդեան առջին փառք վաստակիլ. և եթէ աւելն խոչընդոտութիւն առնելէն ետև ալ՝ չհաստատամ այս խորհրդոյս՝ գոնէ քաջութեամբ և անկեղծութեամբ տեղն որ գայ՝ պիտի խոստովանիմ, և ոչ երբեք բառից և տարաշուշ նմանութեամբն ինքզինքս պիտի պարտկեմ՝ վախնալով որ անմիաբան չերևիմ այն կրօնից հետ՝ որոյ հաստատ-

1 In sich, aus sich, und für sich այսինքն յինէեան, յինէենէ և վասն ինէեան:

լեացն ոչ հաւատամ՝ վտանգաց և դժպատեհութեանց մէջ չանկանելու համար։

Այս աւուր խորհրդածութեանս պտուղն՝ (որ ինձ կ'երևի որ թէ Երրորդութեան վարդապետութեանն և թէ իմաստասիրութեան և ինձ համար ալ կարևոր է) այն է՝ որ աստուածային միութեան մէջ երեք անձանց յարաբերութեամբն՝ որ միասնական են իրենց անհուն գոյացութեամբն և որիշ իրենց սեպհականութեամբք և գործովք, շատ լաւ կը մեկնուի արարչութենէ յառաջ Աստուծոյ պարզ գործունէութիւնն, այսինքն թէ այս իսկական գործոյն առարկայն՝ նկատմամբ մտաց և կամաց և զօրութեան Անհնոյն, արարչագործութիւնն չէ. վասն զի եթէ այնպէս լինէր՝ արարչագործութիւնն աստուածային կենաց հարկաւոր պիտի լինէր, և հետևապէս իւր բնութեանն էական, այլ ինքն Աստուած իւր անձին ենթակայն-առարկայն լինելով՝ իւր գործունէութիւնն կայանայր բացարձակ ճշմարտութիւնն խորհելուն վրայ, և դերագոյն բարին սիրելուն վրայ, որով և վայելէր զանսպառ երանութիւն՝ յանդրադարձ գործունէութեան անդ Հօր և Որդւոյ յենթակայական միութեան իւրեանց 'ի ձեռն Հոգւոյն Սրբոյ։

Այսոր համար է որ Աթանասի հանգանակին մէջ գրուած է. « Հայր ոչ յումեքէ է արարեալ, ոչ ստեղծեալ և ոչ ծնեալ. Որդի 'ի Հօրէ ևեթ է, ոչ արարեալ ոչ ստեղծեալ, այլ ծնեալ. Հոգին Սուրբ 'ի Հօրէ և յՈրդւոյ՝ ոչ արարեալ, ոչ ստեղծեալ և ոչ ծնեալ, այլ բղխեալ »։ Ապա ուրեմն յաւիտենական գործունէութեան յաւիտենական արդասիքն է Բանն աստուածային կամ Որդին 'ի յաւիտենից ծնեալ 'ի Հօրէ, յորոց յառաջ գայ Հոգին Սուրբ՝ կամ յօդ և շաղկապ սիրոյ նոցա, որ բղխէ յերկոցունց։ Այս արդասիք՝ եթէ այս բառս կարեմք

գործածել՝ առ 'ի չգոյէ այլոց, է աստուածային գոյութեան սահմանն, և մշտակայ հաստատութիւն աստուածութեան 'ի զօրութեան իւրում և 'ի լոյս և 'ի սէր՝ անճառելի երանութեամբ յաւիտենական ծննդագործութեանն, և լիովին յայտնութեամբ անհուն կենացն։ Կամ որպէս նիկէական հանգանակն ասէ « Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ։ » Աստուած յամենայնի և ամենայն տեղիս՝ ճանաչելով զինքն և սիրելով յանբաւութեան և յանհունութեան իւրոց կատարելութեանց։

Տեսութիւն 'ի վերայ Երրորդութեան (շարայարութիւն)։

1 Յունուար։

Երկու օր յառաջ կը գրէի թէ ես որ ամիս մի յառաջ ամենևին Երրորդութեան վրայ խորհած չէի՝ այժմ ամեն տեղ նոյնն կը տեսնեմ, և նախ իմ անձիս մէջ։ Եւ յիրաւի ես ալ կենդանի երրորդութիւն մի եմ իմ դիտակցութեանս մէջ, իմ խորհրդեանս մէջ, և իմ ծանօթութեանս ձևացման մէջ, երբ կը դատեմ, կը բանավարեմ և կը խօսիմ, և ամեն անգամ որ ճշմարիտ բարի և գեղեցիկ բանի մի վրայ կը հիանամ։

Յիրաւի աշխարհիս մէջ մարդս ուրիշ էակներէն այսու կ'որոշուի՝ որ ինքն ինքեան վրայ դիտակցութիւն ունի և ինչ որ իր մէջն կ'անցնի. իւր Եսն եդեալ հանդէպ ոչ Եսի յորմէ կը զանազանի. աստի յառաջ գայ իւր անձնաւորութիւնն և ինքզինքն կը ստանայ։ Արդ այս վախճանիս հասնելու համար՝ խոհուն էակն որ 'ի մեզ՝ ինքն իր վրայ կը դառնայ անդրադարձու-

թեամբ զինքն տեսնելու համար, և այս գործողութեանս մէջ յորում ինքն իսկ է միանգամայն ենթակայ և առարկայ՝ կ'որոշուի առանց բաժնուելու ՚ի ես հայեցող, ՚ի ես հայեցեալ, և յարաբերութիւն միոյ առ միւսն՝ որ յերկոցունց մի կեանս գործէ: Երրորդութիւնս այս որ ՚ի մէջ՝ հիմն է հոգեխօսական գիտակցութեան՝ որ ինքն իսկ ենթակայական խարխս է խորհրդոյ և ծանօթութեան:

Նոյնն է գարձեալ օսար եսի կամ ոչ եսի ծանօթութեան մէջ ալ. պէտք է որ այնոր յանդիման զինքս դնեմ՝ նորա աղդումն կամ ճառագայթն ընդունելու համար՝ որ առնէ յիս տպաւորութիւն ինչ, և յետոյ պէտք է որ մտադրութիւնս գործածեմ եղած տպաւորութեան և այնոր պատճառին վրայ: Ա՛յս անդրադարձեալ գործոյս մէջ կը կատարի միութիւն մի ՚ի մէջ երկուց, կամ արդիւնք մի իբրեւ համադրդ թափանցութեան: Այսպէս առանց տեսողական գործարանի առարկայ մի ոչ տեսանեմ. բայց գործարան ունենալն բաւական չէ, պէտք է որ առարկային նորա մօտ լինի, և առարկային անդրադարձեալ լուսոյն ձեռօք միայն տեսութիւնն կը կատարուի, զոր ենթակային ընդունելով՝ յօրինէ լինքեան զպատկերը առարկային՝ յարաբերութեամբն որ է ՚ի մէջ երկոցունց: Ապա այս երկու եղերք՝ երրորդի մի ձեռօք միանան, և երեքին միանգամայն նոյնանան յարաձգութեան կամ յարդեան գործողութեանն՝ սակայն ոչ դադարին ՚ի լինելոյ որիշ և իւրաքանչիւր առանձինն:

Երբ առանց ես լինէն եղնելու՝ որ և իցէ բանի մի վրայ կը խորհիմ կամ կը պատկերեմ կամ կ'երևակայեմ՝ հարկաւորապէս կը բաժնուիմ յենթակայ խորհող՝ որ է միանգամայն գործող և վայր պատկերողութեան, և յառարկայ խորհեցեալ՝ այսինքն պատկեր իմն կամ ծանօթութիւն կամ գաղափար նախա-

դոյակ ՚ի միտս իմ, և հետևապէս մտան համարեալ անձինս՝ զոր գոգցես անձամբ ՚ի նմանէ՝ առ ՚ի առնել զնա մանաւանդ առարկայ գիտողութեան մտացս կամ մտադրութեան նորա: Բայց այսչափով չտարածէր գործն. այլ ընդ մէջ ենթակային և առարկային՝ խորհրդոյ գործն կը մտնէ կամ մտաւորական գործողութիւնն՝ որով ենթակային թափանցէ զառարկային, մինչդեռ առարկայն ալ ենթակային վրայ ՚ի ազդե իւր տպաւորական լուսովն. ինչպէս որ նիւթական իրք ցոլացուցանեն յաչս ղեղալի լոյս՝ որ զնոսին տեսանելիս գործէ: Ապա երեք կարևոր եղելք են ՚ի կերպաւորութիւն խորհրդոյ՝ որ ըստ նշանակութեանն անբաժանելի է ՚ի միութեան, այլ երբեմն ՚ի յայտնութեան իւրում, որ է երրորդութիւն ՚ի միութեան:

Ամենէն պարզ խորհուրդն գատումն է՝ որ է երկու առարկայից մէջ յարաբերութիւն կայ թէ չըկայ տեսնել: Եթէ գատումնս հաստատական է, երեք ինչ են ՚ի նմա վերածեալ ՚ի միութիւն, այսինքն երկու առարկայք բաղդատեալք և յարաբերութիւնն մտածեալ ՚ի մէջ նոցա, որ է չաղկապ միութեան նոցին: — Գատման այս էական երրորդութենէս յառաջ գայ և երրորդութիւնն առաջարկութեան՝ որ գատման բացատրութիւնն է. առաջարկութիւնն ալ երեք եղերօք յօրինի՝ որ գատման եղերաց կը համապատասխանեն, և են սոքա ենթակային առաջարկութեանն, մակդիրն և բայ՝ զոր քերականք իրաւամբ զօդ անուանեցին՝ որովհետև լեզուի մէջ կապակցութեան կամ խօսքի տարերքն միացընելու պաշտօնն ունի: Նոյնպէս յօդաւոր բարբառոյ մէջ բան մի կատարեալապէս չեմ կարող բացատրել՝ առանց առաջարկութեան երեք մասանցն, ինչպէս որ երկրաչափութեան մէջ ալ երեք գծերէ պակասով ձև մի չըրանար ասեմք, այսինքն ամենէն պարզ ձևն ալ գոնէ երեք գծերով կը ձևանայ:

Եւ ինչպէս որ դատում մի չեմ կարող արտաբերել՝ առանց առաջարկութեան երեք եղերաց, այսպէս ալ պատճառաբանութիւն կամ շարաբանութիւն մի յօրինել չկարեմ առանց երեք առաջարկութեանց, յորոց առաջինն որ մեծագոյն անուանի՝ ցուցանէ զյարաբերութիւն մեծ ծայրին ընդ միջին եզրի, երկրորդն կամ փոքրագոյնն զյարաբերութիւն նոյն միջին եզրի ընդ փոքր ծայրի, և երրորդն կամ բովանդակութիւնն՝ հաստատէ զպատշաճութիւն երկուց ծայրից ընդ միմեանս, վասն զի իւրաքանչիւրն 'ի նոցանէ յարմարի ընդ միջնոյն, ըստ առածին թէ երկու իրք երբ իւրաքանչիւրն երրորդի մի հետ կը յարմարի՝ իրարու հետ ալ կը յարմարին. Որ մի են ընդ միում երրորդի՝ նոյն են ըն դմիմեանս: Ապա աստ ևս կը տեսնեմ որ շարաբանութեան ալ հիմն երրորդութիւն է, որ է եռոտանի բանավարութեան:

Նոյնն դարձեալ հիմն է առաքինութեան. վասն զի առաքինութիւն կամ գործոյ մէջ բարոյականութիւն լինելու համար՝ երեք բան հարկաւոր է, ծանօթութիւն օրինաց 'ի ձեռն խղճի, կամք կամ դիտումն կատարելոյ զնոյն, և գործադրութիւն կամաց գործով՝ որ համեմատ իցէ օրինաց, կամ կատարումն դիտման: Ինչ որ ըստ հայեցողական կարգի ասացաք ծանօթութեան յօրինուածոյն համար՝ գործնական կարգի մէջ ալ նոյն է. օրէնքն որ չէ յինէն՝ է ենթակայականն գերագոյն, կամքն որ է յիս՝ կը միանայ ազատութեամբ՝ հասանելու այնմ, և լիապէս իր չդառնար՝ բայց լրացմամբ իրենց յարաբերութեանն 'ի կատարումն առաքինական գործոյ: Ապա առաքինութեան մէջ ալ երեք եզերք թէ և անջատք՝ սակայն մի են: Ապա երրորդութիւն բարոյականի ալ հիմն է՝ որպէս և դիտութեան:

Զնոյն դտանեմ դարձեալ գեղագիտութեան մէջ ալ՝ որ գեղեցկին հայեցողութիւնն է. վասն զի իրա-

ւամբ ասացեալ է թէ գեղեցկութիւնն է զանազանութիւն 'ի միութեան, և ուրիշ բան չէ բայց եթէ բազում գեղեցկութեանց նոյնութիւնն առ 'ի կազմել զմի գեղեցկութիւն: Բայց զայն ճանաչելու և սքանչանալու համար՝ հարկ է որ իմ պատկերողութեանս կամ երևակայութեանս մէջ գեղեցկին գաղափարն ունենամ, որ իմ գեղագիտական դատմանս սկիզբն և չափն է, և բանի մի գեղեցիկ լինելն ուրիշ բանով ոչ հաստատեմ՝ բայց եթէ այս տիպարիս հետ ունեցած յարմարութենէն, այսինքն փոքր 'ի շատէ այն գաղափարին նման լինելէն կամ այնոր կնիքն ունելն: Ապա այսոր մէջ ալ երեք եզերք հարկաւոր են՝ գաղափարականն, իրականն և նոցա յարմարութիւնն ըստ դատման կամ ըստ հաճութեան մտաց իմոց՝ որ զնոսին միացուցանէ ըստ իւրեանց պատշաճի: Ապա ուրեմն երբ բանի մի համար ասեմ թէ յիրաւի գեղեցիկ է, ասել կ'ուզեմ թէ գաղափարական գեղեցկութեան մասնակից է, ապա և նորա կենացն յաւէժակից, զոր և ես ինքն վայելեմ երկու եզրերն միացնելով, որ թէպէտ անջատք են՝ բայց իմ մտացս մէջ մի են: Աստի յառաջ գայ այն ներքին և անխառն վայելքն և յափշտակութիւնն զգայութեան՝ զոր կ'ունենամք ճշմարտապէս գեղեցիկ իր մի նկատած ատեննիս:

Վերջապէս կարեմք ասել որ երրորդութիւնն խարիսխ է ընկերական կենաց, որպէս և անհատականին: Ընկերութիւնն 'ի գերդաստանէ սկսի և 'ի Պետութիւնն աւարտի: Արդ գերդաստանն երեք եզերօք սահմանի՝ հայր, մայր և զաւակ, որոյ անդրադարձ սէր միաւորելով զնոսա առնէ մի: Նոյնպէս և Պետութիւնն՝ ինչ սահմանադրութեամբ ալ որ լինի եթէ միապետական, եթէ իշխանապետական, և եթէ ռամկավարական, կամ այս երեք ձևոցս խառնուրդը՝ միշտ պիտի ունենայ եզր մի գերագոյն կամ

պետ հրամայող, եզր մի ստորին կամ ժողովուրդ հնազանդող, և 'ի մէջ երկոցունց եզր մի միջին՝ որ գերդաստանի մէջ մայրն է, որ պետին և ժողովրդեան անդրադարձ գործերն իրարու հասցընէ, որ և կոչի կառավարութիւն, ղեկավարութիւն կամ պաշտօնեայք պետութեան: Ամենայն սահմանադրական ազգաց մէջ իշխանութիւն մի պէտք է՝ ուստի կ'ուղես եկած սեպէ, և ինչ կերպով որ հաստատուած լինի: Ազգն կարգով և խաղաղութեամբ յառաջ չերթար՝ բայց եթէ յիշխանութենէ դրուած օրինաց հնազանդելով. և այս օրէնսդրութիւնս միջին եզրի գործն է՝ որ երկու եզրերն իւր միջնորդութեամբն պիտի միացնէ: Ապա երրորդութիւնն քաղաքական կենաց և տնական կենաց ալ հոգին է:

Տեսութիւն 'ի վերայ Երրորդութեան (շարայարութիւն):

4 Յունուար:

Հիմա երբ իմ բոլորս եղած արտաքին աշխարհին վրայ կը դարձնեմ աչքս՝ ամեն գոյութեանց մէջ ալ երրորդութեան պատկեր կամ նշոյլ մի կը տեսնեմ. այսպէս ամեն ծաւալ կէտէ մի ելնելով՝ որ երթալով գիծ կը ձևանայ, բևեռի մի կը հասնի ու կ'աւարտի, ուստի զօրութիւնն դարձեալ իր սկզբան կը դառնայ, և երթևեկ մի կը հաստատուի կեդրոնի և բեւեռի մէջ՝ որ իրարու հետ շառաւիղով կապուած են: Ամենայն գիծ ունի սկիզբն մէջ և վերջ: Եռանկիւնն որ ամենէն պարզ ձևն է երեք կողմունք և երեք անկիւններ ունի, միութիւնն ձևոյն բովանդակութեան մէջն է, և երրորդութիւնն իր երրեակ և մի մասանց մէջ: Առանց երրեակ տարածութեան հաստատուն

մարմին մի չեմք կարող ըմբռնել, և անշունչ մարմին մի կենալու համար՝ գոնէ երեք յեցման կէտ հարկաւոր է: Երրեակն ամեն կշռականութեան խարիսխն է, վասն զի գոյութիւն մի չկայ՝ որ երեքէ պակաս յեցման վրայ հաստատ կենայ: Ամեն տեղ կենսաւորութիւնն կեդրոնէ մի ելանէ և ճառագայթաձև տարածուելով՝ վերջին կէտի մի վրայ կը բևեռանայ, և տրամագիծն՝ առանցքին կեդրոնին վրայէն խաչաձև անցնելէն կը ձևանայ, ուստի բոլորի նաև շրջանակն: Բնախօսն Պիշա ասէր թէ գործարանաւոր կեանք մարդոյ՝ սրտի, ուղղոյ և ստամոքսի եռոտանւոյն վրայ հաստատուած է. և յիրաւի այս երեք գործարանքս մարմնոյ երեք գլխաւոր մասանց մէջ կը տիրեն՝ ուր որ կենսական շարժումն ալ կը բանի. սիրտն կրծոց մէջ՝ որ է կեդրոնական վայրն, ուղեղն 'ի գլխի կամ 'ի վերին բևեռի, և ստամոքսն 'ի փորի կամ 'ի ստորին բևեռի: Գլխաւոր գործարանաց և նոցա տիրած վայրաց մէջ ալ այնպիսի եռանդուն կրակցութիւն և զօրաւոր գործակցութիւն մի կայ, որ միոյն կրածին կամ վայելքին համեմատ՝ միւսերն ալ կը վշտանան կամ կը խնդան, և սիրոյ օրինակն մեզ կ'ընծայեն՝ որ այլոց բարին ալ իրենին պէս կը խնդրէ:

Այս գործերէս և դիտողութիւններէս ինչ կը հետևի, յիրաւի ես ալ ոչ գիտեմ: Արդեօք ես ալ դարձի գալով՝ Երրորդութեան վարդապետութեանն պիտի հաւատամ, ինչպէս որ կաթողիկէ Եկեղեցին ուսուցանէ: Ոչ կարծեմ. այս հաւատոցս հասնելու համար՝ դեռ շատ արգելք ունիմ մտացս մէջ, և դեռ ատենն հասած չէ, որովհետև դեռ դրական կրօնից հարկաւորութեան վրայ կը տարակուսիմ, և աշխարհիս մէջ գերբնական բաներ լինելուն համոզուած չեմ: Սակայն որովհետև այս գրածս ինձ համար է միայն՝ պէտք է անկեղծութեամբ խոստովա-

նիմ՝ որ քրիստոնէութեան այս հիմնական վարդապետութեան և բնական աշխարհիս օրինաց մէջ եղած այսչափ հանգիտութիւններն՝ զիս շատ կը զարմացնեն։ Եւ որովհետև հիմա փորձով համոզեալ եմ՝ որ այս աշխարհիս ամեն գոյացութիւնք՝ ոգիք և մարմինք, հոգիք և գործարանաւորութիւնք, շնչաւոր և անշունչ էակք, կեանք և նիւթ՝ երրակի օրինօք հաստատեալ են, ես ինձ հարցանելս կու գայ թէ արդեօք նոյն բանն լինելու չէ՞ նաև էակաց Էակին համար ալ, և տիեզերական կենաց սահմանադրութեան համար ալ. այնպէս որ վերջապէս Երրորդութիւնն կամ երրակի օրէնքն՝ որ կրօնական լեզուով վարդապետութիւն կ'անուանի, և հիմն է քրիստոնէութեան, թերևս իմաստասիրական լեզուով կոչուելու էր տիեզերական օրէնք գերագոյն Էակի և այլ ամենայն էակաց, կամ որպէս ասէր Պիշա՝ եռոտանի կենաց յամենայն պարունակս՝ սկսեալ յաստուածային անբաւութենէն մինչև ցորդն անարգ և մինչև ցբոյսս և ցքարինս։

Այս օրագրիս մէջ արձանագրուած վերջին խորհրդածութեանց հետևութիւնն է այս դիտողութիւնս. և կարծեմ թէ այս դիտողութիւններէս դեռ ուրիշ շատ հետևութիւններ ալ պիտի ելնեն, թէպէտ և առ այժմ մտացս մէջ մութ և տարտամ բաներ են։ Այսու ամենայնիւ այնչափ կարեւորութիւն ալ ոչ տամ այս տեսութեանցս՝ որով ներսի դիս խռովի և խիղճս շփոթի։ Գրածս պարզ գրաւոր զբաղանք մի է, բայց ուրիշ զբաղանցմէ աւելի հարկաւոր. նախ որ նիւթն շատ աւելի կարևոր է, և երկրորդ իմ սրտիս և մտացս ներկայ հանգամանաց նայելով՝ պէտք մի կը զգամ զգուշաւոր և գործնական համոզման հասնելու, չէ թէ պարզ կարծեաց և դըրութեան։ Միայն մտօք՝ մանաւանդ թէ աւա՛ղ շատ անգամ ալ միայն երևակայութեամբ իմաստասէր

լինելէն ձանձրացայ. այլ յայսմհետէ կ'ուզեմ ոգւով և ճշմարտութեամբ իմաստասէր լինել, այսինքն սրտովս և գլխովս, կենացս և խորհրդոցս մէջ, գործով և բանիւ։

Դիպուած մի։

15 Ապրիլ։

Ահաւասիկ երեք ամիսք են որ օրագիրս բացած չեմ, և ընդհատելուս պատճառն ալ ոչ գիտեմ։ Աստուածաբանական հակաճառութեանց գեղեցիկ նախանձ մի զիս վառեց, ամբողջ ամիս մի եռանդուն և անխոնջ մտօք հանդերձեալ աշխարհի իրաց ետևէն անկայ, և մանաւանդ գլխաւոր նիւթոյն որ է անձնաւոր Աստուծոյ միոյ գոյութիւնն և իւր երրեակ անձնաւորութիւնն. բայց ոչ գիտեմ թէ այս կողմանէս վախճանի մի հասի՞ թէ չէ։ Ինձ այնպէս կ'երևի թէ շատ գաղափարներս լուսաւորեցան, և գոնէ կաթողիկէութեան դէմ ունեցած նախապաշարմունքս տկարացան։ Իրաւ դեռ հաւատացեալ լինելու համար շատ բան պէտք է. բայց կը սկսիմ հասկանալ թէ մարդ կարող է հաւատացեալ լինել՝ առանց անմիտ անհանճար և անբան լինելու, որպէս ասէր Բասքալ։ Միայն կ'երևի թէ որովհետև իմ աստուածաբանական եռանդեանս պատճառն խեղճ Ետկարիս վաղահաս մահն եղև, որ իմ բոլոր մտածմունքս և զգայութիւններս յուզելով՝ սաստիկ փափաք մի տուաւ ինձ գիտելու թէ արդեօք ի՞նչ եղև նմա, և թէ կա՞յ արդեօք իրեն հետ վերաբերութիւն ունելու միջոց մի, և հիմա որ ժամանակն անցնելով զինքն մոռցայ՝ օրագիրս ալ այնոր հետ մոռացութեան մէջ անկաւ։

Սակայն այսօր նորէն կ'ուզեմ ձեռք զարնել, որով-

հետև սրտիս վրայ ծանրութիւն մի ունիմ՝ զոր ուրիշի չեմ կարող հաղորդել. բայց սիրտս թեթևցընելու համար՝ պէտք է որ ասեմ, կամ գոնէ գրեմ: Օտարէ աւելի կնոջս չեմ կարող բանալ այս նիւթս, որովհետև այս տագնապիս պատճառն ալ ինքն է, թէ և անտարակոյս անմեղաբար կամ գոնէ բարի դիտաւորութեամբ. այնպէս որ այս նիւթոյս մէջ ինքն միանգամայն դատաւոր և դատախազ պիտի լինի, որ անկողմնակցութեան ապահովութիւն չտար: Բաց աստի որովհետև ուզած դիտմանն չհասաւ և պարապ տեղ շունչ հատցուց, ու ես ալ սակաւ մի խրստութեամբ մերժեցի զինքն՝ զոր կը խոստովանիմ, հիմա եթէ սակաւ ինչ անուշութեամբ իրեն հետ այս նիւթոյս վրայ խօսիմ՝ այնպէս պիտի երևի թէ յաղթուել եմ և սիրտն առնուլ կ'ուզեմ և ուզածն առնել. իսկ արդ այս բանս տանս մէջ շատ հետևանք կարէ յառաջ բերել: Ապա ուրեմն թողում որ ինքն նորէն խօսք բանայ՝ ինչպէս որ ապահով եմ թէ պիտի առնէ, որպէս զի ես ալ դերդաստանիս գլուխ լինելու պատիւն պահեմ: Վերջապէս որովհետև իր սրտին բարութիւնն դիտեմ, և այս փափուկ խնդրոյս մէջ մտնելն՝ իր խղճին պարտքն կատարելու համար էր, և իմ հոգւոյս փրկութեան ունեցած սաստիկ փափաքէն յառաջ կուգար՝ ինչպէս որ ինքն կը համարի, միտքս դրած եմ որ այսոր մէջ ալ զինքն չվշտացնեմ՝ ինչպէս ուրիշ բաներու մէջ ալ, և եթէ չորոշեմ ևս իր ուզածն առնելու՝ գոնէ մտածեմ թէ ինչ անոյշ խօսքերով կարեմ զինքն մխիթարել և յոյս տալ:

Հիմա գամք եղածն պատմելու. քանի մի ատենէ 'ի վեր է որ գիւղն կը նստիմք՝ մօրէս մնացած փոքրիկ կալուածի մի մէջ, որ պարզ՝ բայց միանգամայն հանգիստ և սիրուն տուն մի է, և այս առաւելութիւնս ալ ունի՝ որ գեղի մէջ ալ լինելով՝ քաղքէն շատ հե-

ռի չէ, այնպէս որ իմ զբաղմանցս համար ամեն օր կ'երթամ կուգամ. օդն մաքուր, արևն պայծառ, հորիզոնն ընդարձակ, և ամեն դին ծլած ծաղկած, ձիավարելու և տղայոց խաղալու ալ ընդարձակ տեղ կայ: Իսկ կիրակի օրերն Բարիզ ոչ երթամ և շատ գոհ եմ. ամեն կիրակի ձայնաւոր պատարագ կը զրուցուի գեղի եկեղեցին, և զանգակներն շատ անգամ կը զարնուին բնակիչներն կոչելու համար՝ որք դժբաղդաբար ոչ երթան, ինչպէս որ սովորութիւն է մայրաքաղքին մօտ եղող գեղերուն մէջ: Այս բանիս վրայ կը ցաւիմ. որովհետև վերջապէս այս գեղացիներս անկիրթ և անուսումն լինելուն՝ որպէս զմեզ բարոյականի սկզբունք և պատշաճից զգածմունք չունին, որով միշտ իրենց անկիրթ զգածմանց և վատթար կրից մէջ կը մնան. եկեղեցին որ երթային՝ գոնէ բարոյականի վրայ երկու խօսք կը լսէին. այս բարոյականիս նկատմամբ մեք իմաստասէրքս մտքերնիս դրած եմք թէ ժողովրդապետին ասացածներն ամենքն ալ դիտեմք՝ ուստի զմեզ ազատ կը համարիմք նորա յորդորակներուն գտնուլէն՝ որ յիրաւի մեզ համար չեն:

Բայց այս բանիս մէջ նկատելու ուրիշ բան մի ալ կայ, և կինս ալ այն նկատմամբ այս նիւթոյս վրայ խօսք բացաւ, և միտքն զիս յանդիմանել չէր. այլ պարզապէս խնդրեց յինէն որ ես ալ իրեն և աղջկանն հետ եկեղեցի երթամ, որպէս զի ժողովրդեան բարի օրինակ տամ, կամ գոնէ իմ չերթալովս նոցա ալ համարձակութիւն չտամ սրբազան պաշտամունքէն ետ մնալու. մեզ չվայլեր, ասաց, հեթանոս և անհաւատ երևիլ յաչս տգիտաց, և մանաւանդ ժողովրդապետին և հաւատացելոց. և թէ գիւղն քաղքի պէս չէ՝ ուր բազմութեան մէջ աչքի չզարներ, այլ փոքրիկ գիւղի մի մէջ՝ ամեն բան տեսնող ու խօսող կը գտուի, և նոյն իսկ իմ դրիցս և պաշտօնիս

նկատմամբ՝ որ հասարակաց ուսմանց պաշտօնաւոր կը համարիմ, թերևս լաւ բան չէ ասել տալ թէ կրօնք չունի, որովհետև կրօնքն ալ դաստիարակութեան էական մասն է: Բարիզ եղած ժամանակնիս՝ այս նիւթոյս վրայ բան մի չէի խօսած, ասաց, վասն զի գայթակղութիւն չկար, որովհետև հոն ամենևին հոգերնին չէ թէ դրացին ինչ առնէ ինչ չառներ, ինչու որ ո՛վ լինելն անգամ ոչ ճանաչեն. թէպէտ և նոյն իսկ հոն եղած ատեննիս ալ բաւական դժուարութիւն կը կրէի երբ աղջկանս հետ եկեղեցի գնացած ժամանակս՝ տղայական պարզմտութեամբ կը հարցանէր՝ թէ ինչու հայրս ալ հետերնիս չգար: Վերջապէս իբրև վերջին պատճառ այս ալ աւելցուց կինս՝ թէ զինքն շատ պիտի ուրախացնէի՝ եթէ առջևի կիրակին միատեղ եկեղեցի երթայի, և զիս իւր քովն և Աստուծոյ առջին տեսնելով աւելի սրտանց պիտի աղօթէր ինձ և զաւկիս համար՝ Աստուծոյ նուիրեալ տաճարին մէջ: Այս վերջի խօսքերս զրուցելու ատեն՝ որ յայտնապէս իր սրտէն կը բըղխէին, և կ՛երևէր թէ ինքզինք բռնադատելով կը զրուցէր՝ այնպէս այլայլեցաւ որ ձայնն անգամ կը դողդղար, և շունչն բերանն հասնելով բոլոր հոգին լեզուին վրայ էր:

Ուրիշ ամեն պատճառներն ալ արդարացի էին, բայց այս յետինս աւելի դպաւ ինձ. բայց երբ կարդըն ինձ եկն պատասխանելու՝ վիրաւորուած անձնասիրութիւնս ինձ յաղթեց, և նոյն իսկ ձայնիս մէջ խստութիւն մի կը նշմարուէր՝ թէպէտ և կը ջանայի ըստ կարի քաղցրացնելու: Նորա ասացածներն յանդիմանութիւն մի կը համարէի ինձ, և չէի ուզեր որ կինս զիս յանդիմանելու վարժի՝ նոյն իսկ յանդիմանութեան արժանի եղած ժամանակս: Ուստի իրեն պատասխանեցի՝ որ ինչպէս ես ոչ հակառակէի՝ իր հաւատացած՝ բաներուն և իւր կրօնական

պարտքերն կատարելուն՝ այսպէս ալ իրաւունք ունէի նոյնն իրմէ պահանջելու. և թէ այս խնդրոյս վրայ 'ի հիմանց ոչ կամէի իրեն հետ հակաճառելու՝ վախնալով որ իր հաւատքն չսասանեմ՝ որ մտքէս ու կամքէս շատ հեռի էր. և թէ ինքն ալ գիտէր որ ես ալ բաւական խելք ունէի իմ ճշմարիտ պարտքերս ճանաչելու և բաւական ալ արդարութիւն զնոսա գործադրելու թէ որ խիղճս զարնէր. ապա ինքն ալ համոզուելու էր թէ ես ալ բաւական պատճառ ունէի զայնս չկատարելուս համար, ոչ զինքն և ոչ ուրիշ կատարողներն մեղադրելով. և վերջապէս ինքն ալ կարէր հասկնալ թէ ինչ որ կանանց և տղայոց օգտակար է՝ թերևս իմաստասիրաց համար այնպէս չէ. և իմաստասէր անունն կրելուս համար ալ՝ ռամկին կարծիքն հոգս չէր, և անարժան բան կը համարէի ինձ առանց հաւատալու եկեղեցին երթալ՝ գեղացոց զրախօսութիւնն արգիլելու համար: Այս ասելով պաղութեամբ մի իրմէ հեռացայ՝ առանց բարկութիւն երևցնելու, բայց այնպիսի տժգոհ կերպով՝ որ յինէն բաժնուած ժամանակ՝ տեսի որ աչքն արցունքով լեցուեցան:

Ահաւասիկ սպառնալից ամպ մի իմ ընտանեացս վրայ՝ որոյ տրտմութեանն ես պատճառ եղէ: Ցաննի բան մի չխօսիր, բայց կարծեմ թէ կը մտածէ ու կը զգայ. ես ալ կ՛իմանամ որ խօսքերովս զինքն ամենևին չհամոզեցի, այլ իւր սէրն պաղեցուցի, և իւր խիղճն և թերևս սակաւ մի անձնասիրութիւնն վիրաւորեցի: Բայց այս խղճի և սիրոյ նիւթերն ձեռնոտելն՝ այնչափ փափուկ բան է՝ որ ոչ գիտեմ թէ ինչ ճամբայ բռնելու եմ զայնս հանդարտեցնելու համար՝ առանց յաղթուած երևելու, որ մի գուցէ չարիքն մեղմացնելու տեղ՝ աւելի զայրանայ. այս տեսակ բաներն որչափ պրպըտես՝ այնչափ վտանգաւոր է: Բարեբաղդաբար դեռ շաբթուն կէսն եմք.

ուստի մինչև կիրակի երեք օր ունիմք խորհելու։ Շատ գոհ պիտի լինիմ՝ եթէ այնպէս յարմարցնեմք այս բաներս՝ որ իմաստասիրական պատուոյս և այրական իշխանութեանս վնաս մի չհասնի, միանգամայն այս խեղճ կնոջ ալ հաճութիւն մի պատճառելով, որ ինքզինք բոլորովին ինձ նուիրած լինելուն յայտնի նշանն ալ տուաւ այս խրատովս, զոր առնելու համար մեծ դժուարութիւն քաշած լինելուն ոչ տարակուսիմ։ Հապա երբոր աղջիկս ալ՝ այն սարսափելի տղայն՝ մօրն ինչպէս որ հարցուցել է՝ թէ ինչո՛ւ հայրն ալ իւր կրօնական պարտքերն ոչ կատարէ՝ զորս իրեն այնչափ կը պատուիրեն, և որոց օրինակն մօրն վրայ կը տեսնէ, պարզմտութեամբ միտքն դրած լինելով թէ Եկեղեցին ամենուն համար է, վաղն ելնէ ինձ ալ նոյն բանն հարցանէ, ինչպէս որ կը յուսամ, ինչ պատասխան տալու է տեսնեմք։

Տատամսութիւն։

17 Ապրիլ։

Պատարագի երթամ՞ թէ չերթամ. երեք օրէ 'ի վեր այս բանս ինձ մեծ մտմտուք եղած է դասերէս գործերէս և ուսումնական զբաղանցմէս աւելի։ Մի թէ իմաստասիրի մի համար ծաղրական բան չէ՞ որ կնոջ խօսքով այսչափ տատամսի ու շփոթի, փոխանակ իւր գործոց պատճառն իւր խելքին հարցնելու, և օտարի կարծեօքն չայլայլելու։ Ի՞նչ բանի կուգայ ուրիշի ուսուցանել՝ որ մարդ պէտք է ինք իրմէ խորհի, և իւր դատմամբն ամեն բան գործէ, երբ գործնականին որ կուգայ՝ փոքրիկ արգելք մի մեզ դէմ կը դնէ։ Անտարակոյս կնոջ խօսքն ինքն իրեն մեծ բան մի չէ, որովհետև նոքա շատ անգամ աւելի զգա-

յութեան երևակայութեան և կրից ազդմամբն կը խօսին ու կը գործեն՝ քան թէ խելքով, ուստի այնոր համար ալ շատ անգամ եթէ դիտմունքնին ևս բարի լինի՝ սակայն իրենց խորհրդոյն մէջ իմաստութիւն չկայ։ — Այո, այս ամեն բան իրաւ է, բայց երբ մեր կինն է խօսողն՝ բանն կը փոխուի. որովհետև որչափ ալ այրական իշխանութիւն ունենամք՝ կինն ալ ուրիշ զօրութիւն մի ունի, և ուղած ատեն՝ բանի մի վրայ տժգոհութիւն ունեցածին պէս նոյն զօրութիւնն մեզ իմացնել կուտայ տան մէջ՝ թէ և տան տիկինն ինքն չլինի։ Ամենէն ապահովն այնպէս վարուիլն է՝ որ տան մէջի խաղաղութիւնն չվրդովի և խռովելու պատճառ չտրուի։ Յիրաւի ես ալ ուրիշ բան ոչ կամիմ. վասն զի Ֆաննին ալ սրտանց կը սիրեմ՝ որում արժանի իսկ է, և ինձ մեծ ցաւ պիտի լինի զինքն վշտացնելն, մանաւանդ երբ իմ ձեռքս է իրեն սիրտը չկոտրելն։

Արդ հիմա երկու կողման պատճառներն ալ լաւ մի քննեմք։ Ի՞նչ կարէ հետևիլ՝ թէ որ յանձն չառնում երթալու։

Այս պիտի հետևի որ կինս ոչ միայն պիտի դըժկամակի՝ այլ և պիտի տրտմի. վասն զի իրեն այս բանիս ետևէն անկանելն անձնասիրութեան կամ իր իրաւունքն առաջ տանելու համար չէ, և ոչ ալ զիս իր կամաց հնազանդեցնելու մտօք. այլ խղճմտանաց գործ մի համարած լինելուն համար է. իբրև ճշմարիտ քրիստոնեայ ամուսին՝ իւր վիճակն իմինէս ամենևին չուզեր զատել, և կը փափաքի որ յաւիտեան ինձ հետ միացած մնայ. ուստի զինքն անհանդիստ առնողն իմ հոգւոյս վիճակն է, և իրաւցնէ իր հաւատացածին նայելով՝ իրաւունք ունի անհանդիստ լինելու, որովհետև սրտով համոզուած է որ առանց հաւատոց փրկութիւն չկայ։ Արդ հիմա ես իր աչաց առջև հաւատք չունիմ որովհետև ամենևին եկեղե-

ցին ոտք ոչ կոխեմ՝ բաց 'ի պսակի և Թաղման հան-
գէսներէն, այն ալ յընտանեկան և յընկերական
պատշաճից ստիպեալ: Ուրեմն ինքն կը մտածէ որ ե-
թէ այս վիճակիս մէջ մեռնիմ՝ իմ ճոգիս իրենինէն
յաւիտեանս բաժնուած պիտի մնայ. այս մտածու-
թիւնս զինքն յուսահատութեան մէջ կը ձգէ:

Եւ որչափ ալ այս նիւթոյս վրայ իրեն հետ պատ-
ճառներով խօսիմ և իմաստասիրութեան ուսու-
ցածն իրեն զրուցեմ՝ աւելորդ է ու պարապ տեղն պի-
տի հոգնիմ, և իմ պատճառաբանութիւններս իւր
համոզմունքն ամենևին պիտի չկարեն փոխել. և ինչ-
պէս որ ես կրօնից՝ վարդապետութեանց և հրահան-
գաց ոչ հաւատամ՝ ինքն ալ ևս առաւել ոչ հաւա-
տայ թէ իմ իմաստասիրութիւնս կարէ կանոն լի-
նել վարուց: Առակ եղած խօսք մի է թէ մարդ իր
սենեկապանին առջև մեծ մարդ չկարէ լինել, այսինքն
որչափ մեծ մարդ ալ լինի՝ իր գաղտնիքն գիտցող ծա-
ռայն զինքն չ յարգեր. ես ալ ասեմ որ մարդ իր կը-
նոջն համար իմաստասէր չէ, որ նախ և առաջ Սո-
կրատայ վրայ կը ճշմարտի՝ որ ամեն իմաստասիրաց
հայրն ու հեղինակն էր, և սակայն անպատկառ ու
դեգ Քսանթիպպէէն ամեն օր թուք ու մուր կը կրէր
ու կը նախատուէր, թէպէտ և Դելփիսի պատգամն
մահկանացուաց մէջ ամենէն աւելի իմաստունն հրա-
չակեր էր զնա: Փառք Աստուծոյ, իմ կողակիցս
Քսանթիպպէի ոչ նմանի, այլ բարի ու հաստատուն
քրիստոնեայ մի է՝ որ անկեղծութեամբ իւր կրօնից
պարտքերն կը կատարէ, և պատրաստ է կեանքն ալ
իւր հաւատոց համար տալու. այս բանս ինձ մեծ
բաղդ է, որովհետև էրիկ մարդու պատուոյն և եր-
ջանկութեան ամենէն ապահով երաշխաւորու-
թիւնն ալ այս է. բայց այս ալ պէտք է խոստովա-
նիմ որ շատ դիւրին բան ալ չէ, և երբեմն նաև նե-
ղացուցիչ ալ է:

Երիտասարդութեանս ատեն Ֆաննիին սիրահարե-
ցայ, և շատ աշխատեցայ նորա հետ կարգուելու հա-
մար. և թէպէտ ինքն ալ զիս կը սիրէր, բայց եր-
կայն ատեն դէմ դրաւ, որովհետև աւելի կ'ուզէր
հաւատարիմ քրիստոնէի և կրօնից պարտքերն կա-
տարող մարդու մի հետ կարգուիլ. ես զինքս այնպէս
ցուցանելով զինքն չհաւատացուցի, որ սուտ զրու-
ցել և խաբել լինէր, հապա այսչափ միայն ասացի
որ ես ալ ատենօք եռանդուն քրիստոնեայ էի, և
թերևս Աստուծոյ շնորհիւն և բարեպաշտ կնոջ իմ
սրտիս վրայ գործած բարի ազդեցութեամբն՝ ման-
կութեանս հաւատքն կարէր նորէն արծարծիլ: Այս
յոյսս իրեն տալով ոչ կարծէի որ զինքն կը խաբեմ,
որովհետև անկարելի բան ալ չէր. և սակայն այս
յոյսս ես ինքս ալ չունէի, և ոչ ալ ունելու փափաք
մի ունէի սրտիս մէջ, որ ինձ տեսակ մի խիղճ եղած
է, որովհետև մինչև ցայժմ խեղճն մեծ բան մի չը-
վաստկեցաւ այս կողմանէս, և ապացոյցն ալ այս է
որ երէկ չէ առջի օրն այնպէս խիստ կերպով մերժե-
ցի իր առաջարկն կիրակի օրն միատեղ եկեղեցի եր-
թալու: Ապա ուրեմն ինքն ալ միտքն դրած է թէ
խաբուած է, և որչափ ալ ինքզինքս պարտական
ոչ համարիմ նմա հաճոյ լինելու համար դարձի գալ,
բայց գոնէ մարդավարութեան համար պարտաւոր
կը սեպեմ ինքզինքս՝ որ այս բանիս մէջ նորա տըրտ-
մութիւնն չաւելցնեմ, և ապերախտութիւն չփոխա-
րինեմ իրեն սիրելամիտ և բարեացակամ խնամոցն՝
որով իմ հոգւոյս փրկութեանն համար կ'աշխատի,
ինչպէս որ ինքն ասէ: Արդեօք ինքն այս վախճանիս
հասնելու համար գործածած միջոցներու ընտրու-
թեան մէջ կը սխալի՞ թէ չէ, իմ գիտնալու բանս չէ.
ստոյգն այս է որ իմ վրաս ունեցած սիրոյն աւելի
մեծ նշան չէր կարող տալ:

Հիմա ենթադրեմք թէ իր աղաչանաց մտիկ առ-

նելով ուղածն կատարեցի. ի՛նչ մեծ և քաղցր ուրա-
խութիւն պիտի լինի իրեն սրտին և հոգւոյն, որով-
հետև միտքն դրել է թէ այսու պիտի վաստկի յաւի-
տեանս յաւիտենից իր երկանն հոգին: Այս նկատ-
մամբ ունեցած ամեն յոյսերն պիտի կենդանանան, և
պատարագի ներկայ գտուելովս և իր ժողովրդապե-
տին յորդորակն լսելովս՝ պիտի համարի թէ կէս մի
դարձի եկի և փրկուեցայ. և այս սկզբնաւորութեան
յաջողութեամբն բորբոքած՝ աւելի ևս եռանդագին
աղօթքով՝ ամեն սուրբերն յօգնութիւն պիտի կոչէ,
և երկնից ամեն շնորհքն իր սիրելի անհաւատին վրայ
պիտի իջեցնէ. և անտարակոյս զիս ալ աւելի շատ
պիտի սիրէ, և ամեն կերպով պիտի ջանայ իւր սէրն
ինձ ցուցանելու: Հոս ուրիշ բան մ՚ալ կայ դիտե-
լու, այսինքն թէ իր սրտին մէջ անհանգստութեան
տեղ յոյսն մտնելով՝ աւելի երջանիկ պիտի լինի, և
իւր այրն ալ երկնից և երկրի ամեն քաղցրութիւն-
ներուն պիտի զեղանի:

Խե՛ղճ կանայք, որչափ դիւրաւ կը տարուբերին
՚ի վշտաց և յուրախութենէ՝ իրենց սրտին շարժ-
մանց և երևակայութեան տրամադրութեանցն հա-
մեմատ, որ ձախող և յաջող բաղդին թեթև հովուն
մերթ կը ցածնան մերթ կը բարձրանան: Եւ սակայն
այս տկարութիւնս ալ իր խանդակաթ մասն ունի՝ մա-
նաւանդ ուր բարեսրտութիւնն կը տիրէ, որպէս է
Ֆաննիի սիրտն: Բաց աստի, այս տկար արարածներս՝
որ միտքերնին շատ բարձր և խելքերնին շատ սուր չլի-
նելուն համար՝ որոշողութեան և պատճառաբանու-
թեան տատամսութենէն և տարակոյսներէն ալ ա-
զատ են, երբ անձի մի կամ իրի մի վրայ վստահու-
թիւն ունին՝ շատ անգամ քան զմեզ աւելի լաւա-
գոյն ապահովագոյն և ինքնայօժար կը գործեն, ա-
ւելի ողջմտութեամբ և եռանդեամբ. որովհետև միշտ
պատրաստ են իրենք զիրենք սիրածնուն նուիրելու,

զոր մեք արքս մարդիկս ընդհանրապէս ոչ առնեմք՝
որչափ ալ դիտուն և իմաստասէր լինիմք: Ասի որ
եթէ անկեղծութիւնն աշխարհէս աքսորուէր՝ թա-
գաւորաց սիրտն պէտք էր ապաւինել. աւելի ճըշ-
մարտութեամբ կարեմք հաստատել՝ որ եթէ քրիս-
տոնէական հաւատքն զաշխարհս կը փրկէ՝ կանանց
ձեռքովն պիտի փրկուի:

Վերջապէս եթէ կիրակի օրն եկեղեցի երթամ՝
կինս շատ երջանիկ պիտի լինի, և իւր երջանկու-
թիւնն իմ վրաս ալ պիտի ցայտէ. իսկ եթէ չուզեմ
երթալ՝ սաստիկ պիտի տրտմի, և ժամանակ մի մութ
ամպ մի մեր վրայ պիտի ծանրանայ, խաւարն լուսոյ
տեղ տիրելով: Բարիզ քաղաքն պատարագ մի կ՚ար-
ժէ ասէր Պէարնցին (Հենրիկոս Դ). դեռ ևս իմս
ալ ասելիքս կուգայ՝ թէ մեր տան խաղաղութիւնն
ալ՝ որ իմ թագաւորութիւնս է՝ այն ալ պատարագ
մի կ՚արժէ:

Տատամսութիւն (շարայարութիւն):

18 Ապրիլ:

Կարգն աղջկանս եկաւ. բայց այս պարագայիս մէջ
երկուքն ալ մի են. անտարակոյս ծածուկ դաշնա-
կցութիւն մի կայ մօրն ու զաւկին մէջ իմ հոգւոյս
փրկութեանն համար. սակայն պղտիկն իր նորածին
հաւատոց եռանդեան հետ՝ սարսափելի տղու ան-
մեղ ժտութիւնն ու թախանձանքն ալ կ՚աւելցնէ:
Անցեալ աւուր վիճաբանութենէն ետև՝ Սոֆի քա-
նի մի խօսք լսած լինելով, ամեն կերպով զհայրն
շոյելու շողոմելու կը ջանայ՝ իւր հասակին շնորհա-
լից կերպերուն ու սրտին փափկութեամբն. իսկ
մայրն զգուշաւոր կերպ մի բռնելով՝ ծանրէն կը քա-
շէ: Բնաւ այս աստիճան սիրուն և կամակատար

կերպ չէի տեսած զաւկիս վրայ, որպէս թէ ինձ հաս-
կըցնել ուզելով՝ որ այսպիսի սիրուն զաւկի մի ու-
զածն չառնելը անկարելի է: Ո՛հ ո՞րչափ դժուար է
այս պզտի համբարուաց անոյշ ձայնին հանդուրժել
կամ դէմ դնելն, թէ և բիւր պատճառ ալ ունենաս.
ուրիշ հնարք չկայ. երբ ոչ կամիս ուզածնին առնել՝
պէտք է որ ականջներդ թխես գոցես, որպէս զի նոցա
հրապուրիչ ձայնն մինչև սիրտն չհասնի. խելքն ալ
այս է:

Վերջապէս եթէ տղայն այսչափ կը փափաքի այս
բանիս՝ ինչո՛ւ իրեն այս հաճոյքս չշնորհեմ. մանաւանդ
որ իր կողմանէ բարի փափաք մի է այս բանս, և տա-
րակոյս չկայ՝ որ եթէ համոզուած չլիներ թէ իր ու-
զածն ինձ ալ մեծ բարիք պիտի դառնայ՝ այսչափ ե-
տեւէս ոչ անկաներ. իրաւ կարէ խաբուած լինել՝ բայց
վերջապէս այնպէս համոզուած է. ապա ուրեմն այս
բանիս մէջ իր բարի դիտմանն նայելու է, որովհե-
տև մնացածին վրայ դատաստան չէ կարող առնել:

Բայց այսոր մէջ ուրիշ խնդիր մի ալ կայ՝ որ է
խնդիր խղճի: Աղջիկս իւր ունեցած հաւատքովն՝
այնպէս համոզուած է որ կիրակի օր պատարագի
ներկայ դտուիլն՝ ամեն քրիստոնէից համար էական
պարտք է. և եկեղեցւոյ պատուիրան լինելով՝ ամեն
հաւատացեալք պէտք է որ պահեն. և հետևապէս
չպահողներն անհաւատ են: Ուստի եթէ յանձն չառ-
նեմ երթալու՝ միտքն պիտի դնէ թէ իր հայրն ալ
այն անհաւատներէն է, քրիստոնեայ չէ, կաթողի-
կեայ չէ, այլ Եկեղեցւոյ թշնամի, կամ գոնէ յԵկե-
ղեցւոյ բաժանեալ՝ յորմէ դուրս փրկութիւն չկայ,
ապա ուրեմն կորստեան և դժոխոց ճամբուն մէջն է:
Ուստի այս երկու ցաւալի հետևանացս մին պիտի ել-
նէ. կամ այն է որ այս տղայս միտքն պիտի դնէ թէ
իր հայրն դատապարտուած է և յաւիտեանս իրմէ
պիտի բաժնուի, որու ցաւէն մինչև կարէ ևս խել-

քին դալ ու խենթենալ. կամ այն է որ աւելի վը-
տահութիւն ունելով հօրն իմաստութեան վրայ՝ քան
թէ եկեղեցւոյ ուսուցածին, այս կրօնական անխը-
տրութեանս պիտի հաւանի՝ այնպիսի մեծ օրինակ
մի առջևն ունելով, և քիչ ատենէն այնոր պիտի հե-
տևի, և պիտի լինի տեսակ մի կորովամիտ և ազատա-
խոհ կին, որ ամենևին իմ բանիս ոչ դայ: Ա՛հ ո՛չ, ո՛չ
ասեմ, հազար անգամ ո՛չ. այս բանիս ոչ հաւանիմ,
այլ կ՚ուզեմ որ զաւակս ալ իր մօր պէս հաւատա-
ցեալ և հաւատարիմ լիցի իր կրօնից. կ՚ուզեմ որ
ջերմեռանդ կին մի լիցի և բարի քրիստոնեայ՝ զար-
դարեալ ամենայն առաքինութեամբք՝ զորս ողջամիտ
կրօնք ուսուցանեն կանանց, և որոյ քաղցր ազդե-
ցութիւնն՝ նոցա բնութեան գեղեցկութիւնն կ՚ա-
ւելցնէ:

Ա՞յսպէս հա. բայց թէ որ ես կ՚ուզեմ որ աղջիկս
քրիստոնեայ ու կաթողիկեայ լիցի, հապա ինչո՛ւ ես
որ իր հայրն եմ այնպէս չեմ. և ինչպէս կարեմ զլա-
նալ իրեն իմ օգտիս համար այն բանն՝ զոր կը ցան-
կամ որ ինքն իւր օգտին համար ունենայ, և զոր այն-
չափ թախանձանօք յինէն կը խնդրէ: Զուր տեղ
պիտի աշխատիմ իմաստասիրական բացատրութիւն-
ներ տալու իրեն այս խնդրոյս վրայ. վասն զի եթէ
հասկանայ ևս՝ իր հաւատոց և ողջմտութեան
դէմ պիտի չզօրեն. և ինչ պատասխան պիտի տամ՝
երբ լալով հառաչելով ինձ ասէ. Դու ոչ ուզես առ-
նել այն բանն՝ ինչ որ կ՚ուզես որ ես առնեմ. ինչո՛ւ
այն որ իմ հոգւոյս օգտակար է՝ քուկինիդ պիտի
չլինի: Պարապ տեղ պիտի ասեմ՝ թէ ինք կին է,
աղջիկ է, ու ես այր եմ, ինքն տգէտ է՝ ես իմաստուն
եմ. և թէ իմաստասիրութիւնն ինձ ուսուցած է
ինչ որ իրեն կրօնք ուսուցել են, և ուրիշ այս տե-
սակ խօսքեր: Կարծես թէ կը լսեմ իր անվեհեր
կերպով ինձ տալու պատասխանն՝ թէ Յիսուսի

Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ այր և կնոջ՝ տգիտի և իմաստնոյ զանազանութիւն չկայ, այլ ամենքն ալ Որդւոյն Աստուծոյ արեամբ վերածնեալ հոգիներ են՝ որ իր շնորհիւն միայն կարեն փրկութեան հասնիլ։ Եւ յիրաւի կը յիշեմ որ ատենօք Սրբոյն Պաւղոսի թղթերէն միոյն մէջ կարդացել եմ թէ հրեայք և հեթանոսք միով հաւատով Փրկչին միացեալ են, և թէ Յիսուսի Քրիստոսի արեան արդեամբն՝ առաջի Աստուծոյ յոյնն ու բարբարոսն՝ ազատ մարդն ու դերին իրարմէ տարբերութիւն չունին, այլ ամենքն միոյ Հօր որդիք են որ յերկինս է։

Եւ յիրաւի թէ որ հիմա ես ինձ ասացածս՝ ինք ինձ ասելու լինի՝ շատ պիտի շփոթիմ ու խռովիմ. և աւելի ևս պիտի այլայլիմ թէ որ յանկարծ լեզուն փոխելով՝ դառնայ իւր մօրն ու ասէ. Ես ալ ուրեմն եկեղեցի ոչ երթամ՝ որովհետև հայրս ոչ կամի երթալ, իմ հոգիս իրենէն աւելի յարգի չեմ սեպած, և զինքն շատ սիրելուս՝ թէ որ ինքն պիտի դատապարտուի՝ ես ալ իրեն հետ կ'ուզեմ դժոխք երթալ։ Արդեօք իրաւունքն որո՛ւ է, հօ՞րս թէ մօրս. մայրս բարի քրիստոնեայ մի է, իսկ հայրս մեծ իմաստասէր. պէտք է որ 'ի նոցանէ միոյն կողմն բռնեմ, որովհետև նոքա իրարու հետ ոչ միաբանին. ուստի ես ալ իմաստասիրութեան կողմն համոզուեցայ։ Տէր մի՛ արասցէ, վասն զի եթէ այս սարսափելի տղայն ասացածն առնէ և ինձ աշակերտի՝ բանս բուսած է. աւելի կ'ուզեմ հետն իր եկեղեցին երթալ՝ քան թէ թողուլ որ ինք մեր դպրոցներն ոտք կոխէ։

Յուսամ որ այս բանս ոչ հանդիպի, աղջիկս հօրն պէս իմաստասէր ոչ լինի. բայց անկարելի բան ալ չէ, կամ գոնէ մինչև հոն ալ որ չհասնի՝ կարէ խեղճ տղայն իմ ընթացքէս գայթակղիլ, և իմ խօսքովս ու օրինակովս իր հաւատքն թեթևնալ։ Ա՛հ, Աստուած պահէ. յիրաւի ես հաւատք չունիմ, կամ գոնէ այն-

պէս կարծեմ թէ չունիմ. բայց սակայն ոչ բնաւ հակառակել կամ ծիծաղել եմ կնոջս հաւատոց վրայ, և բոլոր աշխարհ ալ վաստկելիքս եթէ գիտացից՝ ամենևին ոչ կամիմ զաւկիս հաւատքն ալ. դըրդուեցնելու. Աւետարանին սարսափելի խօսքն դեռ միտքս է. « Վա՛յ նմա որ պղտի տղայ մի կը գայթակղեցնէ՝ այլ լաւ էր որ երկանի քար մի կապէին նորա վիզն և ծովուն խորն նետէին »։ Հապա ի՞նչ պիտի լինի հօր՝ որ դժբաղդաբար չարն ուսուցանէ իր զաւկին, վատթար ճամբու մէջ դնէ զայն, կամ 'ի բարւոյն ետ դարձնէ. որպիսի՞ պատասխանատուութիւն. մտածելով անդամ կը փշաքաղիմ։

Տատամսութիւն (շարայարութիւն)։

19 Ապրիլ։

Այս նիւթոյս մէջ երկու բան կայ՝ որ ինձ կը դըպչի՝ կինս չտրտմեցնել ու զաւակս չգայթակղեցնել. իսկ անձնականիս գալով դժուարութիւն մի չունիմ. վասն զի թէպէտ մինչև աստիճան մի հասարակաց կարծիքն կը պատուեմ՝ սակայն ի՞նչ պիտի ասենի գերի չեմ. որովհետև յիրաւի իմաստասէր լինելու չարժեր՝ թէ որ ամենուն զրախօսութեանց ականջ կախեմք։ Տարակոյս չկայ որ եկեղեցւոյն մէջ տեսնուիլս՝ զարմանք ու զգացում պիտի պատճառէ շատերուն՝ որ իմաստասիրութեան վարժապետ լինելս գիտեն, որովհետև մեր օրերն իմաստասիրութիւնն կրօնից հակառակորդ ու թշնամի կը սեպուի, թէպէտ և ըստ իս յանիրաւի։ Ես ալ կը խոստովանիմ որ եռանդուն բարեկամն ալ չէ, և թէ որ ինչպէս ասեն իմաստասիրութիւն և կրօնք քոյր կամ քեռորդիք ալ են՝ սակայն զիրար շատ չեն սիրեր. թէպէտ

և մարդավար խոստոսէրներ ալ կան՝ որ այս բա-
նիս մէջ ալ կը ջանան յարմար ճամբայ մի գտնել, ինչ-
պէս ամեն բանի մէջ։

Գիւղիս բնակչաց կարծիքն ալ հոգւոյ է, որովհետև
ճանչցած և տեսնուելու մարդիկս չեն. բայց կան
քանի մի դրացիներ՝ որ ձեմարանի կամ Հոմալա-
բանի անգամ են. անոնցմէ իրենց մարդիկն՝ մա-
նաւանդ իրենց կանայք՝ որ այս նիւթոյս մէջ նոյն փա-
փաքն ունին իրենց արանց համար՝ ինչ որ իմ կինս
ինձ համար, այս լուրս շուտով իրենց պիտի հաս-
ցընեն, և այսպէս բերնէ բերան անցնելով մինչև Բա-
բիլ պիտի հասնի. ու լսողներէն ոմանք պիտի ա-
սեն. Դարս կղերականաց է, եկեղեցականք նորէն
գլուխ կը վերցնեն, ուստի պատարագի երթալն ալ
թերևս իր օգուտներն ունի, և թէ որ ծայրն շահ մի
կայ՝ երթալն խոհեմութիւն է. որովհետև այս անուն
մարդն ալ (որ ես եմ) այն ատենէն անհանճար ու
տգէտ մարդ էէ՝ որ միամտութեամբ ու անկեղծու-
թեամբ համոզուած՝ այս բանս գործէ։ Ա.յսպէսով
այն մարդիկն գիս կեղծաւորի տեղ պիտի դնեն. իսկ
ուրիշներն որ այնչափ չարթակամ չեն՝ պիտի ասեն.
Իրաւ այդ մարդդ հանճար ու գիտութիւն ունի՝
բայց բնութեամբ տկար է, և իւր կիներ քթէն բռնած՝
գինքն ուզած տեղն կը տանի. արդ ամենքիս գի-
տեմք որ նորա կիներն ժամասիրին մէկն է, և շատ ա-
տենէ ՚ի վեր կ՚աշխատէր՝ այրն ալ իրեն նմանցնելու,
ուստի վերջապէս փափաքին հասել է ու գինքն գար-
ձի բերել է. այսօր պատարագի տարել է գինքն,
վասն ալ անշուշտ խոստովանանքի պիտի տանի։ Ա.յս
վերջիններս ալ գիս միամիտ բարեմիտ մարդու տեղ
պիտի դնեն՝ որ կինոջս խօսքէն դուրս ոչ ելանեմ, և
ամեն բանի մէջ նորա ուզածն կը կատարեմ. և ասա-
ցածներն ալ բոլորովին սուտ չէ. վասն զի իրաւցնէ
կինս շատ կը սիրեմ, և խոստոսէրը պաշտօնակցաց

ամեն գովեստներէն վեր կը համարիմ զինա երջանիկ
և գոհ առնելու համար ունեցած հաճոյքս։

Եւ իրաւի ինչու անձնասիրութեան այս փոքրիկ
զոհողութիւնս չառնեմ պիտի իրեն՝ որ ինձ համար
այնչափ և ամեն տեսակին կ՚առնէ. ասեն թէ ինքն է
զիս կառավարողն, որովհետև իր խօսքն կը մեծարեմ
և իրեն հաւատարիմ եմ. այսօր ալ պատճառն գիտես
ինչ է. վասն զի երկայն ատենէ ՚ի վեր կը գիտեմ
որ գործնական կեանց մէջ՝ ինքն իր ողջմտութեամբն
աւելի լաւ դատաստան առնէ մարդոց և իրաց վրայ՝
քան թէ ես իմ խոստասիրութեամբս. այսօր հա-
մար է որ ես ալ՝ երբ խելքս կը պառկի՝ իրեն կար-
ծեսյն կը հաւանիմ. և երբ խելքն է իրեն առաջ-
նորդն՝ այլ իմ հոգս չէ որ ես ալ իրմէ առաջնոր-
գութիւն ինչ ինչ պարագայից մէջ։

Համառօտ ասելով, գիւղիս քաղքին տանց և գինե-
տանց զբաղմունքներն ալ հոգս չեն՝ երբ հաս-
տատ գիտեմ որ սուտ են. Հիմա այս բանս յայտնի
է որ կիրակի օրն եկեղեցին երթալ՝ միայն կինոջս ու
զաւկիս հաճոյ լինելու համար է. և այսու բարի էր-
կան և բարի հոր պատշաճ գործ մի պիտի կատարեմ
որոյ մէջ կեղծաւորութեան շունչն անգամ չկայ։ Թէ
որ կայ ոք որ այս պարագայիս մէջ զիս մեղադրելու
իրաւունք ունենայ՝ Ա.յն է՝ որուն Ժողովուրդն եր-
կըրպագութիւն առնէ այն տաճարին մէջ. որովհետև
կը խոստովանիմ որ ես այնպէս կը հաւատամ թէ ու-
րիշ ամեն տեղ ալ իրեն երկրպագութիւն կարեմ
առնել, և թերևս այլ լաւ կերպով՝ թէ լերանց վրայ
թէ ծովուն եզերքն և թէ անտառաց խորերն, և
իւր տունն սեպուած տեղն երթալս ոչ այնչափ գին-
քը հոն գտնելու համար է՝ որչափ գերդաստանիս
հետ ընկերելու համար։

Լուծումն խնդրոյն։

21 Ապրիլ։

Եղև, և կարծեմ թէ շատ լաւ եղև, կամ գոնէ այնչափ լաւ՝ որչափ որ ինձ կարելի էր։ Մայրն ու աղջիկն տարակուսի մէջ թողի մինչև վերջին վայրկեանն՝ թերևս այսոր համար որ տակաւին բոլորովին միտքս չէի որոշած. ուստի կիրակի առաւօտ՝ պատարագի ատեն՝ երբ իրենք սակաւ մի տրտմած՝ ինչպէս որ ինձ երևցաւ, կը պատրաստուէին եկեղեցի երթալու՝ գլխարկս ձեռքս զիրենք դիմաւորեցի։ Այցելութեան կ'երթաս, ասաց ինձ Ֆաննի։ — Այո, պատասխանեցի, միանգամայն ձեզ ընկերել կ'ուզեմ։ Զարմացմամբ մանաւանդ թէ տարակուսելով երեսս նայեցաւ, կարծես թէ սրտէն զգացածին ոչ համարձակէր հաւատալու. և որովհետև պատասխան տալու տեղ՝ ժպտեցայ՝ ուրախութենէն լալով վիզս պլլուեցաւ. Սոֆին ալ ձեռքս բռնած կը համբուրէր. արանց և հարց մէջ ամենէն երջանիկն էի այն միջոցին՝ երջանկութեամբն զոր իրենց կուտայի։

Վերջին զանգակն հնչելուն՝ 'ի միասին ճամբայ ելաք. ծառայներն ալ ապշած կը նայէին՝ որովհետև այսպիսի բան տեսած չէին. թևս կնոջս տուի, Սոֆին ալ միւս կողմէն ձեռքէս բռնած՝ ուրախութենէն բոլոր ճամբայն կը ցատքտէր. սրտերնիս այնչափ ելած էր՝ որ բան մի չէինք խօսեր, ու ճամբայն շատ հեշտ երևցաւ ինձ. եթէ զաւակս քովս չլինէր՝ ամենքն զմեզ նոր հարս նոր փեսայ պիտի կարծէին, այնչափ ուրախ ու զուարթ կ'երթայինք. և յիրաւի ալ այս փոքր դիպուածս մեր սէրն նորոգել էր։

Եկեղեցին որ հասաք կնկանս և աղջկանս մէջ տեղ նստայ. տօն օր ալ լինելուն՝ բազմութիւնն շատ էր.

և տեսի որ շատերուն աչքն ինձ կը դառնային՝ զոր հոն տեղն ամենևին տեսած չէին։ Ես նոցա նայելուն հոգ չարարի ամենևին. և երբ պատարագն սկսաւ՝ գրպանէս փոքրիկ գիրք մի հանելով՝ սկսայ կարդալ. կարծեմ թէ Ֆաննի շատ հետաքրքիր էր գիտելու թէ ինչ գիրք էր ձեռքինս. բայց որովհետև 'ի պատիւ տեղւոյն բան մի ոչ խօսէի և ուշադրութեամբ գիրքս կը կարդայի՝ որ աղօթագրոց պէս ալ կազմուած լինելով՝ աղօթքի գիրք կը նմանէր, չհամարձակեցաւ հարցնելու, այսչափիս գոհ լինելով որ հոն կը դտուէի ու պարկեշտ ալ կը կենայի։ Ձեռքի գիրքս Սրբոյն Աւգոստինոսի Խոստովանութեանց առաջին հատորն էր՝ զոր ճամբայ ելնելէն առաջ դիտմամբ առել էի, մանաւանդ թէ այն ձեռքս անկել էր՝ եկեղեցւոյ մէջ ժամանակս անցնելու համար լաւ գիրք մի բնտռած ժամանակս. որովհետև անվայել բան կը սեպէի այնպիսի գիրք առնուլ որ անյարմար լինի իմ ներկայ հաւանեալ կացութեանս, իսկ հեթանոսական մատենագրութիւն մի առնուլ՝ մտքէս անգամ ոչ անցանէր, ինչպէս որ առնէ իմ պաշտօնակցացս մին՝ զոր իւր ջերմեռանդ աղջիկն եկեղեցին տարած ատեն՝ պատարագի ժամանակ Վիրգիլիոս կամ Որատիոս կարդալով կը զուարճանայ։ Յիրաւի ես ալ դեռ բաւական հաւատացեալ չեմ՝ որ եկեղեցւոյ ամեն արարողութիւններն հասկնամ, բայց ոչ ալ կամիմ այնպիսի բան մի առնել՝ որ ներկայ գտուողներուն հաւատքին հակառակ կամ գոնէ օտար է. այն բանս խղճիս կը դպչի և կեղծաւորութիւն կը համարիմ։

Հաճութեամբ լսեցի ժողովրդապետին յորդորակն, որ աւետարանական խօսք էր՝ իր բոլոր պարզութեան մէջ. և հովուին ձայնէն ալ այնպէս լաւ կ'իմացուէր իւր համոզուած լինելն և իւր ունկընդրաց օդտակար լինելու և զնոսա ալ հաւանեցնե-

լու փափաքն՝ որ մտքէս անդամ ոչ անցանէր այնոր դէմ առարկութիւն մի առնելու և պակսութիւն մի գտնելու՝ և ոչ իսկ իւր խօսուածքին սակաւ մի անհարթ ձևոյն վրայ. այլ լաւն ալ այն էր՝ որ շատ երկայն չխօսեցաւ և ամենևին հակաճառութիւն չբխառնեց, ինչպէս որ կը վախէի, որովհետև իմացայ որ զիս տեսաւ, և կարծէի թէ աստի առիթ պիտի առնու՝ ինձ պէս անհաւատ մի ամչցնելու, և զիս դարձի բերելու համար՝ իմաստասիրութեան դէմ ամեն աստուածաբանական պատճառաբանութիւններն գլուխս պիտի թափէ: Բայց կարծածիս պէս չելաւ. այլ ընդհանուր բոլոր աշխարհիս համար խօսեցաւ՝ առանց մասնաւորի դպչելու. ուստի մտքէս շնորհակալ եղէ որ այն օրն իմաստասիրաց և ամբարշտաց խնայեց: Թէ որ հակաճառութեան մտնէր՝ անշուշտ զիս պիտի սարտուցանէր ու գրգռէր, ընդհակառակն խօսուածքին օծումն ու բարեսրտութիւնն սիրտս շարժեցին, և եկեղեցիէն դարձած ատենս կնոջս ասացի՝ որ իրաւցնէ բարի քահանայի և պատուաւոր մարդու պէս խօսեցաւ: Տարակոյս չըկայ որ Սրբոյն Ամբրոսիոսի խօսքն ինչ ազդեցութիւն որ արար Աւգոստինոսի վրայ, այս քահանայիս խօսքն իմ վրաս նոյն տպաւորութիւնն չարար. բայց նախ որ հոս ոչ Աւգոստինոս կար ոչ Ամբրոսիոս, և երկրորդ արդէն մեծ բան էր՝ իմ հոգւոյս տրամադրութեանց նայելով՝ որ յօժարութեամբ մտիկ առնել տուաւ ինձ իր խօսքն և զինքն յարգել տուաւ:

Բայց շատ անդամ մարդ բան մի բնառած ժամանակ՝ ուրիշ մի կը գտնէ՝ զոր չէր յուսար. ես ալ առանց ուզելու իմ քարոզիչս գրպանիս մէջ գտի. և ժողովրդապետին քարոզէն ետև՝ որ ինձ պատրաստութիւն մի եղև, Սրբոյն Աւգոստինոսի քարոզն՝ այսինքն Խոստովանութիւններն անյագ կերպով սկսայ կարդալ բոլոր պատարագին ատեն: Ուրիշ անդամ ալ

կարդացել էի՝ բայց աճապարանօք և միայն գրաւորական մասին ուշ դնելով՝ ուստի ինձ տպաւորութիւն մի չէր գործած. անտարակոյս դեռ զայն յարգելու կարողութիւն չունէի և ոչ իսկ հասկանալու. յետոյ մէյմ՝ ալ ձեռքս չէի առած այն գիրքն, և ահաւասիկ կնոջս և աղջկանս յորդորմամբ պատարագի երթալու ժամանակ՝ ձեռքս անկած գիրքն՝ գրեթէ ճիշդ նկարագրութիւն մի էր իմ մտաւորական ու բարոյական կացութեանս: Վասն զի ինքն ալ՝ այսինքն Ս. Աւգոստինոս իմաստասէր մի է որ մանիքեցւոց հրէշ մոլորութեանց հետևելէն ետև՝ դարձի կուգայ՝ իւր լուսացայտ միտքն ամեն վարդապետութեանց հողմոց՝ և իւր փափուկ սիրտն կրից յուզմանց տալէն ետև: Յիրաւի բիւր անդամ զիս կը գերազանցէ թէ իւր հանճարովն և թէ իւր դարձին անկեղծութեամբն: Բայց թէ որ իմաստասիրութեան կողմանէ՝ մոլորութեան մէջ ալ եմ՝ որ կարելի է, սակայն կարծեմ թէ իրեն չափ ընկղմած չեմ. որովհետև ես պըլատոնական եմ, իսկ ինքն մանիքեցի էր: Դարձեալ ապօրինաւոր սիրելութեանց մէջ ալ շաղուած չեմ, և բարեբաղդ եմ որ բարի ու բարեպաշտ կին մի ունիմ՝ որ ինձ համար կ՚աղօթէ, ինչպէս որ իր սուրբ մայրն իրեն համար կ՚աղօթէր: Միայն թէ արդեօք Ֆաննիի աղօթքն ալ Մոնիկայի աղօթից չափ զօրութիւն պիտի ունենայ. Աստուծոյ միայն է գիտելի: Ապա ուրեմն մեր և իւրաքանչիւրոցս գիրքին մէջ նմանութիւն մի կայ, և այսոր համար է որ իւր կենաց նկարագրութիւնն ալ շատ շահաւոր երևցաւ ինձ այս անդամ, ուստի կ՚ուզեմ այնոր ընթերցումն շարունակել: Սուրբ Աւգոստինոսի գրոց շնորհիւն՝ ձայնաւոր պատարագի ժամանակն ալ կարճ երևցաւ ինձ, և յիրաւի կը հաւատամ թէ բան մի վաստըկեցայ: Այս ամեն պարագայներս միացած՝ սրտիս մէջ այնպիսի ներքին ուրախութիւն մի զգացի՝ զոր շա-

տոնց չէի իմացած. կեանքն աւելի թեթև կ'երևէր ինձ, և ամեն բոլորս եղողներուն հետ աւելի բարեսիրութիւն կը զգայի: Նոյն աւուր մնացած մասն ընտանեացս մէջ քաղցրութեամբ անցուցի:

Անուշահոտութիւն հոգւոյ:

22 Ապրիլ:

Այս առաւօտ ժամն հինգին ելի ու պարտէզ իջի. որպիսի՛ գեղեցկութիւն. բնութեան կեանքն իւր ամեն հեշտարար և շնորհալից մասերովն և դարնանային առուգութեամբն կ'արթըննար. ծաղկներն ամեն կողմանէ կը շողային ածուներուն մէջ ու պտղատու ծառոց վրայ, և քաղցր բուրմունքն ջերմին հովով ամեն դին սփռելով՝ անոյշ զմայլմունք մի կուտային. զգայութեանցս այս յափշտակութիւնս՝ որ իւր պարզութեամբն երջանկութիւն կը բերէ՝ երէկուան աւուր յիշատակին հետ կը խառնուէր՝ այնոր վրայ հոգւոյ անուշահոտութիւն մի աւելցնելով: Այո, կը խոստովանիմ որ երէկուան օրն երջանիկ օր մի էր ինձ համար՝ որովհետև ինձ այնչափ սիրելի բարի հոգիներուն երջանկութեան պատճառ եղէ, և թերևս նոցա կենդանի հաւատոց մասնակից լինելուս համար, և նոցա պաշտած Աստուծոյն սակաւ մի մօտենալուս համար՝ զոր և ես ալ 'ի մանկութեանս պաշտած էի: Սրտիս այս բուրմունքն՝ բնութեան անուշահոտութիւնն աւելի կը սաստկացնէր և ներսի դիս կը թափանցէր. խղճի ուրախութիւնն ինչ բանի որ մօտենայ՝ կը գեղեցկացնէ ու կը զմայլեցնէ, և կարծես թէ գերագոյն լոյս մի կը ցայտէ՝ իւր նշոյլքն ու երանգներն մեր գոյութեան և շրջակայից վրայ տարածելով:

Կենացս մէջ անոյշ հոտերու շատ զգայուն եղած եմ, մանաւանդ դաշտաց և անտառաց հոտերուն, և գրեթէ կենացս ամեն պարագայներն՝ պատկերողութեանս անուշահոտութեանց հետ կապուած են, այնպէս որ յանկարծ հոտ մի առածիս պէս՝ անցած դնացած բաներն մտացս մէջ կը նորոգուին. և 'ի մանկութենէ ծաղկանց ծառոց և թփոց հետ մեծնալով՝ շատ կը սիրեմ, և երբ թեթև հողմոյ թևերովն նոցա բուրմունքն ինձ կը հասնին անպատմելի զմայլմունք կ'իմանամ, այնոր համար պարտիզիս մէջ շատ ծառեր ու ծաղկներ տնկել տուած եմ, և ամեն օր հին բարեկամաց պէս այցելութիւն առնելով կը զուարճանամ:

Փոքրիկ կալուածս այս առաւելութիւնս ալ ունի՝ որ անտառն հանող դուռ մի ալ կայ. և թէպէտ իմ ծառաստանս ինձ հերիք է և զգայութեանցս ամեն զուարճութիւնն ունիմ, բայց աւելի ունել կը փափաքիմ. վասն զի մարդուս բնական է լաւն ունելով՝ լաւագունին ետևէ լինել, ուստի յայտնի կ'երևի որ աշխարհիս մէջ գտուած բաներն զմեզ գոհ առնել չեն կարող: Գրեթէ բռնի անտառն մտի՝ որ նոր ծադած արևուն քաղցր լուսովն ոսկէզօծուել էր, և ուր կարծես թէ բնութիւնն աւելի ուժով զիս կը գրկէր: Հոս ծաղկանց գեղեցկութիւնն և անոյշ հրապոյրքն չկար, այլ աւելի զօրաւոր և աւելի ընդարձակ կեանք մի ամեն դի կը տարածուէր՝ խիտ խիտ տնկուած մեծամեծ ծառերէն ելած հոտերովն՝ որ երկրիս ծոցին մէջ խաղաղ կ'աճին ու կը շնչեն՝ այնոր պարարտ ծիծերուն կպած, և անտի անդադար ծըծած հիւթերն՝ իրենց ամեն մասերովն ամեն դին կը սփռեն: Կարծես թէ հոգիս կենաց ծովու մէջ ընկղմած էր, որ իր մակընթացութեամբն ու տեղատուութեամբն մերթ կը ճնշէր զիս մերթ կ'ընդարձակէր, և հոգւոյս մեծ զմայլմունք կուտար՝ մերթ

իմանալով որ այնոր անբաւ ծանրութեամբն կը ճըմ-
լէր ու գրեթէ կ'ոչնչանար, և մերթ ինքն իրմէ աւե-
լի վեր կը վերնար ու կը բարձրանար, որպէս թէ
բնութեան հաղորդելով՝ իրենէն աւելի գերագոյն
ոյժ մի ընդունած էր՝ որ աւելի բարձրագոյն գո-
յութեան մասնակից առնէր զինքն:

Տարակոյս չկայ որ եթէ մեր մարմնոյ և մտաց տը-
կարութեամբն բան մի կ'արժեմք՝ ուրիշ բանով չէ՝
բայց եթէ այս խորհրդաւոր մասնակցութեամբս,
զոր և մեր կենաց պարագայներուն մէջ լաւ կ'իմա-
նամք՝ ըստ բնականին՝ քաջառողջ եղած ժամանակ՝
երբ կարծես թէ մեր բոլորն եղած աշխարհիս կե-
նաց հետ կը նոյնանամք, հիւանդութեան ժամանակ
ալ՝ երբ ջերմի ուժովն կամ ջղային դրութեան ցն-
ցուելովն՝ նոյն իսկ տկար կին մի այնչափ կ'ուժովնայ՝
մինչև շատ մարդիկ միատեղ զինքն չեն կարող զսպել.
բայց աւելի ըստ բարոյականին՝ երբ հանճարն՝ ներ-
շընչմամբ՝ քան զհասարակ միտս 'ի վեր ամբառնայ,
կամ կամաց այնպիսի մղում և ոյժ մի կուտայ որ մե-
ծամեծ նուիրմանց պատրաստ առնէ զինքն՝ զոր իւր
կարողութեամբն անկարելի էր առնել:

Ինչ է ուրեմն այս վերամբարձ զօրութիւնս, այս
գերմարդկային կեանքս՝ բնական թէ գերբնական՝
ինչ անուն կ'ուզէ թող տրուի, բաւական է որ ես
զինքն կը ճանաչեմ ու կը վայելեմ, առանց որոյ գրե-
թէ ոչինչ եմք: Ոմանք Աստուած անունն կուտան
այս զօրութեանս, ոմանք ալ բնութիւն տիեզերք
աշխարհք. ես ճանձրացած եմ այս ամեն անուններէս՝
որ ամենքն ալ նոյն բանն՝ կամ իրարու հակառակ
բաներ կը նշանակեն: Ես կ'ուզեմ այս մթութեանց
խորն իջնել, և իրականն կ'ուզեմ ըմբռնել՝ չէ թէ ըզ-
ցնորս և զէակս մտաւորականս: Ես հաւատամ յԱս-
տուած անձնաւորական՝ արարիչ երկնից և երկրի,
և որ կառավարէ զնոսին իմաստութեամբ և զօրու-

թեամբ, և հետևապէս հաւատամ նաև նախախնա-
մութեան որոյ զանհուն իմաստութիւնն և զհայ-
րական խնամս տիեզերք համայն ցուցանեն: Բայց
ինչ է Աստուած ինքն յինքեան, և ինչ նկատմամբ
մարդոյ. արդեօք որպէս քրիստոնէութիւնն հաս-
տատէ՝ արարչութենէ աւելի ներքին յարաբերու-
թիւն մի եղած է իր և մարդկութեան մէջ. կամ թէ
ասեմք արդեօք ճշմարիտ է որ մասնական շնորհիւ և
առանձինն յայտնութեամբ իւր սիրոյն՝ Աստուած
մարդացել է մարդկան ազգն ուսուցանելու բժըշ-
կելու և փրկելու համար: Ահա այս է խնդիրն
որ այժմ զիս կը նեղէ, և որոյ լուծումն կը բնառեմ:
Հարկ է որ կամ հաստատապէս և կամ մերժողապէս
համոզուիմ այս բանիս՝ գոնէ իմ մտացս հանդար-
տութիւն և հոգւոյս խաղաղութիւն գտնելու հա-
մար, և որոշ ուղղութիւն մի իմ կամացս գործա-
դրութեան մէջ: Այս խուզարկութիւնս պարզ հա-
յեցողական գործ մի պիտի չլինի, և ոչ ալ շահա-
սիրութեան. արդէն իմ դասախօսութեանցս մէջ
հազար անգամ ամեն կարելի փաստերով ցուցած եմ
Աստուծոյ գոյութիւնն, բայց զինքն տիեզերաց ան-
բաւութեան դահին վրայ նստեցնելէն ետև ալ՝ չեմ
գիտցած թէ ինչ բանի գործածեմ զինքն. և որչափ
ալ իւր անունն կարողութիւնն և կատարելութիւն-
ներն հռչակած եմ՝ ուրիշ մեծարանք մի չեմ մա-
տուցած իրեն, և յիրաւի ոչ երկրպագութիւն ա-
րարեալ եմ, ոչ յօգնութիւն կոչել եմ և ոչ աղօ-
թել եմ: Սակայն եթէ Աւետարանին ասացածին
պէս ինձ համար եղել է՝ ինչ որ եղել է, պէտք չէ այլ
ևս երկայն ատեն այս ապերախտութեանս մէջ մնամ,
իւր իրաւունքն իրեն զլանամ, և իմ ապագայիս նկատ-
մամբ այսպիսի անխոհեմ անհոգութեան մէջ մնամ:
Իմ գոյութեանս գերագոյն տէր և տնօրէն Աստու-
ծոյ կենդանւոյ հաւատալէն ետև՝ սրտի մտօք չջա-

նալ նորա հետ միանալու՝ իրմէ ընդունելու համար լոյս և օգնութիւն որում այնչափ կարօտութիւն ունիմ, այս բանս պարզ թեթևամտութիւն մի չհամարուիր: Ուրեմն քաջութեամբ յառաջ վարեմք այս խուզարկութիւնս լռութեամբ և միայնութեամբ՝ ոչ եթէ ճառ մի գրելու մտօք կամ նոր գրութիւն մի հաստատելու դիտմամբ, այլ առ 'ի գրտանել ջահ իմն և լոյս իմ կենացս ընթացքն ուղղելու համար: Քրիստոնեայ լինիմ թէ չլինիմ, սակայն հարկ է խղճիւ դիտել թէ ո՛ւր եմ հասել, ինչպէս որ կը վայելէ արդար մարդոյ մի՝ որ ճշմարտութիւնն ամեն բանէն վեր կը սիրէ, և միտքն դրած 'է զայն ընդունելու ի՞նչ որ լինի, և ո՛րչափ դժուարութիւն ալ քաշէ զայն ընդունելու համար:

Նոր խնդիր:

23 Ապրիլ:

Յիսուս Քրիստոս Աստուա՞ծ է թէ չէ. թէ որ Աստուած չէ՝ որչափ ալ իր հանճարոյն և գործած բարեաց համար իրեն վրայ զարմանամ մեծարեմ ու պատուեմ, սակայն երկրպագելու պարտական չեմ, ոչ իւր կրօնքն ընդունելու և ոչ ալ պաշտելու: Բայց թէ որ Աստուած է՝ որպէս ինքն ասաց, որպէս իւր առաքեալներն հաւատացին, և որպէս Եկեղեցին ևս կը քարոզէ հազար ութ հարիւր տարիներէ 'ի վեր, և որպէս ես իսկ ստիպեալ եմ ընդունելու, որովհետև ուրիշ բան չեմ կարող հաստատելու, այն ատեն խնդիրն շատ կը ծանրանայ, և անմտութիւն և յոյժ վտանգաւոր բան լինի իւր գործն մերժելն կամ նմա դիմադրելն. Սաւուղ Սաւուղ՝ ընդէ՞ր խլթանին դէմ կ'աքացես:

Ապա ուրեմն նախ առաջարկն դնեմք Եկեղեցւոյ գործածած բառերովն:

Սուրբ Յովհաննէս իւր աւետարանին առջի գլխոյն մէջ ասելէն ետև թէ « Բանն էր առ Աստուած և Աստուած էր՝ » կը յաւելու Եւ Բանն մարմին եղև և բնակեցաւ 'ի մեզ. Բանն մարմին եղև ու մեր մէջ բնակեցաւ: Նիկիոյ հանգանակին մէջ ալ գրած է թէ Յիսուս Քրիստոս միածին Որդի է Աստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած յԱստուծոյ, ծնունդ և ոչ արարած, որով ամենայն ինչ եղև. և թէ ինքն յերկնից էջ վասն մարդկան՝ նոցա փրկութեանն համար, և մարմնացաւ Հոգւով Սրբով 'ի Մարիամայ կուսէն, և մարդացաւ: Սրբոյն Աթանասի հանգանակն՝ երկու պայման կը դնէ հաւատք ունելու և փրկուելու համար. առաջինն է հաւատք 'ի Սուրբ Երրորդութիւն, և երկրորդն 'ի մարմնաւորութիւն Բանին 'ի Յիսուս Քրիստոս, որ է միանգամայն Աստուած և մարդ, Աստուած կատարեալ և մարդ կատարեալ, ունելով որպէս զամենայն մարդիկ հոգի մի բանաւոր և մարմին. և թէպէտ միանգամայն Աստուած է և մարդ՝ սակայն չեն 'ի նմա երկու Քրիստոսք այլ մի միայն, ոչ եթէ փոխարկելով աստուածութեանն 'ի մարմին, այլ վերառմամբ մարդկութեան յԱստուած, ոչ շփոթմամբ գոյացութեանցն, այլ սակս նոյնութեան անձինն:

Աստուած մարդ եղա՞ծ. այս կարելի բա՞ն է, կամ մեր միտքն կարէ՞ ըմբռնել. որովհետև կարելութիւնն ալ այսու միայն կարեմք դատել: Եթէ այս կարելի է, ապա եղած է. ոչ եթէ 'ի կարելութենէ առ գոյութիւն ձեռնարկելով, այլ զի եթէ անհնարին լինէր՝ անկարելի էր որ այսպիսի անմտութեան միլիարաւոր միլիար մարդիկ հաւատային ընդ դարս ութեւտասն, շատերն ալ իրենց կեանքն դնէին զայն պաշտպանելու համար:

Յետոյ այս գործոյն պատճառն կամ ինչ բանի համար եղածն ալ ընդունելի՞ է արդեօք. « Յաղագս մեր մարդկան և վասն մերոյ ի բնութիւնէ »:

Դարձեալ ինչ խորհելու է գործոյն կատարման համար գործածուած միջոցին վրայ. « Յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ և ծնաւ ի Մարիամայ կուսէն »:

Վերջապէս այս մեծ գործոյս աւարան այսինքն Քրիստոսի յերկինս համբառնալն և Աստուածոյ աթոռն նստիլն, ուստի նորէն պիտի գայ առ ի դատել զկենդանիս և զմեռեալս, որք ամենքն իրենց մարմնովն յարուցեալն պիտի առնուն՝ իրենց աշխարհիս մէջ գործածներուն պատասխան տալու, և իրենց վարձքն կամ պատիժն ընդունելու համար:

Ահաւասիկ շատ մի խնդիրներ՝ որոց եւևէն ուրիշներ ալ պիտի գան: Անկեղծութեամբ և պարզմտութեամբ ձեռք զարնենք՝ միայն Ճշմարտութիւնն ճանաչելու փափաքով:

Աստուած մարդացեալ:

24 Ապրիլ:

Արդեօք կարելի՞ է որ Աստուած մարդ եղած լինի՝ մարդկանց մէջ առ ժամանակ մի ապրելու համար: Այս բանս այնպէս կարելի է, և այնչափ մարդկային մտաց հակառակ չէ՝ որ ամեն տեղ և ամեն ժամանակ մարդիկ այս բանիս հաւատացել և ընդունել են. հնդկաց և յունաց գիցաբանութիւնն ուրիշ բան չեն՝ բայց եթէ վեպք մարդկութիւնն յանձն առնող աստուածութեան, մանաւանդ թէ մարդկութենէ ալ նուազ արարածոց. որովհետև ոչ միայն մարդաբերպեալ աստուածոց երկրպագութիւն առնել կը յորդորէին զմարդիկ՝ այլ և աստուածոց անանց-

ցելոց և մեռածելոց, որով կ'ընդունէին անաստուածութիւս և քարկոծ նուիրականս: Յունաց բազմաստուածութիւնն սակաւ մի աւելի բարձր էր, որովհետև ընդհանրապէս զմարդկային միաս միայն կ'աստուածացընէին, և անբան և անշունչ արարածներն չէին աստուածարել:

Շատ լաւ, ասեն արդի խմաստասէրք, Թող այնպէս լինի թէ նախնիք ալ այս բանս ընդունած են, այդ ասացածդ մեք ալ ոչ մերժեմք, բայց այսօր մէջ ուրիշ բան ոչ տեսանելիք՝ եթէ ոչ մարդկային մտաց ցնորութիւն՝ որով և անտեղութիւն. այն աստուածներն մեզ համար անցած են, և այնոր համար ոչ կամիմք քրիստոնէից մարդացեալ Աստուածն ընդունիլ՝ որպէս զի հեթանոսաց կռապաշտութեանն չդառնամք: Ես ալ այդ բանդ ոչ ընդունիմ՝ եթէ յիրաւի կռապաշտութիւն է: Սակայն Սոկրատ և Պլատոն զօրս կարծեմ տկարամիտ և անմիտ մարդիկ ոչ կարեմք համարիլ՝ աստուածութեան մարմնացումն ոչ մերժէին, թէպէտ և իրենց ժամանակի աւելորդապաշտութիւններն ալ ոչ ընդունէին. և իրենց ժամանակակցաց կրօնքն՝ որ այս բանիս կը հաւատար՝ ոչ երբեք դատապարտեցին. Պլատոն այս նիւթոյս նկատմամբ մինչ նախկին աւանդութիւններն յառաջ կը կոչէ, Սոկրատ ալ մեռնելու առեն՝ այսինքն այն ժամանակ որ կեղծելն այլ անօգուտ էր, իւր վշտացեալ և յուսահատեալ աշակերտացն կը յանձնէր որ իր անուամբ Ասկլեպիոսի աքաղաղ մի զոհեն: Ապա երկուքն ալ աստուածութեան մարմնանալուն կը հաւատային, կամ Թէ կարելի կը համարէին որ Աստուած մարդանայ կամ մարդ աստուածանայ, և այսու հանդերձ խմաստասիրութեան մէջ մեր վարժապետներն են, և ոչ կարծեմ Թէ արդի խմաստասէրներն որ նոցա աշակերտ լինելուն վրայ կը պարծին՝ քան զնոսա գերազանցած են ի դիտութեան և խմաստութեան:

Իսկ առ Հնդիկս՝ որ իրենց հաւատքին հնութիւնն մինչև ի սկիզբն աշխարհի հաստատանին, կրօնքն մըշտնջենաւոր մարմնացում մի է աստուածութեան ի մարդիկ և ի համագոյս. նաև Երրորդութեան վարդապետութիւն մի ունին ըստ իւրեանց մտաց. Պրահմա, Վիշնու և Սիվա, երեքն ալ աստուածք, թէ և որոշ ոչ տեսանի թէ մի՛ աստուած է երեք զանազան ըստորոգելեօք՝ թէ մի երրեակ աստուածութիւն: Աստուածութեան մարդացումն այնչափ անտեղի ոչ երևի իրենց՝ որ միշտ մարդկութեան աստուածացմանն կը փափաքին, և իրենց առջին մարդուս վերջին վախճանն և իւր ամենէն մեծ երջանկութիւնն՝ աստուածային գոյացութեան մէջ խառնուիլն է՝ անհնոյն մէջ թաղուելով ուր բոլորովին պիտի ընկղմի մարդուս անձնաւորութիւնն:

Վերջապէս հին և արդի համաստուածութեան հիմն ալ ուրիշ բան չէ՝ բայց եթէ Աստուածոյ և տիեզերաց նոյնանալն. այնպէս որ մարդկութիւնն մեծ Համայնն հոգևորող հոգին կամ ոգին է, և որոյ անհուն ձևն է տիեզերքս: — Նա և նոյն իսկ ամենէն նոր համաստուածեանց կարծելոյն՝ որպիսի են Հեկել և իւր գպրոցն, Աստուածոյ մարդոյ և համագոյից գաղափարաց մէջ՝ ամենևին ներհակութիւն չկայ, ոբովհետև զնոսա կը նոյնացնեն տիեզերական էակին մէջ: Տարակոյս չկայ՝ որ ես մինչև հոս ոչ հասանեմ, և համոզուած եմ որ անբաւ անդունդ մի կայ ընդ մէջ անհնոյ և հնաւորի, բացարձակի և յարաբերականի, ի մէջ հարկաւոր էակի և պատահական էակի, և աւելի պարզ խօսելու համար ի մէջ արարչի և արարածոյ: Համոզեալ եմ որ անստեղծի և ստեղծեղոց բնութիւնն տարանջատ են և իրարու անշփոթ, այնպէս որ իրենց գոյացութիւնն ոչ երբեք կարէ իրարու հետ շփոթիլ և իրենց հնութիւնն նոյնանալ: Բայց արդեօք կարելի բան չէ՞ ենթակայական միու-

թիւն մի ըմբռնել աստուածութեան և մարդկութեան՝ որ գոյացութիւններն ոչ շփոթէ: Եւ ահաւասիկ այս է հնաւորն յանհնոյ որոշողն՝ յորում գոյացութեան միութիւնն կայ յերրորդութեան աստուածային անձանց: Այս է կարծեմ քրիստոնէութեան ուսուցածն ալ, որով երրորդութեան երկրորդ անձին կամ Բանին մարմնաւորութիւնն ընդունիլն ալ ոչ կռապաշտութիւն լինի և ոչ համաստուածութիւն: Վասն զի քրիստոնէութիւնն յայտնապէս ասէ թէ Քրիստոս կամ Աստուածն մարդացեալ՝ մի է, ոչ փոխարկութեամբ աստուածութեանն ի մարմին, այլ վերառմամբ մարդկութեան յԱստուած: Մի է ոչ շփոթմամբ գոյացութեանց՝ այլ միութեամբ անձինն, և թէպէտ աստուած է միանգամայն և մարդ՝ այլ մի միայն Քրիստոս է ի նմա:

Հիմա այս գժուարութիւնս կը մնայ լինի՞ թէ ինչպէս աստուած և մարդ մի և նոյն անձն լինին ի միաւորութեան երկուց բնութեանց:

Միջնորդն կամ միջին եզրն:

25 Ապրիլ:

Կաթոլիկէ վարդապետութիւնն գաւանի թէ Յիսուս Քրիստոս է Աստուած խոստեալ և մարդ խոստեալ. այլ և յաւելու թէ մարդն որ ի նմա՝ բաղկացեալ է որպէս ամենայն մարդիկ, ի բանական հոգւոյ և ի մարդկային մարմնոյ: Ահաւասիկ նորատեսակ էակ մի ի տիեզերքս, աննման այլոց և միակ անձին իւրոյ. վասն զի բերէ յանձին զաստուածային բնութիւն հանդերձ իւրովք կատարելութեամբք՝ միացեալ ընդ թերութեանց մարդկային բնութեան, և սակայն այս երկու

բնութիւնքս մի անձն կազմեն՝ որ և կապ է նոցին միաւորութեանն։ Այս ալ Բանին մարմնաւորութեան հարկաւոր հետևանքն է՝ որ երկու եզերաց մէջ միջնորդ լինելու համար մարդ եղած է՝ զորս պիտի հաշտեցնէ՝ որ են Աստուած և մարդ, և այսու անուամբ և այս վախճանաւ՝ պէտք է որ՝ ինչպէս ամէն միջին եզր, հաղորդ լինի բնութեան երկուց ծայրից՝ առ 'ի միաւորել զնոսա։ Եւ Յիսուս Քրիստոս այս պայմանաւ միայն կարէր կատարել զիւր բարձր առաքելութիւնն 'ի փրկութիւն մարդկան։

Ա՛լ հոս տեղս աչքս կը մթագնի, և չեմ կարող ըմբռնել թէ ի՞նչպէս 'ի Յիսուս Քրիստոս աստուածային գիտակցութիւնն մարդկային գիտակցութեան հետ կը յարմարի, և մարդու ոգին՝ Աստուծոյ ոգւոյն հետ. և ա՛լ աւելի չեմ կարող ըմբռնել զերկու կամս՝ զոր աստուածաբանութիւնն դնէ 'ի Քրիստոս, որովհետև միակամութիւնն որպէս հերետիկոսութիւն դատապարտեալ է։ Այս բնութեանց միաւորութիւնն գլուխս կը ճաթեցնէ, և աստուածային ոգի պէտք էի ունել Աստուածամարդոյն ներքինն բացատրելու համար։ Իրաւ է որ ես ալ յանձին իմում այսպիսի բան մի գտանեմ, և յանձին իմում անցածներուն գիտակցութիւնն ունիմ, յորում գտանի ամբողջութիւն երկուց բնութեանց՝ հոգի և մարմին՝ որ նոյնպէս մի անձն միայն կազմեն։ Եթէ յիս ինքն չեմ կարող այս բանս բացատրել՝ թէ և ստիպեալ իմ ընդունելու՝ որպէս գործ քաջածանօթ և ակնյայտնի, ապա ուրեմն գոնէ այս հետևութիւնս հանելու եմ՝ որ իրաւունք չունիմ ուրանալու 'ի Յիսուս Քրիստոս զայն ինչ զոր յանձին իմում զգամ և ճանաչեմ թէ և առանց կարելոյ 'ի միտ առնուլ։

Ի՞նչ պէտք էր Միջնորդ, Ազատարար եւ Փրկիչ։

26 Ապրիլ։

Եւ սակայն սարսափելի բան է հաւատալն՝ թէ Աստուած ինքնին անձամբ յերկնից իջած ու մարդ եղած լինի։ — Եւ ինչո՛ւ։ — Տարակոյս չկայ. վասն զի այսպիսի տարօրինակ բանի համար՝ մեծ պատճառ մի պէտք է. և ո՞րն է այն գլխաւոր պատճառն որ զաստուածութիւնն՝ իւր փառաց յաւիտենական բնակութենէն վար իջոյց, և ի՞նչ բան ստիպեց զինքն զիւր անբաւութիւնն պարփակելու մարդկութեան անձուկ սահմանին մէջ. ի՞նչ բան որոշեց զինքն զիւր ամենակարողութիւնն մեր տկարութեան խոնարհեցընելու. ո՞չ ապաքէն զարմանալի խոնարհութիւն և ճշմարիտ ցածութիւն մի է այս իւր աստուածային մեծվայելչութեանն։

Այսոր համար՝ տես թէ հեթանոսութեան մէջ ո՛ւր հասանին և վերջանան այս մարմնաւորութիւններս. վասն զի ի՞նչ կը տեսնեմք այնոց մէջ, բայց եթէ աստուածութիւններ մարմնոյ մէջ անկած և ամօթալի կրիւք այնոր գերի եղած. աստուածներ որ բաւական ոչ համարին եթերն կամ հրեղէն երկինքն անպատուել, այլ և կը հաճին զմահկանացուս գլխէ հանել՝ զորս օր մի պիտի դատին, և նոցա ամեն անկարգութեանց օրինակ տալ՝ զորս յետոյ պիտի պատժեն։

Հնդկաստանի կրօնից և համաստուածեան վարդապետութեանց մէջ՝ աստուածութեան կամ ըստ Հեկէլի բացարձակ գաղափարականի յաջորդական մարմնաւորութեանց մէջ՝ ուրիշ պատճառ չտրուիր՝

բայց եթէ նոյն իսկ աստուածային բնութեան հարկըն, որ 'ի դաղափարականէ կամ 'ի կարողութենէ 'ի գործ ոչ կարէ անցանել՝ բայց եթէ հարկաւոր շարժմամբք և կերպարանափոխութեամբք՝ որ զնա կը զարդացնեն և կը կատարելագործեն: Մարդկութիւնն ալ տիեզերական մեքենային անուովն քարշ եկած կը հոլովի առանց այս կոյր և անդադար շարժումէս իրեն շահ, կատարելութիւն կամ երջանկութիւն մի ունելու:

Իսկ քրիստոնէութիւնն այս հարցմանս՝ թէ ինչո՛ւ Աստուած պէտք էր մարմնանալ՝ այնպիսի հիանալի պատասխան մի կուտայ՝ որով քան զամեն բազմաստուածեան և համաստուածեան կրօնս կը գերազանցէ. վասն զի քրիստոնէական վարդապետութիւնն ուսուցանէ որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ ֆրկութեան էջ յերկնից: — Ապա ուրեմն Աստուծոյ առ մարդիկ ունեցած սէրն ու գթութիւնն էր՝ որ զինքն յորդորեց մարդ լինել՝ յօգնութիւն հասնելու համար մարդկութեան որ յանցաւոր և թշուառ եղած էր, և զինքն փրկելու համար 'ի յաւիտենական մահուանէն՝ որում արժանի եղել էր իր արարչին դէմ հպարտութեամբ և ապերախտութեամբ ապստամբելով, որովք ուղել էր իւր բարերարին և հօր տեղն անգամ յափշտակել: Ուստի մարմնացեալ Բանն աշխարհք եկաւ յանձին Յիսուսի Քրիստոսի որպէս ազատարար և փրկիչ, և իւր առաքելութիւնն՝ այսպիսի գործոյ մի համար պէտք եղած ամենայն աշխատութեամբ և ցաւօքն՝ կատարեց:

Այս գոնէ վերամբարձ և գերազանց պատճառ մի է, և բաւական ալ կը համարուի՝ այսպիսի գերահրաշ գործ մի ընդունելու և հաւտալու համար, որոյ գերբնական կնիքն առջի բերան զմեզ կը սարսափեցընէ: Ենթադրելով ալ որ՝ ոք չհաւտայ այս բանիս, սակայն այնու հանդերձ չկարէ չհիանալ այս յիրաւի

աստուածավայել սիրոյ գաղափարին և խանդակաթ գթութեան վրայ՝ որ միանդամայն սքանչելի օրինակ է ամեն մարդու, տեսնելով այնոր մէջ Աստուածութեան առ ազգս մարդկան ունեցած սիրոյն փորձն, նորա թշուառութեանն համար զինքն զոհելով և տըկարութեան վրայ գթալով, և մինչև իւր կեանքն տալով զնա փրկելու համար, թէ և նա ապերախտ գըտուած էր: Յիրաւի ո՛վ ոք և իցէ Յիսուս Քրիստոս աստուած կամ մարդ, կամ երկուքն ևս 'ի միասին՝ ինձ այնպէս կ'երևի թէ իր կենաց և մահուն նմանիլն ամենէն գեղեցիկ գպրոցն է բարոյականի և կատարելութեան՝ թէ անհատից համար և թէ ազգաց: Եւ ես իմաստասէրս՝ որ դեռ տարակուսի մէջ եմ Քրիստոսի բնութեան և ծագման վրայ, և այնչափ դժուարութիւն կ'իմանամ հայեցողապէս ընդունելու զինքն՝ ինչպէս որ Եկեղեցին զինքն կը ներկայացնէ, գործականի դալով պատրաստ եմ իւր աւետարանն ընդունելու, և բարձրաձայն կը հռչակեմ որ քան զայն աւելի կատարեալ բան մի ոչ ճանաչեմ երկրիս վրայ:

Եւ սակայն կը տեսնեմ որ քրիստոնէական վարդապետութիւնն ինձ ուսուցած ժամանակ թէ ինչո՛ւ աստուածութիւնն յաշխարհ եկաւ՝ այս դժուարին խնդիրն ուրիշ դժուարութեամբ մի կը բացատրէ՝ որ առջինէն աւելի պայծառ չէ, զխրթինն խրթնագունիւ ուղելով մեկնաբանել. և այսու խնդիրն լուծուելու տեղ՝ այլ աւելի ետ կը մնայ, մանաւանդ թէ ուրիշ դժուարութեան մէջ անկանի. Խորհ զխորս կարդան: Վասն զի եթէ Բանն մարմին եղև զմարդիկ փրկելու համար՝ ապա ուրեմն մարդիկ փրկուելու կարօտութիւն ունէին. ուրեմն հետևապէս կային 'ի չարի, 'ի թշուառութեան և 'ի մահու, առանց երկրիս վրայ յոյս և միջոց մի ունելու փրկութեան, որովհետև հարկ եղև որ յերկնից գայ բժիշկ մի զինքն բժշկելու: Ուրեմն ո՛վ էր որ զմարդ այս թշուառ

վիճակին մէջ ձգեց. կամ թէ ասեմք չարն ու թըշուառութիւն ուստի՛ եկին յաշխարհս: Ապա ուրեմն առջեւս ուրիշ անդունդ մի ալ կը բացուի՝ որ է չարի ծագմանն և երկրիս վրայ տարածուելուն խնդիրն. որ այնպիսի հիմնական խնդիր մի է՝ որոյ լուծումն իմաստասիրութեան ալ կը վերաբերի, ինչպէս որ յիրաւի ամեն ժամանակ ալ նոյն բանին վրայ խորհել է, և զոհացուցիչ պատասխան մի էչ գտած:

Ուրեմն քննենք քրիստոնէութեան տուած բացատրութիւնն որչափ որ խելքս կը հասնի: Այս բացատրութիւնս հաւատացելոց համար յայտնեալ ճշմարտութիւն մի է և հետևապէս նիւթ հաւատոյ: Ես ալ եթէ զայն՝ ուրիշ մեկնութիւններէ աւելի պայծառ խորհին և ճշմարտանման գտնեմ, զայն աւելի պիտի ընդունիմ, և մինչև որ այլ լաւագոյն մեկնութիւն մի գտնեմ՝ զայն քան զայլս հաւանական պիտի համարիմ:

Ուստի՞ է չարն:

2 Մայիս:

Չար և շատ չար կայ աշխարհիս մէջ յայտնապէս, որովհետև կեանքերնիս այնոր հետ պատերազմելով կ'անցնեմք՝ թէ 'ի մեզ և թէ արտաքոյ մեր, երբ կ'ուզենք արդար մարդ լինել կամ այս անուանս արժանանալ: Դարձեալ յաչս խմաստասիրին նոյնպէս յայտնի է՝ որ չարն բարոյական՝ սկիզբն է բնական չարեաց կամ թշուառութեան և վշտաց, կամ ուզղակի 'ի նմանէ յառաջ գալով՝ որպէս հետևանք անկարգութեան, և կամ անուղղակի 'ի նմանէ յառաջ եկած՝ մարդկանց իրարու հետ ունեցած երաշխաւորութեամբ կամ պարտակցութեամբ, այսինքն պատասխանատուութեան պարագային որով իրարու հետ կապուած են:

Արդ ով գործեց առաջին չարն, և ով է հեղինակ նախկին անկարգութեան՝ ուստի և այլք յառաջ եկին: Ոչ որ Աստուած մի կ'ընդունին արարիչ ամենայնի՝ չեն կարող ուղղամտութեամբ նմա ընծայել զծագումն չարի, պատճառաւ որ իրենց մտաց մէջ Աստուած է էակն անթերի և ամենակատարեալ. ուրեմն չարն որ բացասութիւն է բարւոյ և հակառակ այնմ չկարէ յառաջ գալ 'ի գերագոյն բարւոյ՝ ապա թէ ոչ եղծանէ զնա:

Ոմանք ասեն՝ թէ չարն արարածոց սահմանաւոր լինելէն յառաջ կուգայ, կամ հարկաւոր արգասիք է նոցա թերութեանն: Բայց այն ատեն այս երկու բաներէս մին պիտի հետևէր. եթէ չարն արարածոց սկզբութեան կարևոր հետևանքն է՝ ապա պատժոյ արժանի չէ, որովհետև այն ատեն ոչ յանցաւորութիւն կայ և ոչ պատասխանատուութիւն. գարձեալ և ոչ բարոյական կայ, և ոչ ալ պատժական օրինաց պատճառ կամ հաստատութիւն. վասն զի բնութեան հետևանք լինելուն՝ չար ալ ոչ համարի: Իսկ եթէ ընդհակառակն գոն օրէնք և նոցին հաստատութիւն՝ ապա ուրեմն արարիչն անիրաւ և անգութ է և կամ գոնէ ծիծաղելի. որովհետև կը պատժէ զարարածս՝ որոց կարողութիւն չէ տուեալ ինձոյ 'ի կարգի կամ պահելոյ զօրէնսն զորս հրամայել էր նոցա:

Բանաւորական աստուածեանք չեն կարող այս երկսայրաբանութենէս ազատիլ, և շատերն աստամ սութեան մէջ մնան՝ իրենց ընդունած Աստուծոյն հատարելութեամբն և իւր արարածոց անհատարութեամբն՝ որք անկարող են իրենց ազատութեան մէջ: Եւ սակայն ժամանակ ալ կուգայ որ ուրիշ պարագայից մէջ յանչափս նոցա զազատութիւնն կը բարձրացնեն, և գժուարութենէն փախուստ տալու համար՝ խնդրոյն խորամուխ ոչ լինին, և լռութեամբ՝ առարկութիւններէ ազատիլ կ'ուզեն:

Ամենէն աւելի իրենց խօսքին վրայ կեցողներն՝ համաստուածութեան անկանելով զիրենք կը ճողոպրեն. և չարն չկարելով մեկնաբանել՝ զայն ուրանալու կ'ելնեն, և ասեն թէ չար ասացածդ ալ տիեզերական կենաց ձևերէն մին է, և այս տիեզերական կենաց մէջ ոչ չար կայ և ոչ բարի, այլ բազմապատիկ և զանազան արտայայտութիւն զարգացման տիեզերաց: Եւ թէ Աստուած ինքն է որ կեայ և գործէ յամենայն էակս. վասն որոյ և ամենայն ինչ բարի է, որովհետև ամենայն որ լինի՝ 'ի հարկէ լինելոց էր: Եւ զի ոչ գոյ զանազանութիւն բարոյականի և ոչ բարոյականութեան. այլ միայն անխուսափելի օրէնք մեծ Համայնի, որ զամենայն զգոյացութիւնս առեալ վարէ յանդարձական և յանմեղկելի շարժման իւրում, որոյ երևոյթք են և կամ պատահարք և ժամանակք՝ ամենայն ինչ որ յաշխարհիս հանդիպին:

Իսկ պլատոնականք յորոց միջի եմ և ես, կարի յոյժ տագնապին այս բանս մեկնելու համար. սոքա զհամաստուածութիւնն ոչ ընդունին՝ որ մարդուս անձնաւորութիւնն, ազատութիւնն և արժանապատուութիւնն կ'ոչնչացնէ. այնոր համար կանխագոյութիւն մի կ'ենթադրեն հոգւոց՝ նախընթաց աշխարհի մի մէջ, ուստի մեր այս աշխարհս կ'աքսորուին իրենց անցեալ մեղքն քաւելու համար. և այնոր համար հոս տեղս մարմնոյ մէջ իբրև 'ի բանտի արգելուած են, և ուր ամեն տեսակ ցաւ և վիշտ կը քաշեն 'ի պատիժ նախընթաց յանցանաց: Աստի յառաջ եկած է հոգեփոխութեան դրութիւնն՝ ընծայեալ Պիւթագորայ, և որոյ հետքն կ'երևին Պլատոնի մէջ, որ ենթադատութեանց վրայ միայն հիմնած է ենթադրելով թէ հոգիներն նախընթաց գոյութիւն մի ունեցած են՝ զոր անկարելի է ցուցանել, որպէս և զաքսոր նոցին 'ի մեր աշխարհս իրենց յանցանաց համար, որում ամենևին ապացոյց չունիմք:

Ուրիշ անտեղութիւն մի ալ կայ՝ որում արդէն անդրադարձել էի՝ մանաւանդ Պլատոնի դրուածքն քննած ժամանակս, և այս է որ՝ այս դրութիւնս որչափ ալ իր կարևորութիւնն ունի և բարոյականն չխախտելու արդիւնքովն ալ պատուելի է, սակայն մարդուս էութեանն տուած բացատրութիւնն ճիշդ չէ, և դրութիւնն ալ այն խարխուլ հիման վրայ հաստատեալ է. վասնզի զմարդ կը համարի էակ իմն պարզ հոգեղէն, և մարմինն ամբողջական մասն ոչ սեպէ իրեն. այնպէս որ մարմինն ոչ միայն իւր մարդկութեանն և անձնաւորութեանն էական չէ, այլ և ընդհակառակն անօգուտ մանաւանդ թէ վնասակար պատահար մի է, և ժամանակաւոր յաւելուած մի տագնապեցուցիչ՝ ուստի ջանալու է որչափ հնար է շուտով ազատիլ անտի: Եւ աւելի պարզ խօսելու համար՝ այս վարդապետութեանս մտքովն՝ մարմինն տեսակ մի շղթայակապ ռումբ է կապեալ ընդ հոգւոյ դատապարտելոյ 'ի կեալ յաշխարհիս յայսմիկ, և որոյ ծանրութիւնն հոգին դժուարաւ կը տանի, և այնոր արգելք լինի քայլելու և վերանալու: Վերջապէս այս ալ չմոռասցուք զրուցելու՝ որ այս դրութեամբս դժուարութիւնն ոչ լուծանի այլ ետև կը մնայ. որովհետև կարեմք հարցանել թէ հապա այն նախընթաց աշխարհին մէջ ո՛վ էր չարն հնարողն՝ ուստի հոգիներն կը դահավիժին այս աշխարհիս վրայ՝ իրենց դատապարտութեան ժամանակն լրացնելու համար, որով և այն աշխարհին արարիչն ալ այս աշխարհիս արարչէն աւելի իմաստուն և կարող ոչ երևի:

Այսպէս ուրեմն իմաստասէրք կամ այն է որ չար լինելն կ'ուրանան՝ որովհետև ոչ դիտեն ինչ մեկնութիւն տան, կամ այն է որ այնոր ծագման և սկզբան վրայ ամենևին ոչ խօսին՝ որովհետև բան մի ոչ հասկանան, և կամ թէ կը ջանան անհաստատելի ենթա-

գրութեամբք մեկնաբանելու՝ որ ցուցանելի խնդրէն աւելի մթին և անիմանալի են։

Չեմ կարող ծածկել որ ես ալ որպէս զնոսա տագնապեալ եմ այս խնդրոյս մէջ. չարեաց գոյութիւնն չեմ կարող ուրանալ՝ վասն զի յայտնապէս աչքիս կը զարնէ. չեմ ալ կարող զայն Աստուծոյ համարել՝ վասն զի Աստուած է, և վասն զի համաստուածութենէ կը խորշիմ. վերջապէս թէ և հիացող եմ Պիւթագորայ և աշակերտ Պլատոնի՝ սակայն հոգւոց կանխագոյութեանն և այս աշխարհս աքսորուելնուն ոչ կարեմ հաւատալ, և ոչ իսկ նոցին միութիւնն ընդ մարմնոյ՝ ժամանակաւոր բանտ կը սեպեմ, և ոչ իսկ համարիմ զմարմին որպէս պատահական ինչ՝ որ չիցէ էական մասն մարդկային բնութեան։ Այս ամեն տատամսութեանցս և մթութեանցս մէջ՝ գոնէ այս արժանապատուութիւնս կ'ուզեմ պահել չդաշնաւորելու այն մարդոց հետ՝ որ լուծել չկարացած խնդիրներն՝ լռութեամբ ծածկել կ'ուզեն, ոմանք իրենց անկարողութիւնն դիտելնուն համար, և այլք վախնալով այն բացատրութիւններէն որոց հետեւանքն զիրենք կարէ ընկիճել և նեղել։ Հեռի՛, 'ի բա՛ց յինէն այս բանս. ես ճշմարտութիւնն կ'ուզեմ դիտել ինչ որ լիցի, և ինչ ալ անտի յառաջ գայ. և հետեւանքէն ոչ երկնչիմ, և պատրաստ եմ ընդունել զնոսին՝ որչափ ալ ծանր և սուղի նստին ինձ։

Ուստի՞ է չարն (շարայարութիւն)։

3 Մայիս։

Այսօր հարկ կը զգամ գրի անցուցանելու ինչ որ սրտէս և մտքէս կ'անցնի չարի ծագմանն վրայ։

Հաւատամ՝ ի մի միայն Աստուած, արարիչ երկնի և երկրի. Աստուածս այս որ է Իակն գերագոյն և Ինն էակաց՝ սկիզբն և լրումն է ճշմարտութեան բարութեան և գեղեցկութեան. ապա ուրեմն ոչ գոյ 'ի Նմա՝ բայց որ ինչ ճշմարիտն է բարի և գեղեցիկ. ապա 'ի ստեղծագործութեան անդ՝ ոչ գոլով պարտական զկատարելագոյնն և զանթերին արարչագործել՝ բաւական համարեցաւ առնել որ ինչ ճշմարիտ էր բարի և գեղեցիկ. ապա ոչ 'ի նմանէ արարաւ չարն՝ որ բացասութիւն է բարւոյ, և ոչ սուտն՝ որ բացասութիւն է ճշմարտի, և ոչ դարձեալ տգեղն՝ բացասութիւն գեղեցկի։

Ապա եթէ ինքն չարար և ոչ իսկ կարէր առնել՝ ուրեմն ուրիշ մի կայ այնոր գտիչ և հեղինակ, որովհետև չարն գոյ, և առանց պատճառի արդիւնք ոչ գոյ։ Այս ուրիշն պէտք է որ բանաւոր և ազատ էակ մի լինի, որովհետև խօսքերնիս բարոյական չարի վրայ է։ Ապա ուրեմն զչարն արար յաշխարհի արարած ոք՝ 'ի չարն վարելով զմիտս իւր առ 'ի հակառակ ելանել և ուրանալ զճշմարտութիւնն աստուածային, դարձեալ 'ի չարն վարելով զիւր զանձնիշխան ազատութիւն առ 'ի ընդդէմ կքրել տիեզերական օրինաց գերագոյն բարւոյն։ Այսպէս ահա արարածն շեղեցաւ անջատեցաւ և անկղիտացաւ՝ ընդդէմ դարձեալ հրամանաց օրինաց և կամաց իւրոյ արարչին, և հետամուտ եղև արգելս դնել կատարման իմաստութեան խորհրդոց նորա և յայ-

առաքինութեան գործունեութեան նորա : Ասոնք պատեհ բաղմին հրատարակեալ յարաբածոյն ընդդէմ արարչին, և ի պատերազմէ անտի ամենայն չարիք զորս նա առեալ բերէ՝ սատանութիւն, յաչխատակութիւն, խաթարմունք, աւերմունք և մահ :

Ահաւասիկ այս է սկիզբն որոմի հաւատոյ. բայց աւաղ, գիտութեանց ծայրն դեռ հասած չեմ, որք գիտութեան բարձանց վրայ դիզուած կը բարձրանան, ինչպէս բարձր լեռ մի եղած աւերակ՝ բըլրոց գարերն զերար կը յաջորդեն, այնպէս որ որչափ բարձրանաս և ծայրն հասած սեպես՝ նոր բարձրութիւն մի նկատես՝ զոր նորին կարելւոյ անցնել և գագաթն հասնելու համար : Արդեօք խնդրոյս վերջին ծայրն պիտի հասնիմ թէ չէ : Աւետարանն ասէ թէ հաւատքն լեռներն կը փոխադրէ, հիմա այս ժամն մեծ կարօտութիւն ունիմ այսմ : Հիմա տեսցուք ուրեմն

Ա. Ո՞ է այն արարածն որ առաջնին գոչէ եղև չարի և զայն նախ ի գործ գրաւ :

Բ. Զիա՞րդ չարն այն որ զառաջնին միոյ էակի անձնաւոր գործ էր՝ ուրիշ էակաց և մինչև ցմարդս հասաւ այս աշխարհիս մէջ ուր դեռ ևս կը ծաւալի անդադար և ամենուրեք :

Ծագման խնդիրներն միշտ խորհրդաւոր քօղով մի ծածկուած են՝ և մանաւանդ չարի ծագումն որ սկզբնաւորական մէջ կերևի անմիջապէս մարդս իւր ազատութիւնն գործադրած ժամանակ, և Թերևս իւր առաջնի ընտրութեան մէջ : Բանաւորապէս, ի չտեսանելի բան մի գիտակցութեամբ կարող. վասն զի մեր սեպհական գիտակցութեան այժմ և միշտ ցուցածէն դուրս բան մի ոչ գիտեմք, այսինքն Թէ բարոյական չարն՝ զազատութիւնն չարաչար վարեցէն յառաջ կուգայ՝ արտաքոյ կամ հակառակ օրինաց : Արդեօք առաջնի մարդն եղև որ զառաջնին այս օրինա-

զանցութիւնս գործեց, և իւր յաջորդաց Թողուց այս գժտչի ժառանգութիւնս և այս չար օրինակս, Թէ որպէս հանրական աւանդութիւնն կը հաստատէ՝ ուրիշ արարած մի և էակաց դասակարգութեան մէջ բարձրագոյն ոգեղէն էակ մի՝ նախ զառաջինն Աստուծոյ դէմ եղ և ուզեց անկախ լինել ի նմանէ : Այս բանս պատմութեան վկայութեամբ և փորձով ճշմարտելն անկարելի է. միայն այս ալ ըսուցելու եմք որ այս նիւթոյս նկատմամբ ամենէն նախկին և հին յիշատակարանն՝ Հրէից Աստուածաշունչն է՝ որ աւետարանական վարդապետութեան հիմն եղած է՝ որ մովսիսական վարդապետութեան յաջորդեց : Իմաստասիրութիւնն այս պատկառելի աւանդութենէն վրայ չհակաճառելով՝ այս նիւթոյս վրայօք բան մի կարող չէ մերժելու կամ հաստատելու, և այսու բաւական անկողմնակցութիւն և ներողամտութիւն գործած կը համարի՝ նոցա չդալէելով և վրանին չմտածելով. որովհետև սովորութիւններս է՝ այս և այսպիսի նիւթերն՝ որ զմեզ կը տագնապեն՝ մարդկութեան առասպելական կամ դիւցազնական դարերն տարագրել՝ որոց մէջ իրական կամ մտացածին գերբնականով՝ շատ բաներ եղած կը համարուի : Եւ այսպէս հաւանական բացատրութիւն ոչ գտանեմք, և խնդիրն իր առջի վիճակին մէջ կը մնայ :

Իսկ քրիստոնէական վարդապետութիւնն ոչ այս անստուգութիւնս կ'ընդունի, և իւր աշակերտներն ալ այնոր մէջ չերողուբ. հապա Աստուածաշունչ գրոց շատ տեղերու մէջ գրական և հաստատուն վկայութիւններ կը գանէ առաջնին մարդոյն յանցուածոյն՝ զոր անկումն նախամարդոյն կ'անուանէ՝ որուն պատճառ եղև՝ արդէն չարացեալ և վատթարեալ արարածոյ մի տուած փորձութիւնն, որ չարակամութեամբ և նախանձով ուզեց զնա ևս իւր անկու-

տուրեան և թշուառութեանն հետևցընել: Եւ այս վախճանաւ նենգաւոր և խաբեպատիր խօսքերով մարդուս ցանկութիւնն և հպարտութիւնն գրգռեց՝ զառաջինն արգելեալ պտղոյն գիտելիկ տեսքովն հրապուրելով, և զերկրորդն Աստուծոյ անկախութեամբ և նմա նմանելու յուսով: Ոչ գիտեմ թէ այս բանս իբրև պատմութիւն ճշմարիտ է թէ չէ, թէ բոլորովին առասպել և նշանակ. բայց ստոյգն այս է՝ որ նոյն իսկ այսօր՝ չարն զգայութեանց հրապուրմամբն կը գործուի՝ որք վայելք կը ընտրեն, և հպարտութեան սնոտիացմամբ որ անկախութեան և ազատութեան թեւկն ածէ և հետամուտ լինի: Իբրև իմաստասէր կ'ընդունիմ որ այս ճիշդ պատկեր է ճշմարտութեան և եղանակին որով հիմա ալ չարն կը գործեմք. զորոյ և զսկսպարն գտանեմ 'ի գիտակցութեանս և զօրհանապազ փորձոյ մէջ. ուստի և անկեղծութեամբ կը հարցանեմ թէ ընդէր 'ի սկզբան ալ նոյն կերպով եղած պիտի չլինի, որովհետև այն առենէն 'ի վեր ալ միշտ նոյն կերպով եղած է: Փորձութիւնն հիմա ալ կայ՝ որպէս յառաջնում աւուր, և այն փորձութեան յաղթական լինելուն յառաջ եկած չարն կը գործուի՝ պատրեալ ազատութեան չարաչար գործածութեամբն՝ որ օրինաց դէմ կ'երթէ:

Երկրորդ խնդիրն առաջինէն աւելի մութ է, այսինքն թէ ինչպէս նախկին չարն այնպէս ծաւալել է՝ որ մարդկային ազգի տեսակ մի սկզբնական հիւանդութիւն եղել է, կամ ինչպէս կրօնական լեզուով ասի սկզբնական մեղայ փոխուել է. որովհետև Եկեղեցին ուսուցանէ թէ ամեն մարդ 'ի մեղս ծնանի. ի մեղս ծնաւ ինձ մայր իմ ասէ Սաղմոսերգուն:

Մեք իմաստասէրքս ոչ ընդունիմք այս կարծեցեալ սկզբնական մեղքն, կամ գոնէ եթէ յայտնապէս ալ չուրանամք՝ անուղղակի ըսյն կը խրատամեմք այլընդայլոյ խմաստներ տալով կամ կատա-

կաբանելով, մէջերնիս ամենէն աւելի խոհեմներն նոքա են որ բան մի ոչ խօսին: Եւ սակայն շատ հարկաւոր բան է գիտել՝ թէ այս նիւթոյս մէջ ինչ բան պիտի հաւատամք. վասն զի եթէ իրաւ է որ մարդ աշխարհք կուգայ ախտաւոր և խաթարեալ բնութեամբ՝ այն ատեն երկրորդական պատճառ մի կը հարուի այս բանս, և դիւրութիւն կուտայ՝ մարդուս երկրիս վրայ ունեցած վիճակն բացատրելու. և աստի յառաջ եկած՝ մարդկային հոգւոց վրայ խորին ծանօթութիւնն՝ կ'օգնէ մեզ իւր տկարութիւնն և արգի թշուառութիւնն և կարիքն հասկանալու, որ այնչափ օգնութեանց կարօտութիւն ունի բարի լինելու և իւր ցած վիճակէն վեր բարձրանալու համար:

Մեք սկզբնական մեղաց փոխանցութիւնն ոչ ընդունիմք՝ նախ որ բաւականապէս ապացուցուած և հաստատուած ոչ սեպեմք զայն. և երկրորդ այն ծանօթութեանն համար զոր ունիմք մեղաց վրայ. վասն զի մեղք ասացեալն՝ ազատ գործ մի լինելուն՝ անձնական է՝ գործողին կամքէն յառաջ եկած, և իւրաքանչիւր ոք իրեն և իր անձին համար պատասխանատու է. և այսով է միայն՝ բարոյական չար: Ասոնց մեզ անկրաւ կ'երևի որ հարց յանցանքն զաւակաց անցնի և նոցա համարուի. որ է ասել զայն չգործողքն մեղապարտ կամ պատասխանատու համարուին, և ոչք անտարակոյս մասն չունէին այնոր մէջ որովհետև տակաւին եղած ալ չէին: Հակառակամարտ է մտաց խորհուրդս զաւկներն պատժելու՝ հօրն յանցանաց համար, և նախամարդոյն մեղաց վրէժն լուծանել յորդւոց Ադամայ՝ մինչև ցվախճան աշխարհի:

Սակայն խոստովանելու եմք՝ որ մեզ սակաւ տագնապ ոչ բերէ՝ գրեթէ բովանդակ ազգաց ատանդութիւնն՝ որ որպէս մեծագոչ ձայն դարուց՝ յանդգնա-

տակ ժամանակաց 'ի վեր կը հռչակէ զանկուծն ազգի մարդկութեանս 'ի կատարեալգոյն վիճակէ՝ յորում գտանէր 'ի սկզբան՝ յորմէ գայավիժեց զինքն՝ ապականութիւն նորա կամ մեծելեռն Թշուառութիւն. և այն տգիտութիւնն բրտութիւնն և թշուառութիւն յորում ցակառին և անկեաց կեանս վարէն տակաւին յաւուրս մեր ժողովուրդք վայրագասունք՝ խոտի պէս բուսանելով և աճելով՝ աւելի եղծելք են քաղաքականութեան քան եթէ սկզբնաւորութիւն նորին. այս անկմանս յայտարար նշանակք են գրքն անուանեալ ոսկի արծաթի և երկաթի, և նորա արգիւնքն են ջրհեղեղն սիեզերական կամ մեծամեծ ջրհեղեղք մանականք և այլ վրդովմունք երկրախօսականք:

Դարձեալ եթէ նկատեմք զմարդն առ հասարակ, և ինչպէս որ կ'երևի յիւրաքանչիւրումն 'ի մէնջ զարմանալի և իրեն սեպհական բան մի աչքերնուս կը զարնէ, այսինքն թէ իր գոյութեան մէջ յայտնի անընդհատականութիւն կամ անհամաձայնութիւն մի կայ, և գրեթէ միշտ ինքն իր անձին հետ հակախօսութեան մէջ է: Տարակոյս չկայ որ իր մտաւոր և բարոյական կարողութիւններն երկրաւոր կենաց սիտոյքէն ալ աւելի անդին կ'անցնին, և այս զօրութեան առաւելութեամբն և հնարից շատութեամբն, միշտ բնութեան հետ կռուոյ մէջ է թէ յանձին և թէ արտաքոյ: Ծածուկ ինն բնազդմամբ և խորհրդական իւիք նախազգացութեամբ միշտ բարձրանալ մեծնալ և առաւելլին հասնիլ կը ջանայ՝ երեն յարմար բարին դտնելու համար, և սակայն փափաքածին ոչ հասանէ այս աշխարհիս վրայ, որովհետև ամեն տեղ արգելք և ընդդիմութիւն կը գտնէ. կամ կարողութիւնն հասածէն աւելին կը բաղձայ, կամ իւր կարողութեանն կամ գիտցածին՝ կամքն ոչ հասանէ, և երկուքին մէջ ալ թշուառ լինի: Ապա ուրեմն իւր

անձն յօրինող տարերքն իրարու անհամեմատ են, և գժուարաւ կը հաւտացուի որ այսպիսի գժբաղդակ մի՝ որ յանձին իւրում կրէ այսչափ պատճառս անմիաբանութեան և կռուոյ՝ այսպէս ստեղծեալ լինի յամենակարողէն յամենիմաստնոյն և յամենաբարւոյն Աստուծոյ: Ուստի ինձ կ'երևի թէ կարեմք հետևցնել ուրեմն որ մարդ յելանել անդ 'ի ձեռաց արարչին բարի և երջանիկ էր, և ինքզինք նուաստացուց յօրինաց նորին չեղելով, և երթելով այն ճամբէն ուր որ Աստուած զինքն գրել էր իւր մեծութեան և երջանկութեան ամեն պայմաններովին. կամ թէ ասեմք՝ Թշուառ վիճակն յորում ծնանի և կեայ յաշխարհիս՝ ոչ է գործ արարչին՝ այլ իր վատթարանալուն հետեւանքն. որով թէ յանձին և թէ 'ի ծնունդս իւր աստուածային արարչութեան գործն խանգարեալ է, և իւր յանցանօք ապականեալ և նուաստացուցեալ է զնա՝ թէպէտ ոչ բոլորովին եղծեալ:

Տեսէք թէ այս աշխարհիս թագաւոր կոչուած էակն՝ որ յիրաւի այնպէս ալ է իւր գեղեցիկ կազմաւորութեամբն և շքեղ կարողութեամբք, տեսէք թէ ինչպէս և ինչ վիճակի մէջ աշխարհք կուգայ իւր թագաւորութիւնն ձեռք առնլու. կը ծնանի հեծութեանց ցաւոց և վշտաց մէջ. մարմինն շրջուն, գլուխն 'ի վայր՝ գեաին անկանի՝ որպէս թէ այնոր երեսն պիտի սողայ. կը ծնանի զրկի և մերկ յամենայնէ՝ անարդ վիճակի մէջ, ամեն ինքասակար ազդեցութեանց ենթակայ և ամեն տպաւորութեանց ներքոյ անկեալ, առանց իր պիտոյքն ինքն հոգալ կարելու և ոչ 'ի ինքասկարացն ձողոպրելու: Ցիրաւի խղճալի արարած՝ որ օգնութեամբ մերձակայից միայն կ'ապրի, և իւր ալկաղկ և տխեղծ գոյութիւնն պահպանելու համար՝ գիշեր ցորեկ փափուկ և արիծուն խնամոց կարօտ. այնպէս որ իր ծննդեան ժամանակ և կենաց առջի տարիներն քան զամենայն անասուն տկարագոյն և թշուառագոյն է:

Եւ ինչ է այն հասակին մէջ իւր ազատութիւնն միտքն ու բանականութիւնն, որք գրեթէ Թագուած կը քնանան՝ի մարմնի և յարեան. իւր միտքն խաւարաբաւ պատեալ, ոչ տեսանէ և ոչ լսէ, կամ գոնէ նայիլ և լսել ոչ գիտէ. բան մի ոչ որոշէ ոչ հասկանայ և ոչ ձանաչէ, և ոչ իսկ ինքն իր գոյութեան գիտակցութիւնն ունի: Եւ սակայն այս իր հոգւոյն Թաղուած վիճէն պիտի ցայտէ լոյսն բանականութեան, և այս տկար աչքէն պիտի ցոլայ հոգւոյն առաջին ճառագայթն, և արծուոյ ականողիքն օր պիտի գայ որ պիտի դիտեն ջնջմարտութիւն և զգեղեցկութիւն և զինքն իսկ զՍտուած: Բայց մինչև հոն հասնելու համար՝ որչափ խնամք վիշտ և աշխատանք պէտք է: Հազիւ Թէ տղուն բանաւորութիւնն կը բացուի՝ իր շրջակայից վրայ անվստահ և Թշնամական աչքով մի կը սկսի նայիլ. հազիւ Թէ կամքն գործել կը սկսի՝ իւր մերձաւորաց վրայ տիրել կ'ուզէ, և ազատութիւնն անկախութեան հետամուտ լինի:

Հիմա եթէ իր զարգացման զանազան ժամանակներուն ետևէն երթալովլինքն դիտեմք՝ կը տեսնեմք միշտ՝ի նմա կրկին հակ մի լի հակախօսութեամբ: Մինչև հիմա իմաստասիրութիւնն չկարաց հասկանալ Թէ ինչպիսի հակ է այս՝ որոյ կարողութիւններն այնչափ ազնիւ են և յօժարութիւններն այնչափ ցած, և Թէ ինչուն այնչափ բաժանեալ է յանձին և միշտ անձնամարտ. արդեօք պարզապէս երկրի՝ զաւակ է և բնական համագոյից ծնունդ. եթէ այսպէս է՝ ապա ինչուն համար տարօրինակ հրեշ մի կ'երևի ինքն բնութեան մէջ. ինչուն երկրիս Թագաւորն աւելի խեղճ և մերկ կը ծնանի՝ քան զուրիշ արարածներն՝ որոց վրայ պիտի իշխէ. և ինչուն բնութիւնն ամենէն անարդ որդին վրայ ալ այնչափ առատաձեռն երևցած ժամանակ, և վայրի ծաղիկ մի այնչափ շքեղ զարդարած և մնուցած տեսնէ՝ իր ամենէն աւելի աշնուական և սքանչելի պողպն վրայ մօրուի աչքով կը նայի:

Եթէ մարդս անասուն մի է՝ որպէս բնապատումք ասեն, ինչուն միայն ինքն կը պարտաւորի հողն վարելու և իւր քրտամբն ուռզելու՝ իւր մնունդն ձարելու համար. ինչուն ուրիշ անասնոց մատակարարն ծառայն և գահիճն լինի՝ իւր մերկութիւնն ծածկելու և իւր քազցն յագեցընելու բան մի գտնելու համար: Եթէ մարդս անասուն է՝ ապա քան զամենեսին առաւել անգութ և խելճն է. և գենեւացի իմաստասէրն (Յ. Յ. Ռուսօ) իրաւունք ունի եղել ասելու Թէ խոհուն մարդն վատթար անասուն մի է:

Ո՛չ, ասեն բանաւորական իմաստասէրք. յիրաւի ինքն է Թագաւոր աշխարհիս. իւր մտաց առաւելութեամբն՝ որով ինքն իր գիտակցութիւնն ունի և նմա որոշելոյ և առնելոյ կարողութիւն կուտայ՝ ինչ որ իր բնութեան կը յարմարի և ինչ այնոր հակառակ է. ինքն լինելով էակ բանաւոր և ազատ՝ աշխարհիս մէջ իր ձակատագրին տէրն է, ուր ընդհակառակն ուրիշ արարածներ՝ անտեղեակ բնազդմանց բռնութեանն կուրօրէն կը հնազանդին: — Շատ լաւ, կը հաւատամ. բայց կը տեսնեմ որ այս բարեմասնութիւնս իր երջանկութեան համար մեծ բանի մի ոչ ծառայէ, և ոչ ալ գիտեմ Թէ այս առաւելութիւնս ուր պիտի տանի զինքն. միթէ իւր խելքն չէ՞ որ զինքն աւելի կը չիոթէ իւր բնութեան ընդդիմութեանց և իւր խորհրդոց հակառակութեանց մէջ, միշտ արդելք լինելով իր ցանկութիւններն յագեցընելու, և զինքն ամէնքնելով երբ չափազանց նոցա ետևէն անկանի. այնպէս որ միշտ իր խելացպատճառաւ՝ ինքն իր անձին հետ կռուստ է և իւր նմանեաց հետ ալ Թշնամի. այն է որ զինքն անհանգիստ առնէ նախատեսութեամբ, կը վրդովէ յուսով, կը տանջէ երկիւղիւ, մանաւանդ մահուան մտածութեամբն՝ որոյ ինչ խորհուրդ լինելն ոչ հասկանայ: Հարկ է խոստովանիլ որ խելք ասացածնիս կենաց չարիքն աւելի կը ծանրա-

ցընէ՝ անդրադարձուԹեամբ զնոսա կրկնապատկելով, քան Թէ օգնական լինի մեզ ժամանակաւոր բարիքն վատահաբար վայելելոյ: Այսոր համար ողջախոհ անմեղ հասակն որ անդրադարձուԹիւն չունի՝ ապահովուԹեան և քաղցր հաճոյից ալ հասակն կը սեպուի, և անմեղուԹիւնն որ չարի և վտանգի անգիտուԹիւն է՝ երԹալով կը կորնչի՝ որչափ որ խելքն կը զօրանայ և կը լուսաւորի:

Վերջապէս եԹէ Պլատոնի հետ համարիմք եԹէ մարդս ոգի մի է դիպուածով միացած մարմնոյ հետ՝ որոյ կարիքն և բնազդմունք զոգին ներքոյ արկանեն նիւԹոյ ազդեցուԹեանցն և օրինաց, այն ատեն հարցանեմ՝ զպատճառ դերուԹեանս և անարգուԹեան՝ որ մարմնոյ ծանրաբեռն լուծոյն ոգւոյ գեղեցիկ կարողուԹիւններն կ'արգելու, և Թէ ինչ՞ հոգին այս բանտիս մէջ կը գտուի զրկեալ՝ի լուսոյ և յօդոյ երկնից. ինչ՞ գրեԹէ միշտ գերի եղած է գործարանաց մարմնոյ՝ որ իրեն ծառայելու էին: Արդեօք արարիչն է որ զինքն կապել է մարմնոյ և արեան ծանրուԹեան ներքեւն՝ որ զհոգին կ'ընկճեն և կը խեղդեն. եԹէ այսպէս է, ապա ուրեմն իւր արարածոց ոչ ԹէԹ երջանկուԹիւնն այլ ԹշուառուԹիւնն ուզել է, և իրաւունք ունինք նորա իմաստուԹեանն և բարուԹեան վրայ ալ տարակուսելու և զինքն մեղադրելու: Արդեօք հոգին կամաւ և իւր յանցանօքն անկեալ է աշխարհս տղմին մէջ. եԹէ այնպէս է՝ ապա ուրեմն անարդ ու ցած իմացական էակ մի է, և իւր ամեն կարողուԹեանց և նոցա արդեանց վրայ պէտք է տեսնուի իւր անարգուԹեան խարանադրոշմն և սպին:

Իրաւունք այս բաղխս մէջ եղք և Ճամբայ մի ոչ տեսանեմ՝ մինչև որ քրիստոնէուԹեան ցուցած Թեքն ձեռքս չառնում. վասն զի յիրաւի միտքն չկարէ ըմբռնել իմացական էակ մի՝ զինքն չինքեան բաժանեալ՝

և՝ի միուԹեան անձին իւրոյ հակառակ օրինաց ներքոյ անկեալ, և անգադար իր ներսի դէն ատ և անդքաշխատեալ. ապա՝ և միանգամայն հակառակ ազդումներ վրան տիրած՝ ներսէն ձգմուած՝ գրսէն արգիլուած. լուսոյ համար եղած՝ և այնոր պայծառուԹիւնն չկարելով տանիլ, սիրող ՃշմարտուԹեան՝ և անգադար պատրանաց եռևէ անկած, առաքինուԹիւնն մեծարող՝ և զայն կատարելու համար քաջուԹիւն չունենալով, բարին սիրելով՝ և զայն գործել չգիտելով, ատելովին զչարն՝ և զայն կամակար գործելով, և վերջապէս կենաց եռանգագին փափաքելով, և անգադար մեռնիլն զգալով: Անկեղծ միտքն գիւրաւ կը տեսնէ և կը հաւանի որ այսպիսի էակ մի տարօրինակ բանուԹեան վիճակի մէջ է, և Թէ այս վիճակս բնուԹեան և իւր օրինաց հակառակ է, և անկարգուԹիւն մի է: Եւ եԹէ իւրաքանչիւր մարդոյ ծնողքն այս վիճակիս մէջ ծնած են, և ամենէն հեռաւոր պապերն ալ՝ իրենց սերնդեան պէս նոյն վիճակէն անցած են, և այս է աշխարհիս վրայի մահկանացուաց՝ի ծնէ պայմանն, բանախօսապէս և իմաստասիրաբար ինչ կարենք ասել, եԹէ ոչ այս՝ Թէ ազգ մարդկան կեղակարծ դիրքի մի մէջ է՝ հակառակ իւր բնուԹեան իւր էական օրինաց և իւր վախճանին: Ո՛վ ուրեմն գրեչ է զինքն այս վիճակիս մէջ: Անտարակոյս եԹէ Աստուած յաւիտենական իմաստուԹիւն և անհուն սէր է՝ այսպէս պէտք չէր զինքն ստեղծուլ. վասն զի այսու՝ փոխանակ մարդկային արարածոյն կեանք և երջանկուԹիւն տալու՝ զինքն մշանջենապէս մահուան և տանջանաց դատապարտել է: Ապա ուրեմն բանաւոր է հաւատալն Թէ մարդկուԹիւնն անդառին յարմատոյն մեծ օրինազանցուԹեամբ մի ստեղծանեալ է, և այնոր հետևանքն ու պատիժն կը կրէ այս աշխարհիս մէջ: Ասանց այս բացատրուԹեանս՝ այժմու մարդուս և իւր ներհակուԹեանց խնդիրն ոչ երբէք

կը լուծուի. ուստի հիմա կը սկսիմ հասկանալ Բաս-
քալի այն խօսքն՝ զոր բարեպաշտ չափազանցութիւն
մի համարած էի, թէ «Մեր ներկայ վիճակին կապին
հանգոյցներն և ծալքերն՝ այս անդունդիս մէջ են
(այսինքն նախկին անկման), և որչափ որ այս խոր-
հուրդս մարդուս անհասկանալի է՝ յայնմանէ աւելի
անհասկանալի լինէր մարդս՝ առանց այս խորհրդոյս»:

Փոխանցութիւն նախկին չարի

3 Մայիս:

Սկզբնական մեղքէն աւելի զիս տագնապեցնողն
այնոր փոխանցութիւնն է՝ թէ ի՞նչ կերպով Ադամայ
սերնդոց վրայ անցել է՝ որուն խելքս ոչ հասանէ: Նա-
խամարդոյն պէս մեք ամենքնիս ալ ամեն օր կը մե-
զանչեմք 'ի ցանկութենէ և 'ի հպարտութենէ ձգուե-
լով. ուստի և այնոր պէս մեր յանցանաց հետևանքն
պէտք է քաշեմք. վասն զի ամեն բանական և բարոյա-
կան անձն իւր գործոց պատասխանատու է արդարա-
պէս: Բայց ինձ շատ անտեղի բան կ'երևի՝ որ զաւ-
կըներն իրենց հարց յանցանաց համար պատժուին՝
այն ալ յորդւոց յորդիս մինչև ցվախճան աշխարհի.
արդի իմաստասիրութիւնն այս անիրաւութիւնն ոչ
ընդունի և զայն հաստատել ուզող նախապաշար-
մունքն ալ կը մերժէ. և մեծ պարծանք է մեր օրէնս-
դրութեանն որ այս անիրաւութիւնս իր օրինաց
գրքէն ջնջել է: Բարոյականի մէջ՝ մանաւանդ յան-
ցաւորութեան գալով՝ իւրաքանչիւր ոք իւր գործածն
կը դտնէ՝ գոնէ տրամաբաշխական արդարութեան
մէջ. սակայն ոչ արգելու՝ որ դթութիւնն յանցաւո-
րին զաւակաց վրայ ողորմի՝ երբոր պատշաճ է, և ըստ
դիպաց նաև ինքզինք նուիրէ նոցա օգտին համար.

բայց այս նուիրումս բոլորովին կամաւոր է, և օրէնքն
ոչ ումեք պարտք կը դնէ զայն:

Եւ սակայն որչափ ալ այս բանիս մէջ մեր օրէնքն
իմաստութեամբ յօրինուած են, և իմաստասիրու-
թիւնն ալ պատճառաբանութեամբ զայն ցուցանէ՝
այսու ամենայնիւ մեր կենաց և սովորութեանց ըն-
թացից մէջ հակառակ նախապաշարմունքն դեռ կը
տևեն, և իմաստնոց ճիշտ արդարութիւն երևցածին
դէմ՝ հասարակաց կարծիքն հազար կերպով կը բո-
ղոքէ: Տարակոյս չկայ որ որդին հօր յանցանաց մե-
ղապարտ չէ, բայց ո՞'ի մէնջ ոճրագործ ծնողաց զա-
ւակ լինելուն վրայ չամաչեր կամ վատանուն տոհմէ
լինելուն վրայ չտրտմիր. կարելի՞ է որ աղջիկս քրէա-
կան յանցաւորի մի տղուն տալ ուզեմ՝ որչափ ալ
արդար մարդ լինի. որչափ կ'ուզեն թող ասեն թէ
հօրն ոճրին մեղսակից չէ. ուստի ինչպէս որ օրինաց
վրէժխնդրութենէն ազատ է՝ այսպէս աշխարհիս
քամահրանքէն ալ ազատ պէտք է որ լինի. որով-
հետև միշտ ամօթոյ ծանրութիւն մի կայ վրան՝ որ
նորա գլուխն գետին կը հակէ, և անպատիւ անուն
մի՝ որ նորա ճակատն կը շիկնեցնէ, և ոչ ոք կ'ուզէ
նորա անուանարկութեանն մասնակից լինել:

Այսոր հակառակ՝ ո՞վ է այն մարդն որ առաքինու-
թեամբ և փառօք պատուեալ անուն մի կրելն իրեն
պարծանք չսեպէ. այս այնպիսի ժառանգութիւն
մի է՝ զոր մարդ ուրախութեամբ և հպարտութեամբ
կը պահանջէ՝ թէ և այն փառաւոր անուան արժանի
գործ մի գործած չէ. և շատ անգամ ալ այն կրող-
ներն յոյժ սակաւ արժանաւորութիւն ունին այնմ:
Դարձեալ ընտանեկան ձախորդութեանց և հասա-
րակաց թշուառութեանց ժամանակ՝ հարկաւ դըժ-
բաղդութիւնն և արկածք չարեաց առ հասարակ ա-
մենուն վրայ ալ անկանին. ինչպէս որ կենդանի մար-
մնոյ մէջ իւրաքանչիւր անդամ՝ միւսերուն առող-

ջուրեամբ կամ հիւանդուրեամբ խնդայ կամ վըշտանայ. որովհետև ամենքն 'ի մի կեդրոն կապուած են, ուստի յառաջ գայ իրենց համակրուրիւնն և զրուրիւնն. մին հերիք է՝ որ զամենքն վդովէ, և միոյն վիշտն զամենքն փոքր 'ի շատէ կը վշտացնէ, որպէս երևի 'ի հիւանդուրիւնս:

Ոչն իսկ բնուրեան մէջ նման և հանգէտ գործեր շատ կը տեսնեմ՝ զորս անիրաւուրիւն կարիք հաստատել՝ եթէ բնական օրինօք հաստատուած չլինէին՝ որոյ դէմ բողոքել անհնարին է, կամ նախագրուրիւն չբանիր (այսինքն ժամանակ անցնելով այժն ոչ կորուսանէ). օրինակի համար ուստի՞ յառաջ կուգան յաջորդական կամ ժառանգական հիւանդուրիւնները. ինչո՞ւ այս գժպատեհ ժառանգուրիւնս երբեմն պորտ մի կամ սերունդ մի ցաւագելով նորին կ'երևի. և մի թէ արդարուրիւն է՝ ինչպէս շատ անգամ կը հանդիպի՝ որ ծնողաց արիւնն իրենց անկարգուրեամբն ապականած կամ ակարացած լինելուն՝ իրենց զաւկինելն՝ որոց անցած է այն արիւնն՝ բոլոր իրենց կենաց մէջ այնոր հետևանքն քաշեն նաև ժամանակ յառաջ ալ մնռնին: Տարակոյս չկայ որ իրենք ամենևին կամակից չէին այն չարի պատճառացն, այսու ամենայնիւ անհրաժեշտ հարկի հետևանաց բռնուրեան տակ ծնուած են. ինչ առնելու է, և ինչպէս արգիլելու է: Ո՞չ ապաքէն իրենց հարց զաւկներն են, այսինքն արիւն յարենէ և մարմին 'ի մարմնոյ նոցա. և այն արիւնէն ու մարմնէն չէ՞ն ծծած այն ապականուրիւնն ընդ կենաց. և միթէ անօրէնուրեան ու ապականուրեան հեղեղն չէ՞ անցած ընդ նոցա կենդանուրեան սերման հետ միատեղ. ուստի, այս պայմանաւ միայն է որ պիտի ապրին: Հիմա անիրաւուրիւն համարելու եմք այս բանս՝ որ իրենց հարց յանցանաց համար կը տանջուին. եթէ անիրաւուրիւն ևս է՝ յանցանքն ծնողացն է՝ զոր պիտի քաւեն նախ իրենց որդւոց վրայ, և յետոյ Աստուծոյ առջև:

Այս ոչ անիրաւուրիւն համարելու է՝ այլ հարկ անհրաժեշտ՝ որ բնուրեան ամեն օրինաց գործադրուրեան մէջ ալ կը գտուի, և իրաց նախախնամական կարգին հաստատուրիւնն է. որովհետև արդիւնք 'ի պատճառաց յառաջ գան, և հետևանք 'ի 'ի սկզբանց, և ինչպէս բնականին՝ այսպէս ալ բարոյականին մէջ, և ինչպէս բանականութեանին այսպէս ալ կենաց զարգացման մէջ պատճառն ինչ որ է՝ արդիւնքն ալ նոյն լինի, սկիզբն ինչ որ է՝ հետևանքն ալ նոյն է: Ի սուտ սկիզբէ ճշմարտուրիւն յառաջ ոչ գայ, և որչափ ճիշդ լինի հետևուրիւնն՝ նոյն իսկ իր ճշդուրեանն համար՝ որչափ յառաջ երթայ՝ այնչափ աւելի կը խոտորի, և անթիւ սխալներ ու մոլորուրիւններ յառաջ կը բերէ, և սխալներն կը վնասեն: Այսոր համար է որ բուսոց և կենդանեաց սերնդեան խաթարմունքն դարմանելու համար՝ որ հնգած ախտից փոխանցուրենէն յառաջեկած է՝ մարդկային ճարտարուրիւնն կը ջանայ նոցա տեսակներն և ցեղերն իրարու հետ խառնել, որպէս զի տկարուրիւնն զօրացնէ, կենսաւորուրիւնն արթնցնէ, և իրենց սկզբանց մէջ զիրենք վերանորոգէ:

Այս գործերս ակներև հաստատուած բաներ են՝ որպէս 'ի բնական կարգի՝ այնպէս ևս 'ի բարոյականին, և ամենևին չուրացուիլը: Այս գործերս կ'իմացուի որ ազատ էակաց գալով պէտք է զանազանել պատասխանատուուրիւնն որ յանցաւորուրիւն յառաջ կը բերէ՝ 'ի պարտակցուրենէ՝ որ թշուառուրեան բաժանակից առնէ առանց չարին հաղորդ լինելոյ: Այս բաժնակցուրիւնս անխուսափելի է, և բնուրեան և ընկերուրեան օրինաց անհրաժեշտ կարգն յառաջ կուգայ. վասն զի անհնարին է բնական կամ ընկերական մարմնոյ անգամ լինել և ընտանեաց և պետուրեան մասն սեպուիլ՝ առանց հասարակաց

կենաց հաղորդակցելու, որով հարկ է այնոր կրածն ալ զգալ, և նորա վշտաքն վշտանալ:

Ես կ'ընդունիմ որ այս անհրաժեշտ հարկ՝ ինչպէս աշխարհիս ամեն բանի վրայ՝ այսպէս ևս մարդկային սեռի վրայ ալ կը տիրէ, և կը հաւանիմ որ Ադամայ սերունդն ալ պէտք էր՝ նորա մարդկութեան խաթարման հետևութիւններն յանձին կրէր, ենթադրելով թէ նա յառաջին վիճակէն անկած է: Այն առաջին այր և կնոջ յանցանքն՝ իրենց վիճակն և կացութիւնն բոլորովին փոխած լինելու է, որովհետև ալ նախկին դրից մէջ չգտուելով և ոչ իսկ գոյութեան առաջին պայմանաց մէջ՝ սահպուած են իւր ձգամբն և քրտինքով երկրէս հանելու այն անուշդն՝ զոր յառաջ բնութիւնն առանց աշխատանաց կ'ընծայէր. գարձեալ յայտնի է որ բնական աղդեցութիւնները ալ իրենց բարոյականին վրայ ալ աղդեցին՝ մանաւանդ կարօտութիւնք և աշխատանք՝ որոց նեղքոյ անկան: Բայց ինձ չափազանց կ'երևի ասելն՝ թէ մարդ ոչ միայն 'ի մարմնի իւրում կրեց այս խաթարմունքս, այլ և ոգւոյն մէջ՝ տգիտութեան խաւարին մէջ անկանելով, և կամաց մէջ՝ որոց վրայ չարն յարձակեցաւ և վատթար կիրք վրան տիրեցին, և որ չարագոյն է գերութեան և յաւիտենական մահուան դատապարտեցաւ՝ անհնազանդութեամբ արգելեալ պտուղ մի ուտելուն համար. ինձ այնպէս կ'երևի թէ պատիժն գործած սխալմանն համեմատ չէ:

Իրաւ կարէ ասել և ասացեալ իսկ է՝ թէ այս նիւթոյս մէջ արգիլեալպտուղն առիթ և նիւթ էր նախամարդոյն հնազանդութիւնն փորձելու, և էական իրն աստուածային օրինաց հնազանդիլն կամ չհնազանդիլն էր, և ինչպէս Ծննդոց գիրքն կը հասկացընէ փորձողին խօսքերովն՝ Ադամայ և Եւայի պտղէն ուտելն ուրիշ բանի համար չէր՝ բայց եթէ անմահ և անձնիշխան լինելու և Աստուծոյ նմանելու համար, ինչպէս որ կը յուսային սատանային նենգաւոր և խաբեպատիր խօսքերովն, որ յանցանքն աւելի կը ծանրացնէ, որովհետև աւելի հպարտութիւն կար գործոյն մէջ քան թէ որկրամոլութիւն կամ ցանկութիւն, և ոչ այնչափ պտղոյն գեղեցկութիւնն ու համն էր զնրենք գրգռողն՝ որչափ ազատութիւնն և բարձրութիւնն յոր պիտի հասցնէր զնրենք. և այս բաւական պատասխան մի է այն թերահամիտ մարդկանց ձամարտակութեանն՝ որ այս պատմութեանն մէջ նիւթականին և գրաւոր իմաստին միայն միտ դնելով՝ ասեն թէ անհրաման կերուած պտղոյ մի համար այնչափ չնոթութիւն հանել ոչ արժէր:

Ինձ համար դժուարութիւնն այս չէ, և ոչ ալ այնորժ կը զգամ բառական մեկնաբանութիւններով և անպատշաճ ծաղրածութիւններով պարսաւել և այպանել սուրբ գրոց պէս պատկառելի գիրք մի: Մարդս սակաւ մի խելքով յոյժ դիւրաւ կարէ չհասկացած բանն ծաղրս գարձնել, բայց խոհեմ մարդու համար այս անտեղի հեգնութիւնս՝ անհաւատին չարակամութենէն զատ ուրիշ բան ոչ ցուցանէ: Իրին թուն դժուարութիւնն այս է.

Ասի թէ Ադամայ մեղքն մարդկային բնութիւնն նուաստացաւ կամ ապականեցաւ 'ի հոգին 'ի միտն և 'ի մարմին: Այս բանս մինչև ատենէն մի կը հասկանամ, որովհետև մեղքն անբարի գործ մի է 'ի մտաց յղացեալ, 'ի կամաց հաւանեալ և 'ի մարմնոյ գործադրեալ. ապա մարդուս այս երեք մասերս ալ պէտք էր որ մեղաց չար ազդեցութիւնն զգային. որով և անոնք յառաջ եկած յանձին Ադամայ տկարութիւնն նուաստութիւնն և ապականութիւնն բարուց: Բայց ինչպէս կը մեկնուի որչափ չարիքն Ադամայ որգւոյ վրայ ալ ներգործեն՝ միայն 'ի նմանէ ծնած լինելուն համար, երբ յայտնապէս նորա յանցանացն մասնակից չէին՝ որովհետև դեռ չկային: Մի թէ անիրաւու-

թիւն չէ՞ ներդործական մեղքէն զատ՝ սկզբնական մեղք մի ալ նոցա վերայ բեռնաւորել՝ որոյ ծանրութիւնն պիտի կրեն՝ առանց այնոր պատճառն լինելու. այս բանս արդարութեան բնական զգացմանն դէմ կ'ելնէ:

Բայց աւելի առաջ երթամք. կը հաւանիմ թէ Ադամայ սերնդոց մարմնոյն կազմութեան վրայ փոփոխութիւն մի եղած լինի, որովհետև նորա մարմնէն և արիւնէն ծնած լինելով՝ նոցա ախտաւորութիւններն և թերութիւններն որդւոցն ալ անցնելու էին՝ բնական կենաց հաղորդակցութեամբն, ինչպէս որ հիմա ալ կը տեսնեմք ժառանգական հիւանդութեանց և բնազդմանց մէջ: Բայց զաւակաց հոգին 'ի ծնողաց չդար. այլ ըստ հասարակ կարծեաց՝ իւրաքանչիւր հոգի՝ զատ զատ յԱստուծոյ ստեղծուելով՝ նոր յղացած մարմինն կուգայ հոգեւորելու. և քրիստոնէական վարդապետութիւնն ուսուցանէ՝ որ մարմնոյն հետ միացածին պէս՝ սկզբնական մեղաց արատն յինքն կը ձգէ: Այսոր համար է որ Եկեղեցին կը դատապարտէ՝ արտաքսաբերութիւն ասացեալ կարծիքն, որ կը համարի զմարդ ամբողջապէս 'ի ծնողաց ելեալ, այնպէս որ իւր հոգին ալ նոյն հոգիէն յառաջ եկած լիցի, ինչպէս մարմինն և արիւն նոցա մարմնէն և յարենէն: Եւ սակայն գոնէ այս վարդապետութեամբն դժուարութիւնն կարէր լուծուիլ կամ գոնէ թեթևնալ. որովհետև մարդկութեան ալ նոյն բանն կը հանդիպէր՝ ինչ որ աշխարհիս վրայ եղած ուրիշ կենդանի էակաց. այսինքն պատճառին մէջ ինչ որ կայ՝ նոյնն արդեանց ալ անցանէ փոխանցութեամբ: Իրաւ այս դրութիւնս ալ իւր անտեղութիւններն ունի՝ թէ հոգւոց պարզութեան և ոգեկանութեան նկատմամբ՝ որ այն ատեն նիւթոյ պէս յանհունս բաժանելի պիտի լինէր, և թէ բարոյականի նկատմամբ՝ հոգին իւր անձ-

նաւորութիւնն և պատասխանատուութիւնն կորուսանելով, այնոր համար իրաւամբ դատապարտուած կը համարիմ այս դրութիւնս: Բայց որովհետև վերջին հնարք մի էր՝ Ադամայ որդւոց իրենց նախահօր յանցանաց մասնակցութիւնն բացատրելու՝ իրենց նախկին նոյնութեամբն, և ամեն հոգւոց 'ի միումն ևեթ բովանդակուած լինելովն, և հիմա այն հնարքն ալ որ ձեռքէս ելաւ՝ ալ ոչ գիտեմ որ դիս դառնամ, որովհետև հօր և որդւոց մէջ կապ մի ոչ տեսանեմ այնպէս զիրենք կապող՝ որ այնոր յանցանաց պարտակից առնէ զիրենք: Որովհետև ըստ քրիստոնէական վարդապետութեան՝ ամեն անգամ որ մարդ մի կը յղանայ՝ հոգի մի կը ստեղծուի յարարչէն կենաց՝ և կը ղրկուի այն նոր մարմինն հոգևորելու. ինչպէս 'ի սկզբան Աստուծոյ շունչն եկաւ հոգևորելու զհողեղէն մարմին նախամարդոյն: Արդ այս հոգիս բոլորովին մաքուր է՝ որովհետև արարչին ձեռքէն կ'ելնէ, և այս երկնային մաքրութենէն՝ անկանի աղտոտ նիւթոյ մէջ և 'ի տղմուտն մեղաց, ուր որ ինքն ալ կ'աղտոտի սկզբնական արատով՝ առանց բան մի գործած լինելու, և այս արատս յանձն ձգելուն համար՝ միաւորութեամբն ընդ անիծեալ մարմնոյ՝ ինքն ալ յակամայս յանցաւոր լինի՝ պատժոյ և պատուհասի արժանի, գերի ապականութեան և յաւիտենական մահուան. և իւր նախահարց մարմնոյն և արեան մասնակցելուն պէս՝ իւր գլխուն վրայ կ'առնու նոցա յանցանքն՝ այնոր սարսափելի հետևանօքն. և թէպէտ անմեղ է, բայց ոճրագործի պէս կը պարտաւորի:

Կը խոստովանիմ որ այս բանս իմ խելքէս վեր է, և անկողմնասէր ու ներողամիտ իմաստասիրի գործ գործած կը համարիմ՝ թէ այս խնդիրս առ այժմ 'ի բաց թողում: Այս խնդրոյս կաթողիկեայ լուծումն՝ միայն չհասկանալուս պատճառաւ

մերժելու՝ կարծեմ թէ իրաւունք չունիմ, որովհետև աշխարհիս մէջ ալ շատ բաներ կան՝ զորս չեմ կարող մեկնել՝ սակայն ստիպեալ եմ ընդունելու։ Փա՛ռք Աստուծոյ միտքս դրած չեմ որ իմ հասկացողութիւնս ճշմարտութեան չափն է, մանաւանդ այսպիսի խնդրոյ մէջ՝ ուր կաթողիկեայ վարդապետութիւնն կարծես թէ հաստատուած է ընդհանուր հաւանութեամբ և մարդուս ծննդեան ժամանակ գտնուած խեղճ վիճակին փորձողն, և այն մեծ դըժուարութեամբ զոր կրեմք նորա միտքն բարձրացնելու և սիրտն մաքրելու համար՝ երբ ուզեմք զինքն կրթել և դաստիարակել։ Աստի ալ յայտնի կ՛երևի թէ անկում մի կայ վերականգնելու, և ցածութիւն մի նորէն իր առջի վիճակն դարձնելու։ Դարձեալ պէտք չէ մոռնամ որ սկզբնական մեղաց վարդապետութիւնն և այնոր հետևանքն՝ քրիստոնէութեան հիմն է. վասն զի եթէ Յիսուս Քրիստոս էջ յերկնից և մարդ եղև զամեն մարդիկ փրկելու համար՝ ապա ուրեմն ամենքն ալ կորուսեալ էին իրենց նախահօր յանցանօքն, և ամենն ալ դժբաղդաբար մասնակից եղեր էին իւր բնութեան ցածնալուն՝ չարի գերութեանն և մահուան խաւարին. և փրկագործութիւնն իմաստ և զօրութիւն ոչ ունէր՝ եթէ մարդկութիւնն առ հասարակ գերի եղած չլինէր. և եթէ իր բովանդակ անդամներն ալ խանգարեալ չլինէին՝ նորոգելու և վերածնելու կարօտութիւն ոչ լինէր. և մինչև որ չհաւատամք թէ Յիսուսի Քրիստոսի արիւնն զինքն վերաստեղծեց և երկնաւոր կեանքն իրեն շնորհեց, և կարողութիւն տուաւ օր մի բովանդակապէս զայն վայելելու՝ բոլոր մարդկային սեռի անցեալ և գալի վիճակն անբացատրելի կը մնան մեզ։ Եւ եթէ այս բանիս չհաւատամք՝ Աւետարանին երկրիս վրայ սրփռած լոյսն, և անտարակոյս անտի յառաջ եկած արդի քաղաքականութեան մտաւորական և բարոյական

մեծվայելչութիւնն՝ պիտի շիջանէին բանավարութեան շնչովն, և այն ատեն բանավարութիւն ու խելքն ալ հոգնած դադրած և միայն իր ուժովն մնացած՝ շատ տագնապէր պիտի իր յաղթանակովն։ Վասն զի եթէ զքրիստոնէական բացատրութիւնն մերժէ և չուզէ ընդունել՝ տեղն դնելու բան մի չունի, և մարդկային սեռն ալ բանի մի պիտի չկարէ ծառայեցնել՝ որովհետև նորա ծագումն և վերջին վախճանն ալ իրեն բոլորովին մութ է։ Ահաւասիկ ճիշդ այս վտանգաւոր դրից մէջ գտանի այժմ իմ իմաստասիրութիւնս ալ՝ որ ոչ գիտէ թէ այս մեծ և կարևոր խնդրոյս մէջ ո՛ր կողմն դառնայ։

Աստուած ո՛րպէս մարդացաւ

6 Մայիս.

Աստուած ի՞նչպէս մարդացաւ. Բանն աստուածային ի՞նչպէս մարմին եղև։ Առաքելոց հանդանակն ասէ. Յղացաւ 'ի Հոգւոյն սրբոյ և ծնաւ 'ի Մարիմայ կուսէն։ Առջի բերան անդէն և անդ կանչելս կուգայ. Այս բանս անկարելի է. ո՛վ տեսած է այսպիսի բան. անտարակոյս այս ասացուածս առասպել կամ օրինակ մի է, որ ասել կ՛ուզէ թէ Քրիստոսի ծնած ժամանակն տարօրինակ բան մի պատահած է, կամ երկնային ազդեցութիւն մի եղեալ է այդ բանիդ մէջ, կամ թէ բարի ոգիներէն մին մասնակցութիւն ունեցեր է, ինչպէս Թերևս պիտի ասէր Պլատոն, կամ այս ծննդեանս ժամանակ քանի մի աստղեր բարեպատեհ զուգընթացութիւն մի ունեցելեն՝ ինչպէս որ միջին դարու մէջ ասէին, կամ թէ Քրիստոս լաւ աստղի մի ներքև ծնեալ է, ինչպէս ռամիկն ասէ, և Թերևս այսոր հաստատութիւն է այն աստղին

երևելն ալ՝ որում հետևելով Արևելից մոգերն եկին 'ի Բեթլեհէմ, որպէս Աւետարանն պատմէ:

Իմաստասիրութեան և գիտութեան ուսուցածին նայելով՝ տեսնուած բան չէ որ բնութեան մէջ տարատեսակ էակներ իրարու հետ զուգաւորին և ծընունդ յառաջ բերեն. իսկ արդ ինչ աւելի աննման բան կայ՝ քան Աստուած և մարդ, անհուն և հնաւոր: Եւ սակայն ինչպէս յառաջագոյն ասացի՝ ազգաց աւանդութիւնն լի է երկնից ընդ երկրի ամուսնութեամբք. և ամեն կրօնից մէջ այս տեսակ խնամութիւններ կան, նաև մարմնաւորապէս և ամեն տեսակ մարմնաւոր կրիւք, որ անարժան է աստուածութեան: Իսկ մեր նիւթոյն մէջ գոնէ ամենայն ինչ հոգևոր է և ամենևին մարմնոյ ցանկութիւն չկայ. որ և պատշաճ է Աստուծոյ մարմնացելոյ յղացմանն, որ մարդանալով իսկ՝ ամենևին կերպիւ իւիք մեղաց հետ հաղորդ չկարէ լինել՝ ոչ 'ի ծագմանն և ոչ ներկայապէս:

Մարիամ կոյս է և միշտ կոյս կը մնայ, որովհետև սովորական եղանակաւ ոչ յղանայ: Աստուածային կեանքն իջանէ 'ի նմա հեղմամբ Հոգւոյն սրբոյ՝ որ զնոյն կեանս տնկագործ է ամենամաքուր զանգուածին մէջ կամ մարդկային բեղմին որ ոչ բնաւ մեղաց մերձաւորութեամբ աղաոտած է, և յորմէ ազատ պահուած է առանձինն և մասնաւոր շնորհիւ: Եւ իրաւցնէ այն որ բացարձակ մաքրութիւնն է՝ չէր կարող ծնանել՝ բայց միայն յանբիծ մօրէ: Այսպէս Յիսուս Քրիստոս կատարեալ Աստուած է իւր Հօր կողմանէ, և կատարեալ մարդ 'ի մօրէ իւրմէ. և հետևապէս սքանչելահրաշ օրինակաւ սահմանեալ է իւր կրկին բնութեամբն՝ առ 'ի լինել միջնորդ 'ի մէջ երկուց եզերաց՝ աստուածութեան և մարդկութեան՝ զորս յանձին իւրում պիտի հաշտեցնէ:

Հարկ է խոստովանել՝ որ այս ամեն բանս՝ առջի

բերան նորատեսակ առասպելաբանութիւն մի կ'երևի մտաց, և այնչափ հակառակ են բնական կարգաց՝ որ ոմանք համարին զնոսա առակս կամ քերթողական կեղծիս, և այլք բոլորովին անտեղութիւն. ես այս աստիճան ոչ յանդգնիմ՝ թէ և խոհական կերպով մտածելով շատ զարմանքս կուգայ. բայց աւելի զիս ապշեցնողն այս է որ՝ հազար ութհարիւր և աւելի տարիներէ 'ի վեր՝ այս առակներս կամ անտեղութիւններս ճշմարտութեան տեղ անցել և ընդունելի եղել են, և աշխարհիս ամենէն աւելի արդար և լուսաւորեալ անբաւ մարդիկ հաւատացել են այս բանիս, և բիւրաւոր մարդիկ ալ իրենց կեանքն տուել են այս ճշմարտութեանս վկայելու համար՝ երբ պէտք եղել է խօսիլ և գործել իրենց հաւատոց այս հաստատած բաներուն դէմ. և ոչ միայն ռամիկ ու տգէտ սեպուածներն՝ այլ ամեն ազգաց մէջ ամենէն աւելի իմաստուններն: Եօթնեւտասներորդ դարու իմաստասէրներն՝ որոց իշխանութիւնն մինչև ցայժմ կը պատուեմք և նոցա յաջորդ լինելնուս վրայ կը պարծիմք, և մեր արդի իմաստասիրութեան մէջ եղած լաւ մասերն ալ 'ի նոցանէ առած եմք, իրենց ժամանակի լաւագոյն քրիստոնեայներն էին՝ որ իրենց անկեղծ հաւատքն գիտութեան հետ միացնելով՝ օրինակ եղած են մեզ՝ որում մեք հիմա ոչ հետևիմք. Կարդեսիոսի, Բասքալի, Մալպրանշի, Պոսիւէի և Ֆենելոնի աշակերտ լինելնուս վրայ կը պարծիմք, և նոցա ոգեւորականութիւնն բարձրաձայն 'ի վկայութիւն կը կոչեմք, բայց երեսի վրայ կը թողումք նոցա կաթողիկէ հաւատքն՝ որ իրենց իմաստասիրութեան ջահն էր:

Եթէ առանց նախապաշարման և կողմնակցութեան մօտանց հայիմ այս խնդրոյս վրայ՝ այնոր մէջ ամենևին անտեղութիւն և անկարելութիւն ոչ տեսանեմ. անտեղութիւն չկայ՝ որովհետև բառից մէջ

հակախօսուԹիւն չկայ, և բանավարուԹեան օրէնքն բռնաբարուած չեն. անկարելուԹիւն ալ չկայ՝ որով հետև խմաստասէրներն որ Աստուծոյ ամենակարողուԹիւնն կ'ընդունին՝ իրաւունք չունին այնոր պարունակին չափաւորելու և ոչ ղօրուԹիւնն սահմանափակ առնելու: Ինչո՞ւ անկարելի համարուի ասելն ԹԷ Ֆրիստոս յղացաւ 'ի Հոգւոյն սրբոյ՝ որ էջ յարգանդ կուսին և բեղմնաւորեց զայն աստուածայնին ղօրուԹեամբ: Այնչափ անտեղուԹիւն չէ այս բանս՝ որ սակաւ մի խորհրդածուԹեամբ մարդ կարէ այնոր կարելուԹիւնն ըմբռնել:

Բոլորը աշխարհ կ'ընդունի որ Աստուած, եԹէ կայ, սկիզբն և միակ աղբիւրը է կենաց՝ որ 'ի Նմանէ ելնելով ամենայն էակաց կը հաղորդի ըստ իւրաքանչիւր բնուԹեան և աստիճանի՝ զանազան եղանակաւ և չափով, և մեր աշխարհին մէջ ալ ծննդագործուԹեան երկու գործագրաց՝ այսինքն այր և կնոջ միջնորդուԹեամբն՝ յորոց 'ի միուսն է բեղմն, և 'ի միւսումն սերմն կենդանարար: Բայց հայրն փոխանցիչ միայն է կենաց տուելոյ առ որդիս՝ ոչ ԹԷ արարիչ. ինքն ոչ ԹԷ ստեղծէ՝ այլ ծնանի, և հետևապէս անցք և գործիք է կենսական ոգւոյն՝ որ նորա միջնորդուԹեամբն կը ներգործէ առ 'ի սիրել զկեանս: Այդ մեր այս խընդրոյս մէջ ի՞նչ եղած կարէ լինել, բայց եԹէ ամենապարզ գործ մի՝ ԹԷ և անսովոր և տարօրինակ՝ այսինքն արտաքոյ սովորական կարգի բնուԹեան. կարելի է որ Ոգին աստուածայնի՝ կամ կրօնական լեզուով խօսելով Հոգին սուրբ՝ առանց միջնորդուԹեան առն՝ ուղղակի աղդել է, և հետևապէս Մարիամ յղացել է Հոգւով սրբով: Այս իրաւամբ զՄարիամ կարելի կոչել Հարսն Աստուծոյ՝ որովհետև յղացել է՝ անմիջնորդ հեղմամբ Ոգւոյ նորա, և դարձեալ Մայր Աստուծոյ որովհետև յարգանդի իւրում ծնել է զինքն իսկ Աստուած կամ զԲանն աստուածայնի՝ մարմնա-

ցեալ 'ի մարմնոյ իւրմէ և յաբենէ: Ի սկզբանէ անտի ստեղծագործուԹեան նախամարդոյն՝ բնաւ մարդկային ծնունդ եղած չէ այսչափ բարձր և այսչափ ղօրաւոր, որով Աստուած արժանի համարի անձամբ միանալու այնոր հետ որ իր արարածոց մէջ ամենէն աւելի մաքուրն էր, և ամենէն աւելի արժանաւոր իր հետ միանալու:

Մարիամ

7 Մայիս.

Մարդ ինչ կարծեաց տէր ալ լինի կաԹոլիկեայ վարդապետուԹեան նկատմամբ՝ երբ զայն խորախորհուրդ կը քննէ՝ չկարէ ուրանալ ԹԷ այնոց մէջ պինդ և շղԹայաշար կապակցուԹիւն մի կայ, և այնպէս իրարու հետ միացեալ՝ որ մի մասն միւսէն կ'ելնէ՝ որպէս հետևուԹիւնքն 'ի սկիզբն: Այս բանախօսականս ՃշդուԹեանս վրայ ես ալ շատ կը զարմանամ, որովհետև անտի կ'իմացուի ԹԷ այնոր մէջ աղևկամի կամ ըստ հաճոյս հնարուած բան մի չկայ, և այսու նոյն իսկ չհաւատացողներուն վստահուԹիւն մի կուտայ, որք կ'իմանան ԹԷ առջևնին եղածն խորախորհուրդ վարդապետուԹիւն մի է, կամ գոնէ յոյժ պատկառելի, մանաւանդ երբ կը տեսնեն ԹԷ գործնական կենաց մէջ ալ շատ լաւ կը հաստատուի այնոր ուսուցածն:

Այսպէս մարդուս նախկին անկումն գրուելէն ետև՝ փրկագործուԹիւնն ալ բարոյապէս կարևոր լինի. և որովհետև այս գործս մարդու ձեռաք չկարէ լինել, վասն զի ինքն ալ նոյն բժշկելի կարեաք զգացեալ է, և ոչ յայլ ումեքէ յարարածոց՝ որ մահուան վրայ իշխանուԹիւն չունի, կը հետևի ուրեմն

Թէ այս փրկագործութիւնս Աչն պիտի առնէ որ միակ աեր է կենաց և մահու։ Բայց անհուն բարութեան անձառելի անտեսութեամբն՝ գթութիւնն երկացած ժամանակ՝ արգարութիւնն ալ կը դործադրուի։ Աղատարարն՝ յանցաւորին պարաքն վրան առնելով, և այս վախճանաւ զոհի տեղ անցնելով այնոր յանցանաց քաւութեանն համար՝ որպէս զի զինքն Աստուծոյ հետ հաշտեցնէ, հարկ էր որ իր աստուածային զօրութեան վրայ՝ որ միայն այս գործիս կարող էր, աւելցնէ նաև մարդկային հնազանդութիւնն, որպէս զի այն մեծ գործին հետեւանքն իր վրայ ընդունի և քաչէ. որովհետև այս զոհին վախճանն մարդութեան յարդն վերանորոգել էր, ուստի և առանց մարդկային կամաց ոչ կարէր կատարուիլ։ Այսոր համար է որ Յիսուս Քրիստոս միանգամայն Աստուած է և մարդ՝ որպէս զի կարասցէ կատարել զպաշտօն միջնորդի ընդ աստուածութիւն և ընդ մարդկութիւն, ինչպէս որ ամեն միջին եղը՝ պէտք է որ երկուց ծայրից բնութեանն հաղորդակից լինի՝ զորս իրարու հետ պիտի միացնէ։

Այս վախճանաւ Եկեղեցին ուսուցանէ թէ Յիսուս Քրիստոս ծնաւ Հոգւով սրբով յարգանդի աբարածոյ միոյ, և որպէս զի սկզբնական մեղաց արատ մի էգայ իր վրայ, այս իրեն մայր լինելու արարածն ալ՝ ի յղութենէ իւրմէ ազատ պահեցաւ՝ ի մեղաց անտի միակ և անօրինակ առանձնաշնորհութեամբ, յորմէ յառաջ գայ վարդապետութիւն անարատ յղութեան Մարիամու. այնպէս որ կոյսն սահմանեալ՝ ի լինել մայր Բանին մարմնացելոյ՝ և ոչ երբեք և ոչ իւիք պիտի արատաւորի՝ ի մեղաց ոչ՝ ի սկզբնական և ոչ՝ ի ներգործականէ, որպէս վայել էսկ է տապանակի Աստուծոյ կենդանւոյ՝ ի մէջ մարդկան։ Այսու անուամբ ինքն եղև անօթ արժանաւոր յաւիտենական կենաց, հայելի անարատ երկնաւոր լուսոյն, և վառարան բոցոյ աստուածային սիրոյն և միանգամայն մարդկայնոյն, քանզի՝ ի կենդրոն կուսական սրտին համահաւաքէ զձառագայթս սիրոյ երկնից և զանարատ սիրոյ երկրի։ Ի նմա գերազանցութիւնն կուսութեան միացեալ է ընդ փառաց մայրութեան, և խանդակաթ սէր մոր՝ բացափայլէ և ևս զմաքրութիւնն կուսի, և այսու միութեամբ որ՝ ի Մարիամ ևեթ գտանի՝ եղև նա կատարելագոյն և գեղեցկագոյն քան զամենայն արարածս՝ քան զոր առաւել չէ մարթ և հնար զմտաածել։

Քանզի կուսութիւն և մայրութիւն խոկապէս կրկին պարծանք և յաղթանակք են կնոջ մարդոյ, մին գեր՝ ի վերոյ ամբառնալով քան զցանկութիւնս մարմնոյ, և միւսն հեղմամբ սիրոյն իւրոյ՝ նուիրագործելոյ նուիրմամբ անձինն և միւս՝ ի պատրաստակալով ողջակիզել զանձն այնմ զոր սիրէն։ Յիրաւի քրիստոնէութեան վայ մարդ լինչ կարծիք ևս ունենայ, հաւատացեալ եղել է թէ անհատաս, հաւատնոյ թէ անհատան՝ չկարէ զլանալ իրեն այս փառքս՝ որ լինքն միայն գտած և ուսած է կատարեալ առն և կնոջ դաղափարն՝ գերազանցագոյն քան լինչ որ իրմէ յառաջ մտածուած և գործուած էր։ Ոչ երբեք տեսնուած և մտածուած էր մարդու տիպար մի այնպէս սքանչելի՝ որպէս զդէմս Քրիստոսի, և ոչ կնոջ պատկեր մի այնչափ խանդակաթ որպէս զմօր նորին։ Եւ մարդկութեան այս աստիճան գերազանցութիւնն ոչ իմաստասիրաց մտքէն անցած էր, և ոչ արուեստագիտաց ձեռքէն և պատկերողութենէն, մանաւանդ թէ գեր՝ ի վեր է այն քան զպատանեաց խորհուրդս անգամ, և քան զձգտունս Հարատարացն Եկեղեցւոյ. ուստի և այս պատկերաց նկարն ալ՝ ուր պիտի փայլի աստուածութիւնն մարդացեալ և մարդկութիւնն աստուածացեալ, արուեստին գա-

թէ այս փրկագործութիւնս Աչն պիտի առնէ որ միակ աչը է կենաց և մահու։ Բայց անհուն բարութեան անճառելի տնտեսութեամբն՝ գթութիւնն երևցած ժամանակ՝ արդարութիւնն ալ կը գործադրուի։ Աղատարարն՝ յանցաւորին պարաքն վրան առնելով, և այս վախճանաւ զոհի տեղ անցնելով՝ այնոր յանցանաց քաւութեանն համար՝ որպէս զի ինքն Աստուծոյ հետ հաշտեցնէ, հարկ էր որ իր աստուածային զօրութեան վրայ՝ որ միայն այս գործին կարող էր, աւելցնէ նաև մարդկային հնազանդութիւնն, որպէս զի այն մեծ գործին հետեւանքն իր վրայ ընդունի և քաշէ. որովհետև այս զոհին վախճանն մարդկութեան չարքն վերանորոգել էր, ուստի և առանց մարդկային կամաց ոչ կարէր կատարուիլ։ Այսոր համար է որ Յիսուս Քրիստոս միանգամայն Աստուած է և մարդ՝ որպէս զի կարասցէ կատարել զպաշտօն միջնորդի ընդ աստուածութիւն և ընդ մարդկութիւն, ինչպէս որ ամեն միջին եղը՝ պէտք է որ երկուց ծայրից բնութեանն հաղորդակից լինի՝ զորս իրարու հետ պիտի միացնէ։

Այս վախճանաւ Եկեղեցին ուսուցանէ թէ Յիսուս Քրիստոս ծնաւ Հոգւով սրբով յարգանդի աբարածոյ միոյ, և որպէս զի սկզբնական մեղաց արատ մի ջոյլ իր վրայ, այս իրեն մայր լինելու արարածն ալ՝ ի յղութենէ իւրմէ ազատ պահեցաւ՝ ի մեղաց անաւ միակ և անօրինակ առանձնաշնորհութեամբ, յորմէ յառաջ գայ վարդապետութիւն անարատ յղութեան Մարիամու. այնպէս որ կոյսն սահմանեալ՝ ի լինել մայր Բանին մարմնացելոյ՝ և ոչ երբեք և ոչ իւիք պիտի արատաւորի՝ ի մեղաց ոչ՝ ի սկզբնական նախանձ և ոչ՝ ի ներգործականէ, որպէս վայել էր տապանակի Աստուծոյ կենդանւոյ՝ ի մէջ մարդկան։ Այսու անուամբ ինքն եղև անօթ արժանաւոր յաւիտենական կենաց, հայելի անարատ երկնաւոր լուսոյն, և վառարան բոցոյ աստուածային սիրոյն և միանգամայն մարդկայնոյն, քանզի՝ ի կենդրոն կուսական սրտին համահաւասարաբէ զձառագայթս սիրոյ երկնից և զանարատ սիրոյ երկրի։ Ի նմա գերազանցութիւնն կուսութեան միացեալ է ընդ փառաց մայրութեան, և խանդակաթ սէր մօր՝ բացափայլէ և ևս զմաքրութիւնն կուսի, և այսու միութեամբ որ՝ ի Մարիամ ևեթ գտանի՝ եղև նա կատարելագոյն և գեղեցկագոյն քան զամենայն արարածս՝ քան զոր առաւել չէ մարթ և հնար զմտաւածել։

Քանզի կուսութիւն և մայրութիւն խոհապէս կրկին պարծանք և յաղթանակք են կնոջ մարդոյ, մին գեր՝ ի վերոյ ամբառնալով քան զցանկութիւնս մարմնոյ, և միւսն հեղմամբ սիրոյն իւրոյ՝ նուիրագործելոյ նուիրմամբ անձինն և միշտ՝ ի պատրաստի կալով ողջակիզել զանձն այնմ զոր սիրէն։ Յիրաւի քրիստոնէութեան վրայ մարգ՝ ինչ կարծիք ևս ունենայ, հաւատացեալ եղել է թէ անհաւատ, հաւանող թէ անհաւան՝ չկարէ զլանալ իրեն այս փառքս՝ որ ինքն միայն գտած և ուսած է կատարեալ առն և կնոջ գազափարն՝ գերազանցագոյն քան ինչ որ իրմէ յառաջ մտածուած և գործուած էր։ Ոչ երբեք տեսնուած և մտածուած էր մարդու տիպար մի այնպէս սքանչելի՝ որպէս զԱդամ Քրիստոսի, և ոչ կնոջ պատկեր մի այնչափ խանդակաթ որպէս զմօր նորին։ Եւ մարդկութեան այս աստիճան գերազանցութիւնն ոչ իմաստասիրաց մտքէն անցած էր, և ոչ արուեստագիտաց ձեռքէն և պատկերողութենէն, մանաւանդ թէ գեր՝ ի վեր է այն քան զպատանեանց խորհուրդս անգամ, և քան զձգտունս ճարտարացն Ելլադայ. ուստի և այս պատկերաց նկարն ալ՝ ուր պիտի փայլի աստուածութիւնն մարգացեալ և մարդկութիւնն աստուածացեալ, արուեստին գա-

գաթնակէտն է և արուեստաւորաց յուսահատու-
թիւն անհասանելի:

Հիմա կ'ըմբռնեմ թէ ինչուն կաթողիկեայք այն-
չափ կը սքանչեանան կը հիանան սրբոյ Կուսին երեսն
'ի վեր, և երբեմն չափազանց պաշտօն ևս կը մատու-
ցանեն: Ոչ, ես ղիրենք ոչ մեղադրեմ թէ ընկեր
կուռքի տեղ դրած են, լաւ գիտեմ որ իրենց պաշ-
տօնն յարգուածեան և սիրոյ բացայայտութիւն է,
և ոչ երկրպագութիւն. և բնական ալ կը համարիմ
այս բանս՝ որ ընկեր Մայր Աստուծոյ գաւանելով և
Հարսն Աստենակալին՝ որով և Թագուհի ամենայն
արարածոց՝ նորա կարողութեանն և բարութեանն
և միջնորդութեան զօրութեանն վրայ ալ մեծ վստա-
հութիւն ունենան, և թշուառութեան և անկա-
րութեան մէջ՝ եռանդագին առ նա գոչեն՝ երկնից
պաշտպանութիւնն ընդունելու և աղօթից մատա-
ւոր խնդրուածքն ընդունելու համար. վասն զի եթէ
իրմով արուեցաւ անկեալ մարդկութեանս իւր Փըր-
կիչն և Աշատարարն՝ որ սէր և կեանք է միանգա-
մայն, ապա ինքն գարձեալ առանձնաշնորհ անցք
պիտի լինի երկնային շնորհաց և օրհնութեանց:

Բաց ասակ, որպիսի՛ գերազանց օրինակ կանանց
սեռի յամենայն ժամանակս կենաց իւրեանց. կու-
սանաց իր մաքրութեամբն և խոնարհութեամբ, ա-
րամբեաց իր հնազանդութեամբ, մարց իւր խնամա-
տար քաղցրութեամբն և հսկողութեամբ, և միան-
գամայն ամեն ժամանակ խաղաղ, մեծարոյ և անձնա-
նուէր: Աւետարանական պատմութեանց մէջիր միայն
քանի մի խօսքերն կը լիշուին, այսչափ միայն ասե-
լով որ իր որդւոյն ամեն խօսքերն պահէր և խել-
մուտ լինէր 'ի սրտի իւրում, նորա ամեն աշխատա-
նաց և վշտաց ալ մանակից լինելով. կը գտնեմք զինքն
արիւնազանգ Ճանապարհին մէջ և առ ոտս խաչին՝
մինչև ցմահ որդւոյն՝ նորա եռեւին երթալով և հոգե-

վարքին հոգեվարակից լինելով իւր մայրական սրտին
ցաւալից վերքերուին: Այո, յիրաւի կարեմք հաս-
տատել՝ որ երկրիս վրայ նման կոյս մի և մայր մի
տեսնուած չէ, և նոյն իսկ իր որդւոյն աստուածու-
թեանն ալ չհաւատալով՝ կաթողիկեայց հետ կարեմք
սրտանց գոչել. Ողջոյն Տէր Մարիամ, լի շնորհօք, Տէր ընդ
Քեզ, օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի
քոյ: Ո՛հ այո, օրհնեալ է նա յերկինս՝ որ զԱւետա-
րանն քարոզեց յաշխարհի, և իւր արեամբն կնքեց
ճշմարտութիւն խօսից իւրոց՝ որ կերպարանափոխ
արար զաշխարհս: Տակաւին ոչ գիտեմ թէ ինչն Աս-
տուած է՝ բայց անշուշտ մարդկութեան ջահերէն
և նորա բարերարներէն և գիւցազներէն մին է՝ որ
ինք զինքն նուիրեց մինչև 'ի մահ իւր նմանեաց ար-
դարացման և բարւոյն համար:

Մարիամ — (շարայարութիւն.)

9 Մայիս.

Քողոքականաց՝ Յիսուսի Քրիստոսի մօրն ցուցած
կերպին՝ խելքս չհասնիր, մանաւանդ այնօրիկ որ կը
հաւատան և կը պատուեն զՔրիստոս որպէս Որդի
Աստուծոյ և որպէս Բան մարմնացեալ: Իսկ նո-
քա որ դերբնականի ոչ հաւատան և ոչ աստուա-
ծայնութեան Յիսուսի Քրիստոսի՝ այսինքն Աստու-
ծոյ մարգացելոյ, որովհետև աստուածային ալ ասե-
լով բնութեան մէջ եղած ամեն գերազանց բաներն
ալ կը հասկանան, սոցա համար խօսք չունիմ՝ վասն
զի եթէ Մարիամու պաշտօն մի ոչ մատուցանեն՝ զի-
րենք չեմք կարող երբև անձնամարտ մեղադրել՝ երբ
Թէ իրենց խօսքին վրայ ոչ կենան կամ գործերնին
խօսքերուն հետ չմիաբանի. քանզի իրենց առջին Յի-

սուս մարդ մի լինելով՝ թէ և աւելի մեծ քան զայլս
իր հանճարովն և գիտութեամբ, իր քաջութեամբն
նաև բարութեամբ՝ ապա իր մայրն ալ ուրիշ կանանց
նման կին մի է, ուստի բնական կը հետևի որ իրեն
պաշտօն մի չմատուցանեն, որովհետև հազիւ իր որ-
դւոյն կը մատուցանեն, և բաւական կը համարին
վրան զարմանալ և զնա օրինակ ընծայել, թէպէտ շատ
բանի մէջ ալ զնա կը մեղադրեն, և քրիստոնէից օրի-
նակ տուած ատենն ալ բացառութիւններ առնեն
այնոր մէջ. որ աւելի իմաստասիրական կշռադա-
տութիւն մի է և բանաւորական քննութիւն մի իր
վարդապետութեանն, և կենաց ուղղութեան համար
ալ իւրաքանչիւրոց հաճոյից ձգուած բարոյական
դատողութիւն մի: Իրենց կարծեաց նայելով՝ Աւե-
տարանն ալ տեսակ մի իմաստասիրութիւն է՝ յորմէ
պէտք է որ խելքն 'ի բաց թօթափէ՝ ինչ որ ռամկին
երևակերպութիւնն կիրքերն և սնոտիապաշտութիւն-
ներն աւելցուցած են, այսինքն հրաշքներն, մար-
գարէութիւններն և ինչ որ դերբնական կը կոչուի:

Այս վերջիններուս ասացածն կը հասկանամ,
որովհետև ատենօք ես ալ նոյն կարծիքն ունէի,
բայց ուրիշ կերպով. այսինքն քրիստոնէական վար-
դապետութիւնն ստորին բացատրութիւն մի կը հա-
մարէի բացարձակ գաղափարին՝ զոր ռամկին մտաց
համաձայն և զգալի ձևերով բացատրելու է՝ որպէս
զի կարող լիցի ըմբռնել. ուստի աստի յառաջ եկած
կը համարէի դրական կրօնից խորհրդական տարաղ-
ներն, ինչպէս նաև Երրորդութեան, Մարդեղու-
թեան և քրիստոնէութեան ուրիշ ամեն խորհուրդ-
ներն. այս բաներս սուտ չէի սեպեր՝ որովհետև
ճշմարտութեան մաս մի կայ մէջերնին, այլ միայն
անճիշդ և անկատար, վասն զի ճշմարտութիւնն ամ-
բողջ ոչ բովանդակէին ինչպէս որ գտանի անխառն
և զուտ գաղափարին մէջ՝ որ նիւթն է ճշմարիտ

իմաստասիրութեան, որ միայն վերամբարձ ներհայե-
ցութեամբ բարձրանալով՝ ջանայ այն ճշմարտու-
թիւնն ժողովրդեան ըմբռնելի առնել՝ իրենց մտաց
տկարութեան համեմատ ձևերով: Ուստի կը համա-
րէի թէ իմաստասիրութիւնն կրօնից խորհուրդներն
ոչ դատապարտէ, այլ և երբեմն կը գործածէ զնոսա՝
որպէս զի իր միտքն հասկցնէ, բայց նոցա աւելի
բարձր և ընդարձակ և ոգեղէն նշանակութիւն մի
տալով քան ինչ որ կրօնքն ուսուցանէ: — Ահա
այսպէս կը մտածէի ժամանակաւ, և այս պատճա-
ռաւ զիմաստասիրութիւնն քան զկրօնս կը վերադա-
սէի, համարելով թէ իմաստասիրութիւնն իր լու-
սովն զկրօնս պիտի լուսաւորէր, և իւր ներհայեցո-
ղական թափովն զնա պիտի բարձրացնէր, և այնոր
առջին վերնագոյն ճամբայ մի պիտի բանար. և նմա
պիտի օգնէր թօթափելու յանձնէ այս աշխարհիս
ամպերն և ցնորքն՝ աւելի բարձրերն ելնելու համար:

Իսկ այսօր փորձառութեամբ իմ յանձնապաստա-
նութիւնս շատ պակսեցաւ, և իմաստասիրութեան
ամեն ճամբայներէն՝ և նոյն իսկ մոլորաշաւիղ ուղի-
ներէն անցնելով Փրանկիոյ և Գերմանիոյ մէջ՝ Քան-
թի, Ֆիխթէի, Շէլլինկի և Հէկէլի և նոցա փրանկ
բանագողներու հետոցն հետևելով՝ դեռ չտեսի այն
դագաթն ուր իրենց խոստմանն համեմատ պիտի
հասնէինք, ու անտի պիտի տեսնէինք և 'ի միտ
առնուինք տիեզերաց ամեն գաղտնիքն: Շատ գրքեր
գրեցինք փոքր 'ի շատէ հասկանալի, շատ դրու-
թիւններ հնարեցինք փոքր 'ի շատէ մթին, և սա-
կայն դեռ տիեզերական գիտութեան հասնելու կը
սպասեմք: Իմաստասիրութիւնն իւր խոստմանց
մէջ աւելի յաղթական հանդիսացաւ՝ քան թէ իւր
գործոց մէջ. վասն զի հնարիմաց և վախճանազուրկ
հայեցողութեանց մէջ իր ուժն կորուսանելէն՝ և
գժուարակնճիռն բնազանցութեամբ միտքերն պըր-

կելէն և ամբոխելէն ետև, այս անձնապանծ և յան-
դուգն խմաստասիրութիւնն՝ որ զամենայն ինչ պիտի
նորոգէր ՚ի գիտութիւնս, յարուեստս, ՚ի կրօնս և
՚ի քաղաքականութեան՝ նանրացաւ ՚ի խորհուրդս
իւր, որպէս ասէ առաքեալն Պաւղոս. և վերջապէս
միաքն դնելով որ իր հետևողաց ձեռօք երկինքն պի-
տի ձանկռտէ յափշտակէ՝ Թողուց զնոսա երկրիս
անուանարկ և ամենալից կրից մէջ. որովհետև այսօր
Գերմանիոյ և Ֆրանկիոյ մէջ սիրոյն՝ նիւթականու-
թիւնն, զգայականութիւնն և դրականութիւնն է:
Ամբարտաւանութիւնն միշտ ցոփութեան կը տանի:

Բողոքական երիցուհիք խմաստասէր կ՚ուզեն եղեր
լինել՝ այդ իմ հոգս չէ. որովհետև արդէն իրենց
սկզբունքն՝ Թէ ամեն մարդ աղատութիւն ունի
սուրբ գիրքն քննելու և մեկնելու՝ իրենց իրաւունք
կուտայ խմաստասէր ալ լինելու, բայց զայս ոչ հաս-
կանամ՝ Թէ ուրեմն ի՞նչպէս իրենք զիրենք պաշտօ-
նեայ սրբոյ Աւետարանի և հովիւ հօտին Քրիստոսի՝
կարեն անուանել: Վասն զի իրենց համար Աւետա-
րանն մարդկային վարդապետութիւն մի է՝ զոր խել-
քերնուն փչածին պէս կարեն մեկնել. ուստի իրենց
եկեղեցւոյն անդամներն ալ՝ եթէ իրենց պէս մտա-
ծեն՝ ուրիշ ուղղութեանն կարօտ չեն, և իրենք զի-
րենք կարեն ուղղել, որով և երիցու ալ հարկ չմնար:
Խմաստասէրը եղած չէ քնաւ՝ որ զինքն եկեղեցւոյ
պաշտօնեայ սեպէ, և այսպիսի առաքելութիւն
յանձն չորթէ. վասն զի մարդ այս պաշտօնս յանձնել
չէ կարող ընդունել: Ուստի այս իրենց գիրքն շատ
կեղակարծ է՝ և իրենց խիղճն ալ պէտք է որ զիրենք
անհանգիստ առնէ. որովհետև այնու կը սիպտուին՝
ըստ կարգի հաւատոյ ընկալեալ լեզու մի բանեցնել՝
որում իրենք սրտերնէն ոչ հաւատան ու համա-
ձած չեն: Քրիստոնէութեան վարդապետութեան
տարաձներն՝ ընկալեալ բանի մի պէս գործածելով

կամ խօսուածքի ոճի մի պէս բանեցնելով՝ և հիմն
ուղածնին դնելով դրսուանց միայն կրօնից վրայ
խօսիլ կ՚երևի՝ իսկ ՚ի ներքուստ խմաստասիրել է
միայն: Շատ աւելի անկեղծութիւն կը գործեն
սուրբ բեմերէ իջնել, և ակադեմական կաճառն
ելնել:

Բայց լինէ այլ աւելի անհասկանալի բան է՝ հաւա-
տացեալ սեպուած բողոքականաց՝ առ մայրն Յիսուսի
Քրիստոսի բռնած կերպն՝ որում ամենևին պաշտօն
մի ոչ հարկանեն և ամենևին վրան ոչ մտածեն. որով-
հետև կաթոլիկներուց պէս առնել ջուղելով՝ ինչ առ-
նելին ալ ոչ գիտեն: Եւ սակայն եթէ կը հաւատան՝
Թէ բանն աստուածային յարգանդի նորա մարմին
առաւ, և որդի նորա Որդի է Աստուծոյ, ապա հարկ
է խոստովանին որ ինքն գերագոյն փառաց հասաւ
Բարձրելոյն հարան և Ամենակալին մայրն լինելու: Ա-
պա այսու անուամբ անտարակոյս չէ նա որպէս զմի
՚ի կանանց. վասն զի այն որ իսկական մաքրութիւնն
է և անհնարին է նմա արատ ինչ մեղաց յանձին բե-
րել՝ չէր կարող արատաւորիլ արեամբ Մարեմայ՝
որ իր արիւնն եղև. ապա ուրեմն անարատ յղու-
թիւն սրբոյ Կուսին հարկաւ կը հեռւի այս բա-
նէս: Դարձեալ եթէ Մարիամ մայր էր Աստուծոյ ՚ի
վերայ երկրի՝ ՚ի յերկինս ալ մայր լինելէ գադրած
չէ. ուրեմն իր աստուածորդւոյն յանձին այլակեր-
պեալ մարդկութեամբն երկնից աթոռն նստած է՝
նորա փառացն փառակից, և յաւիտենականութեան
մէջ ճառագայթաձակ կը փայլի երանութեամբ՝
որպէս հարան և որպէս մայր Աստուծոյ:

Եւ ահա սա ինքն է՝ զոր նոքա անհոգութեամբ
արժանի ոչ համարին պատուելու և յոգնութիւն
կոչելու երկրիս վրայ. նա որ երկնից հրեշտակաց
Թագուհին է՝ և ոչ փոքրիկ տեղ մի կուտան նմա ՚ի
տան աշխարհիս. նա որ յաթոռ աստուածութեանն

բազմի՝ իրենց քարոզութեան մէջ անունն անդամ ոչ յիշեն. նա որ երկնից կամարաց մէջ կը փառաբանի՝ գովութիւն և շնորհակալութիւն մի ոչ ընդունի քրիստոնեայ կոչուած համախմբութեանց մէջ: Յիրաւի այս իրենք զիրենք 'ի կրօնականս քան զայլս աւելի բանաւոր սեպած մարդկանց չմիաբանութիւնն՝ կերպիւ իւիք չբացատրուիր: Եթէ կը հաւատաք Որդւոյ Աստուծոյ մարդացելոյ՝ հաւատացէք ուրեմն նաև իւր մօր փառացն ու կարողութեանն, և ցուցէք գոնէ ձեր շնորհակալութիւնն ձեզ տուած լինելուն համար զԱյն զոր ձեր Փրկիչն կ'անուանէք, և մանաւանդ ձեր մարմնոյ ոգւոյ և սրտի վշտաց մէջ կոչեցէք զօգնութիւն այնորիկ՝ որոյ ձեռօքն ամենէն մեծ բարիքն տրուեցան մարդկանց՝ որ է շնորհն փրկութեան: Հաւատացէք որ իր մայրական աղօթից միջնորդութեամբն ձեզ համար մասնաւոր կերպով պիտի առնէ զայն ինչ՝ զոր արար բոլոր մարդկային սեռի համար՝ իր հպատակութեամբն աստուածային խօսքին և խոնարհութեամբ հաւանելովն 'ի լինել գործի անհուն ողորմութեանն Աստուծոյ:

Յիրաւի որչափ ալ իմաստասէր եմ, և մինչև այսօր գերբնականի հաւատալ չեմ ուզած, և ներկայ խնդրէս ալ շահ մի չունիմ, սակայն կը խոստովանիմ որ եթէ վաղուան օրն զայն ընդունելու որ լինէի, ինչպէս նոքա որ պաշտօնասէր բողոքականք անուանին և մէջերնին հաւատք ունեցողներ միայն նոքա են, կը խոստովանիմ որ հաւատոցս ամեն հետևանքն ալ պիտի ընդունէի: Անտարակոյս Յիսուսի Քրիստոսի մօրն երկրպագութիւն պիտի չառնէի՝ որովհետև մարդկային արարած է, սակայն որովհետև գերազանցագոյն ոք է նա քան զայլս, և անճառահրաշ ձրիւք պատուեալ լինելոյ հարսն և մայր Աստուծոյ, պիտի խնդրէի նորա բարեխօսութիւնն առ

Ամենակալին, և պիտի ընծայէի իրեն սրտազեղ պատիւ մի որպէս մայր քրիստոսական գերդաստանի: Կաթողիկեայց ըրածն ալ այս է, ուրիշ բան չէ. և ձեր նոյն բանն չառնելուն ալ ճիշդ պատճառն այս է, որովհետև ոչ կամիք նոցա գործածն առնել:

Մկրտութիւն

10 Մայիս:

Ահաւասիկ նոր գործ մ'ալ որ ձեռքէս աւելի խղճիս վրայ կը ծանրանայ: Եղբայրս կ'ուզէ որ իր նորածին զաւկին կնքահայր լինիմ՝ կամ ինչպէս որ ասի աւազանէն ընդունիմ, ես որ մկրտութիւն ինչ ասել է ոչ գիտեմ, և այնպէս հաւատացած եմ որ զօրութիւն մի չունող սոսկ արարողութիւն մի է, քրիստոնէից ցուցակին մէջ արձանագրուելու կերպ մի: Այսու ամենայնիւ իմ աղջիկս ալ կնքել տուել եմ, նախ կնոջս հաւատոց դէմ գործելով զինքն չտրտմեցնելու համար, և յետոյ բոլոր աշխարհ ալ նոյն բանն առնելուն համար, և Եկեղեցւոյ գայթակղութիւն չտալու համար՝ որոյ մասն սեպուած կը համարիմ: Կը խոստովանիմ դարձեալ որ պատճառներէս մին ալ այն էր որ իմ անհաւանութեանս վրայ բաւական վստահութիւն չունէի, և զայն մերժելով՝ պատասխանատուութիւնն ալ վրաս ոչ կամէի առնուլ, և մանաւանդ ոչ ուզէի զաւակս վտանգի մէջ դնել, եթէ այն բանէն զրկուելով վտանգ մի կարէր հետևել: Ուստի աւելի խոհեմութիւն սեպեցի որ մկրտել տամ զինքն՝ այս երկայրաբանութեան վրայ հաստատուելով, այսինքն թէ մկրտութիւնն կամ բան մի ոչ նշանակէ կամ աստուածային զօրութիւն մի կայ այս կրօնական գործիս մէջ. եթէ պարզ

ձև մի է՝ մկրտելով բան մի ոչ վաստկիմ՝ բայց միան-
գամայն բան մ՝ ալ ոչ կորուսանեմ, և թէ որ բարիք
մ՝ալ չառնէ՝ չարիք մ՝ ալ չհետևիր. ապա ուրեմն
մկրտել տալուն մէջ վնաս մի չկայ: Իսկ ընդհակա-
ռակն թէ որ մկրտութիւնն հոգևոր օգուտ մի ունի՝
ես յանցաւոր պիտի լինիմ զաւակս յայն բարեաց
զրկելով՝ զոր կարէր ունել. և վերջապէս Աստուծոյ
և մարդկանց առջև ես պատասխանատու պիտի լի-
նիմ՝ զոր ոչ կամիմ:

Իսկ ներկայ դիպուածիս մէջ՝ պարագայն նոյն չէ.
վասն զի ես կնքահայր լինել չուզելովս՝ տղուն վնաս
մի ոչ լինի, որովհետև իմ տեղս ուրիշ մի կարէ բռ-
նել: Միայն եղբայրս իւր կինն և ընտանիքն պիտի
տրտմին, և պիտի չհասկանան թէ այս բանիս մէջ
ինչ խղճահարութիւն ունիմ, որովհետև պարզ
պատշաճողութիւն մի է առնելիքս, և հաւատոյ դա-
ւանութիւն տալ չէ: Գիտացուներս ալ տմարդու-
թիւն պիտի սեպեն գործածս, և մտքերնին պիտի
դնեն թէ ես իրենց վրայ սէր չունիմ: Իրաւ նեղա-
ցուցիչ բաներ են. և տես որ ամեն բան ալ չեմ
կարող իրենց ասել, որովհետև նոցա առջև կրօնից
այնչափ թշնամի չեմ ուղեր երևիլ՝ մինչև անգամ
այնոր պատուէրներուն և սովորութեանց ալ մաս-
նակից չուզեմ լինել. վասն զի սրտէս այնչափ անհա-
ւատ չեմ՝ որչափ արտաքուստ պիտի երևիմ: Սա-
կայն ինձ ծանր կուգայ դրական և արտաքին գոր-
ծերու մասնակցիլ որ կարծես թէ զիս պիտի ստի-
պեն այնպիսի բաներու հաւատալ՝ որոց վրայ դեռ
տարակուսի մէջ եմ, և երթալ եկեղեցւոյ մէջ տղու մի
հաւատոց դաւանանքն տալ՝ որում ես ոչ հաւատամ:
Ուստի ես իմ խիղճս քննելով՝ կը գտնեմ որ չուզե-
լուս և տատամսութեանս ալ բուն պատճառն այս
է. վասն զի այս պարագայիս մէջ մարդկային ակնա-
ծութենէ վախ չունիմ, որովհետև մարդիկ կարևո-

րութիւն մի ոչ տան այս բանիս, և ամեն օր ալ կը
տեսնեմք որ հաւատք օրէնք չունեցող մարդիկ ալ
կամակար յանձն առնուն այս պաշտօնս՝ ընկերական
պարտք մի համարելով զայն:

Միայն խիղճս կը զարնէ թէ արդեօք կեղծաւո-
րութիւն գործած պիտի չսեպուիմ, և խարդախ և
սուտզրուց պիտի չհամարուիմ Եկեղեցւոյ առջև
զիս հաւատացեալ քրիստոնեայ մի ցուցանելով՝ երբ
այնպէս չեմ, և հաւատոյ դաւանութիւն մի տալով՝
զոր սրտէս ոչ ընդունիմ, և վերջապէս հանդիսապէս
խօսք տալով՝ որ որչափ կարելի է՝ պիտի ջանամ
մկրտութեան օգուտներն պահել տալու իմ սանիս՝
յորոց ես ինքն օգուտ մի չեմ քաղել:

Պարապ տեղ ես ինձ ասեմ թէ՝ աշխարհիս առ-
ջին այս բանս պարզ ձևականութիւն մի կատարել
է. վասն զի խիղճս կը պատասխանէ թէ Աստուծոյ
առջև այնպէս չէ. և թէ գոնէ անկեղծ մարդու մի
չափ կը պարտաւորիմ առնելու զայն ինչ՝ զոր Ե-
կեղեցին կը խնդրէ, և ինչ որ ես նմա կը խոստանամ,
հոգևորապէս այն տղայն ինձ որդեգրելով՝ այն մտօք
զոր Եկեղեցին կը հասկանայ, և ոչ թէ այնպէս որ-
պէս իւրաքանչիւր ոք իր ուզածին պէս կը մեկնէ:

Այս տատամսութենէս ազատելու լաւագոյն մի-
ջոցն՝ խնդիրն 'ի հիմանց քննելն է, որպէս զի ապա-
հով լինիմ թէ արդեօք յիրաւի ծանր պատճառներ
ունիմ չընդունելու մկրտութեան զօրութիւնն՝ թէ
կանխակալոյ կարծեօք միայն կը մերժեմ զայն ա-
ռանց քննելու այս խորհրդոյս մէջ եղած խնդիր-
ներն. խորհուրդ ասացի՝ վասն զի Եկեղեցին այս ա-
նունս կուտայ մկրտութեան: Ես ալ ուրիշ անգամ
նոյն բանին հաւատացել եմ. ուստի պիտի ջանամ
միտքս բերելու ինչ որ ինձ ուսուցել էին այս նիւ-
թոյս վրայ, մանկութենէս մնացած քանի մի գրքերն
աչքէ անցընելով:

Գաղափար մկրտութեան

15 Մայիս:

Գրարանիս մէջ մկրտութեան վրայօք ի՞նչ գիրք որ գտի՝ քանի օր է որ զայնս կարդալու հետ էի, և այս խուզարկութեանս համար շատ մի գրքեր թղթատեցի՝ զորս շատոնց 'ի վեր բացած չէի. և շրջագայութեանցս ժամանակ ալ կարդացած բաներուս վրայ կը մտածէի. այժմ բովանդակութեան մի հասնելու համար՝ գրիչս ձեռքս կ'առնում, և կարդացածներուս և խորհրդածութիւններուս համառօտութիւնն խնամքով գրի կ'անցնեմ:

Նախ և առաջ անմիջապէս աղբիւրին դիմեցի՝ Աւետարանին մէջ Յիսուսի Քրիստոսի՝ մկրտութեան փրկութեան համար կարևոր լինելուն խօսքերն փընտռելով. և երկու վկայութիւն գտի յոյժ բացայայտ. յորոց մին որ նոր մկրտութիւնն կը հաստատէ՝ և Յովհաննու մկրտութիւնն չէ, այս բառերովս բացատրուած է Քրիստոսի առ առաքեալս ուղղած խօսքերով. «Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ» (Մատթ. ԻԸ. 19). «Որ հաւատայ և մկրտեսցի՝ կեցցէ» (Մարկ. ԺԶ. 16): Միւսն Յովհաննու Աւետարանին երրորդ գլխոյն մէջն է՝ յորում Քրիստոս կը հաստատէ Նիկոդեմոսի վերստին ծննդեան հարկաւորութիւնն՝ յերկնից արքայութիւնն մտնելու համար. և երբ Նիկոդեմոս կը հարցանէ թէ ի՞նչպէս կարելի է որ ծեր մի անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանէ և ելանէ, Քրիստոս կը պատասխանէ թէ «Պարտ է

ծնանել 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ. զի ծնեալն 'ի մարմնոյ մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյ հոգի է»:

Ուրեմն մկրտութիւնն նոր ծնանիլ մի յառաջ կը բերէ ոչ մարմնոյ՝ որպէս Նիկոդեմոս խորհէր թէ և վարդապետ էր Իսրայէլի, այլ հոգւոյ: Արդ եթէ հոգին նորէն ծնանի՝ ապա վերստին ծնեալ է, և այսոր համար մկրտութիւնն խորհուրդ վերածնութեան կամ վերստին ծննդեան կը կոչուի:

Բայց ի՞նչպէս լինի այս վերածնութիւնս: Հոգւոյն Սրբոյ ներգործութեամբ որ 'ի յեռն ջրոյ հեղեալ լինի 'ի հոգի մարդոյ որ գործի և նշանակ է ամենայն մաքրութեան և բանից որ բացայայտութիւն և անցք են Հոգւոյն: Ինչպէս մարդկային խօսքն՝ մարդուս ոգին կամ միտքն ուրիշի կը հաղորդէ, այսպէս ալ աստուածային խօսքն արտասանեալ 'ի պաշտօնէից կարգելոց առ այս՝ կը փոխանցէ զհոգին Աստուծոյ իւր ձիրքերովն՝ երբ պաշտօնեայք իրենց ընդունած առաքելութիւնն կը կատարեն: Աստ ևս Հոգին հովանանայ 'ի վերայ սրտից և բեղմնաւորէ զնոսա՝ որպէս յաւուրս արարչագործութեան աշխարհի: Նոյն Հոգին է որ փչելով Ադամայ հողազանգուած մարմնոյն վրայ՝ ստեղծեց զհոգին և նորա հետ միացուց: Մկրտութեան մէջ ալ նոյնօրինակ գործ կը կատարուի, ոչ եթէ զհոգին իր գոյացութեամբ նոր ստեղծելով՝ այլ այնոր սկզբնական մեղօք խանգարեալ կեանքն նորոգելով, և զայն նորէն մասնակից առնելով երկնային կենաց՝ որ մեր նախահարց յանցանօքն կորուսեալ էր:

Մկրտութեան արդիւնքն ինչպէս ըմբռնելս՝ օրինակաւ մի ևեթ կարեմ բացատրել, բաղդատելով զայն ծառոյ պատուաստի հետ՝ որ վայրի ծառն բոլորովին կերպարանափոխ առնէ. արդէն վերածնեալ ծառէ մի ընձիւղ մի կամ աչք մի կ'առնուս և վայրի ծառոյն վրայ կը պատուաստես, և այս պատուաս-

Գաղափար մկրտութեան

15 Մայիս:

Գրարանիս մէջ մկրտութեան վրայօք ի՞նչ գիրք որ գտի՝ քանի օր է որ զայնս կարդալու հետ էի, և այս խուզարկութեանս համար շատ մի գրքեր թղթատեցի՝ զորս շատոնց 'ի վեր բացած չէի. և շրջագայութեանցս ժամանակ ալ կարդացած բաներուս վրայ կը մտածէի. այժմ բովանդակութեան մի հասնելու համար՝ գրիչս ձեռքս կ'առնում, և կարդացածներուս և խորհրդածութիւններուս համառօտութիւնն խնամքով գրի կ'անցնեմ:

Նախ և առաջ անմիջապէս աղբիւրին դիմեցի՝ Աւետարանին մէջ Յիսուսի Քրիստոսի՝ մկրտութեան փրկութեան համար կարևոր լինելուն խօսքերն փընտռելով. և երկու վկայութիւն գտի յոյժ բացայայտ. յորոց մին որ նոր մկրտութիւնն կը հաստատէ՝ և Յովհաննու մկրտութիւնն չէ, այս բառերովս բացատրուած է Քրիստոսի առ առաքեալս ուղղած խօսքերով. «Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ» (Մատթ. ԻԸ. 19). «Որ հաւատայ և մկրտեսցի՝ կեցցէ» (Մարկ. ԺԶ. 16): Միւսն Յովհաննու Աւետարանին երրորդ գլխոյն մէջն է՝ յորում Քրիստոս կը հաստատէ Նիկոդեմոսի վերստին ծննդեան հարկաւորութիւնն՝ յերկնից արքայութիւնն մտնելու համար. և երբ Նիկոդեմոս կը հարցանէ թէ ի՞նչպէս կարելի է որ ծեր մի անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանէ և ելանէ, Քրիստոս կը պատասխանէ թէ « Պարտ է

ծնանել 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ. զի ծնեալն 'ի մարմնոյ մարմին է, և ծնեալն 'ի հոգւոյ հոգի է»:

Ուրեմն մկրտութիւնն նոր ծնանիլ մի յառաջ կը բերէ ոչ մարմնոյ՝ որպէս Նիկոդեմոս խորհէր թէ և վարդապետ էր Իսրայէլի, այլ հոգւոյ: Արդ եթէ հոգին նորէն ծնանի՝ ապա վերստին ծնեալ է, և այսոր համար մկրտութիւնն խորհուրդ վերածնութեան կամ վերստին ծննդեան կը կոչուի:

Բայց ի՞նչպէս լինի այս վերածնութիւնս: Հոգւոյն Սրբոյ ներգործութեամբ որ 'ի յեռն ջրոյ հեղեալ լինի 'ի հոգի մարդոյ որ գործի և նշանակ է ամենայն մաքրութեան և բանից որ բացայայտութիւն և անցք են Հոգւոյն: Ինչպէս մարդկային խօսքն՝ մարդուս ոգին կամ միտքն ուրիշի կը հաղորդէ, այսպէս ալ աստուածային խօսքն արտասանեալ 'ի պաշտօնէից կարգելոց առ այս՝ կը փոխանցէ զհոգին Աստուծոյ իւր ձիրքերովն՝ երբ պաշտօնեայք իրենց ընդունած առաքելութիւնն կը կատարեն: Աստ ևս Հոգին հովանանայ 'ի վերայ սրտից և բեղմնաւորէ զնոսա՝ որպէս յաւուրս արարչագործութեան աշխարհի: Նոյն Հոգին է որ փչելով Ադամայ հողազանգուած մարմնոյն վրայ՝ ստեղծեց զհոգին և նորա հետ միացուց: Մկրտութեան մէջ ալ նոյնօրինակ գործ կը կատարուի, ոչ եթէ զհոգին իր գոյացութեամբ նոր ստեղծելով՝ այլ այնոր սկզբնական մեղօք խանգարեալ կեանքն նորոգելով, և զայն նորէն մասնակից առնելով երկնային կենաց՝ որ մեր նախահարց յանցանօքն կորուսեալ էր:

Մկրտութեան արդիւնքն ինչպէս ըմբռնելս՝ օրինակաւ մի ևեթ կարեմ բացատրել, բաղդատելով զայն ծառոյ պատուաստի հետ՝ որ վայրի ծառն բոլորովին կերպարանափոխ առնէ. արդէն վերածնեալ ծառէ մի ընձիւղ մի կամ աչք մի կ'առնուս և վայրի ծառոյն վրայ կը պատուաստես, և այս պատուաս-

տած տեղէն ձիւղ մի կ'ելնէ՝ որ նոր յոյզ մի կը բերէ վայրի ծառոյն, այնպէս որ իր գոյացութիւնն պահելով հանդերձ՝ այս գերագոյն ազգեցութիւնէն այնպէս կ'այլափոխի՝ որ իր նախկին վիճակին մէջ Թողուած ժամանակէն՝ շատ գերազանց տեսքով և համով ծաղիկներ ու պտուղներ կուտայ: Ծառն միշտ նոյն է՝ բայց ընկալեալ ոգիէն բոլորովին այլակերպեալ:

Այս բաղդատութիւնս յետագայ երկու գործերով աւելի ևս կը հաստատուի. վասն զի ինչպէս որ վերածնած ծառին պատուաստն եթէ տկարանայ ու չորնայ՝ այնոր հին և վայրի կեանքն նորէն կը զօրանայ, այսպէս ալ նոր արարածոյն մէջ մկրտութեամբ վերածնեալ հին մարդն՝ երբ ոչ չարուճակէ աստուածային զօրութեամբ մնանելու մատաղատունկ հոգւոյն մէջ, երկնային կենաց սերմն չմշակուելով և սնունդ չառնելով կը տկարանայ ու կը մեռնի, այսինքն գերբնական կեանքն կը խղդուի այն հոգւոյն մէջ՝ երկրաւոր կենաց ծանրութեամբն, թէպէտև անջնջելի կնիքն որ 'ի նմա գրոշմած է՝ չկարէ եղծանիլ: Ասոր յառաջ կուգայ Եկեղեցւոյ մահ հոգւոյ ասացածն՝ զոր մահացու մեղքն կը բերէ և զհոգին չնորհաց կեանքէն կը զրկէ. և որով հետև մահն կենաց զրկումն է՝ հոգին յիրաւի կը մեռնի իւր սկիզբէն բաժնուելով, ինչպէս որ բունէն բաժնուած ձիւղն կը չորնայ: Բայց որովհետև մի անգամ մնկագործեալ աստուածային սերմն անեղծանելի է՝ հոգւոյն մէջ թաքուն վիճակի մէջ կը մնայ, ինչպէս ընձիւղ մի ժխտութեան մէջ թաղուած, և միշտ կարելի է նոր այս աշխարհիս մէջ նորէն կենդանանալ և վերածնանիլ՝ երբ հոգւոյ արեգական ճառագայթն իր վրայ հանի, որ ուրիշ խորհրդոյ միջոցով կը կատարուի (որ է ապաշխարութիւն):

Թէպէտ և այս բաներս կատարեալապէս ոչ ըմբռնեմ՝ բայց կը խոստովանիմ որ սրտիս մեծ ազդեցութիւն առնեն, և հոգւոյս մեծ և խորին կարօտութիւնն կը լեցնեն: Մեր արդի թշուառութեան պատճառաց վրայ լինչ կարծիք ևս ունենամք՝ չեմք կարող ըսյն ուրանալ. արարածոց մէջ քան զմեզ նեսին առաւել խեղճ կը ծնանիմք, և գաստիարակութիւնն՝ որ հարկաւոր է զմեզ հրահանգելու և զմեզ արդար և բարի առնելու համար, ցաւոց չղթայ և կապանք է մեզ, և մեր կենաց մնացած մասն ալ մինչև ցալևոյթ ցուրտ ծերութեան՝ անգադար պատերազմ է ընդ ցանկութեան և անձնասիրութեան: Ինչու համար է այս սկզբնական հիւանդութիւնս, և ինչպես հնար է ելանել անոր 'ի բարձրանալ և ժամանել 'ի կատարելութիւն անգր որում կարօտ կը զգամք, 'ի դաղափար ճշմարտին բարւոյն և գեղեցկին որում ցանկայ և փափաքէ հոգիս մեր: Իրաւցընէ ոչ նախկին կրօնից մէջ և ոչ առ իմաստասէրս կը գտնեմ բան մի որ քրիստոնէութեան չափ լաւ բացատրեն մեր նախկին վիճակն: Դարձեալ այս բացատրութիւնս որ չարեաց սկիզբն՝ արարածոյն չարացած կամքէն յառաջ եկած կը համարի՝ զմեզ սաստիկ յերկմտութեան ծփանաց կ'ազատէ, որով կամ չարի և բարւոյ զանազանութիւնն ուրանալու էր՝ զնոսա համամատուածութեան մէջ ընկղմելով, և կամ չարն ալ բարւոյ արարչին ընծայելու էր, որոյ այն առեն ոչ գերագոյն բարութիւնն կարեմք ըմբռնել և ոչ անհուն կարողութիւնն, ապա թէ ոչ համարելու էինք զԱստուած չարագործ սկիզբ մի՝ որ խեղճ արարածներ ստեղծել է՝ զնոսա իւր անգթութեան և քմահաճոյից ախուր խաղալիք առնելու և զնոսա այպանելու համար. որ միանգամայն հայհոյութիւն է և անմտութիւն, որովհետև այս ամենայն ուղղակի հակառակ է աստուածութեան գաղափարին:

Բայց աւելի սրտի դպչող մասն այն բանաւոր և քաղցր կերպն է՝ որով Աստուած յանցաւոր մարդն իր մեղքէն կը հանէ և կ'ազատէ յաւիտենական մահուանէն որում արժանի եղել էր իր ապըստամբութեամբն: Վասն զի հարկ էր որ աննախագրելի արդարութիւնն իր տեղն երթայ՝ յանցաւորին պատժուելովն, և որպէս զի պատիժն իրեն օգտակար լինի՝ պէտք է որ իր յանցանքն ճանաչէ և մերժէ զղջալով, որպէս նաև իր չար կամքն՝ չարէն 'ի բաց հեռանալով: Ադամ տկարացած և չարին գերի եղած՝ այս բանիս անկարող էր՝ որպէս նաև իւր սերունդն՝ որում փոխանցեալ էր իւր անարգութիւնն և անկարողութիւնն. ապա մարդ մի պէտք էր որ մարդկային կամօք՝ մարդուս ազատութեամբ գործած մեղքն քաւէր, ուստի Աստուած իր անբաւ ողորմութեամբն արժանի համարեցաւ մեզ նմանիլ՝ որպէս զի յանձին իւրում վերականգնէ զմարդկութիւն՝ զոր իր վրայ առած էր, և նորա տեղն քաշելով այն պատիժն որում մարդս արժանաւորել էր: Այսպէս արդարութիւնն զգթութիւնն համբուրեց, կամ թէ աւելի՝ աստուածային գթութիւնն հնարք գտաւ զանայլայլելի և զանողոքելի արդարութիւնն փոխարինելու. և զմարդ գնեց մեղսաքաւիչ և հաշտարար արեամբ երկնային ողջակիզին՝ հեղլոյ 'ի վերայ խաչին՝ մեղապարտին համար. ալ յետ այսորիկ հոգին որ Յիսուսի Քրիստոսի հետ կը միանայ հաւատալով 'ի բան նորա և պատարագ, և կը մկրտուի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ՝ զօրութեամբ մկրտութեան և այլոց խորհրդոց՝ հաղորդակից լինի երկնային կենաց սփռելոց 'ի վերայ աշխարհի 'ի ձեռն շնորհաց, և որ պիտի լրանայ 'ի փառս՝ յետ աստի կենացս: Այս յաւազանէն վերառեալ նոր մարդս սքանչելի իմն կ'երևի ինձ, և աւելի ևս կը հիանամ այն շղթայա-

շար միջոցներուն և հոգևորական օգնութեանց վրայ և հրահանգաց հանապազորդութեան և հսկողութեան և բարոյական ուղղութեան վրայ, որով յառաջ վարէ Եկեղեցին՝ ազատարար Քրիստոսի գործն, որով գրեթէ դաստիարակ լինի մարդկութեանս առ 'ի ուսուցանել նմա յամենայն ժամանակի յաւիտենական ճշմարտութիւններն, և մանաւանդ առ 'ի բարձրացուցանել զնա 'ի պայծառութենէ 'ի պայծառութիւն և յառաքինութենէ յառաքինութիւն մինչև ժամանել 'ի փառս և յանհուն երանութիւն Հօրն լուսոյ յորմէ ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք, միով բանիւ՝ յայն զոր կոչեմք յիմաստասիրութեան Բարին գերագոյն:

Զօրութիւն մկրտութեան

20 Մայիս:

Սակայն այս լուսոյս մէջ որ այժմ ինձ երևի՝ մթին կէտ մի կայ՝ զոր պիտի ջանամ լուսաւորելու: Մինչև առ վայր մի կը հասկանամ թէ ինչպէս Ադամայ մեղաց արատն՝ իւր արեամբն իր սերնդոցն անցաւ, որովհետև ամենեքին նոքա 'ի կարելութեան էին 'ի նախահայրն իւրեանց. այսոր համար է որ կարծեմ Պաւղոս առաքեալ իր թղթոց միոյն մէջ ասէ. «Ի միումն ամենեքին մեղան»: Աստի յառաջ գայ զանազանութիւն երկու տեսակաց մեղաց. սկզբնականն՝ որ փոխանցեալ է, և մարդկութեան պարտակցութիւն ունելնուս համար մեզ ալ կը տիրէ, և ներգործականն որ մեր սեպհական կամքէն յառաջ կուգայ, և յորում մեք անձնաւորաբար յանցաւոր եմք: Բայց նոյնչափ որոշ ոչ տեսանեմ թէ ինչպէս և որով ճամբով աստուածային կեանքն՝

զոր յերկինից եբեր Միջնորդն՝ կը հաղորդուի ա-
մեն քրիստոնէից և ամեն վերածնեալ մարդոց, այն-
պէս որ այսու հաղորդակցութեամբ լինին որդիք
Աստուծոյ և եղբարք Յիսուսի Քրիստոսի: Իրաւ է
որ միայն որդեգրութեամբ է այս որդիութիւնս,
որովհետև միայն Բանն Աստուած է բնութեամբ
որդի հաջին ծնեալ՝ի Հօրէ՝ որում և համագոյակից
է և հաւասար իշխանութեամբ և մեծութեամբ:
Աստուածային էութիւնն անհաղորդ է արարածոյ,
և հնարաւոր որ միանայ ընդ անհնոյ՝ չկարէ նոյնական
լինել ընդ նմա. զի Աստուած մի միայն է: Բայց մի
թէ մարդս իւր վերածնեալ բնութեամբն ձգմարտա-
պէս եղբայր Քրիստոսի չէ. նախ գերբնապէս գո-
լով անգամ փառաւորեալ մարմնոյ Փրկչին, և եր-
կրորդ նաև բնականապէս՝ի Կուսամայրն՝ որոյ յար-
գանգի Բանն Հառ զմարմին և զարիւն մարդկութեան:

Արդ այժմ այս խնդիրս մեզ ընդ առաջ ելա-
նէ թէ Ո՞րպէս աստուածային կամ գերբնական
կեանքն՝ միացեալ՝ի Յիսուս Քրիստոս ընդ բնական
կենաց մարդոյ՝ զոր այլակերպեաց և աստուա-
ծացոյց՝ անցաւ՝ի սերունդն Ադամայ առ՝ի մա-
քրել զնա՝ի սկզբնական արատոյ և առ՝ի լուծա-
նել՝ի կապանաց մեղաց, և՝ի գերութենէ և՝ի մա-
հուանէ. ի՞նչպէս զայն նոր արարած մի արար՝ հա-
ճոյ աչաց Աստուծոյ՝ որոյ զվերժն կրեր յառաջա-
դոյն: Այս բանս Փրկչին բնական կենաց փոխանցու-
թեամբն եղած չէ. որովհետև նա իր մոր պէս կոյս
մնաց, և յայլ կողմանէ ալ այն միջոցն որով չարն
ծաւալեալ էր՝ դադրմանին գործադրութեանն ալ
գործածել ոչ յարմարէր: Եւ սակայն որովհետև
կեանքն ամենուրեք ծննդագործութեամբ կը փոխ-
անցի՝ ապա ուրեմն այս գիպուածիս մէջ ալ ծննդա-
գործութիւն մի կայ, և որովհետև խանգարեալ մար-
միին այսմ չէր կարող մասնակից լինել, ապա ուրեմն

այս ծննդագործութիւնս բոլորովին հոգևոր լինելոյ
էր: Այս իսկ է զոր Քրիստոս կը հասկացընէ Նիկո-
դեմոսի այս խօսքերովս. « Ծնեալն՝ի մարմնոյ՝ մար-
մին է, և ծնեալն՝ի հոգւոյ հոգի է ». և միաքս կու-
գայ որ Յովհաննու աւետարանի առաջին գլխոյն
մէջ՝ առենօք սա նշանաւոր խօսքերն կարդացել եմ,
որոյ իմաստն այս առաջին անգամ է որ կը գտնեմ.
« Որք ընկալան զնա (զԲանն մարմնացեալ) ետ նոցա
իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոյ հաւա-
տասցեն յանուն նորա. որք ոչ յարենէ և ոչ՝ի կա-
մաց մարմնոյ և ոչ՝ի կամաց առն՝ այլ յԱստուծոյ
ծնան » :

Ահաւասիկ այս խօսքիս մէջ կը գտնուի՝ կարծեմ
իմ խնդրոյս պատասխանն: Այո, Յիսուսի Քրիստոսի
կեանքն փոխանցեցաւ յորդիս Ադամայ՝ որ այն կե-
նաք նորաստեղծան և եղեն նոր մարդ: Եւ այս իւր
շնորհաց գործն և Աստուծոյ առ մարդիկ ունեցած
սիրոյն արդիւնքն՝ կատարուեցաւ և դեռ ևս ամեն
օր ալ կը կատարուի պարզ հոգևորական ծնունդ-
եամբ՝ որ լինի իւրաքանչիւր նոր քրիստոնէի վրայ
մկրտութեամբ, որոյ համար վերածնութեան խոր-
հուրդ կը կոչուի, ինչպէս նաև խորհուրդ մեռելոց
որովհետև երկնից կեանքն տայ նոցա՝ որ զսոյն կո-
րուսեալ և հոգւով մեռեալ էին: Այս ծնունդս՝ի
հոգւոյ լինի և ոչ՝ի մարմնի, և հետևապէս մարմին
և արիւն մասն չունին այնոր մէջ. և լինի ջրով և
Հոգւով՝ որոյ աստուածային խօսքն հաւատով ար-
տասանեալ՝ փոխանցիչն է: Երբ մկրտուողք չափա-
հաս են՝ այսինքն որ ունին զբանաւարութիւն և
զաղատութիւն՝ հարկ է յառաջագոյն հրահանգել
զնոսա՝ որպէս Քրիստոս ուսոյց զաշակերտս իւր.
վասն զի իրենց առ բանն յաւիտենական ունեցած
հաւատոյն զօրութեամբն կ'ընդունին զկեանս, և այն
բանն կամ խօսքն է որ զիրենք նոր արարած առնէ:

Ա.յսոր համար է որ Յիսուս առաքելոց իշխանութիւն տալու առեն ասաց. «Գնացէք ուսուցէք զամենայն հեթանոսս. որք մկրտեսցին և հաւատասցեն յանուն իմ կեցցեն». այսինքն նոքա որ ընդ ջուր մկրտութեան ընկալցին 'ի սիրոս իւրեանց՝ իմովս բանիւ զՀոգին Սուրբ՝ լիցին վերածնեալք նորածնեալք, և այսպէս ոչ ևս լիցին «Մնեալք յարենէ և ոչ 'ի կամաց մարմնոյ, և ոչ 'ի կամաց առն՝ այլ ինքն իսկ Աստուածոյ»:

Իսկ 'ի նորածին երախայս և յանչափահաս մանկունս՝ որ խօսք խելք և ազատութիւն չունին՝ լինի հեղումն հաւատոց և կենաց՝ պաշտամամբ իսկ խորհրդոյն. որովհետև չեք ինչ 'ի հոգւոջ նոցա որ ընդդէմ դարձցի այնմ ոչ երկմտութիւն ոչ հակառակութիւն և ոչ վրդովմունք մտաց և սրտից: Իրաւունք ուրիշներու պէս 'ի սկզբնական արատոյ աղտոտած հոգիներ են, բայց դեռ բան մի գործած չունին կամաւորապէս մեղաց յարելով՝ զոր և ոչ իսկ ճանաչեն: Ապա ուրեմն նոցա համար մեծագոյն բարիք մի է իրենց կենաց սկիզբն վերածնանիլ, և աշխարհիս մէջ մնալ՝ ունելով աստուածային կենաց սերմն իրենց սրտին մէջ, և զհոսանս հաւատոց իրենց մտաց մէջ և զներձակայ ձեռնտուութիւն Հոգւոյն սրբոյ՝ որ սակաւ մի յետոյ (խորհրդով դրոշմի) պիտի լեցնէ զիրենք իւր պարգեւօքն՝ 'ի ձեռն պաշտաման եկեղեցւոյ եթէ հնազանդ որդիք մնան Հօրն իւրեանց երկնաւորի:

Ոչ գիտեմ թէ ինչ ծրեցի, և ոչ ժամանակ եղև նորէն զայնս աչքէ անցընելու, միայն ջանացայ ես ինձ բացատրել թէ մարդս կարէ առանց անմիտ և ապուշ լինելոյ մկրտութեան զօրութեանն հաւատալ. կը վախեմ որ մի գուցէ ինձ ալ նոյն դէպքն պատահի՝ ինչ որ եղև այն գերատանին՝ որ հռովմէական ժողովրդեան առջև թատերդութեան մէջ մարտի-

րոսի մի գերն կատարած ժամանակ՝ այնչափ եռանդեամբ գոչեց Քրիստոնեայ եմ, որ յիրաւի եղև՝ յանկարծ ընդունելով զոգի հաւատոյ հոգւոյն գոչմամբն՝ 'ի փոխարէն հանգիսաւոր վկայութեանն: Իր ձեռացուցած գերն իրականի փոխուեցաւ, և 'ի թատրոնէ 'ի կրկէսն անցաւ, և յիրաւի մարտիրոսութեամբ կատարեցաւ: Ես դեռ շատ հեռու եմ, և տակաւին սուրբ Կենեստոսի հաւատքն չունիմ. մանաւանդ թէ ինքն է որ ինձ կը պակսի, թէ և շատ բաներու մէջ մտացս ընդդիմութիւնն կը նուազի. անմտութիւն և անտեղութիւն համարած իրերն՝ կը տեսնեմ որ կարելի բաներ են եղել, և միտքս երթալով կը բացուի ու կը բարձրանայ. բայց կամքս դեռ կ'ընդդիմանայ, և տակաւին բաւական պատճառներ ոչ տեսանէ իւր դիրքն թողլու:

Նոր քննութիւն

21 Մայիս:

Շատ օրերէ 'ի վեր օրագիրս յառաջ վարելու չհամարձակեցայ, վասն զի ներսի դիս շատ ամբոխեալ էր, և կը վախէի ես իմ վրաս նայելու և հոգւոյս տրամադրութիւնն կամ յօժարութիւնն իմանալու. կ'երկնչէի որ մի գուցէ ուղածէս աւելի քրիստոնեայ դանեմ իմ հոգիս, և գրեթէ անապատի ջայլամին պէս առնէի՝ որոյ համար ասեն թէ գլուխն աւազին մէջ կը թաղէ որ վերահաս վտանգն չտեսնէ: Այս բանս շատ խելացութիւն մի էր, և այսօր մտածելով ամաչելս կուգայ: Ամեն բանէ յառաջ ճշմարտութիւն, և որովհետև ես ալ շատ մեծ կարօտութիւն ունիմ, և յիրաւի անկեղծութեամբ ալ զնա կը բնտռեմ, ապա ամեն ջանք առնելու

է յերևան ածելու համար զայն, և աւելի առ 'ի զհետ երթալ այնմ և ընդդրկել՝ եթէ բարեբաղդաբար այնոր հանդիպիմ. Մտերիմ Պլատոն, մտերմագոյն ճշմարտութիւն. մի թէ այս առածս որ իմաստասիրութեան համար կը զրուցեմք, կրօնից նկատմամբ ալ նոյնպէս ճշմարիտ չէ՞, և չէ՞ն մի տեսնուած ընդ շարս դարուց, և մանաւանդ յառաջին ժամանակս քրիստոնէութեան՝ բազմաթիւ իմաստասէրներ և ամենէն աւելի անուանիներն, որ իրենց ժամանակի մարդկանց՝ յորոց ինձ չափ շահ ունելով պէտք չէին խրտեցնել, քաջութեամբ ասացին. Մտերիմ իմաստասիրութիւն, այլ մտերմագոյն Քրիստոս:

Միայն ճշմարիտն խոստովանելով ես ինձ համար դեռ ոչ կարեմ ասել թէ իրեն մտերիմ բարեկամ եմ, բայց ստուգապէս թշնամի ալ չեմ. և կ'ուզես իմ կողմանէս ներողամտութիւն սեպէ կ'ուզես խորհրդաւոր սիրելութիւն մի՝ զոր ես ինքնին չկարեմ մեկնաբանել, քանի մի ժամանակէ 'ի վեր զգալի մերձենալ մի կ'իմանամ իմ սրտէս, և այս բանիս զանազան կերպերով կ'անդրադառնամ. նախ իմ գիտակցութենէս որ յայտնապէս վկայէ թէ իմ տեսութեանցս տրամադրութեանցս և յօժարութեանցս մէջ փոփոխութիւն եղած է. յետոյ այն սիրոյ առաւելութենէն զոր կինս և զաւակս ինձ ցուցանեն՝ որ մանաւանդ այս վերջի օրերս աւելի քաղցր և զուարթ կերպ մի առած է, և վերջապէս իմ իմաստասէր բարեկամացս դժկամակութենէն որ ինձ նկատմամբ անբնական և խորշելու կերպ մի բռնած են, և կարծես թէ կը դուշակեն թէ իրենց ընկերութենէն հեռանալու վրայ եմ, կամ թէ ինչպէս ասեմք դրօշակն դարձնելու վրայ եմ:

Իմ ձեռքէս ի՞նչ կուգայ. թէ որ ճշմարտութիւնն է զիս քարշողն, ինչո՛ւ դէմ դնեմ, որովհետև իմ ուզածս ալ այն է: Անշուշտ զիս միամտի տեղ չեն

կարող դնել, որովհետև որչափ որ կարեմ ահա կը կռուիմ ու կը ծեծկուիմ, և այս բանիս կը վկայէ այս իմ օրագիրս ալ՝ որ իմ ամեն աւուր խորհրդակիցս է, և կռուէս պիտի չդադրիմ մինչև որ միտքս համողուի և կամքս յաղթահարի. և սոցա երկուքին ալ յաղթելու է. մինչև հիմա թէպէտ և մտացս ամրոցին դրսի պատնէշներն շատ խրամատեցան, բայց կամքն՝ միջնաբերդին մէջ կեցած է՝ ուր իմաստասիրական դրօշն կը ծածանի և պիտի չխոնարհի՝ մինչև որ ճշմարտութեան լոյսն ճառագայթէ:

Բայց հիմա տեսնեմք վերջապէս ի՞նչ պիտի առնեմ սա կնգահայրութիւնս. արդեօք կարե՞մ առանց ստութեան ու կեղծաւորութեան ընդունիլ: Ստութիւն ոչ կարծեմ որ լիցի այս բանիս մէջ, որովհետև քրիստոնէից մկրտութիւնն ինչ խորհուրդներ որ կ'ենթադրէ՝ ես ալ զայնս ոչ ուրանամ, և թէպէտ բացայայտ ոչ դաւանիմ՝ սակայն ոչ ալ մերժեմ, որովհետև բաւական ճշմարտութիւն կը տեսնեմ 'ի նոսա: Իսկ մկրտութեան արարողութեանն և այնոր մէջ պարունակուած բաներուն գալով՝ եթէ զօրութիւն մ՝ ալ չտեսնեմ նոցա մէջ՝ սակայն գոնէ կը համարիմ զնոսա նշանակ մաքրութեան հոգւոց՝ որով չարի արաան զոր Եկեղեցին մեղք կ'անուանէ, կը ջնջուի, և նորոգէ զնոսա տեսակ իմն հոգեւորական վերածննդեամբ. և եթէ աստուածային օրինադրութիւն ալ չէ՝ դէթ շատ գեղեցիկ և յոյժ օգտակար գիւտ մի է, որովհետև կատարելութեան և մարդկանց վերհամբարձման ճամբայ մի կը բանայ: Հիմա ի՞նչ հարկ է որ բառերու վրայ վիճեմ և գլուխս ճաթեցնեմ իմանալու համար թէ ի՞նչպէս լինի այս վերածնութիւնս, և Նիկոդեմոսի պէս ասեմ. «Զիա՛րդ կարէ մարդ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանել»: Ո՛չ անտարակոյս. ոչ

ուզեմ որ ուրիշներն զիս վարդապետ Իսրայէլի համարին, և Դիմոս անունն ինձ տան՝ որ այն ատենէն 'ի վեր տկարամիտ մարդ կը նշանակէ (1)։ Սկիզբն դեռ ինձ համար մութ է, բայց հետևութիւններն՝ իրենց յառաջ բերած բարեօքն, շատ սքանչելի կ'երևին. և ո՛վ որ այս վարդապետութիւնս հաւատքով կ'ընդունի, և իր հաւատքն ալ գործով կը կատարէ՝ գերազանց մարդ լինի։ Աւետարանն որ նմա լոյս և իմաստութիւն կուտայ՝ այս աշխարհիս մէջ իւր ճանապարհն տեսնելու, և կամքն ալ կը զօրացնէ այն ճամբէն յառաջ երթալու համար՝ բաւական գիտութիւն կը շնորհէ իրեն աշխարհիս մէջ ուղղուելու համար, և բաց յայսցանէ խղճի խաղաղութիւն և սրտի զուարթութիւն՝ որ այնպիսի թանկագին բաներ են՝ զորս մեր իմաստասիրական պարապմանց մէջ ամենևին ոչ գտանեմք։

Բայց արդեօք կեղծաւորի տեղ պիտի չդնե՞ն զիս՝ տեսնելով որ հրապարակաւ մասնակցութիւն առնեմ կրօնից՝ որուն համար մաքերնին դրած են թէ ես ոչ հաւատամ, և որոյ պարտքերն յայտնապէս ոչ կատարեմ։ Բաց աստի երկայն բարակ ու բարձրաձայն պիտի չարտասանե՞մ առաքելոց հանգանակն, և ի՞նչ պատասխան պիտի տամ քահանային երբ ինձ հարցանէ թէ կաթողիկեայ քրիստոնեա՞յ եմ թէ չէ, որպէս զի կարող լինիմ երաշխաւոր և պաշտպան կալ իմ սանիս հաւատոցն։ Որովհետև վերջապէս Եկեղեցւոյ առջև ես պիտի պատասխան տամ այնոր տեղն՝ մինչև իւր առաջին հաղորդութեան օրն՝ որ ինքն իրեն պիտի նորոգէ մկրտութեան ուխտերն։

Այս բանս աւելի ծանր է, և նորանոր խորհրդածութիւններու կարօտ. դեռ ամբողջ չկարդացի այս հանգանակս, և որչափ որ կը յիշեմ մէջն շատ

(1) Գղ. Nigaud բառին համար է այս երգիծանքս։

յօդուածներ կան՝ որք ինձ ընդունելի ոչ երևին. օրինակի համար Քրիստոսի 'ի դժոխս իջանելն, իւր յարութիւնն ու համբարձումն 'ի յերկինս, և նըստելն յաթոռ Ամենակալին՝ ուստի պիտի գայ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Եւ յիրաւի սոքա հանդերձեալ աշխարհի իրեր են. որովհետև ոչ գիտեմ թէ այս աշխարհիս մէջ մարդ մի գտուի որ դժոխք գնացած ու եկած լիցի, բաց 'ի բանաստեղծից կեղծիքներէն։ Մարդ մի տեսած չեմք որ յարութիւն առած ու երկինք վերացած լինի, և առաւել ևս Աստուծոյ աթոռն նստի, և վերջապէս մինչև հիմա երկնքէն դատաւոր մի իջնելով՝ զմարդիկ դատելու համար ատեան մի կազմած չէ։

Ուրեմն այս հանգանակիս մէջ մտաց հակառակ խիստ խօսքեր կան՝ որ կը ստիպեն զիս խուզարկութիւններս յառաջ վարելու, գոնէ ինքզինքս ապահովցնելու համար՝ որ այսոց մէջ անտեղի և անկարելի բաներ չկան՝ թէ և յոյժ մթին են։ Ես ալ այս բանս կ'ուզեմ որ խիղճս ապահովցնեմ. վասն զի վերջապէս ինչո՛ւ կրօնից նիւթերու մէջ աւելի սաստկապահանջ լինելու եմ՝ քան թէ գիտութեանց մէջ՝ յորս այնչափ բաներ կը գտնեմ որ բացատրուած չեն կամ չեն բացատրուիր, և սակայն ուզեմ չուզեմ պէտք է զայնս ընդունիմ՝ հասկացածներս բացատրելու համար։ Եւ որովհետև բնութեան մէջ գաղտնիք կան, ինչո՛ւ բնութենէ վեր և գերազանց բաներու մէջ չլիցի, և ո՛վ է այն ճշմարիտ իմաստասէրն որ յանդգնի հաստատելու թէ բնութենէ վեր բան չկայ։

Քրիստոսի լքանելն ի դժոխս

22 Մայիս։

Քրիստոս խաչին վայր իր հոգին աւանդելէն ան-
միջապէս ետև Էջ՝ի դժոխս» ասէ կաթողիկէ հանդա-
նակն, ուրեմն հաւատոյ մասն է։ Ցայտնի է որ այս
գործս ուրիշ տեղէ իմացուած չէ, բայց եթէ Վար-
դապետին խօսքովն՝ որ իւր առաքելոց ասացել է՝
իւր մարմնովն նոցա մէջ նորէն երևցած ժամա-
նակ՝ երբ քառասուն օր զնրենք ուսուցանելու և
իրենց առաքելութեան հրահանգելու համար կ՝ե-
րևէր, ինչպէս որ կը պատմեն Գործք առաքելոց
գիրքն գրեալ՝ի սրբոյն Ղուկայ։ Բանն մտաց որ
յայտնութեան ոչ հաւատոյ և հաւատոյ իշխանու-
թեանն վկայութիւնն կը մերժէ՝ անտարակոյս այս
իրս ոչ ընդունի, պատրուակաւ որ այսպիսի բան
ամենևին տեսնուած չէ, և բնութեան օրինաց համե-
մատ՝ այլ որ մահուամբ այս աշխարհս կը թողուն՝
ալ միւսանգամ հոս ոչ դառնան։ Մտաց այս բանս
մերժելն ալ՝ ուրիշ հաստատութիւն չունի. այլ
պարզաբար ասէ. այս ինչ Ճշմարիտ չէ, վասն զի
ամենևին այսպիսի բան տեսած չեմ, և ոչ ալ մարդ մի
կը ճանաչեմ որ տեսած լինի։ Մինչև հաստատուն
պատճառաբանութիւն մի կարենք համարիլ այս
խօսքս. ամեն օր պատմական անցքերն կը հաստա-
տեմք՝ առանց նոցա վկայներն ճանաչելու. ապա թէ
ոչ պատմութիւն ասացեալն անկարելի պիտի լինէր,
և մարդկանց մէջ տուչութիւնն կամ աւանդու-
թիւն ասացածդ պիտի չլինէր։ Այս իրերուս մէջ
կան որ անճշմարտանման երևին, և պէտք է քննա-
դատութեան տակ ձգել, ասեն։ Թող այնպէս լինի,

բայց նոյն իսկ քննադատից մէջ փոքրափ տարաձայ-
նութիւն կարծեաց կայ՝ նաև հակախօսութիւն, մա-
նաւանդ այս մեր օրերս որ զամենայն ինչ խնդրոյ
տակ կը ձգեն։

Ո՛ւր Թողուիք որ Քրիստոսի՝ի դժոխս լքանելն
ալ՝ եթէ իրական ինչ է, գործ մի է, և իրաւունք
գործ հանդերձեալ աշխարհի. բայց այնպիսի իր
որ տառնևուրթ գարերէ՝ի վեր միլիարաւոր մարդիկ
հռչակել և հաւատացել են Եկեղեցւոյ վկայութեան
վրայ հաստատուած՝ որ այն ալ իր հիմնադրին խօս-
քերուն վրայ նոյն իրն ստուգել է։ Վերջապէս իրին
էութեանն մէջ անտեղութիւն չկայ, այլ տարօրի-
նակ իր մի է. և ո՞վ կարէ յանդգնիլ և ասել թէ ան-
հնարին է։ Ամենևին ոչ գիտեմք թէ հոգին զմարմինն
Թողլէն ետև՝ ուր կ՝երթայ, և մարդկային ամեն գի-
տութիւն այս նիւթոյս վրայ ստոյգ բան մի ոչ ու-
սուցանէն մեզ։ Եւ սակայն հաւատամք որ մարմնոյ
հետ ոչ մեռանի՝ այլ կենդանի մնայ, և հետևապէս
տեղ մի կ՝երթայ գատուելու համար. ուր և որպէս,
ո՞վ կարէ ասել։ Արդ ո՞վ կարէ ողջմտութեամբ մեր-
ժել թէ Քրիստոսի հոգին՝ի դժոխս լքած չէ։ Ո՞վ
որ կը հաւատայ թէ նա Աստուած է Տէր կենաց և
մահու, խնդիրը չմնար. վասն զի որպէս կամի կարէ
դնել զկեանս և առնուլ։ Իսկ նոքա որ իր աստուա-
ծութեանն ոչ հաւատան՝ ոմանք ասեն թէ նորա՝ի
դժոխս լքանելն ալ իր ուրիշ գործերուն պէս մարդ-
կային գիւտեր են, իսկ այլք նշանակ կամ առաս-
պել համարին այս բանս. կան ուրիշներ ալ որոց ան-
հաւատութիւնն աւելի բանաւոր է, ուստի իրին
Ճշմարտութիւնն ստուգելու միջոց մի չգտնելով ա-
սեն թէ խելքերնին չպահիր այս բանիս, բայց՝ի
հակառակն ալ պատճառ մի չգտնին մերժելու՝ բայց
եթէ գործին տարօրինակ լինելն. ես ալ այս վերջին-
ներուս հետ եմ։

Եւ սակայն մարդու դժոխոց խորերն իջանելն այնչափ անհաւատալի բան չէ՝ որ հին ատենի ամեն հեթանոսք այս բանիս հաւատացել են, և իրենց դիւցազանց շատերն ալ այս ճամբորդութիւնս արարեալ կը համարէին, և քերթողք ալ նոցա գովութիւնն և քաջութիւնն հռչակած են: Որփէոս իր Եւրիդիկէն նորէն գտնելու համար հոն գնացել էր՝ զոր իւր սիրոյն անհամբերութեամբն նորէն կորոյս: Թեսէոս իր Պիրիթրոս բարեկամն մահուան շղթայներէն ազատելու համար հոն իջաւ: Վիրգիլիոս Էնէասն ալ հոն կ'իջեցնէ՝ ոչ դիտեմ ինչ բանի համար. մինչև Տանթէի ալ կարգն կուգայ հոն երթալու Վիրգիլիոսի առաջնորդութեամբն իր Երանեակն գտնելու համար: Վերջապէս հանճարեղն Ֆենելոն՝ արքեպիսկոպոս լինելովն հանդերձ՝ Տելեմաքն հոն կը տանի՝ իր հօրն Ոդիսևսի վրայ տեղեկանալու համար, և ստոյգ դիտելու համար թէ արդեօք դեռ ողջ է թէ չէ: Անշուշտ ինձ պիտի ասեն թէ սոքա քերթողական կեղծիք են, և քերթողութիւնն պատկերողութեան կամ երևակայութեան գործ է: Տարակոյս չկայ՝ ես ալ նոյնպէս կ'ընդունիմ. բայց այս ալ ճշմարիտ է որ երևակայեալ գրուածներն ալ ժողովրդեան հաճոյ լինելու համար՝ անտեղի բաներ լինելու չեն, և այն բանն որ մարդկանց ողջմտութեանն և իրենց խելաց օրինացն դէմ կ'ելնէ՝ այնոր վրայ ոչ հիանան: Ապա ուրեմն այս առակներուս մէջ և այս առասպելներուս տակ ճշմարտութեան մասն լինելու է՝ թէ և քերթողաց խանդովն չափազանցի տարուած կամ ծռմռակած. ուստի վերջապէս ոչ դիտեմ թէ ինչու ուրիշներէն աւելի անճշմարտանման պիտի լինի Քրիստոսի 'ի դժոխս իջանելն:

Հիմա տեսնեմք թէ Քրիստոս ինչու էջ 'ի դժոխս, և հոս դժոխք ասելով ինչ կը հասկցուի: Ըստ կաթո-

ղիկէ վարդապետութեան դժոխս կամ ստորին բառն հոս տեղը նշանակէ խոր տեղ մի ուր ըստ աւանդութեան՝ հին Կտակի արդար հոգիներն փափաքանօք կը սպասէին խոստացեալ Փրկչին կամ Մեսիային գալստեանն՝ որ միայն կարէր բանալ մարդկութեան՝ և նոյն իսկ ամենէն աւելի արդարոց առջին զդրունս երկնից՝ որ Ադամայ մեղօքն փակեալ էին առաջի որդւոց մարդկան: Հարկ էր ապա որ առաջ Ազատիչն տեսնէին և իր խօսքն լսէին, որպէս զի իր լուսովն լուսաւորուին և նորա զօրութեան վրայ ունեցած հաւատքովն ազատին: Այսոր համար ասի թէ Քրիստոս ստորայնոց այցելութիւն առնելէն ետև՝ երբ երկինք ել՝ այս հոգիներէս ալ անթիւ դասք մաքրեալք ազատեալք և յաղթականք ընդ նմա ընկերացան: Այս ամենայն ճիշդ հետևութիւն է քրիստոնէութեան սկզբանց. և թէպէտ ամբողջ ալ չընդունիմ այս վարդապետութիւնս՝ սակայն իր խորհրդոց շղթայաշար շարքին վերայ կը հիանամ, ուր ամենայն ինչ այնպէս իրարու կապուած են՝ որ օղակին մին կոտրելուն պէս բոլոր շղթայն ցիրուցան լինի, որովհետև իւրաքանչիւր կէտն ամբողջութեամբն ամրացած է:

Ուստի Քրիստոսի իջած տեղն լիմբոսն էր և ոչ թէ անարգելոց բնակարանն կամ տարտարոսն ուր երկնային լոյսն այլ ևս չկարէ ծագել, և այնոր համար խաւար արտաքին կը կոչուի, որ և օթևան է նոցա որ իրենց ապստամբութեամբն իրենք զիրենք Աստուծոյ օրէնքէն և արքայութենէն դուրս ձգեցին: Իսկ ընդհակառակն լիմբոսի մէջ եղողներն մարդկութեան այն մասն էին՝ որ այս աշխարհէս ելած էին աստուածային խօսքին հաւատալով և նորա աւետեացն յուսալով, և նոցա կատարուելուն կը սպասէին՝ համբերութենէ զատ ուրիշ նեղութիւն չունելով:

Հիմա կարեմ ուրեմն այս բանիս հաւատալ: Այս, լռելեայն, եթէ ընդունիմ զաստուածութիւնն Քրիստոսի, և ահա 'ի վեր անդր հաստատեցի՝ որ դժուարին է ուրիշ բան համարել զնա՝ բայց եթէ Աստուած: Բայց ինչ նշանակութեամբ պէտք է հասկանալ և բացատրել այս աստուածութիւնս. այս բանս ուրիշ խնդիր մի է՝ որոյ վրայ դեռ որոշակի միտքս չեմ հաստատած: Սակայն խիղճս դէմ ոչ ելանէ և ոչ հակառակի՝ երբ կը մտածեմ որ պիտի արտասանեմ հանդանակին այն յօդուածն՝ որ կը հաստատէ Քրիստոսի 'ի դժոխս իջանելն. իմս ալ հիմա և ներկայ պարագայիս մէջ բնտռածս ուրիշ բան չէ:

Յարութիւն եւ Համբարձումն

23 Մայիս:

Իսկ Քրիստոսի յարութեան և յերկինս համբարձման մարմնովն զոր 'ի գերեզմանէն նորէն առաւ՝ ինչ խորհելիքս ոչ գիտեմ: Եթէ բաւական վկայներով հաստատեալ գործ մի է՝ ասելիք չունիմ, ինչպէս այն ամենայն տարօրինակ գործերն զորս պատմութիւնն կը յիշէ՝ և այսօր ընկալեալ են յամենեցունց: Իսկ արդ ըստ աւետարանաց յարութեան ալ վկայք եղեն հինգհարիւրէն աւելի մարդիկ՝ որ իւրեանց աչօք տեսին զՅիսուս կենդանի յետ մեռանելոյն, իրենց ձեռօքն շօշափեցին, իր ձայնն լուան, նաև կերան և արբին ընդ նմա, որպէս զի հաստատուի թէ ոչ մեռելադարձ մի էր և ոչ ուրուական: Իսկ համբարձման վկայք կացին ամենայն առաքեալք՝ որք տեսին զնա վերանալ 'ի յերկինս, և իրենց աչքն նորա ետևէ էր՝ մինչև որ բոլորովին աներևոյթ եղև:

Արդ այս յիրաւի կարգէ դուրս տարօրինակ գործերս՝ այնչափ լաւ ապացուցեալ կ'երևին՝ որչափ պատմական աւանդութեամբ մեզ հասած օտար գործեր, և քրիստոնէական հաւատոց մասունք եղած են, և այսու անուամբ ընդունելի եղած են յԵկեղեցւոջ՝ միլիարաւոր մարդիկներէ. արդ իմ խօսքս լինի որ ելնեմ ուրանամ այսչափ վկայից և հաւատացելոց առջև այնոր ստուգութիւնն. և ինչպէս կարող եմ ցուցանել որ ճշմարիտ չեն՝ այլ նենգաւորութենէ յառաջ եկած կամ հաստատողներուն կողմանէ պատրանք: Այս խնդիրս լուծելու մի միայն միջոցն այն է՝ որ ցուցանելու է թէ այս բաներս անկարելի են. ինչպէս որ շատերն գերբնական իրաց համար առնեն ըստ իս շատ թեթևամտութեամբ՝ քննել անգամ չուզելով. այսու պատրուակաւ որ գերբնական բան անկարելի է, և թէ իմաստասէրն զառանցանաց և անդոյ ճիւաղաց վրայ խորհելու ատեն չունի: Այս կերպովս խնդիրն մերժելն դիւրին է, բայց իմաստասիրական չէ ամենևին, որովհետև խնդրոյ տակ եղածն՝ ցուցուած կը համարի, և միտքն իր իշխանութեամբն կ'որոշէ՝ թէ այն իրն որ իրմէ բարձր է անկարելի է. և է այս բանախօսութեան մէջ յիշուած այն իմաստակութիւնն որ ասի՝ որ ինչ ցուցանելի էր:

Այսպէս Քրիստոսի յարութեան խնդրոյն մէջ՝ ոչինչ կը համարուին այն բազմաթիւ վկայներն որ զայն կը հաստատեն, վասն զի կենդանի տեսել են զայն՝ զոր մեռած և թաղուած տեսել էին: Անկարելութիւնն հաստատելու իրաւունք ունելու համար՝ նախ բացատրելու էր թէ կեանքն ու մահն ինչ են ոչ միայն իրենց կերպարանօքն և երևութիւն, այլ և իրենց գոյութեան և էութեան կողմանէ: Ասի թէ մահն է զրկում կամ դադարումն 'ի կենաց, որովհետև միոյն շարժման տեղ՝ միւսոյն անշարժու-

գերմարդկային զօրութեամբ մի կարող է լինել՝ որ 'ի նախնումն այս հոգիս այս մարմնոյս հետ միացուցել էր՝ մարդս յօրինելու համար: Արդ ոմ կարէ յանդգնել ասելու թէ նա որ կարողութիւն ունի մարդ ստեղծելոյ՝ կարողութիւն չունի զայն վերստեղծելոյ՝ եթէ նախանձամական պատճառ մի կայ այս բանիս: Կամ ուրանալու է զԱստուած արարիչ, կամ ճանաչելու է թէ ունի կարողութիւն իր գործն նորոգելոյ՝ կամ թէ ասեմք նորաստեղծելու: Անտարակոյս այս վերջինս առջինէն դիւրին է, որովհետև առժամանակ մի բաժնուածներն նորէն միացնել է միայն: Արդ եթէ Քրիստոս Աստուած է՝ որպէս դաւանի եկեղեցին, ոչ ապաքէն տէր է կենաց և մահու: Ինչ զարմանք ուրեմն որ խաչին վայ հոգին աւանդելէն ետև՝ առ 'ի հաստուցանել զպարտիս մարդկութեան, երեք օրէն ետքը նորէն կ'առնու զայն մարմինն՝ զոր զգենուլ արժան համարել էր, նախ իւր աստուածութիւնն բացայայտ ցուցանելու համար, և յետոյ իւր ներկայութեանն և սիրոյն ցոյցերուին քաջալերելու և սրտապնդելու իւր աշակերտաներն, և կատարեալ կերպով ուսուցանելու, և իւր խրատներուին պատրաստելու զնոսա այն բարձր առաքելութեանն որում սահմանուած էին:

Իսկ վասն համբարձմանն 'ի յերկինս՝ առարկելու բան մի չունիմ, եթէ իրաւ է որ ինքն անտի իջած է՝ որպէս հաստատէ զնոյն խորհուրդն մարդեղութեան զոր արդէն քննեցի և կարելութիւնն ընկալայ: Ցայտնի է որ Յիսուս Քրիստոս աէր է երկնի և երկրի, և ոչ ինչ կարգէ արգելուլ զնա չորհել ընդանբաւ պետութիւն իւր. վասն զի իւր ամենակարողութիւնն ընդունելէն ետև՝ անտէղութիւն լինի այնոր գործադրութիւնն իրեն զանալ: Ցայտնի կողմանէ՝ ինչպէս որ ասացի՝ աստուգելու գործ մի է, և հետևապէս պատմական վկայութեան վերաբերեալ

թիւնն կը յաջորդէ: Բայց այս կէտիս բացատրութիւն մի է՝ զգայութեանց վկայութենէն առեալ զոր միաքն անգամ ոչ ընդունի՝ եթէ սակաւ մի տեղեակ է համագոյից գիտութեանն: Վասն զի միաքն ամենուրեք անդադարելի յաջորդութիւն մի կը տեսանէ կենաց և մահու. այնպէս որ մահն գոյացութիւն մի կը վերցնէ այնոր տեղ ուրիշ մի կենդանացնելու համար. և գոցես կեանքն մշտնջենապէս 'ի մահուանէ յառաջ կուգայ: Արդեօք հակասութիւն կարէ լինիլ երկու իրաց մէջ որ միշտ ներգործութեան և հակագործութեան մէջ են, և որք յիրերաց յառաջ կուգան: Ապա ուրեմն մարմնոյ յարութեան կարծեաց մէջ ոչ միայն անտեղութիւն չկայ՝ այլ մանաւանդ յընդհանուրս իրաց վայ որ խորհի՝ գրեթէ բնութեան օրէնք մի է՝ ուր որ կեանք կայ, այնպէս որ ոգևոր էակք կեան մեռնելու համար և մեռանիլն կելոյ համար. և կարեմք ասել թէ կենաց վարուժն մահուան գործադրութիւն է, և մահն դուռն է կենաց:

Անտարակոյս ես ալ կը տեսնեմ Քրիստոսի յարութեան մէջ տարօրինակ բան մի՝ զոր եթէ կ'ուզես հրաշալիք սեպե. վասն զի յիրաւի աշխարհիս սովորական ընթացքէն դուրս բան մի է, ուր մեռեալք որ իրենց կեանքն կորուսեալ են՝ կարողութիւն չունին նորէն զայն առնելու: Հրաշէց խնդիրն ուրիշ անգամ պիտի լուսաբանեմ՝ որ ինձ ալ շատ անգամ մտածել տուած ու սաստնապած է: Հիմա ներկայ խնդրոյս դառնալով, և մահն հոգւոյն 'ի մարմնոյ բաժանումն համարելով՝ որոյ միութեամբն լինի մարդ, կը հարցանեմ թէ արդեօք միջոց մի չկայ որով բաժանեալ հոգին նորէն միանայ իր թողած մարմնոյն հետ, այնպէս որ հոգին իր գործերն նորէն սկսի՝ կենաց չորհն նորէն գառնալով մարմնոյ մէջ: Եթէ այս բանս հնարաւոր է՝ անտարակոյս

իր։ Ամեն առաքեալք տեսին նորա յերկինս ելնելն, և Աւետարանն նոցա վկայութիւնն մէջ կը բերէ՝ զոր Եկեղեցին հաստատած է աւանդութեամբ և վարդապետութեամբ։

Եւ ինչ որ յառաջ ասացի՝ նոյնն հիմա ալ ասեմ. այս խորհրդական իրերս որպէս կարելի կ'ընդունիմ՝ առանց բացայայտապէս հաւատալու։ Զգուշանամ զայնս մերժելէն, մանաւանդ թէ աւելի հաւատալու կը յօժարիմ. վասն զի 'ի միոյ կողմանէ անտեղութիւն մի ոչ տեսանեմ 'ի նոսա, և միւս կողմանէ ներքին կապակցութիւն մի կը նկատեմ, կամ թէ ասեմ միաբանութիւն ընդ այլ քրիստոնէական խորհրդոց։ Ապա ուրեմն եթէ զայսոսիկ հանգանակին մէջ արտասանեմ մկրտութեան աւազանին վրայ՝ իմ խղճիս և մտացս հակառակ խօսք մի պիտի չդրուցեմ։

Դատաստան վերջին

24 Մայիս։

Հանգանակն ասէ եթէ Քրիստոս յերկինս վերանալէն ետև՝ ուր նստաւ ընդ աջմէ Աստուծոյ ամենակարողի մարդկութեամբն զոր փառաւորեց յանձին իւրում, 'ի վախճան դարուց և 'ի յետնում աւուր նորէն պիտի դայ՝ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։ — Այս երկրորդ գալուստս այնչափ աւելի շքեղ և փառաւոր պիտի լինի՝ որչափ որ խոնարհ և նուաստ էր առաջին գալուստն. Աւետարանն դերահրաշ նկարագրէ զայն. Յիսուս պիտի երևի 'ի մէջ ամպոց՝ շուրջ պար առեալ բազմութեամբ հրեշտակաց, և մարդիկ ամենայն ազգաց և ամենայն դարուց պիտի երևին առաջի երկնաւոր

ատենին։ Այն ատեն պիտի բաժանէ զօդիս յայծեաց՝ առջիններն իւր աջակողմն կարգելով՝ առ 'ի մտանել 'ի փառս, և վերջիններն իւր ձախակողմն՝ առ 'ի երթալ 'ի հուրն յաւիտենական։

Աւետարանի այս վերջի դատաստանի նկարագրութեան մէջ երկու իրք զիս կը հիացնեն. առաջինն այն որոշ և բացայայտ զուրցուածքն վերջի դատաստանի վրայ իւր ամեն մանր պարագայներովն. միայն կրօնքն այսպէս կարեն խօսել, և կրօնից մէջ ալ միայն քրիստոնէութիւնն այսպէս իշխանութեամբ և որոշակի կը խօսի հանդերձեալ աշխարհի իրաց վրայ, որ կարծես թէ մարդարէութիւն մի է։ Իրաւ է որ ամեն ազգաց մէջ ալ յիշատակութիւն կայ դատաստանի որ իւրաքանչիւր մարդոյ համար պիտի տեսնուի յայս կենաց ելած ժամանակ, և ամենքս ալ կը յիշեմք Մինովսն, Հռադամանթոսն և Իակոսն որ դատաւոր կը նստին առ դրան դժոխոց կամ Ելիւսեան դաշտաց։ Արդարութեան գաղափարն այնքան ինքնածին է մարդուս հոգւոյն՝ որ եթէ այս աշխարհիս մէջ չէ կատարուած՝ կը համարի թէ ուրիշ աշխարհի մի մէջ հարկաւ պիտի լրումն առնու։ Բայց տիեզերական դատաստանի գաղափարն միայն քրիստոնէութեան մէջ դտանի, որով լրումն և վախճան պիտի լինի դարուց, դատաստան հանրական ըստ ամենայն նկատմանց, որ նորոգելով և հաստատելով՝ առանձնական դատաստանի վճիռներն՝ որ իւրաքանչիւրոց մեռնելէն ետև լինի, պիտի տարածուի նոյն ատեն ամեն մարդոց վրայ ալ, և զամենայն ինչ պիտի ուղղէ ու շտկէ։

Երկրորդ յոյժ հիանամ վարձատրութեան և դատապարտութեան գլխաւոր պատճառին վրայ, և անտի կ'իմանամ Աւետարանի գերազանց հոգին՝ որ է սէրն։ Վասն զի նոքա զոյս Քրիստոս իւր հօր օրհնեալներն կը կոչէ և իւր արքայութեան մէջ յա-

Ջակողին կացուցանէ՝ ոչ թէ ամենէն աւելի իմաստուններն հղօրներն և աշխարհիս մեծամեծներն են, և ոչ իսկ նոքա որ լեռներն փոխադրելու չափ հաւատք ունէցան, կամ մարգարէութեան և լեզուաց ձիրքովն Ճոխացան, և ոչ նոքա որ իրենց ունեցածն աղքատաց բաժնեցին, կամ իրենց կեանքն գրին առնափառութեան կամ սակս մարդկային պատճառաց. ոչ. այլ իւր աջակողմն կը դնէ և առ՝ի ժառանգել զիւրաւս զայնոսիկ միայն կ՚ընդունի՝ որ յանձին աղքատաց իրեն ծառայեցին, այսինքն որ իր անուանն և սիրոյն համար զնոսա մխիթարեցին. վասն զի ասէ թէ ինչ որ ամենէն փոքրկան արարիք ինձ արարիք: Ապա այս խօսքերովս կը ծանուցանէ թէ յառաջ քան զամենայն սիրոյ գործերն են երկնային պսակաց արժանի, և Ճշմարտապէս այսպիսի գործերն այնքիկ են՝ զորս մարդ Աստուծոյ սիրոյն ներշնչմամբն կը գործէ, և ոչ առ մնասարծութեան և չահասիրութեան. կամ թէ ասեմք Ճշմարիտ սէր ունեցողն բարիք կը գործէ առանց ինքզինք մտածելու, մինչև իւր անձն ալ նուիրելով, անխառն և միակ փափաքով ընդհանուր բարւոյ, տիեզերական բարւոյ որ է յԱստուած, և ինքն իսկ Աստուած: Ահաւասիկ այս է՝ որ Աւետարանի բարոյականն այնչափ կը բարձրացնէ և կը պայծառացընէ, և միանգամայն այնչափ ազդու առնէ զայն. վասն զի իւր պատուէրներովն ու խրատներովն բարձրագոյն կատարելութիւնն ուսուցած ժամանակ, և սիրոյ ամենէն գերազանց մասն՝ որ է այլոց համար զինքն զոհել, կը ցուցանէ միանգամայն իւրաքանչիւր քրիստոնէի այնոր օրինակն յանձին Յիսուսի Քրիստոսի: Եւ Յիսուս Քրիստոս՝ օրինակ ամենայն առաքինութեանց քրիստոնէին, և որ օր մի իւր դատաւորն պիտի լինի վարձատրելու կամ պատժելու համար զինքն ըստ պահպանութեան

կամ զանցառութեան օրինաց, ինքն է գարձեալ նոքա յուսոյն պատճառն և վախճանն, որովհետև վերջնական առաքիչն և լրումն է իւր սիրոյն:

Հարկ է խոստովանիլ որ իմաստասիրաց ենթադրութիւնները և ներածութիւնները որչափ ալ հաստատհին երևին՝ չատ անզօր և տկար են այս հաստատ խօսքերուս և խոստմանցս առջև: Իրաւ է որ նոցա ստածները ալ բարոյական գիտակցութեան կամ խղճի վրայ հաստատեալ են, որ արդարութիւն պատուիրելով և այնոր պարտաւորութիւնն հռչակելով հետևապէս ապարդիւն անգոնելի և պատժոյ արժանի կը համարի զայնոսիկ ոչ գիտութեամբ և կամ գէմ կը գործեն: Սակայն ամեն չանցաւորք այս աշխարհիս մէջ իրենց պատիժն ոչ ընդունին. ապա ուրեմն ուրիշ տեղ պիտի գանեն, որովհետև արդարութեան դէմ գործողն անպատիժ չկարէ մնալ՝ վասն զի արդարութիւնն աննախագրելի է: Ուստի միաքն կը հետևցնէ թէ ուրեմն այս աշխարհքիս անդին արդարութիւն մի կայ՝ յորմէ մարդ չկարէ փախուստ տալ, և որ իր մահուանէն ետև համար պիտի պահանջէ ինչ որ իր կենաց մէջ գործել է, և զինքն իր արդեանց ու ապարդեանց համեմատ պիտի վարձատրէ կամ պատժէ: Բայց ո՛վ պիտի լինի դատաւորն, և աստեանն ուր. որպիսի՞ պիտի լինին վարձքն և պատիժք, արդեօք ժամանակաւո՞ր թէ մշտնջենաւոր և անվախճան: Կամ արդեօք քաւութեան և մաքրութեան տեղ մի այն հոգւոց համար՝ որ թէ և բարի գործել են՝ բայց միանգամայն մեղօք աղտոտած: Մենք իմաստասէրքս այս խնդրոց ոչ մտեներամք, և իրաւունք ալ ունինք, որովհետև կերպիւ իւիք զայնս չեմք կարող լուծանել: Սոքա հանդերձեալ աշխարհի իրերը են, և որովհետև՝ ի միոյ կողմանէ մարդ մի ոչ ձանաչելիք՝ որ հոն գնացած և եկած լիցի՝ հոն եղածներն մեզ ծանուցանելու համար, և մեր մտաց լուսոյին ալ

չեմք կարող խելամուտ լինել, և 'ի միս կողմանէ ալ որովհետև համոզուած եմք որ ոչ ոք անոնի ինձած է մեզ հոն եղածն ուսուցանելու համար, խոհեմութիւն կը համարիմք խօսքն անգամ չառնել, որովհետև ինչ ասելու է՝ այն ալ ոչ գիտեմք:

Սակայն կ'ուզեինք մեք ալ բան մի գիտել, և մեր խոհեմական լուսաւիւնն մարգկանց միաքն և սիրտն գոհ ոչ առնէ՝ որք միայն 'ի շատ այլ իմն աշխարհի նախազգացումն ունելով կ'ուզեն գիտել թէ մեւնելէն ետև ուր պիտի երթան, և ինչպես պիտի երթան, որովհետև օր մի հարկաւ երթալու է: Այսոր համար կը սպասուիմք խոստովանելու որ լմաստասիրութիւնն մարգկութեան իղձերն ոչ յագեցուցանէ, և Ժողովրդոց բարոյական պիտոյքն ալ ոչ լեցնէ . ուստի լմաստասիրութեան քոյին՝ եթէ չհամարիմք ևս 'ի վեր քան զինա, վասն զի ես ոչ երբէք ընդունիմ ասել 'ի վայր քան զնա որպէս ոմանք ասեն, կրօնք մի հարկաւոր է՝ իւր իրաւ կամ սուտ յայտնութիւններուին, իւր խորհուրդներուին և պատուէրներով յաստուածութենէ հրամայուած կամ 'ի մարգկանէ հնարուած, վերջապէս իւր ամեն քերթողական չքեղութիւններուին և երաժշտութեամբ և ամեն տեսակ հնարքներով՝ Ժողովրդոց միաքն զարթուցանելու համար, և իրենց մտաց կարողութեան համեմատ զերծնիք լուսաւորելու համար, որպէս զի վարձատրութենց իղձուին և պատժոց երկիւղիւ բարին գործելու յորդորուին: Մանաւանդ որ Պլատոն ամենուն վեհագոյն վարժապետն, և Կիկերոն որ ամենուն ասացածներն կը կրկնէ՝ հանդերձեալ աշխարհի իրերն յիշած տեն՝ ասեն թէ « Մեք այս նուիրեալոց վրայ ստոյգ բան մի պիտի չկարենք գիտել՝ մինչև որ Աստուած մի էգայ՝ զմեզ մեզ ուսուցանելու համար »: Այս բաղձացեալ քարոզեալ և գրեթէ 'ի Պլատոնէ ուխտիւք

խնդրեալ Աստուածն՝ ստուգութեամբ ուսուցանելու համար մարդկութեան զերկնային իրս, արդեօք եկած է՝ որպէս հաստատէ Եկեղեցին, և արդեօք այն է՝ զոր պաշտէ ընդ անուամբ Յիսուսի Քրիստոսի, բանն մարմնացեալ, Որդի Աստուծոյ և Աստուած մարդացեալ: Խնդիրն այս է:

Դատաստան վերջին (շարայարութիւն)

1 Յունիս:

Ըստ քրիստոնէական վարդապետութեան՝ մարհուանէ ետև երկու գատաստան կայ գալիք. մին առանձնական՝ որում պիտի ներկայանայ իւրաքանչիւր հոգի այս աշխարհէս եընելէն ետև՝ երբ հոս տեղի փորձի ժամանակն աւարտէ, և այս գատաստանաւ՝ մտած նոր աշխարհին մէջ իւր տեղն պիտի որոշուի. որովհետև երկիրս Թողչէն ետև հարկ է որ տեղ մի երթայ, և այս տեղս պիտի որոշուի իր վարուց աստուածային օրինաց հետ ունեցած համաձայնութենէն: Միւս գատաստանն որ է ընդհանրական և որ զառաջինն պիտի հաստատէ և լրացնէ, աստեղծագործութեան մէջ սիրելերական կարգն հաստատելու համար է, որ Ժամանակի պատուհանակն փակելով՝ յաւիտենական արքայութիւնն պիտի սկսի, բարիներն անքակտելի կերպով միանալով ընդ Աստուծոյ՝ որում ամբողջապէս իրենք զիրենք նուիրել էին մեռնելէն յառաջ. և չարերն որ մինչև վերջն իրենց թշնամութեան մէջ յաջողին՝ բոլորովին չարին տալով ինքզինքին՝ որում հետ սրտի մտոք գաշնագրեցան, և ոչ իսկ իղձ ունելով անոի բաժնուելու: Իսկ այն հոգիք որ թէև սիրով ընդ Աստուծոյ միացեալ էին, բայց իրենց դեռ ոչ քաւեալ

և ջնջեալ յանցանքն՝ արգելք լինէին զինքն տեսնե-
լու երջանկութեանն ժամանել՝ նոցա ալ պատժոյ
ժամանակն լրացեալ պիտի լինի կամ աստուածային
գթութեամբ իրենց պիտի թողուի։ Որով տիեզե-
րաց մէջ երկու բանակ միայն պիտի մնան. Յաւի-
տենականին բանակն որ յաղթող պիտի լինի իւր
որդւովքն՝ զոր պիտի լեցնէ իւր կենօքն և փառօք և
երանութեամբ, և յորում մահն պիտի ընկղմի 'ի
յաղթութենէն, որովհետև ամենայն ինչ որ մահ-
կանացու և ապականացու էր՝ զանապականութիւն
և զանմահութիւն պիտի զգենու. և երկրորդն ալ
բանակ մանաւանդ թէ անդունդն Զարին՝ յաղթա-
հարեալ և շղթայակապ՝ իւր ամեն արբանեակնե-
րովն անկարող եղեալ, և այլ ևս ուրիշի վնաս չկա-
րելով առնել՝ ինքզինքն պիտի խածատէ և ուտէ։

Այս ամեն բանիս առարկութիւն չունիմ առնե-
լու, վասն զի թէ և այսպէս լինելիքն ստոյգ ոչ գի-
տեմ, սակայն այս վարկածներս իբրև անտեղութիւն
չեմ կարող մերժել, և ոչ իսկ դուշակուած գործերն
անկարելի կը համարիմ։ Մանաւանդ որ եթէ մեր-
ժեմ ևս և ուրանամ՝ այնոր տեղն ուրիշ բան մի չեմ
կարող սահմանել։

Իմաստասիրութիւնն՝ հոգւոց՝ աշխարհէս անդին
ունեցած վիճակին վրայ ոչ մտածէ, և միջոց մի չունի
գիտելու թէ արդեօք ինչ լինին. և որովհետև այս
բանս գիտելն ամենուն հարկաւոր է՝ վասն զի իրենց
ապագայն անտի կախուած է, ուստի պէտք չէ զար-
մանամք որ մարդիկ այս օգտակար տեղեկութիւն-
ներս առնլոյ համար այլոց կը դիմեն քան թէ մեզ,
ուստի կրօնից կը հարցանեն՝ որ կը համարի թէ
ինքն յԱստուծոյ ընդունած է այն բաներու գիտու-
թիւնն 'ի ձեռն յայտնութեան։ Այսոր ալ բան մի
ասելիք չունիմ, եթէ կարասցեն ցուցանել յայտնու-
թիւն ասացելոյն ճշմարտութիւնն ու գործն՝ որպէս

Եկեղեցին կը հաստատէ, որ ուրիշ գործոց պէս
գործ մի լինելով՝ պատմական քննադատութեան կը
վերաբերի՝ անկողմնասէր կերպով ցուցանելու և
հաստատելու՝ եթէ բաւականապէս ապացուցուի՝
ապա թէ ոչ մերժուի։ Բայց դատաքննութիւնն
իրաւունք չունի դատն և քննութիւնն ալ միանգա-
մայն մերժելու պատճառանք բերելով թէ իրն ան-
հնարին է, ինչպէս որ յանդգնին ոմանք ասելու յա-
ւուրս մեր. վասն զի այս պարզապէս արդարութիւնն
ղլանալ է՝ որ արդարասէր մարդու գործ չէ։

Հոս ուրիշ դժուարին խնդիր մ՝ ալ ընդառաջ
ելանէ մեզ՝ զոր ոչ գիտեմ ինչպէս լուծեմ, վասն
զի այն ալ հանդերձեալ աշխարհի իր մի է. այսինքն
թէ ինչ վիճակի մէջ գտանի հոգին՝ մահուամբ 'ի
մարմնոյ բաժնուելէն ետև, և ինչ տեսակ գոյութիւն
ունի՝ գործարանաւոր մասէն մերկանալէն ետև՝
որոյ միջնորդաւն կը զգար և գործէր այս աշխարհիս
և ներկայ կենացս մէջ։ Թերևս ասասցեն ոմանք թէ
մարմին չունող ոգւոց վիճակին մէջ կը մտնէ՝ որով
և աւելի արձակ և ազատ՝ որովհետև 'ի մարմնոյ
կապանաց և ծանրութեանց ազատեալ է, որ անտա-
րակոյս շատ անդամ իրեն նեղութիւն և արգելք են։
Այս պատասխանս միայն պղատոնականաց բերանն
կը յարմարի որ բոլոր մարդ իւր միտքն միայն կը
համարին, կամ ստոյիկեանց որ կամաց վրայ կը
հաստատեն մարդկութիւնն. ուստի այս երկու դաս
իմաստասիրաց համար ալ՝ մահն ազատութիւն մի է՝
որ բանտին դռներն կը բանայ, շղթայներն կը խոր-
տակէ, և անարգ դերութենէ զմարդ կ՝ազատէ։

Դժբաղդաբար մարդկութիւն ասացածդ այս վար-
դապետութեանց հասկացածին պէս չէ. և ոչ ոք
միտքն դրած է թէ մարմինն առժամանակեայ բանտ
մի է կամ պատահական արգելք ինչ. այլ ընդհակա-
ռակն լրացուցիչ մասն մարդոյ՝ որոյ անձն յերկուց

էական տարերաց բաղկացեալ է՝ որով կ'որոշուի նաև 'ի պարզ ոգեղինաց: Աստի յառաջ գայ որ մահն՝ կենօք միացեալ այս երկու մասերն բաժնելով՝ զմարդկութիւնն կը կրճատէ, որով ոգեղէն մասն կ'երթայ ոգւոց օթևանն, և նիւթական մասն դառնայ 'ի հող ուստի ստեղծաւ: Կը հետևի ուրեմն որ հոգին այս աշխարհէս ելնելով՝ ինչ որ ալ լիցի իրեն համար սահմանեալ վիճակն, ամբողջ մարդ չէ, այլ թեկոր մարդոյ, և կարօտ է իր լրացուցիչ մասն գտնելու՝ որպէս զի իր բնութեան կատարելութեանն հասնի. աստի յառաջ գայ իրեն համար դատարկութիւն և զրկում մի՝ զոր թէ և թերութիւն ալ չկոչեմ՝ սակայն գոնէ անկատարութիւն մի է իւր գոյութեան ամբողջութեանն:

Արդ որովհետև ստոյգ է որ մարդկային բնութիւնն էականապէս բաղկացեալ է 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ, ապա ուրեմն հոգւոյն համար մեծ կորուստ է մահուամբ յիւր մարմնոյն մերկանալն, և այսոր համար է որ մարդիկ բնազդաբար մեծ վախ ունին 'ի մահուանէ՝ որպէս թէ այնու պիտի ոչնչանային: Ապա ուրեմն 'ի մարմնոյ բաժանեալ հոգին՝ յաւիտեան այնպէս չէ կարող մնալ՝ կատարելութեան և երանութեան ժամանելու համար որպէս և ըղձայ, և հետևապէս յիրաւի այս երանութեան հասնելու համար՝ հարկ է որ իրմէ վերցուած էական մասն դարձեալ օր մի իրեն տրուի, կամ թէ ասեմք մարդս նորէն ամբողջանայ իր բնութեան լրութեամբն: Առ այս ածէ զմեզ հարկաւ ուղիղ բանախօսութիւնն՝ մարդկութեան յերկուց բնութեանց յօրինեալ լինելուն սկիզբն ընդունելէն ետև, կամ զմիութիւն մարդկային անձին՝ յերկուց տարերաց շաղկապեալ, որոց երկուքն ալ անտարակոյս հաւասարապէս կարևոր չեն իւր կենացն՝ բայց ամբողջութեան լրացուցիչ մասերն են:

Հոս տեղս հաճութեամբ կը տեսնեմ որ իմ իմաստասիրութիւնս՝ քրիստոնէական կրօնից հետ կը համաձայնի, որ ուսուցանէ մարդկային բնութեան էական երկուորութիւնն: Այնպէս որ 'ի լրման դարուց և ժամանակաց՝ յորում քրիստոնէական հաւատոց համեմատ՝ ամենայն ինչ պիտի վերանորոգի և 'ի կարգի պիտի մտնէ՝ իրենց Արարչին մտաց համեմատ, հոգիք ալ պիտի ընդունին իրենց սեպհական մարմինն առ 'ի ելանել 'ի դատաստան վերջին. և հոն պիտի վարձատրուին կամ պատժուին իրենց գոյութեան երկու մասովն ալ՝ որք աշխարհիս մէջ իրարու գործակից եղեն բարւոյ և չարի իրենց անձնաւորական միութեամբն: Այս է մարմնոյ յարութեան վարդապետութիւնն՝ որոյ կարելութիւնն և որպիսութիւնն յետոյ պիտի քննեմք:

Զայս ինչ հաստատելէն ետև՝ հիմա կը հարցանեմ թէ յիւրեանց մարմնէն բաժանեալ հոգիներն ինչպէս կ'ապրին հանդերձեալ աշխարհի երեք վիճակաց մէջ յորս կարեն գտանիլ, այսինքն յերկինս ընդ Աստուծոյ, 'ի դժոխս ընդ սատանայի, և վերջապէս ընդ մէջ երկնից և դժոխոց՝ այն քաւութեան և վերջին մաքրութեան տեղն՝ զոր Եկեղեցին Քաւարան անուանէ, և զոր խելքն ալ չկարէ մերժել կամ չընդունիլ՝ եթէ կը հաւատայ հանդերձեալ աշխարհին մէջ աստիճանաբար և յառաջընթաց կատարելութեան մի:

Եթէ՝ որպէս ուսուցանէ Եկեղեցին, հոգին բոլորովին մաքրուած լինելուն և իւր ազատութեան լիութեամբն ինք զինք Աստուծոյ տուած լինելուն համար՝ մտանէ 'ի մասնակցութիւն աստուածային կենաց՝ միջնորդութեամբ Յիսուսի Քրիստոսի՝ որ իւր մարդկութիւնն՝ հոգւով և մարմնով յերկինս վերացոյց՝ զնա իւր աստուածութեան հետ անխզելի կապելով, ուրեմն ապահովապէս կարեմք ասել թէ այնպիսի

հոգւոյ բան մի ոչ պակասի. որովհետև դերագոյն բարւոյն մէջ կ'ապրի և մասնակից է փառաց և յաւերժական երանութեանն Աստուծոյ: Եւ սակայն՝ թէ և նուազութիւն մի չիմանայ, արդեօք իրականապէս բան մի պակաս չէ՞ իրեն, որովհետև իւր ճշմարիտ բնութիւնն ամբողջ չէ՝ քանի որ իւր մարմինն իրեն տրուած չէ: Եւ ըստ քրիստոնէական իսկ վարդապետութեան այսպէս չէ՞մք կարող արդեօք հաւատալ, որովհետև նա ալ կ'ուսուցանէ՝ թէ մարմնոյ յարութիւնն ալ այն ատեն պիտի լինի՝ երբ լրումն լինելոց է նորա վարձատրութեան: « Յառնէ մարմին հոգեւոր, ասէ Պաւղոս առաքեալ, յառնէ առանց ապականութեան, յառնէ զօրութեամբ: Երբ նորէն այն վերածնեալ մարմնոյն հետ միանայ՝ որ իրեն սեպհական և յատուկ պիտի լինի, ո՞չ ապաքէն աւելի փառք պիտի ունենայ իւր մարմնոյն ալ փառաւորութեամբն. և իւր արդէն մեծ երջանկութիւնն՝ աւելի պիտի չաւելնա՞յ իւր այլակերպեալ մարմնոյն անխառն ուրախութեամբ: Ինձ այս բանս անտարակոյս կ'երևի, և իբրև իմաստասէր կարծեմ թէ իրաւունք ունիմ զայն հաստատելու, սակայն դեռ բաւական քրիստոնեայ և աստուածաբան չեմ որ համարիմ թէ Եկեղեցին ալ այս կարծեացս վրայ է:

Դժոխոց մէջ ալ՝ որ անվախճան տանջանաց տեղ է, 'ի մարմնոյ անջատեալ հոգիք մարդկան՝ Աստուծոյ թշնամեաց տանջանացն մասնակից են՝ իրենց յանցանաց ծանրութեան համեմատ. վասն զի պատիժք՝ մեղաց համեմատ լինել պէտք լինելուն՝ ամենէն աւելի չարագործ մարդն ալ՝ զինքն փորձողին և ապստամբեցնողին չափ պիտի չպատժուի. վասն զի չարեաց գտիչ մարդն չէ, այլ առ տկարութեան և փորձութեամբ այնոր մասնակից եղած է, և թէպէտ ընդդէմ ամենայն օգնութեանց աստուածային գթութեան՝ այնոր մէջ յարատևել է մինչև 'ի մահ,

և չարի հեղինակին նմանել է, սակայն որովհետև սկզբնաւորութիւնն յիւրմէ չէ՝ ապա պատժոց մէջ ալ երկրորդ կարգն պիտի ունենայ՝ որպէս և յանցանաց մէջ: Սակայն չկարե՞մ արդեօք ասել՝ թէ քանի որ իւր մարմինն իրեն տրուած չէ՝ իր պատիժն ալ անկատար է, և արդարութիւնն բովանդակապէս տեղն երթալու համար հարկ է որ իր մարմինն ալ մասնակից լիցի տանջանաց հոգւոյն՝ որ նորա արբանեակն և մեղսակիցն եղած էր չարն գործելու: Ապա ուրեմն իր ցաւերն պիտի աւելնան՝ երբ դատաստանի համար յարութիւն առած մարմնովն հոն դառնայ. ինչպէս որ երանելեաց ուրախութիւնն պիտի առաւելու՝ մասնակցութեամբ փառաւորեալ մարմնոյն յաւիտենական երանութեան: Այս ասացածս ալ դարձեալ իմաստասիրական կարծիք մի է՝ զոր ոչ համարձակիմ Եկեղեցւոյ ալ համարելու՝ որոյ անհաւան և անուս անդամներէն եմ տակաւին:

Կը մնայ քաւարանի հոգւոց վիճակն՝ որոյ մէջ դժուարութիւն մի ոչ տեսանեմ, որովհետև նոքա անտի ելնելնուն պէս լուսոյ օթևանն պիտի մտնեն, և վերջի դատաստանին ներկայանալու ատեննին իրենց մարմինն պիտի զգենուն, որով և իրենց վիճակն ալ նոյն ատեն՝ երանելեաց հետ հաւասար պիտի լինի՝ իրենց քաւութեամբն աստուածային արդարութիւնն հատուցած լինելով, վասն զի մաքրողական հուրն արդէն իրենց մնացած երկրաւոր աղտն մաքրել զտել է: Սակայն այսոր մէջ ալ միջանկեալ և երկրորդական խնդիր մի կայ՝ այս հոգւոց մէջ թափանցող և մաքրող կրակին բնութեանն վրայ՝ որոյ համար հաւանականապէս յետոյ պիտի խօսիմք:

Յիրաւի ես ինձ ուրախութիւն մի կը զգամ՝ որ այս անգամ ինքզինքս համաձայն կը գտնեմ քրիստոնէական վարդապետութեան հետ՝ դէթ որչափ

որ զայն կ'ըմբռնեմ: Եւ ինձ մեծ մխիթարութիւն՝ մանաւանդ թէ հաստատութիւն մի է՝ որ խմաստասիրութեամբ կարեմ արդարացնել և հաստատել զայն ինչ՝ զոր ուսուցանէ քրիստոնէից յայտնութիւն ասացեալն՝ որ յաչս Եկեղեցւոյ ուրիշ բան չէ՝ բայց եթէ նոյն իսկ աստուածային խօսքն:

Աղջիկ մի որ կարմեղական կուսան կ'ուզէ լինել

2 Յունիս:

Երեկ ծանրակչիռ բարեկամի մի հետ՝ խօսակցութիւն մի ունեցայ որ յետոյ ինձ անհանգստութիւն պատճառեց, և խղճի վրդովման պէս բան մի իմացայ: Իրաւ ես իմ դիտացածս ասացի՝ բայց վախեմ որ շատ կրնաք խօսեցայ, որովհետև իր հետ խօսած ժամանակս ես ինքզինքս կը մոռնամ, և եթէ նմա հանդիպածն ինձ ալ պատահի ինչ պիտի առնեմ ասելով՝ երևակայութեամբ իմացած ցաւովս տագնապի մէջ եմ:

Այս բարեկամս եկաւ ինձ գաղտնաբար իմացուց՝ որ իւր զաւակն քսան տարուան օրիորդ կ'ուզէր կուսաստան մտնել՝ այն ալ խստակրօն վանքերէն մին. իւր ամուսինն որ թէ և բարեպաշտ կին մի է՝ ամենևին անմխիթար վիճակի մէջ է, իսկ ինքն բոլորովին յուսահատեալ: Սակայն որովհետև խելացի և խղճմտանքաւոր մարդ է, թէպէտ և քան զինս աւելի կաթոլիկեայ չէ, առանց ինձ խորհուրդ հարցանելու՝ չէ ուզած զաւակին պատասխան տալ. ուստի երկու ժամ այս նիւթոյս վրայ վիճեցինք: Վիճեցինք ասելս սխալ խօսք է, որովհետև արդէն

երկուքս ալ ոչ ասելու հատանած էինք, և կարծես թէ ուրիշ բան չէինք առներ՝ եթէ ոչ թէ արդեօք որերնիս աւելի բան մի կարէինք գտնել ասելու այս աղջկան տարադէպ վարմաքին դէմ՝ որ խնամոց կրթութիւն մի առած է՝ քաջ ուսեալ և հաճոյական հանճարոյ տէր, դեղեցկադէմ ու բարեբարոյ և բաւական օժիտ ալ ունի, այնպէս որ եթէ աշխարհք մնայ՝ բարեբաղդ կարէ լինել և դերդաստանի բարի մայր մի համարուիլ: Եւ ահա յանկարծ միաքն դրել է կուսան լինել՝ որ է ասել բոլոր իւր կեանքն մաքէ չանցած զրկանաց դատապարտել, զոր անչուշտ պիտի կարճեցնէ պահօք մեռելութեամբ և ապաշխարութեամբ:

Ոչ հասկանամք թէ ուստի՝ այս մոռածութիւնս իր ուղեղն մտել է՝ որ մինչև հիմա հանդիստ վիճակի մի քաղցրութեան հանն միայն առած է՝ իւր ծնողաց սիրոյն և փափուկ խնամոց մէջ՝ որ ամենայն կերպով ջանացել են զինքն չվշտացնելու: Իրաւ է որ իր առաջին հաղորդութեան ժամանակ՝ քանի մի տարի կուսաստան մի դրել են զինքն. որովհետև բարեկամս՝ որչափ որ ինձ պէս խմաստասէր ալ է և կրօնից պարտքերն ոչ կատարէ՝ որում ոչ հաւատամք, սակայն կ'ուզէ որ կինն ու զաւակն հաւատոյ տէր լինին և կրօնից պարտքերն ալ կատարեն, և այս բանս իրենց առաքինութեան և երջանկութեան հաստատագոյն երաշխաւորութիւն կը սեպէ: Միայն կ'ուզէր որ այս ալ չափով մի լինի, այնչափ միայն՝ որչափ պէտք էր զերեզք բարեկարգելու համար, և չէ թէ չափազանցն երթալու համար՝ ուր հաստած կը տեսնէ այսօր իւր զաւակն: Դժբաղդաբար սրտի զգածմունքն չափաւորել ձեռքերնիս չէ և զայնոսիկ բանեցնելն ալ շատ դժուար է. հիմա իր ուղածէն աւելի աղջիկն բարեպաշտ եղել է, և գրեթէ կը ցաւի որ ինքն ալ այս բանիս պատճառ տուել է:

Այս բանիս մեք զմեզ համոզելով՝ տեսակ տեսակ խօսքերով հաստատեցինք թէ կրօնաւորական կեանքն բնութեան դէմ է և բնութիւնն բռնաբարել է, և թէ կաթողիկէ եկեղեցին՝ որ ամեն բանի նկատմամբ այնչափ խոհեմ և իմաստուն է՝ այս նիւթոյս մէջ անդիի ծայրն անցնելով՝ ինքզինք աշխարհիս ատելի առնէ: Եւ թէպէտ բողոքականութիւնն ոչ ախորժիմք՝ որ առաւել իմաստասիրութիւն կ'երևի մեզ քան թէ կրօնք, սակայն իրեն յայսմ մասին իրաւունք կուտայինք: Հիմա հարկաւոր կը համարիմ մեր գլխաւոր առարկութիւններն նորէն քննութեան տակ ձգել, որպէս զի հանդարտութեամբ կշռեմ զնոսա և աւելի խորին կերպով համոզուիմ. վասն զի թէպէտ շատ եռանդեամբ խօսեցայ այս նիւթոյս վրայ՝ սակայն նոյն իսկ այս եռանդս զիս անստուգութեան մէջ ձգեց, և ինձ ատրտամ բայց իրական անհանգստութիւն մի տուաւ՝ որոյ դէմ չեմ կարող դնել և կ'ուզեմ ձեռքէն ազատիլ:

Ընդհանրապէս վանքերու մէջ վարուած կրօնաւորական կեանքն՝ ինձ կ'երևի թէ մարդկային բնութեան դէմ բռնաբարութիւն է՝ որ զայն անտանելի պարտաւորութեանց ներքև կը ճնշէ՝ մարդկութեան նպատակին դէմ զայնս վրան ծանրացնելով, և սարսափելի ուխտերով զայն կաշկանդելով: Մարդկային կարողութիւնն որ իր էութեան մէջ բանաւոր և ազատ է՝ վանքերու մէջ տեսակ մի հոգւոյ և մարմնոյ դերութեան կը դատապարտուի. դերութիւն կամաց և մտաց ուխտիւ հնազանդութեան, դերութիւն մարմնոյ և իւր բոլոր կարողութեանց՝ ուխտիւք ողջախոհութեան և աղքատութեան: Իրաւ է որ ուխտելու համար բռնադատութիւն չկայ. և ամեն մարդ կամաւ առնէ զայն՝ երկայն փորձառութեան ժամանակէ ետև, որով գործադրութեամբ

ալ կարասցէ ճանաչել պահուելու կանոններն, և իւր կարողութեան և կամացն ալ փորձ լինել: Բայց սովորաբար նորընծայութիւնն պատանեկութեան ժամանակ կը կատարուի, և այն հասակին մէջ մարդ ամեն բանի ալ եռանդեամբ ձեռք կը զարնէ, և սիրտն ալ յաւիտենական երանութիւն մի ստանալու փափաքով լցուած է. և այս հասակիս մէջ իւր ամեն յօժարութիւններն և իղձերն՝ մանաւանդ կանանց սրտին մէջ՝ ուրիշ բան չեն բայց եթէ սէր նուիրումն և զոհ: Երևակայութիւնն ալ այլ աւելի այս եռանդս կը բորբոքէ, և թափով ու մղմամբ այնպիսի կենաց ձեռք կը զարնէ մարդ և ինքզինք կը պարտաւորէ՝ զոր երկնից դուռն կը համարի, որ յետոյ քանի մի տարւոյ փորձերէն ետև՝ թերևս քաւարան մի դառնայ՝ ուստի ելնելն գժուար է. վասն զի ուխտելէն ետև աշխարհք դառնալն դիւրին չէ. կարծես թէ անջնջելի և մեծագոչ նշան մի կը մնայ մարդուս վրայ. որպէս թէ ուրացութեան կամ ուխտադրժութեան յանցանք գործած լինէր:

Ոչ ուրանամ որ վանք մտանելն ազատ գործ մի է. սակայն կարեմք ասել որ այսպիսի ծանր որոշողութիւն մի առնելու համար՝ որ մարդուս բոլոր կեանքն կը սահմանէ՝ աւելի հաստատ և լուսաւոր կամք պէտք է՝ որպէս զի դիտասցէ թէ ինչ բանի կը պարտաւորի, որում կարծեմ թէ բաւական երաշխաւորութիւն չկարէ դտանիլ: Եւ աւելի ալ ծանրագոյն է որ անտի ելնել ալ ոչ լինի՝ գոնէ մինչև ուխտից պայմանաժամն լրանալուն ատենն, և թէ որ ուխտն մշտնջենաւոր է՝ մինչև ցմահ իսկ. որով հոգին կը փակուի բանտի մի մէջ՝ որոյ դրան առջև թողլու է այս աշխարհիս բոլոր յոյսն:

Արդ ինչու մարդ այս կերպով ինքզինք պարաւանդէ՝ երբ ոչ ոք 'ի մէնջ տէր է ապագային և չկարէ պատասխանատու լինել ոչ իր յօժարութեանց

և ոչ պարագայից։ Ինչու կենաց ճանապարհն ինք իւր առջև փակէ, և կամաւորապէս արգելք դնէ այն ամեն միջոցներուն որ առաւել գործունեայ և երջանիկ առնեն զկեանս։ Եւ դարձեալ ինչ բանի կը պարտաւորէ մարդ ինք զինքն, բայց եթէ այնպիսի բաներու որ բոլորովին հակառակ են մարդկային բնութեան. այսինքն ամենուրեք և հանապազ հնազանդիլ՝ մարդկային կամաց բնազդական հակամիտութեան դէմ՝ որ միշտ հրամայել կ'ուզէ, հպատակիլ կարգաց՝ զորս ինքն չէ յօրինած՝ դատելու ևս իրաւունք չունելով, մինչդեռ ամենայն ոք իւր անձին հնազանդիլ կ'ուզէ, կամ գոնէ այն բանին որ իրեն բանաւոր կ'երևի։ Մանաւանդ որ այս կարգաց կանոնաց մէջ ալ շատ կարճամիտ և նեղացուցիչ բաներ կան, որոց վրայ աւելցնելու է՝ զնոսա պահել տալու համար սահմանուած մեծաւորաց քմահաճութիւնները և չարակամութիւնները։ Մի թէ ազատ և բանաւոր էակի մի արժանաւոր վիճակ է այս, որ միշտ պատրաստ պիտի լինի՝ իրեն բարի երևցածին ձեռք զարնել, որովհետև անսահման յառաջադիմութիւնն ալ իրեն համար ինքնածին պէտք մի է։ Իսկ վանքերու մէջ կամքն չորս պատերու մէջ փակուած, և անողոքելի կանոնովք սահմանեալ փոքրիկ սենեակներու մէջ պաշարուած՝ ամեն օր կը ստիպուի սովորութեամբ եղած գործ մի կատարելու, թէպէտ և նոր գաղափար մ' ալ ունենայ մտաց մէջ, կամ աւելի լաւ բան մի գործելու տեսութիւն և յոյս։ Յիրաւի այս ուրիշ բան ասել չէ՝ բայց եթէ մարդկային ազատութիւնն ճնշել նուաճել և նուաստացնել։ Մարդ պէտք է որ միշտ ինքն իւր անձին տէր լինի, և առանց անձնասպան լինելու՝ չկարէ օտարացնել յանձնէ իւր հաւանութիւնն և իւր կարողութիւնն։

Բայց կրօնաւորական կեանքն ոչ միայն գերի առ-

նէ զմարդ բացարձակ հնազանդութեան լծովն՝ այլ և նորա մարմինն և հոգին կրճատէ՝ պարտաւորելով զնա 'ի կատարեալ ժուժկալութիւն ողջախոհութեան ուխտ ասացելովն։ Տարակոյս չկայ որ ամեն ողջամիտ մարդ՝ որ իւր արժանապատուութիւնն ճանաչէ՝ համոզուած է որ հոգին զմարմինն կառավարելու է, և մանաւանդ նորա անկարգ ախորժակներն սանձահարելու է, ուստի թէ յամուսնութեան և թէ արտաքոյ այնր ողջախոհութիւնն իւր առաքինութեանց մին լինելու է։ Բայց բնութեան անդիմադարձ հարկէն և սրտին յօժարութենէն բացարձակապէս զնա զրկել ուզելն՝ մի թէ իւր բնութիւնն եղծանել և զինքն մարդկութենէն հանել չէ՞։ Եւ որովհետև մարդկային սեռի աճումն՝ այնոր վերաբերեալ հակամիտութիւններէն յառաջ կուգայ, այս հակամիտութիւնները բընաբարելն՝ իրենց առարկայէն զիրենք զրկելով և անհատներն ընկճելով, մարդկութեան բազմանալուն արգելք դնել չէ՞։

Ապա ուրեմն այս ողջախոհութեան ուխտն մարդկութիւնն սպաննող ոճիր մի է, ազգասպանութիւն է և վախճանն զազգս և զգերդաստանս ջնջել է։ Ուստի նոքա որ այս անմիտ ժուժկալութեան կը դատապարտեն զիրենք կամ զուրիշներն՝ ոչ միայն նոր ընդունած կապանքով՝ իրենց սեպհական ընտանիքէն կ'անջատին՝ այլ և նոր գերդաստաններ կազմելու կարողութենէն ու վայելքէն իրենք զիրենք և զուրիշներն ալ կը զրկեն, և իրենց դոյութիւնն անպտուղ առնեն։ Ուստի ինչ կը հանդիպի աստի. բայց եթէ այս որ անխոհեմ ուխտերնին չկարելով կատարել՝ որոց դէմ իրենց խելքն և սիրտն կը բողոքեն, և չգտանելով յանձինս զկարևոր ոյժ խոստացածնին կատարելու՝ բռնի ծռած ոստն օր մի չէ օր մի կը շտկի, և բնութեան ամենէն

հզօր բնազդմունքն զիրենք դրեթէ յակամայ կամըս կը վարեն ու սրբապիղծ անկարդութեանց մէջ ձգեն: Եւ ինչ հարկ կայ ինքզինք անկարելւոյն պարտաւորել, և ջանալ հեղեղն արգելուլ՝ երբ աւելի դիւրին է այնոր ընթացքն ուղղել և չափոյ մէջ պահել: Այս ասացածս որպէս կրօնաւորին՝ այսպէս ևս ամուրի քահանային կը յարմարի, և այս վերջնոյս այլ աւելի՝ որովհետև աշխարհիս մէջ ողջախոհ մնալ ալ դժուարագոյն է՝ սրբազան պաշտամանց գործադրութեան ժամանակ աւելի առիթներ և փորձութիւններ պատահելուն համար, քան թէ վանքի չորս պատին մէջ փակուած և մենաստանի միայնութեան մէջ բնակող կրօնաւորի: Ուստի ես և բարեկամս կարծեմք թէ բողոքականք իրաւունք ունէին վանքերն և կրօնաւորական ուխտերն ջնջելու, և Աւետարանի պաշտօնեայներն՝ գերդաստանի հայր առնելու, որպէս զի գոնէ զնոսա արգելուն որ այլոց գերդաստաններն չխռովեն:

Իսկ աղքատութեան ուխտին դալով՝ պարզապէս անմտութիւն կը համարիմ. վասն զի ինչ հարկ կայ զանձն պարտաւորել աղքատութեան մէջ ապրելու, մի թէ արդէն մարդկանց շատին վիճակն այն չէ՞, որք այնչափ դժուարութիւն կը քաշեն իրենց օրական ապրուստն հոգալու՝ մեր արդի ընկերութեանց մէջ՝ յորս վերջի աստիճանի ճոխութիւնն և յետին կարգի աղքատութիւնն միշտ և ամեն տեղ զիրար կը դիմաւորեն: Գիտեմ որ միջակային բաղդն և վիճակն մեծագրելն առաքինութիւն է, այլ և ամօթալի միջոցներով հարստանալէն ալ լաւ է աղքատութիւնն, և թէ մեծանձնութիւն է կամաւորապէս ինք զինք զրկել՝ իւր աւելորդն՝ մանաւանդ իւր հարկաւորն ուրիշի տալու համար. սակայն ազատութեամբ յանձն առնուլ՝ բան մի չունելու տըխուր վիճակն, կամ ունեցածն առանց հրամանի

այլոց չգործածել՝ զոր խենթութեամբ մեծաւորի տեղ դրած են, ուրիշ բան չէ՝ բայց եթէ սրտի մտօք ինք զինք մշտնջենաւոր տագնապի մի մէջ դնել, և ատելի կախում մի ունել յայլոց. և այս բանս այլ աւելի խելքի դէմ է՝ երբ այսոր համար մարդ ձեռքն եղած հարստութենէն կամ հանգիստ կեանքէ հրաժարի:

Հաւանիմ որ մարդ այս աշխարհիս բարիքն չափով պէտք է վայելէ, և իրեն պէտք եղածն վայելչաբար ունելէն ետև՝ չափազանց շռայլութեան ղեղխութեան ու սնափառութեան ետևէ չանկանի: Հարստութեան և վայելից մէջ չափաւորութիւնն ամեն ժամանակ իմաստասիրաց ապսպրած բանն է, որ չորս դլխաւոր կամ ծխնէական առաքինութեանց կարգն անցուցած են զայն՝ բարեխառնութիւն անուամբ, որ մարդուս ախորժն կամ զուարճութիւնն կը սրէ՝ իղձերն և ախորժակներն բանաւորապէս յագեցնելու սահմանին մէջ դնելով: Բայց ինձ յիրաւի անխելքութիւն կ'երևի՝ որ մարդ անօթի եղած ատեն չկարասցէ ուտել, ծարաւ եղած ժամանակ չխմել, քուն ունեցած ատեն՝ ժամանակ ալ ունելով չքնանալ, հինումին ու հաստ հագուստներ հագնիլ՝ երբ կարէ վայելչապէս զգենուլ, ծածկել կամ քօղարկել մարմնոյ բնական բարեմասնութիւններն, դեղեցկութեան փայլն, հասակի աղուորութիւնն, անձին հաճոյական ձիրքերն՝ որք թէ ունեցողին և թէ տեսնողին մեծ հաճութիւն կը պատճառեն, վերջապէս մենաստանի միայնութեան և մթութեան մէջ մարել թաղել այն ամեն բան՝ որ ընկերութիւնն ու գերդաստանն կարէր դեղեցկացընել, և այս ուրիշ բանի համար չէ՝ բայց եթէ անհրաժեշտ փորձութիւններէ փախչելու համար՝ ուստի մարդ սակաւ մի խելքով կարէ ազատիլ:

Ո՞չ ապաքէն այս ուրիշ բան չէ՝ բայց եթէ ղեղ-

ծանելու կամ չարաչար գործածելու վախէն՝ չափաւոր գործածութիւնն ալ արգելուլ, որպէս թէ ոք ամենևին չքայլէ՝ վախնալով որ մի գուցէ քայլած ատեն անկցի և ոտքն կոտրէ, կամ բան մի չուտէ՝ վախնալով որ դժուարամարսութիւն չիմանայ: Ի Միջակիտին առաքինութիւն, ասաց Արիստոտէլ. առաքինութիւնն մէջ տեղն է՝ չէ թէ ծայրերն: Եւ թէպէտ կենաց արուեստին մէջ մեծ իմաստասէր մի չէր այն քերթողն՝ որոյ վկայութիւնն պիտի յիշեմ, բայց իր քերթողական լեզուն սքանչելի է՝ որ Արիստոտելի առածն այս կերպ կը բացատրէ.

Ցամենայնի չափ և սահման, և 'ի վախճանքն յանկաւորք, Ի ծայրայեղսն ոչ բնաւ գայ ուղղութիւն ինչ յերևան:

Տարակոյս չկայ որ միանձն կամ միանձնուհի լինելու կարօտութիւն չկայ ցանկութիւնն զսպելու համար, և խելքով իւր յօժարութիւններն կառավարելու, իւր իղձերն իր վիճակին յարմարցնելու, և իւր ստացուածքն պատշաճապէս գործածելու՝ առանց այլոց վնաս տալու, և իւր կարողութեան համեմատ բարիք ալ առնելու համար:

Մի թէ զաւակս այսչափ ծախիւք մեծցնելս այնոր համա՞ր էր որ՝ կը գոչէր խեղճ բարեկամս, երթայ իրեն տուած դաստիարակութիւնս և իր տաղանդն թաղէ անծանօթ անկիւն մի ուր մարդ ոտք կոխելիք չունի: Եւ մի թէ այնչափ զրկանք քաշելս և դիշեր ցորեկ աշխատիլս հոգնելս իրեն օժիտ պատրաստելու համար՝ այնոր համա՞ր էր որ ինքն այնպիսի խեղճ կեանք մի անցնէ՝ որ իր աղատութեան յարգն ճանչցող ամենէն յետին մարդն ալ չուզէր քաշել: Գոնէ Քորք գթութեան ասացեալ կուսան մի լինէր՝ ինքզինք աղքատաց ծառայութեան, հիւանդաց այցելութեան և տղայոց դաստիարակութեան նուիրելով. դէթ այսոց մէջ ընկերութեան օգուտ մի կը տեսնեմ, և աշխարհքս ալ այնպիսի նուիրումն առ-

նողներու վրայ ներողամիտ աչքով կը նայի և կը գովէ ևս: Եւ դարձեալ այլ լաւ չէ՞ որ իր հայրն ու մայրն, եղբայրներն ու քոյրերն հոգայ խնամէ, և մանաւանդ իւր այրն և զաւկներն. եթէ իւրաքանչիւր ոք իրեններուն համար այս բանս առնէ՝ ալ կարօտութիւն չմնար որ ոմանք նոյն բաներն ամենուն համար ալ առնեն:

Բայց չէ, հապա երթալ կարմեղական լինել, այսինքն տաս տասուերկու բռնկած խելքով կանանց հետ չորս պատերու մէջ փակուիլ՝ առանց օդոյ և արևու խոնաւ տեղ մի, մարմնոյ մտաց և սրտի ամեն տեսակ զրկանաց մէջ, և ամեն օր երկայն բարակ աղօթքներ և հայրմերներ զրուցել՝ շատ անգամ առանց հասկանալու, որովհետև ժամերգութիւնն ալ լատիներէն է. և հոն մութ ու սառուցեալ տեղւոյն մէջ ձմեռն ցուրտէն ու ամառն տաքէն նեղուիլ, սնունդ առնլու կերակուր չունել, և առանց արտաքին մխիթարութեան՝ կամաց կամաց հիւծիլ ու մաշիլ, ամեն օր ինքզինք վաղահաս որս մի պատրաստելով մահու: Մի թէ այսո՞ր համար ստեղծել է Աստուած զիրենք, և իրենց ծնողք ալ որ այնչափ զոհողութեամբ զիրենք մեծցուցել և սիրուն զաւակաց տէր եղել են՝ զիրենք ողջ ողջ թաղուած տեսնելո՞ւ համար է: — Ո՛չ, ո՛չ ասեմ, ո՛չ, և միայն մտածելովն իսկ խելքիս կուգայ և սիրտս կը ճմլի:

«Ոտքդ ամուր կոխէ, բարեկամ, ասացի իրեն, նորա աղաչանաց և արտասուաց դէմ հաստատ կեցիր՝ մինչև որ բռնկած միտքն հանդարտի ու ամեն բան կ՛անցնի. որովհետև աւելի երևակայութեան ջերմութենէն է՝ քան թէ իրական զգածմունքէ, և այս Աստուծոյ սէրն՝ որ հիմա զաւկիդ սիրտն կը բորբոքէ՝ հաւանականաբար բնական սիրոյ եռանդ մի է՝ որ այնոր սիրտն կը տագնապէ՝ մինչև որ իւր առարկայն գտնէ»:

Այս եղև մեր երկայն խորհրդակցութեան վախ-
ճանն. ես ինչ որ ասացի այս խեղճ հօրս, և զոր մա-
սամբ գրի առի՝ այնպէս անկեղծութեամբ խօսեցայ՝
ինչպէս որ կը մտածէի: Սակայն որչափ ալ կարծէի
թէ ուղիղ էր ասացածս՝ այսու ամենայնիւ խիղճս
բոլորովին հանգիստ չէ, նախ որ խնդրոյն ժամանակ՝
միտքս իմ զաւկիս վրայ երթալով՝ դատաւոր և միան-
գամայն դատախազ կը գտնէի զիս՝ որով և անկող-
մնակցութիւնս ալ կը պակսէր: Եւ յետոյ խղճիս
մէջ ծածուկ ձայն մի ինձ ասէր թէ՝ ազատ արարա-
ծոյ մի վախճանին ու վիճակին վրայ բռնութիւն առ-
նելն՝ մեծ պատասխանատուութիւն էր, այնպէս որ
հօրն որոշման մասնակից լինելով՝ եթէ դժբաղդու-
թիւն մի յառաջ գար՝ ինձ անմխիթար արտմութիւն
պիտի լինէր: Բաց ատի ո՞ գիտէ աղջկան սրտէն ալ
ինչեր կ՚անցնին, և ի՞նչ բանի կոչուած է. որովհետև
ի՞նչ ալ առնես աշխարհիս մէջ կոչումն ասացեալ
բանն կայ, և եթէ այս աղջկան կոչումն ալ կուսան
լինել է, ես ո՛վ եմ որ դէմ կարեմ դնել: Ապա ու-
րեմն աւելի խոհեմութեամբ մտածելու է, և այս օրն
պիտի չթողում որ անցնի՝ մինչև երթամ բարեկամս
գտնեմ և պարտաւորեմ զինքն որ դեռ որոշում մի
չառնէ:

Ուխտք կրօնաւորութեան

4 Յունիս:

Նորէն տեսի այն խեղճ հայրն՝ որ միշտ նոյն աբրա-
մութեան մէջ է, և շատ դժուարութիւն քաշեցի
մինչև որ խօսք առի իրմէ որ քանի մի օր իր որոշումն
զաւկին իմացնելն ուշացնէ, որովհետև ուշանալէն
վտանգ մի չկայ, վասն զի զաւակն ալ դեռ քսանեմի
տարուան չէ. և թէ առաջին տպաւորութեան դէմ

հակառակիլն վտանգաւոր է. վասն զի այն ատեն
զգացողութիւնն խելքին յաղթած լինելով՝ խռո-
ված ու մթնցուցած է զայն, այնպէս որ անկարող
լինի դատաստան առնելու այն բաներուն վրայ՝ որ
խորհրդածութիւն կը պահանջեն: Ուստի որոշե-
ցինք որ քանի մի օր ալ դեռ մտածեմք, և նորէն իրա-
րու մեր զգացմունքն և մտածմունքն հաղորդեմք՝
այս ծանր նիւթոյն վրայ՝ որ աղջկան վիճակն պիտի
որոշէ երկրիս վրայ, և ըստ իւր խելաց նաև իւր
հանգերձեալ կենաց վիճակն:

Ուստի երեք օրէ 'ի վեր ուրիշ բան ոչ մտա-
ծեմ՝ բայց եթէ զայս, և որպէս զի իմ դաղափար-
ներս աւելի ճիշդ լիցին՝ հարկաւոր կը սեպեմ զայնս
գրի առնուլ՝ որ նոցա ճշմարտութիւնն և ուժն ա-
ւելի լաւ տեսնեմ: Օրագիրս կարդալով՝ նորէն սկսայ
իմ առարկութեանցս վրայ մտածել. և նորէն կշիռքի
զարնելով՝ կը խոստովանիմ որ առջինին չափ ուժով
չերևցան ինձ. և դոնէ նոցա հաւասարաղօր պատաս-
խաններ գտի, այնպէս որ կշիռն իր հաւասարու-
թիւնն գրեթէ գտաւ, և երկուց կողմանց պատճառ-
ներն ալ հաւասար ծանրութիւն ունեցան. և որով-
հետև պատճառներն իրարու հակառակամարտ կը
գտնեմ՝ ուստի ոչ գիտեմ թէ ո՛ր կողման առաւե-
լութիւն տամ: Բարեբաղդաբար խօսքն իմ զաւկիս
վրայ չէ, ապա թէ ոչ եթէ այս բանս իմ հայրական
զգածմանս դպչէր՝ խելքս թռցնելն բան մի չէր:
Մարդս ուրիշի դատին մէջ աւելի անխռով կը մտա-
ծէ. այսոր համար իմ որոշմունքս գրի պիտի առ-
նում ու բարեկամիս հաղորդեմ:

Եւ յիրաւի իմ ամեն առարկութեանցս արմատն
մի է, այսինքն թէ մենաստանաց կրօնաւորական
կեանքն հակառակ է մարդկային բնութեան որոյ
զաղատութիւնն կը նուաճէ՝ ուխտիւ հնազանդու-
թեան, ամենէն աւելի կենսական բնազդումն և ա-

մենէն քաղցր զդածմունքն կը բռնադատէ՝ ուխտիւ ողջախոհութեան, և նորա կեանքն խեղճ ու թըշուառ առնէ՝ ուխտիւ աղքատութեան:

Առաջին կիտին վրայ կարէ ոք մեզ ասել թէ՝ ազատութիւնն պաշտպանելու պատրուակաւ՝ դուք զայն կը բռնաբարէք ու այնոր դէմ կը կռուիք. վասն զի ո՛վ որ տեսակ մի կեանք կ'ուզէ վարել՝ որ իրեն նմանեաց վնասակար չէ, և թերևս նոցա օգտակար ալ է անձնանուիրմամբ և սիրով՝ ի՞նչ իրաւամբ կ'ուզէք արգելուլ որ իրեն յարմար երևցածն չառնէ: Արդ եթէ աղջիկ զաւակ մի աշխարհէս և իր սովորութիւններէն համ չառնուր, և կը վախնայ ալ որ հոն մնալով պիտի կորնչի՝ ինչո՛ւ ստիպեմք զինքն մնալու, և այսպէս զինքն թշուառ առնեմք՝ զինքն երջանիկ առնելու պատրուակաւ, և որոյ ինքն քան զայլս աւելի լաւագոյն դատաւոր է: Եւ խօսքս բարեկամիս զաւկին գալով՝ որ տարիէ մի չափահաս պիտի լինի՝ ինքն այն ատեն իր անձին տէր պիտի չլինի՞ ուզածն առնելու, միայնակ պատասխանատու լինելով առաջի Աստուծոյ և մարդկան՝ իւր կամաց որոշողութենէն յառաջ եկած հետևանացն և գործոց: Անտարակոյս հիմա իրեն պարտքն է ծնողաց հնազանդիլ, և այնպէս ալ պէտք է առնէ՝ մինչև այն ժամանակն որ առ պատկառանաց միայն նոցա խորհուրդ հարցնելու պարտաւորութիւն կը մնայ: Մի թէ տարիէ մի ետքը աւելի լա՞ւ պիտի գիտէ գործելիքն, և մեր հիմա զինքն արգիլելն՝ այն յուսով չէ՞ որ բոլորովին 'ի բաց թողու իր միտքն դրածն:

Տարիէ մի նոյն վիշտերն նորէն պիտի սկսին, և այնչափ աւելի սաստիկ պիտի լինին՝ որչափ որ մեր յոյսն ալ պարապ պիտի ելնէ և մեր իշխանութիւնն ալ ճար մի պիտի չգտնէ: Եւ ահա մեզ նման հայրերն ու մայրերն՝ որ վարժել եմք մանկութենէն 'ի վեր մեր զաւակաց վրայ տիրապետել՝ այս բանս դժուա-

րաւ կ'ըմբռնեմք ու յանձն կ'առնումք, մտքերնիս դնելով թէ զաւկներն մերն են, և ինչ որ ուզեմք կարեմք առնել զնոսա: Ոչ յիշեմք որ նոքա մեր քովը աւանդ են և ոչ թէ մեր ստացուածքն. ուստի ժամանակն երբ կը հասնի, և մեր բնական խնամակալութեան պաշտօնն կ'աւարտի՝ պէտք է որ նորէն դարձնեմք զնոսա Այնմ՝ որ մեզ յանձնել էր՝ իրենց վախճանին օգտին համար, և զիրենք իրենց՝ որովհետև ալ կարող են այն վախճանն ճանաչել և կատարել: Ուստի այն ժամանակ գործն իրենց և Նախախնամութեան անկանի, ոչ թէ մեզ, թէ և սըրտերնիս վշտանայ նորա հրամանացն հպատակելու:

Դարձեալ այս կրօնաւորական վիճակի հնազանդութիւնն որ այսչափ անարգ կ'երևի մեզ՝ մի թէ աշխարհի և ընկերութեան մէջ աւելի քա՞ղցր է: Մի թէ հոս ալ պարտկան չե՞մք մանկութենէ մինչև 'ի մահ հնազանդելու օրինաց՝ զորս մեք չեմք յօրինած, և մեծաւորաց զորս մեք չեմք ընտրած, և որք միշտ խոհեմութեան և հեզութեան օրինակ չեն: Մի թէ կարգուող կինն պարտաւոր չէ՞ հնազանդութիւն խոստանալու բոլոր կենաց մէջ՝ իւր էրկանն՝ զոր շատ անգամ հազիւ թէ կը ճանաչէ, և այս հնազանդութիւնդ ալ անլուծանելի չէ՞: Իսկ կրօնից մէջ գոնէ մարդ կարող է առ ժամանակ մի պարտաւորիլ, և երբ այն ժամանակն կը լրանայ՝ ինքն ալ ազատ է. և աւելի կարևորն ալ այս է որ ուխտադրութենէ առաջ քանի մի տարի նորընծայութենէ կ'անցնի, և այն ժամանակ մարդ կը սովրի միաբանութեան կանոններն բարեկարգութիւնն և սովորութիւններն, և կը փորձէ թէ բաղձացած կեանքն և վիճակին պայմաններն իրեն կը յարմարի՞ն թէ չէ: Ապա ուրեմն հոն մարդ բովանդակապէս խելամուտ լինի թէ ինչ բանի պիտի պարտաւորի, և ժամանակ ալ ունի մտածելու, և շատ փորձերէն

ետև երբ իր միտքն կ'որոշէ, գործածն բոլորովին կամաւոր է իւրով յօժարութեամբ:

Ընդհակառակն ամուսնութեան անլուծանելի պարտաւորութիւնն շատ անգամ կոյր զկուրայն լինի, առանց ճանաչելու. առանց նախընթաց և բաւական փորձի անձինն որոյ հետ պիտի կապուի, և զգայութեանց կրից և երևակայութեան՝ մտաց առջին դրած արդելքներովն: Այս բանս այնչափ ճըշմարիտ է՝ որ եթէ ամուսնութեան համար ալ վանաց պէս նորընծայութիւն մի լինէր, և կողմանքն երկոքին կարէին գոնէ երկու տարի 'ի միասին բնակել՝ յառաջ քան իրարու հետ բոլորովին կապուիլն, շատ տարակուսական է որ շատերն այս փորձէս ետև մշտնջենաւորապէս զիրար ուղէին:

Ուրեմն կրօնաւորական ուխտից դէմ եղած այս առարկուածս՝ ամուսնութեան պարտաւորութեան դէմ ալ կը զօրէ, որ դաշնադրելէն ետև շատ աւելի անստուգութիւններ կարէ յառաջ բերել, և կամ գոնէ նոյնչափ զղջալու պատճառներ յապագայս: Ես սա բանիս վրայ շատ զարմացել եմ որ Փրանկիոյ առաջին յեղափոխութեան ժամանակ՝ որ կրօնաւորական միաբանութիւնները ջնջուեցան՝ նոցա ստացուածքն յափշտակելու մտօք, այն ժամանակի տիրողներն վաղեցին դնացին միանձանց և միանձնուհեաց առջև՝ զորս մոլեռանդութեան և բռնաւորութեն զոհեր կը համարէին, և իբրև նոցա աղատարարներն՝ կարծեցեալ բանտերուն դռներն մեծաւ շառաչմամբ որ բացին աղատութիւն տալով իրենց՝ մանաւանդ թէ դուրս վռընտելով, կրօնաւորներէն շատերն չէին ուզեր դուրս ելնել, և իրենց աղատարարներն բռնաւորաց տեղ կը դնէին. ուստի կ'երևի թէ կարծածնուս չափ խիստ չէ այն տեղի կեանքն, և շատերու համար ալ՝ իր քաղցրութիւնն ունի:

Վերջապէս նոքա որ քան զայլս աւելի կրօնաւորական հնազանդութեան դէմ կը մաքառին՝ զինուորական հնազանդութիւնն կամակար կ'ընդունին՝ որ շատ աւելի խիստ և նուա ճող է իւր բարեկարգութեամբն և սովորութեամբք: Եւ սակայն հոս ալ մինչև ցմահ հնազանդելու է հրամանատարի մի պարզ խօսքին՝ որոյ դէմ խօսիլ ոչ լինի: Եւ այս հրամանատարս պատերազմի ժամանակ բարձրագոյն հրամանի մի գործադիրն չէ. այլ ճակատամարտին ուրուագիծն յօրինողն ինքն է՝ զոր ծածուկ շինել է, և զայն ճիշդ կատարել կը հրամայէ իր հպատակաց՝ որք ստիպեալ են զայն 'ի գործ դնելու վտանգաւ իսկ կենաց՝ առանց խելքերնին հասնելու: Հոն փոքրիկ սխալանք մի որ քաղաքական վիճակի մէջ թեթև բան մի է, գլխապարտութիւն կը համարուի՝ իր հետևանաց պատճառաւ, որովհետև այնչափ հազարաւոր կամքերն և անձնական ուժերն ուղղելու է հասարակաց գործոյ միութեամբն. այնոր համար թեթև անհնազանդութիւնն խիստ կերպով կը պատժուի, և ոչինչ յանցանքն մահու պարտաւոր կը սեպուի: Ես ալ համոզուած եմ որ ուրիշ կերպով բանակ մի չկարէ կառավարուիլ. բայց առանց զինուորական բարեկարգութիւնն պախարակելու՝ ինձ կ'երևի թէ կրօնաւորական բարեկարգութեան չարախօսներն ալ՝ աւելի իրաւունք ունին զինուորական կարգի հպատակաց վրայ ցաւիլ որ իրենց երիտասարդութեան ամենէն գեղեցեկ տարիներն՝ իրենց երկրէն և ընտանիքէն հեռու՝ և իրենց արուեստն կորուսանելով և ընտանեկան կենաց քաղցրութենէն զրկուելով՝ եօթն ամբողջ տարիներ չեն կարող կարգուիլ, և այն ճիշդ այն ժամանակն երբ աւելի պէտք ու փափաք ունին կարգուելու. եթէ յիրաւի գերութիւն և քաղաքացւոյ իրաւունքէն զրկուիլ եթէ կայ՝ բուն այս բանս է: Իրաւ է որ այս լեղի հատադեղս ոսկէ-

զօծել կը ջանամք, և ամեն կերպով փայլուն կը ցո-
ցանենք որպէս զի միլիոնաւոր մարդկանց կլլեցնենք
զայն, որք առանց այսոր պիտի նողկային զայն բե-
րաննին առնուլ: Տարակոյս չունիմ որ խելօք զի-
նուորներն որ օրինաց պահանջմամբն և ըստ պատահ-
ման դժբաղդ վիճակի դրօշուց տակ կը գտուին՝ ու-
րիշ բանի այնչափ ոչ ցանկան ու փափաքին՝ որչափ
ժամ մի յառաջ գառնալ 'ի հայրենիս և իրենց դե-
ղերու մէջ գտնել իրենց Թողած սիրելիներն, թէ և
զինուորութիւնն շատ փառաւոր ալ համարուի:

Կրօնաւորական հնազանդութեան կողմն ալ զբաց-
նող ուրիշ տարբերութիւն մի ալ այս է որ՝ զայն
յանձն առնողներն իրենց հոգին վերկելու դիտմամբ
և յուսով այն բանն յանձն կ'առնուն, և միանգա-
մայն իրենց նմանեաց օգտակար լինելու փափաքով.
ուր ընդհակառակն զինուորն միտքն դնելու է որ
եթէ պատերազմի դաշտին մէջ ալ չմեռնի՝ իւր
կեանքն անկէլանօցայ մէջ պիտի աւարտէ, և թէ որ
հաշմ ու հիւանդկախ անտի ալ ազատի և ընկերու-
թեան մէջ մտնէ՝ իր ապրուստն ճարելու կարո-
ղութիւն չունի, այլ հազիւ թէ պատառ մի հաց՝ իւր
ծերութեան օրերուն համար. և եթէ դեռ առող-
ջութիւն և ոյժ ալ ունի՝ հարկ է որ նորէն իր առջի
արուեստին ձեռք զարնէ՝ զոր երկայնատեն թողել
էր, և շատ դժուարութեամբ նստի իւր առջի դոր-
ծին՝ որոյ վարժութիւնն կորուսած է: Նոքա ևս որ
վիրաւորած ու հաշմացած չէն՝ շատ անգամ հի-
ւանդութեանց և անտես էնթակայ լինին կրած աշ-
խատանքէն կամ զինուորական կենաց անկարգու-
թիւններէն, որոց բնական և բարոյական հետևան-
քըն զիրենք բոլոր կենաց մէջ վշտացնելէն ետև՝ շատ
անգամ իրենց որդւոց ալ կ'անցնին:

Իսկ եթէ կրօնաւորական կենաք՝ ազատութիւնն
կորնչելուն վասն ոք ցաւի՝ կարեմք հաստատել որ

աշխարհիս մէջ վիճակ մի չկայ որ մարդ իւր ազա-
տութիւնն կատարելապէս վայելէ, ուր մարդ վեր-
ջապէս ուրիշ բանի համար չաշխատիր՝ բայց եր-
կրաւոր բարիք ստանալու համար, ուրմէ որ կրօնա-
կան ուխտիւք Աստուծոյ ծառայութեան նուիրե-
լով լինք զինքն՝ գոնէ համոզուած և յոյս կ'ունենայ՝
իւր յաւիտենական երջանկութիւնն պատրաստե-
լու, և քան զամենայն մարդկային փառս գերազանց
վարձք մի վաստկելու՝ զոր ոչ ինչ կարէ կապտել 'ի
մէնջ: Աւետարանին « միայն կարևոր և մանրբարի »
ասացածն է այս:

Կրօնաւորական ուխտերն հաստատելու համար
քրիստոնէական նկատողութեամբ հայելու է. սա-
կայն նոյն իսկ անկողմնակալ խոստասէրն լաւ կ'ըմ-
բռնէ որ կրօնաւորական հնազանդութիւնն ոչ
միայն զազատութիւնն չոչնչացնէր՝ այլ ընդհակա-
ռակն զայն կը կատարելագործէ ու կը լցացնէ:
Վասն զի եթէ յիրաւի բարոյական ազատութիւնն՝
բարին և չարն ընտրելուն մէջ կայանայ, ապա պարզ
և կատարեալ ազատութիւնն այն է՝ որ մարդ պէտք
չունենայ այս ընտրութիւնս առնելու որ միշտ վտան-
գաւոր և դժուարին է, այլ բացարձակապէս մի-
նոյն ընդ բարւոյն իւր կամաց Աստուծոյ կամաց հետ
նոյնութեամբն՝ որ է Բարին գերագոյն: Այդ մի-
բանութեան մէջ Աստուծոյ կամքն կանոնաց ձեռք
յանդիման կ'երևի՝ որ զամենայն առնելիս հրամայէ,
և կանոնն միշտ մեծաւորաց իշխանութեամբն կը
հրամայէ: Այսպ ուրեմն ոչ մարդոյ և ոչ մարդկայնոյ
իմիք է հնազանդութիւնն, այլ Աչնմ որ իշխանու-
թիւն ունի հրամայելու մարդոյ. և այսպէս անգա-
դար հպատակութեամբ նորա կամացն և կատա-
րեալ հնազանդութեամբ հրամանաց նորա՝ հոգին
բաժանի 'ի չարէ, գեր 'ի վեր առաքինայ քան զանի-
րաւութիւն, և հետևապէս ազատի յամենայնէ որ

գերի առնէ զնա յաշխարհիս, առ 'ի հալորդ լինել անհուն ազատութեան և երջանկութեան՝ որ յառաջ գայ յայնմանէ։ — Այս է եկեղեցւոյն ազատութիւն որդւոցն Աստուծոյ կոչածին։ Այսոր համար է որ հրօնաւորական վիճակին՝ որ աւետարանական խրատուց կատարմամբն սոյն ազատութիւնս մեզ կուտայ, քան զամենայն վիճակս կատարեալ կը սեպուի. որովհետև այնու մարդուս հոգին աշխարհիս մէջ անմիջապէս Աստուծոյ հետ կը միանայ։ Արդէն Կիկերոն իր ժամանակին համար ասէր թէ կատարելութիւնն աստուածութեան մերձաւոր և նմանող լինելուն վրայ կայանայ. իմ կարծիքս ալ Կիկերոնի հետ նոյն է. բայց որչափ ալ կը սքանչանամ այս գերազանց նմանութեանս վրայ, մանաւանդ Քրիստոսի և առաքելոց վրայ տեսածիս, սակայն այնմ հասնելու անկարող լինելս ալ կ'իմանամ. և գրեթէ հանդերձեալ աշխարհի իր մի կը համարիմ զայն՝ զոր քրիստոնէայք կը ջանան այս աշխարհիս մէջ ալ մուծանել, որ գովելի և պանծալի ջանք մի լինելով՝ յետ այսորիկ ոչ երբեք պիտի արհամարհեմ զայն. և սակայն դեռ բոլորովին վստահ չեմ և ցնորական ձեռնարկ մի երևի ինձ, գոնէ մարդկանց շատերուն համար, և մանաւանդ կանանց, սրտերնին կարի զգայուն և երևակայութիւնն կարի վառվռուն լինելուն համար։

Ուխտք կրօնաւորութեան (շարայարութիւն)

Ե Ցունիս։

Մեք վճռեցինք որ բացարձակ ողջախոհութեան ոխան՝ հակառակ է բնութեան, ուստի և զայն հրամայելն և խոստանալն ոճիր է ընդդէմ մարդ-

կութեան և ընկերութեան։ Սակայն այս բանս ինձ մութ կ'երևի, և կարէ ոք այս վճռոյս դէմ բողոքել որպէսզի ըստ հաճոյս տուեալ. վասն զի մեր տուած պատճառներն ալ հատու կարուկ և անդիմադարձ չեն։

Նախ բնութիւն ասելով որ բնութիւնն իմանալու է. որովհետև մարդս երկու բնութիւն ունի՝ յերկուց գոյացութեանց բաղկացած լինելուն համար՝ մին ոգեկան միւսն նիւթական. վասն զի եթէ մարմինն՝ անասուն է, իսկ մտաքն ոգի մի է. և թէպէտ մարմնոյն պէտք եղածն ալ տալու է տպրելու համար՝ սակայն ամենայն ոգևորական խնամատարքը միաբան ասեն թէ մարմինն հոգւոյն ստրուկն և գործին լինելով՝ նորա ախորժակն այնչափ չագեցնելու է՝ որչափ որ հարկաւոր է հոգւոյ սպասատարկութեանն։ Ուրեմն ոգեղէն բնութիւնն վերագաս և նախապատիւ է, և մարմինն իւր նմա գործակցութեամբն միայն բան մի կ'արժէ, և անկարգութեան մէջ է՝ երբ հոգւոյ դէմ կ'ապստամբի մարմնական ցանկութեամբք՝ որ զինքն անբան կը գարձնեն. ինչպէս որ ընդհակառակն կը բարձրանայ և գրեթէ կը պաշծառակերպի՝ երբ յամենայնի հոգւոյն կը հնազանդի, միայն նորա ծառայութեանն կը բանի, և նորա գործոյն ուղածին և կատարելագործութեանն միջոցները կը պատրաստէ։ Նոյն ինքն Պլատոն կը համարի թէ մարմինն էականապէս մարդկութեան սեպհականը չէ՝ որոյ դեպ 'ի յաւիտենական իրս ունեցած թռիչն անգամ կ'արգելու, այլ պատահական բանտ մի է՝ ուր հոգին նետուած է նախընթաց յանցանաց պատժոյն համար. ուստի մարդուս գլխաւոր պարտքն որչափ հնար է չուտ 'ի մարմնոյ ելանելն է՝ նորա արգելքն խորտակելով, որ լինի, ասէ, մաքրագործութեամբ և մտածմամբ։

Ես ալ գիտեմ որ այս խօսքիս մէջ սխալ կայ. բայց գոնէ մեզ կը ցուցանէ թէ որչափ սակաւ յարդ-

կուտար մարմնոյ՝ իշխանն իմաստասիրաց, և ո՛ր-
չափ մեծ համարէր մարդուս համար սահմանեալ
վախճանն՝ ուզելով զինքն իւր բնութեան կատարե-
լութեան առաջնորդել՝ այսինքն մեծապէս նմանցնե-
լու զինքն մաքուր ոգւոց, և Աստուծոյ որ քան զա-
մենայն ոգիս մաքրագոյն է:

Արդ քրիստոնէութիւնն թէպէտ և Պլատոնի պէս
ոչ համարի թէ մարմինն ՚ի նասակար պատահար մի է՝
ուստի ազատելու ճարն նայելու է, սակայն նորա
պէս ինքն ալ մարդկային կատարելութիւնն՝ իւր մտաց
բարձրութեան և իւր սիրոյն անարատութեան վրայ
կը հիմնէ, այսինքն յաւիտենական իրերն ժամանա-
կաւորներէն նախապատիւ համարելու վրայ. նախ
ամեն քրիստոնէից ուսուցանելով թէ կը պարտա-
ւորի իւր մարմինն մտաց հպատակել և միտքն ալ
Աստուծոյ, և ամենուն ալ որպէս պատուիրան կ՚ա-
պըսպրէ զբարեխառնութիւն և զչափաւորութիւն
՚ի յագեցուցանել անդ զմարմնական ախորժակս,
առ ՚ի բարձրանալ յանասնութենէն ՚ի հոգեղինու-
թիւն, յանհարթ մարդկութենէն ՚ի կատարեալ
մարդկութիւն:

Սակայն արդարութեան սահմանէն վեր՝ ուր պա-
տուիրանն կը տիրէ, ուրիշ ճամբայ մի ալ կը բանայ՝
ուր որ զմարդ աւելի բարձր կատարելութեան կը
կոչէ՝ առ որ իբրև պարտաւորիչ պատուիրան ոչ զոք
կը բռնադատէ, այլ իբրև խրատ ոմանց կ՚առաջար-
կէ: Եւ առ ամենեսին ասելու ատեն թէ Ամուսնա-
ցէք եթէ կը փափաքիք, և լաւ առնէք, վասն զի
լաւ է ամուսնանալ քան զջեռնուլ. շատերուն ալ
դարձեալ ասէ. Մի ամուսնանայք եթէ ալ լաւ կը
համարիք՝ միայն այս պայմանաւ որ ողջախոհ մնաք
հոգւով մտօք և մարմնով, և Աստուծոյ տայք ձեր
բոլոր կեանքն և բոլոր սէրն: Որովհետև Աստուած
Բարին գերագոյն՝ ձեր գոյութեան վերջնական

վախճանն է, թէ յաշխարհիս և թէ ՚ի հանդերձեալն
երջանիկ լինելու համար՝ պէտք է որ ձեր սիրտն ՚ի
վեր քան զամենայն զԱստուած սիրելով՝ նորա հետ
կատարելապէս միանայ: Ինքն իւր ողորմութեամբն
զձեզ կոչեց մասնակից լինելու իւր անհուն գոյու-
թեանն, ուստի միայն իրեն յարելով՝ ձեր հոգին
պիտի գտնէ կենաց երջանկութեան և փառաց
լրումն. և այսոր համար Քրիստոս իր առակաւոր
խօսքովն ասաց. « Են ներքինիք որ զանձինս իւրեանց
արարին ներքինիս վասն արքայութեան երկնից »:

Այս երկնային կեանքն՝ որոյ կնիքն է կուսական
մաքրութիւնն, որովհետև հրեշտակք՝ անմարմինք
գոլով ոչ ամուսնանան՝ ոչ ումեք պարտք գրուած է
յԵկեղեցւոյ. այլ միայն նոցա ապսպրուած է որ
կատարելութեան կ՚ուզեն դիմել. ապա այս պայման-
ներս գրուելէն ետև՝ ես բնութեան բռնադատու-
թիւն ոչ տեսանեմ այս բանիս մէջ, որովհետև կեր-
պիւ իւիք բռնաբարութիւն մի չկայ, և իւրաքանչիւր
ոք ազատ է խրատն ընդունելու կամ չընդունելու:

Իրաւ է որ ընդունելէն ետև՝ զայն գործով ալ
կատարելու համար՝ նուիրմունք կան առնելու՝ և
յաղթութիւններ տանելու: Նախ հոգևորական
գերդաստանի մէջ մտնելու համար՝ պէտք է բնական
գերդաստանէն բաժնուիլ՝ որ առանց կռուոյ ոչ լինի.
և այս բանս ծնողքն կը յուսահատցնէ և երբեմն
զաւակաց սիրտն ալ կը կեղեքէ. կտրճութիւն և
ոյժ պէտք է այս արտաքին պատերազմաց դիմանա-
լու համար, և ևս առաւել ներքնոց որ յետոյ պիտի
գան: Վասն զի բնութիւնն զրկուելով իր սրտին սի-
րածէն և մարմնոյ ցանկութեան փափաքածէն՝ եր-
կայն ատեն կը ծեծկուի, և դժուարաւ տեղի կու-
տայ վերնագոյն ազդեցութեանց, և երկրաւոր
մարդն դիւրաւ չթողուր որ երկնաւորն իր տեղն
բռնէ: Եւ փորձառութիւնն ալ այս բանիս մէջ է, և

երկայն ժամանակի կարօտ է որ բոլորովին որոշուի: Սակայն վերջապէս հոգւոյ մարմնոյ վրայ յաղթութիւնն անկարելի չէ, և ապացոյցն ալ այս է որ տասնութը դարերէ 'ի վեր այնչափ քրիստոնեայ հոգիներ այս յաղթութիւնս ստացած են: Այս բանիս մէջ իմաստասիրութիւնն ալ հարկ էր որ զիրենք քաջալերէր, որովհետև այս տեսակ կռիւներն և յաղթութիւնները ցուցանեն զզօրութիւն կամաց և զարժանապատուութիւն մարդոյ՝ որ մինչև 'ի հրեշտակական գերազանցութիւն կարէ բարձրանալ: Անտարակոյս այս ալ հանդերձեալ աշխարհի իր մի է, և մարդս իւր սեպհական ուժովն այնմ չկարէ հասանել: Ինքն իրմէ վեր բարձրանալու և անձին յաղթելու համար՝ գերագոյն օգնութեան կարօտ է՝ զոր քրիստոնեայք շնորհք անուանեն կամ նոյն ինքն Աստուծոյ զօրութիւնն՝ որ ամբառնայ և զօրացուցանէ զհոգիս յօժարեալս 'ի նուիրել զինքեանս առ նա՝ ոտնհարութեամբ սիրելութեանց և կապանաց աշխարհի: Աշակերտ գոլով Պլատոնի՝ չեմ կարող պախարակել այս եռանդս որ քեցէ զոգիս 'ի պատրանաց կենցաղիս՝ առ 'ի հաղորդ առնել զնա մտածութեամբ ընդ յաւիտենական ճշմարտութեանց, և որ արձակէ զսիրտն 'ի կապանաց մարմնոյ և արեան՝ որոց անցաւոր ուրախութիւնք առեալ բերեն սովորաբար ցաւս և տրտմութիւնս անդարմանելիս՝ որոց տեղն բան մի չէ կարող լեցնել:

Բայց միթէ վայրենութիւն չէ՞ անջատելն զորդիս 'ի ծնողաց, և անիրաւութիւն չէ՞ զրկել զսոսա 'ի վարձուց խնամոց իւրեանց և վաստակոց՝ յափշտակելով 'ի նոցանէ զերջանկութիւնն վայելելոյ զորդիս՝ զորս այնչափ հոգովք մեծցուցին:... Այո, հաւանիմ որ այս բանս խիստ կուգայ բնութեան. և իմ հայրական սիրտս կը սարսափի երբ կը մտածեմ որ սոյն բանս ինձ ալ կարէ պատահիլ: Բայց ամեն բա-

նէն աւելի խելքով մտածելու եմք. արդեօք մեզ թէ իրենց համար պիտի մեծցնեմք մեր զաւկներն, և մեր վայելից համար մեզ տրուած են նոքա՝ թէ իրենց մեծագոյն բարւոյն համար. և զնոսա մեծցնելէն ետև՝ երբ տեսանեմք 'ի նոսա մասնաւոր կոչում մի՝ որոց կարդն է նաև կրօնաւորական կեանքն, մեք ո՛վ եմք որ զայն արդելումք՝ մեր ախորժն և կարծիքն դէմ դնելով գերագոյն կամաց՝ որ խօսի 'ի սիրտ մանկանն. «Մեծ պատկառանս պարտիմք մանկան» ասաց հեթանոս ոք բարոյախօս, և անշուշտ այս պատկառանքս այնչափ պիտի լինի՝ մանաւանդ քրիստոնէից և իմաստասիրաց համար, որ ամենևին չհակառակին այն ճամբուն յոր կոչէ զնոսա Աստուած:

Եւ մի թէ կրօնաւորական կենաց յանցանք սեպուած այս բաժանումս յընտանեաց՝ ամուսնութիւնն ալ նոյն բանն ո՞չ գործէ. և կոյսերնին ամուսնացնող ծնողք՝ մասամբ և երբեմն ալ ամբողջապէս ո՞չ կորուսանեն իրենց զաւկին վայելքն՝ երբ հեռու տեղ հարս կը զրկեն զնա. և միթէ մարք իրենց մանչ զաւակն իրենցմէ յափշտակուած ո՞չ համարին՝ երբ օտար աղջկան մի հետ կարգելու համար իրեն ծնողքն կը թողու, և իրենց աղջիկներն կարգելու համար ամեն ջանք առնելէն ետև՝ անմխիթար տրտմութեան մէջ ո՞չ անկանին երբ սոքա իրենց արանց ետևէն կ՛երթան: Եւ սակայն բնութեան կարգ է որ կինն իւր էրկանն ետևէն երթայ, և անմտութիւն լինէր այս բանիս հակառակիլ: Միթէ կարէ՞ ոք ասել թէ այդ ալ անբնական բան է՝ որ այնչափ ցաւոց և արտասուաց պատճառ լինի. բայց աշխարհիս ո՛ր բանին մէջ ցաւ ու արտասուք չկայ թէ մէջն մնաս և թէ անտի ելնես: Ուրեմն այս ամէն բան զգացմունքէ յառաջ կուգայ. և զգացմունքն ալ որչափ պատկառելի են՝ սակայն ոչ երբէք զօրելու են ընդդէմ իրաւանց, օրինաց, արդարութեան և արժանապատուութեան մարդոյ:

Բայց, ասեն, այս օրիորդն ալ կարէր մայր լինել և նոր գերդաստան մի ձևացնել, և հիմա իւր անխոհեմ ուխտերովն իւր կնութեան նկարագրէն կը հրաժարի. և ինքզինքն ամուսնոյ և մօր օրինաւոր սիրելութենէն կը զրկէ՝ որ աշխարհիս մէջ ամենէն աւելի քաղցր ուրախութիւնն է: Սակայն այս ալ ճշմարիտ է որ եթէ այդ աղջիկն ամուսնանալու յարմարութիւն և յօժարութիւն ունէր՝ մի վախէք այր մի կը դտնէր՝ վանք ոչ բնտռէր. իսկ չէ, եթէ այս իղձս չունի, և իւր բոլոր սէրն աւելի երկնից կ'ուզէ նուիրել, և աւելի Աստուծոյ հետ միանալ քան թէ մարդու, իրեն համար չսիրածէն ետ մնալն զրկանք մի չէ, այլ ընդ հակառակն կրօնաւորական ուխտիւ իր սրտին ցանկութեանն կը հասնի:

Դարձեալ ով ասել է թէ աշխարհիս վրայ կին մարդն ուրիշ բանի համար եղած չէ՝ բայց եթէ զաւակ բերելու համար. և մի թէ մեք ալ հեթանոսաց և հրէից կարծիքէն եմք թէ կնոջ համար ամօթ է զաւակ չունելն: Քրիստոնէութիւնն այսպէս ոչ մտածէ, որովհետև կուսութիւնն քան զմայրութիւն գերազանց կը համարի, և կրօնաւորական կեանքն՝ որ բոլորովին Աստուծոյ և ընկերին ծառայութեան նուիրուած է՝ կատարելագոյն վիճակ կը սեպէ: Մեր նախահարքն իրենց անկմանէն յառաջ՝ դրախտին մէջ բազմանալոց էին՝ որովհետև իրենց ասացաւ. Աճեցէք և բազմացարուք: Բայց անտարակոյս այն ատենուան բազմանալն՝ այս աւուր պէս պիտի չլիներ, որոյ այժմեան կերպն յայտնապէս մեղաց հետևանք է, որովհետև այն ատենէն 'ի վեր ցաւօք և հեծութեամբ լինի: Եւ բաց աստի՝ թէ և աստուածային խօսքով և զօրութեամբ Խորհրդոյն ամուսնութիւնն վաւերացած է՝ սակայն դարձեալ սկզբնական մեղաց փոխանցութեան անցքն է. այնպէս որ այս ճամբով յաշխարհս հասնող ամեն հոգի

անօրէնութեամբ աղտոտած է և յաւիտենական մահուան դատապարտուած. «Անօրէնութեամբ յղացայ և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ, ասէ Սաղմոսերգուն: Հոս ալ խորհուրդ մի կայ՝ որոյ խորն չեմ կարող հիմա իջնել. սակայն անտի կը հետևի՝ որ քրիստոնէական հաւատոց առջին՝ սկզբնական մեղքէն ետև եղած ամուսնութիւնն՝ նոյն իսկ այն մեղաց պատճառաւ՝ շատ ստորնագոյն է՝ քան ինչ որ էր առն և կնոջ միաւորութիւնն անմեղութեան վիճակին մէջ, որով նմանապէս անտի յառաջ եկած աճումն ալ: Ապա իմս ալ խելքս կը հասնի որ քրիստոնեայ կոյս մի՝ որոյ հոգւոյն վրայ կը տիրէ այս կերպ տեսութիւնս և զգայութիւնս 'ի հաւատոց ներշնչեալ, ընդդիմութիւն մի ունենայ ամուսնական կենաց՝ որոյ ուրախութեան և վշտաց մեծագոյն մասն 'ի մարմնոյ յառաջ կուգայ. և գերազանց սեպէ երկնային հրեշտակաց կեանքն՝ որ ոչ ամուսնանան:

Ուխտք կրօնաւորութեան (շարայարութիւն)

8 Յունիս:

Բացարձակ ժուժկալութեան ուխտին դէմ այս ալ մեղադրեցինք՝ իբր թէ ընկերութեան կործանման պատճառ է, որովհետև մարդկային ազգի բազմանալն կ'արգելու: Անտարակոյս եթէ ազգ մի բովանդակ արք և կանայք ողջախոհութիւն ուխտէին՝ սակաւ ժամանակի մէջ այն ազգն կը հատնէր. բայց ապահով եղէք որ ազգի մի ջնջիլն յայս երեսաց պիտի չլինի. վասն զի ժողովրդեան մեծագոյն մասն այս ճամբուս ոչ հետևի: Մարմնոյ պայմաններէն գեր 'ի վեր անցնող հոգևոր մարդիկ միշտ սակաւաւոր են, և

այս կողմանէ աշխարհիս համար վտանգ մի ոչ տեսա-
նեմ մեր օրերս: Ինչպէս երբեմն հռովմայեցւոց
պետութեան ժամանակ՝ այսպէս ալ մեր օրերս ա-
մուսնութիւնն արգիլողն՝ ժուժկալ ապրելու փա-
փաքն չէ, այլ ընդհակառակն իր կրքերն աւելի հա-
մարձակ գոհացնելու իղձն է: Ամուսնութիւնն ծան-
րաբեռնող պատճառաց մին ալ կանանց ճոխասի-
րութիւնն է՝ որ երթալով աճելու վրայ է, որք որ
և իցէ օժտով ոչ բաւականան. դարձեալ արանց
համար այն դիւրութիւնն որ ունին՝ ընտանեկան
կեանքէ դուրս զեղխ ընկերութեանց մէջ առանց
սրտհատնումի դտնելու զայն ամենայն զոր ցոփու-
թիւնն և մեղկութիւնն կը փնտռեն իրենց հաճոյքն
կատարելու համար. այնպէս որ արք այսօր տուն
տեղ չունին, և ունելու ալ հոգ ոչ առնեն: Աստի է
ահա այն ամուրեաց բազմութիւնն՝ որ անտարա-
կոյս ողջախոհութիւն ինչ ասել է ոչ գիտեն:

Իսկ աղջկունք՝ որ կարգուելու փափաք ալ ունենա-
լով՝ տունն կը մնան, շատ աւելի ցաւալի է իրենց վի-
ճակն, և ինձ կ'երևի թէ մեր այժմեան ընկերութիւնն
ամեն բանէ աւելի՝ այս կողմանէս մեղադրութեան ար-
ժանի է՝ որ իր օրէնքովն ու սովորութիւններով այս-
չափ դժուարացուցած է զամուսնութիւնն: Յայտնի
է որ աղջկանց շատերուն կարգուիլ չկարելուն պատ-
ճառն՝ օժիտ չունելն է. և եթէ կինն պաշտատա-
կանով (թրախոմա) զայրն գնելու տեղ՝ այրն զկինն
գնէր՝ աղքատ աղջկանց համար այր դտնելն դժուար
ոչ լինէր: Եւ այն ատեն կինն իւր բարեմասնու-
թեանց համար կ'առնուէր՝ ոչ թէ իր ստակին համար.
կինն ալ իւր բերած հարստութեամբն հպարտա-
ցած՝ երկան վրայ այլ ոչ ճոխանար, այլ աւելի հպա-
տակ լինէր նմա և իւր ախորժից մէջ ալ աւելի չա-
փաւոր և համեստ. և իւր ընդասուն առաքինու-
թիւններովն և աչալուրջ տնտեսութեամբն՝ կը ջա-

նար իւր անձին և վիճակին համար եղած ծախքն
փոխարինելու:

Արդ հիմա կը հարցանեմ ինչ լինին այսօր այն
ամեն աղջկունք որ ամուսնանալու միջոց չունին:
Բնութիւնն զիրենք հոն կը մղէ, իրենք ալ պէտք
փափաք նաև երբեմն եռանդ ու կիրք ալ ունին կար-
գուելու, և ընկերութիւնն կամ թէ աշխարհ իրենց
ձեռք չտար որ կարգուին: Եթէ արտաքոյ օրինաց
բնութեան հետևին՝ զգայութեանց և սրտի շարժ-
մանց բռնութենէն քշուած տարուելով՝ առանց ի-
րենց յօժարութիւնն վաւերացնելու կամ օրինա-
ւոր կերպով կատարելու՝ Աստուծոյ երեսէն անկա-
նին, մարդկանց առջև ալ պատիւնին կորուսանեն:
Եթէ ժուժկալութիւնն յիրաւի հակաբնական է,
ինչպէս ասեն, ահա այս պարագայիս մէջ ընկերու-
թիւնն է որ կը ստիպէ բնութեան հակառակ վիճակ
մի բռնելու, և այսպէս այն մեղադրութիւնն որ վա-
նաց համար առնեն՝ նոյնն կը ճշմարտի նաև աշխարհի
մէջ ապրող բռնադատեալ ամուսնեաց վրայ: Մի թէ
աստի այս հետևութիւնս ոչ ելանէ թէ ուրեմն
հարկ է կրօնաւորական տուներն կամ մենաստան-
ներն յակաստանի պահել և պաշտպանել՝ ուր որ
աշխարհի կենաց ախորժ չունեցող կուսանք սիրով
յանձն կ'առնուն երկնային կենօք ապրիլ՝ ինչպէս որ
իրենք կը հաւատան: Մանաւանդ թէ նոցա պահ-
պանութեանն համար խնամքով աշխատելու է՝ որ-
պէս օթևանս և ապաւէնս բարեպաշտութեան և ա-
ռաքինութեան վասն այնոցիկ՝ որք աշխարհիս մէջ
իրենց համար յարմար վիճակ մի չգտնելով, և յան-
կարգ կենաց ալ խորշելով՝ գլուխնին քաշելու տեղ
մի կը բնտռեն, ուր որ բարեպաշտ և բարեկարգ
կեանք մի զիրենք ազատէ յանպատուութենէն և 'ի
կորստական ճանապարհէ՝ զբաղելով միանգամայն
'ի բարեգործութիւնս յօգուտ ընկերին:

Այս նիւթոյս վրայ առարկութեանց մին ալ այս է. Արդեօք ժուժկալ կեանք անցընելու համար ուխտիւ ինքզինք պարտաւորելն՝ այնպիսի խոստմունք մի չէ՞ զոր ըստ բնական ուժոյ չկարէ ոք պահել, և վտանգ չկա՞յ 'ի փորձութենէ յաղթահարուելու և անկանելու: Անտարակոյս այս վտանգս հոս ալ կայ՝ ինչպէս այն ամենայն պարագայից մէջ՝ որ մարդ խոստմունք մի առնէ կամ ինքզինք բանի մի կը պարտաւորէ: Բայց այս ուրիշ բան ոչ ցուցանէ՝ բայց եթէ այս որ պէտք է պատերազմիլ և զգուշանալ իւր խոստման վրայ հաստատ մնալու, և թէ ո՛վ որ զանցառութիւն առնէ՝ արդարութեան և խղճի դէմ կը մեղանչէ: Կին մի որ բացարձակապէս իւր էրկանն տուած է զինքն՝ մի թէ անվտանգ կարէ՞ լինել որ ուրիշ մի զինքն գլխէ չհանէ. և միթէ ամուսնութեան սահմանագրութիւնն կարե՞մք մերժել՝ ասելով թէ շնութեամբ կարէ եղծանիլ: Զար գործելն միշտ կարելի է՝ մարդուս ազատութեան և տկարութեան պատճառաւ: Մի թէ ամենևին խօսք մի ո՞չ տաս մարդու՝ վախնալով որ խօսքիդ վրայ չկենաս, և օրինաւոր իրաց գործածութիւնն կարե՞մք արդիլել՝ մըտքերնիս դնելով որ 'ի չարն գործածելն կարելի է:

Անտարակոյս կուսանաց մէջ ալ գայթակղութիւններ կարեն պատահիլ՝ որպէս և 'ի մէջ քահանայից. Լուտեր աւգոստինեան միանձն էր՝ երբ իր ուխտից դրժելով՝ իւր ուխտադրժութեանն հետևցուց կուսան մի՝ զնա իրեն կին առնլով, և իւր ոճիրն աւելի ծանրացուց՝ զայն արդարացնելու համար նոր վարդապետութիւն մի հնարելով: Աւետարանն գալու գայթակղութիւններն գուշակած է՝ որովհետև Քրիստոս տեղ մի ասէ թէ պիտի գան, սակայն այս ալ կ'աւելցնէ. « Վա՛յ մարդոյն յոյր ձեռն գայցէ »: Ուրեմն այս ցաւալի անկումներս ուրիշ բան ոչ ցուցանեն բայց եթէ անկողներուն տկարութիւնն

ու անօրէնութիւնն, և 'ի հակառակէն օրինաց գերազանց բարոյականն՝ զոր նոքա առ ոտս հարկանեն, որովհետև նոյն իսկ աշխարհքս նոցա վրայ կը գայթակղի: Մի թէ չկա՞ն թագաւորք բռնաւորք, պաշտօնակալք անհաւատարիմք, համարակալք զօշաքաղք, դատաւորք անիրաւք և կաշառակուրծք, զօրականք մատնիչք և վաճառականք գողք. և այս բաներէս կը հետևի՞ թէ ուրեմն թագաւորութիւնն, կառավարութիւնն, տնտեսութիւնն հասարակաց, դատաւորութիւնն, զինուորութիւնն և վաճառականութիւնն չար բաներ են: Տարակոյս չկայ որ գայթակղութիւնն աւելի մեծ լինի հոն՝ ուր որ աւելի առաքինութիւն և բարի օրինակ տեսնել կը սպասեն մարդիկ: Բայց հոն ալ ինչպէս ամեն տեղ՝ խեղճ մարդկութիւնն իւր թշուառութեամբքն կը գտուի, և ազատութիւնն առ չարն կամ առ բարին դառնալու ազատ կարողութեամբ:

Եւ որովհետև խօսքիս մէջ զքահանայս ալ յիշեցի, և նոցա ամուրի կեանքն ալ պարսաւեցի՝ կ'ուզեմ սակաւ մի այս նիւթոյս վրայ ալ խօսիլ՝ որոյ վրայ այնչափ վէճ լինի աշխարհիս մէջ՝ առանց իրարու խօսքն հասկանալու: Ինչ որ կրօնաւորական կենաց համար ասացաք՝ նոյնն բանն է նաև քահանայից համար ալ. վասն զի քահանայն ալ մեծ աստիճաններն առնլով՝ բացարձակ ժուժկալ ապրելու կը պարտաւորի: Գիտեմ որ այս բանս միշտ այսպէս եղած չէ, և Եկեղեցւոյ առաջին դարերուն մէջ քահանայից ամուսնանալն թոյլ տրուած էր, ինչպէս նաև հիմա ալ յունական եկեղեցին թոյլ կուտայ, և նոյն իսկ կաթողիկէ Եկեղեցին միացեալ յունաց համար: Այս օրագիրս միայն ինձ համար գրելուս՝ ոչ կամիմ այս նիւթոյս վրայ հմտաբար խօսիլ. այլ իմաստասիրաբար միայն կ'ուզեմ զիրն նկատել՝ քահանայն այն գաղափարով տեսնելով՝ որ-

պէս կը ներկայացնէ զայն յանձին իւրում Քրիստոս. ուստի կ'ենթադրեմ զնա որպէս Այր Աստուծոյ կարգեալ 'ի ծառայութիւն հոգւոց՝ որոց աստուածային կեանքն փոխանցելու և այս կենաց սնունդն տալու պաշտօնն ու առաքելութիւնն ունի: Արդ կը հարցանեմ, թէ այս հոգւոց հոգևոր հայրն՝ որ իրաւամբ այս անունս իրեն կը տրուի՝ որովհետև նոցա կեանք և սնունդ կուտայ, պէտք չէ՞ որ ըստ կարի անջատեալ լիցի 'ի մարմնոյ և 'ի ցանկութեանց նորա: Իմաստասէրք և քրիստոնեայք ամենքս ալ կը միաբանիմք՝ թէ արդի մարդուս մէջ հոգին մարմնոյ դէմ և մարմինն հոգւոյ դէմ միշտ կռուի մէջ է, և իրենց զարգացումն խստոր համեմատութեամբ կը յաւելու: Իսկ արդ ամուսնութիւնն՝ որչափ ալ վաւեր է, սակայն ըստ կարգի բնութեան՝ մարմնոյ գործ մի է, և իր ամեն հետևանքն փոքր 'ի շատէ զմարդ աշխարհային իրաց կը քաշէ կը տանի՝ իր հաստատած գերդաստանին պատճառաւ: Ապա ամուսնացեալ քահանայն միանգամայն պէտք է որ լինի հայր ըստ մարմնոյ և հայր ըստ հոգւոյ. կամ այլապէս այրն Աստուծոյ պիտի լինի այր կնոջ, և իւր սրտին մէջ իւր որդւոց համար ունեցած բնական սէրն պէտք է միանայ իւր հօտին ունեցած սիրոյն հետ. իսկ արդ այս բանս կարելի՞ է. իւր ընտանեաց սիրոմն լեցուած սիրտ ունեցող մարդ մի՝ կարէ՞ ինքզինք բոլորովին Աստուծոյ և իւր նմանեաց զոհել անսահման և մինչև ցմահ նուիրմամբ: Ո՛չ, այս բանս անկարելի է, որչափ ալ առաքինի մարդ լինի. մանաւանդ թէ պէտք չէ ալ որ լինի, որովհետև իբրև այր և իբրև հայր՝ ինքզինքն նախ իր կնոջն պարական է՝ որ առանձինն իրաւունք ունի նորա վրայ, և երկրորդ իւր որդւոց որ 'ի նմանէ կախումն ունին, որպէս արդիւնք 'ի պատճառէ:

Ուստի հանրական հիւանդութեանց, ժանտախտի

և հասարակաց թշուառութեան ժամանակ, նաև աղքատաց ողորմութիւն բաժնուած ատեն՝ պէտք է որ իւր անձն և ունեցածն իրեններուն համար պահէ. որով գրեթէ իրեն արդելուած է լինել հովիւ քաջ որ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց. որովհետև իւր կեանքն ու կարողութիւններն, ոյժն և ստացուածքն ամենէն յառաջ իրեններուն և իր ընտանեաց պահելու պարտական է: Այս բանս շատ բացայայտ է, և կը հասկանամ թէ ինչու քահանայական կատարելութեան գերազանց դաղափարին հասնելու համար՝ կաթողիկէ Եկեղեցին սեղանոյ պաշտօնէին վրայ պարտք կը դնէ ողջախոհութիւնն ամուրի կենօք: Իսկ թէ 'ի սկզբան այսպէս եղած չէ՝ այսոր ալ պատճառն յայտնի է. վասն զի յանկարծ կատարելագոյն աստիճանն ելնել ոչ լինի, այլ աստիճանաբար. բայց հարկ էր վերջապէս հոն հասնել հովուական պաշտօնին գերազանցութեան և վսեմութեան յառաջադիմութեամբն ու զարգացմամբ:

Թող զայն որ Քրիստոս ալ չամուսնացաւ, և իւր աշակերտաց ալ ասաց. «Են որ զանձինս իւրեանց տրարին՝ ներքինիս վասն արքայութեան երկնից». ուստի քահանայն ալ այս սակաւաւորաց դասէն լինելու է. որովհետև քան զայլս աւելի աշակերտ է իւր վարդապետին, և յամենայնի այնոր նմանելով և հետևելով լինի լաւագոյն: Մեք իմաստասէրքս՝ որ ողջախոհութեան ուխտ ոչ առնեմք, և շատ անգամ պէտք եղածէն ալ աւելի երկրաքարշ մարդիկ եմք, եթէ Պլատոնի հետ ուզեմք 'ի բարձունս վերանալ և զյաւիտենական ճշմարտութիւնս և զպարզ դաղափարս խորհել՝ ամենօրեայ փորձով ալ քաջ կը տեսնեմք թէ որչափ նիւթական իրաց և նոյն իսկ կարևորաց գործածութիւնն՝ մեր ոգին կը ծանրացընեն, խորհրդոց գործածութեան արդելք լինին, և

անբարեխառնութիւնն մեր սրամտութիւնն կը բը-
թացնէ ու բարձրանալուն արգելք լինի: Եւ սա-
կայն մեք ուրիշ բան չեմք՝ բայց եթէ դիտունք և
ուսումնականք և հայեցողականք, և մեր վիճակէն
պարտաւոր չեմք մեր նմանեաց օրինակ լինելու ամե-
նայն առաքինութեանց: Պիւթագորաս՝ որ կ'երևի
թէ խորախորհուրդ իմաստասէր մի էր և զգործնա-
կանն 'ի տեսողականէն ոչ որոշէր՝ իրեն աշակերտաց
պարտք կը դնէր շատ տարիներ առանձնակեաց,
մտախոհ, բարեխառն և ժուժկալ կեանք մի անցը-
նելու. որովհետև համոզեալ էր թէ ոգին բարձրա-
ցնելու և մտաց թև տալու համար՝ մարմինն ու
զգայութիւնները ճնշելու էր: Կարծեմ մէջերնիս
ոչ ոք զինքն այս բանիս համար կը պարսաւէ՝ թէ և
մտքերնէս անգամ ոչ անցանէ իր օրինակին հետևիլ:
Եւ սակայն մեծ քան զՊիւթագոր է աստ և քան
զիւր դպրոցն. վասն զի Քրիստոսի վարդապետու-
թիւնն գերազանցագոյն պայծառագոյն և հզօրա-
գոյն է քան զնա, որպէս աշխարհիս վրայ գործած
յեղափոխութենէն յայտնի է: Մի թէ քահանայք
պաշտօնեայք Աւետարանին՝ որ յերկնից կ'ընդունին
ասեն, իրենց կնիքն և առաքելութիւնն, նուազա-
գոյն ինչ առնելու են հոգիներն փրկելու համար՝
քան զպիւթագորեանս ճշմարտութեան խորհրդա-
զգաց լինելու համար: Ուրեմն ինչո՞ւ աշխարհք միոյն
վրայ կը պարսաւէ զայն ինչ՝ զոր 'ի միւսումն կը
գովէ և կը հրաշանայ: Ա՛հ. այսոր համար որ Պիւ-
թագոր և իր դպրոցն մեռաւ, իսկ Յիսուս և իւր
Եկեղեցին կենդանի են և թագաւորեն 'ի միջի մե-
րում և նեղեն զմեզ:

Խօսակցութիւն ընդ կարմեղական կուսանի

9 Յունիս:

Բայց գոնէ այդ դժբաղդ աղջիկն Քոյր գթու-
թեան ուղէր լինել՝ հիւանդներն դարմանելու, աղ-
քատներն հոգալու և ժողովրդեան տղայքն կրթե-
լու համար, այն ատեն մեք իմաստասէրքս ալ գթու-
թեամբ կը նայէինք իր վրայ, և հայրն ալ աւելի դիւ-
րաւ կը հաւանէր՝ որովհետև այնու գոնէ ընկերու-
թեան օգտակար ծառայութիւն մի մատուցած լինէր.
և բոլոր աշխարհք ալ այս նուիրմանս վրայ կը զար-
մանայ՝ որովհետև աշխարհիս մէջ սակաւ կը տես-
նուի, և անհատնում պտուղներ յառաջ կը բերէ. և
ոչ միայն զիրենք նուիրողներուն փրկարար է, այլ
և ժողովրդեան երջանկութեանն և լաւանալուն ալ
մեծապէս ձեռնտու: Այսոր համար է որ Քորք գը-
թութեան և Եղբարք քրիստոնէական վարդապե-
տութեան ասացեալ միաբանութիւնք շատ ընդու-
նելի են այսօր յաշխարհի. վասն զի մարդասիրական
ընկերութիւններն որ այնչափ եռանդեամբ և մանա-
ւանդ չափազանց աղաղակաւ ու փող հարկանելով
մարդկան ստորնագոյն աստիճաններն լաւացնելու
կ'աշխատին՝ իրենց օժանդակ կը դտնեն այն բարի ան-
ձինքն՝ որ առանց մարդկային վարձուց ակնկալու-
թեան՝ իրենք զիրենք այս ծառայութեանս կը նուի-
րեն. և իրաւունք ալ ունին զնոսա իրենց գործակից
ընտրելու, որովհետև միայն կաթողիկէ Եկեղեցւոյ
մէջ կարեն գտանել այնպիսի անձնանուէր մարդիկ:
Գոնէ իմ խեղճ բարեկամս ալ այս մխիթարութիւնս
ունենար՝ որ իր զաւակն ալ գործակից լինի ընկե-
րութեան լաւանալուն, և կարէր պարծիլ թէ իր
գերդաստանին մէջ ալ կայ այս տեսակ դիւցազն մի:

Բայց եկ տես որ իրն այսպէս չէ, այլ աղջիկն կ'ուզէ կարմեղական լինել. կարմեղակա՞ն... Հարցի տեղեկացայ թէ ինչ է կարմեղական ասացեալն. բարձր պատերով պատեալ տան մի մէջ փակուած քանի մի համամիտ կանայք են եղել՝ որ խստակրօն կանոնի մի ներքև կ'ապրին՝ անդադար մեռուցման մէջ, և գրեթէ օրն 'ի բուն և գիշերուան մի մասն ալ աղօթից հետ անցուցանելով, հաստ ցփսի հագած, կերակուրնին չմեռնելու չափ, և ամենևին մարդու երես չտեսնելով: Վասն զի զիրենք տեսնելու համար... մեղա՛յ, իրենց հետ խօսելու համար՝ կրկին սև վարագուրներ քաշուած պատուհանէ մի խօսելու է՝ որով զիրենք ոչ տեսանես, այլ կարծես թէ ուրուականներու հետ կը խօսակցիս: Բոլոր կեանքերնին այս բանտիս մէջ կ'անցուցանեն, և վանքէն դուրս գրեթէ ոտք չեն կոխեր. կամ թէ ասեմ ամեն օր մեռանին՝ մինչև որ մահուամբ հոգին վանքն թողու երթայ՝ մարմինն հոն ձգելով:

Սարսափելի բան չէ՞ այս՝ որ ծաղկահասակ աղջիկ մի՝ գեղեցիկ հանճարեղ շնորհալից ուսեալ երբեմն նաև հարուստ՝ որ ընկերութեան մէջ փայլելու ամեն միջոցներն ունի և կարէ երջանիկ լինել, և պատշաճ ամուսնութեամբ ալ զայն գեղեցկացնել, և նորակերտ գերդաստանի մի երանութիւն ու փառք լինել՝ երթայ թաղէ այս ամեն բանս վաղահաս գերեզմանի մի մէջ, խաւարի մէջ թողուած ծաղկի մի պէս կամ գրուանի ներքև գրուած ճրագի պէս, առանց մարդու մի օգուտն տեսնուելու՝ բայց եթէ իրեն անձին՝ ինչպէս որ ինքն կը կարծէ, և նոցա որոց համար աղօթելով այս նեղութիւններս և չարակրութիւններս կը կրէ՝ ինչպէս որ ինքն կ'երևակայէ: Ահա մեր աղջիկն ալ այս բանիս համոզուած է, և այնպիսի համոզումն՝ որ բոլոր զինքն նուիրելու պատրաստ է:

Բայց ինքն միայն չէ այսպէս մտածողն. վասն զի ա-

մեն դին բնտռելով հարցնելով՝ ես որ առաջ ամենևին այսոր վրայ չէի մտածած՝ հասկացայ որ շատ երկիրներու մէջ ալ կարմեղականաց կարգն կը հաստատուի եղել՝ իրենց նախկին կանոններովն և վանական սահմանադրութիւններովն՝ որ առաջին Յեղափոխութեան ժամանակ ջնջուած էին: Այնպէս որ սոյն իսկ այս իննևտասներորդ դարուս մէջ՝ որ միշտ աղատութեան վրայ կը խօսուի, և մարդիկ այնչափ եռանդն ունին անկախութեան՝ որ հաղիւ օրինաց լուծն կարեն կրել և որ և իցէ բարեկարգութիւն իրենց ծանր կուգայ, այսպիսի ժամանակի մի մէջ՝ ուր անձնասիրութիւնն ամեն բանի կը տիրապետէ, և իշխանութեան և հարստութեան ծարաւն որ նորա գործիքն է՝ ամենուն սիրտն կը բորբոքէ, և որ և է կերպով և միջոցով այնոց հասնելու կը ջանայ, տակաւին կը գտուին եղել այնպիսի հոգիներ որ Քրիստոսի և Եկեղեցւոյ խօսից հաւտալով և յաւիտենական երանութեան յուսալով, և ամենէն աւելի Աստուծոյ սէրն ունելով իրենց սիրտն՝ հետամուտ լինին եղել բնտռելու զհնազանդութիւն քան թէ զիշխանութիւն, զաղքատութիւն քան զմեծութիւն, և զմահացումն մարմնոյ քան թէ այնոր վայելքն:

Ապա ուրեմն քրիստոնէական ոգին դեռ ողջ է եղել մեր մէջ՝ իւր բոլոր բորբոքեալ եռանդովն և թափովն և ուժով. որովհետև վերջապէս այս վանքերու մէջ փակուած կանայք՝ յորոց շատերն ալ ընկերութեամբ բարձրագոյն դասերէն են կիրթ և ուսեալ, և իրենց ժամանակակցաց հաւասար խելացի, և աշխարհիս մէջ փայլող կանանցմէ պակաս չէ իրենց հանճարն, կամովին կ'ընտրեն այս տեսակ կեանքս՝ որ բնութիւնն կը գողացնէ, և այնոր մէջ կը հանապազորդեն ամեն բանէ զրկուած, և իրենք զիրենք երջանիկ ալ կը համարին՝ յանշուք մթութեան անդ վանաց՝ զոր բնաւ ոչ կ'ուզեն թողուլ և լքանել:

Կը խոստովանիմ որ այս բանս ինչպէս լինի ոչ հասկանամ. ոմանք ասեն թէ այս բանս գլուխնին տաքնալէն առաջ կուգայ. ուրիշներն ալ թէ շլացումն կամ պատրանք ինչ է մտաց, և թէ այս ալ տեսակ մի խելաբախութիւն է՝ որ բոլոր կեանքերնին կ'ուզեն ծախել սպառել մթութեան անգործութեան ունայնութեան մէջ՝ բնութեան օրինաց և բանի թելադրութեան հակառակ: Բայց հոգիք կանանց դատարկ և անգործ չեն կարող մնալ. միշտ պէտք է որ բան մի սիրեն, ուստի սա կանայք ալ պէտք է որ սիրածնին սիրեն, և եռանդեամբ ալ սիրեն, որովհետև բոլոր իրենց գոյութիւնն այնոր կը նուիրեն: Ինչ է ուրեմն իրենց այսչափ եռանդեամբ սիրածն այն միայնութեան մէջ. աշխարհային իրեր չեն որովհետև յամենայնէ հրաժարեալ են, ապա ուրեմն անդիի աշխարհի իր մի կը փափաքի իրենց սիրան՝ որոյ անշուշտ տպաւորութիւններն և ուրախութիւններն այժմէն կ'ընդունին՝ աշխարհիս զուարճութիւններէն հրաժարելնուն համեմատ: Դարձեալ եթէ բախածութիւն մի լինէր այս՝ կանայք եւեթ այնու վարակեալ պիտի լինէին, բայց եկ տես որ շատ արք ալ կան նոյն յիմարութենէն բռնուած. կարդուսեանք, տրապեանք, կարմեղական միանձունք և այլք աշխարհիս մէջ լեցուն են՝ որ մենաստաններու մէջ փակուած՝ իրենք զիրենք բոլորովին լռութեան մահացման և աղօթից տուած են: — Եւ անկարելի է որ այսպիսի անշահասէր և բարձրակատար առաքինութեանց տէր մարդիկ, կամ գոնէ իրենք իրենց վրայ այսչափ ոյժ և տիրութիւն ունեցող մարդիկ խենթ կամ բախած լիցին: Այսչափ ծանր որոշողութիւն մի առնելու համար՝ զօրաւոր պատճառ մի պէտք է, որ իրենց ոյժ կուտայ անձերնին նուիրելու՝ ոչ թէ վաղանցիկ գործով՝ որ գլխի բռնկածութենէ յառաջ կուգայ, այլ բոլոր կեանքերնին նուիրելով, և այն ալ

անկեղծաբար՝ որովհետև զիրենք այս բանէս արգիլելու համար ալ մեծ բռնութիւն բանեցնելու է:

Այս հոգեխօսական խնդիրս լուծելու հետաքրքրութեամբ՝ որոյ վրայ մինչև ցայժմ մտածած չէի, և սիրտս հանգստացնելու համար՝ միաքս դրի որ բուն աղբիւրին դիմեմ, և ստոյգ տեղեկութիւնն անտի ընդունիմ. և պատրուակաւ՝ որպէս թէ ծանօթ աղգականաց տեղեկութիւն կ'ուզէի տալ կարմեղականաց կենաց վրայօք, որովհետև աղջիկնին կոչում ունել կը ցուցանէր այն կրօնքին, որ իրաւ ալ էր, կուսաստանին աբբասուհիէն ունկնդրութիւն մի խնդրեցի, և մեր խօսակցութեան համառօտութիւնն գրեթէ այս է՝ ինչ որ պիտի գրեմ:

Նախ պէտք է խոստովանիմ որ խօսարանին երկաթեայ վանդակապատ պատուհանն՝ կարգէ դուրս տխուր ազդեցութիւն մի արար իմ վրաս, որով այն տեղն բանտի կը նմանէր. և մանաւանդ այն սև վարագոյրն՝ որ խօսակցիս կերպարանքն յինէն ծածկելով՝ միայն իր ձայնն յականջս կը հասնէր՝ առանց աչքերնիս զիրար տեսնելու և մեզ օգնելու որ իրարու խօսքն հասկանամք: Այս արծաթի հնչեղ ձայնն որ մթութեան մէջէն կը լսուէր՝ առջի բերան ինձ մեռելոյ ձայնի մի պէս եկաւ՝ որ գերեզմանին խորէն ինձ հետ կը խօսէր: Սակայն ես այս մահագուշակ երևակայութեանս տեղիք չտուի, մանաւանդ թէ սակաւ մի ատեն անցնելէն ետև՝ այս կանացի վճիտ ձայնն՝ որ ստուերաց մէջէն կը խօսէր՝ ախորժ կուգար ինձ, քաղցր և միանդամայն հաստատուն, և իմ հարցմանցս սիրողաբար կը պատասխանէր. ուստի այս խորհրդաւոր նորութիւնս ինձ անհաճոյ ոչ դայ:

« Սիրելի մայր, ասացի, որովհետև այս անունս կը տրուի իրեն, վստահութեամբ կուգամ ձեր կրօնից վրայ տեղեկութիւններ հարցնելու՝ իրեն վախճանին բարեկարգութեանն և անցուցած կեանքերնուդ վրայ.

չկարծէք թէ պարզ հետաքրքրութիւն մի է այս գործածս, ոչ. այլ կ'ուզեմ խեղճ անմխիթար հօր մի սիրտն մխիթարել և լուսաւորել որոյ զաւակին կ'ուզէ ձեր կրօնքն մանել. թերևս ձեր ասելիքն՝ նորա միտքն որոշէ իւր հաւանութիւնն տալոյ՝ զոր մինչև հիմա չուզեր տալ»:

Աբբասուհին պարզ կերպով պատասխանեց. «Տէր իմ, մեք խեղճ աղջիկներ եմք՝ որ զԱստուած քան զաշխարհս աւելի կը սիրեմք, և բոլորովին իրեն և ընկերաց ծառայութեան նուիրուելու համար՝ մենաստանիս մէջ կ'ապրիմք հնազանդութեամբ աղքատութեամբ և աղջախնդութեամբ, մարդէ բան մի չուզելով, և ինչ որ տան չնորհակալութեամբ ընդունելով»:

«Մայր իմ, Աստուծոյ ծառայութեան համար ասացածդ կը հասկանամ, որովհետև ձեր ժամանակին մեծ մասն աղօթքով կ'անցուցանէք. բայց ոչ գիտեմ թէ ընկերին ծառայութեան համար ինչ առնէք, որովհետև վանքէն դուրս ոչ ելլանէք, և ուրիշ կրօնաւորաց պէս հիւանդներ գալմանելու, աղքատներն հոգալու և տղայք կրթելու ոչ զբաղիք»:

«Ընկերին օգուտ առնելոյ՝ շատ կերպեր կան, Տէր, և կը վախեմ որ դուք մերին պիտի չըմբռնէք կամ չհասկնաք՝ եթէ քրիստոնեայ հաւատք չունիք և թէ որ ձեզ ծանօթ չէ Աւետարանին ոգին՝ զոր մարդկանց մէջ տարածելու առաքելութիւնն եկեղեցւոյ տրուած է: Ըստ աշխարհի նկատելով կը խոստովանիմ որ մեք գտարկակաց և անմիտ մարդիկ կը համարուիմք, սակայն խղճերնիս կը վկայէ որ երկուքն ալ չեմք»:

«Կը խոստովանիմ, մայր իմ, որ յոյժ բարեխոտ կաթողիկեայներէն չեմ. սակայն կրօնիս ալ թշնամի չեմ: Տղայութեան ատեն ես ալ հաւատք ունէի, և այն ժամանակի կենացս ամենէն աւելի քաղցր յիշատակն առաջին հաղորդութեանս յիշատակն է՝ զոր

չատ լաւ կատարեցի. տակաւին այն ժամանակէն սակաւ մի բան մնացած է սիրտս. գոնէ այնչափ որ ձեր ասելիքն կարեմ հասկանալ:

«Տէր, որովհետև գուք անկելծ կերպով կը խօսիք, ես ալ պէտք է որ նոյն կերպով պատասխանեմ, և պարզաբար զրուցեմ ձեզ թէ մեր ժամանակն ինչ բանի կը գործածեմք, և ինչպէս այնու վատահ եմք մեր նմանեաց օգտակար լինելու՝ եթէ ոչ առաւելաւն իսկ, գոնէ այնչափ՝ որչափ որ ձեր համրած արտաքին գործերով կարելաք օգտակար լինել, որք յիրաւի զարմանալի գործեր են՝ ինչպէս այն ամեն բան որ 'ի սիրոյ յառաջ կուգան, և սակայն մեր կոչումն չէ այնոց զբաղիլն: Տէրն մեր Յիսուս Քրիստոս մեր ալ օրինակն է՝ ինչպէս ուրիշ ամեն կուսանաց. բայց իւրաքանչիւր կրօնք՝ նորա վարուց միոյ մասին յատկապէս նմանելու համար կոչուած է, և այս զանազան նմանութիւններս՝ նոյն ոգւով կենդանացեալ՝ իւրաքանչիւրն իր չափով Փրկչին կեանքն յառաջ կը բերէ եկեղեցւոյ մէջ»:

«Որդին Աստուծոյ որ զմարդիկ փրկելու համար մարդացաւ՝ նոցա մեզայ քաւութիւնն վրան առնելով և փոխանակ նոցա աստուածային արդարութեանն փոխարինելով՝ իւր առաքելութիւնն կատարեց անդադար աղօթելով վասն նոցա՝ զորս իրեն եղբարս կոչելու արժանի համարեցաւ, և մանաւանդ նոցա համար մեռնելով: Բայց մի և նոյն ատենն որ կ'աղօթէր և ինքզինք կը նուիրէր՝ իր երկրաւոր կեանքն ալ ընոսա ուսուցանելու և իրենց հոգւոյն և մարմնոյն ցաւերն բժշկելու և ամենայն կերպով զերծնել մխիթարելու կ'անցնէր: Միաբանութիւններ կան որ նմա կը հետևին գլխաւորապէս սիրոյ արտաքին գործերուն, և իրենց գործած անհուն բարիքն աւելի ամենուն աչքին կը զարնէ՝ որովհետև այնոր արդիւնքն անմիջապէս կը տեսնեն ու կը վայելեն: Իսկ ուրիշ-

ներն՝ ընդ որս և մեք կը փափաքիմք՝ Փրկչին նմանելու իր առաքելութեան ամենէն աւելի կարևոր մասին՝ որ էր տալ զկեանս իւր վասն փրկութեան մեղաւորաց և հեղուլ զարիւն իւր 'ի վերայ խաչին առ 'ի փրկանաւորել զնոսա: Ուստի մեք ալ կը ջանամք չարչարակից լինել Քրիստոսի՝ միանալով ընդ նմա իւր ոգւովն, նախ վասն քաւութեան մեր յատուկ մեղացն, և յետոյ վասն այլոց մեղաւորաց՝ որ Աստուծոյ արդարութեան վրայ ոչ մտածեն, և փոխանակ սոցա մեք զմեզ կը նուիրեմք յողջակէզ:

« Այս է մեր մահացմանց պատճառն՝ զոր աշխարհս անօգուտ կը համարի՝ թերևս և յիմարութիւն. մինչդեռ մեք վստահ եմք որ մեր քաշածովն և զոհիւ՝ մեծ ծառայութիւն առնեմք իրեն, այս միջոցներով մեղաւորաց ոմանց դարձն ընդունելով, և զփրկութիւն բազում հոգւոց: Կը տեսնէք, Տէր, որ մեր գործոյն օգտակարութիւնն ըմբռնելու համար՝ Յիսուսի Քրիստոսի երկրիս վրայ առաքելութեանն հաւատք ունելու է, և իւր աստուածային զոհագործութեանն ազդուութեանն ալ հաւատալու է՝ որ է գին փրկանաւորութեան ազգի մարդկան: Արդ եթէ դուք կը հաւատաք՝ որ ինքն փրկեց զմարդ իւր արիւնն թափելով և խաչին վրայ չարչարուելով՝ ձեզ դիւրին լինի ըմբռնել որ իւր անարժան աղախինքն ալ՝ որ իւր սիրովն ևեթ բան մի կ'արժեն, իրենց փառք և երջանկութիւն կը համարին իւր առաքելութեան կատարման օգնելն՝ լցուցանելով զպակասութիւն չարչարանաց նորա՝ որպէս ասէ Պաւղոս առաքեալ, իրենց քաշածովն, վասն փրկութեան մեր ժամանակի մարդկանց՝ յորոց շատերն զայն ոչ ճանաչեն կամ կը մերժեն:

« Այս վախճանաւ կը ջանամք՝ որչափ տկարութիւնս մեր տանի, երկնային ողջակիզին նմանութեամբն ապրիլ՝ ոչ ունելով ինչ յաշխարհի, և իրեն

պէս աշխարհիս պարսաւն ու արհամարհանքն ընդունելով, և նորա համար աղօթելով և չարչարուելով, որպէս զի որչափ հնար է գործակից լիցուք փրկութեան եղբարց մերոց: Կը տեսնէք, Տէր, որ մեր հաւատոց և ապրելու կերպին մէջ ներքին կապակցութիւն մի կայ, և ուրիշ բան ալ չեմք կարող առնել՝ որովհետև կամիմք անկեղծ աշակերտ և անձնանուէր ծառայք լինել Այնմ՝ որ ետ զկեանս իւր 'ի փրկանս աշխարհի »:

Այս խօսքերս ասելով լռեց, և այնպէս սիրտն ելած խօսեցաւ՝ որ արձագանքն իմ սիրտս ազդեց ու ճմլեց, որովհետև համողմամբ և անկեղծութեամբ կը խօսէր: — Ուստի սակաւ մի ատեն լռելէն ետև ասացի. « Մայր իմ, քոյ հաւատքդ իմ սիրտս կը շարժէ, և թէպէտ դժբաղդաբար այնոր մասնակից չեմ՝ բայց կը հասկանամ: Կը հաւատամ որ գերազանց պատճառներ ունիք այդպէս ապրելու. վասն զի կը ստիպուիմ խոստովանելու որ ձեր կրօնից մէջ անցուցած կեանքն՝ անհրաժեշտ հետևանք է՝ ձեր հաւատոց, այսինքն թէ Քրիստոս կամ Որդին Աստուծոյ մարդացեալ՝ յաշխարհս իջել է և չարչարուելով մեռել է խաչին վրայ վասն փրկութեան աշխարհի: Արդ եթէ նա Որդի է Աստուծոյ և փրկիչ մարդկան՝ իւր աշակերտներն ալ իրեն նմանելէն աւելի լաւագոյն բան մի չեն կարող առնել, և իրենց նմանեաց ուրիշ կերպով չեն կարող այնչափ օգտակար լինել՝ որչափ չարչարուելով և մեռանելով վասն նոցա՝ ըստ օրինակի և ոգւով Փրկչին: Ոչ եթէ այս նուիրումս պարտաւորութիւն լինելուն ամեն քրիստոնէից այս աշխարհիս մէջ, որովհետև ամենքն նոյն կոչումն և նոյն ոյժն չունին՝ այս ցաւալից ճամբովս իրեն ետևէն երթալու. բայց ձեր ասացածովն կը հասկանամ որ վարդապետին աշակերտաց մէջ նոքա որ անմիջապէս իր ետևէն երթալու կոչուած են և գրեթէ իր բարձր

առաքելութեան գործակից ընտրուած էն՝ ոչ միայն անօգուտ և անտեղի բան մի չեն առներ իրեն պէս չարչարուիլ և մեռնիլ ուզելով, այլ ընդ հակառակն իրենց հաւատքովն շատ օգտակար գործ մի առնեն մարդկութեան: Հիմա կ'իմանամ որ կարմեղական լինելու փափաքն ինչ է եղել, և անտարակոյս այժմ իմ բարեկամիս աղջկանն վիճաբանն պիտի լինիմ քան թէ հակառակորդն: Բայց, սիրելի մայր իմ, մեզ նման աստուածային մարդկանց վրայ ալ ներողամիտ լինելու էք, որովհետև հաւատքնիս գաղջ ու մեռած է: Վասն զի մեզ այնչափ անտեղի երևցած կեանքերնուդ սկիզբն ալ այս հաւատոցս մէջ է, և մեք այն հաւատքն չունինք կամ չյիշ սակաւ ունինք, աւաղ եթէ կարէաք մեք մեզ տալ ըսյն...»:

Խօսակցութիւն ընդ կարմեղական կուսանի
(շարայարութիւն)

10 Յունիս:

Երեկ այցելութեան մի պատճառաւ՝ օրագրութեանս ամենէն կարևոր հատուածին հասնելով ընդհատելու սիրտս ալ ընդարձակեց, և կարծես թէ մէջերնիս չուտով ոգւոյ և վստահութեան կենսական հոսանք մի սկսաւ. ես այլայլած էի, բարի կուսանն ալ նոյնպէս կ'երևէր՝ գոնե որչափ կարէի դատել իր դողդոջուն ձայնէն, և լռած առեն ընդհատեալ շնչառութենէն: Ես իմ այլայլութիւնս չկարելով բռնել՝ ուզածէս աւելին զրուցել էի, և սորա ձեռքն զինք ազատել էի որ վրաս սիրէ. նա ալ առիթն ձեռքէն չփախուց. «Իրաւունք ունիք, ասաց, հաւատք ասացածդ մարդ իրմէ էն կարող ունել, բայց զոյն առաքելութեան գործակից ընտրուած էն՝ ոչ միայն անօգուտ և անտեղի բան մի չեն առներ իրեն պէս չարչարուիլ և մեռնիլ ուզելով, այլ ընդ հակառակն իրենց հաւատքովն շատ օգտակար գործ մի առնեն մարդկութեան: Հիմա կ'իմանամ որ կարմեղական լինելու փափաքն ինչ է եղել, և անտարակոյս այժմ իմ բարեկամիս աղջկանն վիճաբանն պիտի լինիմ քան թէ հակառակորդն: Բայց, սիրելի մայր իմ, մեզ նման աստուածային մարդկանց վրայ ալ ներողամիտ լինելու էք, որովհետև հաւատքնիս գաղջ ու մեռած է: Վասն զի մեզ այնչափ անտեղի երևցած կեանքերնուդ սկիզբն ալ այս հաւատոցս մէջ է, և մեք այն հաւատքն չունինք կամ չյիշ սակաւ ունինք, աւաղ եթէ կարէաք մեք մեզ տալ ըսյն...»:

Խօսակցութիւն ընդ կարմեղական կուսանի
(շարայարութիւն)

10 Յունիս:

Երեկ այցելութեան մի պատճառաւ՝ օրագրութեանս ամենէն կարևոր հատուածին հասնելով ընդհատելու սիրտս ալ ընդարձակեց, և կարծես թէ մէջերնիս չուտով ոգւոյ և վստահութեան կենսական հոսանք մի սկսաւ. ես այլայլած էի, բարի կուսանն ալ նոյնպէս կ'երևէր՝ գոնե որչափ կարէի դատել իր դողդոջուն ձայնէն, և լռած առեն ընդհատեալ շնչառութենէն: Ես իմ այլայլութիւնս չկարելով բռնել՝ ուզածէս աւելին զրուցել էի, և սորա ձեռքն զինք ազատել էի որ վրաս սիրէ. նա ալ առիթն ձեռքէն չփախուց. «Իրաւունք ունիք, ասաց, հաւատք ա-

տուողն կարէ ինդրել, և երբ անկեղծութեամբ իրեն դիմէ՝ և հաստատապէս փափաքի այն ընորհքն օգտակարի գործածելու՝ անշուշտ իր ինդիրքն կ'ընդունի: Կ'ուզէք որ միաբանութեան աղօթք ապրեմ այս գիտմանս համար. որովհետև այլոց համար չարչարուիլ և աղօթել՝ մեր գլխաւոր գործերն են ասացի»:

Այս հարցումէս ես ինքնիրենս գալով և չուզելով այս նոր բացուած մանաւոր ճամբուն մէջ աւելի յառաջ երթալ՝ ուր իմ վրաս հասել էր, ընդհանուրի տարի խօսքն ու պատասխանեցի. «Սիրելի մայր, աղէկ միտքս ձգեցիք՝ որ այս բանիս վրայ ալ միտքս գրել էի ձեզ հարցումներ առնելու՝ ոչ թէ ընդհանրապէս աղօթից վրայ՝ որ մեզ համար իմաստասիրական ունայն ինդիր մի է, այլ ձեր աղօթելու կերպին վրայ. վասն զի լսել եմ որ ձեր կարգին մէջ ըրն 'ի բուն կ'աղօթեք եղել. որ ինձ տարօրինակ բան մի կ'երևի՝ մարգկային ակարութիւնն մտածելով, և անդգուտ ևս կը համարիմ աղօթից վախճանն գիտելով. ինձ կ'երևի որ ինքն իսկ Քրիստոս այս նիւթոյս մէջ չատախօսութիւնն այսպանեց, և իւր աշակերտաց կարճ և գոյացական աղօթք մի սորվեցուց՝ որ իւր ծագման պատճառաւ տէրունական և գերազանց աղօթք կոչեցաւ»:

«Իրաւ է, ասէր, որ մեք ժամանակին մեծագոյն մասն աղօթելով կ'անցուցանեմք կամ միաբան կամ առանձինն՝ այն ամենայն հոգւոց համար որ մեզ աղօթք կը յանձնեն, և մանաւանդ նոցա որ կորստեան վտանգի մէջ են: Թէ որ աստ բարիք մ'ալ ոչ լինի՝ որ մեր մտածութենէն շատ հեռի է, սակայն գոնէ ալ կը հաւանիք որ այնու չարիք մ'ալ ոչ լինի ուսմեք: Յարձեալ կը ներէք ինձ ասելու՝ որ մեք ամենքս Աստուածոյ աչաց առջև ապրելով եկեղեցւոյ ուղղութեան ներքև և օրինաց պաշտպանութեան տակ՝ իբրև

ազատ անձինք՝ ուղածնուս պէս կարենք ապրիլ և ժամանակին անցուցանել՝ երբ քաղաքային օրինաց և խղճերնուս դէմ բան մի ոչ առնենք: Արդ մեզ հաճոյ է սահել աղօթել, յորում և գտանենք մեր միխթարութիւնն: Մեք ոչ զրք կը սահմանենք որ մեր հետ միանան, և գիտեմք ալ որ աշխարհք մեր կեանքն միաձայն ձանձրալի և անօգուտ կը համարի, որով հետև ինքն անդադար ալէկոծութեան և զբաղանաց վարժած է, և նորա հաւնիլն կամ չհաւնիլն ալ հոգերնիս չէ. միայն ուղածնիս այս է որ զմեզ մեր միայնութեան մէջ հանգիստ թողու, ուր որ մեր երջանկութիւնն ուրիշ բան չէ՝ բայց եթէ առ. ոտս սեղանոց Աստուծոյ ներկայութեան մէջ ապրիլ:

« Ուստի անդադար աղօթքն՝ որ մեզ այժ և յոյս կուտայ՝ մեզ համար անօգուտ չէ, որովհետև մեր հոգւոյն մէջ երկնային հուրն կ'արծարծէ՝ որով կ'ապրի, և թէ որ անդադար զայն չհովահրեմք չուտով կը մարի:... Մեք ալ վեստեան կուսանք եմք՝ որ եթէ նուիրեալ հուրն թողումք որ չիջանի՝ 'ի մահ կը գտատպարտիմք: Մեր հաւատքն համոզեալ եմք որ աղօթքն զմեզ Աստուծոյ հետ կենդանի յարաբերութեան մէջ կը պահէ, և թէ այս երկնային հաղորդակցութեան երկու ձամբայներով՝ յորոց մին մեր յարգութիւնն ու խնդրուածքն կը հասուցանէ մինչև յաթոռ Ամենակալին, և միւսն մեր վայ կ'իջեցնէ իւր օրհնութիւններն ու շնորհքն, կարենք ընդունիլ այն ամեն բան որ մեզ հարկաւոր է երկրիս վրայ բարեկարգ ապրելու և փրկութիւննիս ստանալու համար: Այսոր համար յիրաւի մեք գրեթէ միշտ այս ձամբուս մէջ կը գտնուիմք, և որչափ կարենք՝ կը ջանամք երկնից հետ յարաբերութիւննիս շատցնելու՝ յորմէ իջանեն ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք: Այս կերպով կը համարիմք թէ մեք ալ մեր շահն լաւ գիտեմք, և

պատուական շահ՝ ոչ ոսկւոյ և արծաթոյ՝ այլ հազար անգամ աւելի հաստատուն բարեաց, որովհետև անեղծ և յաւիտենական են:

« Սակայն աղօթիւք միայն մեք մեզ օգտակար լինել ոչ կամիմք, այլ և ամենայն եղբարց մերոց, և մանաւանդ նոցա որ ոչ աղօթեն. մի թէ կարե՞ն իրենք այս բանիս վրայ տհաճիլ՝ որ ուրիշներն իրենց պարտքն վրանին կ'առնուն, և երախտագիտութեան և սիրոյ բազմօրինակ ցուցմամբ կը փոխարինեն Աստուծոյ՝ ինչ որ իրենք ոչ ուզեն մատուցանել առ բարերար իւրեանց: Այս է ահա մեր կարծած բանիքն զոր առնեմք, և որուամ կը նուիրեմք մեր գործութիւնն 'ի փառս Աստուծոյ և 'ի փրկութիւն մերոց նմանեաց: Այնտարակոյս մեք կարեզականքս՝ ուղղակի ընկերութեան ժամանակաւոր օգտին ոչ աշխատիմք, ինչպէս ուրիշ միաբանութիւններն, և այնոր համար մեր մատուցած ծառայութիւնն ալ անտես լինելով՝ յարդն այնչափ չձանչցուիր: Ես ոչ համարիմ թէ այլոց գործածէն աւելի մերն օգտակար է, միայն կը հաւատամ որ մեք ալ քրիստոնէական ընկերութեան ընդհանուր բարւոյն գործակից եմք, և եկեղեցւոյ մէջ մեք ալ հարկաւոր կը սեպուիմք »:

« Շնորհակալ եմ, սիրելի մայր իմ, ինձ տուած բացատրութիւններուդ համար. ես միանձնական կեանքն այս նկատմամբ ամենևին չէի մտածած, և այս գերազանց օգտակարութիւնն՝ որոյ խորին պատճառներն ինձ ցուցիր՝ մտքես չէր անցած: Հիմա կը ճանաչեմ որ այն՝ ձեր հաւատոց վրայ հիմնած է և քրիստոնէական կրօնիդ վարդապետութեանն համաձայն է: Եւ թէպետ սկզբանց վրայ գեռ բոլորովին համոզեալ չեմ՝ յորոց անդիմադարձ հետևութիւններ հանելիք՝ սակայն ձեր ինձ թելադրած գաղափարներուն և գայնս գործով կատարելու համար ինքզինքնին նուիրող անձանց՝ անկեղծ պատկառանք մի պիտի ունենամ»:

«Հիմա բան մ՚ալ ունիմ հարցանելու ձեզ՝ յօդուտ այն օրիորդին որ կը փափաքի ձեր գիւցազնական կենաց մասնակցիլ, և որ թերևս իր ոյժէն աւելի բեռ մի ըստանձնած լինի՝ եթէ յառաջագոյն չգիտասցէ թէ մենաստանին մէջ բոլոր օրն ի՞նչպէս անցուցանէք. վասն զի միշտ և հանապազ աղօթելն ինձ դժուար կ՚երևի՝ մանաւանդ երիտասարդ աղջկանց համար՝ որոց սիրտն, պատկերողութիւններն դեռ կենդանի և աշխոյժ են. ուստի հարկ է որ բաւական զբաղմունք ունենան՝ որպէս զի իրենց միտքն չցնդի, փորձութիւններ չունենան, և աշխարհիս մէջ թողածնին յիշելով չզղջան, և մանաւանդ իրենց մենաւոր կենաց միակերպութեամբն՝ որ ամենևին փոփոխութիւն և զուարճութիւն չունի՝ իրենց հոգւոյն մէջ ձանձրութեան վիհ մի չբացուի և կենաց ծանրութեան ներքև չընկճին»:

«Այս կողմանէս սիրտ մի հատցնէք, տէր, վրայ բերաւ. երբ մարդ կոչումն ունելով կուգայ հոս տեղս՝ ամենևին ոչ ձանձրանայ, իսկ չունեցողն՝ նորընծայութեան երկու տարուան մէջ կամ լրանալէն ետև՝ կարէ թողուլ ու ելնել. և նոյն իսկ ուխտելէն ետև ալ՝ եթէ անկարող լինի այնոր պարտաւորութիւններն կատարելու՝ իրեն ուխտն կարէ լուծուիլ: Մեր բոլոր օրն բարեպաշտական կրթութիւններու բաժնուած է, որ զիրար կը յաջորդեն, նախ ժամերգութիւն մի ունիմք որ դասին մէջ կը կատարուի, և քանի մի ժամ կը տևէ. դարձեալ ամեն օր ժամ մի մտածական ունիմք սուրբ գրոց խօսքերուն վրայ, և ժամ մի հոգևոր ընթերցումն, առանձինն քննութիւն, պատրաստութիւն խոստովանութեան, ամեն առաւօտ պատարագ, և կերակրոյ ժամանակ՝ որ իրաւն ասելով շատ երկայն չքշեր, և զուարճութեան ատեն՝ յորում իրարու հետ կարեմք խօսակցիլ, վերջապէս մնացած ժամանակնիս ալ միատեղ ասղնե-

գործի կը պարապիմք, մին կը կարէ միւսն կը բանի կամ զանկապան կը հիւսէ, ուրիշ մի մատրան զարդերն ու կտաւիքն կը շտկէ, կամ միաբանից զգեստներն կոկէ ու կարկատէ. նա և ժամանակ ալ կը գըտնեմք դրսի քանի մի խեղճ կանանց և իրենց զաւկներուն սպիտակներ ալ կարելու, նաև նորածին երախայից խանձարուրք շինելու. վասն զի որչափ ալ աղքատ եմք՝ սակայն միջոց կը գտնեմք քան զմեզ աւելի աղքատաց օգնելու:

«Վերջապէս երբ կանոնաց և բարեկարգութեան հրամայածներն կ՚աւարտին՝ կարեմք մեր խցիկներն քաշուիլ կամ մատուռն իջնել Սուրբ Հաղորդութեան առջև, և հոն միայնիկ ու լռիկ մնջիկ մտերմաբար խօսակցիլ երկնաւոր փեսային հետ երախտագիտութեան զեղծմամբ և սիրոյ առատութեամբ: Ահաւասիկ քսան տարիէ աւելի է, տէր, որ կարմեղական եմ, և ձանձրութիւն ինչ է ոչ գիտեմ. և վստահ եղէք որ իմ բանտիս մէջ այնչափ երջանիկ եմ՝ որ անմխիթար սուգ լինէր ինձ եթէ ստիպուէի թողուլ զայն և ելանել: Իրաւ է որ կուսաստանս բարձր պարիսպներով պատած է՝ որ զայն աշխարհէս կը բաժնեն. սակայն վերէն լայն լուսամուտ մի ունի որ երկնից վրայ կը բացուի՝ ուստի սքանչելի լոյս և կենդանարար օդ մի կուգայ՝ որ մեր հոգիներն կը լուսաւորէ ու կը զովացնէ, որք համարձակ կարեն թռչիլ աղօթքով և մտածութեամբ՝ ուրիշ քան զայս աւելի գեղեցիկ աշխարհ մի. և ապահով եղէք որ երկնային իրերն՝ որոց հետ մեր հոգիներն ամեն օր յարաբերութիւն ունին՝ իրենց պարտուց հաւատարիմ կատարմամբն, երկրիս ամեն բարիքներէն աւելի մխիթարութիւն և ուրախութիւն կուտան»:

Այս ասելու ժամանակ զանգակ մի հնչեց՝ որ զինքն գործի կը կոչէր, ուստի թողուց զիս ու գնաց, և իր հեռանալն ուրիշ բանով չիմացայ՝ բայց եթէ իր ցըփ-

սեայ պարեգօտին գետին քսուելու կամացուկ ձայ-
նէն, որ հետզհետէ բոլորովին դադրեցաւ իր ոտից
ձայնին հետ միատեղ 'ի լռութեան անդ մենաստանին:

Հաշտութիւն

15 Յունիս:

Նորէն տեսի իմ խեղճ բարեկամս՝ որ դեռ շատ
տրտում է, բայց սակաւ մի հանդարտած և համա-
կամ, և խօսքն ալ քիչ մի քաղցրացած. վերջապէս
իր ողջմտութիւնն խիղճն և նոյն իսկ իմաստասիրու-
թիւնն զօրացել են. և թէպէտ քանի որ կը մտածէ
թէ զաւակն զինքն պիտի թողու և վանք պիտի մտնէ՝
չկարէ ինքզինք բռնել՝ սակայն սակաւ մի սկսել է
խելքով մտածել. ուստի անհամբերութեամբ ինձ
կը սպասէր որ իրեն օգնեմ իր միտքն որոշելու և
յայտնելու:

Կարծեմ թէ ինքն ալ զիս շատ փոխուած տեսաւ,
և իմացաւ որ ես ալ առջի կարծեացս վրայ չէի՝ նը-
կատմամբ կրօնաւորական միաբանութեանց. թէ-
պէտ և ես իրեն ամենևին խօսք չբացի կարմեղակա-
նաց աբբասուհւոյն հետ տեսնուելուս և անտի ու-
նեցած տպաւորութեանս վրայ: Միայն այսչափ ա-
սացի որ լաւ մի մտածելէն ետև՝ տեսի որ այս նիւ-
թոյս մէջ ծանր խնդիր մի կար անձնական ազատու-
թեան վերաբերեալ, և թէ ո՛րչափ պատուելու եմք
զայն՝ նոյն իսկ մեր որդւոց վրայ, մանաւանդ երբ
նոքա չափահաս լինելու մօտ են. և թէ մեք իմաստա-
սէրքս որ այն ազատութիւնն կը պահանջեմք մեր
կարծեաց և վարդապետութեանց համար՝ պէտք է
որ այնոր օրինակն ալ տամք ներողամտութեամբ.
մանաւանդ որ կրօնական նիւթոց մէջ՝ երբ խօսքն
հաւատոյ և խղճի վրայ է՝ բռնութեամբ բան մի ոչ

շահիմք, վասն զի այնու հոգիներն չեմք կարող փո-
խել. և եթէ ինքն զաւկին դէմ դնէ որ իր կոչումն
կարծածն 'ի գործ չդնէ՝ ցաւալի երկմտութեան մէջ
պիտի դնէ զինքն՝ որով կամ Աստուծոյ կոչման դէմ
գործած պիտի համարի՝ որով և թշուառ պիտի լինի,
և կամ չափահասութեան իրաւունքն ձեռքն անցա-
ծին պէս՝ իր ծնողաց անհնազանդութիւն գործած
սեպելով՝ սիրտն պիտի կոտրի. վերջապէս մեք որ
բանաւոր մարդիկ կը համարուիմք և անուամբ և եթ
քրիստոնեայ եմք՝ այս տեսակ իր մի դատելու կա-
րողութիւն և իշխանութիւն չունիմք, և որովհետև
հաւատք օրէնք ալ չունիմք կամ ունեցածնիս ոչ գոր-
ծադրեմք, ուստի դէմ որ դնեմք՝ այնպէս պիտի կար-
ծուի թէ մեր դիմադրութիւնն կամ անիրաւ նախա-
պաշարումէ յառաջ կուգայ և կամ շահասիրութե-
նէ՝ ու յանձնական սիրոյ. և վերջ բանիս ոչ աղջկան
և ոչ ընտանեաց անպատուութիւն մի չկայ այս որոշ-
մանս մէջ՝ որ ընդհակառակն շատ կողմանէ գովելի է,
այլ և հիանալի այն մեծանձնութեամբ և նուիրմամբ՝
որ այսպիսի բանի մի ձեռք զարնողն պէտք է ունե-
նայ, զոր նոյն իսկ աշխարհ պէտք է որ ճանաչէ՝ թէ
և եղած զոհագործութեան չհաւնի, և իր աչաց զոհ
համարուածին վրայ ցաւի:

«Զոհն մեք եմք, ես ու մայրն՝» գոչեց խեղճ հայրն
լալով: Նա իր հետն զմեզ ալ կը զոհէ, վասն զի բո-
լոր մեր երջանկութիւնն առնու պիտի տանի. և եր-
բոր ինքն թողու երթայ՝ տունն մեզ համար անա-
պատ պիտի դառնայ. և ամեն վայրկեան ես ու մայրն
զինքն պիտի բնտռեմք: Եւ որովհետև բոլոր աշխա-
տանքս իր ապագային համար էր՝ որ հիմա ձեռքէս
կը փախչի, ա՛լ գործ մի ալ չունիմ առնելու, և ծե-
րութեանս օրերն ալ անմխիթար պիտի անցնեմ»:

Աւա՛ղ, իրաւ էին խօսածներն, և իր արտասուաց
ուրիշ պատասխան չունելով տալու՝ իրեն հետ ես

ալ լալ սկսայ և այժ չունէի իրեն սիրտ տալու, ո-
րովհետև շատ հաւանական է որ ես ալ եթէ նոյն
պարագային մէջ գտուէի՝ իրեն պէս սխալ յուսա-
հատէի, որովհետև միայն մտածելով թէ իմ զաւակս
ալ այնպիսի բան մի կարէ առնել՝ սիրտս կը կտրի:
Դեռ ես ինքն ընտանեաց մարդ եմ, հապա ինչպէս
կարող եմ զուբլին ընտանենէ վեր բարձրացնել:
Միայն քրիստոնէական հաւատքն կը ճանաչեմ որ
կարէ տալ մարդուս հոգւոյն այս բարձրութիւնս, և
այսպիսի զոհագործութիւն մի առնելու այժ, և ի-
նձն դեռ շատ հեռի է այն հաւատքն: — Մինչդեռ
այս ցաւալից տատամսութեանս մէջ էլք և ճամբայ
մի ոչ տեսանէի՝ յանկարծ միտքս բան մի անկաւ՝ որ
ժամանակ վաստկելու միջին ճամբայ մի է. որ թէ և
գժուարութիւնն ոչ լուծանէ՝ այլ եա կը ձգէ, որ
շատ անգամ կարել նետելէն լաւ է, որովհետև ժա-
մանակին կը թողու որ զայն ուղածին պէս լուծէ.
ուստի այս մտածութիւնս ձեռք առի և բարեկամիս
դառնալով ասացի.

« Սիրելի բարեկամ, խնդիրնիս շատ ծանր է, և
թէպէտ մտքերնուս մէջ սակաւ մի տեղ տալ սկսել
է՝ որովհետև կը տեսնեմ որ աւելի հանդարտ կը խո-
սակցիմք, և սրտերնուս այլայլութիւնն խելքով կը
սանձահարեմք, սակայն որոշում մի տալու կրած
գժուարութենէս կ'իմանամ՝ որ խնդիրն դեռ բոլո-
րովին հասուն չէ, ուստի կարեմք և պարտիմք իսկ
աւելի յարմար ժամանակի սպասել այս պարտս
ձեղքելու համար. որովհետև սպասելէն ալ ինաս մի
չծագիր: Այլևիկ դեռ քանի տարուան է, և տարի
մի պէտք է չափահաս լինելու համար. ուստի պար-
զութեամբ և որչափ կարելի է հանդարտութեամբ
կարես ասել իրեն որ խղճի մտօք խորհելէդ ետև՝ իր
խնդրոյն քու հաւանութիւնդ տալու ոչ զլանաս՝ որ-
չափ ալ քեզ ծանր գայ, սակայն ինքն ալ քեզ չնոր-

հուի մի պէտք է առնէ՝ ալ ես իւր կոչման վրայ չխո-
սի՝ մինչև չափահասութեան ժամանակն. և թէ այս
այնպիսի փորձ մի է որ դուն կարէիր իրեն հրամայել՝
սակայն աւելի կ'ուզես որ յիւր սիրոյն ընդունիս այն
բանն՝ որ երկոցունցդ ալ շահաւոր է: Որովհետև
իրեն համար այս բանս նորընծայութեան կանխիկ
ամ մի լինի աշխարհիս մէջ՝ զոր թողուլ կ'ուզէ, որով
և աւելի ալ լաւ կ'իմանայ թէ արդեօք կարէ՞ թէ ոչ:
Իր ծնողաց համար ալ այս բանս երաշխաւորութիւն
մի է գիտենալու համար թէ յիւրաքանչիւրն ունի՞ թէ
չէ: Եւ երբ ալ չափահաս լինի և իւր կենաց լաւա-
գոյն առաջնորդութիւն առնելու կարող, եթէ իր
դիտաւորութեան մէջ հաստատ մնայ՝ գոնէ այն ա-
տեն հայրական պատասխանատուութենէ՝ որ հիմա
դեռ ձեր վրայ է, ազատ լինիք. և երբ չկարասցէ
յարատևել՝ ձեզ բան մի ասացող ոչ գտանի, որով-
հետև պատճառն արդիւնել ձեր ձեռքն չէ՞նեղուն՝ ար-
ևանցն ալ պատասխանատու չէք:

Այս խորհուրդս կարծածէս աւելի յաջողեցաւ.
խեղճ բարեկամիս խելքն չուռով մի այս բանիս պառ-
կեցաւ, ինչպէս ծուղն անկած մարդն փայտի կտորի
մի կը պլլուվի: Մայրն ալ իւր երկան ուրախութեանն
մասնակից եղաւ՝ որով նոյն ատենի վտանգէն կ'ազա-
տեր, և երկուքին սիրտն ալ սփոփուեցաւ՝ յուսա-
լով որ տարուան մի փորձն ամեն բան իրենց ուզա-
ծին պէտի գարձնէր: Իսկ աղջիկն որ բաւական իր
ուզածին մէջ առաջ գնացել էր, և սակայն կրած
պատերազմին սաստկութենէն սիրտն պլլայլելով մեծ
թարութեան կարօտ էր՝ եռանդագին իր ծնողաց
հետ պագտուեցաւ. վստահ լինելով որ տարիէ մի
ետև նոցա հաւանութիւնն պիտի առնուր: Այսպէ-
սով խաղաղութիւնն տան մէջ հաստատուեցաւ,
կամ գոնէ զննագագար մի եղաւ՝ սակաւ մի ժամանակ
վաստկելով՝ առանց խնդիրն հիմամբ ուարտելու,
ինչպէս որ լինի աշխարհիս ամեն հաշտութեանց մէջ:

Կնքահայր

17 Յունիս:

Երէկ եղբօրորդւոյս մկրտութեան հանդէսն կատարուեցաւ, ես ալ շնորհիւն Աստուծոյ տղու մի կնքահայր եղէ յակամայ կամս. սակայն որչափ կարելի էր յօժարութիւն ցուցանելով, որովհետև գրբսէն և ներսէն նեղութեան մէջ էի: Արտաքուստ սակաւ մի մարդկային ակնածութիւն կը զգայի հրապարակաւ մասնակից լինելուս կրօնքի ամենակարևոր արարողութիւններէն միոյն, այնպիսի կրօնից որոյ պարտքերն ոչ կատարէի, և որոյ համար շատերն մտքերնին դրել էին թէ ես մեծ հաւատք մի չունիմ: Բայց այս տատամսութիւնս մասամբ կը փարատէր ընտանեկան պատշաճից պարտաւորութեամբն՝ յորոց չէի կարող փախուստ տալ առանց իմիններս տրտմեցնելու. հասարակաց կարծիքն ալ զիս այս բանիս մէջ կ'արդարացնէր: Եղբայրս ալ՝ որ քան զիս աւելի հաւատացեալ մի չէ՝ ինձ դէմ պիտի դժկամակէր. որովհետև որչափ ալ իմաստասէր եմք, և մկրտութեան օգտակարութեան վրայ կը տարակուսիմք՝ սակայն կ'ուզեմք որ զաւկնիս մկրտուած լինին և քրիստոնէաբար մեծնան, թէ և մեք զմեզ ազատ կը սեպեմք քրիստոնեայ լինելէն:

Իսկ 'ի ներքուստ սակաւ մի ամօթ կը զգայի առնելիքիս վրայ, ոչ եթէ գործն ինքնին յոռի համարելով, որովհետև այն արարողութեան ամեն պահանջածներն բարոյականի յոյժ յարմար են, և մտաց և սրտի կատարելագործութեանն ձեռնտու: Իսկ իմ ամօթխածութիւնս անտի յառաջ կուգար՝ որ հիմնովին համոզեալ չէի հաւատոց այն յօդուածներուն՝ զորս երախային տեղ պիտի դաւանէի՝ որպէս երեսփոխան՝ նորա կաթողիկէ հաւատոցն. խեղճ երեսփոխան՝ որոյ միտքն տարակուսներով և առարկութիւններով լի է: Բայց ինքզինքս քաջալերեցի ասելով թէ գոնէ թշնամի չեմ և հանդանակին ոչ մի յօդուածն ալ բացարձակապէս ոչ մերժեմ, այլ ընդհակառակն՝ ինչպէս նախընթաց թերթի մի մէջ հաստատել եմ, նոցա գլխաւորներն կ'ընդունիմ՝ թերևս ոչ ճիշդ որպէս Եկեղեցին կը բացատրէ, սակայն գոնէ այնչափ որչափ որ խղճիս առջին հարկաւոր էր նոցա ճշմարտութիւնն հաստատելու համար:

Սակայն ուրիշ մտածութիւն մի ալ կար որ զիս կը տագնապէր. մարդիկ աշխարհիս և նոյն իսկ քրիստոնեայք խիստ թեթևամտութեամբ յանձն կ'առնուն կնքահայրութեան և կնքամայրութեան պաշտօնն՝ առանց մտածելու այն բարոյական պարտաւորութիւններն որ անտի յառաջ կու գան, և զորս կ'ենթադրուի թէ ընդունողն յանձն առած է. որովհետև այդ պաշտօնն պարզ ձևականութիւն մի կատարելու համար չէ, և ոչ ալ աւազանէն ընդունելու երախային ծնողաց հաճոյք մի առնելու համար: Այլ կնքահայր եղողն առաջի Աստուծոյ և Եկեղեցւոյ՝ տեսակ մի հոգւոյ խնամք վրան կ'առնու, ուստի չէ կարող անտարբեր և անհոգ լինել՝ այն հոգւոյն ապագային և վախճանին՝ որոյ համար պատասխանատու եղած է երկնից և երկրի առջև: Ապա ուրեմն ժամանակաւ նորա կրօնական կրթութեանն և փրկութեան հոգ տանելու է՝ գոնէ մինչև այն ատեն՝ որ իւր սանն անձնաւորապէս Աստուծոյ հետ միանալով իւր առաջին հաղորդութեամբն՝ նորոգէ ազատութեամբ իւր մկրտութեան ուխտերն և իւր անձին վրայ առնու նոցա կատարման պարտաւորութիւնն և պատասխանատուութիւնն: — Արդ այս նկատմամբ իմ հոգւոյս արդի վիճակն դիտելով՝ այս հոգս վրաս

առնլու յարմարութիւն ոչ տեսանէի իմ անձիս վրայ, որովհետև արդէն ես ինձ համար շատ հոգոց և խնամոց պէտք ունիմ՝ հաւատքս մեռած կամ հաղիւ թէ նորածնած լինելուն համար, և որ այնչափ դժուարութիւն կը կրեմ ես ինքզինքս լուսաւորելու այս փափուկ խնդիրներուս մէջ։ Աստի այս հետևանքս հանեցի թէ ուրեմն այն կրօնական կապն որով այս տղուս հետ պիտի կապուէի, և հոգևորական հայրութիւնն զոր իր նկատմամբ կ՚ընդունէի՝ աւելի պատճառ մի լինելոց էին իմ սկսած և թղթի անցուցած խորհրդածութիւններս յառաջ տանելու, յորոց կարծեմ թէ սակաւ մի պտուղ ալ քաղել սկսած եմ։ Իմ սանս ալ նոցա օգուտն կարէ տեսնել եթէ որպէս յուսամ՝ նախ իմ գրեթէ շիջած հաւատքս արծարծելով՝ ինձ օգտակար լիցին. և այս ենթադրութեամբ կարեմ իւր տղայութեան ատենն ալ իր մտաց յարմար բարի խօսքերով և թերևս օրինակով ալ իրեն օգտակար լինել։ Ապա թէ ոչ՝ որպէս իմաստասէր իրեն հոգւոյն օգուտ մի չեմ կարող առնել՝ մինչև իր պատանեկութեան տարին. որովհետև իմաստասիրութիւնն տղայոց սովրելու բանն չէ, և Աստուած գիտէ թէ մինչև որ իմ դասախօսութեանս ունկնդիր լինելու կարողութիւն որ ունենայ՝ ինչ լինի։

Սակայն այս ներքին տագնապներովս հանդերձ՝ զոր մարդու մի չիմացուցի, ամեն բան աղէկ յաջողեցաւ. քաջութեամբ Հաւատամքս զրուցեցի յստակ և հասկանալի ձայնով, առանց արտասանած յօդուածներուս վրայ տարակոյս մի մտքէս անցընելու, որոց գլխաւորներն և 'ի նոցանէ ծագած յաւելուածներն արդէն ընդունած էի։ Միայն որովհետև ժամանակ չէի ունեցած այս յաւելուածներս մի առ մի քննելու՝ երկուքին վրայ մտքէս ընդդիմութիւն կամ գոնէ տարակոյս ունեցայ, յորոց մին առաքելոց հանգանակին մէջ յայտնապէս կը յիշուի՝ որ է յարութիւն

մարմնոյ. իսկ միւսն որ ոչ այն հանգանակին մէջ նշանակուած է և ոչ 'ի նիկիականին, և սակայն Աւետարանի շատ տեղերէն կը հաստատուի և Եկեղեցին ալ իբրև վարդապետութիւն ուսուցանէ՝ է յաւիտենականութիւնն պատժոց։ Վարդապետութեան այս երկու կէտերս են գլխաւորապէս որ մտաց հակառակ կուգան, և դարուս անհաւատներն ալ այսոց վրայ աւելի կը յամառին։ Ինձ ալ կ՚երևի թէ այս կէտերս պաշտպանելն դիւրին բան չէ, և թէ որ ես ալ մտացս նախապաշարման և սրտիս զգացմանն հետևէի՝ բացէ 'ի բաց զնոսա պիտի մերժէի։ Բայց խիղճս զիս կը պարտաւորէ մօտանց քննել զնոսա՝ որովհետև բերնովս դաւանեցայ՝ թէ և յանկարծակիի գալով։ Մանաւանդ որ ճշմարիտ իմաստասէրն առանց պատերազմելու նախապաշարմանց տեղի չտար, և սրտին յօժարութիւնն ու յետադարձութիւնն ալ խելքի վրայ հաստատուած լինելու են։ Ուրեմն այս երկու յօդուածոցս վրայ խորին քննութիւն մի առնեմ վերջին դատաստանի վրայ սկսած զննողութիւնս յառաջ տանելով, միտքս հաստատ դնելով որ առջիս ելած ճշմարտութիւնն աներկբայ ընդունիմ՝ ինչ որ ալ անտի հետևի։

Դատաստան վերջին (վերստին յաւելուած)

20 Յունիս։

Մեռնելէն ետև մեզ հանդիպելու բաներն ինչպէս գիտելու է։ Որովհետև հոգին անմահ է՝ ամեն խելք ունողն յայտնի կը տեսնէ՝ որ այս աշխարհէս ելնելէն ետև՝ ուրիշ աշխարհ մի պիտի երթայ. բայց այս միւս աշխարհի իրերն ով կարէ մեզ պատմել։ Այս բանս իմանալու երկու կերպ կայ՝ բանավարութիւն և յայտ-

նութիւն: Բանավարութիւնն կամ խելքն կարէ հիմակուան եղած գոյութեանց գործերէն՝ ճշմարտանման ներածութիւններ կամ հետևանք հանել որ մինչև բարոյական ստուգութեան աստիճանն կարեն հասանել. միայն այսոքիկ այնպիսի բանաւոր հետևութիւններ են որոց առարկական ոյժն՝ թէ և 'ի հասարակաց մտաց ընկալեալ՝ միշտ խնդրոյ տակ ձգած են գաղափարական կամ սկեպտական իմաստասէրք: Եւ որովհետև փորձ մի ալ չկայ այս բանիս, վասն զի միայն բանավարութեամբ հաստատողներն թէ ուրիշ աշխարհ մի կայ՝ հոն տեղ գնացած ու եկած չեն՝ որ մեզ կարասցեն պատմել հոն եղածներն, այնոր համար իրենց հանած հետևութիւններն ալ միշտ տարտամ և մութ են, և իրենց կարծիքն ալ 'ի վերացմանէ յառաջ եկած լինելուն՝ մտաւոր կամ անդոյ էակաց կը նմանին:

Իսկ յայտնութեան մեզ ուսուցածն աւելի որոշ և ճիշդ է. վասն զի ինքն վճռաբար և վարդապետաբար կը հաստատէ թէ իր ասացածն տեսած է, որովհետև համարի թէ սոյն իսկ այս վախճանիս համար ինքն անդիի աշխարհէն եկած է. ապա ուրեմն յայտնութիւնն գիտէ թէ ինչ լինի անդիի աշխարհին մէջ. վասն զի եթէ միայն ոգի մարդոյ կարէ գիտել ինչ որ կրի 'ի մարդն, ապա ուրեմն և յԱստուած եղածներն ալ և այնոր գործերն ալ միայն աստուածային ոգին կարէ գիտել: Տարակոյս չկայ որ եթէ այս ճամբայս ստոյգ լինէր՝ ամենէն ապահովն էր, այսինքն եթէ ցուցուած լինէր գերբնական յայտնութեան ճշմարտութիւնն և ստուգութիւնն: Վասն զի հաւատոց իւր հետևողաց տուած ապահովութեան հաւասար ուրիշ բան մի չկայ, որք այնչափ վստահութիւն ունին այնոր վրայ՝ որ նորա ուսուցածին վկայելու համար կեանքերնին ևս տալու ոչ երկնչին, որպէս ցուցանեն զայս մարտիրոսաց վկայաբանութիւններն:

Սակայն ինձ կ'երևի թէ բանավարութեան և յայտնութեան մէջ միջին ճամբայ մի ալ կայ. այնպէս որ իմաստասէրն յայտնեալ խօսքի հաւատք ալ եթէ չընծայէ՝ կարէ պատրաստ դտանիլ առ 'ի ընդունել անկեղծութեամբ այնոր թելադրութիւններն և վարդապետութիւններն՝ եթէ կարասցէ զնոսա արդարացնել իւր մտաց աչաց առջին՝ ճանաչելով նոցա համաձայնութիւնն ընդ օրինաց բնութեան և բանի: Եւ այսու կարէ յուսալ հասանիլ 'ի վախճան ինչ բարի, այսինքն 'ի գիտութիւն հաստատեալ լուսով հաւատոց կամ առ տեսակ ինչ հաւատոց լուսաւորելոյ գիտութեամբ: Այս բանս պարզապէս հաւատք չէ՝ որովհետև մարդկային բանն կամ խելքն ալ այնոր մէջ մեծ մասն ունի, սակայն կարէ սկզբնաւորութիւն իմն և ծրագիր համարիլ՝ որ ոտն առ ոտն լաւագունի կարէ առաջնորդել: Ես այս միջին ճամբայս կ'ուզեմ փորձել, և վտանգ մի ոչ տեսանեմ այս փորձիս մէջ. վասն զի եթէ բան մի ալ չկարացից շինել՝ գոնէ բան մ'ալ ոչ աւերեմ. վասն զի միտքս դրած եմ որ այն խնդրոց մէջ որ չկարացից զնոսա իրարու հետ համաձայնեցնել՝ անտարբեր և անզանազան պիտի մնամ՝ առանց այս կամ այն կողմն հակելու:

Օրինակի համար՝ քրիստոնէութիւնն ուսուցանէ որ ամեն մարդ անդիի աշխարհք պիտի դատուի՝ առաջին անդամ հոն հասածին պէս՝ որպէս զի իր տեղն որոշուի. և երկրորդն 'ի կատարած դարուց և ժամանակաց՝ արդարութեան և ամենայն իրաց բովանդակ նորոգութեանն համար: Եթէ յիրաւի խելքի յարմար են այս վարդապետութիւններս՝ ապա ուրեմն առարկելու բան մի չկայ: Յայտնի է որ այս աշխարհիս մէջ իւրաքանչիւր ոք իր գործոց համեմատ արդիւնք կամ ապարդիւնք կ'ունենայ, և այս արդեանց և ապարդեանց վաղ կամ անագան համար

պիտի տայ՝ որպէս զի վարձք կամ պատիժ ընդունի. և թէ որ աշխարհիս մէջ բարեաւ կամ չարաւ արդարութիւն չէ եղած իրեն՝ ուրիշ տեղ նոյնն պիտի կատարուի: Այսպէս կը վկայէ խղճի ձայնն ալ, որ միանգամայն ամեն բարի մարդկանց յոյսն է՝ որ երկրիս վրայ արդարութեան համար չարչարուելով՝ քաշած վնասուն փոխարինութեան իրաւունք ունին, նոյնպէս չար մարդկանց ալ սարսափն է՝ որ աշխարհիս մէջ յաջողութիւն գտել են և իրենց անօրէնութեան պտուղն վայելել են, որով և անագան պատիժնին ալ աւելի սաստիկ պիտի լինի:

Դարձեալ խելքն կ'ըմբռնէ որ մահուան մանգաղով հնձուած անթիւ հոգւոց համար՝ որ միշտ անդիի աշխարհք կը վազեն՝ նախապատրաստական բաժանում մի հարկաւոր է, ուստի հարկ է որ նոցա դատաստանն անմիջապէս կտրուի՝ կարգն տեղն երթալու համար, և որպէս զի իւրաքանչիւր ոք շուտով իրեն անկած բարի կամ չար վիճակն ունենայ: Բայց այսու ալ մտաց հակառակ չէ ընդունիլն թէ 'ի վախճան ժամանակաց և 'ի կատարեալ հաստատութեան յաւիտենական արքայութեան՝ ամենայն ինչ վերջնական եղանակաւ պիտի կարգաւորի աննախագրելի արդարութեամբ, որպէս զի բարին բոլորովին 'ի չարէն բաժնուի, և Աստուած յամենայնի թագաւորէ իւր սիրոյն նոցա վրայ՝ որ զինքն սիրեցին և ծառայեցին, և արդարութեամբն նոցա վրայ՝ որ զինքն ատեցին և իրեն դէմ ելին: Այս տիեզերական նորոգութեան՝ յորում ճշմարիտն արդարն և բարին անխառն և անմասն պիտի լինին, մեծափափաք տենչայ մեր հոգին իւր բարձրագոյն կարողութիւններովն և մեծանձն ճգամբք. և կատարելապէս երջանիկ պիտի չլինի՝ մինչև որ չհասնի այն կատարեալ և անմատչելի հանգստեան գերագոյն բարւոյն: Խելքն զայս ամենայն ինչ առանց դժուարութեան կ'ընդունի, և քա-

նի մի բառից զանազանութենէ զատ՝ այս նիւթոցս վրայ քրիստոնէական հանգանակին հետ կը համաձայնի ըստ հիմանց:

Բայց հանգանակն այլ աւելին կը հաստատէ և աւելի մանրամասն տեղեկութիւններ կուտայ: Եթէ դատաստան կայ՝ ապա հարկ է որ մի կամ շատ դատաւորներ ալ լինին. խելքն այսոր ալ կը հաւանի, բայց ոչ գիտէ թէ դատաւոր ով պիտի լինի. արդեօք ըստ առասպելաց Մինովս, Հռադամանթէս, Էակոս, թէ այլ ոք: Այս նիւթոյս վրայ առասպելաբանութիւնն աւելի բան կը խօսի քան թէ իմաստասիրութիւնն՝ որ միայն ընդհանուր կերպով կը հաստատէ թէ դատաստան մի պիտի գայ, առանց կերպն և հետևանքն բացատրելու: Իսկ քրիստոնէութիւնն աւելի բացայայտ է. նախ որ մի միայն դատաւոր կը ճանաչէ՝ զայն որ սրտագէտ է և ամեն բան գիտէ, և այսոր համար իսկ միայն կարող և անբողոքելի դատաւոր է: Եւ որովհետև ըստ քրիստոնէական վարդապետութեան ինքն իսկ Աստուած մարդացեալ է վասն փրկութեան մարդկան՝ ապա Գերագոյն դատաւոր լինելոց է Աստուածն այն մարդացեալ՝ որ առաջին անգամ եկն 'ի փրկանաւորել զնոսա և ոչ 'ի դատել, իսկ երկրորդ անգամ 'ի վախճան ժամանակաց պիտի գայ՝ վերջնական կերպով դատելու զամենեսին զորս կամեցաւ փրկել, յորոց ոմանք ծանեան զգթութիւն նորա և զշնորհս, և այլք ապախտ արարին և մերժեցին:

Առաջին դատաստանն որ առանձնական ասի՝ անմիջապէս մահուանէ ետև պիտի լինի՝ երբ հոգիք պարզապէս Յիսուսի Քրիստոսի առջին պիտի ելնեն՝ որոյ տեսութիւնն միայն՝ զոմանս պիտի ուրախացընէ և զայլս ամըչցնէ: Իսկ վերջին դատաստանն որ տիեզերական է՝ մեծահանդէս պիտի կատարուի երկնից և երկրի առջև երբ Քրիստոս մեծաւ փառօք իր աթոռն

նստած պիտի երևի՝ շուրջ պատեալ 'ի բազմագունդ հրեշտակաց՝ որք պիտի համահաւաքեն զամենայն ա-րարածս 'ի չորից կողմանց աշխարհի նաև յանդնդոց դժոխոց. վասն զի դատապարտեալք ալ պիտի ե-րևին, և այն վերջի անգամ երկնային լուսոյն պիտի յանդիմանին՝ որ իրենց ամեն անօրէնութիւններն ա-մենուն առջին յերևան հանելէն ետև՝ պիտի դահա-վիժէ զնոսա յաւիտեանս յանդունդ չարի և պատ-ժոց իւրեանց:

Ահաւասիկ գրեթէ այսպիսի է այն մանրամասն նկարագրութիւնն զոր առնէ բանն յայտնեալ 'ի վերայ դատաստանի զկնի մահու, զորս մեծաւ մա-սամբ խելքն ալ կ'ընդունի և կը հաւանի. բաց 'ի քա-նի մի կէտերէն որ իրեն մութ կ'երևին, և յայլոց ո-մանց զորս կը մերժէ իբրև անտեղի և մտաց հակա-ռակ՝ զորս քննել արժան է:

Հրեշտակք

25 Յունիս:

Յայտնի է որ գերագոյն մեծ և անբողոքելի դատա-ւորն՝ իւր վճռոց մէջ անսխալ լինելու համար՝ պէտք է ամենայն ինչ գիտել, և վճիռն կատարել տալու հա-մար՝ պէտք է ամենակարող լինել. ապա ըստ այսո-ցիկ միտքն չկարէ մերժել զդատաւորական իշխանու-թիւն Քրիստոսի եթէ յիրաւի Աստուած է, և բաց աստի եթէ մեզ նման մարդ եղև՝ ապա գիտէ զմարդ-կային տկարութիւնս և զցաւս:

Սակայն ամեն դատաւոր երբ 'ի բեմն կը նստի պաշտօնեաներ և արբանեակներ ունի՝ ամբաստա-նեալներն հաւաքելու և իրեն առջև բերելու համար, և դատաստանէն ետև զիրենք իրենց սահմանուած

տեղն տանելու համար: Այսոր համար Աւետարանն ասէ որ Քրիստոս յերկրորդ գալստեան իւրում պի-տի երևի 'ի վերայ ամպոց երկնից փառօք բազմօք և բազմութեամբ հրեշտակաց: Հրեշտակք պարզ հո-գիներ են արդարութեան և սրբութեան մէջ ստեղ-ծեալք Ամենակալին խորհրդոց դեսպան և նորա հրամանացն կատարող լինելու համար, ինչպէս ի-րենց անունն ալ կը նշանակէ, որք կան առաջի աթո-ռոյ նորա՝ նկատելով յաւիտենական ճշմարտու-թիւնն և զգեղեցկութիւնն անհուն, և պատկառա-նօք սպասելով նորա կամաց թեթև ակնարկութիւնն կատարելու: Իրենք բանաւոր և ազատ արարածներ լինելով՝ հարկ եղև որ փորձուին՝ որպէս զի կամաւ և յօժարութեամբ Աստուծոյ ծառայութեան տան զիրենք. և մին 'ի նոցանէ՝ երկնային դասակարգու-թեան մէջ առջիններէն՝ հպարտութեամբ Աստուծոյ դէմ ել՝ և ապստամբելով ընդդէմ Տեառն իւրոյ՝ միտքն գրաւ նորա իշխանութենէն ընդվզել և այնոր նմանիլ. և ահա այս արարածն է դտիչ ստութեան չարի և մահու. և իր ապստամբութեան ետևէն ձգեց երկնային զինուորութեան մի մասն, որ իրեն հետ միատեղ արտաքս դահավիժեցան յաստուածա-յին թագաւորութենէն: Աստի հերձիք անկաւ յա-րարչութեան, հերձիք 'ի մէջ Արարչին և արարածոց, և արարածոց ընդ իրեարս: Այս է ահա ըստ Աւե-տարանին սկիզբն և ծագումն չարի մահու և ամե-նայն հետևանաց նոցա:

Հիմա ես իմաստասէրս այս ամեն բանի վրայ լաւ մի խորհելով՝ ասեմ թէ այս վարդապետութեանս մէջ բան մի չկայ զոր իմաստասէրն չկարասցէ ընդու-նել՝ եթէ անկեղծ է և իւր կարծեաց վրայ հաստա-տուն: Ոչ ասեմ թէ զայսոսիկ կարէր ինքն գտանել իւր սեպհական լուսովն, այլ թէ մերժելու բաւա-կան զօրաւոր պատճառ չունի՝ երբ իր առջևն գրուին:

Վասն զի եթէ կ'ընդունի թէ ամենակարող Աստուած է ստեղծողն ամենայնի՝ ապա ընդունելու է՝ նաև դասաւորութիւն մի արարածոց կամ զանազան աստիճանս էակաց ստեղծելոց: Որպէս յերկրի զանազան աստիճանք կան սկսեալ 'ի հանքաց որ խարիսխն է՝ մինչև 'ի մարդն որ գագաթն կ'երևի, և բընութեան երեք պետութեանց մէջ որ են հանք բոյսք և կենդանիք՝ զիրենք ոգևորող կեանքն ալ երթալով կը բարգաւաճի, մինչև 'ի բանաւոր և ոգեղէն էակն որ մարդկութեան ալ գագաթնակէտն է, և անտի ալ հանգիտութեամբ շարունակ վեր ելնելով՝ բանավարութեամբ ալ կարէ հաստատել թէ վերնագոյն աշխարհին մէջն ալ զանազան միջին աստիճաններ կան ընդ մէջ մարդոյ բանաւորի և անհուն ոգւոյն որ կոչի Աստուած ...: Արդ այն միջին արարածներն պարզ ոգի կը կոչուին՝ վասն զի նիւթեղէն մարմին չունին՝ որով գեր 'ի վեր են քան զմարդիկ մտածութեան և գործելու անարգել ազատութեամբն: Սուրբ Գիրք այս երկնային դասակարգութիւնս գլխաւոր ինն աստիճան կը համարին: Իմաստասիրութիւնն միջոց մի չունի ստուգելու այս կարծիքս. բայց աւելի կամ նուազ լինելն էական բան մի չէ, բաւական է որ կը ստիպուի ընդունելու թէ մարդոյ և Աստուծոյ մէջ տեղն ոգևորական էակաց դասաւորութիւն մի կայ, և որոց պաշտօնն է արբանեկել Աստուծոյ, և մարդկանց քովն նորա պաշտօնեայներն համարիլ:

Մեր բնազանցութեան դասախօսութեանց մէջ արդեօք աւելի լաւ ո՞չ լինէր փոխանակ խօսելու տիեզերական հանրական և մասնական էակի, գոյակի և ոչ գոյակի, հարկաւորի և պատահականի, կարելւոյ և անկարելւոյ, և այլ վերացեալ գաղափարաց վրայ որ մեծ բան մի ոչ ուսուցանեն, ճշմարիտ ոգեբանական վարդապետութիւն մի աւանդէինք ամենայն աստիճան ոգւոց և ամենայն պետութեանց մէջ. և ստոր-

նագոյն պարունակաց մէջ դիտելէն ետև զոգին մետաղական բուսական կենդանական և մարդկական, իւրաքանչիւրին արտայայտութիւնն նկարագրելով իրենց սեպհական կնքովն, և զիրենք ոգևորող կենաց զարգացմամբն, յետոյ աւելի բարձրերն ելնէինք և ներածութեան ձեռօք ենթադրութիւն առնէինք այն գերմարդկային ոգւոց վրայ՝ որք կան ընդ մէջ մարդոյ և Աստուծոյ: Բայց այս նիւթոյս մէջ անտարակոյս պէտք պիտի ունէինք յայտնեալ բանի. որովհետև մեր զգայութիւնք և զգայարանք հանդերձեալ աշխարհի իրաց հասու լինել չեն կարող, ուստի և այս մեզ անտեսանելի էակաց վրայ բան մի գիտելու համար՝ գերբնական ուսման կարօտ եմք, որպէս է հաւատոյ ուսուցածն: Եւ ի՞նչ անդիպութիւն կայ յայս ուսմանէս ալ չափով մի օգտուիլ՝ աւելի կատարեալ և աւելի ազդու իմաստասիրութիւն մի յօրինելու համար. որոյ մէջ բան մի չհաստատուի՝ զոր բանն մտաց չկարասցէ ըմբռնել և ընդունիլ, իսկ այն բանն որ չկարէ ըմբռնել՝ այնոր միջամուխ չլինել: Վասն զի եթէ նոյն իսկ համագոյից մէջ բիւրաւոր բաներ կան՝ զորս միտքն չկարէ մեկնաբանել, և սակայն չկարէ ալ ուրանալ, ապա ինչո՞ւ բնութենէ գերազանցի մէջ ուրանայ այն բաներն որ անբացատրելի են կամ դեռ չեն բացատրուած: Ո՞չ ապաքէն երկու կողմանէ ալ այսինքն թէ բնականին և թէ գերբնականին մէջ իր հասկացողութեան ոյժն՝ ճշմարտութեան հարկաւոր չափն չկարէ համարուիլ:

Ինձ որ մնայ՝ այս խորհրդածութեանցս վրայ հիմնեալ՝ իրաւունք ոչ համարիմ հրեշտակաց կամ պարզ ոգւոց գոյութիւնն ուրանալ. մանաւանդ թէ միտքս զիս կը ստիպէ որ նոցա գոյութիւնն ենթադրեմ որպէս միջակային էակք ընդ մէջ աստուածային և մարդկային ոգւոց. և իմ այս ենթադրութեանս կամակար 'ի վկայութիւն կը կոչեմ սուրբ

Գրոց խօսքերն. և չէ թէ միայն նոցա գոյութիւնն իմ իմաստասիրութեանս արգելք ոչ համարիմ, այլ ընդհակառակն կը տեսնեմ որ այնու բնազանցութեան մի մեծ դատարկ տեղն ալ կը լեցուի՝ ճշմարիտ և ողջամիտ ոգեբանութեան ճիւղովն:

Իսկ սատանայի և ապստամբ հրեշտակաց գալով որ յԱստուծոյ անջատելով նորա կարողութեանն դէմ ելին, ինչ անուն կ'ուզեն թող տան՝ հոգս չէ, և բառից վրայ ոչ կամիմ վիճիլ. բայց ինձ կ'երևի թէ պատմուածն ճշմարիտ է, ճիշդ վէպք են անցից անցելոց 'ի սկզբան արարչագործութեան: — Վասն զի խելքն ինձ ասէ որ եթէ չարն գոյ յաշխարհի՝ զոր ոչ ոք կ'ուրանայ, ապա այս չարի հեղինակ կամ սկզբնապատճառ մի եղեալ է: Իսկ արդ այս չարի հեղինակս Բարւոյ սկիզբն կամ Գերագոյն բարին չկարէ լինել՝ յորմէ ոչ բնաւ չարիք ելանեն, ապա բաց յԱստուծոյ ուրիշ մի եղած է այնոր պատճառ. և այս պատճառս արարած մի լինելոց է՝ որոյ անկատարութիւնն աղբիւր եղեալ է չարի կամ բացասութեան բարւոյ: Սակայն բարոյական չարն յոչ ումեքէ կարէ յառաջ գալ բաց 'ի բարոյական էակէ որ զարդարեալ իցէ ձրիւք բանաւորութեան և ազատութեան: Ապա ուրեմն այս արարածս ոգի մի է որ 'ի չարն վարելով զիւր միտս և զազատութիւն՝ ծնաւ զչարն՝ զիւր կամս աստուածային օրինաց դիմադրելով, և զստութիւն հակառակ ճշմարտութեան յարուցանելով: Եւ այս իշխանս չարի և ստութեան անձ մի է, որպէս և Աստուած է անձնաւոր: Արդ այս չարեացապարտ անձիս որ է հայր չարի ստութեան և մահու որ 'ի չարէ եկն յառաջ, հարկ է անուն մի սահմանել՝ որպէս ամենայն կենդանի անձին, նկարագիր մի տալ իր գործոց համեմատ, և գոյութեան կերպ մի՝ սահմանեալ նմա յիւրմէ չարութենէն, և վերջապէս տեղ մի կամ տխրագին թագաւորութիւն մի՝ զոր

ինքն անձամբ ընտրեց արտաքոյ թագաւորութեանն Աստուծոյ: Այս չարացեալ ոգւոյն քրիստոնեայք սատանայ, դև և բելիար անուններն կուտան. իսկ իմաստասէրք ինչ անուն որ կ'ուզեն թող տան՝ հոգ չէ. բաւական է որ այնոր գոյութիւն և գործն ընդունին. և մի թէ բանաւորապէս կարէ՞ ոք ուրանալ այնոր գոյութիւնն ու գործն՝ երբ կը տեսնէ այն անդադար մենամարտն բարւոյ և չարի որ նայ 'ի մէջ մարդկան. կարէ՞ ոք ուրանալ՝ երբ յայտնի ապըստամբութիւն մի կը տեսնէ աշխարհիս մէջ, և թէ այն որ չարն սկսաւ և ամենայն կերպով կ'ուզէ զայն պահել, դեռ ևս իւր իշխանութիւնն կը բանեցնէ խաւարին աշխարհի մի մէջ՝ որ լուսոյ հակադարձն է, և հեռիւ և նախանձու և յուսահատութեամբ լեցուած տեղւոյ մի մէջ՝ խաղաղութեան և երջանկութեան թագաւորութենէն դուրս, որում ամեն լեզուաց մէջ ալ Դժոխք անունն կը տրուի:

Արքայութիւն

27 Յունիս:

Դատաստանի էական և հարկաւոր վախճանն ուրիշ բան չէ՝ բայց եթէ բարոյական մարդոյ արդեանց և ապարդեանց յայտարարութիւնն, և հետևապէս իրեն անկած վարձուց կամ պատժոց հրատարակութիւնն: Ապա ուրեմն հանդերձեալ աշխարհի մէջ վարձուց և պատժոց զատ զատ տեղեր պէտք է որ լինին ինչ տեսակ և ինչ կերպ կ'ուզես համարէ: Իմաստասիրութիւնն այս նիւթոյս մէջ կրօնից հետ կը համաձայնի. սակայն կրօնք աւելի յայտնաբարբառ կը խօսի այս բանիս վրայ. և մարգուս զգայութեանն և պատկերողութեանն խօսելով՝ զնա աւելի կը յոր-

դթրէ՝ յուսով բարեաց զորս խոստանայ նմա հան-
դերձեալ կենաց մէջ, և երկիւղիւ պատժոց զորս կը
սպառնայ: Իսկ խոստասիրութիւնն միայն չոր ու
ցամաք կերպով ասէ թէ առաքինութիւնն իւր վարձ-
քըն և ախտն իւր պատիժն պիտի ունենայ, առանց
բացատրելու պատժոյն կերպն տեսակութիւնն և
զայն կարձեցնելու կամ թեթևցնելու միջոցները.
դարձեալ աւելի բան մի ոչ ասէ թէ վարձատրու-
թիւնն յորմէ կայանայ, ինչ է տուած երջանկու-
թիւնն, արդեօք այս երանութիւնս անկորուստ և
յաւիտենական պիտի լինի թէ երթալով նուազի և
կամ նորէն կորնչի:

Շատ խոստասէրք առեսակ առեսակ ենթադրու-
թիւններ ունեցան այսոր վրայ՝ յորոց գլխաւորներն
են հոգեվոխութիւնն և հոգւոց անսահման յառա-
ջադիմութիւնն: Առջի կարծիքն կ'ենթադրէ թէ հո-
գիներն պետութենէ 'ի պետութիւն կամ աշխարհէ
յաշխարհ պիտի պանդխտին՝ միշտ գոյութեան զա-
նազան ձևեր առնելով՝ որ աւելի կատարեալ պիտի
լինի՝ եթէ ներկայ կենաց մէջ առաքինութեամբ և
հանճարով ճոխացել են, և ընդհակառակն աւելի
ստորին կազմուորութիւն մի՝ եթէ երկրաքարշ կեանք
անցուցել են և անասնական զգայութեանց տեղի
տուել են: Իսկ երկրորդ կարծիքն՝ զհոգիս տիեզե-
րաց մէջ պարունակէ պարունակ անցընել կուտայ և
մինչև ցաստեղս երկնից կը հասցնէ, ուր իւրաքան-
չիւրն իւր ընթացման համեմատ աշխարհ մի կը
գտնէ և համեմատական երանութիւն մի՝ որ պարու-
նակէ 'ի պարունակ պիտի աւելնայ՝ անդադար դէպ
'ի անհունն դիմելով որում ոչ երբեք պիտի հասնի,
որ իրաւն զրուցելով վերջնական հանգիստ և կա-
տարեալ երանութիւն գտնելու միջոց մի չէ: Ցայտնի
է որ այս կարծեօք մարդուս երևակայութիւնն ի-
մաստասիրաց աննշան վերացմանէն դուրս ելնելով

անվախճան հայեցողութեանց մէջ անկանի՝ որ իրենք
ապացուցեալ չէնեղէն զատ՝ իրենք ալ ուրիշ բան ոչ
ցուցանեն՝ բայց եթէ զայնս հնարողաց երևա-
կայոտ խելքն և նորահնար վարդապետութիւններ
գտնելու ջանքն:

Իւրաքանչիւր աղգաց կրօնք՝ իրենց ժողովրդոց
բնութեան յարմար և իրենց ապրելու եղանակին և
սովորութեանց և գաղափարաց համեմատ՝ արքայու-
թիւնները հնարած են. պատերազմասէր և վայրա-
գասուն ժողովրդոց վարձատրութիւն խոստանալով
զպատիւ և զփառս պատերազմի՝ որ քան զամենեսին
աւելի կարևորներուն պիտի տրուի. ցանկասէր ժո-
ղովրդոց՝ անվախճան հեշտութիւններ՝ մարմնոյ հա-
ճոյից լիովին կատարմամբն և հանապազորդ նորո-
գութեամբ. իսկ այն երկիրներու համար ուր ոգւոյ
և մարմնոյ գործունէութիւն հոգնութիւն կը բերէ,
և ամեն բանէ վեր կը դնեն երազատես հանգիստ
կեանքն՝ նոքա ալ գերագոյն բարի կը համարին մտաց
և խորհրդոց գագարիլն և կամաց անշարժութիւնն
և անձնատրութեան ոչնչանալն՝ որ մոռացութեամբ
անհնոյ մէջ պիտի ընկղմի և մեծին Համայնի տիեզե-
րական կենաց մէջ պիտի երթայ ու թաղուի, որ է
համաստուածութեան արքայութիւնն: Իսկ յոյնք որ
իրենց խոստասիրութեան պէս կրօնքնին ալ Աբևե-
քէն առած էն՝ առաքինութեան վերջնական վար-
ձատրութեան համար երկու կերպ ունէին՝ աստուա-
ծարութիւն և երանացումն Ելիսեան դաշտաց.
հռովմայեցիք այս նիւթոցս մէջ բան մի հնարած չեն,
այլ յունաց հաւատքն և կարծիքն ընդունած են.
միայն թէ աստուածարութիւնն չողոքորդութեամբ
անպատիւ արարին՝ այնպիսի մարդիկ աստուածոց
կարգն անցընելով որ կամ անօրէն սպրդագործներ
էին և կամ կայսերական ծիրանեօք զարդարեալ չէ-
մարներ, և իրենց երկինքն ալ՝ յունաց Ողիմպոսին

պէս այնպիսի բնակիչներով լեցուն էր՝ որ անշուշտ արդար մարդ մի ամօթ պիտի սեպէր իրեն հոն երթալ ու նստիլ:

Իսկ Ելիւսեան դաշտաց երանութիւնն՝ Վիրգիլիոսի և իր հետևողաց նկարագրութեանցն նայելով՝ ուրիշ բան չէին՝ բայց եթէ այն դաշտերու մէջ շրջագայիլ և անձնահաճ իմաստակաց հետ խօսակցիլ, որ որչափ ալ հաճոյական բան մի է՝ սակայն մարդս շուտով կը վարժի և կը ձանձրանայ, և անշուշտ դերահանճար հոգւոյ համար յաւիտեանս յաւիտենից վայելելու հեշտութիւն մի չհամարուիր: Այս ամեն բանէս կ'իմացուի թէ որչափ տկար է մարդուս պատկերողութիւնն՝ որ երկնից գաղափար ունելու համար ուրիշ բան ոչ առնէ՝ բայց եթէ երկրիս զբաւարձութիւններն յերկինս փոխադրել՝ որչափ հնար է չափազանցի տանելով զայնս՝ այլ և յաւէրժացնելով: Այս բանս՝ հնաւորով անհունն ձևացնել է, որով ուրիշ բան չլինիր՝ բայց եթէ տարտամ անսահմանութիւն:

Ինձ կ'երևի թէ Աւետարանն անհամեմատ բարձր է, և շատ աւելի իմաստասիրական քան զայս ցնորական կարծիքս. որովհետև առանց նկարագրութիւններով և քերթողութեամբ մարդկանց միտքն շլացընելու՝ բարձրաձայն կը քարոզէ թէ արքայութիւնն այնպիսի ինչ է «Զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց». և առանց ջանալու նորա պատկերն նկարել՝ որ վերագոյն է քան զզգայութիւնս և զմիտս՝ բաւական համարի հաստատել թէ մաքուր հոգւոց վարձատրութիւնն ուրիշ բան չէ՝ բայց եթէ հաղորդակցութիւնն ընդ մշտնջենաւոր կենաց և երանական տեսութիւն անհուն ճշմարտութեան և կատարելութեանց նորա: Հոգին այս հաղորդակցութիւնս կ'ընդունի՝ միանալով ընդ Յիսուսի Քրիստոսի՝ յորում մարդկութիւնն միացաւ ընդ աստուածութեան. այնպէս որ հաւատարիմ քրիստոնեայն՝ լինելով անդամ Եկեղեցւոյ՝ որ խորհրդական մարմին է Աստուծոյ մարդացելոյ, աշխարհիս մէջ նորա շնորհաց մէջ ապրելով՝ յերկինս ալ նորա փառաց լիութեան մէջ պիտի ապրի, կելով 'ի ծոց Աստուծոյ և յանհուն գոյութեան նորա, սակայն առանց ընկղմեալ լինելոյ անհնոյն մէջ, այլ անվթար պահելով զիւր անձնաւորութիւնն 'ի միջի անդ տիեզերական լուսոյն: Առանց մասնակցելոյ աստուածային էութեան՝ որ անհաղորդական է արարածոյ, և որ մնայ միայն յանձինս Սրբոյ Երրորդութեան, մարդս պիտի աստուածարի իր մարմնովն ալ՝ փառաւորութեամբն Քրիստոսի՝ որոյ անդամ է, և որ յետ վերածնելոյ զնա և կերակրելոյ իւր արեամբն պիտի լցուցանէ զնա իւր դերազանց փառօքն և յաւիտենական երանութեամբ: Ահա այս է քրիստոնէից խոստացուած վարձատրութիւնն՝ իւր առաքինաջան վաստակոց փոխարէն, որ է վերջնակէտ երանութիւն, որով մարդս պիտի նկատէ զլոյսն ճշմարտութեան յաղբերակունս անդր, և զուղխս երջանկութեան պիտի ըմպէ նոյն ինքն բարութեան աղբիւրէն:

Հարկ է խոստովանիմք որ ոչ ոք բնաւ այսպիսի փառաց և երջանկութեան գաղափար մի ընծայած էր մարդուս. իրաւ նախկին իմաստասէրներէն ոմանք ասացեալ էին՝ որ մարդուս կատարելութիւնն աստուածութեան նմանելու վրայ էր, և որչափ հնար էր այս նմանութեան մօտենալու էր. ապա ուրեմն անտարակոյս՝ ռամկէն աւելի լուսաւորեալ միտք ունելով՝ համարէին թէ աստուածութիւնն ամեն կատարելութեանց աղբիւրն էր: Սակայն ժողովրդեան պաշտածն այս չէր, և Ոլիմպոսի աստուածներուն նմանելու համար՝ առաքինութեան շատ մեծ ջանք

մի պէտք չէր, և ոչ ալ ծանր անձնանուիրման կարօտութիւն կար։

Իսկ ընդհակառակն քրիստոնէից Աստուածն է Հայր լուսոյ և ամենայն առաքինութեանց և աղբիւր ամենայն տրոց բարեաց իջելոց 'ի յերկնից. ինքն է բարին գերագոյն, ճշմարտութիւնն տիեզերական, լրումն արդարութեան, և գեղեցկութիւն անբիծ անարատ, ինքն է սէր անհուն և կեանք յաւիտենական. ուստի և արարածն որ բարեբաղդաբար իրեն կ'ընծայէ զինքն բոլոր իւր գոյութեամբն և բովանդակ կամօք՝ չկարէ անկանել 'ի փառաց անտի կամ կորուսանել զերջանկութիւնն ընկալեալ. վասն զի միանգամ 'ի ծոց Աստուծոյ ընդունուելէն ետև՝ զիրար անվախճան կը ժառանգեն և զիրար կը ճանաչեն. և գրեթէ անլուծանելի ամուսնութիւն մի է ընդ մէջ մարդկութեան և աստուածութեան, որ նախ յանձին Քրիստոսի կատարուած է, և 'ի ձեռն նորա ընդ ամենայն բարեհաճոյ մարդկան՝ որ ընկալան զկեանս իջեալս 'ի յերկնից. վասն որոյ և ասաց. «Արա՛, Հայր իմ, զի իցեն նոքա մի ընդ մեզ, որպէս և մեք մի եմք»։ Այս Աւետարանի խոստացեալ երջանկութեան լրումն ալ այն է որ՝ ամենևին պիտի չկորնչի. վասն զի ուրիշ իմաստասիրաց և կրօնից երջանկութեան պէս բնական ուրախութեանց անսահման չափազանցութիւն մի չէ՝ որով և չափաւոր և կորստական, այլ երանութիւն յաւիտենական՝ հաղորդակցութեամբ աստուածային կենաց որով կը լցուի և իւր անփոփոխելիութեանն մասնակից առնէ. որով հոգին «զմասն բարին ընտրած լինի, և զմիակ հարկաւորն՝ որ ոչ բարձցի 'ի նմանէ» այսինքն զժառանգութիւն գերագոյն բարւոյ. վասն զի բան մի չկայ որ աստուածային սիրոյն դէմ զօրէ՝ որով սիրէ նա զհոգի մարդոյն անքակտելի և անկորուստ միութեամբ։

Այս ամենայն ինձ շատ գեղեցիկ կ'երևի և յիրաւի արժանաւոր մարդոյ, և թերևս գեր 'ի վերոյ քան զբնութիւն նորա. վասն զի որչափ ալ կը հաւատամ թէ մարդ իւր ուժովն և իւր բնութեան պայմաններովն կարէ լինել յոյժ իմաստուն և հզօր և առաքինի, նաև 'ի դէպս ինչ մինչև 'ի դիւցազնութիւն ժամանող՝ սակայն խելքս չհասնիր թէ ինչպէս կարէ Աստուծոյ հետ միանալ՝ մինչև նորա կենացն լինել կենակից, և այնպէս ընկղմեալ յԱստուած մինչև գոգցես մի լինել ընդ նմա։ Ասի թէ այս բանս գերբնական շնորհօք պիտի լինի, ապա ուրեմն եթէ այս բանս հնարաւոր է՝ ուրիշ կերպով չկարէ լինել բայց եթէ մարդկային բնութեան նորահրաշ կերպիւ վերհամբառնալովն. սակայն ե՛կ տես որ այս գերբնական միջոցն ալ ինձ համար մթին բառ մի է։ Ուր մնաց որ միայն հոգին այսօրինակ պիտի չփառաւորուի, այլ և մարմինն՝ որ ատենօք այնոր հետ միացեալ էր, և յարութեան օրն ալ դարձեալ ինքն ալ պիտի այլակերպի, որպէս զի մարդկութիւնն իւր գոյութեան երկու մասամբքն ալ մասնակցի այն երանութեան՝ որում արժանի եղեալ են իրենց համընթացութեամբն։ Ասա ևս կը ստիպուիմ ճանաչելու՝ որ բանախօսական մեծ ճշդութիւն և կապակցութիւն կայ այս ամեն վարդապետութեանց մէջ՝ որ ամենքն ալ իրարմէ կ'ելնեն և ամենքն ալ 'ի միոյ սկիզբէ՝ որ է մարդեղութիւն Բանին վասն փրկութեան աշխարհի։ Եւ միանգամայն այս ամեն իրարու պնդաղօդ հետևութիւններս՝ շատ յարմար կուգան մարդկային հոգւոյ իղձերուն՝ որ միշտ կը ցանկայ և կը ծարաւի բարձրութեան մեծութեան երջանկութեան և անմահութեան։ Բայց արդեօք սկիզբն ճշմարիտ է, կամ թէ Յիսուսի Քրիստոսի աստուածութեան մարդեղութիւնն իրական ինչ է, թէ առասպել իմն։ Ահա միշտ այս ինչ է որ մտացս մէջ կը դառնայ և զիս

կը խուճապէ. Թէպէտև ջՔրիստոս պարզ մարդ համարելով, բացատրութիւն մի պիտի չկարեմ տալ ոչ իւր անձին և ոչ իւր կենացն, ոչ իւր մահուանն և ոչ աշխարհիս վրայ գործած ամենամեծ յեղափոխութեանն:

Սակայն որչափ ալ խաւարի և տարակուսի մէջ եմ՝ կ'ուզեմ յառաջ երթալ, և գժուարութիւնները զիս պիտի չկասեցնեն, բաւական է որ ամեն օր սակաւիկ մ'ինչ վաստկիմ: Հիմա այս աւուր խորհրդածութիւնները՝ կարեմ ապահովապէս հետևցնել որ քրիստոնէից արքայութիւնն ամենէն գերագոյն ամենէն մաքուր և ամենէն աւելի ոգեղէն է. և այսոր համար իմաստասիրութիւնն ոչ միայն զօրաւոր պատճառ մի չունի զայն հերքելու, այլ հարկ է որ ընդունի և զայն՝ եթէ ոչ իւր ամեն ձևերուն որ պատկերողութեամբ կարէ զանազանիլ, գոնէ ըստ հիմանն՝ որպէս ամենէն աւելի արժանաւոր վարձատրութիւն բանաւոր և ազատ էակի:

Դժոխք

1 Յուլիս:

Ինչ որ յեռանդն արքայութեան համար ասացի՝ գժոխոց վրայ ալ կը յարմարի. վասն զի եթէ բարիներն պիտի վարձատրուին՝ ապա հակադարձաբար չարերն ալ պիտի պատժուին: Արդարութիւնն երկուքն ալ կը պահանջէ, և աստկուբեամբ կ'ուզէ՝ որ իրենց ամեն փափաքներն կատարուին երը աստուածային օրինաց դէմ և իրենց խղճին բողոքներուն հակառակ՝ իրենց նմանեցաց ալ միասս տալով վայելք փնտռողներն՝ եթէ այս աշխարհիս մէջ իրենց անկարգութիւնները վշտակրութեամբ և զղջմամբ չքաւե-

ցին՝ ուրիշ տեղ իրենց յանցանաց և անօրէնութեանց արժանաւոր պատիժն ընդունին. այս բանիս իմաստասէրք ալ աստուածաբանից հետ կը համաձայնին: Միայն Թէ հոս ալ իմաստասէրներն իրենց վերացեալ տարտամութեան մէջ կը մնան. վասն զի Թէպէտ կը հաստատեն Թէ պատիժ մի հարկաւոր է՝ բայց ոչ տեղն կ'որոշեն ոչ կերպն և ոչ միջոցներն. կը համարին Թէ այս պատիժս բոլորովին ներքին է և համրենց բառոյն ենթակայական, այսինքն Թէ միայն խղճի խայթերը պիտի ունենան՝ որ աւելի լուսաւորեալ լինելով պիտի ճանաչէ Թէ օրինաց որ մասին մէջ պակսեցաւ: Հարկ է խոստովանիլ որ եթէ պատիժն այս միայն է՝ շատ զօրաւոր հաստատութիւն մի չէ օրինաց և ոչ ալ այնչափ սարսափելի. և որովհետև մարդիկ իրենց խիղճն գիւրաւ կը խաբեն՝ որ զջարն կը քօղարկէ կամ կը Թեթևցնէ, և երբեմն կ'արդարացնէ ևս, և այս բանս աւելի մտացեաց և ուսելոց կը հանդիպի, ապա ուրեմն եթէ հանդերձեալ աշխարհի մէջ ալ խղճի միայն մնայ՝ իրենք զիրենք կարէին դարձեալ արդարացնել՝ եթէ արտաքին զօրութեան վրէժխնդիր ազդեցութիւն մի չմնայն, և առարկական պատիժ մի ցաւալի տպաւորութիւնն չզգային, որ իրենց մտաց պատրանքն և հնարքն փարատելով իմացնէ նոցա իրենց մեղաց ծանրութիւնն:

Դարձեալ հարկ է որ այս աշխարհիս բաժնուած հոգիներն տեղ մի երթան, այնպիսի տեղ մի որ իրենց համար տրուած վճռոյն յարմար լինի, և ուր գտուին նոյն վճռոյն գործադրութեան պաշտօնեայներն և գործիքներն: Եւ ահա ըստ այմ ևս կրծոք քան զիմաստասիրութիւն աւելի ճիշդ կ'ուսուցանեն, և այնպէս ալ պէտք է որ լինի՝ որովհետև կը համարին Թէ իրենց ուսուցածներն յերկինից ընդունած են: Հեթանոսաց դիցաբանութիւնն չատ ճոխ է այս նիւթոյս կողմանէ, և ո՛վ որ իր դասական ուսմունքն

աւարտած է՝ անշուշտ կը յիշէ Ստիւքս և Ախերոն գետերն, Կարոնն ու իր նաւակն, Կերբերոսն, Պլուտոնն, Պերսեփոնէն, զՊարկայս և զԿատաղիս, Տանտաղոսի պատիժն, Իքսիոնի անիւն, Սիսիփոնի խարակն, Պրոմեթէոսի անգղն, Դանայեանց տակառն, և այլն, և այլն: Դիւցազներգակ քերթուած մի չկայ՝ որոյ մէջ դժոխք իջնող մի չգտուի սարսափելի նկարագրութիւններով. և թէպէտ քրիստոնէական իմաստութիւնն այս նկարագրերս և առասպելներս ոչ ընդունի՝ զորս նախկին աւանդութեանց չափազանցութիւններ և այլայլութիւններ կը համարի, սակայն մարդուս մտաց պատկերողութիւնն շատ անգամ նոցա պայծառափայլ ձևոց վրայ կը հիանայ և գեղեցիկ քերթողութեամբն կը զմայլի: Ես առ այժմ խնդրոյն այն կէտն միայն կ՚ուզեմ ցուցանել՝ որ դըժոխոց գաղափարն իմաստասիրութեան ալ հակառակ չէ, որովհետև ինքն ալ ստիպեալ է ընդունելու թէ այս աշխարհէս անդին չարաց վերջնական պատիժ մի հարկաւոր է, որովհետև ինքն ալ կը խոստովանի թէ արդարութիւնն աննախագրելի է, և կրօնից հետ ինքն ալ ասէ թէ իւրաքանչիւր ոք իր գործին համեմատ պիտի գտնէ: Ապա թէ ոչ՝ նոյն իսկ բնական օրէնքն հաստատութիւն ոչ ունէր, և նախախնամութիւն կամ տեսչութիւնն ալ աննշան բառ լինէր:

Ուստի պատճառ չունիմ քրիստոնէից դժոխքն մերժելու՝ գոնէ որպէս նկարեն զայն Աւետարանն և աստուածաբանութիւն. վասն զի մեր մէջ ալ՝ որպէս նաև առ հեթանոսս արուեստագիտաց պատկերողութիւնն հանդերձեալ աշխարհի վրայ՝ շատ սարսափելի նկարագրութիւններ առնելու ձեռք զարկած են, և նոցա ամեն մտահաճութիւններն ընդունելու ոչ ոք զիս կը ստիպէ, և ոչ իսկ Տանթէի գիւտերն, որչափ ալ հանճարեղ լինին: Բայց մինչև հի-

մա ասացածներէս ինձ անդիմադարձ և անհերքելի կ՚երևի որ՝ դժոխք կամ տեղի պատժոց ասացեալն լի լինելոց է ցաւովք՝ որովհետև երանութեան օթևանէն զատուած է, խաւարաւ պաշարեալ՝ վասն զի երկնից լոյսն չկարէ ընդունիլ, և մթին և ծախիչ հրով բորբոքեալ՝ քանզի սիրոյ քաղցր ջերմութիւնն հոն ոչ թափանցէ՝ անձնասիրութեան և նախանձու անզօր խռովութեամբն միշտ և անդադար ալեկոծեալ լինելուն պատճառաւ: Այս ալ դարձեալ չեմ կարող ուրանալ՝ որ սկզբնապատճառն չարի կամ առաջին արարածն որ զայն հնարեց՝ յիրաւի այն խաւարային թագաւորութեան իշխանն է, և այն ոգիներն որ իր ապստամբութեան քշեց տարաւ՝ իրեն հետ այն տեղն կը բնակին և իրեն Աստուծոյ դէմ ունեցած կատաղութեանն և մարդկանց դէմ ունեցած ատելութեանն կ՚արբանեկեն. որով ինչպէս իր չարեացն այսպէս ալ իր տանջանաց մասնակից են. և վերջապէս այն թշուառ և չարեացապարտ մարդիկ ալ՝ զորս նա կը ջանայ փորձելու և չարացնելու՝ իւր գործակիցներն շատցնելու՝ և իւր տանջանաց ընկեր առնելու համար՝ եթէ ակարութեամբ նորա ձայնին լսեն և յօժարութեամբ զիրենք նորա ձեռքն մատնեն՝ որպէս արարին երբեմն անկեալ հրեշտակք՝ այս մարդիկս ալ կ՚երթան կը լեցուին այն դատապարտելոց ահագին վիհն, երբոր մինչև իրենց վերջին շունչն Աստուծոյ դէմ ունեցած թշնամութեան մէջ կը հանապազորդեն, ուրանալով զնա և հայհոյելով իրենց երկրիս վրայ ունեցած փորձոյ ժամանակին մինչև վերջին վայրկեանն:

Իսկ եթէ հարցանես թէ այս դժոխոց տեղն տիեզերաց ընդարձակութեան մէջ ո՛ւր և ո՛րպէս շինուած է, ոյք են արբանեակքն և գործիք և կերպ տանջանաց, որպիսի է հրոյն բնութիւնն որ այրէ զյանցաւորս առանց ծախելոյ զնոսա. այս ամեն հարցուա-

ծոց պատասխան մի չունիմ, և իմաստասիրական հայեցողութեամբ բան մի գիտելու միջոց չունիմք, և ենթադրութիւններ և կարծիքներ միայն կարէաք առնել, եթէ Նեւտոնի առածն իմաստասիրութեան ալ նշանաբանն չլինէր Ենթադրութիւնս ոչ հնարիմ: Մանաւանդ որ Աւետարանին մէջ ալ այսպիսի նկարագրութիւններ յոյժ սակաւ են, ասելով միայն թէ հուրն նոցա ոչ շիջանի, և հոգին կրծող որդն ոչ մեռանի: Իսկ Յովհաննու Յայտնութեան մէջ շատ աւելի սարսափելի նկարագրութիւններ կան զորս մեկնաբանելն միշտ դիւրին չէ: Բայց այս հրահանգաց մէջ ամենէն աւելի զիս զարմացնողն՝ այն է որ մարդուս միտքն բարձրացնելով՝ միշտ դէպ 'ի հոգեւորականն և իրաց հիմն սեպուած գաղափարին կը տանի. և ինչպէս երանութեան վրայ խօսած ժամանակ՝ երկրաւոր զուարճութեանց նկարագիրն 'ի բաց կը թողու՝ որ երկնաւորաց հետ չեն կարող բաղդատուիլ՝ զորս մարդու աչքն չկարէ տեսանել և միտքն չկարէ ըմբռնել, և այն երկնային երանութիւնն կը հաստատէ զԱստուած և զյաւիտենական ճշմարտութիւնն տեսնելու և գերագոյն բարին ժառանգելու վրայ, և աստուածային կենաց հաղորդ լինելու վրայ 'ի ծոց անճառելի Երրորդութեան՝ որ հոգւոյ համար ամենէն մեծ փառքն և ամենէն գերազանց երջանկութիւնն է, այսպէս ալ երբ կ'ուզէ հասկացնել սատանային և իւր արբանեկաց և դատապարտելոց տանջանքն՝ շիտակ այնոր խորն կը հասնի, և այն տանջանաց իսկութիւնն կը համարի յերկնային լուսոյ զրկուած լինելն, և այն հոգւոց 'ի սկզբնէ կենաց բաժնուած լինելն՝ որով մահուան մէջ թողուած կը մնան: Ապա ուրեմն այս ամեն ապստամբ հոգիք և ճշմարտութիւն ուրացողք մեռած կը համարուին, և յաստուածային կենաց մեռեալ լինելնուն համար՝ որով յանգոյութիւն ոչ դառնան, իրենց սեպհա-

կան կենօքն միայն կը մնան, որ այն ալ գերագոյն բարւոյն ունեցած ծարաւովն՝ ինքզինք կ'ուտէ ու երելով կը լափէ, յուսահատութեամբ տեսնելով որ ոչ բնաւ այնոր պիտի հասնին, և իրենց ամբարտաւանութեան ջանքովն և անկարող կատաղութեամբն ինչ որ առնեն՝ պարապ պիտի ելնեն:

Այս գաղափարներս ինձ յոյժ ընդունելի կ'երևին, և ամենևին բանավարութեան իրաւանց և իմաստասիրութեան արժանապատուութեան դէմ ոչ ելանեն: Բայց հոս սարսափելի խնդիր մի կ'ելնէ՝ որում մօտենալ ոչ համարձակիմ, և քրիստոնէական վարդապետութեան տուած լուծմանն ալ ամենևին խելքս չհասնիր: Արդարութեան դէմ եղած անարգանաց պատիժն անհրաժեշտ է՝ կ'ընդունիմ, սակայն այս պատիժս յաւիտենական պիտի լինի՝ թէ օր պիտի գայ որ աւարտի. յաւիտենական լինելն սրտիս ալ խելքիս ալ հակառակ կու գայ. վասն զի այն ատեն ինչպէս միութիւնն և խաղաղութիւնն պիտի հաստատուի՝ եթէ յանկեան ուրեք տիեզերաց ինչ և իցէ ձևով պիտի գրուին անհալ մետաղի մի կամ դժոխոց կոճղի մի պէս յանցանք և պատիժք, և յաւիտենական բարւոյ դէմ՝ յաւիտենական չար մի, որ մանիքէական ուրուականի մի պէս միտքս կը խուճապէ:

Յաւիտենականութիւն պատժոց

5 Յուլիս:

Շատ օրերէ 'ի վեր մտացս մէջ միակերպ պատժոց յաւիտենականութեան վրայ կը խորհիմ՝ առանց քայլ մի յառաջ երթալու. յերկուց կողմանց ալ պաշտպանող և դիմադրող պատճառներ գտնելուս՝

ոչ գիտեմ ո՛ր կողմն բռնեմ. վասն զի յերկուց կողմանց ալ առարկութիւնները կ՚եղնեն՝ որոց պատասխանն չեմ կարող տալ: Բայց առաւել քան զինաս՝ սիրտս կը բողբոջէ, և կարծես թէ ոչ կարեմ այս անդարձական վարդապետութեանս հաւանիլ: Սակայն երէկուան օրն միտքս տակաւ մի սասանեցաւ՝ այս նիւթոյս վրայ վիճաբանելով խմաստուն եկեղեցականի մի հետ որ համալսարանի աստուածաբանութեան մասին վարժապետ է, և գաղափարութեամբն մեծ համբաւ ստացած է: Այս քահանայս որչափ որ աստուածաբան է՝ նոյնչափ ալ խմաստասէր է, և իրեն ուսուցանելու և բացատրելու կերպին չուտով մի հասկացայ թէ արդի գիտութեան ալ կատարելապէս սեղեակ է: Բարեհաճեցաւ միայն տունն ձանձրութիւնով՝ զինքն ալ հոն հրաւիրուած գալ իրեն հետ բաբեհամ, և միայն անոնն լսած լինելով և անձին ծանօթութիւն չունենալով՝ առջի անգամ տեսնելս սիրտս կապուեցաւ, թէպէտ և մեք խմաստասէրքս եկեղեցականի անունէն և զգեստէն միշտ կը խորշինք: Եւ որովհետև խելքս միտքս իմ մեծ խընդրոյս հետ էր՝ ինքներնեան ասացի. Սա մարդուս հարցընեմ այս նիւթս. վասն զի հիմա այս ժամս մտքին անգամ չանցնիր և պատրաստութիւն մ՚ալ չունի, ուստի աւելի ապահով կարեմ լինել՝ որ ասացածին վրայ ինքն ալ մտօքն համոզուած է:

Սակայն ոչ համեցայ սեղանին վրայ խօսք բանալ նախ որ խնդիրն չատ ծանր է և ի գինեբոս ձառելու նիւթ չէ, և երկրորդ փորձով գիտեմ որ երբ նիւթոյ մի վրայ հրապարակաւ կը խօսուի՝ անձնասիրութիւնն մէջ կը մտնէ ու չալթոզ երևիլ կ՚ուզէ համ գոնէ չալթուած երևիլ չուզէր, ուստի խօսողներն գրեթէ չակամայ աւելի ունկնդրաց վրայ ապաւորութիւն առնելու կը նային՝ քան թէ ճշմարտութիւնն հաստատելու, այսու կարծիքներն համ

գոնէ այնոց բացատրութիւններն չափազանց ձև մի կ՚առնուն, և երբեմն նոյն իսկ անկեղծութիւնն ալ կ՚պլըպլի: Այս բաներս մտածելով ինքզինքս բռնեցի, ու երբ սուբՃերնիս ալ խմեցինք՝ զինքն առանձինն պատուհանի մի առջև տարի՝ ուր երկայն խօսակցութիւն մի ունեցանք՝ որոյ համառօտութիւնն այս է:

«Վարդապետ հայր, ասացի, արդեօք կաթողիկէից լինելս համար՝ բացարձակապէս հաւրէ չեստալ պատժոց յաւիտենականութեան, թէ յաւիտենական բան այն տեղ միայն երկայն ժամանակ մի ցուցանէ՝ որ վերջապէս պիտի տարաբախտ, օրինակի համար ինչպէս ռամիկքն ասեմք՝ տարի մի է որ քեզ կը սպասեմ՝ փոքր՚ի շատ երկայն ժամանակ մի ցուցանելս մտօք: Մանաւանդ որ այսպիսի գիտնական կամ պլաթանական ձևերը շատ կան Գրոց մէջ. զոր օրինակ Աստուծոյ համար որ պարզ ոգի է՝ ասի ունել աչս, բերան, ականջս և բազուկս: Արդեօք այս խօսքս ալ այնպիսի ձև մի հասկանալու է՝ թէ ճիշդ ըստ բառին առնելու է»:

Քահանայն առանց տարակուսելու պատասխանեց. «Ճիշդ ըստ բառին առնելու է, և բոլորովին բառական ճշդութեամբն. վասն զի սուբբ Գրոց ասացածն ալ անվախճան յաւիտենականութեան համար է, ուրիշ խմաստ չունի: Ինչն վճռաբար կը զրուցէ, և Եկեղեցին ալ նորա բանիս կ՚ուսուցանէ՝ որ դատապարտելոց պատիժն վերջ պիտի չունենայ, ինչպէս նաև երանելեաց վարձքն: Նորին կարդացէք այն խօսքերն որ այս բանս կը հաստատեն. Մարկոսի Թ դլուխն ու 43րդ համարն գրուած է թէ չարերն այրող կրակն բնաւ պիտի չմարի, և անոնց կրծող որդն բնաւ պիտի չմեռնի. նմանապէս երբ Մատթէոս աւետարանիչ (ԺԸ, 41) աչխարհիս վերջն և ընդհանրական գատաստանն կը նկարագրէ, Յիսուսի Բրիստոսի բերնէն այս խօսքերս առէ. «Երթայք յինէն

անիծեալք 'ի հուրն յաւիտենական ». քան զոր աւելի դրական և որոշ վճիռ չկարէ լինել. և զոր Եկեղեցին հաւատոյ մասն որոշած է. և հետևապէս ճշմարիտ կաթողիկէ լինելու համար՝ զայն այնպէս ընդունելու է՝ ինչպէս որ որոշուած է Սրբոյն Աթանասի ասացեալ հանդանակին մէջ՝ որ ասէ. Այս զբարիս գործեցին՝ երթիցեն 'ի կեանս յաւիտենականս, իսկ այս զչար՝ 'ի հուրն յաւիտենական: Այս իսկ են կաթողիկէ հաւատք, որում եթէ ոչ ոչ հաւատարմաբար և հաստատապէս հաւատասցէ՝ ոչ կարասցէ հասանել փրկութեան »:

« Կը ցաւիմ որ այս այսպէս է, պատասխանեցի, որովհետև այս վարդապետութիւնս շատ մարդկանց համար քար գայթակղութեան է, և նոցա միտքն զգացմունքն և խիղճն կը խռովէ՝ յայտնի տեսնելով որ այս վարդապետութիւնս Աստուծոյ բարութեանն ալ արդարութեան ալ հակառակ կ'ելնէ »:

« Ես այսպիսի հակառակութիւն ամենևին ոչ տեսանեմ, ասաց քահանայն, ամենապաղ արեամբ մի: Հաճեցէք ձեր միտքն բացատրելու, ես ալ կը ջանամ ձեր առարկութեանց պատասխան տալ: Գիտեմ որ հաւատոց այս կիտիս վրայ շատ նախապաշարմունք կան աշխարհականաց միտքն, և մանաւանդ նոցա որ խնդիրն ամենևին խորախորհուրդ քննած չեն. սակայն դուք, Տէր, որ անուանի իմաստասէր էք և ճշմարտութիւնն անկեղծաբար կը բնառէք, ինչպէս որ ձեր գրուածներն կարգալով համոզուած եմ, ռամկական նախապաշարմամբ խաբուած չէք կարող լինել, ուստի կը յուսամ որ ձեր ասելիքն ալ հասարակ բաներ լինելու չեն կամ քրիստոնէութեան դէմ ճամարտակութիւններ: Ձեզ պէս մարդ մի հարկ է որ հաստատուն պատճառներ ունենայ Եկեղեցւոյ վարդապետութիւնն չընդունելու և դիմադրելու համար, զորս ես ալ կը փափաքիմ ճանաչելու, ոչ թէ հաւատոցս վրայ տարակոյս ունելուս համար, որ

բոլորովին հաստատ է, այլ ձեր և բազմաց հաւատոց շահուն համար՝ որ նոյն երկմտութեան մէջ կը գըտուին »:

Այս խօսքերս սակաւ մի զիս շփոթեցին, և որչափ ալ իմ անձնասիրութիւնս կը շոյէին՝ սակայն միանգամայն 'ի նեղ կը ձգէին՝ զիս ստիպելով իմ դիմադրութեանս այնպիսի պատճառներ տալ՝ որ սովորական առարկութիւններէն աւելի ոյժ և հաստատութիւն ունենան: Վասն զի իրաւն ասելու համար՝ թէ և օրերով այս խնդրոյս վրայ կը խորհէի և մանր կը պրպտէի, սակայն սովորական զրուցուածներէն աւելի բան մի չունէի ասելու, այլ ինչ որ ամեն օր կը լսեմք ամենուն բերանն յաւիտենական պատժոց խստութեան և անիրաւութեան վրայ: Բայց որովհետև քահանայն իմ խելացս վրայ մեծ համարումն ցուցնելով՝ իմաստասիրի պատիւս գրգռած էր՝ շփոթութիւնս դրսուանց չցուցի, ուստի համեստ կերպով՝ բայց միանգամայն վստահութեամբ պատասխանեցի. « Որովհետև իմ իմաստասիրութեանս կը դիմէք՝ ապա ես ալ իբրև իմաստասէր ձեզ հետ կ'ուզեմ այս նիւթոյս վրայ խօսիլ »:

« Նախ և առաջ կարծեմ սա սկզբանս դուք ալ կը հաւանիք՝ որ Աստուած անունն ամենայն կատարելութեանց լրումն կը նշանակէ, ուստի մեք ալ իւր բնութեան արժանաւոր գազափար մի ունելու համար՝ պէտք է որ իրեն ընծայեմք զայն ամենայն առաքինութիւնս զորս ունին մարդիկք և այն դերագոյն աստիճանաւ այսինքն անհուն եղանակաւ: Իսկ արդ մարդկային հոգւոյ ամենէն դեղեցիկ ստորոգելին զուտ սէրն կամ գթութիւնն է՝ որով ինքն կը բարձրանայ և անտի առնու իւր մեծանձնութիւնն և անձնանուիրումն, և այսու է որ ինքն ալ սիրոյ կ'արժանանայ: Արդ սիրոյ դերագոյն աստիճանն կամ տիեզերական գութն պէտք է որ գտնուի յԱս-

տուած. և այնոր համար է որ զինքն կոչեմք Հայր երկնաւոր, և կարծեմ Գրոց մէջ Աստուած ալ ինք իր համար ասէ թէ բնաւ մայր մի իր զաւկներն այնպէս ոչ սիրէ, որպէս սիրէ նա զմեզ: Ապա կը հարցանեմ՝ մարդկանց մէջ հայր կամ մայր մի կա՞յ որ իր զաւկներն չսիրէ՝ նա և զնոսա որ իրենց դէմ գործած են և իրենց սիրոյն դէմ ապերախտութիւն միայն ցուցել են: Մանաւանդ թէ ո՞չ տեսանեմք՝ որ որչափ աւելի զաւկներն իրենց վիշտ պատճառեն՝ այնչափ իրենց սէրն ալ կ'աւելնայ. և մի թէ նոքա որ աւելի զիրենք կը տրամեցնեն և աւելի սուղի կը նըստին՝ սովորաբար միւսերէն աւելի սիրելի չե՞ն համարուիր. որ շատ ալ լաւ բան է՝ որովհետև չար զաւկներն քան զայլս աւելի սիրոյ պէտք ունին և այնու միայն ճամբու կարեն գալ: Այսոր համար է որ բարեզգած ծնողք իրենց յանցաւոր որդւոց պակսութիւնն ու յանցանքն թեթևցնել ու անմեղադիր առնել կը ջանան, և ամենևին ոչ յուսահատին նոցա ուղղութեան վրայ, ևս առաւել երեսէ ոչ թողուն, և այլ աւելի զնոսա անդարձ հեռաւորութեան ոչ դատապարտեն ...: Եւ Աստուած որ հայրերու հայր է, և քան զամենայն մարս գթած է ասէ իրեն համար՝ կարէ՞ իր արարածոյն դէմ որոյ տակարութիւնն ճանաչէ՝ այս մահագոյժ և անդարձ վճիռս տալ՝ զոր երկրաւոր հայր մի ամենևին չկարէ: Ո՛հ, ոչ, այս անհնարին է, և մտածելն իսկ սիրտս կը խռովէ, և աստուածային բարութեան դէմ հայհոյութիւն կը համարիմ: — Այս ասացածս Աւետարանի օրինակաւն ալ կարեմ հաստատել՝ որոյ վրայ աշխարհ ամեն կը սքանչանայ, և երկրիս վրայ քան զայն աւելի խանդակաթ վէպք չկարէ լինել, որ է անառակ որդւոյն պատմութիւնն ...»:

«Լաւ օրինակ բերիք, ասաց քահանայն՝ խօսքս կտրելով, և Եկեղեցւոյ վարդապետութիւնն հաստատելու համար քան զայս աւելի յարմար օրինակ չէիք կարող յիշել: Այո, իրաւունք ունիք. անառակ որդւոյն հայրն՝ որ առակաւոր ձևոյ ներքև ինքն իսկ Աստուած է, հայրական բարութեան օրինակ է. որ իր յանցաւոր որդւոյն ընդ առաջ ելանէ՝ որ թըշուառութեան մէջ անկած իրեն կը դառնար, ձեռուըներն կը բանայ զինքն գրկելու, և իր անցեալ ապերախտութեան հակառակ՝ զինքն իր սրտին վրայ կը գրկէ, իր վատանունութենէն կը հանէ, և գերդաստանի զաւակ լինելու նշաններն իրեն կը դարձնէ, և իւր դարձին հանդէսն կատարելու համար պարարակ եղն ալ կը մորթէ: Բայց այս բաներս ի՞նչ պայմաններով լինի՝ գիտէք, և թէ ի՞նչ պատճառէ յառաջ կու գայ իւր գթութեան զեղումն՝ այն ալ ձեզ ծանօթ է: Այսինքն է որ այն այսչափ ատեն ապերախտ դտուած զաւակն որ անմիտ հեռաւորութեամբն հօր սիրտն կեղեքել էր, վերջապէս իր յանցանքն կը ճանաչէ և ինքն իրեն կուգայ, և 'ի ցաւոց յաղթուած և 'ի խայթից տանջուած՝ որչափ որ իր հպարտութիւնն ու ամօթն դէմ կը դնէր, միտքն կը դնէ և կ'որոշէ հայրենի տունն դառնալու և անտի ներումն խնդրելու: Ուստի այս շնորհս ընդունելու համար է որ հօրն ոտքն անկանի, իւր յանցանքն կը խոստովանի և բարձրաձայն կը յայտնէ որ այլ ևս արժանի չէ որդի սեպուելու: Երբոր մարդս կը զըղջայ, և գործած մեղաց խոստովանութեամբն և արժանացած պատժոց յանձնառութեամբն ալ զայն կը յայտնէ, այն ատեն ողորմութեան դուռն ալ կը բացուի, և բարութիւնն արդարութեան հետ կը համաձայնի: Վասն զի բարոյական չարն ջնջուելու համար՝ ինչպէս որ ազատութեամբն եղած է, այսպէս ալ հակառակ ազատ ներդործութիւն մի հարկաւոր է, և քանի որ այն չարն գործող կամքն սրտի մաօք իր չար տրամադրութեան մէջ կը յարատևէ՝ որով յանցաւոր

եղած է, ներումն ընդունելու վիճակի մէջ ալ չէ զոր ոչ իսկ խնդրէ: Եւ իւր ամբարտաւանութեամբ մերժած ներողամտութիւնն ալ իրեն օգուտ մի չառներ. որ այս դիպուածիս ոչ թէ գթութիւն՝ այլ ակարութիւն լինի: Այսոր համար կը տեսնէք որ անառակ որդւոյն հայրն՝ հեռաւոր աշխարհներ նորա ետևէն չերթար զինքն բնտռելու, և նորա անկարգ կենաց մէջ ետևէն չանկանիր զինքն յանդիմանելու համար. որովհետև ոչ միայն ունկնդիր պիտի չլինէր, այլ թերևս և արհամարհէր ալ և այպանէր, որով և իր թշուառ որդւոյն յանցաւորութիւնն ալ աւելցուած պիտի լինէր: Ապա բարութիւնն ազգոյ լինելու համար՝ սպասելու է որ ատենն հասնի. վասն զի իր զօրութիւնն ալ հոգւոյն մէջ չմտներ քանի որ դուռն փակուած է: Այս դուռս բանալու համար երկու բանալիք կան՝ յորոց մին Աստուծոյ ձեռքն է, իսկ միւսն մարդուս՝ որ ազատ ստեղծուած է: Ամեն բարոյական գործոյ մէջ՝ ազատութիւնն իր մասն ունելու է, և իմաստասէրն այս ճշմարտութիւնս չկարէ ուրանալ ...»:

« Անտարակոյս ընդունիմ զայն, ասացի՝ ես ալ իր խօսքն կարելով, և քան զայլս աւելի կ'ուզեմ որ մարդկային ազատութեան առանձնաշնորհութիւնն ամբողջ պահուի: Գիտեմ որ իր գոյութեան ամեն պարագայից մէջ, մանաւանդ իւր կենաց ուղղութեան մէջ որչափ ալ զանազան ազդեցութեանց ներքոյ անկեալ լինի՝ ազատութեամբ առնելու է իւր ընտրութիւնն և այնոր ձայնին լսելու է, որով իւր ազատութեամբ ուղածովն արդիւնք կամ ապարդիւնք կ'ունենայ, որպէս զի իւրաքանչիւր ոք իր գործին համեմատ իր փոխարէնն ընդունի: Սակայն այսու հանդերձ մարդս այնչափ ագէտ և տկար է, և այնչափ դիւրախաբ իր երևակայութենէն և զգայութեանց յօժարութենէն և սրտին շարժուածքէն՝ որ

Աստուած՝ որոյ բարութիւնն հաւասար է իր արդարութեան և կարողութեան, պէտք է որ այնոր վրայ ողորմի, և երբ կը տեսնէ որ կորնչելու վրայ է՝ պէտք է որ այնոր ձեռնտու լինի և օգնէ՝ իւր շնորհքն տալով, և ամենայն կերպերով ու միջոցներով զինքն արգելու վտանգաւոր զառ 'ի վայրէն որ յանդունդն կը տանի »:

« Այո, անտարակոյս, ասաց քահանայն, և այսպէս ալ արարեալ է Աստուած 'ի սկզբանէ հետէ, և միշտ ալ նոյնպէս առնէ: Ադամայ մեղանչելէն ետև դութն շարժեցաւ, և հայրական սիրով զինքն պատժած ատենն ալ՝ իր թշուառութեան մէջ յոյս տուաւ իրեն Փրկիչ մի խոստանալով: Եւ նահապետաց ձեռօք և Սինա լերին վրայ տրուած օրինօք և Մովսիսի առաջնորդութեամբն, և ընտրած ժողովրդեան հրահանգներովն և վերջապէս մարգարէից ձեռօք դարուց 'ի դարս պատրաստեց այս Փրկչիս կամ Մեսիային գալուստն, որ էր իւր սիրելի Որդին կամ իւր Բանն աստուածային: Ուստի 'ի սահմանեալ ժամանակի Բանն մարմնացեալ էջ անձամբ յերկնից առ 'ի ուսուցանել բժշկել և 'ի փրկանաւորել զմարդիկ. բայց դուք ալ գիտէք թէ ինչ ընդունելութիւն գտաւ, և ինչ փոխարէն ընդունեցաւ: Սակայն նա իւր մեծ զոհագործութիւնն կատարեց՝ մարդկանց անօրէնութիւնն քաւելով՝ հեղմամբ արեան իւրոյ փոխանակ մեղաւորաց, և առ 'ի տալ նոցա զերկնային կեանս բերեալ յերկիր աստուածային արեամբն: Գիտէք դարձեալ թէ որպէս ընկալան հրեայք զայս վերածնութեան արիւնն զոր իրենց և որդւոց գլխոյն վրայ անէծքի փոխեցին: Յետոյ Յիսուս Քրիստոս զրկեց իւր առաքեալներն իւր փրկութեան աւետարանն ընդ ամենայն երկիր քարոզելու համար, և իւր խորհուրդներու ձեռօքն Եկեղեցւոյ մէջ շնորհաց և օրհնութեան անսպառ աղբիւր մի հաս-

տատեց: Ամենէն գերազանց և սքանչելի ուսումն ամենայն ազգաց տրուեցաւ. սակայն բաղումք 'ի նոցանէ չուզեցին այնոր օգուտն քաղել. և այսօր իսկ որչափ քրիստոնեայք ալ կան որ կը մերժեն և կ'անարգեն այն խօսքն որ զիրենք պիտի փրկէր: Ինձ կ'երևի որ մեզաւորաց համար երկնային օգնութիւններն պակաս չեղեն. և եթէ այսչափ դարձի և փրկութեան առիթներ անօգուտ կերպով տրուեցան իրենց աստուածային ողորմութենէն, որոյ գութն այն աստիճան հասաւ մինչև յանձն Քրիստոսի յերկիր իջանել՝ իւր արեան գնովն զնոսա փրկանաւորելու համար, Աւետարանին մէջ գրուածին պէս իր անձին համար ասելով « Անարգեցին և սպանին զծառայս իմ, թերևս յորդւոյ իմմէ պատկառեսցեն », ապա ուրեմն չեմք կարող զԱստուած մեղադրել՝ որպէս թէ ապերախտից համար պէտք եղածն չարար, և բաւական չհամբերեց նոցա անարգանացն, և միով բանիւ բաւական հայրութիւն չբանեցուց՝ նա որ մինչև իւր կեանքն իսկ իւր որդւոց համար տուաւ: Ա՛յլ ինչ կ'ուզէիք որ տայր, և իր գթութեան ինչ այլ ճամբայ կը մնար՝ զիրենք դարձի բերելու համար՝ որոց սիրտն այս մեծ զոհովս ալ չշարժեցաւ » :

Ես. — « Կը հասկանամ, Տէր հայր, և եթէ ամեն ասացածներդ ճշմարիտ են, ինչպէս որ ոչ տարակուսիմ որ դուք այնպէս կը հաւատաք, անտարակոյս մեծ է մարդկանց ապերախտութիւնն և ամեն բանի արժանի են՝ բաց 'ի յաւիտենական պատժոյ. այս բանս չեմ կարող ընդունիլ. վասն զի այն աստիճան սիրտս կը խռովէ՝ որ աւելի կ'ուզեմ ասել թէ՝ որովհետև Աստուած ամենակարող է՝ պէտք էր իւր կարողութիւնն գործածել հոգիներն առանց իրենց փրկելու համար, մանաւանդ թէ իրենց կամաց ալ հակառակ, քան թէ թողուլ այս խեղճ արարածներն կուրօրէն գահավիժելու անդարձաբար անյատակ վհին մէջ: Եւ

աւելի կ'ընտրեմ որ իւր կողմանէ բռնութիւն մի լինէր զիրենք փրկելու համար, քան թէ իրենց ազատութիւնն պահելու համար թողուլ որ այնու մոլորին ու կորնչին » :

Քահանայն. — « Այդ խօսքիդ վրայ շատ կը զարմանամ. դուք որ զմեզ կը մեղադրէք իբրև թէ հաւատոց իշխանութեամբն զմարդիկ կ'ուզեմք դերի առնել, հիմա ինձ աստուածաբանիս անկանի իմաստասիրի մի դէմ ազատութեան պաշտպան կանգնիլ: Ոչ, Տէր, այդ ձեր ուղածն անկարելի է. այդ ազատութիւնդ՝ ինչպէս ամենայն ինչ որ յԱստուծոյ կուգայ՝ սուրբ և անբռնաբարելի է. ինքն մեզ տուել է զայն մեր բնութեան հետ միատեղ, և Աստուծոյ պարգևներն անզեղջ են՝ իր տուածն ետ չառնուր. և կ'ուզէ ազատ արարածոց վրայ իւր տիրութիւնն բանեցընել՝ ոչ եթէ ստրկաց: Ինքն կը հաճի մեր հոգւոց մէջ բնակիլ, բայց կ'ուզէ որ մենք զինքն ամեն բանէ վեր ընդունիմք և կամաւոր սիրոյ յօժարութեամբ: Ուստի քանի որ այս ազատութիւնս իրեն դէմ կ'ելնէ, և նորա խօսքն չլսեր և իւր շնորհքն կը մերժէ՝ Աստուած այնպիսի հոգւոյ բան մի կարող չէ առնելու. և եթէ բոլոր յաւիտենականութեան մէջ իրեն դէմ կը հակառակի՝ յաւիտեանս ալ պատիժն պիտի կրէ » :

Ես. — « Շնորհակալ եմ, Տէր հայր, որ ազատութեան յարգն ինձ յիշեցուցիք, զոր մեք իմաստասէրքս երբեմն բանի տեղ ոչ դնեմք՝ երբ մեզ դէմ կ'ելնէ, և երբեմն ալ մինչև անկախութեան ծայրն կը տանիմք՝ երբ մեր բանին կուգայ: Ուստի ձեզ հետ կը ստիպուիմ ասելու՝ որ քանի որ ինքն բարւոյն դէմ կը հակառակի՝ իւր չարութեանն ալ գարման ոչ լինի. և այսպէս իւր յաւիտենական ապստամբութիւնն՝ յաւիտենական պատիժ կը բերէ: Բայց արդեօք կարելի է որ յիրաւի այսպէս անվախճան իւր

չարութեան մէջ յամառի, խելքերնիս կը պառկի՞ այս բանիս. և մի թէ չէ՞մք կարող յուսալ՝ որ նոյն իսկ ժամանակի երկայնութիւնն և տանջանաց սաստկութիւնն իրեն խելքն գլուխն բերէ և զղջումի գայ, որով և աստուածային գթութեան ալ արժանաւորի։ Արդեօք բոլորովին անյո՞յս բան է նորա դարձն և արդարացումն. և մի թէ տիեզերաց մէջ ալ պիտի գտուի տանջանաց անելանելի տեղ մի՝ որոյ դրան վրայ գրուած լիցի Տանդէի այս սարսափելի խօսքս. « Թողէք ըզյոյս զամենայն դուք որ ընդ այս մտանէք »։

Քահանայն. — « Անտարակոյս, սիրեցեալ Տէր, այս սարսափելի տեղս կայ և կաթողիկէ վարդապետութիւնն զայն կը հաստատէ. բայց պատճառն Աստուած չէ. վասն զի ինքն զամենայն արարածս երանութեան համար ստեղծեց, և նոյն իսկ երբ իրենց յանցանօքն զայն կորուսին, կ'ուզէ որ զամենեսին դարձեալ 'ի նոյն դարձնէ, և դուք ալ համոզուած էք որ այս բանիս համար ամեն ճար հնարեց, և իւր գթութեան ամեն միջոցներն գործածեց։ Մեծամեծ սուրբեր տեսած եմք, օրինակի համար Ս. Վինգենտիոս Պաւլայեցի և ուրիշներն՝ որ անհաւատից ձեռքն անկած քրիստոնեայ գերեաց վիճակին վրայ այնչափ ցաւ ունեցան՝ որ զնոսա ազատելու համար իրենց կեանքն զոհեցին նոցա չղթայներն վրանին առնելով. իսկ Աստուած՝ Աստուած լինելով հանդերձ՝ քան զայս աւելին արար, և Պօղոս առաքելոյն ասացածին պէս զանձն ունայնացոյց և մինչև մարդ եղև զմարդիկ փրկելու համար, և ոչ միայն գերեաց նմանեցաւ՝ զնոսա ազատելու համար, այլ և նոցա փրկանաւորութեանն համար բոլոր իւր արիւնն տուաւ։ Եւ եթէ զամենեսին չկարաց շահիլ՝ յանցանքն արարածոյն չար կամացն է միայն, որ զինքն վերածնող և ազատող աստուածային արիւնն՝ նորա երեսն զարկաւ »։

Ես. — « Այդ ասացածդ մարդուս նկատմամբ արդարացի է՝ որովհետև փրկուելու հզօր միջոց մի իրեն տրուեցաւ. հապա չարի իշխանին սատանայի և իւր արբանեկաց համար՝ որ դժոխոց առաջին բնակիչներն են, ինչ ասելիք ունիք. որովհետև ոչ դիտեմ թէ նոցա օգնելու համար ալ Աստուած մի յերկնից իջած է, և Եկեղեցին ոչ երբեք ասէ թէ Քրիստոս ոմն նոցա փրկութեան համար ալ 'ի խաչ ելած լիցի։ Ապա Աստուած նոցա համար բան մի չէ գործած և անգթութեամբ վարուել է նոցա դէմ »։

Քահանայն. — « Աստուած անգութ լինել ոչ կարէ, Տէր, ապա թէ ոչ Աստուած ոչ լինէր. բայց որչափ որ յանհունս բարի է, նոյնպէս և յանհունս արդար է. և որպէս իւր բարութիւնն լիապէս երևի զինքն սիրողաց անհուն երանութեան մէջ, այսպէս ևս իւր արդարութիւնն կը գործածէ անհուն թշուառութեամբ պատժելով զայնոսիկ՝ որ զինքն կ'ատեն, մանաւանդ թէ սոքա իրենք իրենց վրայ կը կոչեն այն թշուառութիւնն՝ իւրեանց յամառ հակառակութեամբն՝ որ անզեղջ և անվախճան լինելուն համար թշուառութիւննին ալ անվախճան պիտի լինի »։

« Արդ այսու նկատմամբ սատանայի և անկեալ հրեշտակաց դիրքն՝ մարդուս դրից հետ նոյն չէ։ Իշխանն չարի՝ որ ամբարտաւանութեամբ Աստուծոյ դէմ ելաւ՝ հպարտութեամբ զնա դահընկէց առնելու մտօք, և սկզբնապատճառ եղև ստութեան անօրէնութեան և մահու՝ այս ամեն բանս կատարեալ մտօք գործեց՝ իւր ազատութիւնն լիապէս բանեցնելով, որով և հակառակ աստուածային լուսոյն որ զինքն կը լուսաւորէր, և ամենայն շնորհաց որով լցեալ էր։ Եւ մի գործով և միակ փորձութեամբ՝ իւր կամքն հիմնովին չարացուց՝ ուղղակի իւր ստեղծողին դէմ դարձնելով զայն՝ նորա իշխանութիւնն

ուրանալով, ճշմարտութիւնն բամբասելով և սուրբ անունն հայհոյելով. և 'ի նմա ոգի արարածական՝ Հոգւոյն սրբոյ դէմ մեղանչեց, որով և մշանջենաւորապէս անարժան դաաւ զայն ընդունելու: Ուստի և իր ներսէն կրած տանջանքն և դրսէն զինքն չարչարող կատանքն՝ ոչ միայն իւր հակառակութիւնն ոչ խորտակեն՝ այլ և աւելի կը խստացնեն. և այնչափ աւելի իւր դատաւորին դէմ կը զայրանայ՝ որչափ աւելի կը զգայ նորա արդարութեան սաստկութիւնն: Եւ այսպէս այս տխուր կացութեանս մէջ չկարէ օգուտ մի քաղել իւր չարատանջ փորձանքէն՝ որ ուրիշ բանի ոչ ծառայէ՝ բայց եթէ աւելցնելու իւր կատաղութիւնն »:

« Մեք տկար մարդիկք՝ չեմք կարող ըմբռնել այս ատելութեան մէջ եղած յամառութեան սաստկութիւնն, և սակայն երբեմն մեր մէջ ալ կը տեսնեմք այնոր ցաւալի օրինակներն այն մարդկանց վրայ՝ որ կեան և մեռանին առանց Աստուծոյ, որ իրենց տըրուած կեանքն կը գործածեն նորա իշխանութիւնն չճանաչելու, և իւր գոյութիւնն իսկ կ'ուրանան՝ իրենց գոյութեան մէջ չնեղուելու համար, զինքն և իւր պաշտօնեայներն նախատանօք կը հալածեն, և վերջապէս հոգինին կը փչեն բերաննին հայհոյութեամբ լի, և յետին շունչերնին կուտան զԱմենակալն քամահրելով՝ որուն ձեռքն պիտի անկանին 'ի մօտոյ: Տեսէ՞ք, Տէր, այս կերպովս մեռնող մարդիկ. ես տեսել եմ և սոսկացել եմ, և կարեմ ասել թէ ահռելի տեսարան մի է »:

« Արդ ինչպէս կ'ուզէք որ այն հոգիներն որ այս ներկայ կենաց փորձն կ'աւարտեն՝ իրենց մտաց վերջին խորհուրդն, իրենց ազատութեան վերջին գործըն, իրենց սրտին վերջին բաբախումն, իրենց ձայնին վերջին վանկն՝ զԱստուած ուրանալու և անիծանելու գործածելով՝ կարասցեն երբէք նորա հետ

հաշտուիլ: Ինչ միջոցներ կ'ուզէք որ գտնեն ուրիշ տեղ՝ իրենց տրամադրութիւններն փոխելու՝ ուղղուելու և զղջալու համար, երբ աշխարհիս մէջ արհամարհեցին մերժեցին ծաղրեցին և հետևապէս անօգուտ արարին երկնաւոր գթութեան ամեն օգնութիւններն: Մի թէ այս օգնութիւններս առաւելաւն իսկ չտրուեցա՞ն նոցա և չզեղա՞ն նոցա բոլորտիքն այս աշխարհիս մէջ՝ գթութեամբն Քրիստոսի Բանին մարմնացելոյ, որ խոնարհեցաւ մինչև առ նոսա առ 'ի փրկել զնոսա բանիւ իւրով և կենդանարար զօրութեամբ աստուածային արեան իւրոյ, որ յետ վերածնանելոյ զնոսա մկրտութեամբ՝ կերակրեաց զնոսա երկնային հացիւ՝ առաջին հաղորդութեան ժամանակ՝ 'ի ձեռն Եկեղեցւոյ որ մատակարար է ամենայն շնորհաց իջելոց 'ի յերկնից »:

Ես. — « Կը խոստովանիմ, Տէր հայր, որ այս բանս ինձ ևս դժուար կ'երևի, և թէ այս հոգիք շատ մեծ փափաք բարւոյ ունելու են, և տարօրինակ օգնութիւն հարկաւոր է՝ որ դարձի գան. դժբաղդաբար այս փափաքս չունին՝ և հետևապէս առիթ և զօրութիւն ալ չունին զայն բնտռելու. իսկ տարօրինակ օգնութեան համար՝ ես ալ կը խոստովանիմ որ զիրենք փրկելու համար Աստուծոյ պատարագուելէն աւելի զօրաւոր օգնութիւն չկարէր լինել, և սակայն նոքա զայն ալ ունելով արհամարհել են: Այսու ամենայնիւ ես չեմ կարող բացարձակ ասել թէ այս բանս անհնարին է. ուստի՝ եթէ ներէք ինձ խընդիրն ուրիշ կողմանէ նկատեմ և հարցանեմ թէ արդեօք պատժոց յաւիտենականութիւնն որ նախ և առաջ Աստուծոյ բարութեան հակառակ կ'երևի, որովհետև անվախճան և անյոյս պատիժ մի՝ սրտի բնական զգածմանց ալ հակառակ կ'ելնէ, երկրորդ անգամ չկարէ՞ ևս մտածուիլ իբրև յայտնապէս հակառակ աստուածային արդարութեան: Այսու նը-

կատմամբ խնդիրն աւելի կը ծանրանայ. վասն զի զգածման վրայ չենար՝ այլ խելացյ, և դուք ալ դիտէք որ լուսաւորեալ մարդ ևս առաւել խմաստասէր մի անիրաւութեան վրայ հաստատեալ վարդապետութիւն ոչ կարէ ընդունիլ»:

Քահանայն. — « Անտարակոյս, Տէր, ես իսկ եթէ յաւիտենական պատժոյ մէջ անիրաւութիւն մի տեսանէի՝ առաջին մերժողն ես լինէի. բայց Եկեղեցին որ անհուն բարութեան լեզուն և անփոփոխ ճշմարտութեան թարգմանն է, նոյն ինքն դարձեալ գերագոյն արդարութեան պաշտօնեայն է, ուստի չկարէ ուսուցանել ոչ անգթութիւն ոչ մոլորութիւն և ոչ անօրէնութիւն: Ա՛յս կողմանէս վստահ և ապահով լինելով՝ հիմա լսեմք ձեր բացատրութիւնները»:

Եւ. — « Դուք քան զիս լաւ գիտէք, Տէր հայր, որ բնական իրաւանց սկիզբը մի է՝ թէ պատիժն յանցանաց համեմատ լինելու է՝ գործողին մտաց և գործին ծանրութեան նայելով. և պատժական օրէնսդրութեան կատարելութիւնն ալ այս համեմատութիւնս հաստատելուն վրայ է, որ միանգամայն պիտի նայի որ յանցանաց և պատժոյն մէջ հանդիսութիւն մի գտուի, որով այս վերջինս ալ ըստ կարի արդար լինի: Բայց ասոնք պատժական օրինաց բարոյական վախճանն պիտի լինի՝ որ պատժոյն սաստկութիւնն նոյն իսկ յանցաւորին ուղղութեանն օգնէ, ու չէ թէ միայն ընկերութիւնն պահպանէ կամ օրինաց վրէժխնդիր լինի՝ ինչպէս երբեմն կը զրուցուի: Ա՛յս կերպով պատիժն թէ յանցաւորին օգտակար լինի և թէ ընկերութեան, որովհետև յանցաւորն ալ գառնալով՝ ընկերութեան օգտակար անդամ մի կ'աւելնայ: Ա՛յս է արդի օրէնսդրութեանց կնիքն և ջանքն. և անտարակոյս այս զարգացմանս պատճառ Աւետարանն եղած է՝ իր քարոզած սիրոյն և հոգւոյ փրկութիւնն ինչ թանկագին բան լինելն ցուցանելով:

Ա՛յս սկիզբս դնելէն ետև՝ ինձ կ'երևի որ եթէ պատժաւորութեան երկնային վճիռն Եկեղեցւոյ ուսուցածին պէս լինէր՝ այս վերոյգրեալ սկզբանցս բոլորովին հակառակ կ'ելնէր՝ որք մեր օրերուն ռձրական օրինաց պարծանք եղած են: — Վասն զի նախ սորսափելի անվախճան պատժոյ և յանցանաց մէջ համեմատութիւն չկայ՝ որչափ ալ այս վերջինս ծանր լինի՝ որովհետև վերջապէս ուրիշ բան չէ բայց եթէ արարածոյ անցաւոր գործ մի: Դարձեալ հրեշտակի համ մարդոյ անհնազանդութեան և իւր յաւիտենական դատապարտութեան մէջ հանդիսութիւն մի ոչ տեսանեմ. բայց եթէ ասելու եմք որ Աստուած վրէժ կ'ուզէ առնուլ և իւր վրէժխնդրութենէն ալ խորժ մի կը զգայ՝ որ այս ալ հայհոյութիւն է: Ուր մնաց որ արարածոց ոձիրներն և նախատինքն Աստնակալին դէմ ոչ զօրեն, և իր կողմանէ աւելի արդարութիւն լինէր յանցաւորներն այնչափ միայն պատժել՝ որչափ արդարութեան բաւարարութիւնն կը պահանջէ. և ինձ կ'երևի թէ ձեր ուզածին չափ երկայն և խիստ պատիժ մի՝ որ վերջապէս վախճան ունենայ՝ իր վախճանին կը հասնի, և Աստուածոյ աստուածային գթութիւնն ալ կը կատարուի: — Եւ երկրորդ պատժոյ կատարելութիւնն՝ արդարութիւնն լեցնելէն զատ՝ յանցաւորին ուղղութիւն լինելու է, որ անվախճան լինելուն պէս՝ անկարելի լինի. և ուրիշ բան յառաջ չգար՝ բայց եթէ յանցաւորին համար յուսահատութիւն՝ որ անձկոտրելի թշուառութենէն կը զայրանայ՝ տեսնելով որ ոչ վախճան ունի և ոչ ալ պիտի թեթևնայ: — Ա՛յս խորհրդածութիւններէս մի թէ այս ո՛չ հետևի որ պատժոյ յաւիտենականութիւնն՝ համեմատութիւն չունենալով արարածոյ յանցանաց հետ՝ որ միշտ սակաւ են յաչս Աստենակալին՝ և որում իշատ մի ալ չեն կարող առնել, և անօգուտ ալ լինելով յանցաւորաց՝

նոցա ուղղութիւնն անկարելի առնելով, հակառակ է թէ մարդկային մտաց և թէ բարութեան և արդարութեան Աստուծոյ. ասացածս այս է »:

Քահանայն. — « Ձեր դիտած նկատմամբ՝ շատ լաւ ասացէք սիրեցեալ Տէր, բայց Աւետարանն և Եկեղեցին ձեզ պէս ոչ նկատէ, որովհետև արարածոյն արարչին հետ ունեցած դիրքն ձեր ասացածին պէս չէ: Տէրութեան արդարութիւնն իւր անդամոց վրայ բացարձակ իշխանութիւն չունի՝ որովհետև ինքն ստեղծած չէ զնոսա, և նոցա կեանքն իրեն ոչ վերաբերի, մինչդեռ աստուածային արդարութիւնն այնպիսի տիրոջ մի է՝ որ ինքն տուեալ է զկեանս՝ իւր արարածոց քանի մի պայմաններով, որ մինչև այս պայմաններս չկատարեն՝ երջանիկ լինել չեն կարող: Այս պայմաններս ինքն յայտնել է իւր հպատակաց՝ յառաջագոյն իմացնելով թէ ինչ պիտի հետևի եթէ զայնս չկատարեն, և միանգամայն տուել է նոցա զհարկաւոր կարողութիւն կատարելոյ զնոսա. և ասացել է նոցա՝ թէ որ սա բանս առնէք՝ պիտի մեռանիք, որովհետև պիտի բաժնուիք յինէն որ կեանք եմ: Այս բանս գիտելով հանդերձ՝ նոքա ուզել են օրինազանց լինել. մի թէ յանցանքն իրե՞նն է որ այնչափ առատաձեռն եղած է առ նոսա, ուրիշ բան չխնդրելով 'ի նոցանէ՝ բայց եթէ հաւատարմութիւն առ 'ի լինել երջանիկ: Իսկ սոքա իրենց գիտցածին պէս երջանիկ լինել ուզեցին, և իրենց վրայ դրուած օրինաց և սպառնացեալ պատժոց հակառակ՝ մտքերնին դրին որ անկախ լիցին, և իրենց կամքն իրենց կանոն լիցի. որով և ինքզինքնին մահու տուին՝ զոր Աստուած սպառնացել էր. և վերջապէս ուզածնին ունեցան՝ այսինքն սուտ կեանք մի՝ որ իրենց սեպհական կամաց արդիւնքն էր՝ հակառակն ճշմարիտ և աստուածային կենաց՝ առ որ արժանի համարել էր Աստուած կոչել զնոսա իւր սիրով »:

« Ապա կը հաստատեմ այս առաջին կէտս՝ որ նոքա

յաւիտենական երանութենէն զրկուեցան՝ զոր միայն Աստուծոյ հետ բոլորովին միանալով կարէին ժառանգել, և իրենք զիրենք դատապարտեցին անջատելով զանձինս 'ի նմանէ՝ կամաւոր զանցառութեամբ օրինաց նորա »:

« Բայց տեսցուք ո՛րչափ հաստատութիւն ունի այդ ասացածնիդ ալ թէ պատիժն յանցանաց համեմատ չէ՝ ոչ իւր ծանրութեամբն և ոչ իւր տևողութեամբն: Այս բանիս համար նախ որոշեմք սատանային խնդիրն մարդուս խնդրէն. վասն զի նա սկզբնապատճառ եղած է չարի, իսկ մարդս փորձութեամբ այնոր չար խրատուն յարմարած է, և սկզբնաւորութիւնն իրմէ չէ »:

« Բնաւ խորհե՞լ էք նախկին չարի խորութիւնն որ արարածական էակի մի կամքէն յառաջ եկն՝ հպարտութեամբ միտքն դնելով իւր արարչին հաւասարիլ, մանաւանդ թէ քան զայն աւելի վեր բարձրանալ: Մտածեցէք մի անդամ որ զանհունն գերազանցել կ'ուզէր և զԱմենակալն իւր աթոռէն գահընկէց առնել, և այն որ այս բանս միտքն դրաւ՝ շատ լաւ գիտէր թէ ո՛ւր պիտի հասնէր իւր յանդգնութիւնն՝ որովհետև երկնային դասակարգութեան ամենէն բարձր միտքերէն մին էր: Որ ասել է անհունին հետ անմիտ մենամարտութեան պատրաստուեցաւ, և չափազանց ամբարտաւանութեամբն 'ի հիմանց բոլորովին չարացնելով իւր կամքն, բոլոր անձամբն անհունն ստանալու տենչալով, ոչ եթէ Աստուծոյ հետ միանալով՝ որ օրինաւոր էր, այլ նորա իշխանութիւնն յափշտակել ուզելով և նորա թագաւորութիւնն յանձն ձգելու մտօք. գոհ չլինելով աստուածային թագաւորութեան մասնակցիլ՝ որ արդէն խոստացուած էր իրեն եթէ հաւատարիմ մնար. այլ ուզեց անձամբ տէր լինել տիեզերաց իւր անուան և փառաց համար, գոչելով ինչպէս ասեն Գիրք Ո՞ւր

ոչ բարձրացայց[1]։ Իւր կամաց բոլոր զօրութեամբն ուզեց յանձն շորթել զիշխանութիւն զփառս և զերանութիւն անհնոյն, և բոլոր իր ջանքն ու ճիգն ուրիշ վերջ չունեցաւ՝ բայց եթէ անկանիլ անհուն անկարողութեան ամօթոյ և թշուառութեան մէջ։ Դուք ալ յայտնի ոչ տեսանէք որ այս հակառակ անհնութեանց մէջ համեմատութիւն մի կայ, և թէ սատանայի անչափ հպարտութիւնն յիրաւի անվախճան պատժոց արժանացաւ. որովհետև վերջապէս ուզածին հասաւ՝ անհուն չարի և թշուառութեան մէջ ընկղմելով՝ որոյ ինքն գտիչ եղև, ինքն իրեն համար ստեղծած տէրութեան մէջ, և իր հրէշ խորհրդոց և անմիտ ամբարտաւանութեան հետևողաց և գործակցաց հետ միատեղ »։

« Ամենևին չեմ լսած որ այս մեծ ապստամբութենէն ետև. որ միլիոնաւոր տարիներ անցած են՝ սադայէլն և իրեններն խոնարհութիւն մի ցուցած լիցին՝ նորէն 'ի շնորհս մտնելու համար. կարծեմ թէ դուք ալ այսպիսի բան մի լսած չէք, թէպէտ և հիմա իսկ այս բանիս վրայ համաձայնեցաք որ աղատութեամբ գործուած մեղքն քաւուելու համար՝ 'ի հակառակէն աղատութեան գործ մի պէտք է։ Ընդ հակառակն սուրբ Գիրք ասեն և փորձն իսկ ցուցանէ որ թագաւորն դժոխոց և իւր արբանեակներն միշտ փորձութիւն տալու խաբելու և չարացնելու հետ են զմարդիկ՝ զնոսա իրենց ապստամբութեանն գործակից առնելու և Աստուծոյ թշնամեաց թիւն շատցնելու համար։ Դուք ալ կը հաւանիք որ այս կերպովս Աստուծոյ գթութիւնն շարժել և ներողութեան արժանանալ ոչ լինի. միայն առանձինն և մասնական շնորհիւ՝ որոյ Տէրն միայն Աստուած է՝

1 « Ելից յերկինս՝ 'ի վերոյ քան զաստեղս արկից զաթոռ իմ »։ Եա. ԺԴ. 12։

կարէ նա դառնալ 'ի բարի և յերանութիւն, սակայն զայն ալ ոչ միայն ոչ խնդրէ այլ և հպարտութեամբ կ'արհամարհէ, և կ'ուզէ ինքնօրէն և ինքնիշխան մնալ իւր ձեռօք շինած տխրագին թագաւորութեան մէջ՝ որ են սանդարամետք. ապա ինչպէս որ իր չար կամքն վախճան ոչ պիտի ունենայ՝ այսպէս ալ իւր տանջանքն »։

« Կը տեսնէք, սիրեցեալ Տէր, որ անել յոռի շրջանի մի մէջ կը դառնամք՝ անկեալ հրեշտակաց պատժոյն նկատմամբ, որք իրենց թշուառութենէն ուրիշ կերպով չեն կարող ազատիլ՝ բայց շնորհիւ Այնորիկ զոր յամառութեամբ կ'ատեն և ոչ ևս կարեն սիրել. ինչպէս ասէր Սրբուհին Թերեզա սատանային վրայ խօսելով։ Թշուառականն որ ալ չկարէ սիրել. որ յիրաւի ամենէն մեծ թշուառութիւնն է, որովհետև ճշմարիտ կեանքն սիրոյ մէջ հաստատեալ է. ուստի և սատանաներն ալ կենաց սկիզբէն զատուելով կատարեալ ծանօթութեամբ իրենց գործոյն և բովանդակ զօրութեամբ իւրեանց կամաց, իրենք զիրենք անկարող գործած են 'ի նոյն վերադառնալու սրտի մտօք։ — Այսչափս բաւական է սատանայի և իւր արբանեկաց համար. հիմա տեսցուք գատապարտեալ մարդկանց վիճակն։ Բայց կը տեսնեմ որ այս խօսակցութեանս պատճառաւ՝ պատշաճէն ալ աւելի ժամանակ մեր ընկերութենէն բաժնուած մնացինք՝ որ չվայլէր. մանաւանդ որ այսպիսի ծանր խնդիր մի դահլճի մէջ խօսելու նիւթ չէ. ուստի եթէ կ'ուզէք որ զայն առաջ տանիմք՝ ես միշտ պատրաստ եմ, և ինչպէս որ ուզէք կարեմ յառաջ վարել զայն կամ ես ձեզ գալով կամ դուք ինձ »։ Քահանային առաջարկն ընկալայ, և խօսք գրինք որ աւելի հանգիստ և ազատ լինելու համար՝ վաղուեան օրն ես իր գրասենեակն երթամ մեր վիճաբանութիւնն յառաջ վարելու համար։

Յաւիտենականութիւն պատժոց
(շարայարութիւն)

10 Յուլիս։

Աստուածաբանութեան վարժապետին քովէն կոչգամ՝ որ զիս շատ մարգավարութեամբ ընկալաւ, և խնամատարը լինելուս համար կարէր իրաւամբ անձնապահ և անվատահ լինել իմ վրաս, որովհետև շատ անգամ խնամատարը ատելով սուտ կորովմիտ և անհաւատ կ'իմացուի Թէ և յանիրաւի։ Ընդհակառակին ինքն մտերմական և պարզ կերպ մի եղոյց ինձ՝ ձիշդ կերպով իւր հաւատքն և համոզումն բացատրելով՝ զոր անկեղծութեան երաշխաւորութիւն մի կը համարէի։ Իր ինձ ցուցած վստահութեամբն խմն ալ այլ աւելցաւ իր վրայ, և մեր երկայն խօսակցութենէն ետև՝ մտերմաբար իրարմէ բաժնուեցանք։ Չեմ կարող ասել Թէ զիս բոլորովին համոզեց՝ սակայն ինձ օգտակար եղև և սրտիս դպաւ՝ գոնէ այնչափ որ իր քաջութեամբ պաշտպանած վարդապետութիւնն զիս ալ ոչ խրտեցնէ։ — Մեր խօսակցութեան յարձակումն անունն չեմ կարող տալ, որովհետև յարձակումն Թշնամեաց դէմ լինի, փոքր Աստուծոյ ես երբեմն Թշնամի չեմ. ուստի հակաճառութիւնն անունն տամ՝ զոր ես այսպէս սկսայ.

« Վարդապետ հայր, երեկուան օրն չարի իշխանին կամ հնարողին վրայ զրուցածներդ ինձ մեծ տպաւորութիւն արարին. մինչև հիմա չարի սկզբնաւորութիւնն այսչափ մօտանց չէի քննած, բայց ձեր տուած բացատրութենէն 'ի վեր՝ որ կաթողիկէ կրօնից բացատրութիւններն են՝ հիմա յայտնի կ'ըմբռնեմ որ չարի Թշուառութեան և մահուան սկզբնաւորութիւնն՝ իր ձամբէն խոտորած չարացած և չարացնող արարածէ մի յառաջ եկած լինելու է։ Ապա աշ-

խարհիս մէջ եղած անօրէնութիւնն ու Թշուառութիւնն բացատրելու համար չփոթ և անէակ իրէ մի յառաջ եկած չեմ կարող սեպել զայն, այլ իրական անձէ մի և կենդանի արարածէ՝ որ իւր ազատութիւնն չարի գործածելով զայնս հնարեց։ Կ'ընդունիմ որ այս անձս կամ Թէ ասեմք սատանայն մեծ յանցաւոր մի եղև՝ մանաւանդ Թէ յանցաւոր քան զամենեսին՝ որովհետև ինքն եղև ամենայն յանցանաց պատճառն, ուստի այս բանիս համար՝ Թէ և տակաւին միտքս ոչ համոզուի պատժոց յաւիտենականութեանն, սակայն հաւանած եմ որ եթէ եղած է ոք այնմ արժանի՝ անշուշտ ինքն և իւր արբանեակները լինելու են։ Բայց մարդուս համար այսպէս չեմք կարող ասել. նախ որ մտաք և կամաք քան զերեքտակս տակաւ էակ մի է, որովհետև իւր էութեան կէսն մարմին է, որով իր բանաւորութիւնն ալ կը ծանրանայ և մարմնոյ ցանկութիւնն ալ իր սիրտն գերի կը վարէ, ապա որովհետև սակաւ տրուած է իրեն՝ սակաւ ալ համար պիտի պահանջուի իրմէ։ Եւ երկրորդ Թէպէտ և մարդս փորձութեան մէջ անկաւ և խաբուեցաւ, սակայն յանցանաց խորհուրդն ուրիշն Թելադրեց իրեն, և դաւաճանութեան խօսքն իր զգայութիւնն երևակայութիւնն և հայրաւութիւնն գրգռելով խաբուեցաւ, և վերջապէս 'ի կրից վրեալ անկաւ 'ի մեղս։ Մի Թէ այս բաներս յանցանքն Թեթևցնող պարագայներ չեն, ուստի և այսպիսի յանցանաց համար տրուած անվախճան պատիժն ալ անհամեմատ է ասել չէմք կարող »։

« Կը հաւանիմ, Տէր, պատասխանեց քահանայն, որ մարդուս յանցանքն սատանայինէն շատ Թեթև է՝ իր տկարութիւնն և չարի սկզբնաւորութիւնն իրմէ չվերնելուն համար. ուստի մարդ՝ Թէ և դարձեալ մեծապէս յանցաւոր է՝ տպատամբութեամբ Աստուծոյ բաժնուիլ ուզելուն համար, սակայն աս-

տուածային ներողութեան արժանի եղև, և այսոր համար է որ իր անկմանէն և դատապարտուելէն ետև՝ նոյն իսկ այն խօսքով որ այս երկու բանս ալ իրեն կը ծանուցանէր՝ տրուեցաւ իրեն նաև յոյս և խոստումն Փրկիչ մի ունելու, և դարուց 'ի դարս այս խոստումն նորոգուեցաւ նահապետաց Մովսիսի և մարգարէից ձայնովն, և այս խոստմանս կատարումն կամաց կամաց պատրաստուեցաւ՝ Իսրայէլի աստուածընտիր ժողովրդեան մէջ՝ ուսկից Մեսիայն պիտի ծագէր, և որ վերջապէս կատարուեցաւ Ադամայ և իւր սերնդոց փրկութեան համար՝ յանձին Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մարդացելոյ՝ որ եկեաց և մեռաւ առ 'ի փրկանաւորել զմարդիկ: Անտարակոյս զԱստուած չեմք կարող մեղադրել իբրու թէ խըստութեամբ վարուած է յանցաւոր մարդկանց հետ, որովհետև անդէն 'ի սկզբան նոցա օգնութեան հասաւ՝ ազատարարի մի խոստմամբն, որոյ մեղսաքաւիչ արիւնն խաչին վրայ թափուեցաւ՝ զիրենք յաւիտենական մահուանէ ազատելու համար. և այն ատենէն 'ի վեր իբրև կենաց դետ մի կը հոսէ իւր Եկեղեցւոյն մէջ 'ի ձեռն Խորհրդոց՝ որ այն արեան կենդանարար զօրութիւնն Ադամայ ամեն սերնդոց կը մերձեցուցանեն: Ուստի ամեն մարդիկ՝ որ այս անբաւ բարութիւնս իմացած ու լսած են առաքելական բանի վարդապետութեամբն՝ կարող են այնոր օգուտն տեսնել ու վայելել, և այս աւուր օրս մկըրտութեամբ վերածնեալ հոգին ոչ կորնչի՝ բայց եթէ իւր ուզելովն, կամ թէ այլ լաւ ասեմ՝ իրեն տրուած փրկութեան միջոցներն և շնորհքն արհամարհելով: Արդ կը հարցանեմ, սիրելի, այնչափ ապերախտութենէ ետև՝ քան զայն աւելի հայրական ներողամտութիւն կարեմք մաքերնէս անցընել, ներողամտութիւն և գթութիւն՝ որ ոչ միայն եղած նախատանաց թողութիւն կուտայ՝ այլ և նախատուողն

իւր կեանքն կը զոհէ՝ յանցաւորին երջանկութեանն համար»:

Ես. — «Յիրաւի, Տէր հայր, այս ներողամտութեանս վրայ կը հիանամ, եթէ այնպէս է՝ ինչպէս որ կը զրուցէք: Բայց տակաւին Ադամայ մեղաց ծանրութիւնն որոշ ոչ ըմբռնեմ. վասն զի աչաց հաճոյ և քմաց համեղ երևցած արգելեալ պտուղ մի ուտելէն՝ ինչու Հայրն երկնաւոր այնչափ 'ի բարկութիւն շարժեցաւ՝ մինչև այսպիսի սարսափելի պատիժ մի իջոյց յանցաւորին գլուխն՝ որ իւր կենաց արարչէն զինքն բաժնեց: Մեր զաւկներն ալ ամեն օր այսպիսի յանցանք կը գործեն, և եթէ այսպիսի թեթև մեղաց համար մեռնիլ պէտք լինէր՝ աշխարհիս վրայ մարդ պիտի չմնար. այնպէս չէ՞, ինչ ասէք»:

Քահանայն. — «Զայս ասեմ որ իմաստասէրն իրաց դրսի երևոյթն միայն պիտի չտեսնէ, և ապահով եմ որ դուք ալ այնպէս ոչ ուսուցանէք ձեր դաստիսութեանց մէջ. ուստի այսպիսի խնդրոյ մէջ ալ՝ որովհետև մարդկային ազգի վիճակն անտի կախումն ունի, խորախորհուրդ մտադրութեամբ քննելու է Աստուածաշնչի յիշած պատմութեան նշանակութիւնն, որ միանգամայն իրական է և առակաւոր: Վասն զի յիրաւի եդեմական դրախտին մէջ ծառ մի կար գիտութեան բարւոյ և չարի՝ կենաց ծառ ասացելոյն քովն, և այլ ուրիշ անհամար ծառեր՝ յորոց մեր նախահարքն կարէին ուտել: Առջինին պտուղն միայն իրենց արգելուած էր՝ որովհետև այնոր մէջ չարն ու բարին խառն էին, և իրենք միայն բարին ճանաչելու համար, ստեղծուած էին: Արդ Աստուած որ զմարդ ազատ ստեղծեց՝ որով կարէր բարին ու չարն որոշել և ընտրել՝ ուզեց նորա ազատութիւնն փորձել՝ ինչպէս որ յառաջագոյն հրեշտակներունն փորձած էր, և այս փորձիս միջոց սահմանեց այն արգելքն չուտելոյ 'ի պտղոյ ծառոյն գիտութեան

բարեյ և չարի, որ ասել է Ադամայ վրայ պարտք դրուեցաւ ընտրելու զբարին կամ զչարն՝ հրամայեալ պատուիրանն պահելով կամ չպահելով։ Ինքն պարտաւոր էր և կարէր կենաց ծառէն միայն ուտել՝ որ իր ամեն սիտոյից ալ կ'օգտէր առատապէս, այսինքն աստուածային խօսքին հնազանդելով և հաւատարիմ մնալով՝ իւր կեանքն գտանէր իր հնազանդութեան մէջ և Աստուծոյ հետ միաւորութեամբն։ Սակայն չարի սկզբնապատճառէն փորձուելով՝ աստուածային օրինաց հակառակ՝ չար պողէն կերաւ, կամ թէ ասեմ սատանայն ուրիշ կերպարանօք առնել տուաւ իրեն այն բանն՝ ինչ որ ինքն ալ արարեալ էր իր կամքն արարչին կամաց վերադասելով։ Ուսոի իր անհնազանդութեամբն՝ սատացաւ գիտութիւն բարեյ և չարի և թէ ինչ ընդդիմութիւն կայր նոցա մէջ, ուր յառաջագոյն միայն բարին կը ճանաչէր որ է Աչմարիա երանութիւն։ Այսու Աստուծոյ թշնամւոյն հետ դաշնակից եղև՝ ունկնդիր լինելով և ընդունելով սատութեան խօսքն՝ որ Աչմարտութեան խօսքն կ'ուրանար. տկարութեամբ հաւանեցաւ իւր Արարչին վրայ եղած չարախօսութեանն, և իր բարերարին համար զուրցուածին թէ նախանձու համար արգիլել էր իրեն այն պողէն չուտել, և իր սրտին մէջ գրգռեալ ծածուկ ցանկութեանն հետևեցաւ՝ որ Աստուծոյ նմանիլ կ'ուզէր այսինքն անկախ և ինքնիշխան, որով և փորձողին հպարտութեանն ու ապստամբութեանն մասնակից եղև։ Ուսոի այդ թէթև մեղք ասացածդ ալ ուրիշ բան չէր՝ բայց իւր Արարչին խօսքին վրայ տարակուսիլ, նորա գիտմանց և խոստմանց վրայ կասկածիլ, իւր օրէնքն բռնաբարել, իշխանութիւնն մերժել, և իւր թշնամւոյն հետ միանալ իրեն դէմ, որք կարծեմ թէ մտածածէդ աւելի ծանր երևելոց են քեզ պիժմ»։

Ես. — «Կը սիպուիմ խոստովանելու, Տէր հայր, որ սկզբնական մեղաց մէջ այս ամեն բանս կը բովանդակի՝ եթէ զայն նրբապէս լուծեմք որպէս դուք առնէք։ Բայց ձեզ ալ այնպէս պէտ երևի՝ որ մեր նախահարքն այս բաներուս միտ չդրին, և որովհետև տղայոց պէս անփորձ էին՝ նոյն աստեղի սրտերնուն բերմանցն հետևեցան, տեսնելով որ պտուղն գեղեցիկ էր ի տեսանել և համարելով թէ հասն ալ քաղցր լինելոց էր, որպէս և ասեն Գիրք, որով իրենց յանցանաց մէջ ալ աւելի թեթևամտութիւն կար՝ քան թէ չարութիւն։ Այդ բանս այս աւուր օրս իրենց սերնդոց վրայ ալ կը տեսնուի, որ շատ անգամ աւելի տգիտութեամբ և իրենց կրից հետևելով կը մեղանչեն՝ քան թէ չարն մտագրութեամբ ընտրելով և չար գիտաւորութեամբ։ Այսոր համար ինձ կ'երևի թէ երկուքն ալ յաւիտենական պատժոց ոչ արժանաւորին, և անհուն ողորմութիւնն որ նոցա տկարութիւնն կը ճանաչէ՝ իրենց պիտի ողորմի։ Աստուած այնչափ բարի է որ միշտ իր զաւակաց վրայ պիտի գթայ, և նոյն իսկ ամենէն աւելի յանցաւորաց վրայ»։

Բահանայն. — «Աստուծոյ բարութեան չափ դնել ինձ ոչ անկանի. Ես ալ ձեզ պէս կը հաւատամ որ իր գթութիւնն անչափ է, և միայն արդարութիւնն այնոր հաւասարակշիռ է. և երկուքն ալ անհուն են, ուսոի երկոցուն վրայ ալ մեծ յոյս ունելու եմք. բայց յուսալու համար ալ պատճառ պէտք է, և ամենէն ապահով պատճառն այն է որ մարդ ձեռքէն եկածն առնէ՝ երկնաւոր Հօր աչքն մտնելու համար։

— Մեր նախահարք իմացածնուն պէս իրենց յանցանքն՝ զղջացան, և գրուած պատիժն խոնարհութեամբ ընդունելով՝ վատահ եղեն աստուածային խոստմանն փրկիչ մի ունելու։ Պաւլիթ մարգարէն իր յանցանքէն եաև՝ սրտանց գոչեց առ Տէր, և Ո-

ղորմեա՛ ինչ Աստուած վսեմ սաղմոսն՝ իւր ապաշխարութեան անմահական վկայութիւնն է։ Բարի աւաղակն խաչին վրայ խոստովանեցաւ իր յանցանքն և իր քաշած տանջանաց արժանաւոր լինելն, և մեռնելէն առաջ Փրկչին օգնութիւնն հայցեց։ Եւ մեր օրերն իսկ ամենէն մեծ յանցաւորն՝ որ կախաղանի երթալու ատեն սիրտն Աստուծոյ խօսքին կը բանայ, և յետին նայուածքով և վերջին շնչով դէպ 'ի յերկինս նորա գթութիւնն կը պաղատի՝ կարէ յուսալ Աստուծոյ բարութեանն, որ կ'ընդունի այնոր սիրտն այն վայրկեանին՝ երբ 'ի չարէն կը դառնայ իւր մեղքն խոստովանելով և արժանացած պատիժն յանձն առնլով։ Ինձ կ'երևի թէ այսու ներողամտութիւնն մեծագոյն մասն կ'ունենայ Աստուծոյ արդարութեան առջև որ միշտ գթութեան հետ խառն է, և ամենէն մեծ յանցաւորն ալ սակաւ մի բարի կամք ունելով կարէ իրեն օգտակար առնել զայն։ Շնորհքն լուսոյ կը նմանի՝ մանր ծակ մի ալ գտնէ ներս կը թափանցէ »։

« Բայց ինչ առնելու է այն մարդոց՝ որ բոլոր իրենց կեանքն մարմնական պղծութեանց մէջ անցընելով՝ ինչպէս որ կ'ապրին՝ այնպէս ալ կը մեռնին անասնոց պէս, առանց իրենց վրայ անդրադառնալու և զիրենք ճանաչելու, առանց ղղջում մի զգալու, առանց երկինքն մտքերնէն անցընելու՝ չուզելով որ այնոր վրայ խօսուի՝ որպէս զի մի գուցէ իրենց անբանական անխտրութիւնն վրդովի։ Ինչ առնելու է այն կրթեալ և ուսեալ մարդոց՝ որ այնպէս կ'ապրին՝ որպէս թէ իրենց համար Արարիչ և Փրկիչ մի չլինէր, որք աշխարհիս ոգւոյն լցուած, և այնոր օգուտներն և ուրախութիւններն միայն մեծագրելով՝ ոչ ճանաչեն կամ կ'արհամարհեն զՀոգին աստուածային որ զիրենք վերածնել և կենդանացուցել է՝ Յիսուսի Քրիստոսի արեան գնովն. որք երկ-

նից վրայ ամենևին մտածած չեն՝ և ոչ ալ կ'ուզեն որ գոնէ հիւանդութեան ատեննին այնոր վրայ խօսուի և քահանայն իրենց անկողնին մօտենայ, որ մի գուցէ վերջի վայրկեաններուն խռովին ու տագնապին. ասելով թէ իրենք Աստուծոյ անհուն բարութեան վրայ յոյս ունին, ուրիշ կողմանէ ալ նորա դէմ մեծ մեղք մի գործած չեն ...։ Ինչ առնելու է այն իմաստուններն ալ որ երկրաւոր գիտութեան չափն ու կշիռն երկնից իրացն յարմարցնել կ'ուզեն, և հանդերձեալ աշխարհի ճշմարտութիւններն յայտնող խօսքն և այն խօսքին հաւանութիւնն տուող հաւատքն՝ մարդկային հնարք և խաբէութիւն կը համարին։ Արդ այս հոգիներս ո՞ւր կ'ուզէք որ երթան իրենց մեռնելէն ետև՝ եթէ իրենց փորձին մինչև յետին ծայրն՝ յամառ հակառակութեամբ դէմ դրին այն բաներուն որ զիրենք պիտի փրկէին »։

« Կը ցաւիմ նոցա կուրութեանն վրայ, գոչեցի, եթէ ասացածիդ պէս է. բայց միթէ մահուամբ ո՞չ դադարի նոցա հակառակութիւնն, և աստուածային լոյսն որ այն ատեն զիրենք կը լուսաւորէ՝ պիտի չփոխէ՞ իրենց սիրտն և զղջման դարձնէ »։

« Թերևս, ասաց քահանայն. բայց այս օգնութեանս ի՞նչպէս կարեն յուսալ՝ երբ բոլոր իրենց կենաց մէջ և մեռնելու ատեննին ևս՝ ամեն ջանք գործած են զայն իրենցմէ հեռացնելու համար։ Սիրելի՝ սովորաբար մարդ ինչպէս որ կ'ապրի՝ այնպէս ալ կը մեռնի, և սուրբ Գրոց ասացածին պէս՝ ծառն ծռած կողմն անկանի. շատ անգամ ալ դարմանն շատ ուշ կը մնայ. վասն զի քահանայ կոչել չսեպուիր՝ երբ այնպիսի ատեն կը կոչուի՝ որ բան մի չկարէ առնել։ Երկրաւոր կենաց փորձի անդարձ ժամանակն աւարտած է՝ մարդկային ազատութեան վերջին գործովն, այնպէս որ եթէ մինչև վերջի շունչն այն ազա-

տութիւնն 'ի չարն յարեալ է՝ ալ այնուհետև այն-
պէս ալ պիտի մնայ, և սիրած չարին մէջ յաւիտեանս
պիտի յարատևէ. և այն լոյսն որ 'ի հանդերձեալ աշ-
խարհն հասնելու անցից մէջ զինքն պիտի լուսաւո-
րէ՝ ուրիշ բանի պիտի չծառայէ այն յԱստուծոյ
բաժանեալ հոգւոյն համար, բայց եթէ աւելի լաւ
տեսնելու իր միայնութիւնն թշուառութիւնն և
տարտարոսն յոր պիտի անկանի: Իւր մարմնէն զա-
տուած լինելուն համար՝ ա՛լ մարդկօրէն բան մի առ-
նել չէ կարող, և հետևապէս իր գործերովն ալ արդ-
իւնք չկարէ վաստկիլ, և կը զրկուի յայն ամեն
օգնութիւններէ՝ որ Եկեղեցւոյ ձեռօք իրեն կը տրու-
էր ուղղուելու համար: Եւ ինչպէս որ իր երկրաւոր
կենաց մէջ մերժեց և անօգուտ արար աստուածային
ողորմութեան ամեն հնարքն, և ընդհակառակն Աս-
տուծոյ թագաւորութեան հակառակ դարձուց այն
ամեն ձիրքն որ նմա ծառայելու համար առեալ էր,
այսպէս ևս ա՛լ իրեն լաւի դառնալուն ամենևին
յոյս ոչ մնայ. և իւր աչաց առջև ուրիշ բան ոչ մնայ
տեսնելու՝ բայց եթէ չարի և թշուառութեան ան-
դունդին մէջ յաւիտեանս թաղուիլ՝ որուն մէջ կա-
մաւորապէս ինքզինք գահավիժեց, և ուստի ելնելն
ա՛լ անհնարին է »:

« Ո՛հ, գոչեցի, այս տեսարանս սարսափելի է.
ամենևին յոյս չունել որ պիտի աւարտի այս կատա-
մահ կեանքս, միշտ և հանապազ ատելութեան կատա-
ղութեան և տանջանաց մէջ մնալ. մտածութեամբն
իսկ կը փշաքաղիմ: Սակայն կարծեմ այսպիսի բան
մի լսած եմ՝ որ դժոխոց տանջանքն ժամանակէ մի
ետև սակաւ մի պիտի թեթևնան եղել, և դատա-
պարտելոց վիճակն պիտի մեղմանայ եղել, թէ ոչ ի-
րենց յանցաւորութիւնն ճանաչելով՝ այլ գոնէ ի-
րենց տանջանաց համակամութեամբ համբերելով և
ճանաչելով զարդարութիւն ձեռինն որ հարկանէ

զնոսա: Ա՛հ, կը խնդրեմ կը պաղատիմ, թէ որ այս
կողմանէս այսպիսի յոյս մի կայ՝ զրուցէիք. որպէս
զի գոնէ առանց մխիթարութեան բառ մի լսելու 'ի
ձէնջ չբաժնուիմ, և տարտարոսի թշուառ բնակչաց
համար յուսոյ նշոյլ մի տեսնեմ »:

Քահանայն. — « Այս նիւթոյս վրայ վարդապե-
տութիւն մի չունիմք, սիրելի, բայց Եկեղեցւոյ մէջ
ներեալ կարծիք մի կայ՝ որ կը հաստատէ թէ յաւի-
տենական պատիժն ըստ կարի պիտի մեղմանայ. այս
բանս յուսոյ գուռ մի կը բանայ երկուքնիս ալ մխի-
թարելու համար. բայց այս քանի մի աստուածա-
բանից կարծիքն է միայն զոր թէ և շատերն կը մեր-
ժեն, սակայն Եկեղեցին դատապարտած չէ, ուստի
եթէ կ՛ուզէք՝ գուք ալ կարէք ընդունիլ. վասն զի
եթէ կարևոր իրաց մէջ միութիւն պէտք է, երկբայա-
կանաց մէջ ալ ազատութիւն տրուած է, բաւական
է որ սէրն յամենայնի տիրէ, ըստ բանից սրբոյն Աւ-
գոստինոսի « Ի կարևորս միութիւն, յերկբայս ազատութիւն,
յամենայնի սէր »:

« Այս կարծեացս պատճառներն՝ Եկեղեցւոյ յա-
ւիտենական պատժոց բնութեան վրայ տուած վար-
դապետութենէն առնուած են: Դատապարտու-
թիւն կամ անարգութիւն ասացելոյն մէջ երկու
որիշ մասեր կան, այսինքն պատիժ զրկման կամ բուն
դատապարտութիւն՝ որով մեղաւորն արտաքսի
յերկնից և զրկի յաւիտեան յերանական տեսութե-
նէն Աստուծոյ և 'ի հաղորդակցութենէ աստուա-
ծային կենաց, այս է պատժոյն էական մասն: Բաց
աստի կայ ևս պատիժ զգայութեան կամ ցաւն զոր
զգայ դատապարտեալն՝ թէ յարտաքին տանջանաց
յորս դատանի և թէ 'ի բարոյական կատանաց և յա-
պաշաւանաց և յուսահատութեանց: Այն վճիռն որ
զհոգին յերկնից տարագրած է, և յաւիտեանս Աս-
տուծոյ դիրկն նորա դէմ գոցած է՝ ամենևին փո-

խուելիք կամ թեթևնալիք չունի, և է անդարձական և անբողոքելի որպէս վերջին վճիռ գերագոյն արդարութեան: Բայց անարգելոց քաշած ցաւերն կարեն աճիլ աւելի չարերուն համար՝ իրենց զգայութիւնն աւելնալով և ապաւորութիւնն շատնալով, և բարկութիւննին կատաղութիւննին և նախանձնին զայրանալով. ուստի կարեմք սակաւ չարերուն համար ալ ենթադրել որ իրենց պատիժն թեթևութիւն մի կարէ ունել՝ գոնէ այս մտօք որ առաւել չաւելնալ իրենց չար կամաց զայրանալովն: Սակայն դարձեալ մեծ տանջանք է իրենց՝ իւրեանց յանցանաց անմոռաց յիշատակութիւնն, անկման ամօթն ու նախատինքն, և անմահ ցաւն գերագոյն բարին կորուսած լինելուն համար՝ որոյ գաղափարն մտաց մէջ պիտի մնայ հանդերձ գիտակցութեամբ ոչ երբէք այնմ հասանել կարենալու: Անտարակոյս այս բաւական է յուսահատցնելու համար այն հոգին՝ որ հաւատոյ պարգևն վայելած և իւր յանցանօք կորուսած է, բաղդատելով երկնից մեծապանծ յոյսերն որում կոչուած էր՝ սանդարամետաց այն խաւարին տեղեաց հետ՝ ուր իր ապստամբութեամբն անկած է: Դժուարին է այս վիճակս նկարագրել, որովհետև երկրիս վրայ նմանն չկայ, սակայն մինչև աստիճան մի կարեմք զայն նմանցնել ոճրագործի մի խռովեալ և յուսահատ վիճակին՝ որ թշուառութեանց անդունդի մի մէջ ինքզինք փակուած տեսնէ՝ ամենևին յոյս մի չունելով անտի ելնելու »:

« Անարգելոց ոմանց աւելի տանելի կամ սակաւ ահռելի վիճակն ըմբռնելու համար կարեմք մտածել անկնիք երախայից և հեթանոսաց վիճակն՝ որ յայս կենաց ելած են անյաղթելի ագիտութեամբ աստուածային խօսքին որ փրկեց զաշխարհս. յորոց առջիններուն համար սուրբն Աւգոստինոս ասէ որ թէ և յաւիտենական լուսոյն և Աստուծոյ ժառան-

գութենէն զուրկ են՝ սակայն չարի անգէտ լինելնուն համար՝ կարեն իրենց բնութեան համեմատ երջանկութիւն մի վայելել, ուստի, կը յաւելու, իրենց համար գոլն լաւագոյն է քան զչգոլն: Իսկ հեթանոսք որ ոչ հին և ոչ նոր օրէնքն ծանեան՝ Պաւղոս առաքելոյն ասացածին համեմատ՝ իրենց խղճին օրինօքն պիտի դատուին. և իրականապէս յաստուածային կենաց հաղորդակցութենէ՝ որ շնորհք մի է, արտաքսեալ լինելով, իրենց գործոց համեմատ պիտի դատուին և արժանացած վարձատրութիւնն ընդունին՝ ոչ փառաւորեալ մարդկային բնութեան վիճակին համեմատ: Բայց դարձեալ կը կրկնեմ՝ որ այս բաներս պարզ ներածութիւններ և արտածութիւններ են և փոքր 'ի շատէ հաւանական կարծիք, այլ ոչ բնաւ վարդապետութիւն: Եւ եկեղեցին ամենևին բան մի վճռած չէ դժոխոց տանջանաց կարելի թեթևութեան վրայ. իսկ անկնիք մեռեալ երախայից, և Աւետարանի խօսքն չլսող մարդկանց համար՝ զնոսա արտաքսեալ կը հրատարակէ գործով՝ աստուածային խօսքին բարերարութենէն, այսինքն 'ի հաղորդակցութենէ աստուածային կենաց, բայց հանդերձեալ աշխարհին մէջ իրենց ունեցած վիճակն ոչ որոշէ »:

« Խօսքս աւարտեմ Տեառն մերոյ իւր առաքելոց ասացածովն. « Ի տան հօր իմոյ օթեւանք բազումք են ». այս խօսքէս կ'իմացուի որ երանելեաց մէջ ալ դասակարգութիւն մի կայ և աստիճանք փառաց և երանութեան. ապա հանդիտութեամբ չեմք կարող ասել թէ հակադարձ աշխարհին մէջ ալ նման դասաւորութիւն մի կայ, որով և թշուառ անարգելոց մէջ ալ զանազան աստիճանք կան սաստկութեան տանջանաց յաւիտենական պատժոց մէջ »:

Ես. — « Շնորհակալ եմ, Տէր հայր, բիւրիցս շնորհակալ եմ այս բարի խօսքիդ համար՝ որով ձեր

բացատրութիւններն կ'աւարտէք, և որում սրտի մտօք պիտի հաւատամ, և ոչ երբէք պիտի մոռանամ Քրիստոսի այս խօսքս « Ի պան հօր իմոյ օթեանք բազումք են », և զյարադրութիւն զոր կարեմք առնել հակադարձ աշխարհին համար: Այս իմաստասիրական ներածութիւնս՝ որ սուրբ Գրոց վկայութեան վրայ հաստատուած է՝ իմ բանիս կուդայ, և ուրախութեամբ զայն կ'առնում կը տանիմ իբրև համառօտութիւն այն հոգէշահ խօսակցութեան՝ զոր հաճեցայք ինձ շնորհելու, և միանգամայն որպէս նշոյլ մի յուսոյ որ դժոխոց խորն իջանէ » :

Խղճմտանաց արթննալն

11 Յուլիս:

Քանի օր է որ օրագիրս գրած չեմ. պատճառն քահանային հետ ունեցած երկու խօսակցութեանցս՝ իմ վրաս գործած խորունկ տպաւորութիւնն է: Քահանայի մի չես թողուր՝ ինչ սիրուն մարդ, ինչ զուարթ կերպ և ինչ շնորհալի պայծառութիւն իր բոլոր վարմանց մէջ: Ոչ գիտեմ թէ իր խօսքն զիս համոզեց թէ չէ, որովհետև դեռ մտացս մէջ շատ առարկութիւններ ունիմ պատժոց այս տխրագին յաւիտենականութեան վրայ, և սակայն ալ սիրտս առաջ չերթար: Այսու ամենայնիւ շատ ասացածն ճշմարիտ է, և այնչափ աւելի սրտիս դպաւ՝ որչափ որ իր հաստատածներն՝ մանկութեանս հաւատքն կ'արթնցնէր, այնպէս որ դեռ բերանն չբացած՝ ասելիքն կը զգայի. արդեօք ճշմարտութեան ոյժն էր որ վրաս կը տիրէր, թէ հին նախապաշարմունքս վրաս կը զօրանային, որոշ ոչ գիտեմ. այսչափ միայն գիտեմ որ իր կենդանի ձայնովն ու շարժուած-

քով և համակրական սիրուն դէմքովն սիրտս կը շարժէր: Մանաւանդ որ յայտնի կ'երևէր թէ խօսածներուն ինքն ալ սրտանց համոզուած էր, և վիճաբանութեան մէջ այն ոչ նայէր որ ինքն իրաւունք ունել երևի կամ իւր հակառակորդին յաղթէ, այլ առաքելական նախանձայուզութեամբ հոգւոց փրկութեան կ'աշխատէր՝ իրեն մեծ երջանկութիւն սեպելով 'ի ճշմարտութիւն և 'ի բարին ածել զնոսա:

Իսկ վարդապետութեան գերազանցութեանն վրայ ասելիք չունիմ. պատժոց յաւիտենականութեան խնդիրն մինչև ցայժմ քար դայթակղութեան եղած էր ինձ, և այնոր մտածութիւնն միայն իմ իմաստասիրութիւնս կը զայրացնէր, վասն զի այնպէս կը համարէի թէ այս բանս անտանելի անիրաւութիւն և անգթութիւն մի էր: Իսկ հիմա անիրաւութիւն ոչ համարիմ զայն այլ թշուառութիւն, ոչ եթէ անգթութիւն՝ այլ հարկ անհրաժեշտ՝ քանի որ յանցաւորին կամքն իր թշնամութեան և ապստամբութեան մէջ կը յարատևէ: Վասն զի վերջապէս ընդունել չուզողին բանի չտրուիր. և նոյն իսկ մեր մէջ և մեր տղայոց յանցանաց նկատմամբ բանեցուցած ներողամտութիւննիս՝ օգուտ մի ոչ առնէ նոցա՝ երբ իրենց յանցանքն ոչ ճանաչեն ու ներումն ոչ խնդրեն. մանաւանդ թէ այնու իրենց ստահակութիւնն քաջալերած կը համարիմք, որով աւելի կը խստանան իրենց չար ճամբուն մէջ. և անխրատ և անսանձ լինին՝ որ թէ իրենց և թէ մեզ վնասակար լինի ու թշուառութեան պատճառ: Եւ ինչու նոյնպէս պիտի չլինի մեր Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեան մէջ ալ որուն զաւկներն եմք մեք, և այնպէս ագետ ու չարակամ զաւկներ՝ ինչպէս են մեր դպրոցաց տղայքն իրենց վարժապետաց առջև:

Համառօտ ասելով՝ իմ միտքս և խորհուրդս քննելով՝ կը տեսնեմ որ յայտնի հակառակութիւն

չունիմ այս կէտիս վրայ, և նոյն եռանդն ոչ զգամ զայն ուրանալու և հերքելու՝ որ զիս առաջ կը զայրացնէր: Բայց երբ սրտիս խորն մտնելով՝ խիղճս լաւ մի հարցփորձ առնեմ՝ ուրիշ բան մի գտանեմ հոն որ զիս կը տագնապէ ու դրեթէ կը վախցնէ. ինչ է այս վախս և ինչէն յառաջ կուգայ. կ'ուզեմ այս շփոթ զգածումս իմանալ՝ որ այն խօսակցութենէս 'ի վեր զիս կը խռովէ, և կարծես թէ սրտիս մէջ նետի մի սլաքն մնացած է՝ որ զիս վիրաւորելէն ետև դեռ կը չարչարէ:

Մանկութեանս ժամանակ անկեղծ քրիստոնեայ էի, մանաւանդ առաջին հաղորդութեանս ատեն՝ զոր պարզ հաւատովք և կրցածիս չափ եռանդեամբ կատարեցի. և ինչ որ Եկեղեցին կ'ուսուցանէր ամենքն ալ կ'ընդունէի առանց երկմտութեան ու բացառութեան, ոչ իբրև բերնուց սովրելու դասի մի պէս, այլ իբրև ճշմարտութիւն իջեալ 'ի յերկնից և իբրև բան Աստուծոյ որ ոչ կարէ խաբել: Եւ սակայն սակաւ ժամանակէն իմ հաւատոցս վրայ սկսայ տարակուսիլ, և վերջապէս ինչ որ հաւատացել էի զամենքն ալ մերժեցի. բայց թէ ինչու, ես ալ ոչ գիտեմ: Արդեօք գիտութեանց խորն իջնելուս համար, կամ խորախորհուրդ հակաճառութեամբ: Ոչ. վասն զի նախ որ այնչափ տարեց չէի՝ որ խելքս հասնէր, ետքն ալ երբ կարողութիւնս բացուեցաւ՝ մտքէս անգամ ոչ անցընէի. սակայն մինչև այսօր իմ հակառակութեանս մէջ յարատևեցի՝ թէ ոչ յայտնապէս գոնէ ծածուկ ամեն բան ուրանալով կամ դէթ անտարբեր ու անխտիր լինելով: Այսպիսի մեծ փոփոխութիւն մի ինչպէս եղև իմ ներսի դիս, և ինչ պատճառաւ մինչև տարիքս առած ատենս շարունակեց. ինչու ես որ հաւատացեալ էի՝ անհաւատ դարձայ: — Աւաղ շատ անգամ փոքրիկ պատճառներ մեծամեծ արդիւնս յառաջ ածեն:

Առաջին հաղորդութեանս եռանդեան տեղ՝ որ զիս հոգւով յափշտակել էր, մարմնասիրութեան նորազգաց յուզմունքն սկսաւ՝ երբ յարբունս հասի հասակիս. և հոգիս 'ի զգայութեանցս խռոված և 'ի պատկերողութենէ ալեկոծած, և բիրտ բնազդմանց հպատակելով և նոցա ցանկութիւններն յագեցնել ուզելով՝ յԱստուծոյ հեռացաւ և թագեաւ 'ի նմանէ, որպէս յանցաւոր Ադամն 'ի դրախտին. որով այն ամենայն որ Աստուծոյ ներկայութիւնն կը յիշեցնէր՝ ինձ ծանր կուգար ու կը նեղէր, որով և հակառակութիւն և զզուանք մի կ'իմանայի կրօնական խօսակցութիւններէ՝ որ զիս առ Աստուած դարձնել կը ջանային, և կրօնից պաշտամունքն ալ զիս կը նեղէին ու կը ձանձրացնէին:

Նմանք զիրեարս գտանեն առակին համեմատ՝ չար ընկերներս ալ ինձ շատ վնաս տուին, որպէս ես ալ նոցա. չարն ծաւալելու ամենէն զօրաւոր գործին օրինակն է՝ որովհետև չար ցանկութեանց փորձութեան վրայ՝ յաւելու կատարեալ գործի ազդեցութիւնն ալ՝ որ ճամբայ կը բանայ այն ցանկութիւններն կատարելու: Յետոյ վրայ կը հասնի երիտասարդական ունայնամտութիւնն՝ որ չար ընկերութեան մէջ աւելի կը զայրանայ՝ նոյն իսկ չարեաց մէջ ուրիշներէն վար չերևելու համար, կամ գոնէ մարդկային նկատման համար՝ ուրիշներուն գործածին նմանել կը ջանայ՝ ոչ այնչափ յօժարութիւն ունելուն համար՝ այլ վախնալով որ ծաղրելի չլինի:

Այս պատճառաց վրայ յաւելցուր վատթար դրեանքն ալ՝ յորոց ոմանք ինչպէս անպարկեշտ և ցոփ վիպասանութիւններն՝ անհարթ նկարագրութեամբք զզգայութիւնս կը գրգռեն ու կը հրապուրեն, և այլք իմաստակութեամբ և ճամարտակութեամբ և մանաւանդ սրբազան իրերն ծաղրելով՝ անբարոյականութիւնն տեսական ուսման մի կը

դարձնեն, և ցոփութիւնն եթէ չկարասցեն ևս արդարացնել՝ գոնէ անմեղադիր առնելու կը ջանան։ Վոլթէռի Իմաստասիրական բառարանն և իւր թեթև քերթուածներն՝ սակաւ վնաս չտուին իմ հոգւոյս՝ կրօնական զգածումս բոլորովին խեղդելով և բնաջինջ առնելով։ Որով առանց հաստատուն պատճառ մի ունելու՝ հաւատքն և այնոր պարտքերն կատարելն 'ի բաց թողի, միայն այսոր համար որ կրօնից հրամաններն զիս կը ձանձրացնէին, և իւր պատուէրներն և հրահանգներն զիս կը նեղէին։

Պատանեկութեան հասակի անբանական ցանկութեանց ուռուցիկ հողմէն ետև՝ սակաւ մի խելքս գլուխս եկն։ Ճարտարախօսութեան ուսումն՝ գեղեցիկ ճաշակն սրտիս մէջ արթնցուց, և յետոյ իմաստասիրութիւնն ալ իմ միտքս բարձրացնելով 'ի խոկումն մեծամեծ ճշմարտութեանց որ կը տիրեն մարդուս կենաց վրայ՝ զիս զգայութեանց ստորին աշխարհէն քեցեց բաժնեց։ Պատկերողութեանս առջին ունելով զգաղափարն և զգաղափարականն՝ զիս գրեթէ ուրիշ աշխարհ մի կը կոչէին։

Բայց հազիւ Քարիբդիսէն աղատեցայ՝ Սկիլլայի մէջ նաւակոծել սկսայ։ Մեր վարժապետաց օրինակաւն և առաջնորդութեամբ՝ մեք իմաստասիրական Տիտանքս՝ միայն մեք մեզ և մեր ուժին ապաւինած՝ յերկինս ոտնակառել կ'ուզէինք՝ աշխարհիս հայեցողութիւններն իրարու վրայ բարդելով, որով ես ալ այլ աւելի հեռացայ 'ի կրօնից՝ որ դերբնականի վրայ հիմնեալ է, զոր մեք աղայութիւն և պատրանք կը համարէինք, թերևս նաև նենգաւորութիւն, և մըտքերնիս դրած էինք զամենայն ինչ մեկնաբանել և ամենեցուն առաջնորդել միայն լուսով բանին. որով և կրօնքն ալ թէ ոչ 'ի սպառ խաբէութիւն՝ գոնէ պարզապէս ձև մի երևէր աչքիս, կամ առասպել ինչ և նշանակ բացարձակին՝ յոր հասանել միայն իմաստասիրութեան տրուած էր, ներողամիտ լինելով միայն քերթողաբար զայն նկարել՝ 'ի գիւրութիւն երևակայոտ մարդկանց կանանց և տղայոց. որք պատկերովք և առակովք միայն կարեն բան մի ուսանիլ, և գրական օրինօք միայն կարեն կառավարուիլ։

Այսու նկատմամբ քրիստոնէութեան թշնամի չէի, այլ և ռամկին համար օգտակար համարէի այնոր առակաւոր լեզուն, նշանական արարողութիւններն և արուեստական ծէսերն, որ յոյժ զօրաւոր են միամիտ ժողովրդեան երևակայութիւնն ցնցելու՝ պարզ գաղափարի քանի մի նշոյլներովն, զոր փայլակի պէս կը ցոլացնէ քրիստոնէութիւնն ռամկին ոգիտութեան խաւարին մէջ։ Այս պատճառաւ Աւետարանի հետ հաշտուեցայ՝ զոր հասկացածիս չափ կը բացատրէի և խելքովս կը քարոզէի ևս առ խոհեմութեան կամ առ մարդահաճութեան, բայց միշտ անկեղծութեամբ գովելով՝ ինչ որ նորա բարոյականին առակներուն և վարդապետութեան մէջ ճշմարիտ բարի և գեղեցիկ բան մի կը տեսնէի. բայց միշտ սնապարծութեամբ միտքս դնելով՝ որ պարզ ճշմարտութեան վերամբարձական ներհայեցութեամբն այնոր վրայ տիրեմ, և պաշտպանողական ձեռք մի կարկառեմ իրեն՝ որպէս զի իր քերթողական յերևութից դուրս ելնէ և բացարձակին մօտենայ։

Ահա այսպիսի տրամադրութեանց մէջ էի՝ երբ կարգն ինձ ալ հասաւ իմաստասիրութեան վրայ դասախօսելու՝ այնպիսի երիտասարդական հասակի մէջ՝ երբ սովորաբար դեռ շատերն աշակերտութեան մէջ են։ Իմ իմաստասիրական պայուսակս շատ ծանր չէր այսինքն շատ մեծ տեղեկութիւն մի չունէի, թէպէտ և շատ աշխատած էի, բայց պէտք է խոստովանիմ որ գրեթէ միշտ նոյն շրջանակին մէջ դառ-

նալով: Ուստի նախ սկսայ ինչ որ ես ուրիշէ ուսեալ էի՝ զայն այլոց ուսուցանելու. յետոյ ես ինքնիրենս սկսայ ուստնել և մտածել՝ ինչ որ պիտի խօսէի, և սկովտացի իմաստասիրութիւնն (Թովմաս Ռիտ) մինչև 'ի խորն զննելէն և հասնելէն ետև՝ անտի գոհ չլինելով՝ ճշմարտութեան և փառաց ծարաւի հոգւոյ մի բոլոր եռանդովն՝ գերմանական իմաստասիրութեան տուի ինքզինքս. որովհետև իր անդրադարձ և վերլուծական ոգին ինձ հաճոյ կ'երևէր և յանդուգն հայեցողութիւններն զիս կը բարձրացընէր, այնպէս որ սակաւ մի ատեն ինձ կ'երևէր թէ այնոր հետ պիտի թռչիմ խոյանամ բացարձակի գիտութեան գագաթն ու անտի պիտի նկատեմ իրաց տիեզերական դրութիւնն:

Այս երիտասարդական վստահութիւնս իմ դասախօսութեանցս շարժումն և կեանք կուտար, և անկեղծ խանդիս եռանդն իմ ունկնդրացս ալ կը հաղորդէր՝ որք մեծաւ մասամբ երիտասարդ էին. և ես ինքզինքս բարեբաղդ կը համարէի՝ որ այս նորահրաշ Սինայի ամպերէն իջնելով կը բերէի առ նոսա լուսոյ ճառագայթ մի 'ի միջոյ շանդից և փայլատականց. վասն զի ձայնս ու խօսուածքս ալ զօրաւոր էին՝ աղաղակաւ և ճշմարտութեան քանի մի տեսութեամբ խառնած: Բայց այսօր ես ինձ կը ստիպիմ խոստովանելու՝ որ այսչափ տարի իմաստասիրական լերին վրայ անցընելէս ետև՝ խօսակից լինելով ընդ իմաստնոցն գերմանացւոց որ նորօրինակ իմն մարգարէք են մարդկային մտաց՝ և ներքին հաղորդակցութիւն իսկ ունելով նոցա վերամբարձ յայտնութեանցն, դեռ չյաջողեցայ իմ յերազած բացարձակի գիտութեանն հասու լինել, նա մանաւանդ տիեզերական օրինաց տեղեակ լինել որ աշխարհիս վրայ մարդկային կենաց առաջնորդն է:

Այսոր համար իմ գերմանական խանդս ալ մաշե-

ցաւ, և որպէս զի իմ դասախօսութիւններուս հասնիմ և սովրեցուցածս օգտակար առնեմ՝ նորէն հարկ եղև որ ընտրականութեան դառնամ՝ որ գրեթէ անհրաժեշտ վախճան է այն ամենայն իմաստասիրաց որ իրենց համար սեպհական վարդապետութիւն չունին: Միայն հարկ է ամօթով խոստովանիմ որ ընտրականութիւնս բոլորովին անկեղծ և ամբողջ չէր. այլ կամաւ բացառութիւններ գործած էի այնոր մէջ՝ քրիստոնէական կրօնից վարդապետութեան ամենևին յիշատակութիւն չառնելով, որպէս թէ նա քան զհին և զնոր դպրոցս իմաստասիրութեան քան զամենեսին աւելի գործնական ազդեցութիւն ունեցած չլինէր մարդկային քաղաքական բարդաւաճանաց վրայ: Այս լռութեանս ալ պատճառ կը բերէի ասելով թէ քրիստոնէութիւնն իմաստասիրութիւն չէ՝ որովհետև յայտնութիւն ընդունի՝ զոր իմաստասիրութիւնն կը մերժէ, և գերբնական զօրութեան կը հետևի՝ զոր միաք մարդոյ ոչ հասկանան. ուստի այս պատճառաց համար 'ի բաց թողի զայն, և ինքզինքս ազատ համարէի 'ի քնին առնուլ. և մինչև ցարդ նոյն կարծեաց մէջ եմ. սակայն այս օր խիղճս կը զարնէ, որովհետև այս բացառութիւնս արդար և անկողմնասէր չէ: Քրիստոնէութիւնն ուստի ալ եկած լինի՝ պատմութեան ամենէն նշանաւոր դէպքերէն է, և վարդապետութիւն մի եղած չէ՝ որ աշխարհիս մէջ այսպիսի արդիւնք յառաջ բերած լիցի. ուստի գոնէ իբրև դէպք կ'արժէ որ քննեմ և բացատրեմ զայն: Եւ ահա հիմա ծածուկ այս բանիս կ'աշխատիմ՝ որպէս զի խիղճս գոհ առնեմ՝ որ ինձ դէմ կը բողոքէ զայն բարձի թողի առնելուս համար, և միանգամայն առանց բաւական զինքն ճանաչելու և իր պաշտպանութիւնն լսելու զինքն դատելուս դատապարտելուս և հերքելուս համար. որովհետև ինչպէս որ ասացի այս բանս ու-

րիշ բանի համար չեմ գործած՝ բայց եթէ նախա-
պաշարմանցս տեղիք տալով, իրեն դէմ անսիրելու-
թիւն ունելով, առ մարդկային պատկառանաց, և
իմ մէջն դտուած ընկերութեան ազդեցութեամբն,
և վերջապէս վախնալով որ ինքն իմ խորհրդոցս
վրայ չտիրէ և գործերուս և վարմանցս արգելք չլի-
նի. այս պատճառաց համար խորախորհուրդ կեր-
պով զինքն չեմ քննած:

Անհանգստութիւն եւ տագնապ

17 Յուլիս:

Հապա թէ որ այն քահանային ամեն ասացած-
ներն իրա՞ւ է. և ինչո՛ւ ալ չլիցի, երբ ես ալ իրեն
դիմադրելու հաստատ պատճառ մի չունիմ: Ո՞չ ա-
պաքէն 'ի նոցանէ մի մասին հաւանեցայ՝ խելաց յար-
մար գտնելով՝ այնպէս որ իմաստասէրն առանց իր
պատիւն կորուսանելու կարէ ընդունել զայն: Իսկ
մնացածին համար ասեմք թէ գերբնական բան լինե-
լուն՝ մեզ ոչ պատկանի, որովհետև ոչ հաւատամք
թէ բնութենէ վեր բան մի կայ, կամ թէ կայ ևս՝
մարդուս խելքն չհասնելուն կամ ցուցանել չկարե-
լուն՝ չեղած կը համարուի:

Գերբնական բան չկայ ասեմք. պատճա՞ռն. վասն զի
չկարէ լինել: Բայց խնդիրն ճիշդ այսոր վրայ է. ուս-
տի մեր գործածն ուրիշ բան չէ՝ բայց եթէ այն բանն
որ դեռ ցուցուելու է՝ կը հաստատեմք. և ոչ իսկ կը
ջանամք այս կորդեան կծիկն քակել՝ հապա կարել
կ'ուզեմք. բայց ե՛կ տե՛ս որ հոգւոյ և խղճի նիւթոց
մէջ Ալեքսանդրի սուրն բանի չդար. վասն զի նոքա
երկրաւոր խնդրոց պէս չեն որոշուիր. և բռնու-

թիւնն բանի մի չծառայեր: — Այս ալ հարցանեմք՝
սա իմաստասէրն ո՛ր ժամանակէն սկսել է դատաւոր
լինել կարելւոյ և անկարելւոյ վրայ: Ո՞րչափ բաներ
կան որ ատենօք ըստ կարգի բնութեան և գիտու-
թեան անկարելի կը համարուէին, և այսօր իրական
բաներ սեպուած են: Եւ եթէ մեր բնատուր խելքն
իր սեպհական զօրութեամբն անկարող է գերմարդ-
կային և աստուածային իրաց բարձրանալ, ճիշդ այս
բանս պատճառ չկարէ՞ լինել արդեօք՝ որ այն բաներն
որ մեր բնական կարողութենէն վեր են՝ մեզ պէտք ե-
ղած ժամանակ՝ իրենք մինչև առ մեզ խոնարհին: Եւ
ահա քրիստոնէական Եկեղեցին կը համարի թէ կա-
րէ ապացուցանել զհնարաւորութիւն զդոյութիւն
և զբարոյական կարևորութիւն աստուածային յայտ-
նութեան: Արդեօք այս իր յառաջ բերած պատ-
ճառներն բաւական խուզարկե՛լ եմ յառաջ քան
զմերժելս: Ո՛չ, ամենևին ունկն չեմ դրած ասացած-
ներուն, և առանց լսելու՝ դատապարտել եմ, մեր
աւուրց քննաբանից խօսքն կրկնելով թէ անկարե-
լին և անտեղութիւնն քննելու ժամանակ չունիմ:
Եւ սակայն գրեթէ երկու հազար տարուընէ 'ի վեր
միլիարաւոր մարդիկ այս անկարելւոյն հաւատացել
են, և քան զամենեսին հռչակաւոր վարդապետք
հրապարակաւ զայն ուսուցել են. և զայդ անտեղու-
թիւն համարածդ ամեն ատեն քարոզած են առա-
քեալք վկայք՝ որոց համար ութեւտասներորդ դարու
իմաստասէր մի ասաց. «Դժուարին է չհաւատալ
այնպիսի մարդկանց՝ որ իրենց հաւատոց վկայու-
թեան համար իրենց կեանքն տուել են»: Եթէ մեք
իննեւտասներորդ դարուս իմաստասէրք ճշմարտու-
թեան մէջ եմք՝ ասել է թէ այսչափ առաքեալք և
մարտիրոսք, խոստովանողք և վարդապետք՝ որք սի-
րով քաջութեամբ և հանճարով մարդկութեան ըն-
տրելագոյն մասն էին՝ խաբեբայ կամ խաբուած մար-

դիկ են եղել, կեղծաւորք կամ տկարամիտք. որ այս աւելի զարմանալի է քան թէ իրենց քարոզած գերբնականն զոր մեք չկամիմք ընդունիլ:

Շատ սրտիս դպաւ քահանային՝ ապերախտ քրիստոնէից համար ասացածն ալ, որ ուրանալով զայն որ զիրենք 'ի յաւիտենական մահուանէն իւր արեան գնովն փրկանաւորեց, ոչ միայն մտքերնէն ոչ անցընեն այս թանկագին բարերարութեան համար իրեն շնորհակալ լինելու, այլ և յայնմանէ երես կը դարձնեն անխտրութեամբ և արհամարհանօք. նա մանաւանդ ատեն ալ կուգայ որ հրէից պէս զինքն յերեսն 'ի վեր կը ծաղրեն ու կ'այպանեն, և իրենց զրպարտութիւններովն և հայհոյութիւններով՝ իւր առջի դահճաց պէս զինքն կը ձաղկեն: Ապա ուրեմն եթէ այն քահանային ամեն ասացածն իրաւ է՝ Քրիստոս ամեն օր մեր մէջ ալ և մեր ձեռօք նորէն 'ի խաչ կը հանուի. և իր հոգեվարաց սարսափելի տեսարանն 'ի միջի անդ բազմութեան՝ որ իր մահն կը խնդրէին և կատաղի կանչուըռտելներով բոլոր պատասխանատուութիւնն վրանին կ'առնուին՝ « Արիւն դորա 'ի վերայ մեր և 'ի վերայ որդւոց մերոց » դոչելով, այս ահաւոր տեսարանն ասեմ՝ հանապազորդ կը նորոգուի նորօրինակ կերպով մեր հրապարակաց մէջ՝ մեր կաճառաց և մեր դահլճից մէջ: Եթէ այն քահանային ասացածն իրաւ է՝ ես ալ՝ անուամբ և եթ և վատթար քրիստոնեայս՝ որ ատենօք ունեցած հաւատքս կորուսեալ եմ կամ կը համարիմ թէ չունիմ, ճշմարտութեան ուրացող մի եմ, որովհետև իրեն թիկունս դարձուցանելով՝ ինչ որ նմա հակառակ է զայն կ'ուսուցանեմ, իմ իրեն դէմ կրած ներհակութիւնս առ մարդկային խոհեմութեան և գրեթէ առ վատութեան և եթ ծածկելով ու չյայտնելով: Ես ալ ուրեմն ապերախտ մի եմ որովհետև իմ բարերարս ոչ ճանաչեմ, մանաւանդ թէ քան զապերախտ աւելի, որովհետև իրեն դէմ կ'ելնեմ և որչափ ձեռքէս կուգայ զինքն կը հալածեմ. վերջապէս եթէ այս ամենն իրաւ է՝ ապա ուրեմն վաղ կամ անագան պիտի ընդունիմ այն պատիժն որ պահի ուրացութեան ապերախտութեան և վատութեան:

Ո՞չ ապաքէն Դամոկլէսի սուրն է այս՝ թելով մի և եթ գլխուս վերևն կախուած՝ մինչդեռ հանդարտ նստած կը վայելեմ 'ի խնջոյս կենաց՝ ուրիշ բան չմտածելով բայց եթէ հաւաքել անդանօր և ճաշակել զամենայն զուարճութիւնս աշխարհիս. և եթէ այս թելս բրդի՝ վճարեալ է վասն իմ. և մահն կարէ խզել զայն՝ երբ ամենևին ոչ մտածեմ. վասն զի մահն ալ իբրև գող մութ ատեն կը հասնի, և շատ անգամ յանզգաստից կը զարնէ: Արդ եթէ վաղիւ մեռնիմ, (և ո՛վ զիս կ'ապահովցնէ որ այսօր իսկ չլիցի այս) կայծակնահար կաթուածէ՝ որ այնչափ յաճախ կը պատահի, որ ժամանակ և ոյժ ոչ թողու ինքզինք մտածելու, ո՞ւր պիտի երթամ, յաշխարհէս ելնելէն ետև: Անտարակոյս հոս մնացողներն ինձ համար բան մի չեն կարող առնել, և իմ ամենէն աւելի մտերիմ բարեկամացս օգնութիւններն՝ անօգուտ պիտի լինին, այն ալ եթէ բարեկամ ունիմ: Ո՛վ ուրեմն ինձ ձեռնտու պիտի լինի այս սարսափելի անցից մէջ. այլ միայն միայնիկ պիտի մնամ յաւիտենականութեան դրան առջին. և արդեօք այս անցից ծայրն ո՛ւր պիտի աւարտի, և հոն ի՞նչ պիտի դտանեմ: Անտարակոյս հոն դատաւոր մի առջևս պիտի ելնէ, որովհետև խելքն ալ կը ցուցանէ թէ իւրաքանչիւր ոք իր գործոց համեմատ պիտի վարձատրուի, ուստի այս բանիս համար ատեան մի հարկաւոր է՝ որ այն գործերն կշռէ, և իւրաքանչիւրում իր արժանաւոր մասն տայ: Ո՛վ պիտի լինի ուրեմն այս դատաւորս, և ի՞նչ պիտի լինին իր դատաստանին հետևանքն. բոլոր աշխարհիս իմաստասէրներ միատեղ գան՝ այս հարցման

պատասխան չէն կարող տալ: Հապա եթէ գտաք զոր ես անզգայ եմ և արհամարհեմ աշխարհիս մէջ և իր բարիքն չեմ ուզեր, ընդհակառակն մերժեմ և վարգապետութեանն հակառակեցայ, ինչպէս որ Աբեսաղոմն կը հասատատէ և ամենայն հաւատացիմ քրիստոնեայք կը հաւատան. ես ինչ պատճառ ունիմ նոցա պէս չհաւատալու:

Եթէ ինքն փրկիչ եղև մարդկան՝ ինչու նոցա Դատաւորն ալ չլինի: Եթէ յիրաւի իւր արիւնն թափեց ընդոծա փրկանաւորելու համար՝ ի թէ իրաւունք չունի համար պահանջելու և հարցանելու թէ ինչ բանի գործածեցին զայն, և թէ իր անբաւ ողջակէզն ինչ բանի եկած է: Ասաղ, ինչ պատասխան պիտի տամ՝ եթէ հիմա իր առջին եղնեմ. բայց եթէ խղճմտանացս թելադրութեանն հետևելով պիտի ասեմ. Տէր իմ, ես մանկութեանս առեն քեզ հաւատացի, և բարեբաղդ գտուեցայ քոյ խօսքովդ և կենդանի մնանելու, որովհետև յիրաւի երջանիկ էի առաջին հաղորդութեանս օրն՝ յորում սրտի մաքնորոգեցի միրտութեանս ուխտերն՝ խոստանալով հրաժարելու ի սատանայէ և յամենայն գործոց նորա և քեզ համար միայն ապրելու: Այլ յետոյ իմ ուխտերս կոտրեցի և խոստմունքս չպահեցի, քոյ խօսքեդ աւելի իմ խելացս լուսոյն հետևեցայ, և քոյ հրամանացդ հպատակելու տեղ՝ անձնիշխան լինել ուզեցի. Աշմարիան բարին և երջանկութիւնն օտար տեղեր բնաւեցի՝ և ոչ ի քեզ և յօրէնս քոյ, և բոլոր իմ էութեանս կարողութիւններն և ոյժն գործածեցի՝ զքեզ բանի տեղ չդնելու համար, եթէ ոչ նոյն իսկ ուղղակի քեզ դէմ պատերազմելու համար: Ինչ որ ես ինձ համար արարի՝ այլոց համար ալ նոյնն գործեցի՝ զորս պարծենկոտութեամբ կը համարէի թէ խնամատարութեան և խնամատարութեան Ճամբայն կը տանիմ: Ամբողջ երեսուն տարի հաչա-

կաւոր համբաւով զուրիչներն ուսուցի՝ ամենևին հոգ չառնելով թէ արդեօք իմ խօսքերս քոյոցդ հետ համաձայն էին թէ չէ. և մինչդեռ միաքս իւր խորհուրդներուն կը բարձրանար և՝ ամբարտաւանաբար միայն իր հասկացածներն ընդունիլ ուզելով, ուրիշ նայնամտութիւնս ալ մարդկանց գովեստներուն ու ծափահարութեամբն կը պարարէր, ամեն բանէ վեր իւր փառքն բնաւելով, և նոցա զարմանքն իրեն երջանկութեամբ համարելով: Ապա ուրեմն ես ինձ համար աւելի աշխատել եմ քան թէ վասն այլոց՝ որոց համար իմ պաշտամանքս աւելի ծառայելու պարտական էի. և թէպէտ չեմ կարող ուրանալ թէ ի քէն ընկալեալ էի ձիրս մտաց գիտութեան և խօսից՝ որ իմ յաջողութեանցս գործիքն էին՝ սակայն նոցա պատիւն քեզ չվերադրեցի, այլ միայնակ կամեցայ վայելել:

Ո՜հ, այո՛, ատացածս յոյժ Աշմարիտ է, և այս ուզելով աշխատել և գտատխուսել եմ երեսուն տարուընէ ի վեր. իրաւ է որ Աշմարտութիւնն սիրել եմ, և իմ ամեն ուսմանցս մէջ զնոյն բնաւել եմ, և ինձ այնպէս կ'երևի որ գտատխուսութեանցս և երկասիրութիւններուս մէջ ալ զնոյն հրատարակել եմ. ոչ քնաւ՝ ինձ սուտ երևցածն գրել եմ. սակայն Աշմարտութիւնն ես ինձ համար որոնել եմ՝ ոչ թէ իրեն համար, և չատ աշխատութեամբ մտաց և հմտութեամբ աշխարհիս մէջ ցրուած Աշմարտութեան Ճառագայթներն հաւաքելով՝ ես ինձ պակ մի ուզել եմ յօրինել և նորա փառքն զարդարուիլ: Համառօտ ասելով ես ինքզինքս վերագասել եմ քան զԱստուած և քան զնմանիս, և միայն ինձ համար աշխատել եմ: Եւ այսոր վարձատրութիւնն ընդունել եմ մարդկանց գովութեամբն՝ որ այնչափ ուշադիր են՝ որ չափ ի նոցանէ յառաջ եկած ուրախութիւնն, և որոյ հաչակն անտարակոյս մինչև ի հանգերձեալ աշխարհն պիտի չհասնի:

Եթէ այսօր խղճէս կը ստիպուիմ այս բանս խոնարհաբար խոստովանելու՝ թէ և միաքս և երևակայութիւնս հաղար և մի պատճառանք, անմեղագրութիւն և արդարացումն կը դտնէ և իմ առջիս կը դնէ, հապա ինչ պիտի լինի անդին գերագոյն դատաւորին առջին՝ երբ հոգիս 'ի մարմնոյ բաժնուելով և իր քօղերէն հոլանեալ և մերկացեալ՝ մերկ պիտի երևի աստուածային լուսոյն առջև, իւր իսկ գոյութեան մէջ կրելով իւր անկման անջինջ սպիներն և իւր թշուառութեան հետքերն:

Քաւարան

18 Յուլիս:

Թէպէտ և իմ իմաստասիրութիւնս շատ առարկութիւններ միաքս կը ձգէ պատժոց յաւիտենականութեան դէմ՝ սակայն այնու սիրտս հանդիստ ու ապահով չէ և վախ մի կուգայ ինձ, և նոյն իսկ այն կարծիքն թէ դատապարտելոց ցաւերն կարեն մեղմանալ՝ առանց ժամանակն կարճելու՝ զիս բոլորովին ոչ հանգստացնէ. վասն զի մարդուս հոգւոյն համար յաւիտեան զրկուած լինել ճշմարտութեան տեսութենէն և գերագոյն բարւոյն վայելքէն՝ սարսափելի տանջանք լինելու է, որովհետև ինքն երկուքն ալ սիրելու համար ստեղծուած է, և երկրիս վրայ մասամբ իւիք զայնս ճանչցած է, և իր յանցանքովն կորուսել է զայնս ժառանգելու երջանկութիւնն: Բարեբաղդաբար արքայութեան և դժոխոց մէջ քաւարան ալ կայ՝ ըստ վարդապետութեան կաթողիկէ Եկեղեցւոյ, որ այնպիսի տեղ մի կը նկարագրէ զայն՝ ուր թէ և քաշուելու տանջանքն սարսափելի են՝ սակայն որովհետև հոն դատապարտուած

հոգիներն ստոյգ գիտեն որ քաւութիւննին աւարտելէն ետև պիտի ազատին՝ ուստի ես ալ ինքզինքս երջանիկ պիտի սեպէի եթէ հոն տեղն երթայի, որովհետև օր պիտի գայ որ վերջապէս անտի ազատելով յերկինս կարէի հասանել:

Կաթողիկէ հաւատոց մասանց մէջ ամենէն աւելի քաւարանի դէմ կը մաքառին իմաստասէրք. իսկ բողոքականք բոլորովին կը վերցնեն: — Նիւթականք, զգայականք և համաստուածեանք որ քաւարանն ոչ ընդունին՝ նոցա ասելիք չունիմ, վասն զի ինքնիրեն կ'իմացուի, որովհետև ոմանք 'ի նոցանէ ոչ հաւատան թէ մահուանէ ետև հոգին անմահ կը մնայ՝ որով և քաւարանն ալ արքայութեան և դժոխոց պէս անօգուտ կը համարուի. իսկ այլք զանձնաւոր անհատս ուրիշ բան չհամարելով՝ բայց անհուն Էակին անցաւոր կերպարանքն կամ ժամանակաւոր անձնաւորութիւններն՝ այնոր յաջորդական արտայայտութեանց մէջ, գոյութեան լրումն և գերագոյն բարի կը սեպեն զդարձ հոգւոց 'ի նոյնութիւն բացարձակ՝ ընկղմելով տիեզերական կենաց մէջ: Իսկ բանաւորական և ոգևորական իմաստասիրաց՝ որ քաւարանն կ'ուրանան խելքս չհասնիր, որովհետև սոքա հոգւոյ անմահութիւնն կ'ընդունին, և ասեն թէ ապագայ գոյութեան մէջ պիտի կատարելագործուի: Մանաւանդ թէ իմ կարծեացս ալ խելքս չհասնիր, որովհետև ես ալ ուրիշ անգամ այս ճշմարտութեանս դէմ մաքառել եմ, որ հիմա ինձ շատ յայտնի և հարկաւոր ալ կ'երևի, դէթ իբրև բանախօսական հետեւանք դատաստանի՝ որ 'ի հանդերձեալ աշխարհն պիտի լինի, և պատժոց և վարձուց որ այն դատաստանէն յառաջ պիտի դան: Այսու նկատմամբ՝ ես բանաւորականաւ՝ այս վարդապետութիւնս յոյժ հաւանական կ'երևի ինձ, և կ'ուրախանամ որ յայսմ մասին կաթողիկէ Եկեղեցւոյ հետ համաձայն եմ:

Քերթողին ասացածն իրաւ է. Որպէս եղերան այսպէս և առաքինութեան զանազան ատիճանք են:

Ամեն օր որ այսչափ մարդիկ մեռանին՝ ոչ սուրբ են և ոչ եղեռնագործ. և անտարակոյս յոյժ շատերն երկու ծայրից մէջ կը դտուին մեռնելու ատեննին. ոչ բոլորովին մաքուր՝ որ կարասցեն ուղիղ յերկինս վերանալ՝ ուր անմաքուր ինչ չկարէ մտանել, և ոչ կարի դարշ որ դժոխոց արժանի լիցին՝ ուստի ոչ ոք յետս դառնայ: Կամ թէ իմաստասիրաբար խօսելով՝ հոգւոց վերջին վախճան իրենց կատարելութիւնն լինելով որ գերագոյն բարւոյն հետ ամբողջական միութեամբն կը կատարուի, շատերն նաև լաւագոյնքն անգամ 'ի նոցանէ՝ այնպիսի վիճակի մէջ դըտանին՝ որ այս աշխարհէս ելնելէն ետև՝ անմիջապէս այն միութեան չեն կարող հասանել, և հետևապէս պէտս ունին վերջին մաքրութեան՝ առ 'ի սրբիլ յաղտէն որ անջատէ զնոսա 'ի գերագոյն բարւոյն, և յարատոց որովք տակաւին արատաւորեալ են, կրելով քաւութիւն իմն փոքր 'ի շատէ երկար վասն յանցանաց անցելոց:

Դարձեալ նոքա որ այս աշխարհիս մէջ հեշտութեան և անօրէնութեան մէջ ապրեցան՝ առանց իրենց հոգւոյն զարգացմանն և վախճանին միտ դնելու, և իրենց խղճին թելադրութեանց հակառակ՝ կրից բռնութեանն գերի լինելով, և աստուածային և մարդկային օրէնքէն չպատկառելով՝ այն հեշտութիւններն կատարեցին, կարելի է թէ սոքա ևս օր գայ որ զղջան՝ դէթ իրենց մեռնելու ժամանակ. և գերապանծ իմն ճգամբ կամ 'ի խայթից խղճի ստիպեալ՝ դառնան դէպ 'ի ճշմարտութիւնն զոր անարգեցին, և ուզեն գործած անիրաւութեանց փոխարինել, և այսպէս իրենց ազատ կամօքն և առաքինութեան թափով՝ կենդանի յարաբերութիւն ունել գերագոյն բարւոյն հետ. որ կրօնական բառով այս

բանս դառնալ կամ դարձի գալ ասի, և ճշտագոյն բացատրութիւն մի է, որովհետև մինչև այն ատեն վերադասած չարէն՝ կը դառնայ հոգին դէպ 'ի բարին՝ ճանաչելով զայն և ընդդրկելով:

Արդ այս կրօնից կամ իմաստասիրութեան դարձի եկողներն՝ ինչպէս որ կ'ուզես համարէ, մահուանէ ետև ինչ լինին: Յայտնի է որ անմիջապէս բացարձակ բարւոյն մաքրութեան մէջ չեն կարող մտանել. վասն զի որչափ ալ սրտերնին փափաք զգացին՝ որով և կամքն ալ 'ի չարէն 'ի բաց քեցեցաւ, սակայն տակաւին չարին աղտեղութիւնն և սպիներն վրանին է. ապա ուրեմն մաքրութեան և քաւութեան պէտք ունին: Այս մաքրութեան և քաւութեան տեղն Եկեղեցին Քաւարան կը կոչէ որ յոյժ յարմարագոյն անուն է իրեն: Պիւթագոր և Պլատոն ալ նոյն կարծիքն ունեցան. վասն զի հանդերձեալ կենաց և ուրիշ աշխարհի մի մէջ հոգւոց վարձատրութեան հաւատոյն՝ անմիջական և հարկաւոր հետևութիւնն է. միայն թէ նոքա այս բանս իրականացուցին առասպելաբանութեամբ և փոքր 'ի շատէ զանազան հոգեփոխութեան ենթադրութիւններով. ոմանք զհոգիս Ոլիմպոսի ամեն իրաւունքն ժառանգելէն յառաջ՝ երկնային զինուորութեանց դասակարգութիւններէն անցուցին՝ իբրև ոգիք կամ կիսաստուածք. իսկ այլք գոյութեան զանազան ձևեր տուին նոցա՝ իրենց արդեանց և ապարդեանց համեմատ՝ որպէս վարձատրութիւն կամ պատիժ: Նոյն իսկ մեր օրերն ալ կը դտուին ոմանք որք կ'ընդունին թէ հոգիք յանսահմանս յառաջադիմութիւն մի պիտի առնեն[1]. սոքա առջի յիշած իմաստասիրաց դասուն ետ մնացողներն են՝ քսան դարերէ ետև մեզ հասած յե-

1 Կարծեմ Ֆիկիէի համար է այս խօսքս. Le lendemain de la mort ասացեալ գրոց մէջ: Ծն. Բրգմն:

տամնացներ՝ որ այս աշխարհէս ելած գնացած հոգիներուն ճամբորդութիւններ առնել կուտան յաշխարհաց յաշխարհս և 'ի պարունակաց 'ի պարունակս անցնելով, որպէս զի իրենց էութիւնն երթալով կատարելագործուի, և անհուն կատարելութեան մերձենան առանց կարելոյ բնաւ ժամանել առ այն:

Այս ամենքս մտացածին ունայն կարծիք են և քաջալերութիւն մի ոչ տան մարդուս: Ես ալ միշտ հարկաւոր ճանչցած եմ որ ապագայ մաքրութիւն մի պէտք է այն հոգւոց համար որ այս աշխարհէս կ'ելնեն՝ բարւոյ ճշմարտի և գեղեցկի փափաքով՝ առանց կատարելապէս այնոց հետ միացած լինելու. և յայտնի երևի ինձ թէ պէտք է որ ուրիշ տեղ մի քաւեն այն չարեաց մնացորդն զոր գործեցին յաշխարհի թէ յանձինս և թէ յօտարս: Բայց այս նիւթոյս վրայ դրական բան մի չգիտելուս, և քերթողաց բանդագուշանքն և հոգեփոխից ենթադրութիւններն ալ ընդունել չուզելուս՝ բաւական համարէի վերացեալ և հանրական կերպով սոյն ճշմարտութիւնս հաստելու, առանց մանրամասն պարագայիցն իջնելու՝ որոց վրայ տեղեկութիւն չունէի:

Այս խնդրոյս մէջ Եկեղեցին քան զիմաստասիրութիւնն աւելի յառաջադէմ է, և իւր ուսուցածն լաւ մի քննելով՝ թէ և 'ի յայտնութենէ առած կը սեպէ, կը տեսնեմ որ տատամսելու պատճառ մի չունիմ զայն ընդունելու. որովհետև իւր քաւարանի վրայօք տուած վարդապետութիւնն շատ պայծառ որոշ և խորին է՝ զոր իմ խելքս մինչև ցայսօր 'ի զուր ուրիշ տեղուանք բնառած էր:

Ընդ մէջ երկնից և դժոխոց՝ ասէ Եկեղեցին, տեղ մի կայ ուր կ'երթան այն հոգիներն որ իրենց մաքրութիւնն և քաւութիւնն աւարտած չեն, և հոն պիտի մնան մինչև որ աստուածային արդարութեան բա-

ւարարեն, և հուրն մաքրողական ջնջէ նոցա մինչև վերջին արատն: Բայց դատաստանէ անցած լինելուն համար՝ ապահով են որ պատիժնին աւարտելէն ետև յերկինս պիտի մտնեն, որ իրենց մեծ զօրութիւն կուտայ քաշած տանջանացն համբերելու, որ ժամանակաւ պիտի վերջանայ. և թէպէտ դեռ զուրկ են Աստուծոյ տեսութենէն՝ որ ամենէն մեծ տանջանքն է, սակայն իրենց փրկութեան վրայ ապահով լինելով՝ դժոխոց մէջ եղածի պէս ոչ չարչարուին. այլ յարատև զԱստուած կ'օրհնեն և կը սիրեն, և իրենց տխրագին կացութեան մէջ զնա յօգնութիւն կը կոչեն՝ նորա գթութեան վրայ յոյսերնին գնելով՝ որ կարող է կարճեցնել և մեղմել իրենց պատուհասն: Եւ որովհետև իրենց երկրաւոր փորձին ժամանակն վերջացած է՝ արդիւնաւոր գործ մի չեն կարող առնել, և միայն համակամութեամբ իրենց տանջանացն և համբերութեամբ սպասելով՝ աստուածային արդարութեանն կը բաւարարեն:

Սակայն այն որ իրենք չեն կարող՝ ուրիշներն իրենց համար կարող են առնել. դեռ կը յիշեմ ինչ որ ասէր այս նիւթոյս վրայ այն պատուական քահանայն որում խորհուրդ կը հարցանէի՝ հանգերձեալ աշխարհի ոգւոց հետ հաղորդակցութիւն առնելու վրայօք. ինքն կը ցուցանէր ինձ որ Եկեղեցին մի լինելուն պատճառաւ, և Քրիստոսի մարմնոյն ամեն անդամոց մէջ պարտակցութիւն լինելուն համար՝ երկրիս վրայ եղած կենդանի հաւատացեալք կարէին մեղմել և կարճեցնել քաւարանի հոգւոց տանջանքն: — Այս բանս՝ ինձ կ'երևի թէ քաւարանի վարդապետութեան ամենէն սրտաճմլիկ և մխիթարական հետևանքն ու արդիւնքն է՝ որ իրական և պաղաւէտ հաղորդակցութիւն մի կը հաստատէ 'ի մէջ մեռելոց և կենդանեաց. այնպէս որ թէ և ժամանակաւոր կերպով իրարմէ հեռացած են՝ սակայն

սիրով երարու հետ կապեալ լինելուն՝ կենդանիք կարեն իրենց զօրաւոր օգնութիւնն համակրութիւնն ու սէրն ցուցանել մեռելոց: Զեմք կարող ուրանալ որ այսպէս հաւատան երկրիս վրայ եղած կենդանեաց ալ մեծ մխիթարութիւն է, որովհետև մահուամբ բաժնուած սիրելեաց հետ ալ միայեալ կը մնան, և նոցա երջանկութեան և փրկութեան ալ ձեռնտու և գործակից լինին՝ անդր քան զդերեզման և յաւիտենականութեան համար:

Իսկ մեք իմաստասէրքս ինչ կը մտածեմք և ինչ կը գործեմք մեռելոց համար: Որովհետև անմահութեան հոգւոյ և հանգերձեալ կենաց կը հաւատամք՝ պէտք է յուսամք զնոսա օր մի տեսանելոյս. բայց ուր երբ և ինչպես. այսոր վրայ իմաստասիրութիւնն ապահով կերպով բան մի չէ կարող ասել: Մահն մեր բարեկամներէն մին առած տարածին պէս՝ այլոց նման մեք ալ կը տրտմիմք, և ուրիշ կերպով չեմք կարող մեր տրտմութիւնն ցուցանել՝ բայց եթէ արտասուօք ցաւովք և գոլութեամբք, որ յիրաւի մեր սիրոյն բնական նշաններն են՝ բայց նոցա օգուտ մի չունին: Զեռքերնիս եհածին չափ վաստաւորապէս կը թաղեմք, իրենց գագաղաց վրայ գամբանական՝ ներ կը խօսիմք՝ իրենց անցած կենաց վրայ ձառերով, իսկ ապագային վրայ բան մի ոչ ասեմք, և հողն վրանին ծածկելէն ետև՝ գերեզմանին վրայ շիրիմներ կը կանգնեմք՝ իրենց պատուանուններն և գործերն և մեր ցաւերն արձանագրելով: Անտարակոյս շատ լաւ բան է ննջեցեալներն պատուել և նոցա յիշատակն երկրիս վրայ յաւերժացնել. բայց լմնա երևի թէ այլ լաւագոյն է՝ սիրով հետևիլ նոցա անդր քան զշիրիմարձան, և ջանալ մխիթարել զնոսա և երջանկացնել այն նոր կենաց մէջ ուր որ մտել են մահուամբ: Այն բանս կաթողիկէ հաւատքն կը համարի թէ առնէ, և միանգամայն յուսով և սիրով երկնային մխիթարու-

թիւնն կ'ընդունէ տակաւին երկրիս վրայ մնացած ազգականաց վրայ. և հարկ է խոստովանիմք որ ինքն միայն կ'ընծեռէ զնոսա ազդու կերպով սիրելոց անդր ևս քան զսահմանս աշխարհիս:

Կաթողիկէ հաւատքն ասեմ, վասն զի բողոքականութիւնն քաւարանն ուրանալով՝ իր հետևողներն այս մխիթարութենէս ալ զրկեց՝ որպէս և յայլոց բաղմաց: Եւ ինչպէս ուրիշ նիւթոց մէջ՝ յայսմ ևս ոգին՝ ի գրոյն ազատելու պատրուակաւ՝ երկուսն ալ սպաննեց. և քրիստոնէութիւնն ոգեկանացնելու ջանալով՝ բանաւորականութեան գարձուց, և այլ իմաստասիրութենէ կարգն անցուց զայն, մանաւանդ թէ խոնարհ քան զնոսա, որովհետև յայտնապէս հակաճօտութեան մէջ է այն սկզբանց հետ՝ որոց վրայ հիմնած կը համարի զինքն: Զգեբնականն՝ ի գործնականն ինչպէս կարէ մերժել մարդ՝ երբ սկզբամբ զայն կ'ընդունի Աստուածաշնչի յայտնեալ խօսից մէջ: Եկեղեցւոյ և իմաստասիրութեան մէջ տեղն՝ բողոքականաց բանած գրից խելքս չհասնիր, որ ոչ միայն և ոչ միւսոյն յարելով՝ յերկոցունց ևս մերժուած են: Բայց հիմա ժամանակն չէ նոցա գատաստանն տեսնելու. մանաւանդ որ ես ալ այնչափ կաթողիկեայ չեմ որ նոցա գէմ գաս վարեմ, թէ և միշտ խորշած եմ այս երկակենցաղ կամ երկուս ոտս կաղացող անկինք և անկենդան վարգապետութենէն:

Միայն անցողաբար ասելով՝ կարծեմ թէ այս դերկայ խնդրոյս մէջ՝ շատ տագնապելու են իրենք կամ գոնէ իրենց հովիւներն՝ մեռելոց վրայ պաշտօնին կատարած տեսն. և յամառութեամբ ուրացած քաւարանին պակսութիւնն շատ լաւ իմանալու են: Վասն զի ինչ պիտի առնեն իրենց մեռելներն, որովհետև պատարագ չունին որ նոցա օգնութեան համար մատուցանեն, երկնաւոր սրբոց բարեխօսու-

թիւնն ոչ ընդունին, ննջեցելոց համար երկրիս վրայ
եղած աղօթից զօրութեան ալ ոչ հաւատան, նաև
ջնջել և վերցուցել են այն ամեն գերապանծ արա-
րողութիւնները զորս կաթողիկէ Եկեղեցին կը կա-
տարէ թաղման ժամանակ, և այսոց ամենուն տեղն
ուրիշ բան չունին՝ բայց եթէ դամբանական ճառ մի
որոյ կարևոր նիւթն է մեռելոյն կեանքն մահն և
ապագայն: Արդեօք իրենց ամեն կրօնակիցներն 'ի
շնորհս կը մեռնին, կամ այնչափ կատարեալ առա-
քինութեամբ որ շիտակ յերկինս մտնեն: Զկան ար-
դեօք իրենց մէջ ալ վատթար քրիստոնեայներ որ
անօրէնութեանց մէջ մեռնին, և ակար հոգիներ՝ ո-
րոց վրայ կրքերն տիրած լինին մինչև վերջի ատեն,
կամ յաւիտենական իրաց վրայ թմրած անխտրու-
թեան մէջ մեռած լիցին. կամ վերջապէս այնպիսի
հոգիներ՝ որ ենթադրելով ալ թէ վերջապէս բարի
կամք մի ունեցած լիցին դարձի գալու, սակայն մե-
ղաց արատներով աշխարհէս ելնեն՝ իրենց խղճին ա-
մեն պարտքերն չվճարած, և իրենց ամեն մեղքերն
չքաւած: Ուրեմն ուր կը դնեն այս հոգիներս, և
նոցա ապագային համար ինչ կարեն ասել՝ իրենց
ազգականներն ու բարեկամներն մխիթարելու հա-
մար: Արդեօք զնոսա շիտակ յերկինս կը զրկեն սըր-
բոց պէս, և երկնային փառաց մասնակից կը համա-
րին այն մարդիկն՝ որ միայն իրենց շահն և հաճոյքն
մտածելով աստուածային և մարդկային օրինաց
դէմ՝ նոյն իսկ աշխարհիս մէջ համարում մի չեն
ստացած, մանաւանդ թէ գայթակղեցուցել են ի-
րենց անբարի վարքովն, և թերևս սարսափեցուցել
են իրենց գործած ոճիրներովն: Եթէ այսպէս է՝
այս բանս ինձ չափազանց երևի, և կարծեմ թէ
այնպիսի հոգիներն ճանչցողներուն կարծիքն ալ՝ այս
իրենց տրուած երանութեանս ոչ հաւատան:

Եւ սակայն զիրենք արքայութիւն զրկելէն զատ

ուրիշ ճար ոչ գտանեմք, եթէ Աստուծոյ արդարու-
թիւնն իր գթութեան հետ հաշտեցնելու և միացնե-
լու համար քաւարան ասացեալ տեղն չկայ: Վասն
զի եթէ արքայութիւն ոչ երթան՝ հարկ է որ դժոխք
երթան, որ մեռելոյն դերդաստանին պատիւ չառ-
նելէն զատ՝ հովուին գթասիրութեանն ալ ոչ վայ-
լէ՝ շակէ շիտակ զիրենք հոն զրկելու՝ թէ և արժա-
նաւոր ալ սեպէ: Ուստի բանախօսութիւնն ու պատ-
շաճն ալ կը ստիպէ զնոսա՝ զամենքն ալ 'ի ծոց Ա-
ստուծոյ ուղարկել, կ'ուզեն չար լինին կ'ուզեն բարի,
և որչափ ալ իրենց կեանքն արատաւոր և մահերնին
ամբարիշտ եղած լիցի: Հարկ է խոստովանիմ՝ որ
որչափ ալ իմաստասէր եմ, և իմ նմանեացս բարոյա-
կան խեղճութեանց վրայ ներողամիտ՝ որոյ ցաւալի
փորձն ես ալ յանձին զգամ, սակայն կեանքեր ու
մահեր կան որ զիս կը սարսափեցնեն, և զորս չեմ
կարող անմեղադիր առնել թող թէ արդարացնել:

Ապա քաւարանի գոյութիւնն իմաստասիրական
նկատմամբ ալ ինձ հարկաւոր կ'երևի: Վասն զի 'ի
միոյ կողմանէ անհրաժեշտ հետևանք է մարդկանց
տկարութեանն, և 'ի միւս կողմանէ Աստուծոյ ար-
դարութեանն ու գթութեան. և շնորհս մատուցա-
նեմ նախախնամութեան որ այս հնարս սահմանել է
և այս յոյսս տուել է մահկանացուաց շատերուն
համար, որ այս աշխարհէս ելած ատեննին պարտիւք
և ախտիւք ծանրաբեռնեալ՝ երկնային մաքրութեան
մասնակից լինելու վիճակի մէջ ոչ գտանին, և սա-
կայն կարողութիւն և վստահութիւն ունին օր մի
հոն հասնելու՝ իրենց քաւութիւնն ու մաքրութիւնն
աւարտելով: Բարեբաղդ կը համարիմ զիս յայսմ
կարևոր մասին ևս Եկեղեցւոյ հետ համաձայն գը-
տուելուս համար՝ առանց մտացս և սրտիս բռնադա-
տութիւն մի առնելու:

Յարութիւն մարմնոց

20 Յուլիս:

Դատաստանն, արքայութիւնն, դժոխքն և քաւարանն ամեն բանաւոր կրօնից մէջ ալ ինձ հարկաւոր կ'երևին. դատաստանն որպէս ուղղութիւն արդարութեան որ աշխարհիս մէջ բռնաբարուած է, արքայութիւնն որպէս վարձատրութիւն բարեաց, դժոխքն որպէս պատուհաս չարաց, և քաւարանն որպէս լրումն մաքրագործութեան հոգւոց: Այս ամեն բանս այնչափ հաւանելի երևի յիմաստասիրութեան՝ որպէս և 'ի կրօնի, և զանազանութիւնն միայն միջոցներուն և կերպերուն մէջն է: — Բայց ինձ անհասկանալի երևցածն՝ որ հիմա մտացս ալ հակառակ կ'ելնէ մեռելոց վերջնական յարութիւնն է՝ առ 'ի յանդիման լինել վերջին դատաստանի, թէ և ուրիշ անգամ այսոր ալ սկիզբն ընդհանուր կերպով ընդունած եմ:

Եկեղեցւոյ գործածած յարութիւն բառն՝ իր վարդապետութիւնն կը ցուցանէ, այսինքն թէ ամեն մարդ նորէն պիտի առնու իւր սեպհական մարմինն իւր անձին բոլոր ամբողջութեամբն՝ երևելու համար դերագոյն դատաւորին առջև: Վասն զի եթէ հոգին միայն ներկայանար դերագոյն ատենին՝ յարութեան պէտք ոչ լինէր, վասն զի արդէն հոգին անմահ է: Ապա ուրեմն յարութիւնն առնողն մարմինն է՝ դարձեալ միանալով ընդ հոգւոյն՝ զոր յառաջ ունէր, և որոյ գործիքն եղած էր, մանաւանդ թէ շատ անգամ տէրն՝ երկրաւոր կենաց ատենն: Հաւատոյ այս մասն՝ որ առաքելոց հանդանակին վերջին խօսքերովն հաստատուած է, և այնոր հետ միացեալ պատժոց յա-

ւիտենականութեան վարդապետութիւնն՝ քան զամենայն ինչ աւելի կը գայթակղեցնեն զաշխարհականս: Ես ալ նոյնպէս գայթակղած էի այս նիւթոյս վրայ, և այնոր համար կաթողիկէ հաւատոց այս յօդուածս ծաղրածութեան կը տանէի՝ անտեղի համարելով, երբ երիտասարդութեան խակակուտ միտքըս որ ամեն բան կտրել նետել կ'ուզէր՝ իրեն դէմ ելած արգելից կը զայրանայր, և ինչ որ ոչ հասկանար՝ անտեղութեան տեղ դնելով կը մերժէր:

Եւ այսօր իսկ՝ թէպէտ փորձն ու հասակ աւելի անձնապահ և զգուշաւոր արարին զիս, սակայն 'ի ներքուստ նոյն ընդդիմութիւնն կը կրեմ՝ թէպէտ և արտաքուստ զայն ոչ յայտնեմ որպէս երբեմն: Միայն հիմա իմ ներհակութիւնս տարակուսի փոխուած է, և երբ իմ դասախօսութեանցս մէջ կամ ուրիշ տեղ այս խնդիրս առջիս կ'ելնէ՝ խոհեմութիւն ոչ համարիմ զայն ուրանալն, բայց յայտնի կը տեսնուի՝ որ այսոր հաւատացողներէն չեմ: Աւաղ, տես թէ ո՛ւր հասած է մեր խեղճութիւնն՝ կրօնից հետ անհրաժեշտ յարաբերութիւն ունելով հանդերձ: Շատերնիս ոչ հաւատամք, սակայն բոլորնիս եղած երիտասարդներն չգայթակղեցնելու համար՝ յայտնի չեմք կարող ասել: Հարկ է խոստովանիմ որ այս բռնած դիրքերնիս՝ մեր խղճմտանաց առջև զմեզ ոչ արդարացնէ. որովհետև մեր զգածման դէմ խօսել կուտայ մեզ, որով դրեթէ այն բողոքական հովիւներուն կը նմանիմք՝ որ քրիստոնէական բեմն ակադեմական կաճառի կը դարձնեն, Աւետարանն կը քարոզեն՝ բանաւորականութեամբ մեկնաբանելով զայն, և Յիսուսի Քրիստոսի անունն կուտան՝ նորա աստուածութիւնն տարակուսի տակ ձգելով: Մեք ալ քրիստոնեայ և կաթողիկեայ կը համարիմք՝ որ 'ի ներքուստ և 'ի խղճէ ամենևին չեմք. նաև մտքով համոզեալ եմք որ հանճարեղ և անկեղծ իմաստասէր

ուտելէն և մարսելէն ետև՝ ինքն ալ վերջապէս այնոց կերակուր կը դառնայ՝ գէթ գերեզմանին մէջ։ Ապա ինչպէս պիտի լինի այս հիւլէից բաժանումն և մասանց զատումն, որ մարսողութեամբ այնչափ արարածոց բաժնուած են, որով և իւրաքանչիւրն իր նախկին մարմնոյն գալոց համար՝ հարկ պիտի լինի որ եաքէն յաւելեալ խառնուածներն դուրս ձգեն։ Ա՛լ էժմ կարող բացատրել այն ամէն գործողութիւններն որ հարկաւոր են այս բանիս, որովհետև ոչ խելքն և ոչ երևակայութիւնն անգամ կարեն այս բաներս ըմբռնել՝ որ իրաւի անչափ վիհ մի է։

Եւ այս ամենքս ինչ բանի համար։ մի թէ ոչ ինչ բանի համար չատ աղաղակ և չիմթ հանել չէ՞։ վասն զի ինչ ալ լինի՝ վերջապէս հոգին է՝ որ զմարմինն գործեաց պէս բանեցուցել է, և ինքն պէտք է որ պատասխան տայ ինչ որ նորա ձեռօքն գործել է։ Նիւթեղէն հանգ ինչպէս բոյսք այլ և անասունք բանականութիւն և ազատութիւն չունենալնուն համար՝ պատասխանատուութիւն ալ չունին, ապա մարդկային մարմինն ինչո՞ւ ունելու է։ Եւ թէ որ անասուածային ամենակարողութիւնն հրաշք մի կ՚ուզէ առնել և ամբողջ մարմինն կենդանացնելով՝ իւրաքանչիւր հոգւոց յարմարցնել, աւելի պարզ և գիւրին ո՞չ լինէր՝ բոլոր այս մարմնեղէն փուութիւնն կրակն նետէր, և միայն անմահ հոգւոյն միտ դնէր, որով վարձքն կամ պատիժն ալ ամենևին ոչ նուաղէր։ և վարձատրուած մարդուն առաւելութիւն մ՚ալ լինէր, որովհետև հիմակուան պէս ի հոգւոյ և ի մարմնոյ բաղկացու բնութիւն մի ունելու տեղ՝ պարզ հոգեվինայ առիճանն կը բարձրանար՝ նման հրեշտակաց և աւելի մեծ Աստուծոյ։ Թէպէտ յիւրաքանչիւրն նոյն մարդն ոչ լինէր՝ այլ մարդկութիւն ոգիացեալ այլակերպեալ և փառաւորեալ, սահմանագործութեան գաստակարգութեան մէջ առիճան

մի՝ առանց տխմար լինելոյ՝ հաւատացեալ չիարէ լինել, որպէս ասէր Բասքալ։ բայց բարձրաձայն յայտնել չհամարձակելով մեր անհաւատութիւնն՝ մեր աշակերտաց մաքերնիս կը հասկացանեմք, որ նոցա հաւատոց ալ թևթևնալուն և ջնջուելուն պատճառ լինի։ Տարօրինակ և կեղակարծ գիրք մի է այս՝ որ ինձ այնչափ ծանր կուգայ՝ որ այս կերպով կամ այն կերպով կ՚ուզեմ բոլորովին մէջէն հանել աղաղակել։

Ոչ միայն մարմնոյ յարութիւն առնուլն ինձ անկարելի կ՚երևի, այլ և այնոր կարևորութեան վրայ ալ կը տարակուսիմ։ — Մաքերնիս բերեմք եթէ կարեմք այն անթիւ և անհամար մարդկին՝ որ ի լման գարուց և ժամանակաց՝ ամենքն ի միասին իրենց մարմինն նորէն պիտի ղգենուն՝ երբ մահագոյժ փողն հնչէ՝ եթէ իրաւ է, և բոլորն ալ Աստուծոյ դատաստանին առջև կոչէ։ Երկինքն եղած հոգիք վար պիտի իջնեն, դժոխքն եղողներն ալ դուրս պիտի հանեն իրենց երկրաւոր մարմինն բնաւորելու, և քաւարանի ժամանակաւոր պարտաւորեալներն ալ իրենց մեղաւոր մարմինն պիտի առնուն։ Դիականց ամեն հիւլէներն որ փուելով բաժնուած են և հողի հետ խառնուած՝ պիտի միանան՝ ինչպէս էին իրենց կենդանութեան ժամանակ՝ նորէն առջի կազմուածութիւնն յօրինելու համար։ Եւ հիւլէ ասելով չանցնիմք։ որովհետև գործարանաւոր մարմինք ի ծննդենէ մինչև ցմահ յաջորդաբար միշտ նորոգուելու հետ են՝ չարժամբ և անդադար ենթակայն անդադար փոփոխութիւն կրելուն պատճառաւ՝ որով ի միոյ կողմանէ կը մաշի կը կորնչի, և ի միւս կողմանէ կը նորոգուի։ Բայց ասոնք նիւթոյ մասունքն յարատև իրարու մէջ կը խառնուին կռնճմանին և թնճուկ մի կը գառնան, որովհետև աշխարհիս վրայի էակներն իրարմով կը սնանին, և մարդս ամեն բան

մի վեր բարձրանալով՝ այսու փոխակերպութեամբ աւելի պայծառ վարձ մի կ՚առնուր իւր առաքինութեան։ Ընդհակառակն նոյն պատճառաւ անարգեալ ներն ալ աւելի կը մռայլային ապստամբ հրեշտակաց կամ գիւաց, նոցա բնութեանն մանակից լինելով՝ ինչպէս որ ապստամբութեանն եղել էին, և սատանայներու նմանելով պատիժին ալ աւելի կը ծանրանար։ Մի թէ չէ՞մք կարող այս կարծիքս պաշտպանել՝ որ միւսոյն չափ հաւանական է, երկուսն ալ ենթադրութիւն լինելուն. և այն առեն սատուածային կարողութեան մեծ արտայայտութեանն ալ կարօտ ոչ լինէաք, և միանգամայն այս դժուարիմաց մեքենաւորութենէն ալ կ՚ազատէինք, առանց յաւիտենական արդարութեան արդեանց նուազութիւն մի լինելու՝ վարձուց և պատժոց վերջնական բաշխման մէջ։ Այս գրութիւնս ուրիշ օգուտ մի ալ ունէր՝ որ մարգկային մաց հակառակ ոչ երանէր՝ որ խռոված կը սասանի մարմնոյ յարութիւնն և պատժոց յաւիտենականութիւնն լսելով, և կը դիւրացնէր նոցա գարձն ՚ի վարդապետութիւն Եկեղեցւոյ։

Սակայն իբրև իմաստասէր՝ ես ալ այս ենթադրութիւնս չեմ կարող ընդունիլ. վասն զի մարդկային բնութիւնն փոխոխել ծանր բան է, մանաւանդ երբ դատուելու վրայ է խօսքն. որովհետև դատաստանի արդարութիւնն՝ գործուած մեղաց և արուած պատժոյն համեմատութեան վրայ հաստատուած լինելով՝ առաջին պայմանն է նոյնութիւն անձին յանցաւորի և անձին պատուհասելոյ։ Իսկ արդ քրիստոնէութեան վարդապետութեան պէս ես ալ կ՚ընդունիմ որ մարդ պարզ ոգի չէ՝ այլ հոգի միացեալ ընդ մարմնոյ ՚ի միում անձին բաղկացեալ յերկուց սրինչ և լծացուցիչ մասանց, ուստի արդարապէս վարձատրուելու և պատժուելու համար՝ հարկ է որ գե-

րագոյն առենին ներկայանայ ամբողջութեամբ անձին իւրոյ՝ ամենևին նոյն նոյնութեամբ՝ որպէս էր մեղքն գործած ժամանակ, որովհետև գործածին համեմատ պիտի դատուի. ուստի իմաստասիրաբար մտածելով այս բանախօսական և բարոյական ձշմարտութեանս ոչ կարէմ հակառակիլ. և նորէն առջի երկմտութեանցս մէջ անկանելով մարմնոյ յարութեան վրայօք՝ ելի աղագս ոչ դատանեմ, և ոչ գիտեմ ինչպէս մէջէն ելնեմ։ Ուստի խելքս տագնապած և ելնելու ճամբայ մի չգտնելով՝ միաքս դրել եմ նորէն իմ սատուածաբանութեան վարժապետիս դիմելու, որ ինձ պէս իմաստասէր է՝ թէ և արտաքուստ ոչ յուշցանէ, և իբր յայտնութիւն սասցեալ վարդապետութեան մէջ այնպիսի գաղափարներ գտանէ որ միաքս անգամ չէր անցած. և այնպէս վարպետ է մարգուս միաքն իր վարդապետութեանց համղելոյ՝ որ թէ և կատարեալպէս ալ չհասկանայ և չբացատրէ, սակայն գոնէ հանգիստութեանց ձեռօք կարէ ըմբռնել գնոսին։ Ինքն իմ գիտցածէս աւելի և պարզ կերպով պիտի սսէ թէ Եկեղեցւոյ ձիշդ վարդապետութիւնն ուրն է այս նիւթոյս վրայ. և սեսնեմք թէ արդեօք սակաւ մի մեղմացնելու հնարք մի չկա՞յ այս յարութեան վարդապետութիւնն, և մտաց ընդունելի առնելու։

Յարութիւն մարմնոյ (շարայարութիւն)

22 Յուլիս։

Երէկ իմ քահանայ սեսլ և երկու ժամ խօսակցեցանք՝ որոյ համառօտութիւնն հոս կը գրեմ խորհուրդ հարցանելու համար հարկաւոր յիշատակարանի մի պէս։ Վերջն անգամ սեսաւորութեանս պէս

զիս սիրով ընկալաւ, և ներս մտածիս պէս քմծիծաղով մի ասաց. « Կ'երևի թէ դարձեալ մեծ դժուարութեան մի հանդիպել էք՝ որ աստուածաբանութեան կը դիմէք՝ որ ժամանակիս իմաստասիրութեան հետ միշտ խաղաղութեամբ չբնակիր, բայց կը յուսամ որ մեք՝ հասարակաց կարծիքն սուտ պիտի հանեմք՝ զնոսա իրարու հետ հաշտեցնելով՝ որ ինձ ալ հնարաւոր կ'երևի ինչ ինչ նիւթերու մէջ: Բայց որ ինչ և է ձեր աստուածաբանն պատրաստ է ձեր խնդրած լուսաբանութիւններն կամ բացատրութիւններն տալու հաճութեամբ որչափ որ կարէ » :

« Յիրաւի, վարդապետ հայր, ես ալ այս մտքովս կուգամ՝ ձեր նախընթաց բարեհաճութենէն սիրտ առած. վասն զի պատժոց յաւիտենականութեան սարսափելի դազանէն ետև՝ զոր իմ ձեռացս ներքև ընտելացուցիք, և ուստի այժմ առջինին չափ ոչ երկնչիմ, հիմա ճամբուս վրայ ուրիշ հրէշի մ'ալ հանդիպեցայ՝ որ իմ ետևէս անկել զիս կը հալածէ, և ոչ գիտեմ ինչպէս ձեռքէն ազատիմ. ասել կուզեմ ձեր՝ մարմնոյ յարութեան վարդապետութիւնն 'ի վախճան դարուց՝ առ 'ի յանդիման լինել վերջին դատաստանի: Պարապ տեղ ամեն դին կը դարձն եմ կը նայիմ՝ կը տեսնեմ որ պիտի չկարեմ զայն ընդունիլ. վասն զի խռոված մտացս անկարելի երևի, և երևակայութիւնս ալ կ'ըմբոստանայ զայն ընդունելու. և բաց աստի հարկաւոր ալ ոչ տեսանեմ՝ ինչպէս որ այժմ պիտի ցուցանեմ: Բայց որովհետև ուրուականաց և հոզմաղացից հետ կռուըտիլ ոչ ախորժիմ՝ նախ ներեցէք ինձ որ հարցանեմ թէ արդեօք յարութիւն մարմնոյ ասացեալն ըստ գրոյն իմանալու է՝ թէ այս բացատրութեան տակ՝ որ գիտեմ թէ առաքելոց հանդանակին մէջէն է, ծածկեալ իմաստ կամ առակ մի կայ՝ բացարձակ ճշմարտութիւնն ռամկին հասկացնելու համար՝ որ առանց

այնոր չկարէ ըմբռնել, և թերևս աստուածաբանից և իմաստասիրաց համար աւելի խորին և լայն իմաստ մի կը բովանդակէ: Եթէ այսպէս է՝ կը խոստովանիմ որ իմ բանիս ալ կուգայ և կարեմք միաբանիլ » :

« Սիրեցեալ Տէր, ասաց ինձ հանդարտութեամբ, այս խօսքիս մէջ ոչ առակ կայ ոչ առասպել և ոչ անտեղութիւն՝ այլ պարզապէս 'ի վերջ ժամանակաց լինելու գործոյ մի յայտարարութիւն, այն օրն յորում տիեզերք պիտի նորոգուին, և ամենայն մարդիկ Աստուծոյ ատենին առջև պիտի ելնեն: Սուրբ Գրոց խօսքն յայտնի և դրական է այս կէտիս մէջ. և ես կարէի 'ի մէջ բերել զվկայութիւնս Յովբայ, Եսայեայ, Դանիէլի և նոյն ինքն Տեառն մերոյ և Պաւղոսի առաքելոյ. սակայն այժմ ոչ կամիմ Սուրբ Գրոց խօսքերովն և կոչողներով զձեզ ձանձրացնել, և կարէք իմ խօսիցս հաւատալ: Այսպէս լինելուն ամենէն լաւագոյն ապացոյցն այս է որ՝ մարմնոյ յարութեան խնդիրն առաքելոց հանդանակին մէջ հրատարակուած է, և Եկեղեցին հաւատոյ մասանց մէջ դրած է զայն. ապա ուրեմն փախուստ և դատաքննութիւն չվերցներ, և բողոքականաց մեղմեխանքն և իմաստասիրաց բացատրութիւններն զօրութիւն մի չունին գրոյն զօրութեան դէմ » :

« Յիրաւի շատ կը ցաւիմ, պատասխանեցի, որովհետև միտքս դրել էի կամակար Եկեղեցւոյ հետ այս նիւթոյս մէջ ալ համաձայնիլ՝ որպէս և յայլս բազումս. և այժմ տեսանեմ որ այս բանս անկարելի է: Եթէ հաւատոյ այս մասս ըստ գրոյն առնլու է՝ որ ինձ յոյժ անտեղի կ'երևի, պիտի չկարեմ զայն իւր ամեն հետևանօքն ընդունիլ » :

« Թերևս թերևս, ասաց քահանայն ժպտելով, մանաւանդ երբ ցուցանեմ ձեզ որ այս մասիս մէջ ամենևին անտեղութիւն չկայ, թէպէտ ես ալ համոզուած եմ որ մտաց զարմանալի և անհասանելի

կ'երևի: Վասն զի եթէ առանց նախապաշարման և անկեղծաբար ուղէք ինձ մտիկ առնել՝ ինչպէս որ ուրիշ անգամ փորձն առած եմ, կը յուսամ համոզել զձեզ թէ մարմնոց յարութիւնն կարելի է և կը ցուցուի բնութեան շատ գործերէն՝ որք անտարակոյս յարութեան չափ տարօրինակ չեն, որովհետև ամեն օր մեր աչաց առջև կը կատարուին, և մեր միտքն ալ կը ստիպուի զայնս ընդունելու՝ թէ և մեկնութիւն մի չկարասցէ տալ: Ապա ուրեմն գերբնական խորհուրդ մի մեկնելու համար բնական խորհըրդոց դիմեմք՝ որք թէ և նոյնպէս պայծառ չեն՝ սակայն անհերքելի են, որով իրաւունք ունենամք հարցանելու թէ արդեօք ո՛ր կողման հաւատք ընծայելն աւելի դժուար է, կամ թէ ասեմք թէ արդեօք խելքերնիս չհասնելուն համար՝ գերբնականն որ ուրանամք՝ պիտի չստիպուիմք բնութեան մէջ եղած գաղանիքն ալ ուրանալու, որովհետև սոքա ալ մեզ համար անբացատրելի են »:

Ես. — « Շատ հետաքրքրութեամբ մտիկ պիտի առնեմ ասացածներուդ, և ապահով եղէք առանց կողմնակցութեան և պարզմտութեամբ սրտի. որովհետև ուր որ դտուի ճշմարտութիւնն կը սիրեմ, և ձեր վրայ ալ վստահութիւն ունիմ »:

Քահանայն. — « Հաղար ութհարիւր տարիէ աւելի կայ՝ որ Պաւղոս առաքեալ Աթէնքի հրապարակին մէջ Աւետարանն քարոզած ատեն՝ ուր որ քաղաքացիք կը ժողովէին նոր լուրեր լսելու համար, բազմութիւնն իր տարօրինակ վարդապետութիւնն լսելով՝ զինքն սկսաւ ծաղրել, և սերմանաքաղ կոչել զինքն. ու երբ Արիոսպագոս տարին զինքն՝ որ իմաստնոց և իմաստասիրաց ժողովարանն էր, և հոն ալ սկսաւ Յիսուսի Քրիստոսի վրայ խօսիլ թէ ինչպէս մարդկանց փրկութեանն համար մեռել և յարութիւն առել էր՝ դարձեալ ամենքն սկսան խնտալ

ու ծիծաղիլ և արհամարհանօք ասէին. Բաւական է՝ ուրիշ անգամ մտիկ առնեմք »:

« Նոյն առաքեալն առ կորնթացիս իւր առաջին թուղթն գրած ժամանակ՝ անտարակոյս միտքն եկած է Արիոսպագին մէջ յարութեան դէմ բերուած առարկութիւններն, որովհետև նոյն թղթոյն ԺԵՐԴ գլխոյն մէջ ցուցանելէն ետև թէ Յիսուսի Քրիստոսի յարութիւնն մեր յարութեան երաշխաւորութիւնն է՝ ասէ. « Բայց թերևս ոք ինձ հարցանէ՝ թէ մեռելներն ինչպէս յարութիւն պիտի առնուն, և ինչ մարմնով պիտի գան »: Այս խօսքէս յայտնի կ'երևի, սիրելի, որ այն դարուն իմաստասէրքն ալ՝ հիմակուաններուն պէս տագնապեալ էին այս մարմնոյ յարութեան խնդրոյն վրայ: Ուստի ինձ ալ ամենէն լաւն այն կ'երևի որ ձեր հարցման պատասխան տամ Պաւղոս առաքելոյն ասացածովն՝ որ յարութիւնն ինչպէս պիտի լինի այն բացատրել չէ միտքն՝ այլ այնոր կարելութիւնն ցուցանել՝ 'ի բնական կարգէ առնուած հանգիտութեամբ մի, մեր հիմակուան մարմինն սերման մի նմանցնելով՝ յորմէ ժամանակաւ բոյս մի պիտի ելնէ իր ցօղունովն տերևներով ծաղկով ու սերմամբ: Ուստի՝ ասէ նա, թէ մարմինն որ 'ի սերմանէ անտի ելանէ՝ ոչ նոյն սերմն է՝ ինչ որ մեր աչաց կ'երևէր՝ այլ այն սերման մէջ եղած մարմինն. և ցանողն նոյն մարմինն չցաներ՝ այլ զսերմն որ ունի յինքեան զմարմինն զայն: Նոյնն ասելու է նաև այն մարմնոյն համար՝ որով յարութիւն պիտի առնումք »:

« Արդէն Յիսուս Քրիստոս ասացած էր. « Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ ». այսպէս ալ, ասէ Պաւղոս առաքեալ, մեր մարմինն պէտք է որ մեռնի՝ կենդանանալու համար. բայց Աստուած իւրաքանչիւր սերման իր սեպհական

մարմինն կուտայ՝ որպէս և կամի. վասն զի ամեն մարմին նոյն մարմինն չէ, հապա մարդոյ մարմինն ուրիշ է, անասնոյ մարմինն ուրիշ, թռչնոյ մարմինն ուրիշ է և ձկանց մարմինն ուրիշ: Երկնաւոր մարմիններ ալ կան, երկրաւոր մարմիններ ալ. արեւուն փառքն ուրիշ է, լուսնինն ուրիշ, աստղերունն ալ ուրիշ: Այսպէս է մեռելոց յարուցիչն ալ: Ապականութեամբ ցանուած մարմինն՝ առանց ապականութեան յարուցիչն պիտի առնու, անարգութեամբ սերմանուածն՝ փառաւք պիտի յառնէ, տկարութեամբ սերմանուածն՝ զօրութեամբ պիտի կենդանանայ, հնչաւոր մարմին սերմանուածն՝ ոգևոր մարմին պիտի դառնայ: Որովհետև, կը գոչէ առաքեալն, եթէ հնչաւոր մարմին կայ՝ ապա ոգևոր մարմին ալ կայ, ինչպէս որ գրուած է. Առաջին մարդն Ադամ եղև հոնչ կենդանի, և երկրորդ Ադամ՝ ի հոգի կենդանարար: Բայց չէ թէ առաջ հոգևորն՝ հապա հնչաւորն (սկսաւ) ու ետքը հոգևորն: Առաջին մարդն յերկրէ առնուած է՝ հողեղէն, որպէս նաև իւր զաւակներն. իսկ երկրորդն յերկնից Տէր է որպէս և իր զաւակներն: Եւ ինչպէս որ հողեղէնին կերպարանքն հագեր եմք՝ երկնաւորին կերպարանքն ալ պիտի հագնիմք. վասն զի մարմին և արիւն զօրքայութիւն երկնից ոչ ժառանգեն, և ոչ ալ ապականութիւնն զանապականութիւնն կը ժառանգէ ... Խորհուրդ մ'ալ ասեմ ձեզ. ամենքս ալ յարութիւն պիտի առնումք՝ բայց ամենքս ալ պիտի չփոխուինք. յանկարծակի յական թօթափել՝ վերջին փողին ատեն՝ վասն զի փող պիտի զարնուի, և մեռեալներն առանց ապականութեան պիտի յառնեն, և մեք ալ պիտի նորոգուինք: Վասն զի պէտք է որ այս ապականացու մարմինս՝ անապականութիւն զգեսնու, և մահկանացու մարմինս՝ անմահութիւն զգեսնու. և այն ատեն պիտի կատարուի Գրոց այն խօսքն՝ Ընկլաւ մահ ի

յաղթութիւն: Ո՞ւր է մահ յաղթութիւն քոյ, ո՞ւր են դժոխք խայթոցք քոյ: Ուստի ապացուք գոհութիւն Աստուծոյ որ տայ մեզ զյաղթութիւն ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Նա. — «Ո՛վ Տէր վարդապետ, գոչեցի բոլորովին յանձնէս գուրս ելած, ինչ դերասանած խօսքեր են սոքա, և ինչպիսի նոր հորիզոն մի կը բանան իմ յափշտակուած ոգւոյս առջև: Այսպիսի լեզու մի բնաւ լսուած չէ՝ թէ գաղափարաց վսեմութեան և թէ կերպին պայծառութեան կողմանէ. նոյն իսկ Պլատոնի մէջ բան մի կարդացած չեմ՝ որ այս խորութեանս և պայծառութեանս հասնի: Եւ զնս աւելի ցնծագին այն լսաւոր հանգիստութիւնն կամ նմանութիւնն է որ իր բնական լսաւորին՝ բնութենէ վեր իր մի կը լսաւորէ, այնպէս որ երևելի և տեսանելի իրք՝ զաներևոյթս և զանտեսանելիս կը յայտնեն, և մեր տկար մտաց կ'օգնեն զնոսա հասկանալուս համար: Այս բանս ինձ նոր խոստովանութիւն մի նշմարել կուտայ՝ որոյ նախազգացմունքն միշտ ունեցած էի, և որոյ շաւիղն պիտի լինի՝ հաւատոյ լոյսն՝ բանի կամ մտաց լսաւոյն հետ միացնել: Բայց այսպիսի դիտութեան առաջին պայմանն է հաւատս ունել այն յայտնեալ խօսքին՝ որ լսաւորէ և արտափայլէր շնորհանակի Սրբոյն Պաւղոսի, որ թշուառաբար իմ խաւարին մտաց մէջ կայծն անգամ չէ ներացել...»:

Քահանայն. — «Սիրելեալ Տէր, այդ լոյսն կարէ իջանել ձեր միտքն՝ եթէ բոլորով սրտիւ խնդրէք զայն. և այն փոփոխութիւնը զոր այժմ ցուցանէք այնոր սկզբնաւորութիւնն է. աստուածային լոյսն ալ աւրուան լուսոյն պէս արգելք չգնելուդ պէս ամեն տեղ կը ծաւալի: Բայց առաջ տանիմք այն հանգիստութիւնն որ ձեզ այնչափ աղդու երևցաւ, որպէս զի այնու մեր խնդիրն ալ լուսաւորուի, օգնելով ձեզ որ մարմնոյ յարութիւնն կարելի լինելն ըմբռնէք,

որ կը յուսամ Թէ արդէն անտեղի բան մի ոչ երեւի ձեզ» ։ — Պաւղոս առաքեալըն ասացածէն կը տեսնէք՝ որ մեր ապագայ մարմինն՝ նոր կայ մարմնոյս նկատմամբ այնպէս է՝ որպէս ծաղկին սերման քով՝ յորմէ ելանէ. և որ նոյն գոյացութիւնն է՝ սակայն այլակերպեալ. և նոյն էակն է՝ ուրիշ ձեւոյ ներքեւ. և ինչպէս հողն ցանուած փանաքի սերմն՝ ժամանակէ մի ետքն՝ գեղեցիկ և անուշահոտ ծաղիկ մի պէս կ'երեւի, այսպէս նիւթական մարդս սերմանեալ ի մարմնի՝ օր պիտի գայ որ յոգեղէն մարմին պիտի երեւի՝ զոր և պիտի զգեստուի ի վախճան դարուց. ինչպէս կ'երեւի քեզ այս յանդուգն բացատրութիւնս. կարծեմ խմաստասիրութիւնն բնաւ չէ համարձակած այսպիսի բացատրութիւն մի գործածել, այլ ընդհակառակն մեծ սխալման մէջ անկած է ոգին և նիւթն նոյնացնելով, զոր Պաւղոս առաքեալ ոչ երբեք գործած է. ինքն միշտ զնոսա իրարու կը մօտեցնէ՝ անդրադարձ թափանցողութեամբ՝ բայց ոչ երբեք իրարու հետ շփոթելով, և նոցա կատարեալ միութիւնն կը բացատրէ՝ երկուքին ալ հաղորդակցութեամբն ընդ աստուածային ոգւոյ և ընդ աստուածային կենաց, որ ուրիշ կերպով չհասկցուիր՝ բայց եթէ վերստին մարդկութեան յաստուածութիւն անդր'նկերքն բնութեան Աստուծոյ մարդացեալ » ։

Լրս. — « Այնտարակոյս Բանին մարմնաւորութեան գերապանծ հեռւութիւնն է այս՝ զոր ամենևին չէի խորհած. և հիմա կը սկսիմ լմնանալ որ Քրիստոս երկրիս վրայ մարդկային պատմութեան կեդրոնն է, առանց նորա բան մի չեմք կարող հասկանալ մարդուս ծագմանն, ներկայ վիճակին, և ապագայ սահմանեալ պայմանին վրայ » ։

Քահանայն. — Աստուած սար որ այս Հմտարտութիւնս լաւ ըմբռնեիք՝ բոլոր իր խորութեամբն բարձրութեամբն ու լայնութեամբն. վասն զի այս խոկ է

քրիստոնէական հաւատոյ մասանց սկիզբն. որպէս Յիսուս Քրիստոս սկիզբն է ամենայն էակաց և աղբիւր կենդանութեան ։ Բայց մեր վիճաբանութենէն դուրս չէլնելու համար՝ առ այժմ այս միայն հաստատեմք՝ որ ինչպէս իմանայ Աւետարանն մարմնոյ յարութիւնն այնոր (այսինքն մարմնոյ) եղծումն չէ. « Յարութիւնն ալ է վերաձան մարմոյ՝ այլ փոխարկութեան նորա » ասէ սուրբ Լևոն պապ, և կը յաւելու. « Որին անցանէ՝ բնութիւնն ալ եղծանի ». որակն կ'անցնի՝ բայց բնութիւնն նոյն կը մնայ ։ Այնոր համար Յոբ երանելի իւր մարմինն չջնջափելով կը գոչէր. « Գիտեմ որ այս մարմնովս յարութիւն պիտի առնում » ։

« Հիմա բարեհաճեցէք, Տէր, սակաւիկ մի ևս իմ եւսէս գալու հանգիստութեանց այս լուսաւոր ճամբուս մէջ՝ զոր Քրիստոս մեր առջև բացաւ իւր գեղեցիկ առակներովն, և զոր առաքեալք և վարդապետք առաջ տարին զանեղևյեան երեւելեօք և զգերբնական բնականաւ բացատրելով, յորոց միջև Տերտուղիանոս իր Յաղագս յարութեան մարմոյ ձառին մէջ ասէ. « Աւաջի ձոյ կացոյց զբնութիւնն 'ի գործարան, որով գիւրագիտելոյ հաւատացողս մարգարէից, համբակք բնութեան ». որով ասել կ'ուզէ Թէ զբնութիւնն կամ զհամապատասխանութիւնն մարդ կը պատրաստուի 'ի հաւատս յայտնեալ բանին. ինչպէս քերթող մի ասաց

Բանըն մտաց 'ի տաղս իմ՝ ածէ զգմարդ 'ի հաւատս ։

« Արդ եթէ Պաւղոս առաքեալն պէս՝ համոզուիք զանազան պատութիւններէն զինեմք՝ օքինակներ և գրեթէ մարգարէութիւններ գտանեմք յարութեան մարմնոյ՝ էակաց մշանջենաւոր կերպարանափոխութեանց մէջ, որոց էութիւնն և անհատականութիւնն և ձևան՝ իրենց օրակներն և երևոյթներն անդադար փոխուած ժամանակ ։ Բնապատմութեան բա-

ւական հմտութիւն չունիմ՝ որ այս ամեն օրինակ-
ներս ձեզ յիշեցընեմ. միայն քանի մի սովորականներն
յառաջ բերեմ՝ զորս աշխարհ ամեն գիտէ » :

« Ջուրն իրեն մասնկանց սեղմութեան և ընդար-
ձակութեան համեմատ՝ երեք զանազան վիճակ ունի.
երբ ցուրտն զինքն կը սեղմէ՝ կը պնդանայ և հաստա-
տուն մարմին կը դառնայ, և այս վիճակիս մէջ կար-
ծես թէ մահուան վիճակ կ'առնու և այնոր կնիքն
վրայն կ'երևի որ է ցրտութիւն անշարժութիւն և
անդործութիւն. և առ ժամանակ մի հեղուկի որակ-
ներն կորուսանելով՝ այնոր պաշտօններն չկարէ կա-
տարել: Բայց երբ ջերմութիւնն այնոր մէջ կը թա-
փանցէ՝ շարժումն և կեանք կը ստանայ, և վազելով
կ'երթայ անդերն կը բեղմնաւորէ, և ճարտարահնար
մեքենայից շարժումն կուտայ: Եւ եթէ մինչև եռաց-
ման աստիճան զինքն տաքցնես՝ հեղուկէն ձգական
հոսանուտ կը դառնայ, և շոգիանալով այնպիսի զօ-
րութիւն մի կ'ունենայ՝ որ սարսափելի ծանրութիւն-
ներ վեր կը վերցընէ և բազմութեան կառաց խումբ
մի արագութեամբ կը քշէ կը տանի: Ո՞վ կարէր են-
թադրել թէ լճացեալ ջուրն՝ այսպիսի զօրութիւն
ունենայ. թէ որ սառոյցն՝ որ կեանքն կ'ընդարմացնէ՝
շոգւոյ հետ բաղդատես՝ որ այնպիսի հզօր կեանք մի
յառաջ կը բերէ, ո՞չ տպաքէն այնպէս հաւտալդ
կուգայ՝ որ երկու զանազան մանաւանդ թէ իրարու
հակառակ գոյացութիւններ են. սակայն ներքսա-
պէս մի և նոյն բնութիւնն է, և որակն միայն փո-
խուած է. Որպէս անցանէ՝ բնութիւնն ոչ եղծանի: Այսպէս
է մարմնոյ յարութիւնն ալ. Սերմանի տիկարութեամբ և
յառնէ զօրութեամբ. երկրաւոր վիճակի մէջ մեռելոյ պէս
է՝ համեմատութեամբ երկնային վիճակին՝ զոր օր մի
պիտի զգենու » :

« Ադամանդն՝ անյագ անօթն այն լուսոյ և ամենէն
հզօր ցոլացնողն, որ քան զամենայն մարմինս 'ի ներ-

քոյ արեգական պայծառ և վճիտ է, և այս պատճա-
ռաւ թանկագին զարդ է սեղանոյ և գահու և գե-
ղեցկութեան, ուրիշ բան չէ՝ բայց եթէ ածուխ այ-
լակերպեալ՝ որ բնութեան մէջ ամենէն դիմահար
մարմինն է, և կարծես թէ տարտարոսի խաւարէն
ելած է: Եւ սակայն նոյն գոյացութիւնն է՝ հրով
զտեալ և բիւրեղացեալ՝ որ այնոր անմաքրութիւնն
զտելով և խաւարն հալածելով՝ արևու պէս կը պայ-
ծառացընէ: Ածխոյ ադամանդ փոխուիլն տեսակ մի
յարութիւն չէ՞, կամ անցք 'ի խաւարային վիճակէ
'ի լուսաւորն. և սակայն երկու վիճակաց մէջ ալ
բնութիւնն նոյն կը մնայ, և որակն միայն կը փոխուի.
Որպէս անցանէ՝ բնութիւնն ոչ եղծանի » :

« Աւազն մոխիրն ու կապարն առ, և լոսելէն և
որոշեալ չափով իրարու հետ խառնելէն ետև՝ քու-
րայով մի սաստիկ կրակի մէջ դիր երկայն ատեն.
յետոյ այն հալած նիւթն արոյրէ տախտակի մի վրայ
թափէ, և կ'ունենաս մեր հայելեաց բիւրեղն, զոր ե-
թէ յղկես և կլայեկես՝ սքանչելի կերպով լոյսն կը
ցոլացնէ, և կամ զանազան ձևերով որ կարուի՝ փայ-
լուն կայծականց պէս մեր աչքն կ'առնու: Եւ սակայն
աւազն դիմահար մարմին է, մոխիրն այրած բուսոց
մնացորդն է, և կապարն ծանր մարմին հակառակ և
անընդունակ լուսոյ: Անտարակոյս հոս ալ որակաց
փոփոխութիւն և այլակերպութիւն մի կայ. իսկ
գոյացութեանց բնութիւնն նոյն մնացած է. Որպէս
անցանէ՝ բնութիւնն ոչ եղծանի. այսպէս է և 'ի յարու-
թեան մարմնոց » :

« Կենդանական պետութեան մէջ ալ՝ ամբողջ դաս
մի միջատներ կան՝ որ բոլոր իրենց կեանքն երեք զա-
նազան վիճակներէ կ'անցնին. նախ որպէս որդ եր-
կրաքարշ և հողաբնակ, յետոյ կը փակուին գերեզ-
մանի մի մէջ՝ ուր ժամանակ մի անշարժ կը մնան՝
հարսնուկի վիճակի մէջ, և վերջը յանկարծ իրենց

գերեզմանն ծակելով՝ և յաղթանակաւ անտի ելնելով՝ արփաթևեալ յօդս կը թռչին երփներանգ պայծառ գոյներով։ Արդեօք մարմնոյ վերջնական յարութեան և իւր կերպարանափոխութեամբ ստացած զօրութեան՝ քան զայս գեղեցիկ նշանակ և օրինակ կարէ՞ լինել։ Վասն զի այս գեղատեսիլ թիթեղնիկս յառաջագոյն որդ մի էր, և ինքնին թաղուելով՝ առերևոյթ մահ մի ունեցաւ, և յետոյ իւր բնութեան զօրութեամբն անտի ելնելով՝ դէպ 'ի լոյս երկնից յարեաւ և թռեաւ։ Միշտ նոյն էակն է՝ բայց զանազան վիճակներով. յորս իւր որակներն կը փոխուին՝ բայց բնութիւնն նոյն կը մնայ. այսպէս և 'ի յարութեան մարմնոց. Որպէս անցանէ՝ բնութիւնն ոչ եղծանի »։

« Վերջապէս, սիրեցեալ Տէր, դուք քան զիս այլ լաւ գիտէք՝ որ մարդոյ կազմաւորութիւնն իւր ամեն մասանց մէջ նովին նոյնութեամբ չմնար. այլ հիւլէներն անդադար տարուբեր մի կ'ունենան՝ շարժմամբ և սննդեամբ իւր զօրութիւնն կորուսանելով և նորոգուելով. և ոմանք 'ի բնախօսաց ասեն թէ եօթն տարւոյ մէջ՝ մարդուս մարմինն բովանդակապէս կը նորոգուի, և սակայն միշտ նոյն մարմինն է և նոյն մարդն, այնպէս որ իւր մարդկային գոյութեան մէջ անդադար և դարձադարձ շրջան մի կայ եղծման և նորոգման, և մշանջենաւոր անցք մի 'ի կենաց 'ի մահ և 'ի մահուանէ 'ի կեանս։ Եւ սակայն անձնական նոյնութիւն անհատին ոչ բնաւ այլայլի, վասն զի որակաց փոփոխութեան մէջ՝ բնութիւնն նոյն կը մնայ. Որպէս անցանէ՝ բնութիւնն ոչ եղծանի »։

« Արդ հիմա բնութեան այս ամեն օրինակներս յարմարցուցէք վերջին կերպարանափոխութեան մարդկային մարմնոյ՝ 'ի մեծի աւուր վերջնոյ դատաստանին։ Մի թէ այս հրաշալի երևոյթներս՝ որ ամեն օր մեր աչաց առջևն կը կատարուին, մարդա-

րէական ձայն մի չէ՞ն որ ասեն թէ ձեր մարմինն ալ՝ աշխարհաւեր երկնային հրոյն զօրութեամբն՝ յածխոյ՝ յագամանդ պիտի փոխուի, յաւազոյ 'ի մախրոյ և 'ի կապարէ՝ բիւրեղ պիտի դառնայ, և երկայն ատեն հողաքարշ կեանք անցուցանելէն ետև երկրիս վրայ իբրև որդն, և հարսնուկի պէս գերեզմանի մէջ փակուելէն ետև՝ պիտի խորտակէ մահուան շղթայներն՝ և թևս պիտի առնու յերկինս թռչելու համար։ Բայց թէ ինչպէս պիտի լինի այս այլակերպութիւնս. այն ես ալ ոչ գիտեմ. վասն զի սուրբ խօսքն մեզ ուսուցանէ ինչ որ պիտի լինի, բայց ոչ ասէ թէ ինչպէս։ Արդեօք իր մի բացատրել չկարելուս պատճառաւ՝ իրաւունք ունիմք զայն մերժելու և ուրանալու. ապա ուրացէք ադամանդն, ուրացէք բիւրեղն, ուրացէք թիթեղնիկն որ ձեր աչաց առջև կը թռչտի. վասն զի յասպարէզ կարգամ զձեզ և քաջ ասեմ եթէ այս այլակերպութիւններս բացատրէք »։

Յարութիւն մարմնոյ (շարայարութիւն)

23 Յուլիս։

Երէկ այցելութեան մի պատճառաւ՝ քահանային հետ խօսակցութեանցս համառօտութիւնն ընդհատելով՝ հիմա կարուած տեղէն յառաջ կը վարեմ։

Քահանայն. — « Կարծեմ ձեզ կարացի ցուցանել, սիրեցեալ Տէր, թէ մարմնոյ յարութիւնն կարելի է՝ որպէս ուսուցանէ զայն վարդապետութիւնն կաթողիկէ։ Մնայ հիմա այնոր կարևորութիւնն ալ ցուցանել, ոչ եթէ իբր զի յարութիւնն կարևոր հետևութիւն է մարդկային մարմնոյ բնութեան՝ որ էականապէս իրեն ոչ պատկանի, որպէս և ոչ իսկ աստուածային կենաց հաղորդակցութիւնն սեպհա-

կանութիւն ինչ է հոգւոյն. բայց՝ի միոյ կողմանէ անտնօրինելի պայման մի է այս յաւիտենական արգարութեան կատարեալ կերպով վճարուելուն, և՝ի միւս կողմանէ անհերքելի հեռաւորութիւն միաւորութեան մարդկութեան ընդ աստուածութեան՝ի Յիսուս Քրիստոս »։

Նա. — « Հապա տեսնեմք, հզօրէն հզօրագոյնն կ'երթամք, գոչեցի յահմայ կամս։ Շնորհակալ եմ ձեզ, Տէր վարդապետ, որ վրաս համարուձն ունեցար՝ մտացս տկարութեանն համեմատ խօսքերնիդ ոչ մեղմացընէք։ Ձեր անկեղծութիւնն շիտակ իր նպատակին կը հասնի, և կը խոստովանիմ որ հետաքրքրութիւնս կարգէ դուրս կը շարժի այս ապացուցուցութիւնս ալ լսելու զոր կը խոստանաք։ Իմ անստուգութեանս մէջ ալ մեծ վստահութիւն ունիմ, որովհետև ձեր բազմօրինակ հանգիստութիւնը՝ներկն այնչափ տպաւորութիւն արարին վրաս՝ որ հաւատոյ այս մասիս մէջ՝ ալ անտեղութիւն ոչ տեսանեմ՝ որ յառաջ գնս բոլորովին կ'ըմբռնստացնէր։ Սակայն կարևորութիւնն ու կարելութիւն իրարմէ շատ հեռու են՝ տեսցուք ինչպէս պիտի կարենք անցնիլ այս հեռաւորութիւնս »։

Քահանայն. — « Ամենապարզ կերպով մի, սիրելի. Նախ պարզապէս մտաց կամ բանի օգնութեամբն՝ որ կը պահանջէ որ արդարութիւնն կատարուի աշխարհիս վրայ կամ ուրիշ տեղ, կամ թէ տեսեք մարդուս արդարութեան վրայ ունեցած գաղափարին կատարեալ իրականութիւնն պէտք է որ վճարի։ Եւ յետոյ՝ եթէ կ'ընդունիք որ Յիսուսի Քրիստոսի առաքելութիւն յաշխարհս՝ մարդս ամբողջապէս նորածնելու համար էր՝ ասոի պիտի ցուցանեմ ձեզ որ մարդուս մարմնոյն փառաւորութիւնն ալ՝ այնոր հարկաւոր հեռաւորութիւնն է. վասն զի մարմինն ալ լինելով էական մաս մարդկութեան՝ զոր Բանն էառ իր

վրայ, պէտք է որ մարմինն ալ հոգւոյն հետ՝ի միասին մասնակցի նորա աստուածութեանն, որ ուրիշ կերպով ոչ լինի՝ բայց եթէ յարութեամբ։ Հոս տեղս ալ պայծառ նկարներ չեմ կարող դնել ձեր առջևն, այլ խորին գաղափարներ՝ զոր սուրբ խօսք ուսուցանէն, և զորս ձեր միտքն կարէ ըմբռնել՝ եթէ անկողմնասիրութեամբ յառաջ քան զամենայն ջնջմարտութիւնն որոնէ »։

Նա. — « Ականջս ձեզ է, և քաղցած ոգիս ձեր բանիցն կը սպասէ »։

Քահանայն. — « Առաջին կէտն բացատրելն աւելի դիւրին է. ամեն մարդ գիտէ որ դատաստանարան մի երբոր ոճրագործութեամբ ամբաստանուած մարդ մի կ'ուզէ դատել՝ առջի առնելիքն այն է որ ստուգէ թէ արդեօք ամբաստանեալ անձն՝ նոյն է ոճիրն գործող համարուած մարդոյն հետ, և այս բանս բարոյական պատասխանատուութեան սկիզբն կառաջ կու գայ՝ որով իւրաքանչիւր ոք պատասխանատու է իւր ազատ գործոցն և այնոր հետևանքն պիտի կրէ։ Այդ ինչ որ մարդկանց ատեանին մէջ կը գործադրուի՝ նոյնն պիտի լինի Աստուծոյ ատեանին մէջ ալ. որովհետև արդարութիւնն միևնոյնական է, և երկնից և երկրի համար ալ նոյն է։ Այդ վերջին դատաստանի առաջին պայմանն պիտի լինի ստուգել զնոյնութիւն անձանց դատելեաց. այնպէս որ յիւրաքանչիւրումն պիտի լինի նոյն անձն՝ ինչ որ էր այս աշխարհիս մէջ՝ հոգին և մարմինն՝ի միասին, որովհետև մարդս յերկոցունց յայսցանէ բազկացեալ է, և այն երկուքովն գործել է ինչ որ գործել է եթէ բարի և եթէ չար։ Յիրաւի մարմինն գործիք մի եղած է միայն, բայց իրականապէս մասնակից եղած է բարոյ կամ չարի՝ զոյնս իրականացնելու համար ծառայելով։ Եւ ինչպէս որ աշխարհիս վրայ մարդկային անձն գործէ՝ի ձեռն մարմնոյ որպէս և՝ի ձեռն

հոգւոյ, որովհետև ասի. Ուտեմ, շրջիմ, ննջեմ, որպէս ասի. Զգամ, խորհիմ, կամիմ. ապա հարկ է որ այս անձս ամբողջ երևի յատենի դերագոյն դատաւորին, իւր գործոց ամեն դիտմունքովն, ուստի պէտք է որ առնու իւր մարմինն՝ որ լրացուցիչ մասն է իւր մարդկութեան, որպէս զի այս յետինս ալ ամբողջապէս առնու իւր գործովք արժանացած վարձքն կամ պատիժն. զոր առաքեալն Պաւղոս ուսուցանէ մեզ ասելով. « Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով՝ զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի և եթէ չար ». (Բ. Կորնթ. Ե. 10): Յայտնի է որ այս մասիս մէջ բանն մտաց ընդ յայտնութեան կը միաբանի » :

« Հիմա եթէ մտօք վերանամք դերագոյն կարգի մի՝ արդէն ընդունած լինելով թէ Բանն աստուածային էջ յերկիր առ 'ի փրկել և վերածնանել զմարդն անկեալ, և մարդկութիւնն իւր վրայ ուրիշ բանի համար չառաւ՝ բայց եթէ այս վախճանաւ, ապա պիտի ճանաչեմք որ իւր զոհագործութեան զօրութեամբն՝ զնա բովանդակապէս նորոգած է մարմնովն և հոգւով 'ի միասին. և այսպէս ըստ ասից առաքելոյն՝ իւր յարութիւնն որով գերեզմանէն ելաւ, և համբարձումն որով փառօք յերկինս վերացաւ մինչև յաթոռ Յաւիտենականին՝ երաշխաւորութիւն և դրաւական են մեր մարմնոյն յարութեանն և ապագայ վերացման և հաղորդակցութեան աստուածային կենաց յանձն Աստուծոյ մարդացելոյ: Վասն զի իւր մարմնաւորութեան գործովն՝ Քրիստոսի մարմինն զոր էառ յարգանդի կուսին մեր մարմինն է, և արիւնն զոր առ 'ի նմանէ՝ մեր արիւնն է. և երբ Եկեղեցին վերածնանի զմեզ մկրտութեամբ՝ այս վերածնութեամբս առնէ զմեզ նոր մարդ՝ զոր և խառնէ 'ի մարմին Յիսուսի Քրիստոսի՝ որով լինիմք անդամք նորա: Արդ նոյն առաքեալն ասէ թէ ո՛ւր որ

գլուխն է՝ պէտք է որ անդամներն ալ հոն ժողովին. և Փրկչին գործն այն ատեն պիտի աւարտի՝ և մարդկութեան վերստին լրացումն այն ատեն պիտի կատարուի՝ երբ մարմինն լիցի ինչ որ սահմանած է աստուածային շնորհքն, այսինքն անցանել յապականութենէ յանապականութիւն, 'ի ակարութենէ 'ի զօրութիւն և յանարգութենէ 'ի փառս: Զոր Պաւղոս առաքեալ համարձակ կ'անուանէ մարմին ոգևոր որ շնչաւոր մարմնոյն պիտի յաջորդէ, և այսու այլակերպութեամբ պիտի ստանայ Փրկչին աստուածային մարմնոյն ամեն սեպհականութիւններն կամ յատկութիւններն, ինչպէս որ երևեցաւ իր կենդանութեան ատեն Թաբոր լերին վրայ, և մահուանէն ետև 'ի վերնատանն և ուրիշ տեղեր, և ինչպէս որ կ'արտափայլէ յաւիտենական լուսոյն մէջ: Այսու գնով միայն կարէ մարդս բովանդակապէս մտանել 'ի յերկինս, և արիւնն Յիսուսի Քրիստոսի վաստկեցաւ իրեն համար այս փառքս: Արդ կը հարցանեմ, սիրելի, աշխարհիս մէջ ո՞ր կրօնքն ո՞ր վարդապետութիւնն եղած է՝ որ այսպիսի բարձր վիճակ մի խոստացել է մարդկան ազգի. և մի թէ ո՞չ կարեմք սուրբ Գրոց հետ ասելու. Ո՛չ՝ ամենևին ազգ մի եղած չէ՝ որոյ աստուածներն այնչափ մօտ լինին իրեն՝ ինչպէս մեր Աստուածն մեր հետն միացաւ: Վասն զի մեր բնութիւնն առնլէն ետև՝ որպէս զի մեք իր որդիքն և եղբարքն լինիմք, իր փառքէն և երանութենէն ալ մասն հանեց մեզ. ինքն մարդացաւ զմեզ աստուածացնելու համար, և զմեզ իւր ամենակարողութեանն հաղորդեց՝ որպէս ինքն հաղորդեալ էր մեր ակարութեանն » :

« Վերջապէս այս ալ դիտելու էք որ մարմնոյ վերապատուութիւնն այսինքն առաջին յարգն դառնալն քրիստոնէին համար արդէն այս աշխարհէս կը սկսի, և ապագայ յարութեամբ պիտի աւարտի,

որոյ գրաւականն և միջոցներն Եկեղեցւոյ խորհըրդոց ձեռօք այնոր մէջ կը գրուին: Վասն զի այս մարմինս որ ծածկոյթ է հոգւոյն և սորա հլու սպասաւորն լինելու է՝ բոլոր կենաց մէջ բարւոյն և չարի հաղորդ է, այնպէս որ հոգւոյն ընդունած շատ շնորհքներն անգամ՝ մարմինէն և 'ի զգայարանաց կ'անցնին իրեն՝ իւրեանց հետքն և զօրութեան մի մասն այնոր վրայ թողլով. այսպէս մարմինն կ'ողողի ջրով մկրտութեան, և ոգին որ կը ծաւալի խօսքով և ջրով՝ զայն կը կենդանացնէ. որովհետև առ 'ի մըտանել 'ի յերկինս հարկ է վերստին ծնանել 'ի ջրոյ և 'ի յոգւոյ: Այսպէս գրոշմի խորհըրդոյն մէջ ալ նոյն ոգին մարմինն կը թափանցէ՝ քահանային կամ եպիսկոպոսին օրհնութեամբն և սուրբ օծմամբ: Հաղորդութեան խորհրդով մարմինն կը կերակրի մարմնով և արեամբ Յիսուսի Քրիստոսի: Եւ այս անմահութեան սերմանքս՝ հետզհետէ եղծանելի մարմնոյն մէջ գրուելով՝ գրաւ մի են յաւիտենական կենաց խոստացելոց. որք պիտի ծլին ծաղկին ու պտղաբերեն՝ հոգւոց արեգական ուղղակի ազդեցութեամբն՝ յարութեան փառաւոր օրն՝ յորում ամենեքին պիտի երևին իրենց մարմնովն, թէ և ամենեքին պիտի չփոխուին: Բայց մեք, ասէ առաքեալն, պիտի փոխուիմք. վասն զի յաւիտենական կենաց համար յարութիւն պիտի առնումք, 'ի յարութիւնն կենաց, իսկ այլք դատաստանի պատիժն կրելու համար, 'ի յարութիւն դատապարտանաց: Աստուծոյ որդիքն և եղբարք Յիսուսի Քրիստոսի պիտի երևին իրենց հոգւոյն պէս վճիտ մարմնով, որովհետև իրենց մաքրագործութիւնն աւարտած լինելով՝ զգեցած պիտի լինին զանապականութիւն և զանմահութիւն. իսկ որոց հոգին որ աղտոտ մնացած է՝ յաստուածային լուսոյն հեռի լինելով՝ պիտի ընդունին աշխարհիս յանցանօք աղտոտած մարմիննին, և այն

բնական հակումն որ աշխարհիս վրայ ունեցան դէպ 'ի չարն՝ զիրենք պիտի գահավիժէ 'ի խաւարն արտաքին, այսինքն արտաքոյ աստուածային կենաց՝ իրենց անկարգութեանց ամօթալի խարանագրոշմովն՝ իրենց ճակտին վրայ անջնջելի գրով իբրև անարգութեան կենդանի կնիք կրելով »:

« Իրաւունք չունէի՞ ուրեմն, սիրելի, հաստատելու թէ մարմնոյ յարութիւնն հարկաւոր է, որովհետև կը տեսնէք որ առանց այնոր արդարութեան անվթար հատուցումն չեմք կարող ըմբռնել, և ոչ 'ի միտ առնուլ 'ի մէջ մարդկան Փրկչին առաքելութեան կատարումն, և ոչ մարդկութեան ճշմարիտ վերապատուութիւնն: Որովհետև մարմինն լրացուցիչ մասն է մարդոյ, և չէ կարող յաւիտեանս բաժանեալ լինել յայնմանէ ոչ յայսմ աշխարհիս և ոչ 'ի միւսումն, ոչ 'ի ժամանակի և ոչ 'ի յաւիտենականութեան »:

Ես. — « Յիրաւի, Տէր հայր, լսածներս զիս շատ կը զարմացնեն. ձեր ասացածներուն դէմ առարկութիւն մի չունիմ, և կը հաւատամ թէ ճշմարտութիւնն ընդ ձեզ է: Բայց գիտէք որ իմաստասէրք իրենց ապաւորութիւններէն, զգածմունքէն և երևակայութենէն կը կասկածին, և թէպէտ լսածս ինձ բանաւոր կ'երևի, սակայն որովհետև այս տեսակ գաղափարաց վարժած չեմ, և այսօրինակ իմաստասիրելն ալ յինէն օտար է, ոչ գիտեմ ինչ խորհիմ և ուր գտանիմ: Կը յուսամ որ այս ամենքս իմ հոգւոյս օգտակար լիցին, և շատ հեռի չեմ հաւանելու Հաւատամքի վերջի մասին՝ 'ի յարութիւն մարմնոյ և 'ի կեանս յաւիտենականս: Առ այժմ այս միայն կը զրուցեմ՝ իմաստասիրութիւնն բնաւ զիս այս խորութեանս իջուցած չէր, և դուք նոր աշխարհի մի խորհրդազգած արարէք զիս՝ որոյ մէջ խարխափելով յառաջ կ'երթամ, և որոյ մթնոլորտն տե-

սակ մի մարմրուք կուտայ ինձ և գլուխս կը գառնայ: Սակայն բացատրութիւն մ'ալ պիտի խնդրեմ 'ի ձէնջ զոր այժմ ոչ համարձակիմ, որովհետև խոսակցութիւննիս արդէն շատ երկարեցաւ և դուք ալ հոգնեցաք » :

Քահանայն. — « Խօսեցէք, Տէր, ծանրութիւն լինելէն մի վախէք. ինձ մեծ ղուարճութիւն է՝ այս ծանր խնդրոց վրայ ձեր հետ խոսակցիլ, և երջանիկ կը համարիմ զիս եթէ ասացածնուդ պէս՝ իմ տկար խօսքերս կարեն կերպիւ իւրք այն խնդիրներն ձեր աչաց առջև լուսաւորել » :

Ես. — « Որովհետև կը ներէք՝ ես ալ կը համարձակիմ ձեր առջև դնել առարկութիւն մի՝ զոր ես ինձ առնէի՝ մինչդեռ միտքս չէի գրած այս նիւթս ձեզ հարցնելու, և կը խոստովանիմ որ այնոր պատասխան տալ չկարենալս համար՝ առ ձեզ դիմեցի: Գիտեմ որ առնելիքս ռամկական առարկութիւն մի է՝ սակայն այնու հանդերձ չատերուն համար դժուարահնձիւն խնդիր մի է՝ որպէս նաև ինձ: Թէ ընկերութեանց և թէ խմաստասիրաց խոսակցութեանց մէջ շատ անգամ լսել եմ այս առարկութիւնս՝ որ իրենց յաղթութեան և ծաղու նիւթ մի եղած է, և ես ալ դոհացուցիչ լուծում մի չեմ գտած այս խնդրոյս: Իրաւ է որ այն ատեն խորախորհուրդ կերպով այս նիւթոյս չէի պարապէլ, որ արդէն ինձ անտեղութիւն կ'երևէր: Իսկ այսօր տարմադրութիւնս ու միտքս փոխուած է, և ձեր յայտ հաւանական խօսքերէն ետև՝ կը յուսամ որ այս վերջին դժուարութենէն ալ զիս պիտի ազատէք » :

Քահանայն. — « Ձեր առարկութեան կանխաբանութեամբն զիս գրեթէ կը վախցնէք, սկրեցեալ Տէր, և թերևս պիտի ստիպուիմ խոստովանելու թէ պատասխանելու կարողութիւն չունիմ: Եթէ իրաւցնէ այնպէս է՝ անկեղծութեամբ կը զղուցեմ,

որովհետև միտքս գրած չեմ թէ ամեն դժուարութիւն կարեմ լուծել, և ոչ ալ յաղթողապէս ձառել պատրաստ իրաց գիտեցող » :

Ես. — « Դուք ինձ ցուցիք որ յարութիւնն մարմնոյ կարելի է և միանգամայն հարկաւոր. հիմա շատ հետաքրքիր եմ գիտենալու թէ ձեր կարծեօքն այս կարելութիւնս ինչպէս 'ի գործ պիտի գրուի, և այս հարկաւորութիւնս ինչպէս պիտի կատարուի. և ինչ հնարքով՝ երկրիս վրայ ապրող և իրենց մարմինն հոն ձգելով գնացող անթիւ հոգիներն՝ իւրաքանչիւրն ձիշդ իւր սեպհական մարմինն պիտի առնու, որպէս զի իւրաքանչիւր մարդ գերագոյն առեանին առջև ամբողջապէս երևի իւր անձնական նոյնութեամբն՝ որպէս պահանջէ տրամաբանական արդարութիւնն » :

Քահանայն. — « Այս ռամկական առարկուածս որ շատ անգամ ընկերութեանց մէջ կը զղուցուի՝ ես ալ հաղար անգամ վարժարաններու մէջ լսած եմ. բայց այս մեծ չփոթութիւնս և անորոշելի կարծուած խառնուրդս զիս ոչ վախցնէ: Թէ որ այս նիւթոյս վրայ վարդապետական վէիս մի կամ ուսումնական բացատրութիւն մի ուզէք՝ պարզապէս ասեմ որ պատասխան մի չունիմ տալու, եկեղեցին այսոր նկատմամբ գրական բան մի ոչ ուսուցանէ, մարդկային գիտութիւնն ալ՝ որ քան զիս աւելի լաւ ձանաչէք՝ այս խնդրոյս վրայ ուրիշ բանի համար խորհած չէ՝ բայց եթէ զայն անտեղի հրատարակելու և ծաղրելու համար: Հաւատքն դրականապէս կը հաստատէ՝ որ իւրաքանչիւր մարդ իւրով մարմնով յարութիւն պիտի առնու, բայց ոչ ասէ թէ այս բանս ինչպէս պիտի լինի. և եկեղեցին կը հաւատայ թէ Աստուծոյ ամենակարողութիւնն այսոր հնարքն ալ մտածած է՝ իր խոստմունքն կատարելու համար: Համագոյից մէջ շատ բաներու համար խմաստունք

ալ կը ստիպուին նոյն կերպ մտածելու, մանաւանդ
էակաց գոյացութեանցն զօրութեանց և ծածուկ
որակաց վրայ խօսելու ժամանակ. դուք ալ ձեր
փորձառութեամբն գիտէք՝ որ բնական և բնազան-
ցական նիւթոց քննութեան ատեն՝ աւելի կը նկա-
րագրեն զգալի և ոգեկան գործերն՝ քան թէ կը բա-
ցատրեն: Եթէ հոգէխօսութեան, բնախօսութեան,
բնական և բժշկական գիտութեանց նկարագրական
մասն դուրս հանես յիրաւի շատ բան մի ոչ մնայ այն
գիտութեանց մէջ: Ուստի աստուածաբանք ալ՝ որ
հաւատոյ դերբնական նիւթոց կը պարապին՝ ու-
սումնականապէս ալ առեալ՝ քան զիմաստունս ա-
ւելի տգիտական վիճակի մէջ չեն այս կողմանէ.
որովհետև ուսմանց մէջ ալ շատ բաներ կան զորս
պարզապէս հաւտալու և ընդունելու է քան թէ
բացատրելու և մեկնելու»:

«Այս դատաստանական բացառութիւնս դնելէն
ետև՝ որ բնազանցական շատ խնդիրներու ալ կը
յարմարի, պարզապէս ձեզ կը պատասխանեմ որ
մարմնոյ յարութիւնն ինչ կերպով լինելիքն քան
զձեզ աւելի ոչ գիտեմ: Իսկ եթէ դարձեալ թա-
խանձէք՝ ինչպէս որ կարծեմ, ուրիշ բան չեմ կարող
առնել՝ բայց եթէ ձեր առջևն դնել իմ անձնական
դաղափարս կամ տեսութեանս կերպն՝ որպէս պարզ
կարծիք կամ ենթադրութիւն մի ինչպէս կ'ուղես
համարէ՝ զոր ձեզ կը թողում առնել զոր և կամի-
ցիք, որովհետև ես ալ շատ վստահութիւն չունիմ
այնոր վրայ»:

«Ի բաց թողեալ քերթողաց և արուեստագիտաց
երևակայեալ գիւտերն այս նիւթոյս մէջ՝ ոչ կամիմ
դարձեալ զկայ առնուլ և իբր 'ի պատկերի ցուցանել
դերեզմանաց բացուիլն, ոսկրներու խլրտիլն և հա-
ւաքուիլն մարդու կմախքներ ձևանալու համար,
ներդից ջղաց երակաց և շնչերակաց այնոց վրայ

ափռիլն, և դնտերաց և մորթոյ տարածուիլն այս
մեռելադարձ ուրուականներն ծածկելու համար. որ
անտարակոյս այս ամեն բանս պիտի կատարուի՝ ո-
րովհետև սուրբ Գիրք ալ նոյն բանն ասեն, բայց ոչ
գիտեմ թէ ինչ կերպով. և որոց ուրիշ հնարք չու-
նիմ ցուցանելու՝ բայց եթէ զամենակարողութիւնն
Աստուծոյ՝ որ զամենայն ինչ արար յոչնչէ՝ որ ձեզ
ալ այլ աւելի դժուարին և անբացատրելի երևելու
է անտարակոյս՝ քան թէ այսչափ եղածներով նորէն
բան մի յօրինել»:

«Արդ այժմ պարզ իմաստասիրաբար խորհելով՝
որովհետև ալ աստուածաբանն չէ ձեր հետ խօսողն,
մի միայն խորհրդածութիւն մի կ'ուղեմ առնել որ
թերևս ձեզ ալ ծանրակշիռ երևեսցի, այսինքն թէ
մարմինք կարեն նորէն յօրինիլ՝ որպէս յառաջագոյն
յօրինեցան. արդ ծննդադործութեամբ յօրինման
մէջ ինչ կը տեսնեմք. բեղմն իմն 'ի զանգուածի մօր,
և ոգի կենդանացուցիչ 'ի սերման հօր՝ որ բնութեան
մէջ տարածուած կենաց ոգւոյն գործիքն է. և միու-
թեամբ այս երկուց եղերաց՝ երրորդ ոմն կը յօրինի՝
իրենց պէս ոգևորեալ և կենսաւորեալ, այնպէս որ
իւր անհատականութեան մէջ զերկուսն ալ կը ներ-
կայացնէ: Մի անգամ յօրինուելէն ետև նոր ան-
հատն կը սնանի իւր դտնուած տեղւոյն մէջ՝ նախ
արեամբ մօրն և յետոյ նորա կաթովն, և վերջապէս
երկրիս վրայ դտուած ամեն տեսակ նիւթովք՝ զորս
կարէ մարսել: Արդ ես ինքնիրենս ասեմ. այս անհա-
տիս մէջ ալ՝ որ երկոցունց խառն արդիւնքն է, կայ
զանգուած և խարիսխ մի կենաց՝ որ ինչ ալ հանդի-
պի՝ է և մնասցէ միշտ ընձիւղ և կենդրոն իւր էու-
թեան. և երբ այս կեդրոնս կամ մայր հիւլէս մա-
հուամբ կը բաժնուի՝ նախ 'ի հոգւոյն զոր Աստուած
այնոր հետ շաղկապել էր, և յետոյ յամենայն նիւ-
թեղէն մասնկանց՝ որ իւր գործարանաւորութիւնն

կը կազմէին՝ պէտք է որ այն մայր հիւլէն տեղ մի մնայ՝ երկրաւոր տարերաց խառնակութեան և աշխարհիս փոշւոյն մէջ։ Արդ երբ կենաց և մահու տիրոջ հրամանովն՝ այն հոգին՝ որ առժամանակեայ բաժնուած էր 'ի մարմնոյն որոյ կենդանացուցիչ սկիզբն էր կամ իսկական ձևն կամ որպէս ասէին դպրոցականք յեն բնութեան՝ նորէն այն զանգուածին վրայ հասնի և զայն բռնէ, գրեթէ որպէս 'ի սկզբան հօր սերմն մայրական բեղմն կը թափանցէ, ո՞չ ապաքէն նոր յօրինուած մի յառաջ գալու է անտի անդէն և անդ »։

« Միայն տարբերութիւն մի կայ՝ որոյ համար գերբնական ուժի կարօտութիւն կը տեսնեմ զոր անուանեմք հրաշք. այսինքն կազմաւորութեան զարգացումն որ ըստ կարգի բնութեան դանդաղաբար և ծանր ծանր լինի, հոս յանկարծակի պիտի լինի յաւուր անդ յարութեան։ Իմ ենթադրութեանս գլխաւոր դժուարութիւնն այսոր մէջ է, զոր այլ կերպով չեմ կարող բացատրել՝ բայց եթէ աստուածային ամենակարողութեամբ, որոյ գերագոյն զօրութեան նկատմամբ՝ միտք հաւասարապէս դժուարութիւն կրեն բացատրելու տիեզերաց սկզբնաւորութիւնն որպէս և զլրումն. վասն զի միտք միայն իւր բնական լուսովն չկարէ հասկանալ թէ ոչնչիւ ինչ մի լինի. որովհետև մտաց հիմնական առածներէն մի է Յունչէ ոչինչ։ Բաց աստի՝ այսօրինակ նորէն բաղկացած մարմինն՝ անտարակոյս նոյն մարմինն լինի ինչ որ յառաջ, որովհետև նոյն խարիսխն և նոյն կեդրոնն ունի. վասն զի ինչպէս որ իր երկրաւոր կենաց ժամանակ իւր նոյնութեան մէջ անփոփոխ մնացած է՝ թէ և սնանելու համար նիւթեղէն մասեր կլլած և մարսած է՝ որ անդադար նորոգութիւն մի գործած են յինքեան, այսպէս ալ դարձեալ նոյն պիտի մնայ՝ թէ և նորանոր տարերք միահաղոյն ի-

րեն հետ միանան՝ առ 'ի վերստին յօրինիլ և երևել առաջի գերագոյն դատաւորին »։

« Ահաւասիկ, Տէր, մարմնոյ յարութեան ինչպէս լինելիքին վրայ գաղափար մի խորհուրդ մի կարծիք և ենթադրութիւն մի՝ զոր ձեզ կը թողում, ուստի ձեր իմաստասիրական նրբամտութիւնն՝ ինչ հետևանք կ'ուզէ թող հանէ։ Բայց նորէն կը կրկնեմ, Եկեղեցին այս նիւթոյս վրայ մեզ բան մի ոչ ուսուցանէ, և մեք պարտաւոր ոչ համարիմք զմեզ՝ իր մեզ չուսուցածն բացատրելու, թէ և հաստատապէս կը հաւատամք ինչ որ նա մեզ ուսուցանէ, այսինքն թէ 'ի վերջնում աւուր սոյն այս մեր մարմնովս յարութիւն պիտի առնումք, որպէս ասէ Յոբ երանելին, որպէս զի վարձքն ու պատիժն Ճիշդ նոյն մարդոյն տրուի՝ որ գործեաց զբարին կամ զչար, կամ որպէս ասէ առաքեալն « զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բարի և եթէ չար »։

Այս խօսքիս վրայ սրտանց շնորհակալ եղէ բարի քահանային՝ իր հանճարեղ և անկեղծ բացատրութեանց համար՝ որ խորին տպաւորութիւն արարին վրաս. և խոստանալով նորէն զիրար տեսնելու իրարմէ յոյժ բարեկամաբար բաժնուեցանք՝ ինքն միշտ հանդարտ և զուարթ՝ մտաց և սրտի խաղաղութիւն ունող մարդու մի պէս, իսկ ես մտախոհ և տագնապեալ՝ սակայն հոգւոյս մէջ կրելով իւր զուարթութեան ճառագայթն և յուսոյ նշոյլն։

Ներքին ալէկոծութիւն

24 Յուլիս։

Միշտ և հանապազ իմ քահանայիս հետ վերջին խօսակցութեանս վրայ կը մտածեմ, և քանի մի օրե-

ըէ 'ի վեր անդադար մտացս մէջ զայն կ'որոճամ, ինչ-
պէս որ մարդ գեզեցիկ երգ մի լսելով՝ առանց ան-
դրադառնալու զայն կը մրմռայ: Բոլոր բնութեան
մէջ յարութիւն կը տեսնեմ, ուր կեանքն ելանէ 'ի
մահուանէ առ 'ի մտանել անդրէն 'ի նոյն, և յետոյ
վերստին ծնանել, և այս ամեն այլակերպութիւն-
ներս այնպէս խորհրդաւոր կերպով կը կատարուին՝
որ կը սաիպուիմ զայնս ընդունելու՝ արդիւնքն ա-
չացս առջև տեսնելով, թէ և բացատրելու կերպն ոչ
գիտեմ: Երբ իմաստնոց գրած գրքերն կը կարդամ՝
երկայն բարակ երևութից նկարագրութիւններ կը
գտնեմ՝ որ եղածն կը հաստատեն՝ առանց ասելու
թէ ինչու և ինչպէս լինի: Նոյն բանն կարող եմ ա-
սել ուրեմն նաև մեռելոց յարութեան համար՝ ա-
ռանց իմ իմաստասիրութիւնս նուաստացնելու.
վասն զի վերջապէս հարկ է որ բնութեան պետու-
թեանց այս անդադար կերպարանափոխութիւններս
վերջ մի ունիցին, և արարչութեան մեծ գործն՝ որ
թերևս տակաւին շատ դարեր անցնելով պիտի զար-
դանայ՝ հասնի իւր կատարելութեանն՝ լիովին յայտ-
նութեամբ գաղափարի արարչին՝ որոյ թարգմանն
ու յայտնիչն են արարածք: Ապա մարմնոյ յարու-
թեան կարելութիւնն աշխարհիս վրայ կ'երևի՝ կե-
նաց անդադար այլափոխութիւններովն՝ զոր ուրա-
նալու և մերժելու համար հաստատ պատճառ մի
չունիմ:

Բաց յայսմանէ՝ յարութեան բնականապէս կարե-
լի լինելուն հաստատութիւն է այնոր բարոյական
կարևորութիւնն ալ որոյ վրայ յառաջագոյն իսկ իմ
խօսակցիս հետ համամիտ էի, այնպէս որ իր ապա-
ցոյցն իմ նախազգացմունքս հաստատեց: Իբրև ի-
մաստասէր և բարոյախօս կ'ընդունէի որ պատիժն
արդար լինելու համար՝ ճիշդ յանցաւորին վրայ ան-
կանելու էր, ուստի և դատաւորին առաջին պարտքն

է ստուգել ամբաստանելոյն և յանցանքն գործողին
նոյնութիւնն: Այսոր համար է որ վերջին դատաս-
տանն կը պահանջէ զյանդիմանութիւն կամ զերևելն
մարդոյ յանդիման ատենի իւր բնութեան ամբող-
ջութեամբն. և որովհետև մարմին և անդամք գոր-
ծակից եղած են բարի կամ չար գործոց, պէտք է որ
իբրև պատկանաւորեալք անձին մարդոյ՝ իրենց մասն
ստանան 'ի վարձատրութեան և 'ի պատժաւորու-
թեան. որ մտաց աչաց առջև յոյժ յայտնի բան է:
Բայց թէ որ խօսքիս վրայ հաստատուն կամ՝ այս
կէտէս ետև եկածն ալ պէտք է ընդունիմ. վասն զի
ընդունած բարոյական կարևորութեան հետևանք է
բնական կարելութիւնն, որովհետև մին առանց միւ-
սոյն ոչ կարէ գործադրուիլ կամ իրականանալ:

Ահաւասիկ այս երկու կէտերս ալ հաստատուե-
ցան. բայց երբ և ինչպէս լինելն՝ իմ խելքէս և ե-
րևակայութենէս դուրս է: Սակայն քահանային
ասացածին պէս այս աշխարհիս գիտութեան մէջ ալ
այնչափ այսպիսի անծանօթ ինչպէս լինիներ կը գտ-
նեմք՝ որ միւս աշխարհին համար ալ քանի մի այն-
պիսի անլուծանելի խնդիրներ կարեմք ընդունիլ՝
որում ես ալ դժուարութիւն մի ոչ քաշեմ. վասն
զի ինչ պատասխան կարեմ տալ եթէ ոք ինձ ասէ.
Երկրիս կեանքն ինչ լինելն ինձ չես կարող բացա-
տրել՝ ու կ'ուզես որ ես քեզ երկնային կեանքն
բացատրեմ:

Եւ սակայն սա գործարանաւոր մարմնոց զան-
գուածից կարծեացն կամ ենթադրութեան շատ
հաւնեցայ, որ մահուանէ ետև երկրիս մէջ կենդանի
պիտի մնան առանց խառնուելու՝ որչափ ալ կերպա-
րանափոխութեանց ներքև անկանին, իւրաքանչիւրն
յանձին բերելով զանջնջելի կնիք անձինն որ զնա
ոգևորած էր, այնպէս որ վերջին դատաստանին օրն
հոգին զայն պիտի առնու և զգենու անյապաղ մար-

մնացմամբ. այս կարծիքս միտքս կը հանդարտեցնէ, և կերպիւ իւիք խնդիրն կը բացատրէ: Քահանայն իւր այս տեսութիւնն իբրև անձնական կարծիք ինձ աւանդեց՝ առանց զայն պաշտպանելու, և կամակար ալ հրաժարելով յայնմանէ եթէ մէջն անտեղութիւն կամ անպատշաճութիւն մի երևի. որովհետև Եկեղեցին այս խնդրոյս որոշակի բացատրութիւն մի տուած չլինելով՝ իրեն ալ ոչ անկանէր: Իսկ ես դեռ այն աստիճան լաւ կաթողիկեայ մի չեմ որ այս նիւթըս ինձ անզանազան բան մի երևի, ուստի ուրիշ անգամ լաւ մի պիտի քննեմ այս իւր ենթադրութիւնն:

Այսու ամենայնիւ սա քահանային դիտութեան և իմաստասիրական նրբամտութեան վրայ շատ զարմացայ, որովհետև այսպիսի բարձր հայեցողութեան մի կարևորութիւն չտալն իսկ ցուցանէ՝ թէ հանրածաւալ և բազմատեսակ ծանօթութեանց տէր մարդ է, և մասնաւոր հանճար ունի զննելու և մեկնելու զբնութիւնն, և անտի բնազանցական հանդիտութիւններ հանելու և բարոյականի յարմարցնելու: Իմաստասիրաց շատերն մեծ պարծանք պիտի համարէին իրենց՝ եթէ այսպիսի գաղափար մի գտնէին՝ զոր քահանայն այնչափ պարզութեամբ և խոնարհութեամբ առջևս կը դնէր: Այս մարդուս քով դիտութենէ աւելի բան մի կայ՝ որ է առաքինութիւն, որ անշուշտ իր քրիստոնէական հաւատքէն և քահանայական կարգէն յառաջ կուգայ:

Սիրողաբար իր ձեռքն սեղմելէն և իրմէ բաժնուելէն ետև՝ ճամբայն ինք իրենս ասէի. Եւ սակայն ահաւասիկ այն մարդիկն՝ որոց դէմ այնչափ նախապաշարմունք և ատելութիւն ունիմք, և զիրենք տգիտի տեղ կը դնեմք՝ որովհետև մեր կերպովն ոչ աշխատին և աշխարհիս մէջ համբաւ ստանալ ոչ ուզեն. մեք մտքերնիս դրած եմք որ իրենց հաւատքն՝ իմա-

ցականութիւննին կը թմրեցնէ, և դերի եղած են անբանացուցիչ բռնութեան՝ որ ոգին և խիղճն միանգամայն կը ճնշէ: Եւ մեր իրենց դէմ ունեցած հակառակութիւնն ալ կը յաւելու՝ երբ կը մտածեմք որ նոքա մեր նախանձորդներն հակառակորդներն նաև թշնամիներն են, պատճառաւ որ մեր կանանց և որդւոց վրայ կ'իշխեն և բոլոր ժողովուրդն ձեռքերնին անցուցած են. և զնոսա կղերական իշխանութեան գործիքն և դահիճներն կը համարիմք՝ որ կը ջանան զմարդիկ տգիտութեան և նուաստութեան մէջ բռնելու՝ որպէս զի աւելի դիւրաւ վրանին տիրեն և իրենց շահուն գործածեն: Եւ այս կարծիքնիս ամեն կերպով ծաւալել կը ջանամք օրագրաց և գրեանց ձեռօք և այլ կերպերով՝ ուր որ մեր խօսքն կ'անցնի, և ուր որ յայտնի ոչ համարձակիմք ասելու՝ այլաբանութիւններով և երգիծաբանութիւններով զայն կ'իմացնեմք:

Եւ սակայն այս քահանայս որ զիս ոչ ճանաչէր, և թերևս կրօնից թշնամի լինելս ալ լսած էր՝ զիս սիրով և բարեսրտութեամբ ընկալաւ, և հարցմանցս պատասխան տուաւ, որ կարէր շատ լաւ փախուստ տալ՝ իբրև 'ի թշնամւոյ կասկածելով. և բաց յայսմանէ այնչափ դիտութիւն դտի 'ի նմա որչափ առաքինութիւն, և թերևս մեր օրերու քան զամենայն իմաստասէրս՝ ոգի իմաստասիրութեան: Տես թէ ինչ ասել է ցեղից և արուեստակցաց նախապաշարումն, և մարդիկ որչափ աւելի երջանիկ և մանաւանդ աւելի արդար և իրարու բարեսէր լինէին՝ եթէ այս նախապաշարմունքս 'ի բաց դնէին: Եկեղեցականք զմեզ ընդհանրապէս ամբարիշտ կը համարին, անտարակոյս յանիրաւի, որովհետև մեք ալ կը հաւատամք Աստուծոյ, հոգւոյ անմահութեան և հանդերձեալ կենաց. թէ և անկեղծաբար ասելով մեր հաւատքն Ռոպէսբիէրի և 1793ի աստուածմարդասի-

բաց հաւատքին կը նմանի, և եթէ այնպէս ալ չէ՝ գոնէ շատ վատթար քրիստոնեայներ եմք: Համալսարանի հետամուտք ալ՝ գոնէ մեծաւ մասամբ, կրօնից գաղափարներն և արարողութիւններն կը համարին թէ առասպելներ, երևակերպութիւններ և կեղծուպատիր բաներ են, և զքահանայս տկարամիտ և կեղծաւոր կը սեպեն: Առջիս եղած փորձն ինձ ցուցանէ՝ որ այս վերջիններս ալ շատ կը սխալին, և իրենց նախապաշարմամբ շատ անգամ կ'անիրաւին. որովհետև տեսաւորած և ճանչցած քահանայս ոչ միայն անմիտ և կեղծաւոր չէ, այլ և գիտուն իմաստուն ողջամիտ և արդար մարդ մի է:

Սքանչելիք կամ Հրաշք

25 Յուլիս:

Այս առաւօտ երբ գրասենեակս հանդարտ նստած կ'աշխատէի՝ յանկարծ մեծաւ շառաչմամբ դուռս կռնակի վրայ բացուեցաւ և վաղեմի բարեկամներէս Ն. անուամբ զօրապետն փոթորկի մի պէս ներս մտնելով՝ շփոթած խռոված առանց բարև մի տալու խըզդուկ ձայնով մի յերեսս 'ի վեր կը գոչէր. « Բարեկամ, դու հրաշից կը հաւատա՞ս »: Ու երբոր ես այս անակնկալ հարցման վրայ ապշած՝ երեսն կը նայէի գիտելով որ այսպիսի իրաց վրայ ամենևին մտածած չունէր, նա իմ զարմանքս տեսնելով նորէն պոռաց. « Ասա՛ տեսնեմ հրաշից կը հաւատա՞ս »: — « Իրաւցնէ, զօրապետ, պատասխանեցի տարակուսած, ոչ գիտեմ ինչ զրուցեմ. այս բանս հաւատքէ ու խղճէ կը կախուի, ուստի ամեն մարդ ինչ որ ուզէ ու կարէ թող խորհի »:

— « Սիրելի, դու իմ հարցմանս պատասխան

տալու տեղ՝ փախուստ կ'ուզես տալ. բայց ես հոս պարզ հետաքրքրութեան համար չեմ եկած, և ինձ չանկած բանին խառնուիլ չէ միտքս. որովհետև գիտես որ կրօնական նիւթոց անխտիր եմ: Կ'ուզեմ պարզապէս խորհուրդ հարցանել քեզ այս նիւթիս վրայ, որովհետև իմաստասէր լինելով քան զիս աւելի լաւ գիտես, որ զինուոր եմ և անդիի աշխարհին վրայ շատ չեմ մտածեր. ուստի իմ ուզածն այն չէ որ ինձ ուսուցանես թէ անդիի աշխարհք կայ թէ չէ. վասն զի ես ալ Աստուծոյ և հանդերձեալ կենաց կը հաւատամ, հապա այս կ'ուզեմ գիտել թէ անդիի աշխարհի ազդեցութիւններն այս աշխարհիս մէջ ալ կ'իմացուի՞ն թէ չէ »:

— « Այս ասացածդ ծանր խնդիր մի է, զօրապետ, որ շատ բացատրութիւններ կը վերցնէ: Բայց կարե՞ս ինձ ասել թէ ինչ ճանճ խածաւ այսօր գլուխդ որ այսչափ կը քերուըտիս, և մինչև հիմա մտքէդ չանցած բանն գիտել կ'ուզես »:

— « Դու ուզածիդ չափ խնդա՛, որովհետև իմ տեսածս՝ դու չես տեսած. տասուերկու տարուան տղու մի յանկարծակի առողջանալն՝ որ իմ եղբօրորդիս է, և վեց ամսէ 'ի վեր սարսափելի հիւանդութիւն մի վրան գալով՝ գիշեր ցորեկ հանդստութիւն չունէր, այնպիսի անիմանալի հիւանդութիւն որ ամենէն հռչակաւոր բժիշկներն անգամ բան մի չէին կարող հասկնալ, և որ բոլոր դեղագործներն յուսահատցուց ... Եւ ահա այս հիւանդս վայրկեանի մի մէջ առողջացաւ՝ Սուրբ Վինդենտիոս Պաւլայեցւոյ խորանին առջև՝ 'ի պատիւ նորա իննօրեայ ջերմեռանդութենէ մի ետև: Ճշմարիտ հրաշք մի է այս՝ այնպէ՞ս չէ, թէ որ հրաշք ասացեալ բանն կայ կամ կարէ լինել. այս է ահա քեզ հարցնելիքս ալ »:

— « Բայց նախ և առաջ, զօրապետ, տեսածիդ վրայ ապահո՛վ ես, չկարէ՞ լինել որ ...

Խօսքս դեռ բերանս էր՝ իր լեզուին սովորութիւն եղած երդումով մի գոչեց. « Ի՞նչ, դու զիս կոյր և անմիտ մարդու տե՞ղ դրած ես, տեսի ասեմ քեզ, տեսի, իմ աչօքս տեսի ու ձեռօքս շօշափեցի. աչք ունողն չը՞տեսներ »:

Ես ալ իմացայ որ իր անձնասիրութեանն դպայ, բայց սակաւ մի մտածելու համար ժամանակ վաստըկիլ ուզելով, և իր աներկմիտ հաստատութիւններն ալ հետաքրքրութիւնս շարժելով՝ ասացի. « Նստէ՛ տեսնեմ, զօրապետ, քիչ մի հանդարտէ, և պարզապէս պատմէ՛ ինձ տեսածդ. ես քոյ խօսքիդ վստահութիւն ունիմ, որովհետև զքեզ ողջամիտ մարդ մի ճանչցած եմ՝ որ երևոյթներէ ոչ խաբուիս, և անկեղծութիւնդ ալ գիտելով վստահ եմ որ ճշմարտութիւնն յակամայս իսկ ոչ այլայլես. ուրեմն գիտցածդ ինձ պատմէ՝ ինչպէս վկայն իրողութիւն մի կը պատմէ քննիչ դատաւորին առջև »:

— « Այս բանիս պատմութիւնն երկայն է, ասաց, բայց որչափ կարելի է կը համառօտեմ՝ գլխաւոր պարագայներն միայն յիշելով: Գիտես որ եղբայրս որ կառավարութեան բարձր պաշտօնիւ դրսերն կը գտնուի, երկու աղջիկ զաւակ ունի՝ մին տասն ու հինգ և միւսն տասուերկու տարուան՝ որոց մայրն մեռած լինելուն՝ զիրենք գիշերօթիկ Բարիզու Այցելութեան կուսաստանն դրած է, հոգն ու հսկողութիւնն քուրերնուս յանձնելով՝ որ հանճարեղ և միանգամայն սուրբ կին մի է: Արդ այս եղբօրորդեակներուս կրտսերն վանքին մէջ հիւանդացաւ, զարմանալի հիւանդութիւն մի՝ որ շատ տեսակ հիւանդութեանց երևոյթներ միանգամայն կ'երևէին վրան, այնպէս որ մայրաքաղքիս ամենէն ճարտար բժիշկներն՝ բան մի չէին կարող հասկնալ: Խեղճ աղայն այրող տենդով մի կը հիւծէր՝ հանդերձ քնածութեամբ ու սաստիկ ցաւովք գլխոյ. այնչափ որ

աչաց տեսութեան զուգահեռականութիւնն ալ խանգարելով՝ տեսածն երկու կը տեսնէր, և պարանոցին ջղերն ալ խստանալով՝ գլուխն այնպէս հակած էր ձախ ուսին վրայ՝ որ երկու ձեռօք հազիւ կարէիր բաժնել, ձախ բազուկն ալ միշտ մարմնոյն ու կողին կպած էր. մարմնոյն մէջքէն վեր եղած մասն բոլորովին իր շարժումն կորուսած էր, սրունքը բոլորովին անդամալոյծ, ամենևին բան ուտելու ախորժակ չունէր, մարսողական անցքերն ալ տկարացած՝ սակաւ մի բան ուտելուն պէս բուռն ջղային ցնցումներ կ'իմանար՝ կրծոց և փորի մէջտեղի դընդերաց. կը տեսնես որ ամեն բան կատարեալ էր, և մեռնիլն բան մի չէր: Ցաւերուն դադրած ժամանակ՝ ուղեցին կառքով դուրս հանել զինքն՝ որ սակաւ մի մաքուր օդ առնու, բայց այնչափ աւրուեցաւ որ շուտով ստիպուեցան ետ դարձնելու »:

« Ժամանակէ մի ետև՝ երբ բժիշկներն յոյսերնին կտրեցին և ինչ առնել ոչ գիտէին՝ հիւանդին հօրաքոյրն ու քոյրն՝ երկուքն ալ լի հաւատով՝ ուխտ դրին որ Աստուծոյ դիմեն՝ որ ամենէն մեծ բժիշկն է՝ որովհետև տէր և արարիչ է կենաց և կենդանութեան, և իննօրեայ աղօթք մի սկսան առ սուրբն Վինդենտիոս Պաւլայեցի՝ որոյ տօնախմբութիւնն կը կատարուէր՝ կարծեմ նշխարաց փոխադրութեան տարեդարձն: Եղբայրս ալ որ բարի քրիստոնեայ մի է եկն եհաս՝ նոցա մասնակից լինելու համար, և որոշեցին որ իննօրեայ աղօթից վերջին օրն՝ հիւանդն 'ի համբոյր նշխարաց սրբոյն տանին՝ որ Լազարեան քահանայից մատուռն դրուած էր 'ի յարգութիւն հաւատացելոց: Աղջիկն ալ որ բան մի ուզելու կամ չուզելու կարողութիւն չունէր՝ այս բանիս հաւանեցաւ՝ առանց շատ հասկնալու թէ ընտանիքն ինչ գործի հետ էին իրեն համար: Ուստի որչափ կարելի էր հագուեցուցել են զինքն և եկե-

ղեցին տանելով՝ կողմնական մատրան մի մէջ դրել են անկողնի մի վրայ, ուր պատարագ տեսնելով՝ իրեններուն հետ հաղորդուել է: Այն ատեն հայրն զինքն գրկելով ծանր բեռան պէս՝ որովհետև շարժելու կարողութիւն չունէր, քրոջս և միւս եղբօրորդւոյս հետ՝ 'ի ծունր իջել է սրբոյն նշխարաց առջև և համբուրել տուել է: Նոյն ատեն տղայն հօրն ասէ. Զիս նստեցո. հայրն առջի բերան չլսելու կը զարնէ՝ ասելով թէ չկարէ նստիլ. բայց աղջիկն քաղցրութեամբ նորէն ասէ. Կարես զիս նստեցնել: Հայրն ալ կը նստեցնէ. հիւանդն քարէ աստիճանին վրայ շիտակ և հաստատ կը կանգնի առանց մէջքն ծռելու և առանց տեղ մի կռթնելու. գլուխն և ուսերն սովորական գիրքն կ'առնուն, ձախ բազուկն մարմնէն կը բաժնուի և սրունքն կը սկսին շարժիլ: Հայրն զայս տեսնելուն բոլորովին շփոթած՝ նորէն կը գրկէ աղջիկն, և անկողնոյն վրայ կը տանի՝ տեսածին չհաւատալով. իսկ տղայն ինքնիրեն ելնելով աղօթագիրք մի կ'ուզէ՝ որ սակաւ մի ատեն դեռ աղօթէ: Այս բժշկութեանս լուրն շուտով մի եկեղեցւոյն մէջ կը տարածուի՝ որ հաւատացելոց բազմութեամբ լի էր, և բոլոր ժողովուրդն ծնկան վրայ կուգան Աստուծոյ փառք և դոհութիւն տալու համար:

« Ես գործ մի ունելով՝ իրենց հետ եկեղեցին չէի կարողացած երթալ, միտքս ալ դրած լինելով թէ ինձ պէս անհաւատ մի բանի պիտի չգար հոն տեղն. ուստի անհամբերութեամբ իրենց դարձին կը սպասէի, որովհետև գործածնին անխոհեմութիւն կը սեպէի, որ իմ խելքովս հիւանդին վիճակն կարէր ծանրացնել: Երբոր դարձան՝ եղբայրս բերաւ հիւանդն գիրկս դրաւ, և իր վրայ երևցած շփոթութենէն ու դիմաց այլայլութենէն՝ այնպէս կարծեցի որ ամեն բան լմնցած էր, և փութով տարի տղայն ան-

կողնոյն վրայ դրի և բարձեր ուզեցի որ ամեն դին տեղաւորեմ, ինչպէս ամեն օր առնէինք: Բայց տեսնելով որ նա անկողնոյն վրայ ել շիտակ կանգնեցաւ՝ սարսափած ետ քաշուեցայ, և դողդոջուն ձայնով և միանգամայն երկիւղիւ և յուսով դոչեցի. Մաթիլտ, թէ որ առողջացար ել ինձ պաչիկ մի տուր: Մաթիլտ մինակ ոտք ելաւ՝ անկողնէն իջաւ, և քանի մի քայլ առնլով՝ եկաւ վիզս պլլուեցաւ՝ երկու ձեռքերովն զիս գրկելով. ես ալ զնա սրտիս վրայ կը սեղմէի՝ որ լանջացս մէջ կը նետէր: Այն ատեն ինքն պատմեց՝ որ սուրբ նշխարաց դպչելուն պէս՝ բան մի զդաց որ պարանոցին ջղերն կ'արձակէին: Շուտով տան բժշկին մարդ ղրկեցին՝ որ գալով հիւանդն զննեց և ասաց որ բժշկուած էր, և եղած պատմութիւնն լսելով՝ ժպտելով մի ասաց. « Սուրբ Վինդենտիոս Պաւլայեցին քան զիս ճարտար բժիշկ մի է եղել »:

« Երկրորդ օրն ժամն ութէն առաջ՝ աղջիկն դրեթէ մինակ հագուեցաւ, և Այցելութեան կուսաստանին մատուռն տարին՝ ուր պատարագ մի մատուցաւ 'ի շնորհակալութիւն. և հաղորդութեան ժամանակ առանց տեղ մի կռթնելու շիտակ մինչև խորանին վանդակին առջև կ'երթայ, ծնկան վրայ կուգայ, ուստի ելնելով նորէն իր տեղն կը դառնայ: Նոյն օրն իր բժշկին այցելութեան գնաց որ նորա իմ թևիս կռթնած սանդուխէն վեր ելնելն տեսնելով՝ նորէն հաստատեց թէ կատարեալ առողջացած էր: Այսօր երեք օր է՝ որ ամենևին ցաւ մի չզգար և տան մէջ կը պտըտի: Ես ալ հիմա տնէն կու գամ և այս նոր լուրս ձեզ կը բերեմ, և ապշութիւնս դեռ անցած չէ տեսածներուս վրայ, և միանգամայն կ'ուզեմ լսել թէ դու փորձ իմաստասէր մի լինելով՝ ինչ կը մտածես այս եղածներուս վրայ: Վասն զի դու ալ գիտես՝ որ մինչև հիմա՝ թէ և կրօնից թշնա-

մի չեմ և զայն կը պատուեմ, սակայն աւելի իմաստասիրաց քովն յաճախել եմ քան թէ քահանայից։ Բայց այս ծանր դէպքիս մէջ՝ որ լսած ու տեսածներովս դեռ բոլորովին այլայլած եմ՝ ինձ կ'երևի թէ եղածն խորախորհուրդ կերպով քննելն հարկաւոր ու պատշաճ է գիտուն և խելացի մարդու մի հետ. ուստի հոս ձեզ գալն աւելի յարմար համարեցայ, քան թէ ուրիշներու երթալ»։

— «Շնորհակալ եմ ձեզ սիրելի զօրապետ, ձեր բարի համարման վրայ զոր ունիք իմ վրաս և որով ինձ կը վստահիք, թէ և կարծեմ որ այս գործոյս մէջ շատ օգտակար պիտի չկարեմ լինել ձեզ. և թէ հարցանես թէ ինչու. համառօտ մի պատասխան տամ. Իմաստասիրութիւնն սկիզբն դրած լինելով որ միայն մտաց և զգայութեանց ըմբռնողութեան ներքև անկած բաներու կարէ միտ դնել՝ գերբնական կամ արտաբնական ասացեալ իրաց քննութեան ժամանակ ոչ կորուսանէ, որովհետև կը համարի թէ զայնս ճանաչելու միջոց և հնարք մի չունի. ուստի կան իմաստասէրք որ իրաւունս ունել համարին նոցա գոյութիւնն ալ ուրանալու, այսինքն գերբնական բան չկայ ասեն. ես մինչև այս կէտս ոչ հասանեմ, որովհետև միտքս դրած չեմ որ մտացս զօրութիւնն իրականութեան և ճշմարտութեան չափն է։ Բաւական կը սեպեմ այս տեսակ իրաց հաստատութիւններն թողուլ ինչ որ են, և զայնս ընդունողներն ալ ոչ մեղադրեմ, որովհետև մտաց և խղճի ազատութիւնն կը պատուեմ, բայց ես իմ կողմանէս նոցա յարգ տալէն կը զգուշանամ։ Միով բանիւ այս և այլ ուրիշ շատ պատճառաց համար որ հիմա բացատրելն աւելորդ է՝ գերբնական ասացեալ բաներն յինէն օտար համարիմ։

«Բաց աստի մեր իմաստասիրական շաւիղն բոլորովին փորձառական լինելով՝ ներածութիւններ և

հետևութիւններ հանելէն առաջ՝ գործն ճշդիւ ստուգելու կը նայիմք։ Արդ այս բանիս մէջ ինչ կը տեսնեմք. նախ ծանր հիւանդութեան մի երևոյթներ՝ որոց վրայ ոչ տարակուսիմք՝ որովհետև իմաստուն բժիշկներ զայնս քննել և հաստատել են ասէք. յետոյ տարօրինակ և յանկարծական առողջութիւն մի, որ է ասել ախտակրական երևութից յաջորդել է՝ առողջութեան երևոյթ մի. սոքա այնպիսի յաջորդական գործեր են՝ որոց ներքին կապակցութիւնն ոչ տեսանեմ. և բան մի չկայ որ ինձ ապացուցանէ թէ սոքա իրարմէ կախումն ունին, կամ ուրիշ կերպ խօսելով ոչ կարեմ համարիլ թէ առողջութեան դարձն՝ այդ ասացած բարեպաշտական գործերէդ յառաջ եկած լիցի. 'ի միոյն միւսն հետևցնելն ինձ յանդգնութիւն կ'երևի, և շատ կը վախեմ որ մի գուցէ այն իմաստակութեան մէջ անկանիմք որ ասի յետ այսորիկ՝ ապա վասն այսորիկ։ Վասն զի վերջապէս առողջութեան պատճառն մեզ անծանօթ լինելով՝ կարեմք զայն՝ նոյնչափ իրաւամբ՝ նախընթաց դեղերէն յառաջ եկած սեպել, կամ բնութեան բուռն ճըգանց՝ որ այն պարագայներով գրգռուել է, կամ թէ ...»։

— «Բայց, սիրելի իմաստասէրս, գոչեց խօսքս կտրելով, կարծեմ յառաջուց քեզ ասացի՝ որ վեց ամսէ 'ի վեր ամեն դարմաններն անօգուտ եղել էին, և խեղճ աղայն վատէն 'ի վատթարն կ'երթար։ Իսկ պարագայից ազդեցութեան գալով՝ որ իր գլուխն տաքցնելով երևակայութիւնն կարէին բորբոքել, ապահով եղիք որ Լազարեանց մատուռն երթալու կամ չերթալու համար հիւանդն բոլորովին անտարբեր էր, և երբ իրեն առաջարկեցին պարզապէս հաւանեցաւ՝ իւր կողմանէ յատուկ կամք մի չունելով, որովհետև արդէն այնչափ տկարացել էր՝ որ այս որոշմանս կարողութիւն չ'ունէր»։

— « Թող այնպէս լիցի, սիրելի զօրապետս, սակայն նորէն կը զրուցեմ՝ բնութիւնն շատ մեծ հնարք ունի, և երբեմն հիւանդն՝ բժշկաց յոյսն կտրած ժամանակ և ամենէն ազդու դեղերն անզօր եղած ատեն, բնութիւն այնպիսի զօրաւոր ճիգ մի կ՚ունենայ՝ որ ինքն իրեն կը յաղթէ բժշկաց և դեղոց բան մի առնել չկրցած ատեն: Եղած են մարդիկ որ մեռել կարծուելով թաղուելու ատեննին՝ կեանքն արթնցել է և կարեմ ասել թէ գերեզմանէն դուրս քաշել է զիրենք: Եւ սակայն չեմք կարող ասել թէ այս բաներս հրաշքով եղել են, որովհետև բնութեան ուժով միայն կարեմք մեկնել զայնոսիկ » :

— « Վերջապէս, ասաց զօրապետն իւր անհամբերութիւնն հազիւ բռնելով, բան մի ալ հարցանեմ քեզ՝ բայց խնդրեմ անկեղծաբար և վճռաբար կը-տրուկ կերպով պատասխանես. վասն զի ես զինուոր լինելով՝ ձեր ամեն պատճառաբանութիւններն՝ և բնազանցական նրբաբանութիւննիդ չեմ կարող ըմբռնել, թէ և կը հաւատամ թէ ես ալ իմաստասիրաց չափ ողջմտութիւն ունիմ. հիմա ինձ զայն ասա՝ Աստուծոյ գոյութեանն կը հաւատա՞ս որ արար զերկինս և զերկիր, և որ կառավարէ զնոսա իւր նախախնամութեամբն » :

— « Անտարակոյս » պատասխանեցի :

— « Ապա ուրեմն կը հաւատաս ալ թէ ինքն է տէր կենաց և մահու՝ ուստի և որո՛ւ ալ ուզէ առողջութիւն կուտայ՝ երբ հաւատով և եռանդեամբ զայն կը խնդրեն: Արդ եղբայրս, քոյրս և եղբօրորդւոցս մեծն և շատ բարեպաշտ հոգիներ՝ բոլոր սրտանց ինն օր այս բանս խնդրեցին՝ բարեխօսութեամբ Սրբոյն Վինգենտիոսի Պաւլայեցւոյ՝ որ քրիստոնէական սիրոյ դիւցազն է. այնպիսի մեծ սուրբ մի՝ որ եթէ երկինք գնացող կայ՝ անշուշտ ինքն առջինն է: Ապա ինչո՛ւ ոչ կամիս որ այս սրբոյս օգնութեամբն

ընդունած լիցին այս առողջութիւնս՝ զոր այնչափ թախանձանօք և խոնարհութեամբ կը խնդրէին, և զոր բոլոր բժշկական գիտութիւնն չկարաց տալ: Ես կը խոստովանիմ որ այս բանս ինձ շատ պարզ բան մի կ՚երևի՝ եթէ ամենակարող և ամենողորմ Աստուած մի կայ՝ որ իւր խեղճ արարածոց աղօթից կը լսէ: Բա՛բէ, երբ ես սրտանց բան մի ձեռք ձգելու կը փափաքիմ՝ ուստի այլոց վնաս մի չկայ, և տէրութեան նախարարն իմ աղերսագրիս պատասխան ոչ տայ կամ ունայն խօսքերով զիս կը խաղցնէ՝ շտկէ շիտակ թագաւորին կը դիմեմ, և երբ յաջողիմ իր սիրտն իմ վրաս շարժելու՝ ո՛վ կարէ զինքն արգելուլ որ ուզածս չտայ, մանաւանդ երբոր իր մտերիմներէն և հաւատարիմներէն մարդ մի ձեռք առնում որ ինձ օգնէ: Այսպէս արարին այն բարի հոգիներն ալ երկնից և երկրի թագաւորին առջին, և իր հաւատարիմ և լաւագոյն բարեկամներէն միոյն օգնութեամբն՝ խնդրած շնորհքնին ընդունել են. այս բանս ինչո՛ւ պիտի չլինի » :

— « Դարձեալ ասեմ, զօրապետ, քոյ զգածումդ կը պատուեմ, և դէմ խօսիլ ոչ կամիմ. դու բոլորովին ազատ ես այս առողջութիւնս հրաշքով եղած սեպելու, ինչպէս ուրիշներն ալ ազատ են չհաւատալու: Բայց այս բանս կարծածիդ պէս պարզ բան մի չէ, և թէպէտ բերած օրինակդ՚ի միոյ կողմանէ ճիշդ երևի՝ սակայն շատ անպատշաճութիւններ ալ կան մէջը՝ ուսկից շատ հերքելի հետևութիւններ կ՚ելնեն իմաստասիրութեան մէջ: Մանաւանդ գիտես որ նմանութիւնն պատճառաբանութիւն չէ, և միշտ մի կողմն կը կաղայ ու պակասաւոր է: Եւ մաքէդ անդամ ոչ անցանէ՝ որ այսպէս ասելով՝ բնազանցութեան ամենադժուար ու կնճռեալ խնդիրներն կը բանաս՝ ոչ միայն բնականի և գերբնականի վրայ, այլ և արարչին և արարածոց մէջ եղած Լյարաբերու-

թեան, տիեզերական և հարկաւոր օրինաց՝ որով աշխարհս կը կառավարուի և այնոր սքանչելի կարգն յառաջ կուգայ, և որ անդադար պիտի խառնակէր՝ եթէ մահկանացուաց աղօթքն կարէին այնոր ընթացքն փոփոխել: Հիմա մեք ժամանակ չունիմք այս ամեն խնդիրներն յուզելու՝ զորս իմաստասէրք միշտ 'ի քնին առած են՝ քանի որ խելքերնին սկսել են գործածել, և որոց ստոյգ լուծմունքն չեն գտած, թէպէտ շատ վիճաբանել են և գրքերով աշխարհս լեցուցել են. միայն դժուարութիւններն յառաջ կոչելու և հաւաքելու համար՝ ամիսներ պէտք են, և ոչ կարծեմ թէ դու յօժարութիւն և ժամանակ ունենաս այս բաւղիս մէջ մտնելու »:

— « Իրաւցնէ ոչ, պատասխանեց խստութեամբ, ոչ ժամանակ ունիմ, ոչ փափաք և ոչ ալ միջոց: Աւելի կ'ուզեմ տեսածիս համոզման մէջ մնալ, և զարմանաց և երախտագիտութեան զգածումս պահել՝ այսպիսի տարօրինակ բարերարութեան մի՝ որ այսպիսի հրաշալի ճամբով իմ ընտանեացս շնորհեցաւ: Սակայն, սիրելի իմաստասէր, ես ալ իմ կողմանէս շնորհակալութիւնս ձեզ կը մատուցանեմ ձեր անկեզծութեանն համար, որովհետև խօսքերնուս սկիզբն ինձ ասացել էիք՝ որ պիտի չկարէիք կերպիւ իւիք ինձ օգնել իմ տատամսութեանս՝ որոյ մէջ գտանէի այս յանկարծական և անակնկալ բժշկութիւնս տեսնելով. և կը տեսնեմ որ խօսքերնիդ ճիշդ պահեցիք, որովհետև ներս մտած ատենս ինչ որ գիտէի՝ դուրս ելած ժամանակս ալ աւելի բան մի չսովրեցայ: Եւ սակայն որչափ ալ ձեր առարկութիւններն ու պատճառաբանութիւններն միտքս սակաւ մի պղտորեցին, այսու ամենայնիւ իմ հոգւոյս ներսէն աւելի որոշ ձայն մի կը լսեմ՝ որ կը բողոքէ ու կը վկայէ որ այդ գործին մէջ գերմարդկային բան մի կայ՝ զոր դուք ալ ինձ պէս ոչ ըմբռնէք. և սա-

կայն ես այնոր տպաւորութիւնն կենդանի կերպով կը զգամ այն երջանկութեամբ զոր կ'իմանամ այս սիրուն զաւակս ողջացած տեսնելով՝ զոր ես արդէն մեռած կը համարէի »:

— « Ես ալ ձեզ ուրախակից եմ, զօրապետ. բարեհաճեցէք ձեր գերդաստանին ալ իմ ուրախակցութիւնս յայտնելու իւր բարօրութեանն համար, ինչ պատճառէ յառաջ եկած ալ որ լինի »:

Այս ասելով՝ պաղ կերպով իրարմէ բաժնուեցանք, ինքն իմ իմաստասիրութեանս վրայ գոհ չլինելով՝ ուստի նոր բան մի չէր սովրած, և ես ալ շատ ուրախանալով որ իր սարսափելի պարզմտութենէն ազատեցայ, և անդիի աշխարհի խնդրէ մի զիս ճողոպրեցի՝ որ արդէն մեծ մտատանջութիւն է ինձ:

Զգուշաւոր քննութիւն

26 Յուլիս:

Երեկուան օրն սա քաջ զօրապետն ինձ արիւն քրտնել տուաւ իւր հրաշքովն, ու ոչ գիտէի ինչպէս մէջէն ելնեմ, և կարծեմ թէ շատ պզտի անկայ և ասացածս չգիտցայ՝ ինչպէս որ յինէն բաժնուելու ժամանակ իր պաղ կերպէն ալ յայտնի էր թէ տժգոհ մեկնեցաւ յինէն: Ինքն ինձ խորհուրդ հարցընելու եկել էր, ինչպէս որ շատ անգամ կը պատահի, և կ'ուզէր որ պատճառաբանութեամբ զինքն համոզեմ իր հաւատացած բանին վրայ՝ զոր աչքով տեսած կը համարէր, և ես ուրիշ բան չարարի՝ բայց եթէ փախստեան ու թագստեան ճամբայներ բընտռել, և դատաստանական բացառութիւն մի դնելով առջին՝ յայտնել որ այն խնդիրն իմ կարողութենէս դուրս էր և ինձ ոչ վերաբերէր:

Իմաստասէրք գերբնական ասացեալ բաներու ոչ զբաղին, ասացի, որովհետև միտքն բնութենէ վեր սեպուած իրերն ոչ ըմբռնէ: Եւ յիրաւի սովորաբար այսպէս ասեմք. բայց ինք կարէր ողջմտութեամբ ինձ պատասխան տալ. և ինչո՞ւ ոչ զբաղիք՝ երբ իրն հաստատեալ և ստուգեալ ինչ է, որպէս այն զոր ես աչօքս տեսի. կարծեմ թէ ձեր աշխատանքն պարապ ոչ երթար՝ գոնէ պատրանքն փարատելու և խարդախութիւնն խայտառակելու համար՝ թէ որ յիրաւի խարդախութիւն կայ իրին մէջ՝ ինչպէս որ կ'ուզէք հասկացնել՝ առանց բերնով զրուցելու ալ համարձակելու:

Եւ սակայն իր պատմածն ալ յիրաւի կարգէ դուրս բան մի է. և որովհետև ուղիղ և ճշմարտախօս մարդ մի ճանչցած եմ զինքն, և մինչև հիմա կրօնական բաներու ալ կողմնակից եղած չէ՝ իր վկայութեան վրայ չեմ կարող տարակուսիլ: Իրն բացատրելու համար տուած սովորական պատճառներուս ես ալ մտքովս համոզուած չեմ, ինչպէս որ սովորաբար կը հանդիպի նոցա՝ որ գերբնական բան ոչ ընդունին: Այո, կան հիւանդներ որ յանկարծակի կը բժշկուին առողջարար ճգամբ մի՝ զոր բժիշկք չէին կարող գուշակել, և որ բնութեան հզօր ազդեցութենէն յառաջ կուգայ. դարձեալ այս ալ կ'ընդունիմ որ երևակայութիւնն զգայութեան գրգռումն և կիրք իրենց բարոյական ազդեցութեամբն մարմնոյ բնական կազմութեան վրայ ազդելով՝ կարեն հիւանդութեան յաղթել. բայց այս դիպուածիս մէջ ոչ ճիգն կայ ոչ կիրք և ոչ գրգռութիւն, բայց եթէ թերևս հիւանդին մերձաւորաց վրայ. իսկ տղայն հանդարտ անզգայ և գրեթէ անխտիր է եղել. ապա չեմք կարող ասել թէ ինքն կամ ուրիշներն այնոր գլուխն տաքցուցել են:

Վերջապէս իմ բոլոր առարկութիւններս երկու

բան կը նշանակէին. առաջին որ ես հրաշք ասացեալ իրէն բան մի ոչ հասկանայի կամ թերևս ոչ ուզէի հասկանալ, և երկրորդ եթէ սակաւ մի տեղիք տայի զօրապետին կարծեացն՝ իմ խօսքս իբրև վկայութիւն պիտի գործածէր իմ բարեկամացս առջև. և այն ատեն ժողովրդեան առջին իմ իմաստասիրութիւնս ստկի մի լինէր, մանաւանդ անսանձ ազատամտաց դիմացը՝ որ ուխտ դրած են գերբնական ասացեալն մերժելու, որովհետև ամեն դրական կրօնից հիմն է. տես թէ սա բարի զօրապետն առանց ուզելու ինչ թակարդի մէջ պիտի ձգէր զիս: Թէ որ այն թակարդին մէջ անկած լինէի՝ հիմա բոլոր աշխարհք իմ դարձիս լուրն ալ այն հրաշից պատմութեան հետ տարածուած էր, և իմ բարեկամներս պաշտօնակիցներս աշակերտներս և բոլոր համալսարանի անդամք զիս իմաստասիրութեան ուրացող պիտի համարէին, և ԺԷՂՈՒԻՖ անունն ինձ պիտի տային. և օրագիրներն ալ ամեն բանի պարսաւագէտ և բծախընդիր լինելով՝ չարութեամբ իմացնել պիտի ջանային այն բաներն՝ զոր բացայայտ ասել ոչ համարձակին:

— Լաւ արարի ուրեմն որ թակարդէն մանաւանդ թէ վտանդէն փախայ ազատեցայ. որովհետև զօրապետն յանցանք չունի այս բանիս մէջ: Բայց մինչև որ ազատեցայ՝ ինչ քաշեցի. և դեռ խղճմտանքս հանգիստ չէ, և զիս կը յանդիմանէ ասելով թէ ինձ օգտակարն ճշմարտէն աւելի վերագասել եմ. իրաւ հրաշքն բացէ 'ի բաց չմերժեցի և ոչ ալ ծաղրի դարձուցի, բայց այսպէս չառնելս ալ աւելի 'ի պատիւ երեսաց զօրապետին էր՝ որ կարէր զայրանալ եթէ զինքն միամտի և ստախօսի տեղ դնէի, քան թէ 'ի պատիւ ճշմարտութեան. ոչ այո՛ ասացի ոչ ո՛չ, բայց աւելի ո՛չ քան թէ այո՛, և այս ալ ուրիշ բանի համար չէ՝ բայց եթէ 'ի նախապաշարմանէ ձգեալ և առանց հաստատ պատճառի. և ահա երեկուանէ 'ի վեր խիղ-

ճըս կը զարնէ, ու խորունկ ձայնով մի ասէ. Գոնէ կարել նետելէն առաջ քննէ սա խնդիրն, և որով հետև իմաստասէր եմ ասես այսինքն ամեն բանի մէջ ճշմարտութիւնն և իմաստութիւնն բնառող՝ 'ի նախապաշարմանց և 'ի մարդկային նկատմանց վեր բարձրացո՛ միտքդ, և ջանա՛ խորախորհուրդ և անկեղծ մտածութեամբ ինքզինքդ համոզելու։ Այս, խիղճս իրաւունք ունի, և իր հրամայածն պէտք է որ առնեմ. իմաստասէր եղողն գոնէ ինքն իրեն մտածելու է, և ինչ որ կը խորհի զայն հաստատելու է։

Հնարաւորութիւն սքանչելեաց

1 Աւգոստոս։

Յետին դարու յիմաստասիրաց շատերն հրաշից դէմ հակառակեցան, մեր դարու իմաստուններէն ալ ոմանք բացարձակապէս զայն կ'ուրանան՝ յորս են բնութենականք, զգայականք, համաստուածեանք և դատաքննողք, ուրիշներն ալ թէպէտ և բոլորովին ոչ մերժեն՝ սակայն կասկածելի կը համարին, և ինչ ասելիքնին չգիտելով՝ լաւ կը սեպեն չտեսնելու զարնել և ամենևին այնոց վրայ չխօսիլ, և երբ հրաշից վրայ խօսք բացուի՝ բաւական կը սեպեն ժպտելով մի անցնիլ վրայէն, այսպիսիք են ոգևորական բանաւորականք, կիսապլատոնականք և ընտրողականք. այս վերջիններուս մէջ եմ ես ալ՝ ինչպէս որ երևցաւ զօրապետին հետ խօսածներէս, որ խնդրէն փախուստ տալ ուզեցի՝ որպէս զի վիճակիս անպատուութիւն մի չբերեմ, ինչպէս որ իմ հրապարակական դասախօսութեանցս մէջ և ուրիշ խօսակցութեանցս ատենն ալ առնէի՝ երբ այս նիւթոյս վրայ խօսք կը բացուէր։ Բայց հիմա պէտք մի կը զգամ

ուղղակի այս խնդրոյս վրայ մտածել առաջի Աստուծոյ և խղճիս՝ որ այս բանս յինէն կը պահանջեն, ալ մարդկային նկատման և կաղ 'ի կաղ կիսկատար ճամբայներու մէջ մոլորելու ատենն անցաւ. հարկ է որ համարձակ ինքզինքս որոշեմ հաստատական կամ բացասական կողմն. ուստի հիմա քննեմ այս խնդիրս թէ արդեօք ճշմարիտ հրաշք եղա՞ծ են՝ թէ ամեն հրաշք սեպուած բաներն դիւրահաւանութեան երևակայութիւններ կամ կեղծաւորութեան հընարք են։

Հիմա ես ինձ ճառ մի գրել չէ միտքս՝ ամեն կարդացածներս համառօտելով, և իրարու հակառակ պատճառներն իրարու դիմաց շարելով. վասն զի այս կերպով հաւանական է որ հետևանք մի չկարացից հանել, հակառակամարտ պատճառներն զիրար ջրելով։ Այս կերպս դասախօսութեան և գիրք մի յօրինելու լաւ կը յարմարի՝ որոց մէջ մարդ կ'ուզէ հըմտութիւն ծախել և անկողմնակցութիւն երևցնել։ Իսկ իմ վախճանս իմ ներքին ատենիս կամ խղճիս առջև միտքս հարցփորձ առնել է, որպէս զի այնոր մտածածն ճանչնամ՝ կողմնակցութեան ոգին և շրջակայիցս կարծիքն 'ի բաց թողլով։

Ամեն օր կը լսեմ և քանի մի օրագրաց և քննադատական գրուածոց մէջ կը կարդամ թէ գերբնականի վրայ հակաճառելն աւելորդ է՝ վասն զի անկարելի է, և իմաստասիրութիւնն անտեղութիւններն խնդրոյ կարգ անցընելը չէ։ — Ես ոչ երբեք համոզուած եմ որ գերբնականն անկարելի է. վասն զի վերջապէս եթէ բառերն նշանակութիւն ունին՝ գերբնական ասացեալն ալ պիտի նշանակէ բան մի որ 'ի վեր է քան զբնութիւն, բնութիւն ասելով ինչ որ հասկնամք յաշխարհիս և 'ի մարդկութեան։ Արդ՝ (զբնութենականս և զհամաստուածեանս 'ի բաց թողեալ՝ որոց հետ չէ հիմա խօսքս) իմաստասէրք որք

կը հաւատան 'ի մի Աստուած արարիչ և պահպանիչ տիեզերաց՝ չեն կարող չընդունիլ որ վերագոյն աշխարհ մի կայ՝ ուստի սկիզբն առնուն այն օրէնքն որ մեր աշխարհս կը կառավարեն, և անտի յառաջ կու գան իր կարգն և օրինաց հաստատութիւնն: Աստուած որ ոչ յումեքէ կախումն ունի՝ որովհետև ինքն է Էակն էակաց, ստեղծ վասն զի կամեցաւ. ապա թէ ոչ Աստուած ոչ լինէր, և իւրով անհուն իմաստութեամբ և ամենակարողութեամբ կը զեկավարէ զարարածս, ապա թէ ոչ նախախնամութիւն ալ ոչ լինէր: Ապա ուրեմն վերագոյն քան զօրէնս բնութեան՝ կայ իմաստութիւն մի որ ծանեաւ զնոսա, և կամք մի որ հաստատեաց զնոսա, և որ պահէ զնոսա իւր անդադար գործովն՝ որպէս զի չտկարանան և իրենց գործէն չխոտորին:

Ինձ կ'երևի թէ չեմք կարող զլանալ Աստուծոյ նաև զկարողութիւն ուղղակի և անմիջնորդաբար գործելու՝ որոշեալ պարագայի մէջ՝ արտաքոյ սովորական կարգի այսոցիկ օրինաց, երբ ինքն հարկաւոր կը համարի զայն առ 'ի բացայայտագոյն ցուցանել զխորհուրդս իւր և 'ի մեծագոյն օգուտ իւրոց արարածոց: Օրէնսդիրն հարկ է որ իշխանութիւն ունենայ նոցա գործադրութիւնն չափաւորելու, ընթացքնին առ վայր մի 'ի կախ թողլու կամ ինչ ինչ պարագայից մէջ սովորական ընթացքէն դուրս ալ գործելու, և այս զարտուղութիւններս հանրական օրէնքն ոչ եղծանեն՝ որ մնացած ամեն բաներու մէջ դարձեալ իր սովորական հաստատութեամբն յառաջ կ'երթայ և կը բանի: Մարդկային զեկավարութեանց մէջ այս բանիս խելքս կը հասնի, ինչու ապա աստուածային կառավարութեան մէջ պիտի չհասնի: Ամենաճիշդ սահմանադրական կառավարութիւն մի ենթադրէ, յորում ամենայն ինչ պիտի գործադրուի դրական օրինացհամեմատ գրուած օրէնսդրու-

թեամբ, մի թէ այն կառավարութեան մէջ դիպուածներ ոչ լինին որ իշխանն բացառութեամբ ինչ գործէ՝ առանց սովորական միջնորդաց, գոնէ մեծ վտանգաց ժամանակ և հասարակապետութիւնն ազատելու համար: Նաև սովորական վիճակի մէջ ալ՝ շնորհս առնելու իրաւունքն՝ որ ամեն տեղ պետական իշխանութեան յարակից է՝ օրինաւոր արդարութեան զարտուղութիւն մի չէ՞, և մի թէ այն իրաւանց մէջ ոչ բովանդակի ոմանց ներելու և այլոց զլանալու իշխանութիւնն ալ ըստ բարեհաճութեան գլխոյ պետութեան՝ արտաքոյ գործադրութեան օրինաց և ատենից: Եւ սակայն ոչ երբէք ասեմք և մեղադրեմք թէ շնորհս առնելու իրաւունքն աղիկամի ինչ է, և ոչ համարիմք բնաւ թէ այնու ընկերութեան օրէնքն կը խախտին և հանրական կարգն կը շփոթի:

Թերևս ասասցեն թէ այս դիպուածներս յառաջագոյն նկատուած են սահմանադրութեանց մէջ և ըստ այսմ օրինաւոր են. բայց ո՛վ մեզ ասէ թէ հրաշից բացառեալ գործերն ալ յառաջագոյն նկատեալ չէ՞ն 'ի կանխագիտութեանն Աստուծոյ. խելքն իսկ մեզ կը ստիպէ այս բանիս հաւատալու՝ որովհետև Աստուծոյ գիտութիւնն տիեզերական և անհուն է: Եւ եթէ առարկեն թէ պետք՝ իրենց շնորհս առնելու իրաւունքն՝ միայն ընկերութեան և մարդկութեան օգտին համար գործ կ'ածեն, կարեմք վստահաբար պատասխանել թէ՝ Աստուած ալ յօգս և ըստ քմահաճութեան հրաշք ոչ գործէ, այլ իւր ամենակարողութեան տարօրինակ գործերն՝ որ 'ի վեր կամ արտաքոյ են բնական օրինաց և առանց միջնորդի սովորական գործեաց եղեալ՝ միշտ այս վախճանիս համար է՝ որ իւր ճշմարտութիւնն արդարութիւնն ու բարութիւնն աւելի յայտնի երևին: Ուստի սկզբամբ այս ամեն բան ինձ բանաւոր կ'երևի, մանաւանդ թէ խորախորհուրդ քննելէն ետև՝ խելքս ոչ հասանէ որ

իր հայրն հօրաքոյրն և քոյրն և բարեպաշտ կանանց խումբ մի միաբանութեամբ և եռանդեամբ լինն օր կը պաղատին սրբոյ մի պաշտպանութեան ներքև՝ որ ժամանակիս ամենէն աւելի ժողովրդեան սիրելի սուրբն է: Հիւանդն ալ իրենց հետ հաւատոք կը միանայ առանց շտապելու, այնպես որ իր վրայ ե- ղելաւ փոփոխութիւնն՝ իւր երևակայութեանն բուն- կելուն և հոգւոյն ամբոխուելուն ոչ կարեմք տալ: Ջինքն սրբոյն նշխարաց տանելով՝ գալիլ համբուրել կուտան, և ահա յանկարծ մանուկն որ ինքն իրեն հետակ չէր կարող կալ՝ կ'երթիկ կը նստի, յետոյ կը սկսի քալլել, և վերջապէս ամեն կենսական շարժ- մունքն կը սկսին՝ որպէս առաջ եղած ժամանակին:

Եթէ գեղոյ գործածութեամբ յառաջ եկած լե- ինէր այս բանս՝ առողջութիւնն այն նիւթոց զօրու- թեանն պիտի արուէր: Բայց ան առեն ալ ես կա- րէի հարցանել բժշկին՝ թէ ինչպէս այն նիւթերն այս արդիւնքն յառաջ բերել կին, որ անշուշտ և- թէ անկէղծ մարդ էր պիտի պատասխաներ թէ ինքն պատճառն ոչ գիտէ, բայց փորձն հաստատած էր որ այն ինչ նիւթերն այս ինչ զօրութիւնս ունին՝ որ քան վամենայն զօրութիւն անխմանալի և ծածուկ է: Վասն զի մարդ չկայ որ կարասցէ ասել թէ ինչուս քինքինային ջերմն կը բժշկէ, ինչպէս որ չգիտցուիր թէ ինչուս մեկոնն քունն կը բերէ, բայց եթէ Մոլիե- րի բժշկին ասացածն կրկնելով. Վասն զի փաթէր զօրու- ներն ունի: Այսպա ուրեմն սովորական բժշկութեանց մէջ ալ՝ խորհրդաւոր զօրութիւն մի է ազդողն՝ զօ- րացնելով կամ ազատելով զբնութիւնն ընկճեալ՝ ի հիւանդութենէ, որ այս վերջինս ալ գործել դե- ղին զօրութեան պէս անյայտ բան մի է: Միայն թէ ըստ կարգի բնութեան այս կենդանարար զօրութիւնն՝ որ ուրիշ ամեն զօրութեանց և կարողութեանց պէս, կենաց և ուժոյ սկիզբն յառաջ կու գայ, կը փոխ-

հրաշք ասացեալն անկարելի լինի: — Այսպա ուրեմն ինձ բանաւոր կ'երևի ասելն որ՝ հրաշքն տարօրինակ ինչ գործ է՝ արտաքոյ և՝ի վեր քան զօրինս բնու- թեան եղեալ, և զոր չէ մարթ մեկնաբանել բնական իւրիք պատճառաւ, որով յայտնի երևի թէ ուրեմն յառաջ գայ՝ի գերբնական ինն զօրութենէ:

Հիմա կը մնայ քննել թէ այս բնութեան ոյժէն և պայմաններէն վեր եղած գերագոյն զօրութիւնն ինչ- պէս կը ներգործէ. խնդրոյն մեծին կողմն այս է. բայց մի թէ աւելի պայծառ կը տեսնեմք բնական և- րայ շաւին բացատրութիւնն, մանաւանդ բնութեան երեք պետութեանց (հանքայ, բուսոյ և կենդանեայ) մէջ եղած կենայ երևոյթներուն բացատրութիւնն՝ որ այնչափ զանազան և խառնաշփոթ են, մի թէ արարածոյ յոչնչէ ստեղծուելուն խելամիտս կը հասնի՞, որովհետև պէտք է որ աշխարհս սկզբնա- ւորութիւն մի ունենայ. ու ինչպէս կը բացատրեմք նախախնամութեան անդադար գործադրութիւնն ալ որ զաշխարհս՝ի կարգի կը պահէ՝ այսչափ հակա- ռակութեանց և արգելից մէջ: Ես միշտ զարմացած եմ որ մեր միաքն կը պահանջէ որ գերբնական աշ- խարհին ամեն բանին խելք հասցնէ, երբ բնութեան շատ բաներուն մէջ գեռ բոլորովին ապեր է: Սա- կայն տեսնեմք թէ հրաշալի ասացեալ գործոց կա- տարման մէջ որչափ բան կարեմք ըմբռնել:

Օրինակ առնուեմք յանկարծական և անակնկալ բժշկութիւն մի, որովհետև ներկայ խնդիրս ալ այս է. ոչ կարեմ ուրանալ որ այս աղջկանս դիսպուանին մէջ ամեն պարագայներն գերբնական ազդեցութեան կողմն են. վեց ամիս՝ի վեր մահացու հիւանդ էր. և ինչպես ամենէն հաչակաւոր բժիշկներն իրենց գի- տութիւնն գեղերն ու դարմաններն վատնեցին, այս- պէս հիւանդին ընտանիքն ալ Աւետարանի տեսատես հնոջ պէս իրենց ստացուածքն ու ինչքն ծախեցին:

անցի 'ի հիւանդն միջնորդաբար այսինքն 'ի ձեռն առողջարար նիւթոց՝ զորս դեղադործութիւնն հանէ 'ի զանազան պետութեանց համագոյիցս այսինքն 'ի հանքաց 'ի բուսոց և 'ի կենդանեաց։ Ապա ինչո՛ւ նոյն զօրութիւնն պիտի չկարէ գալ անմիջնորդաբար 'ի նոյն սկզբնէ կենաց՝ եթէ կարողասցուք դիմել առ նոյն ինքն աղբիւրն։ Եւ որովհետև ամենայն կեանք յԱստուծոյ կուգայ, ո՛վ կարէ զինքն արդիլել որ ինչ ինչ դիպաց մէջ՝ իւր գթութեան բացայայտ կամօքն կամ առ 'ի յայտնել զփառս իւր՝ ուղղակի և առանց միջնորդի չգործէ, ճառագայթիւ միով ևեթ իւրոյ կարողութեանն, կամ բանիւ միով կամ որ և է կերպիւ՝ խեղճ արարածոյ մի վրայ՝ որում սովորական դարմաններով օգնութիւն մի չեմք կարող առնել, մանաւանդ երբ եռանդուն աղօթիւք կը ջանամք այն արարածոյն վրայ դարձուցանել իւր աչքն և շնորհքը։ Բժիշկներն և իրենց դեղերն՝ բնութեան սովորական կարգաւ՝ մինչև աստիճան մի պաշտօնեայք և գործիք են կենաց. ինչո՛ւ չգտուին այլ պաշտօնեայք և գործիք դերագոյն աստիճանի՝ աներևոյթ պարունակի մի մէջ, և հետևապէս դերբնականք։ Մի թէ իմաստասիրաբար ևս ստիպուած չե՞մք ընդունելու թէ Աստուծոյ և մարդուս մէջ տեղն ամբողջ դասակարգութիւն մի կայ ոգեղէն էակաց՝ զորս կ'ուզես հրեշտակ անուանէ, կ'ուզես ուրիշ բան, որք պաշտօնեայք և դեսպանք են Բարձրելոյն 'ի ղեկավարութեան տիեզերաց։ Եւ մի թէ կաթողիկէ հաւատքն ալ ո՞չ ուսուցանէ՝ որ աշխարհիս մէջ սրբոց կարգն անցնող մարդիկ ալ՝ որ սուրբ կամ երանեալք կոչին՝ յերկինս հասնելնուն պէս հաղորդակից լինին զօրութեան և պաշտամանց հրեշտակաց՝ որպէս և երանութեան նոցա. և այս բաներուս դէմ առարկելու բան մի չունիմ։ Արդ այս մարդկային հրեշտակներէն մին եղած լինելու է՝ որ այս պարագայիս մէջ պաշ-

տօնեայ եղել է այս բժշկութեանս՝ որ իր գերեզմանին վրայ կատարուել է. և յիրաւի եթէ հաւատամք որ 'ի վարձ իւր առաքինութեանցն և իւր մաքրութեան մտեալ է նա 'ի ժառանգութիւն նոյն ինքն աստուածային կենաց, ինչո՛ւ պիտի չկարէ իւր միջնորդութեամբն՝ զոր այնչափ հաւատքով կը խնդրէին հաւատացեալք, ճառագայթ մի միայն ընդունիլ այն կենաց, կամ շնորհք մի այն հիւանդին համար։ Այս ամեն բանիս մէջ անկարելի և անտեղի բան մի ոչ տեսանեմ. որովհետև կաթողիկէ հաւատքն սկիզբն դրած լինելով՝ նոյն իսկ բանավարութիւնն կամ միաքն չկարէ այնոր հետևութիւններն մերժել։

Եթէ երէկ այս բանս իմ քաջ զօրապետիս ասէի՝ մեծ շինութիւն և ուրախութիւն պիտի լինէր իրեն, բայց ինքն խնդիրն առաջարկելու ժամանակ՝ ես դեռ այս բանս յայտնի ոչ գիտէի. և իր հրաշք ասացելովն յանկարծակիի գալով՝ զոր կարծես թէ գլխուս կը զարնէր, ես ինքզինքս ժողվեցի և զգուշացայ որ մի գուցէ պատիւս կորուսանեմ, այնոր համար շուտով իմաստասիրութեան կրկնոցս վրաս առնլով՝ ծանր կերպ մի ցուցի իրեն։ Իսկ այսօր կրկնոցս հանելով՝ որովհետև ես ինձ իմաստասէր երևելու պէտք մի չունիմ, եղածն աւելի պարզ կը տեսնեմ, և խելքս կը հասնի որ կերպիւ իւիք կարեմք զայն բացատրել։ Եւ յիրաւի ինչ որ այս յանկարծակի բժշկութեան վրայ ասացի՝ նոյնն կարէ յարմարիլ այն ամեն բաներու որ հրաշալիք ասին, որք վերջապէս ուրիշ բան չեն բայց եթէ աստուածային գործ՝ որ իրաց բնական կարգին մէջ կուգայ կը մտնէ՝ բնութեան օրէնքէն դուրս կամ 'ի վեր, առ 'ի յայտնել աւելի պայծառութեամբ զամենակարողութիւնն Աստուծոյ՝ շնորհելով ոմանց այնպիսի բարիք որ 'ի վեր է քան զամենայն հնարս մարդկայինս և քան զամենայն զօրութիւնս աշխարհիս։

Սակայն եթէ այսօրինակ գործեր կան՝ որ երևի թէ անհերքելի են, առաջին առնելիքն այն է որ մարդս չխաբուելու կամ չխաբելու համար՝ զնոսա լաւ մի ստուգէ ամենայն խնամքով և խիստ դատաքննութեամբ. և որովհետև սոքա ալ ուրիշ գործերու պէս պատմական իրեր են՝ ուստի դատաքննութեան ամեն կերպերն ալ նոցա վրայ գործածելու է: Լսել եմ որ Եկեղեցին խիստ կերպով կը քննէ այն հրաշքն որ կը պահանջուին երանելեաց սրբութեան ապացոյց լինելու համար, և այնպիսի վկայներ կը բնտռէ որ ոչ խաբող լիցին և ոչ խաբուած: Եւ յիրաւի քանի որ Աւետարանն կը կարդամ՝ որ Ժամանակէ մի 'ի վեր շատ ետևէն անկած եմ, և Քրիստոսի դեղեցիկ դէմքն կը նկատեմ՝ որ թէ և պարզ մարդ ալ լինէր՝ քան զամենեսին առաւել դարձեալ պիտի հիանայի, և որ ինձ անըմբռնելի կ'երևի, ոչ կարեմ հաւատալ որ այսպիսի մարդ նենգաւոր եղած լիցի՝ ինչպէս որ մեր օրերն յաճախ կը լսեմք, 'ի միոյ կողմանէ Ժողովուրդն իր սուտ հրաշքով ու ձեռնածութիւններովն խաբելով, և 'ի միւս կողմանէ այնպիսի դերազանց վարդապետութիւն քարոզելով և անարատ բարոյական մի ուսուցանելով, և իւր վարքն ամենայն առաքինութեանց օրինակ ընծայելով: Աճպարար շաղակրատն՝ իր խաբած մարդկանց համար կեանքն ոչ նուիրէ. իսկ Քրիստոսի կեանքն 'ի ծննդենէն մինչև 'ի մահ ծայրէ 'ի ծայր զոհագործութիւն մի եղած է:

Եւ այլ աւելի ոչ կարեմ հաւատալ որ ամբողջ Ժողովուրդ մի իրմէ խաբուած լիցի՝ շատ տարիներ՝ նաև իր մեռնելէն ետև՝ որ չարագործի մի մահ էր, որով անշուշտ մարդկանց առջև իւր համարումն պիտի կորուսանէր: Չեմ կարող ընդունիլ որ Ժողովրդեան այս պատրանքս յարատևէ նաև իւր մարմինն յաշակերտաց գողցուելէն վերջը, որք դար-

ձեալ խեղճ և ազդեցութիւն չունող մարդիկ էին. և վերջապէս իր կրօնքն ընդ շարս դարուց տարածուի մինչև մեր օրերն, ևս քան զևս արմատ ձգելով քրիստոնէից հաւատոց մէջ՝ որք այսօր բոլոր աշխարհս լեցուցած են. և որ քան զամենայն ինչ հրաշալի է՝ այսպիսի մոլորութեան մի միշտ աճեցուն շլացմամբն պետութիւն մի հաստատուիլ՝ որ քան զամենայն պետութիւնս աշխարհի տիեղերական է, ասել կ'ուզեմ կաթողիկէ Եկեղեցւոյ հոգևոր թագաւորութիւնն: Միայն Աստուած կամ սագայէլն կարէր առնել այսպիսի ինչ՝ յորում չկարեմք չտեսնել գերմարդկային զօրութեան գործն:

Արդէն հրեայք զՔրիստոս կ'ամբաստանէին թէ Բէեղզեբուզի անուամբ հրաշք կը գործէր, որոց ինքն պարզապէս պատասխան կուտար՝ որ եթէ այսպէս էր սատանայն ինքն իր տունն իր ձեռօքն կ'աւրէր և իւր թագաւորութիւնն կը կործանէր զայն բաժանելով, որովհետև Քրիստոս եկած էր նմա յաղթելու և հալածելու: Կարծեմ թէ Եկեղեցին ալ նոյն պատասխանն կարէ տալ իւր այսօրուան թշնամեաց, վասն զի 'ի բաց առեալ մարդկային տկարութիւններն՝ որ ամեն՝ մարդիկ եղած տեղերն գտանին, ինքն ալ միշտ իւր վարդապետին պէս կը խօսի և կը գործէ զմարդկութիւնն կատարելագործելու և փառաւորելու համար, 'ի մէջ ամեն տեսակ հալածանաց և երկրաւոր իշխանութեանց հնարած ամեն տեսակ հակառակութեանց դէմ: Ինքն Եկեղեցին եղև որ այսչափ ազգեր իրենց անարգ վիճակէն հանեց՝ յոր ընկղմած էր զիրենք հռովմէական կայսրութիւնն, և քրիստոնեայ առնելով ընկճեց այն բարբարոս ազգերն՝ որ այս պետութիւնս կործանեցին, և սքանչելի բարեկարգութեամբ սակաւ առ սակաւ զնոսա փոխակերպելով՝ արդի քաղաքականութիւնն յառաջ բերաւ՝ շատ աւելի գերազանց քան զքաղաքա-

կանութիւն հեթանոսաց՝ որ 'ի բռնութենէ յառաջ եկած էր, մինչդեռ մերինն արդիւնք է՝ ոգւոյ նիւթոյ վրայ տարած յաղթութեանն և ազատութեան 'ի վերայ ստրկութեան: Ըստ իս արդի իմաստասիրութիւնն մեծապէս կ'անիրաւի՝ նորա պաշտօնէից ոմանց յանցանքն իրեն համարելով ու երեսն զարնելով. մանաւանդ թէ անիրաւութենէ աւելի ապերախտ դտանի՝ յԵկեղեցւոյ ընդունած լոյսն իրեն դէմ դարձնելով, և այն խելքն որ Եկեղեցին ճոխացուցած և զարդացուցած է՝ ամենայն ջանիւք և աշխատութեամբ իրեն դէմ բանեցնելով:

Սարսափելի յարձակումն եւ Անգութ յաղթութիւն

15 Աւգոստոս:

Ո՛հ, այս ինչ սարսափելի պատերազմ. ու թէպէտ յաղթող ելի, բայց քան զյաղթեալն աւելի վատթարացայ. յաղթութիւնս զիս բոլորովին վիրաւորեց ջախջախեց. և եթէ մի անդամ ալ այս բանս հանդիպի՝ ալ բանս բուսած է և սիրտս պիտի ճաթի: — Եւ սակայն այս պատերազմս տղու մի հետ էր, և տղայ ասացածս ալ իմ տղջիկս է՝ ոսկր յոսկերաց իմոց, և մարմին 'ի մարմնոյ իմմէ, և եթէ չամաչեմ՝ պիտի ասեմ նաև հոգի 'ի հոգւոյ իմմէ: Մինչև հիմա այս պզտիկս ուղածին պէս զիս դարձուց, թէպէտ իրաւ է որ իւր կարողութեամբն բոլորովին չզեղծաւ. բայց այս անդամ չափն անցուց՝ այնպիսի բան մի խնդրելով յինէն՝ որ իմ խղճիս միայն կը վերաբերի՝ որոյ ինչ աստիճան ազատ և մեծարգի բան լինելն դեռ ինքն ոչ ըմբռնէ: Իրաւ է դարձեալ որ

յինէն խնդրածն՝ ինքն ու իր մայրն ալ պիտի առնեն. մանաւանդ որ ես զիրենք ամենայն կերպով յորդորեցի առնելու, որովհետև կնոջս կրօնական հաւատքն միշտ պատուած եմ, և զաւակս ես յանձնեցի քահանային որ առաջին հաղորդութեան համար պէտք եղածն իրեն ուսուցանէ:

Եթէ օտար մարդ մի ինձ այսպիսի բան մի առաջարկէր՝ մարդավարութիւնն սակաւ մի 'ի բաց թողեալ իրեն պիտի ասէի որ իր բաներուն միայն խառնուի. նոյն իսկ եթէ կինս լինէր ասողն, զոր թէ և սրտանց կը սիրեմ, սակայն իրեն ալ պատասխան կուտայի՝ որ ինչպէս ես զինքն բոլորովին ազատ թողած էի իր հաւատոց և կրօնական պարտուց կատարման մէջ, կ'աղաչէի որ ինքն ալ ինձ նոյն ազատութիւնն շնորհէր: Բայց ինչ ասեմ այս տղուն՝ որ իր որդիական սէրն չարտմեցնեմ կամ իր քրիստոնէական հաւատքն չդայթակղեցնեմ: Այսպիսի պարագայի մէջ իրեն հետ պատճառաբանութեան մըտնել անկարելի է. նախ որ ոչ հասկնայ թէ իմաստասէրն ինչ պարտք ունի առ անձն և առ կարծիս հասարակաց. և երկրորդ որովհետև միտքն դրած է թէ այն գործն իմ փրկութեանս ալ օգտակար է որպէս և իրեն, և այնոր համար ալ եռանդեամբ ետևէս անկած է որ զիս ալ իրեն հետևցնէ, հիմա իր ուղածն չկատարուելուն վշտին վրայ՝ պիտի յաւելու աւելի սաստիկ ցաւ մի իր հօրն վրայ տարակուսելու՝ որոյ վրայ մեծ վստահութիւն ունի:

Ցաւալի դիրք մի է իմս. և խելքս սրտիս հետ պատերազմի մէջ է, խիղճս ալ երկոցուն մէջ բաժնուած, որ ներսէն ինձ ասէ թէ այս բանս կեղծաւորութիւն է՝ որդւոյս առնել տալ այն բանն որ իր հոգւոյն օգտակար ճանաչեմ՝ ինչ որ ես իմ հոգւոյս համար ոչ առնեմ, և թէ այսպիսի նիւթոյ մէջ առանց համոզման գործ տեսնելու չէ, մանաւանդ

հակառակ համոզման։ Արդ ստոյգ է՝ որ թէ և քրիստոնէութեան թշնամի չեմ, սակայն հաւատացեալներէն ալ չեմ, և թէպէտ ծածկապէս հաւատք ունել կը ցանկամ՝ որ այնչափ հոգիներն դժբաղդութեանց դէմ կը զօրացնէ և կ'երջանկացնէ՝ որպէս կինս և զաւակս որոց բարեպաշտութիւնն իմ երջանկութեանս ալ պատճառ է, այսու ամենայնիւ ես չունիմ ամենևին այս հաւատքս՝ որ ասի թէ Աստուծոյ պարգև մի է, և ես ինձ չեմ կարող տալ։ Այս նկատմամբ խելքս խղճիս հետ համաձայն կը զրուցէ՝ որ կրօնից գործ մի կատարելու համար՝ անկեղծութեամբ պէտք է առնեմ զայն որպէս զի Աստուծոյ հաճոյ լիցի, և Եկեղեցւոյ հնազանդելու համար որ զայն կը պատուիրէ, և ոչ թէ մարդկանց կարծեացն և աղաչանաց զիջանելու համար՝ որչափ ալ սիրելի լիցին սրտիս, և որչափ ալ իղձ ունենամ նոցա հաճոյանալու։ Ուստի որչափ կարելի էր քաղցրութեամբ մերժեցի զաւկիս առաջարկն՝ անոյշ խօսքերով և դոզտրիկ սիրով մեղմացնելով զայն, և այնոր դառնութիւնն քաղցրացնելով իմ խեղճ զաւկիս՝ որ ամենևին ոչ սպասէր որ իր խնդիրքն պիտի մերժեմ։

Արդէն առջի իրիկուանէ կռահել էի՝ մօրն ու աղջըկան առանձին խօսակցութիւններէն և իրարու նշմարանքէն՝ որ կարևոր թակարդ մի պատրաստելու հետ էին, և առթի մի կը սպասէին. և իրաւցնէ այս առաւօտ նայիս աղջիկս միայնակ դրասենեակս մըտաւ՝ ուր ամեն օր կուգար զիս համբուրելու, և սովորականին պէս գիրկս նետուելու տեղ՝ պատկառանօք ծունր դրաւ առջիս։ Ես ուզեցի վեր վերցնել զինքն և գրկել, բայց նա չուզեց ոտք ելնել՝ այլ այնպէս ծնկան վրայ եկած և սիրտն ելած՝ խնդրեց որ ներեմ իրեն՝ մինչև այն ատեն ինձ պատճառած վշտացն, որովհետև այն առաջին անդամ Աստուծոյ

մօտենալ ոչ կամէր՝ առանց իր հօր հետ հաշտուելու, ուստի սուրբ սեղանոյն մերձենալէն յառաջ իմ օրհնութիւնս կը խնդրէր ... Իմ օրհնութիւնս կ'ուզես, սիրելի զաւակս, ասացի զարմանալով ու սակաւ մի խռոված, բայց իմ օրհնութիւնս սիրոյս հետ միատեղ միշտ քոյ վրադ է. նոյնպէս բոլոր սրտանց կը ներեմ քեզ՝ եթէ կերպիւ իւիք վշտացուցել ես զիս. բայց մինչև հիմա դու իմ ուրախութիւնս և մխիթարութիւնս եղել ես։ Ոտք ել ուրեմն և եկ զիս համբուրէ։

— Ո՛չ, հայրիկ, ասաց ծանրութեամբ, ոտք ոչ ելանեմ մինչև որ քոյ հայրական օրհնութիւնդ ինձ չտաս՝ իբրև նշան մի որ ինձ ներել ես։

— Եւ ինչպէս կ'ուզես որ զքեզ օրհնեմ, սիրելի զաւակս, որ գոհ լիցիս։

— Սիրելի հայր, ինչպէս որ եկեղեցւոյն մէջ կ'օրհնեն։

— Բայց սիրելի զաւակս՝ ես քահանայ չեմ՝ որ զքեզ քահանայի պէս օրհնեմ։

— Ճակատս միայն խաչակնքելդ ինձ հերիք է։

Պէտք եղև որ ուզածն առնեմ՝ որպէս զի ոտք ելնէ. ուստի սիրտս ելած իւր ճակատն խաչակնքեցի, և սիրով պագտուեցանք։ Բայց նոյն ատեն մըտքէս խորհուրդ մի կ'անցնէր ու ասէի. որչափ տարբեր է իմ և աղջկանս համար այս խաչիս նշանակութիւնն. իրեն համար Յիսուսի Քրիստոսի խաչն փրկութեան նշան է, որով և նշան սիրոյ փառաց և երանութեան. իսկ ինձ համար արտաքին նշան մի է կրօնից՝ որոյ մէջ ես ալ ծնել ու մեծցել եմ, և որում ատեն մի ես ալ կը հաւատայի. իսկ հիմա միայն կը մեծարեմ զայն և ըստ նիւթոց ինչ կը հիանամ. բայց այս մեծարանքս բացասական մեծարանք մի է և հիացումս ալ պարզ հայեցողական՝ որ զիս գործնական ի մէջ բան մի առնելու ոչ պարտաւորեն, և գործով

զայն ոչ արդիւնացնեմ: Աղջիկս եռանդուն քրիստոնեայ մի է իւր հաւատօքն ու վարքով, իսկ ես անուամբ եւեթ քրիստոնեայ եմ: Եւ սակայն եթէ ճշմարտութիւնն իր կողմն է՝ ապա ուրեմն ես ճշմարտութեան հակառակ կողմն կը գտուիմ, այսինքն մոլորութեան և չարի մէջ, և օր պիտի գայ որ իրմէ պիտի բաժնուիմ՝ երբոր սուտն ճշմարտէն զատուի. իր գնացած տեղն պիտի չերթամ, և հանդերձեալ կենաց մէջ զինքն ամենևին պիտի չգտնեմ... Ա՛հ, այս բանս յուսահատիչ խորհուրդ մի է, և այս վախս սիրտս կը սառեցնէ: Եւ յիրաւի նոյն ատեն կարծես թէ պազ սուր մի անցաւ հոգւոյս մէջէն:

Միտքս դրել էի որ՝ Սոֆիին ուղածին պէս զինքն խաչակնքելէն ետև՝ ամեն տագնապս պիտի անցնէր. բայց, մ՛ղք, այս բանս սկզբնաւորութիւն մի է եղել, ու վարպետորդին ծանրագոյն մասն վերջն պահել է. և թէպէտ այնու զիս նորանոր ու մեծ տագնապի մէջ ձգեց՝ սակայն կը խոստովանիմ որ իւր վարպետութիւնն անմեղ էր, որովհետև յինէն այնպիսի շնորհք մի կը խնդրէր՝ որ թէ և անտարակոյս իրեն մեծ ուրախութիւն պիտի պատճառէր՝ բայց իր խելքովն այնոր օգուտն աւելի ինձ պիտի դառնար ու զիս երջանկացնէր:

Ուստի զիս վրայէ վրայ համբուրելէն ետև՝ շողոմարար կերպով մի ասաց. « Հայրիկ, 'ի քէն բան մի ալ պիտի խնդրեմ՝ բայց ոչ համարձակիմ »: — « Ասա՛ ասա՛, զաւակս, պատասխանեցի քաղցրութեամբ, բայց ներսէս վախ մի կ'իմանայի իր յանդգնութենէն, և կարծես թէ լինելիքն յառաջուց կը զգայի. վրատահ եղիր խօսէ՝ հայրասէր զաւկի մի պէս, և ապահով եղիր՝ որ ես ալ որդեսէր հօր պէս՝ պատրաստ եմ ձեռքէս եկածն ու կարելին առնելու զքեզ գոհացնելու համար »:

— « Սիրելի հայր, ասաց, լաւ գիտեմ որ դու զիս

կը սիրես, և այսոր համար կը համարձակիմ իմ իղձս քեզ յայտնելու՝ որոյ կատարումն զիս շատ երջանիկ պիտի առնէ: Արդէն մօրս հետ ալ խօսեցայ, և ինքն ալ սիրտ տուաւ ինձ որ այս բանս 'ի քէն խնդրեմ՝ ասելով որ եթէ դու ուզես՝ կարես ինձ ուզածս շնորհել »:

Հասկցայ, ասացի մտքէս, ահա դարձեալ մայր ու աղջիկ քրիստոնէական դաւադրութիւն մի ունին իմաստասիրին դէմ. ասա՛ տեսնեմ սիրելի զաւակս ինչ է ուզածդ:

Այս ասելուս՝ ելաւ ծնկանս վրայ նստաւ, և երկու ձեռօքն վիզս պլլուելով՝ ասաց. « Քանի որ գեղն եմք՝ կիրակի օրերն մեր հետ պատարագի կուգաս, որոյ համար շատ կ'ուրախանամք, ինչպէս նաև ժողովրդապետն ալ՝ որ ասէ թէ մեծ բարի օրինակ է ժողովրդեան, և շատ մարդիկ ալ քեզ նայելով իրենք ալ սկսել են գալ »:

Աւա՛ղ, ասէի ինքնիրենս, ինչ օրինակ չնայիս, թէ որ գիտէին թէ մարմնովս եկեղեցին եղած ժամանակս՝ միտքս ո՛ւր տեղեր կը պտըտի:

— « Վաղը չէ միւս օր առաջին հաղորդութիւնս պիտի առնում. դու ալ ինձ ասացեր որ մարդուս ամենէն գեղեցիկ օրն է այն, և անցեալ օր կը պատմէիր թէ ինչ երջանկութիւն իմացել ես՝ երբ առաջին անգամ սուրբ սեղանոյն մօտեցել ես՝ զՅիսուս Քրիստոս սիրտդ ընդունելու համար, ինչպէս որ ես ալ պիտի առնեմ: Մտածեցի որ դու ալ կ'ուզես նորէն այս երջանկութիւնս իմանալ՝ զոր շատոնց վայելած չես. և կարծեմ թէ այս անգամ երկպատիկ և եռապատիկ պիտի լինի քեզ մօրս և ինձ համար, թէ որ ամենքս միատեղ այն երջանկութեան հաղորդուիմք. հայրիկ կ'աղաչեմ վաղն չէ միւս օր եկ միատեղ հաղորդուիմք »: Այսպէս խեղճ տղայն իր սրտին վրայ եղածն այլայլած ձայնով դուրս տալէն ետև՝ զոր

ասելու կը վախէր, յորդ արցունք սկսաւ թափել, և երեսն հուրծքիս վրայ կը ծածկէր, որպէս թէ իր վշտոյն սպասելով ... :

Վայրկեան մի լռութիւն եղաւ՝ որ կարծեմ թէ իրեն դար մի երևցած է. ես ոչչափ խռոված լինելս չեմ կարող ասել, և զանազան զգածմունք սիրտս խառնաբնդոր կը յուզէին: Նախ սիրելի զաւակիս արտասուացն համար՝ որ իւր եռանդուն փափաքն ցուցանէին, և միանգամայն իւր արտասութիւնն յառաջուց կը յայտնէին զոր պիտի զգար՝ եթէ խնդրածն չառնէի. յետոյ իմ առաջին հաղորդութեանս յիշատակն և հաւատքն զոր այն աստեն ունէի՝ որ յանկարծ եկին և անցաւ իմ մտքիս անուշահոտութեան մի պէս և միանգամայն ցաւ մի տալով ինձ. դարձեալ իմ նեղկայ վիճակիս դիտակցութիւնն՝ որ անկրօն մարդ մի դարձած էի՝ թէ և յաչս աշխարհի իմաստասէր համարուելով՝ հասարակաց կարծիքն ալ զիս աղատ կը համարէր այս բաներէս իմ դիտութեանս նայելով. և վերջապէս գուշակելով ինչ որ պիտի ասէին իմ վրայիս իմաստասիրաց բանակն՝ եթէ թուլնայի ու աղքհանս հաւանէի, ոմանք զիս սակար մարդու տեղ դնելով և ուրիշներն ալ կեղծաւոր համարելով, և ամենքն ալ զիս պախարակելով՝ որ փոքրիկ աղջկան մի դէմ դնել չէի կարացել, և թէ անուամբ միայն իմաստասէր էի՝ պատրաստ լինելով Ճշմարտութեան պաշտպանութենէն փախչիլ ու դասալիք լինել՝ սիրոյ կամ շահու թեթև փորձութեամբ մի: Թէ որ այս տղուս խօսքն կատարեմ՝ ուրչափ ձանձրութիւն նեղութիւն և հակառակութիւններ պիտի եղնեն առջևս, այնպէս որ իմ հասարակաց կեանքս ալ բաղդատվին պիտի այլայլի ու չփոթի:

Բայց միւս կողմանէ ալ ուրչափ խռովութիւն պիտի եղնէ իմ տանս մէջ՝ եթէ այս երկու հոգիներն արտաքսեմ որ կենացս երջանկութիւնն են: Ապա-

հով եմ որ իրենք չատոնց 'ի վեր այս աստիճս կը սպասէին՝ իրենց ամէնէն աւելի սիրելի ակնկալութեանն հասնելու, և թէ որ մերժելով այն յոյսերնին պարապ հանեմ, ինչ սրտակոտրութիւն պիտի հետևի, մանաւանդ մօրն, և ինչ թաքուն վիշտ իր սիրտն պիտի կեղեքէ՝ որ այնչափ զիս կը սիրէ, գեղեցիկ պաղպղ մէջ ծածկուած որդի մի պէս:

Ահա այն լռութեան վայրկեանին մէջ՝ հեղեղի մի պէս մտքէս անցած խորհուրդներն: Սակայն հարկ էր որ պատասխան մի տայի. և որովհետև իմ հայրական արժանապատուութիւնս ոչ թողուր իմ ընդգիմութեանս ամէն պատճառներն տղուս իմացնելն՝ զորս պիտի չկարէր ալ հասկնալ, անդէն և անդ արտասքին պատճառ մի ապաւինեցայ՝ որ իր խելացի ալ չարմար էր, և իր խիղճն ալ կարէր զիս այն բանին համար արդարացնել: « Սիրելի Սոֆիս, ասացի վերջապէս, քոյ յինէն խնդրածդ ծանր բան է, և առանց պատրաստուելու ոչ լինի. խակ արդ գիտես որ վաղն գասիս օրն է ու Բարիզ պիտի երթամ, ուստի ... : — Ո՛հ, սիրելի հայր, ասաց նա խօսքս կտրելով, դու այնչափ բարի ես և այնչափ ուրիշներն ուսուցանելու համար կ'աշխատիս՝ որ քեզ համար երկայն ժամանակ պէտք չէ խոստովանելու համար. ես վաղ առաւօտ պիտի խոստովանիմ, դու ալ երթալէդ առաջ կամ դառնալէդ եռև կարես խոստովանիլ. ո՛հ ուրչափ ուրախութիւն պիտի լինի ինձ: — Բայց աղջիկս, խելահաս մարդն՝ այս բաներս տղու պէս ոչ առնէ, և չատոնց 'ի վեր հաղորդուած չլինելուս՝ քան զքեզ աւելի ժամանակ պէտք է ինձ պատրաստուելու համար. դու ալ կը տեսնես որ այս անգամ անկարելի է այս բանս. խօսք մտիկ արա աղջիկս, և ալ մի խնդրեր չինէն այս բանս զոր ոչ կարեմ ընդհել. աւելորդ տեղ ինձ նեղութիւն կուտաս, որովհետև ստոյգ ասեմ քեզ և չեմ կարող բացատրել

թէ ո՛րչափ ծանր կուգայ ինձ՝ որ այն հանդիսաւոր օրն պիտի չկարեմ քոյ և մօրդ հետ հաղորդուիլ»։

Կ՚երևի թէ սիրտս ելած ձայնով մի ասացի այս խօսքս՝ որ իր վրայ տպաւորութիւն արար, և իրաւցընէ ձայնս կարծես թէ հոգւոյս մէջ կրած վշտացս և ցաւոց արձագանգն էր։ Զաւակս սակաւ մի լռելէն ետև՝ արցունքն սրբեց և խանդաղատանօք երեսս նայելով երկայն հառաչանքով մի ասաց. «Հայրս և մայրս քովս տեսնելն ի՛նչ անոյշ պիտի դար ինձ այնպիսի օր մի. Աստուած ամենուս սիրտն ալ նոյն ատենն իջնելով՝ իւր սիրո՛վն զնոսա յաւիտեան պիտի միացնէր՝ հիմակուանէն շատ աւելի։ Գոնէ խօսք տո՛ւր որ ինձ համար պիտի աղօթես՝ բայց ոչ միայն քոյ կերպովդ՝ որ ես շատ բան մի չհասկցայ՝ երբ անցեալներն մօրս կը բացատրէիր, այլ իմ կերպովս և ինչպէս որ Եկեղեցին մեզ ուսուցանէ. խոստացիր ինձ որ երբ խորանին առջին երթամ իմ դիտմանս Հայր մեր, Ողջոյն մի զրուցես բոլոր սրտանց. այնպէս չէ՞ հայրիկ»...

— «Այո, սիրելի զաւակս, կը խոստանամ, և աւելի ալ պիտի առնեմ. քոյ հաղորդուելու ժամանակդ՝ սրտի մտօք քեզի հետ պիտի միանամ, որպէս զի այն որ արժանի կը համարի քոյ սիրտդ մտնելու՝ իր շնորհքո՛վն իմ հոգիս ալ լուսաւորէ, և զօրութիւն տայ ինձ մօրդ ու քեզ պէս զինքն սիրելու և իրեն ծառայելու»։ Այն ատեն սիրուն տղայն նորէն վիզս պլլուելով՝ սրտաղեղ համբուրեց զիս՝ թէ և սակաւ մի տրտմութեամբ, և վաղեց գնաց եղածն մօրն պատմելու։ Երբ դուրս ելաւ՝ մեծ շունչ մի առի՝ իր գողարիկ թախանձանքէն ազատելուս համար, և սակայն սրտէս կը վշտանայի և կ՚ամաչէի ալ որ չուզեցի շնորհել իրեն այն բանն՝ որ այնչափ քաղցր պիտի դար իրեն և մօրն, և թերևս փրկարար ալ պիտի լինէր իր հօրն։

Երանի՛ իրեն որ ոչ գիտէ թէ կրօնական նիւթոց մէջ երկմտութիւն ի՛նչ ասել է, Աստուած տար որ բոլորովին ալ անդիտանար. ինքն ոչ ճանաչէ թէ մարդկային ակնածութիւնն ու նոցա կարծեաց գերի լինելն ի՛նչ տատամսութեանց մէջ կը ձգէ զմեզ՝ երբ սակաւ մի համարումն ստացած եմք և ամբարհաւաճութեամբ զայն յաւելուլ կը ջանամք՝ աշխարհիս մէջ ստացած կարողութեամբ ու փառօք։ Աւա՛ղ, թերևս սոքա ցնորք կամ թերափք են՝ որոց կը զոհեմ հիմա իմ ընտանեացս ճշմարիտ երջանկութիւնն, մինչդեռ թերևս պատուոյ և հարստութեան համար ունեցած յոյսս ունայն եղջերուաքաղ մի է։ Բայց կենդանի է Աստուած՝ օր պիտի դայ՝ որ աղջկանս ուղածն պիտի կատարեմ. քանի մի տարիէն իմ բաղդս ու վիճակս կը շտկեմ, և կենացս ու ընթացիցս ալ ծայրն կը հասնիմ, և այն ատեն աշխարհիս ամեն բանէն ձեռք քաշելով՝ աւելի ժամանակ և հանգստութիւն կ՚ունենամ անդիի կենաց վրայ խորհելու. իսկ հիմա յիրաւի ժամանակ չունիմ, և ուսումնական զբաղանքս, դասախօսութիւններս և ուրիշ կարևոր գործերս զիս բռնի կը քշեն կը տանին։

Եւ սակայն այս բանս հիմակուց ոչ կարէի ասել սիրելի զաւկիս. միայն բան մի կայ որ զիս սակաւ մի կը մխիթարէ՝ զինքն մերժելով տրտմեցնելուս համար, և այս է որ արդէն աշխատանքս իրեն համար նուիրած եմ, որպէս զի քանի մի տարիէն զինքն շքեղ և ապահով կերպով տեղաւորեմ. ապա ուրեմն չէ՞մ կարող մտածել՝ որ այս պարագայիս մէջ ալ ես ինքզինքս իր երջանկութեան համար կը զոհեմ՝ մինչև աստիճան մի. բայց կը վախեմ ալ որ մի դուցէ այս բանս պատրուակ մի լիցի՝ որով իմ անհաւատութիւնս ու փառասիրութիւնս կ՚ուզէ ինքզինքն արդարացնել ու դեղերեսել։ Բայց զի՛նչ և իցէ, խիղճս կը վկայէ՝ որ զաւակն իր հօրէն լաւ է, որով-

հետև հայրն նորա երկրաւոր երջանկութիւնն կը հոգայ, իսկ նա յաւիտենական երանութիւնն կը մտածէ. և իւր կրօնքն աւելի բարձրերն կը նկատէ քան թէ իմ իմաստասիրութիւնս:

Տպաւորութիւն առաջին հաղորդութեան

16 Աւգոստոս:

Երէկ աղջկանս առաջին հաղորդութեան ներկայ դտուեցայ, և միանգամայն երջանիկ ու դժբաղդ եղէ. երջանիկ տեսածներովս և լսածներովս և ժողովրդեան բարի զգածմունքովն որով հոգևորած էին՝ որ իմ վրաս ալ կ՚աղդէին. և դժբաղդ՝ երբ ցաւովք կը յիշէի ինչ որ ես ալ նոյնպիսի պարագայի մէջ զգացել էի, որ ամենևին մտքէս պիտի չելնէ, այնպէս որ ամենէն սաստիկ ուրախութիւններն ալ զորս յետ այնորիկ ճաշակեցի, այնոր քովն ոչինչ էին. իմ հոգիս քաղցրութեամբ լցուած էր՝ երբ կը մտածէի թէ ինչ էր իմ սիրտս իջնողն, և կը հրճուէի տղու մի պարզմտութեամբն՝ որոյ անմեղութիւնն ու ապահովութիւնն այլայլող բան մի չկայ:

Յետոյ տարիքս մեծնալով՝ միտքս և ուրիշ կարողութիւններս բացուեցան՝ տարակոյսներ անվստահութիւններ ու երկիւղներ վրաս հասին, և սկսայ բարւոյ և չարի դիտութիւնն ստանալ՝ ինչպէս որ եղև Ադամայ՝ արդիլուած պտուղն ուտելէն ետև. ուր յառաջ՝ մանաւանդ այն օրն որ առաջին անգամ կենաց ծառէն ճաշակեցի՝ իրեն պէս երկնային կենօք լի էի, և բան մի չկար որ սրտիս խաղաղութիւնն վրդովէր, որովհետև զինքն բոլորովին իր Փրկչին նուիրած էր: — Բայց աւաղ, ինչ եղև այս խաղաղութիւնս. անմեղութեանս հետ միատեղ աներևութացաւ, ինչպէս որ այս ալ աներևոյթ եղել էր հաւատոց և աստուածային խօսից հետ՝ որ իմ մտացս խօսքովն մթնցած էր, և կարծեմ թէ այն չարի սկզբնապատճառի խօսքն էր որ մեր նախածնողքն խաբել էր: — Ես ալ նոցա պէս աստուածային պատուիրանին ճշմարտութեան վրայ սկսայ տարակուսիլ, և իմ ամբարտաւանութեամբս՝ խղճիս վրայ գրուած օրէնքէն վեր ուղեցի բարձրանալ, ուղեցի ես ինձ տէր լինել և ուրիշէ կախումն չունել. և չարի սկզբնապատճառին հետ ասացի Ո՞ւր ու բարձրացայց: Եւ ահա երեսուն տարի է՝ որ մտացս և կամաց անձնիշխանութեանն կը ցանկամ, յաչս մարդկան ունեցած ինքնիշխանութեամբս հպարտացած, և սակայն միւս կողմանէ ալ դատապարտուած եմ ամեն կերպով նոցա հնազանդելու և ծառայելու, որպէս զի նոցա կարծիքն և հաւանութիւնն ստանամ՝ իմ փառքս ու բաղդս յաջողցնելու համար:

Եւ ահա այսով ալ երջանիկ չեմ ոչ 'ի ներքս և ոչ արտաքսապէս. արտաքսապէս՝ միտքս դնելով որ իմ արգեանցս և աշխատանացս համեմատ՝ վարձատրութիւն ոչ գտանեմ, որով անյագ փառասիրութեամբ կը չարչարուիմ. իսկ 'ի ներքս իմ սրտիս մէջ հերձուած և պատերազմ մի կ՚իմանամ, և ինչ ալ առնեմ կ՚իմանամ որ բացարձակ տէր չեմ, և քան զիս աւելի հզօրի մի ձայն կը լսեմ մերթ ընդ մերթ՝ որ իմ հպարտութիւնս և ապերախտութիւնս երեսս կը զարնէ: Նոյն ցաւալի հերձուածն ու բաժանումն իմ ընտանեացս մէջ ալ կը գտնեմ: Իրաւ կինս սրտանց կը սիրեմ՝ ինչպէս որ ինքն ալ զիս. բայց կ՚իմանամ որ նորա սիրոյն մէջ դատարկութիւն և պարապ տեղ մի կայ, և իւր տրտմութեան պատճառն այն է որ մեր հոգիներն նոյն հաւատքով և նոյն սիրով միացեալ չեն: Հաւատքն որ ամենայն քրիստոնէական առաքինութեանց երաշխաւորն է, և զոր ես իր վրայ

կը գտնեմ, ինչո՞ւ իմ վրաս ոչ գտանէ, և կը ցաւի որ իւր սիրան բոլորովին չկարէ բանալ ինձ, և ինչո՞ւ ալ իմ սիրտս բոլորովին գրաւած չէ: Մեր փոխադարձ սէրն օրչափ ալ խանդաղատական է՝ սակայն երկնային բան մի կը պակսի՝ որ կարելի այնոր հաճոյութիւնն և մաքրութիւնն կատարելագործել, և նորա յաւիտենական մշանջենաւորութիւնն ապահովցնել:

Աստ յառաջ կուգայ որ սիրելի ջաւիս կենայ և վարուց ուղղութեան մէջ ալ ոչ միաբանիմք, և ինչ առնելու եմք ոչ գիտեմք՝ որոյ կեանքն իմին հետ աւելի միացեալ է, որովհետև մարմին 'ի մարմնոյ իմմէ է և արիւն յարենէ իմմէ, և գրեթէ հոգի 'ի հոգւոյ իմմէ. որ թէ և ոչ համարձակի ասելու՝ սակայն թերևս իմ վրաս անհաւատի մի պէս կը նայի, և անտարակոյս իր հօր գարձին համար կ'աղօթէ: Եւ ըէկ էէ առջի օրն անգթաբար մերժելով իր ուղածն՝ սիրան կոտրեցի. և իւր պարզմտութիւնն խաբեցի իրեն հաւատացնելով որ իւր առաջին հաղորդութեան ժամանակ իրեն կերպոնէ իր հետ պիտի միանայի՝ ինչ մտքով որ ինքն կը հասկանար. մինչդեռ Ճշմարիտն ասելով՝ իւր երջանկութեանն բնական կերպով միայն մասնակցեցայ՝ հայր լինելուս համար, և ոչ թէ իւր հաւատոցն կենդանի հաղորդակցութիւն ունենալով որպէս քրիստոնեայ: Յայտնի բան է որ ես դեռ հաւատացեալ չեմ, և եթէ սակաւ մի հաւատք ալ ունիմ՝ անցեալ յիշատակով կամ թերևս ապագայ յուսով է միայն. յայս ասացի՝ որովհետև ալ վերջապէս այս ալեկոծութեանս մէջ չեմ կարող միշտ ճիալ, ուր որ սիրտս անդադար մտացս հետ կռուի հետ լինելով՝ ամենևին հանգիստ չունի:

Այս հրեշտակի պէս մտքուր զաւակս ինձ համար աղօթել է, և անտարակոյս հրեշտակաց աղօթից պէս՝ մինչև յաթոռ Յաւիտենականին բարձրացած է. անշուշտ իմ փրկութիւնս խնդրած է, և իւր բա-

րեպաշտ մայրն ալ նորա մանկական աղօթից ձայնակից եղած է անտարակոյս այլ աւելի կենդանի եռանդով: Սիրելի կին՝ որ չես այնչափ կը սիրէ՝ որ կ'ուզէ չես կատարեալ տեսնել, և համոզուած է որ այս ալ ուրիշ բանով ոչ լինի՝ բայց եթէ քրիստոնեայ լինելով. և թերևս իրաւունք ալ ունի, որովհետև ես ալ սոխոտած եմ ճանաչելու որ Յիսուս Քրիստոս ամենէն կատարեալ մարդն է, և թերևս այսը համար զինքն Աստուծոյ տեղ գրած են, իր գերմարդկային կատարելութիւնն ուրիշ կերպով բացատրել չկարելով՝ բայց եթէ աստուածային բնութեան հաղորդ համարելով զինքն: Ասաւ ինչ ալ լինի մարդ կամ Աստուած՝ այլ աւելի լաւ բան մի չեմք կարող առնել՝ բայց եթէ իրեն հետևիլ, որովհետև իւր կենաց և մահուան կատարեալ նմանութիւնն երկնից ճանապարհն է:

Այս բանս կարելի է, և ես ալ հայեցողաբար հաւանեալ կ'երևիմ. բայց գործնականն որչափ հեռի է հայեցողականէն, և որչափ բաներու վրայ կը հիանամք առանց այժ և քաջութիւն ունենալու զայնս կատարելու համար, և հիմա եթէ այս բանիս ձեռք զարնեմ՝ որչափ պատերազմներ պիտի ունենամ ամեն կողմանէ իմ մտացս կամացս հպարտութեանս սրտիս և զգայութեանցս հետ, Թող այն ընդդիմութիւններն զորս գրսէն պիտի ունենամ աշխարհի և բարեկամացս հետ: Այո, հաւանեալ եմ որ քրիստոնէութիւնն դեղեցիկ և գերազանց կրօնք մի է, բայց շատ ալ նեղացուցիչ է, ու պատճառաբանութիւնն ու տեսականն բաւական չէ՝ այնոր իշխանութիւնն կամակար ընդունելու և պատուիրաններն քաջութեամբ կատարել տալու համար: Եւ ճշդապես այս բանս է որ ինձ կը պակսի, հաւատք՝ որ Աստուծոյ պարգև կը սեպուի, և այնոր եռանդուն մղումն որ ամեն գիմադրութեանց հակառակ՝ յառաջ եր-

թալ կուտայ։ Կինս և զաւակս 'ի միասին երէկուան օրն իրենց աղօթից մէջ ինձ համար խնդրեցին այս բանս. ոչ գիտեմ թէ արդեօք պիտի ընդունին իրենց եռանդեամբ փափաքածնին, միայն թէ ներքին վրդովմունքէս և միտքս պաշարող երևոյթներէն՝ որ խիղճս կը խռովեն՝ կ'իմանամ որ գոնէ զիս չարչարելու չափ նոյն բանն ընդունած են։

Ո՛րչափ գեղեցիկ էր երէկ զաւակս իր ճերմակ հագուստներովն ու սպիտակ քօղովն. գեղեցիկ ամօթխածութեամբ բարեպաշտութեամբ և անմեղութեամբ. և ռամիկն լաւ կը բացատրէ՝ երբ մարդկային կերպարանաց ամենէն մաքուր քաղցր և երկնային ձևն իմացնելու համար՝ հրեշտակի պէս գեղեցիկ էր ասէ։ Ոչ գիտեմ թէ իրաւցնէ իր հաւատացածին պէս՝ սիրտն երկնից շնորհքով լեցուած էր՝ երբ սուրբ սեղանէն դարձաւ. բայց ապահովապէս դէմքին վրայ այնպիսի բան մի կար՝ որ նայելով ոչ կըշտանայի։ Աստուածաշունչն ասէ որ Մովսէս երբ Սինա լեռնէն իջաւ՝ իւր դէմքն այնչափ կը փայլէր Աստուծոյ պայծառութեամբն՝ որոյ հետ խօսակցել էր՝ որ իսրայելացիք խնդրեցին որ քօղ մի ծածկէ իւր երեսն՝ որ զիրենք կը շլացնէր ու աչքերնին կ'առնուր։ Այսպիսի պայծառութիւն մի կար Սոֆիիս գլխուն բոլորտիքն ալ, բայց այնպիսի քաղցր լոյս մի որ զմայլմամբ իրեն կը նայէի։ — Մի գուցէ հայրական սէրս զիս կը խաբէր, և իմ սիրոյս ճառագայթներն էին որ աղջկանս ճակտին վրայ կը շողային. անտարակոյս ես ինքն հայրական հպարտութեամբ զինքն այսպէս պայծառակերպեալ կը տեսնէի ...։ Բայց ոչ, այս բանս բոլորովին երևակայութիւն չէր. յիրաւի իր սիրելի գլխոյն բոլորն երկնային լուսեղէն պսակ մի կար. և ես միայն չէի զայն տեսնողն։ Բայց արարողութիւնն կատարուելէն ետև ինձ տուած առաջին համբուրին ազդեցութեան վրայ

ամենևին ոչ տարակուսիմ, երբոր եկաւ գիրկս անկաւ, և ես ալ սրտիս վրայ զնա գրկեցի. և իւր սիրտը իմինիս վրայ յենած միաչափ կը զարնէին, և անպատմելի զմայլում մի կ'իմանայի նորատեսակ իմն կենաց՝ որ իմ կենացս մէջ կը թափանցէր. այնպէս որ հոգիս ընդարձակեցաւ, և աչուըներս արտասուօք լեցուեցան, և այնպիսի երջանկութիւն մի իմացայ՝ զոր շատոնց չէի զգացած. կինս ալ մեր վրայ նայելով կ'ուրախանար, և զաւկին ու երկանն առջև յափշտակուած մնացած՝ կարծէր թէ նոր կապանօք իրեն հետ կը միանար՝ նորոգեալ սիրոյ զմայլմամբ։ Իրաւ խօսք մի խօսելու ոչ համարձակէր, բայց կը տեսնէի ու կը զգայի՝ որ մեր ներքին յուզումն ինքն ալ կը զգար. և այն հանդիսաւոր վայրկեանին ինքն իւր երկան և զաւկին հետ 'ի միասին՝ ընտանեկան նուիրական երրորդութիւն մի կը կազմէր։

Վերջին հարուած

7 Սեպտեմբեր։

Այժմ իսկ տարօրինակ լուր մի առի՝ որ զիս բոլորովին կը խռովէ. Ետկարէն ետև՝ որոյ մեռնիլն տարի մի չկայ, աշակերտացս մէջէն ամենէն հանճարեղն և սիրելին Եւգինէոս Ն... որ ուսուցչաց դասակարգութեան մէջ շատ առաջ դնացած էր և քաղքին համալսարանին մէջ իմաստասիրութեան մեծահամբաւ դասատու էր՝ ինձ կը գրէ որ իւր պաշտօնն թողլով՝ կղերանոց մի մտել է՝ պատճառներն ինձ բացատրելով։ Այս իր որոշողութեան վրայ չզարմացայ, բայց սիրտս շատ այլայլեցաւ. ինքն գեղեցիկ հոգի և փափուկ սիրտ ունելով՝ անձնանուիրումն իրեն համար հարկաւոր բան մի էր, և հայեցողա-

կանն առանց գործնականի զինքն պիտի ձանձրացնէր. իսկ իր բարձր հանճարն աւելի խորհրդականութեան կը հակամիտէր, և առատազեղ սիրտն ընդարձակ ասպարէզ մի կը բնտռէր իւր սէրն 'ի գործ դնելու համար երկրաւոր սիրելութիւնները արհամարհելով. վերջապէս դարուս իմաստասիրութիւնն մեծ բան կորուսանէ, և Եկեղեցին ալ գեղեցիկ բան մի կը վաստկի: — Բաւական է որ բնտռածն այնոր մէջ գտնէ, և իր յարգն ալ ճանչցուի. Թերևս յետոյ շատ ընդդիմութիւններ կրէ և յուսացածին պէս չգտնէ, որովհետև իմաստասիրական ազատութեան վարժած է միտքն. և ոգւոյ և մարմնոյ խստակրօնութիւնն իր հանճարոյն Թևերն չկոտրտեն, և օր չգայ որ չզղջայ իւր պատուաւոր ընթացքն Թողլուն համար: Ինքն հիմա մտքէն անգամ չանցընէր՝ իր առջին ելնելու արգելքներն. բայց երբ իր եռանդեան առաջին կրակն անցնի կամ մարի, և իրականութեան մէջ և մարդկանց փոքրոգութեան մէջ պաշարուած տեսնէ ինքզինքն՝ Թշուառ երիտասարդը սրտին ցաւէն կարէ մեռնիլ. խեղճ Եւգինէոս, արդեօք այս դժուարին վայրկեանիս մէջ գիտե՞ս ինչ է ձեռնարկածդ՝ որ քոյ ապագայդ բոլորովին պիտի փոխէ: — Ի՞նչ պատասխան տամ իրեն. իր միտքն որոշելու համար ինձ խորհուրդ հարցուցած չէր. և այն ատեն ինձ կ'ի-մացնէ՝ երբ արդէն իր առաջին քայլն առել է, և ինք իւր ձեռօք՝ աշխարհիս աչաց առջև՝ իւր նաւերուն կրակ տուել է. ինչո՛ւ հիմա իմ ապաժամ և անագան խրատներովս զինքն անհանգիստ առնեմ՝ որ անտարակոյս օգուտ մ՛ալ պիտի չառնեն. Վիճակն արդէն արկեալ է:

Սակայն իւր ազատութեան ընդդիմանալ չուզելովս ալ՝ դժուարս կու գայ երբ կը տեսնեմ իրեն այն կողմն հակամիտելն. բայց Թէ ինչո՛ւ՝ որոշ ոչ գիտեմ: Արդեօք այնո՞ր համար որ կը Թողու այն

ճամբայն՝ ուր որ ես գրի զինքն և պաշտպանեցի, և հաւանականաբար մեր վախճաններն ալ իրարմէ պիտի հեռանա՞ն: Ի բաց Թողեալ այն սէրն զոր ունէի այս երիտասարդիս վրայ՝ որ իր անակնկալ և ինքնագլուխ որոշմամբն՝ սակաւ մի պաղեցաւ, արդեօք դժկամակութիւն մի չէ՞ զգացածս՝ տեսնելով զինքն որ իմ ազդեցութենէս գլուխ քաշել փախել է: Ինքն աշակերտացս մէջ ընտիրներէն և սիրելիներէն էր, և վրան մեծ յոյս ունէի. այսոր համար Թէ ցաւ կը զգամ սրտիս մէջ, և Թէ պատուոյս ալ պղտիկութիւն կը սեպեմ. անձնասիրութիւնն այնպէս նրբին բան է՝ որ ամեն տեղ կը մտնէ՝ նոյն իսկ բարեացակամ սիրելութեանց մէջ: Բարեկամներն կորուսանելն ցաւալի բան է, ևս առաւել իւր աշակերտներն՝ զորս մարդ իւր զաւակաց պէս կը սիրէ. վերջապէս իմ պսակիս գոհարներէն մին էր՝ զոր գողցուցի: — Մահն Եակարն յինէն յափշտակեց և քրիստոնեայ մեռաւ. ահաւասիկ ուրիշ մ՛ալ որ ինձ համար կենդանւոյն մեռած կը սեպուի. որովհետև կղերանոց մտնելն ուրիշ բան չէ՝ բայց եթէ հրաժարել յաշխարհէ 'ի փառաց նորա և յուրախութեանց, և է մտանել յաշխարհ ուրեք որ մերինէն տարբեր է, և չեմ կարող զինք հոն տեղն գտնել: Եւ սակայն բոլոր հաճութիւնս այս երկու աշակերտացս վրայ գտել էի, և կը յուսայի որ իրենց գպրոցին և վարժապետին փառք ու պարծանք պիտի յաճախեն. այս պատրանքս ալ միւսերուն քովն դնեմք: Լաւագոյններն զիս կը Թողուն, և օտարաց համար է աշխատանքս. Այսպէս դուք ոչ յեղ...:

Բայց վերջապէս ինչ էր իրենց տուածս. սակաւ մի գիտութիւն, և շատ տարակոյսներ, յոյժ բազում բացասութիւններ, իսկ դրական բան՝ և ոչ ինչ, գոնէ այն բաներուն որ մեզ աւելի հարկաւոր է գիտելն: Եւ ուրիշ. մարդկանց ամեն կարծեաց պատմու-

թիւնն՝ յորս աւելի մոլորութիւնք կան քան թէ ճշմարտութիւնք. և յիրաւի ամեն խնդիր վեր 'ի վայր յուզելէն ետև, պայծառ և որոշ լուծում մի չտալ՝ որով մարդուս միտքն գոհ լիցի, սիրտն բարձրանայ և խիղճն հանգարտի. շատ ճառատանք և գրուածք, և սակաւ կենդանի գործք՝ մարդկութեան օգտակարք: Իրաւ այս ամեն բանս ճարտարութեամբ որ գործածուի՝ մարդկանց մէջ անուն կը հանէ՝ որ փառք կ'անուանի, և մեր ամենէն մեծ վարձքն ուրիշ բան չէ՝ բայց եթէ այս հաշիշն ծամել կամ ափիոնն կլլել՝ որպէս զի երբեմն երբեմն երազներով և ուրուատեսութեամբ աշխարհիս թշուառ իրականութենէն վեր բարձրանամք և խեղճութիւննիս մոռնամք:

Ուրեմն թողումք որ այս բարի Եւգինէոսն ալ իւր անհրաժեշտ ճակատագրին հետևի՝ առագաստն նոր հողմոյ պարզելով՝ որ իւր նաւակն ուրիշ ծով մի կ'առնու կը տանի. և ո՞վ եմ ես որ զայն արգելում. իմ նմանեացս ազատութիւնն յարգելուս՝ այնոր դէմ ոչ հակառակիմ՝ երբ գործածն չար բան չէ. անտարակոյս իւր ձեռնարկածին մէջ ալ չար բան մի չկայ. մանաւանդ թէ ընդհակառակն մեծ նուիրմունք մի է, և թերևս մեծանձն հոգւոյ պատրանք՝ որոյ վրայ կը հիանամ՝ բայց ոչ հաւանիմ: Իմ մտածութիւնս իրեն պիտի գրեմ. վասն զի իւր թուղթն՝ որ պատկառելի երախտագիտութեամբ և սիրալիր զգածմունքով լի է՝ առ վաղեմի վարժապետն իւր, սիրտս շատ շարժեց, ուստի կ'ուզեմ սրտանց երթաս բարով մի զրուցել իրեն:

Վերջաբան

Վարժապետն ժամանակ չունեցաւ աշակերտին գրելու. նամակն առնելուն հետևեալ օրն՝ կրծոց իջուածքով մի բռնուեցաւ, և շատ բժիշկներ ու դեղեր ճար մի չկարելով առնել՝ քանի մի օրուան մէջ մահուան դուռն հասաւ: Կինն ու զաւակն երկու հրեշտակներու պէս զինքն դրին վերցուցին՝ գիշեր ցորեկ անկողնոյն քովէն չբաժնուելով: Յետոյ երբ տեսին որ դեղերէն օգուտ մի չկայ, և հիւանդութիւնն կը յաղթէ հիւանդին բնութեանն և բժշկականութեան հնարից՝ սկսան ահուդողի մէջ անկանիլ այն սիրելի հոգւոյն համար՝ վախնալով որ յաւիտեանս իրմէ պիտի բաժնուէին: Աղջիկն ինքզինք սըրտապնդեց և հօրն իմացուց բժշկաց կարծիքն, և Եակարին օրինակն իրեն միտքն ձգեց: Այս յիշատակս իմաստասէրն սարսեց ու անդէն և անդ փարատեց այն քօղն որ իւր միտքն կը խաւարեցներ. և իւր աղջկան և կնոջ թախանձանքն չմերժեց՝ զիրենք չտրտմեցնելու համար. ու երբ իրեն առաջարկեցին որ քահանայ մի կոչեն, փափաք երևցուց որ Սորպոնի աստուածաբանութեան դասատու քահանայն կոչուի, որոյ հետ արդէն շատ անգամ խօսակից լինելով՝ մեծ ապաւորութիւն ազդած էր վրան: Քահանայն լսելուն պէս փութաց եկաւ հոգէվարքին անկողնոյն քով, և երկար ատեն իրարու հետ խօսակցելէն ետև՝ հետևանքն այն եղև՝ որ հիւանդն կատարելապէս հաշտուեցաւ Աստուծոյ և Եկեղեցւոյ հետ: Իւր կինն և աղջիկն այս մխիթարութիւնս ալ ունեցան՝ որ նորա աչուընէրն փակելէն առաջ՝ իրեն հետ 'ի միասին հաղորդուեցան, և բոլոր տան մեծ շինութիւն և բարի օրինակ եղև՝ իր բարեպաշ-

տուԹիւնն ու պարզմտուԹիւնն՝ որովք ընկալաւ վերջին խորհուրդներն։

Մեռնելէն ետև՝ ընտանիքն իւր ամեն ձեռագիրներն իմ ձեռքս յանձնեց, որպէս զի զատեմ և տպագրուելու համար պատրաստեմ այն գրուածքներն՝ որ տպագրուելու արժանի էին յորդի և կատարեալ գործ սեպուելով։ Անոց մէջ ծրար մի ալ գտի անջատ ԹղԹերու՝ որոց Թուականն գրեԹէ զերծար կը յաջորդէին և իմացայ որ տեսակ մի օրագրուԹիւն էր՝ զոր իմաստասէրն իր կենաց վերջին տարին գրած էր։ Այս անկեղծուԹեամբ լեցուն ԹղԹերն կարդալով՝ չատ հաւնեցայ՝ որովհետև ինք իր անձին համար գրած էր, և մարդու չէր ցուցած, և ընտանեաց ալ խորհուրդ հարցանելէն ետև՝ որ մեծապէս մխիԹարուեցան այս բանիս վրայ, մտածեցինք որ այս գրուածքն յոյժ օգտակար կարէր լինել չատ մարդիկներու, մանաւանդ նոցա որ կբօնից նկատմամբ նոյն կացուԹեան մէջ կը գտուին։ Հոն գտի նաև իւր աշակերտին գրած նամակն՝ որոյ վրայ կը խօսի օրագրուԹեան վերջին ԹերԹին մէջ, զոր հոս տեղս կը յաւելում վարժապետին գրուածքին վրայ՝ նոյն նամակն գրողին հաւանուԹեամբն։

Սիրելի վարժապետս

Ի վարդապետանոցէ ***՝ ի 1 Սեպտեմբեր 186...

Նամակիս տեղագիրն իսկ կ'իմացնէ ձեզ՝ ինչ որ ես պիտի ծանուցանեմ։ Այո, սիրելի վարժապետս, ձեր Եգիպետան, և ինչպէս որ գուք զինքն կոչէիք՝ ձեր սիրելի աշակերտն՝ զոր Եակարին հաւասար կը սիրէիք՝ որոյ վաղաժամն մահուան վրայ այնչափ ցաւեցանք, այն աշակերտդ՝ զոր կարող կը համա-

րեէք օր մի ձեր այնչափ փառաք պանծացուցած վարժապետական աԹոռն յաջորդել, հիմա պարզ գիտը մի է սուրբ Տաճարին նուիրեալ աշակերտաց կարգն, և չատ գոհ է իւր վիճակէն։

Նախ և առաջ ներումն կը խնդրեմ որ յառաջագոյն միտքս ձեզ չիմացուցի՝ ինչպէս որ կը ցանկայէք, վարժած լինելով ձեզ խորհուրդ հարցանելու իմ մտացս և սրտիս ամեն ծալր պարագայից մէջ. բայց այս անգամ, ինչպէս ասեմ, որչափ ալ ձեր վրայ սէր և երախտագիտուԹիւն ունէի, սիրտս առաջ չգնաց այս բանս առնելու. և կարծես Թէ դերագոյն զօրուԹիւն մի լեզուս կը կապէր, և քանի անգամ որ միտքը դրի ձեր հետն այս նիւԹոյս վրայ խօսիլ՝ վախով ետ քաշուեցայ և ինչ ասելիքս ոչ գիտէի։ Այսհասկ եղէք որ այս բանս իմ կողմանէս անվստահուԹիւն չէր, այլ կը վախէի որ մի գուցէ այս առաջին անգամ ձեր հետն անհամձայն գտուիմ՝ այնպիսի բանի մի մէջ՝ որ կեանքս բոլորովին պիտի փոփոխէր, և որոյ մէջ կ'իմանայի որ ձեր աղգասիրուԹեանն պիտի չհաւանէի՝ եԹէ իմ ներքին զգածմանս հակառակ ելնէր. ուստի անօգուտ տեղ զձեզ պիտի տրամեցնէի. գուք ալ գիտէք որ զձեզ վշտացնելն՝ ոչչափ իմ կամացս հակառակ է։

Մանաւանդ որ երկայն փորձառուԹեամբ գիտեմ՝ որ գուք խղճմտուԹեամբ կը պատուհաք ձեր աշակերտաց աղաւուԹիւնն՝ ԹէպէՀ և ձեր կարծեաց չյարմարի. ուստի այսօր իմ որոշմունքս աւարտած գործ լինելով՝ ոչ քաշուիմ պարզապէս ասել ձեզ ինչ որ արարի, որովհետև ալ հակաճառուԹեան և երկմտուԹեան բան չմնար ձեզ. վասն զի միտքս՝ առնելու որոշմանս վրայ խորհուրդ հարցանել չէ, այլ Թէ ինչ պատճառով այսպէս գործեցի։

Գուք միշտ զիս կը մեղադրէիք, սիրելի վարժապետս, որ խորհրդականուԹեան հակամիտուԹիւն

մի ունիմ, և իրաւունք ալ ունէիք. վասն զի ոչ գի-
տեմ թէ մանկութեանս ժամանակէն մնացած հա-
ւատքէս է՝ թէ հոգւոյս ինքնածին տրամադրութե-
նէն՝ միշտ աշխարհքէս բարձրագոյն բան մի գտնելու
փափաք ունեցել եմ բնազդապէս ըղձալով աւելի
գեր 'ի վերոյ պարունակի մի հետ հաղորդակցու-
թեան մէջ մտնել. և այս բանիս համար ալ էր որ ձեր
դասախօսութեանցն հետևեցայ. որովհետև լսած էի
որ դուք պլատոնական էք, և թէպէտ 'ի լրոյ միայն
ճանաչէի Պլատոնի վարդապետութիւնն, սակայն
գիտէի որ ամենէն աւելի ոգևորական վարդապե-
տութիւնն էր քրիստոնէութենէ ետև, յորմէ հե-
ռացել էի մտացս տարակոյսներուն և երիտասար-
դական հասակիս բորբոքման պատճառաւ: Կը յու-
սայի որ ձեր առաջնորդութեամբն և ձեր ուսու-
ցածներուն լուսովն՝ պիտի բարձրանամ 'ի խոկումն
յաւիտենական գաղափարաց և պիտի ստանամ ըզ-
ճշմարիտն զգեղեցիկն և զբարին: Ձեր դպրոցն յա-
ճախելուս չզղջացի՝ ուր որ գիտութեան և առաքի-
նութեան հոգւոյս մէջ աճելուն համն կ'առնուի.
այնպէս որ կենացս ամենէն աւելի մրրկալից ժամա-
նակն՝ 'ի չափազանց ցանկութեանց ազատ՝ եռան-
դեամբ խոյացայ՝ գոնէ հայեցողաբար՝ դէպ 'ի գերա-
գոյն աշխարհ մի:

Դուք զիմաստասիրութիւնն Քոնտիյլեաքի և իր
յաջորդաց ձեռքն անկած գտել էիք՝ այսինքն ոչ
այնչափ թանձր զգայականութենէ տիրապետեալ՝
որպիսի էին յառաջ քան զնոսա եղած բնութենա-
կանաց և նիւթականաց վարդապետութիւններն,
սակայն տակաւին զգայութեանց և մարդկան ստո-
րին մասին գերի եղած: Ձեր ձեռքին և դրօշուն տակ
պատերազմեցայ կերպարանափոխ լեալ զգայու-
թեան դրութեան կողմանէ, որ այն ալ յետոյ ա-
ւելի ևս նոր կերպարանք մի էառ՝ Լարոմիկիէրի հան-

ճարեղ և արդարադատ պատկերողութեամբն: Դուք
կատարեալ կերպով մեզ ցուցիք՝ որ այս դրսէն փոխ
առնուած զարդերս՝ այն վարդապետութեան խ-
կութիւնն ոչ փոխէին՝ որ մարդկութեան խեղճ օրե-
րուն մէջ (այսինքն Փրանկիոյ խռովութեան և ան-
հաւատութեան ժամանակ) հնարուած էր, և եթէ
ամեն բան ուղէինք մարդկային զգայական մասին
հպատակել՝ այնոր մէջ եղած գերագոյն մասին հա-
սու լինել ոչ կարէաք, և ոչ ալ այնոր հոգւոյն բար-
ձրագոյն իղձերն և խորին պիտոյքն մեկնաբանել. և
սակայն մեր բնառածն ալ այս էր: Ուստի կարօտ
էինք իրենց անուան արժանաւոր բնազանցութիւն
հոգեխօսութիւն և բարոյախօսութիւն մի հնարելու՝
որ վերացմունքն իրականութեանց տեղ չդնեն, ե-
րևակայեալ իրերն գործ չսեպեն, ու հաճոյքն կամ
շահասիրութիւնն 'ի պարտուց և 'ի պատշաճից
որոշեն:

Այս բանիս համար հարկ եղև որ ուրիշ դպրոցի
մի դիմենք. որովհետև Փրանկիոյ մէջ՝ գոնէ պաշտօ-
նական դպրոցներն ուրիշ տեսակ իմաստասիրու-
թիւն ոչ ուսուցանէին: Ուստի պարտաւորեցանք
սկովտական դպրոցն անցնիլ ուր որ Ռիտ և Տըկալտ-
Սթիւար՝ նոր իմաստասիրութիւն մի կ'ուսուցանէին
և մեծ յաջողութիւն գտանէին. նոր որ ասեմ գոնէ
ըստ շաւղին՝ որ դրութիւններն և ենթադրութիւն-
ներն մերժելով՝ դիտողութեան կը վստահէին, և ա-
մենայն հետևանք հոգեխօսական փորձառութեամբք
կը հաստատէին: Այս կերպս Պաքոնի շաւղին խոհա-
կան գործադրութիւնն էր՝ ոգեկան կարգի իրաց
վրայ յարմարցուցած՝ բնական երևոյթներն խնամ-
քով 'ի նոցանէ զատելէն ետև, որպէս զի եթէ հնար
էր կարողանան փորձառական դիտութիւն մի յօրի-
նել ոգւոյ և իւր կարողութեանց վրայ՝ հանգէտ գի-
տութեան նիւթոյ և իւր զօրութեանցը: Սկովտա-

ցիք այս երկու գիտութիւններս կը միացնէին՝ մին ոգւոյ և միւսն նիւթոյ, որոց առարկայն թէպէտ և բոլորովին տարբեր էր՝ բայց շաւիղն նոյն էր, և այս գիտութիւնս կոչէին իմաստասիրութիւն բնական:

Սակաւ ժամանակէն այս արդարացի բայց սահմանափակ վարդապետութեանն ալ ծայրն հասանք, և մտաւորական և բարոյական կարողութեանց վրայ շատ մի առանձնագրութիւններ յօրինելէն ետև, որք թէ և օգտակար էին, բայց հիմնական բան մի չէին, մեք մեզ միշտ կը ստիպուէինք հարցանելու թէ ուրեմն ինչ է մարդկային հոգին, ուստի գայ և յո՛ երթայ: Բնութեան ոչ մի առաջարկն ալ թէ ծագման վրայ թէ վախճանի՝ չէինք կարողացած լուծանել, և մեր իմաստասիրութեան ուղեծուծն ուրիշ բան չէր՝ բայց եթէ նախնական սկզբունքն ճանաչել և հաստատել, և անտի յառաջ չկարելով երթալ՝ մեր ուսումնական հետազօտութիւնն ալ հոն կ՛աւարտէր: Եւ մեք բնութեան համարեալ օրէնքներ կը հաստատէինք՝ ասելով թէ իրք այսպէս են՝ վասն զի այսպէս եղեալ են ինչպէս Կիկերոն իր դարուն մէջ ասէր Այսպէս հասպատեալ է 'ի բնութենէ. ուստի մեք ալ մեր օրերն քան զինքն աւելի բան մի չգիտելով՝ նոյնպէս ասէաք: Այսու կերպով իմաստասիրութիւնն խճողեցինք շատ մի նախնական սկզբամբք, նման արդի տարրալուծից՝ որ ամեն օր նիւթոց նախատարերց թիւն կը շատցընեն, կամ թէ ասեմք այն պարզ մարմնոց՝ զորս մինչև հիմա լուծել անկարելի եղած է:

Սկովտական գպրոցէն ալ ձանձրացած՝ դէպ 'ի Գերմանիա դարձանք այսինքն 'ի միոյ ծայրէն միւս ծայրայեղն անկաք: Վախկոտ և խղճահար փորձառութեան յաջորդեց յանդուգն և թափառական հայեցողութիւն մի. և մինչդեռ երկրաքարշ կը սողայինք՝ յանկարծ դէպ 'ի ամպերն թռչիլ ուզեցինք, և Ոսսայն Պելիոնի վրայ դիզեցինք յերկինս հասնելու

համար, բայց Տիտանեանց պէս մեք ալ չյաջողեցանք. իրաւ երկնից տէրն զմեզ կայծակնահար չսպաննեց՝ սակայն քթերնիս հողն յերկիր անկաք՝ զկնի բազում աշխատութեամբ Քանթի հետ դատաքննութեան պարապելնուս, Ֆիխթէի հետ դաղափարականութեան, Շէլլինկի հետ բացարձակ նոյնութեան, և Հէկէլի հետ վերամբարձական բանախօսութեան. յորոց առաջինն զմեզ սկեպտականութեան կը տանէր, երկրորդն երևութականութեան, երրորդն 'ի չփոթութիւնն ոգւոյ և նիւթոյ, և չորրորդն յոչէութիւն: Իքսիոնի պէս հողմս սերմանեցինք և մըրրիկս քաղեցինք՝ գոնէ մեր մտաց մէջ:

Այս բարձրաբերձ հայեցողութիւններէն՝ ընտրականութեան մէջ գահավիժեցանք, որ միշտ նոցա վարդապետութիւնն եղած է՝ որ իրենց սեպհական վարդապետութիւն մի չունին, և ունելէն ալ յոյսերնին կտրած են: Ուստի ձեռք զարկինք իմաստասիրութեան պատմութիւնն գրելու, որովհետև իմաստասիրութիւն մի չունէինք, միաքերնիս դնելով որ ամեն գպրոցաց նոյն իսկ իրերամարտ կարծեօքն՝ իմաստասիրութիւն մի յօրինեմք. որ ուրիշ բան չէր՝ բայց եթէ ամեն տեսակ մոլորութեամբք ճշմարտութիւն յօրինել: Բայց այս փորձիս մէջ ալ չյաջողեցանք. և պատճառն յայտնի է. վասն զի իւրաքանչիւր դրութեան մէջ ճշմարիտն որոշելու և առնելու համար, և այս ամեն կցկտուր մասերուս միութեամբն գիտութիւն մի կազմելու համար՝ նախ և առաջ ձեռքերնիս չափ մի ունելու էինք՝ որ չկար, այսինքն զճշմարտութիւնն ինքնին, զոր եթէ ունեցած լինէաք՝ ուրիշ տեղ բնառելու կարօտութիւն ոչ ունէաք:

Դուք սիրելի վարժապետս՝ ձեզ սեպհական ընտրական իմաստասիրութիւն մի յօրինեցիք՝ յորում կը տիրէ գերմանական հայեցողութիւնն՝ որ ձեր

պլատոնական բնազգմանց լաւ կը յարմարէր՝ սկով-
տական փորձառութեամբ բարեխառնած՝ որ ձեր
վարդապետութեանն աւելի պայծառութիւն կու-
տայ: Ես ձեր խոհեմութեան վրայ կը զարմանայի՝
բայց առանց այնոր հետևելու, և հարկաւ կը յիշէք
որ այն ատեններն էր՝ որ 'ի ձէնջ հրաժարելով 'ի
Գերմանիա անցի, որպէս զի լեզուն աւելի հիմամբ
ուսանիմ, և իր իմաստասիրութիւնն աւելի լաւ ըմ-
բըռնեմ՝ իմաստասիրաց հետ կենակցելով. որպէս
հին ատեն Պիւթագոր, Սոլոն և Պլատոն յունաց
իմաստուններն՝ Եգիպտոս գնացին՝ հոն տեղի իմաս-
տուններուն աշակերտելու համար: Շատ զարմա-
ցայ այս մարդկանց հմտութեան վրայ, և նոցա հայե-
ցողութեանց յանդգնութեանն վրայ կը հիանայի,
բայց շատ համարում մի չունեցայ գրքերնին կար-
դալով, և մանաւանդ մէջերնէն ամենէն հռչակաւո-
րաց հետ խօսակցելով: Իրաւցնէ շատ զօրաւոր մըտ-
քեր տեսի և նրբին և յանդուգն ոգիներու հանդի-
պեցայ, և ներածութեամբ հզօր հանճարներու՝ որ
իրենց սկզբանցն ամեն տեսակ հետևութիւններն
անխռով կ'ընդունէին՝ նոյն իսկ անտեղի երևցած-
ներն: Հազար անդամ ինձ խոստացան բացարձակի
գիտութեան զիս հասուցանել՝ որ ամեն առաջարկ
պիտի լուծէր, ամեն դժուարութիւն պիտի լուսա-
ւորէր և ամեն հակաճառութիւն պիտի վերջացնէր՝
հակախօսութիւններն իրարու հետ հաշտեցնելով:
Իւրաքանչիւր ոք մեծամեծ գործերու ձեռք զարկած
էր՝ միտքն դնելով որ ամեն բան պիտի մեկնաբանէ՝
զնոսա ստեղծողին պէս, մանաւանդ թէ իրենք զի-
րենք արարչին տեղն դնելով. այնպէս որ իրենց խօս-
քին նայելով՝ սակաւ ժամանակէն իմաստասիրական
աշխարհի մէջ մեծ լոյս մի պիտի ծագէր: Շատ տա-
րիներ սպասեցի, և տեսի որ գերմանական իմաստա-
սիրութիւնն դեռ չկարաց նորոգել զտիեզերս և
զգիտութիւն:

Երբ Գերմանիայն թողի հայրենիքս դառնալու
համար՝ իմ ուսումնական կահս այնչափ էր՝ որչափ
հոն գնացած ժամանակս, այսինքն աւելի բան մի չէի
ուսեալ, բայց յոյսս նուազած և վհատութիւնս
առաւելած: Մատենագրաց անձն ճանաչելէս ետև՝
իրենց գործոց յարգն ալ իմ առջիս նուազեցաւ, և
շատ ապշեցայ տեսնելով թէ որչափ իրարու ներհակ
էին իրենց գրքերն խօսքն ուսուցածն և իրենց ան-
ցուցած կեանքն. վասն զի իմաստասիրութիւն շատ
գտի՝ բայց իմաստասէր յոյժ սակաւ. և աչքս բա-
ցուելով այս բարձր հայեցողութեան պատրանքն
հասկացայ, որ միայն գիրք շարադրելու և դասա-
խօսութեան յարմար՝ բայց իրական կենաց վրայ
յոյժ սակաւ ազդեցութիւն ունէր: Մինչդեռ ես Յու-
նաստանի և Եգիպտոսի իմաստնոց պէս իմաստուն-
ներ կը բնառէի՝ ուրիշ բան չգտի բայց եթէ վարժա-
պետներ և գիտուններ:

Երբ Բարիզ դարձայ՝ սակաւ մի ժամանակ ընտա-
նեացս հետ անցընելէն ետև՝ *** քաղաքն դարձայ
իմ դասախօսութիւնս յառաջ վարելու համար. բայց
ամսէ մի ետև՝ հիւանդացայ և ստիպուեցայ նորէն
արձակուրդ խնդրելու: Մարմինս և ոգիս շատ տկա-
րացած էին, և այս ընդհանուր անկարողութեանս
հետ՝ ամեն բանէ զզուում մի կ'իմանայի, և անզօրու-
թիւն մի խորհելու և աշխատելու. վերջի տարիներ-
ու անդադար աշխատութեամբն գլխուս վրայ ա-
մենևին ոյժ չէր մնացած. ստամոքս ալ շատ դժուա-
րութեամբ իր պաշտօնն կը կատարէր, և հազիւ թէ
կեանքս 'ի քարշ ածէի. բոլոր մարմինս թմրու-
թեան մէջ էր, մանաւանդ միտքս և սիրտս, այնպէս
որ մտաւորական կեանքս ալ՝ բնական կենացս հետ
հատնելու վրայ էր. և կը տեսնէի որ բանի մի չէի
դար, և այս զգացումս ամեն ցաւերէս աւելի սաս-
տիկ էր:

Երեք ամիս այս վիճակիս մէջ մնացի՝ բժիշկներն յինէն ձեռք քաշած, և ես ալ ինքզինքս թողած՝ անտանելի խորհուրդներով ինքզինքս կը տանջէի: Ահաւասիկ, ասէի, իմ ընթացքիս մէջ կապուեցայ արգիլուեցայ՝ երբ կը յուսայի որ փառօք յառաջ պիտի երթամ. իմ սկզբնաւորութեանս առաջին յաջողուածներն ընդհատեցան, և թէ որ մտաւորական աշխատութիւններս 'ի բաց պիտի թողում՝ ալ աշխարհիս վրայ ինչ կը մնայ ինձ առնելու, որովհետև եթէ բան մի կ'արժէի այնով էր. իմ փառասիրութիւնս և հպարտութիւնս երկուքն ալ տժգոհ էին, և ոչ դիտէի թէ կենացս մնացորդն ինչ բանի գործածեմ: Ճշմարտութեան և դիտութեան ծարաւն՝ որ քան զփառս աւելի զիս ոգևորած էր՝ բոլորովին սրտիս մէջ մարած չէր. բայց կը տեսնէի որ զայն դոհացնելու կերպ մի չկայ՝ որովհետև ես իմ կարողութեանցս տէր չէի: Ուստի կը մտածէի որ երիտասարդական հասակիս մէջ մեռնելու էի, կամ որ քան զմահ չարագոյն է՝ անծանօթ 'ի մարդկանէ 'ի քարշ ածելու էի անօգուտ և խեղճ կենաց ծանրութիւնն՝ ապա մեռնիլն բիւր անգամ այլ լաւ էր: Եւ մտքէս կ'անցնէր թէ արդեօք ոչ պարտաւորէի զաշխարհս և զդերդաստանս ազատել անպտուղ կեանքէ մի, ինչպէս որ պտուղ չբերող ծառն կը կտրեմք:

Այս մեղապարտ խորհուրդս ինձ սովորութիւն եղած էր և միշտ մտացս մէջ կը պտըտէր՝ երբ օր մի ներքին ձայն մի՝ որ անշուշտ խղճմտանացս ձայնն էր՝ կամ այնոր ձեռօք խօսողի մի, ասաց ինձ. « Դու մեռնիլ կ'ուզես հա՞, բայց տեսնեմք կեալ սկսա՞ծ ես. քանի որ աշխարհք եկած ես՝ ինչ բարիք գործած ունիս. քոյ մանկութիւնդ խնամքով մեծցնողներուն և բարերարներուդ ինչ փոխադարձ արարեալ ես. հայրենիքդ քեզ ուսոյց և ամենէն հռչակաւոր վարժարանաց մէջ զքեզ սնոյց, ինչ գործե-

ցիր քոյ հայրենեացդ համար. քանի մի տարի վարժապետութիւնդ՝ աւելի քոյ փառքդ խնդրելով՝ քան թէ աշակերտացդ օգուտն՝ նմա ունեցած պարտքդ մի թէ կը վճարե՞ն. թերևս լաւ խօսեցար, բայց տեսցուք լաւ ալ գործեցի՞ր, և այն ամեն գեղեցիկ հայեցողութիւններդ՝ որով երիտասարդաց սիրտն քաշեցիր՝ ո՛ւր տարին զնոսա և ո՛ւր տարին զքեզ. բայց եթէ անվախճան զրոյցներու և խօսքերու՝ որ ունայն սնունդ են հետաքննութեան ժողովրդեան և զրաբանութիւնք »:

« Եւ հիմա որ հիւանդութիւնն կ'արգելու զքեզ այս սոփեստեսի կամ իմաստակի արուեստդ առաջ տանելու՝ որոյ մէջ շատ անգամ՝ չգիտնալով իսկ մոլորութիւնն ճշմարտութեան հետ կը ծաւալէիր, յոյսդ կտրած կը լքանիս, և հպարտութենէդ խաբուած՝ ինքզինքդ դահընկէց թագաւոր մի կը սեպես՝ որ ամօթէն ալ ապրիլ ոչ ուզէ: Բայց թէ որ յիրաւի մեռնիս՝ ինչպէս որ փափաքիլ կ'երևցնես, ինչ պիտի լինիս՝ ո՛ւր պիտի երթաս. և որովհետև Աստուծոյ գոյութեան կը հաւատաս որ զքեզ վախճանի մի համար ստեղծել է, և երկրիս վրայ գրել է՝ իւր քեզ տուած բարեաց փոխարէն՝ բան մի գործելու համար, ինչ ունիս իրեն նուիրելու՝ եթէ հիմա իր դատաստանին առջևն ելնես: — Ապա երթալէդ առաջ հաշիւդ տես ո՛ւր են քոյ բարեգործութիւններդ, և անդիի աշխարհք երթալու ատենդ՝ ինչ պիտի տանիս հետդ որ արժէք մի ունենայ: Իրաւ՝ ճշմարտութիւնն սիրեցիր և եռանդեամբ զայն բընտռեցիր. բայց աւելի զայն ստանալու և այնով պարծելու համար. քոյ նմաններդ բարւոյ ճամբուն մէջ դնել և ուղղել ուզեցիր՝ բայց մի թէ քան զնոսա վեր բարձրանալու և նոցա վրայ իշխելու համար չէ՞ր: Դու զքեզ և միշտ զքեզ բնտռեցիր՝ գործած սակաւ մի բարեացդ մէջ ալ. և այսոր ապացոյցն ալ այս է

որ՝ կեանքդ ալ քոյ շահուդ և փառացդ համար գոր-
ծածել չկարելուդ՝ քեզ անօգուտ և անչահ կ'երևիս:
Ապա ուրեմն դու անձնասէր ես միայն՝ որ ուրիշ
բան ոչ խորհիս՝ բայց եթէ քոյ անձնական շահդ
զուարճութիւնդ հարստութիւնդ ու պատիւդ. և
որովհետև ալ ոչ յուսաս զայնս ձեռք ձգելու այս
աշխարհիս մէջ՝ վատառողջութիւնդ զքեզ անկարող
առնելուն պատճառաւ՝ կ'ուզես ուրիշ աշխարհ մի
երթալ՝ նոր Թագաւորնի մի վրայ և նոր կերպարանօք
զնոսա գանելու համար»:

Ա.յս խիստ բայց միանգամայն ճշմարիտ յանդիմա-
նութիւններս լսելով՝ զորս ինձ նմանակիցներէ ըն-
դունիլ յանձն չէի առնուր, դլուխս ծռեցի և պատաս-
խան մի չունէի տալու. յայտնի տեսնելով մինչև այս
օր անցուցած կենացս ունայնութիւնն և անպտղու-
թիւնն:

Ուրիշ անգամ ալ նոյն ձայնն ինձ ասէր. «Ա-
կայն դու կը հաւատաս յԱստուած, և յԱստուած
անձնաւորական՝ որ սիրով զքեզ ստեղծելէն ետև
նախախնամութեամբն ալ զքեզ կը պահէ. անտա-
րակոյս ինքն խորհուրդ մի ունէր՝ որ զքեզ այս աշ-
խարհս ղրկեց, և այս աստուածային խորհուրդս քոյ
վախճանդ ու կոչումդ է. գիտես իրեն այս խորհուր-
դըն, և կատարել ես քոյ վախճանդ. և մի թէ զայն
ճանաչել ու կատարել՝ երբ դասալիք լինիս քոյ
կարգէդ, և կը թողուս կը փախչիս այն տեղէն՝ ուր
որ դրուած ես մինչև ցմահ պատերազմելու համար.
նման այն վատ զօրականին՝ որ վախեն կը փախչի և
առաջնին յարձակումն տեսնելուն՝ զէնքն կը թողու.
և սակայն գիտես թէ ինչ է դասալիքներուն պա-
ւիժն, և դիմացդ այնպիսի դատաւոր մի կայ՝ յորմէ
փախչիլ և թաքչիլ անհնարին է»:

«Գոնէ իմաստասէր չլինէիր. ապա ուրեմն սկըզ-
բանդ վրայ հաստատ կեցիր: Եթէ անձնաւորական

Աստուած մի կ'ընդունիս՝ պէտք է որ անհուն իմաս-
տութեանն և ամենակարողութեանն ալ հաւատաս:
Ուստի դու բացարձակապէս 'ի նմանէ կախումն ու-
նիս, և իւր կամքն քոյ կամացդ կանոնն լինելու է.
ինչու ուրեմն միշտ այնոր գէմ կը հակառակիս՝ փո-
խանակ թեզադրութեանցն ունկնդիր լինելու, և իւր
բարերարութիւններէն օգուտ քաղելու: Ուստի, դու
հայեցողաբար միայն Աստուծոյ կը հաւատաս, իսկ
գործնականին գալով՝ և զքեզ ուղղելու համար
գրեթէ այնպէս կը գործես՝ որպէս թէ Աստուած
չլինէր՝ իւր կամքն խօսքն և օրէնքն մոքդդ անգամ
չանցընելով»:

«Եւ սակայն մանկութենէդ 'ի վեր ուսեալ ես՝ որ
աշխարհիս սկիզբէն՝ ինքն մարդկանց հետ խօսել և
ուսուցել է երկնից և երկրի իրերն, և իւր օրէնքն՝
զոր քարոզեցին Մովսէս և մարգարէք և ինքն իսկ
Յիսուս Քրիստոս՝ հիմն է ամենայն մարդկային օրէնս-
գրութեանց: Նմանապէս ուրիշ անգամ հաւատացել
ես 'ի Յիսուս Քրիստոս Բանն աստուածային մարգա-
ցեալ, և յԱստուած մարդ եղեալ վասն փրկութեան
մարդկան, սիրել ես զինքն և երկրպագել ես որպէս
Փրկչիդ և Աստուածոյդ, ուրեմն ինչու հիմա կը մեր-
ժես. ինչու ետ առեր քոյ հաւատքդ և սէրդ. ինչու
Թշնամի կամ դասալիք ես յԵկեղեցւոյ որ զքեզ
ծնաւ 'ի գերբնական կեանս քրիստոնէութեան. ա-
պահովի ես որ այդ Թողածդ և ուրացածդ ոչ է որդի
Աստուծոյ. լաւ մի քննէր ես այս մեծ խնդիրս, որոյ
այսի կամ այն կերպով լուծուելն աշխարհիս երեսն
պիտի փոփոխէ և մարդկութեան վախճանն պիտի
այլափոխէ: — Այլ ոչ. ամենևին չես համարձակած
այս սարսափելի առաջարկութեանս ուղղակի մօտե-
նալ. և բաւական սեպել ես զայն ուրանալ՝ պատ-
ճառանք բերելով Թէ ոչ հասկանաս. որպէս Թէ ա-
մեն խմաստասէրք՝ իրենց ընդունիլ ստիպուած ամեն

բանն հասկացած լինէին՝ որ այնպէս չէ: Այլ դու կ'ուզես որ քու խելքդ էակի և կարելւոյ չափն համարիս. ապա ուրեմն դու ուրանալու համար իմաստասէր եղել ես. գոնէ ուրացածներուդ տեղ ուրիշ բան մի կարէիր դնել: Այսոր ապացոյցն այս է որ այսօր քոյ մարմնոյդ վատառողջութեան պատճառաւ՝ խելքդ ալ անկարող եղած է՝ խորհածդ առնելիքդ և լինելիքդ ոչ գիտես. ունայնութեան մէջ միայնակ մնացել ես՝ ոչինչ դարձածի պէս առանց օգնականութեան և լուսոյ առանց քաջութեան յուսահատութեան մէջ անկած: Յիրաւի եթէ իմաստասիրութիւնն բան մի կ'արժէ՝ զայն յօգնութիւն կանչելու և գործադրելու ճիշդ ատենն հիմա է »:

Այլ աւաղ, իմ իմաստասիրութիւնս բան մի ոչ ասէր՝ երբ այնչափ պէտք ունէի լուսաւորուելու սթափելու և զօրանալու, այն որ այնչափ գեղեցիկ խօսքեր զրուցել կուտար ինձ՝ երբ հրապարակաւ փառք վաստկելու համար կը խօսէի. բայց հիմա իմ թատրոնիս վրայ չէի, և ամեն շլացմունք աներևոյթ եղած էին. և ես մենաւորիկ իմ առջիս կեցած՝ մարմնով և մտօք հիւանդ՝ ճար և դարման մի ոչ դտանէի իմ անկարողութեանս. և միայնակ կանգնած իմ խղճիս առջին որ ուրիշ անդամներէն աւելի խստութեամբ զիս կը յանդիմանէր: Մինչդեռ միտքս շփոթած էր և հոգիս խռոված ներքին ձայնն նորէն սկըսաւ ասել.

« Դու ոգևորական իմաստասէր լինելուդ վրայ կը պարծիս, և իրաւունք ալ ունիս. որովհետև այնու է որ բան մի կ'արժես՝ գոնէ բնութենականութեան և անաստուածութեան առջին. և գոնէ քու բռնած ճամբայդ բարձրագոչ բողոք մի է այնոց դէմ՝ որ աշխարհիս մէջ ամենէն անտեղի և անարգ կարծիքն է: Դու վարդապետութիւններդ պաշտպանելու համար՝ եօթնեւտասներորդ դարու իմաստասիրաց աւանդութեանն կը դիմես՝ պարծելով որ աշակերտ և յաջորդ ես այն հանճարեղ մարդկանց՝ որ արդի ընկերութեան ջահերն եղեն. որպիսիք էին Լէյպնից, Տէքարթ, Բասքալ, Պոսիւէ, Ֆենելոն, և այլն, և այլն. բայց այս երևելի մարդիկս ամենքն ալ քրիստոնեայ էին, և ոչ միայն Աստուծոյ կը հաւատային, այլ և Յիսուսի Քրիստոսի և նորա խօսիցն. և իրենց թէ հաւատոցն և թէ իմաստասիրութեան մէջ յայտնութիւնն և գերբնականն կ'ընդունէին, և անհերքելի է որ իրենց բարձր մտաց լոյսն՝ իրենց հաւատոց լուսովն աւելի կը պայծառանար. ինչո՛ւ դու ալ նոցա պէս քրիստոնեայ չես. և թէ որ նոցա հետևիլ և վարդապետութեանցն նմանիլ կ'ուզես, ինչո՛ւ այն վարդապետութեան մէջէն դուրս կը ձգես ճիշդ այն բանն՝ որ քան զայլս աւելի ճշմարտութիւն զօրութիւն և պայծառութիւն տուաւ իրենց վարդապետութեանն: Մի թէ այս մարդիկս՝ որոց պաշտպանութեանն ապաւինած ես՝ խաբեբայ կամ խաբուած կը համարիս. և կարծես թէ իմաստասիրութեան մէջ այսչափ զօրաւոր մտքերն՝ զորս իբրև քոյ վարժապետներդ 'ի վկայութիւն կը կոչես, ակարամիտ և կեղծաւոր մարդիկ էին իրենց կենաց ընթացից մէջ և բարոյականն ուսուցած ատեննին: Վերջապէս ինչո՛ւ դու ալ նոցա կերպովն ոգևորական չես, և քրիստոնեայ իմաստասէր որպէս զնոսա: Թերևս քոյ ընտրողականութիւնդ պիտի ասէ թէ նոցա մէջ գտուած ճշմարիտ բաներն կ'առնու՝ այսինքն իրենց մտածութիւններն, և կը մերժէ՝ ինչ որ նոցա հաւատքէն յառաջ կուգայ, կամ թէ ինչ որ նոքա 'ի քրիստոնէութենէ առած են, անտարակոյս որպէս մոլորութեան և պատրանաց արդիւնք սեպելով զնոսա: Շատ լաւ, եթէ այսպէս է՝ ինչո՛ւ այս մարդիկս՝ որ անհամեմատ հանճարեղ անձինք էին՝ յառաջ քան զքեզ նոյն բանն ոչ ծանեան և չասա

ցին. քոյ վարպետներդ կարող չէին քեզ չափ լուսաւորեալ ընտրողական իմաստասէր լինել»:

Կը խոստովանիմ որ այսոր ալ պատասխան մի չունէի տալու, որովհետև այն աստիճան անպատկառ յանդգնութիւն չունիմ որ զԼէյպնից, զՊոսիւէ, զԿարդեսիոս, զԲասքալ և զՖենելոն խաբեբայ կամ խաբուած համարիմ, և ոչ ալ ինքզինքս քան զնոսա հանճարեղ սեպեմ: Յետոյ այս ալ կը մտածէի թէ այս մարդիկս որ լոյս և փառք են արդի իմաստասիրութեան՝ իրենք ալ աշակերտ էին Հարց և Վարդապետաց Եկեղեցւոյ առաջին դարուց և միջին դարու, յորոց շատերն յիմաստասիրութենէ անցեալ էին 'ի հաւատս, որպէս սուրբն Յուստինոս, Տերտուլիանոս, սուրբն Աւգոստինոս և այլք բազումք, և կերպն գտել էին ոչ միայն զնոսա իրարու հետ համաձայնելու՝ այլ և իրերօք զայնս զօրացնելու: Շատերն ալ որպէս սուրբն Անսելմոս, սուրբն Պոնավէնթուրա և մանաւանդ սուրբն Թովմաս (Ագուինացի), իրենց դարն լուսաւորել էին խորին և դրեթէ հանրական գիտութեամբ. և ինքնիրենս ասէի. ով եմ ես որ ապախտ առնեմ կամ մերժեմ այսչափ հզօր իմաստուններն, որ անտարակոյս դոնէ հանճարով և հըմտութեամբ բոլոր Փրանկիոյ և Գերմանիոյ իմաստասէրներն ծախսու կ'առնուն՝ զդատաքննականս զվերամբարձականս և զընտրողականս միանգամայն:

Վերջապէս, սիրելի վարժապետս, միտքս կուգար այն բանն զոր դուք շատ անգամ մեզ կը պատմէիք ձեր վաղեմի երկու դասակցաց վրայ յիմաստասիրութեան՝ որք վերջի ատեններս այնչափ համբաւով զնոյն ուսուցանէին, և որոց վախճանն իրարմէ այնչափ տարբեր եղև. մինն 'ի նոցանէ որ վարժապետներ պատրաստող կանոնական վարժարանն մտած ատեն իւր հայրենեաց և մանկութեան հաւատքն միատեղ բերած էր, յակամայս և յուսաբեկ կորոյս

զայն, և միւսն որ հոն մտեալ էր անհաւատ կամ գոնէ առանց կենդանի հաւատոց և առանց կրօնից պարտքերն կատարելու՝ ապագայ ուսմամբն քրիստոնեայ եղև, և իւր իմաստասիրական համոզմամբն որ նորոգուած և այլակերպած էին՝ բոլորովին յափշտակուած՝ քահանայ ձեռնադրուեցաւ: Սոցա առաջինն՝ որ թէ և կրօնազգած հոգի մի ունէր՝ տարակոյսներու տագնապի մէջ մեռաւ, ցաւելով որ իր անցած հաւատքն չէր կարող նորէն ձեռք ձգել, և յայտնաբարբառ հրատարակելով՝ իւր քանի մի էջերուն մէջ՝ որ նորա իմաստասիրական կտակն կը համարուի, թէ քրիստոնէական վարդապետութեան տետրակն շատ աւելի ճշմարտութիւններ ուսուցանէ, և մարդուս վախճանին վրայ շատ աւելի ստուգութիւններ կը պարունակէ, և զայն կատարելու կերպերն այլ աւելի լաւ կը սովրեցնէ՝ քան թէ ամեն իմաստասիրաց գրքերն 'ի միասին[1]: Իսկ երկրորդն քրիստոնէական հաւատքն և պարտքերն՝ գիտութեան լուսովն հաստատելով, Եկեղեցւոյ մէջ պարզ քահանայի մի պէս ապրեցաւ, և յաջողեցաւ առ Աստուած դարձուցանելու շատ մի ուսումնական երիտասարդներ յորոց բազումք իր առաքելաջան հետոցն հետևեցան, և անուանի եկեղեցականք եղեն գիտութեամբ բարեպաշտութեամբ և սիրով: Կը խոստովանիմ՝ որ այս բաներս 'ի ձէնջ լսելու ատենէս 'ի վեր՝ այս վերջիններուս վիճակին կը նախանձէի, և նոցա օրինակն միտքս արթնցուց իրենց պէս քրիստոնեայ իմաստասէր մի լինել:

Այսու խորհրդով՝ որ զիս գիշեր ցորեկ հանգիստ ոչ թողուր, և զոր ոչ համարձակէի ձեզ իմացնելու՝ որովհետև աւելի ծածուկ բնազդում մի էր և տե-

1 Առաջինն Լամընէի համար ասացած կ'երևի, իսկ երկրորդն Լաքորտէրի: Ծն. Բրգմ:

սակ մի նախազգացումն՝ քան թէ որոշեալ դաղափար, սկսայ անյագ կերպով ընթեռնուլ զԱւետարանն և զՀարս Եկեղեցւոյ, ոչ եթէ առաջուան պէս նոցա թերութիւնները գտնելու և դատաքննելու կամ պարսաւադիտութեան համար, այլ անկեղծ փափաքանօք ճշմարտութիւնն խնդրելու: Եւ յիրաւի այնոց մէջ գերազանց տեսութիւններ գտի, և այնպիսի դաղափարներ՝ որոց վրայ յառաջագոյն չէի անդրադարձած: Եւ քանի որ միտքս կը բարձրանար և կ'ընդարձակէր, հոգիս ալ աւելի կը հանդարտէր, և խաղաղութիւնն կը մտնէր հոն յուսոյ հետ միատեղ կամ գոնէ համակամութեամբ. և որչափ որ կը ջանայի համն առած վարդապետութիւնն գործով ալ կատարել՝ այնչափ աւելի ինքզինքս լաւացած կը գտնէի: Նոյն իսկ մարմինս ալ որ այնչափ տկարացած էր և սրտիս և մտացս յուզմամբն չարչարուած ու տանջուած՝ կը սկսէր այս խաղաղութեանս մասնակցիլ, այնպէս որ կարծես թէ բոլոր կեանքս ու գոյութիւնս կը նորոգուէր:

Եւ սակայն դեռ շատ կարևոր նիւթոց մէջ տարակոյսներ և երկմտութիւններ զիս կը վրդովէին, և սուրբ Գրոց մէջ շատ անցքեր ու գործեր կային՝ որ ինձ մթին անիմանալի ու նաև հակախօսական կ'երևէին: Աւելի կը տագնապէի հրաշից կարելութեան վրայ՝ որոց միտքս ոչ ուզէր համոզուիլ, որովհետև երկայն ատենէ 'ի վեր վարժած էի ամեն բան իմ խելացս չափուն դատել ու բացատրել: Ուստի կարօտութիւն կը զգայի լուսաւորեալ և բարեզգած մարդ մի գտնելու խորհրդակցելու համար, և ոչ դիտէի թէ որու դիմեմ. 'ի միոյ կողմանէ մարդկային նկատմունքն զիս կը բռնէր՝ իմ իմաստասիրական վիճակիս պատիւն պահելու պատճառանօք, միւս կողմանէ ալ կը փափաքէի իմաստուն քահանայի մի հետ խօսակցելու՝ որ միանգամայն աստուածային և մարդ-

կային դիտութեանց հմուտ լիցի: Դէպքն մանաւանդ թէ Նախախնամութիւնն ինձ օգնեց, և երբ ամենևին մտքէս ոչ անցանէր՝ ինքնիրեն առջևս ելաւ:

Արձակրդի ժամանակս դեռ աւարտած չէր, և Բարիզու մէջ ատենս կ'անցընէի՝ որպէս զի առողջութիւնս տեղն գայ՝ որ չափազանց աշխատելովս շատ վնասուած էր, բայց աշխատութենէ աւելի մտացս տատամսութիւններէն և հոգւոյս մէջ զգացած ձանձրութենէս: Երբեմն երբեմն Սորպոն կ'երթայի հռչակաւոր դասերն լսելու համար, օր մ'ալ հետաքրքրութեամբ բարոյական աստուածաբանութեան դասատունն մտի. դասախօսն ալ ճիշդ աստուածաբանութեան և իմաստասիրութեան յարաբերութեանցն և զանազանութեանն վրայ կը խօսէր, և հետևապէս հաւատոց և բանի վրայ: Հիացայ և զդածուեցայ այն բարձր խորհրդածութեանց վրայ՝ որովք այս ծանր խնդիրս պարզաբանեց լուսաւոր խօսքերով և ներքին համոզմամբ սրտի. որք կարծես թէ փայլակի պէս՝ ընդարձակ հորիզոն մի բացին յանկարծ առջիս՝ զոր տակաւին չէի տեսած. և ներհայեցութեամբ տեսի որ հաւատոց և բանին (մտաց) առարկայն նոյն լինելով՝ որ է ճշմարտութիւնն, կարելի է նոցա կատարելապէս իրարու հետ համաձայնիլ՝ առ 'ի ճանաչել զնոյն, և իւրաքանչիւր 'ի նոցանէ կարէր զայն իւր ճամբուն և լուսուն յայտնել. հաւատքն 'ի ձեռն լուսաւորութեան՝ յայտնեալ խօսից, և բանն 'ի ձեռն ողջմտութեան որ շնորհուած է նմա, և բնական թափանցողութեամբ մարդկային հանճարոյ: Ուստի փոխանակ իրարու հակադրելու զնոսա և իրարու հակառակախօս երևցնելու՝ հարկ է երկոցունց զօրութիւնն ալ միացնել մի և նոյն ուղղութեամբ՝ առ 'ի ապահովագոյնս հասանել 'ի վախճանն՝ որ է յայտնել և ցուցանել զճշմարտութիւն 'ի ձեռն դիտութեան՝ որ իցէ միանգամայն աստուա-

ծային և մարդկային: Եւ այս բանս կարծուածէն աւելի դիւրին է՝ երբ մարդ այս բանիս ձեռք զարնէ անկեղծութեամբ և քաջութեամբ, և մանաւանդ մեծանձն ըղձիւ ընդգրկելու զծանուցեալ ճշմարտութիւնն՝ ընդդէմ ամենայն նախապաշարմանց և ամենայն արգելից որ ընդ առաջ ելանեն:

Դասախօսն եռանդուն կերպով կը յորդորէր իւր ունկնդիրներն՝ քրիստոնեայ եղել են թէ ոչ, այս բանս փորձելու, առանց դժուարութենէն վախնալու, որովհետև իրենց կենաց ամենէն պատուական և սիրելի շահն ալ զնոյն կը պահանջէր: « Ձեռք առէք, ասէր նա, ամբողջ քրիստոնէութեան վարդապետութիւնն և իբրև ճշմարիտ ընդունեցէք զայն՝ որ այնպէս ալ լինելու է՝ եթէ 'ի նոյն ինքն յԱստուծոյ տուեալ է՝ որպէս աստուածաբանութիւնն յանձն կ'առնու ապացուցանելու ձեզ զայն, և ջանացէք զայն յարմարցնելու մարդուս երկրաւոր կենաց ամեն պարագայներուն. և ահա առժամայն կը տեսնէք՝ եթէ անկեղծութեամբ և անկողմնակցութեամբ զայն քննէք, որ չկայ իմաստասիրական դրութիւն մի՝ որ մարդուս ծագումն վախճանն և օրէնքն այնպէս պայծառ և պարզ կերպով բացատրէ՝ որպէս քրիստոնէութիւնն. այնչափ որ մանկունք և տգէտք անգամ՝ իրենց փոքրիկ քրիստոնէական վարդապետութեան տետրին մէջ շատ աւելի հայեցողական և գործնական գիտութիւն գտանեն և կը հասկանան՝ քան թէ ամեն ժամանակի մեծամեծ իմաստասէրներն: Արդ եթէ ծառն իր պտղոյն կը ճանչցուի՝ գիտութիւնն ալ իւր արգասիքէն կ'երևի. վասն զի հաւատոց գիտութիւնն եղած է՝ որ բանավարութեան հետ միանալով՝ արդի քաղաքականութիւնն յառաջ բերել է՝ որ շատ աւելի գերազանցէ իւր լուսովն և զօրութեամբ՝ քան զքաղաքականութիւնն հեթանոսական՝ որչափ ալ այս վերջինս պայծառապէս փայլած լիցի յաշխարհի »:

« Ապա ձեզ քրիստոնէական վարդապետութեանց ճշմարտութեանն 'ի յեղանգունէ կամ յարգեանց իրաց ապացուցութիւն մի կ'առաջարկեմ. եթէ քրիստոնեայ ազգաց հասարակաց և առտնին կենաց մէջ յայտնեալ այսպիսի գործերն՝ հեթանոսութեան մէջ ոչ գտանին՝ մի թէ անտի չհետևիր թէ ուրեմն նոր և գերագոյն պատճառ մի միջամտել է գերմարդկային զօրութեամբ՝ որ մարդկային բնութիւնն փոխակերպելով և բարձրացնելով՝ կարող արարեալ է զայն իւր 'ի ծննդենէ ունեցած պայմանէն վեր կատարելութեան մի հասնելու: Այս զօրութիւնս նոյն ինքն Աստուծոյ է՝ որ անձնաւորապէս եկել խառնուել է աշխարհիս իրացն, որպէս ծանուցեալ էր նա յետ անկմանն Ադամայ՝ փրկիչ մի խոստանալով որ յետոյ պիտի գար, և այն խոստումն գարուց 'ի գարս կը նորոգուէր նահապետաց մարդարէից և Մովսիսի ձեռօքն: Ասա է ահա խորհուրդ մարդացելոյն Աստուծոյ կամ Բանին մարմնացելոյ յանձին Յիսուսի Քրիստոսի՝ որդւոյ Աստուծոյ և որդւոյ մարդոյ, որ ինքզինք անուանեց ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք. վասն զի ինքն է յիրաւի սկիզբն և վախճան ամենայնի որ ինչ յաշխարհիս և որ 'ի հանդերձելումն: Առանց նորա բան մի չեմք կարող 'ի հիմանց և որոշակի մեկնաբանել, վասն զի ամենայն ինչ նովաւ եղև, և ինքն է գոյութեան և գիտութեան ալփայն և ովն. ինքն է միակ բանալի ամենայն իրաց փակելոց, որք նովաւ ևեթ բանին. վասն որոյ և Պաւղոս առաքեալ ասէ թէ ոչ կամի գիտել ինչ բայց զՅիսուս Քրիստոս և զնոյն 'ի խաչ ելեալ »:

Կենդանի հաւատոց ձայնն որով վարժապետն կ'արտասանէր այս խօսքերս՝ զորս ես չեմ կարող բացատրել, և իր հանճարեղ աչուըներէն ցայտած լոյսն և խօսուածքին անզարդ կերպն որ իւր հոգին յայտնապէս յերևան ածէր և կարծես թէ լիովին

մեր աչաց մէջ կը հեղուր՝ իւր ունկնդրաց վրայ ան-
բացատրելի ապաւորութիւն մի արարին. այնպէս որ
ոչ միայն խորին լռութիւն մի կը տիրէր, այլ և ա-
մենքն խոր մտածութեան մէջ անկած էին և սաստ-
կապէս զգացուած, և երբ իր ծանր բայց հոգելից
խօսքն կ'ընդհատէր՝ բոլոր բազմութեան շունչ առ-
նելու ձայնն մարդու մի միայն հևալու ձայնին պէս
կը լսուէր, որով կ'երևէր թէ ամենքն ալ նոյն ոգւով
զգացուած էին: Իմ հոգիս ալ ուրիշներու պէս նոյն
զգացումն կը կրէր, և թերևս քան զայլս աւելի,
որովհետև ներսի դիէս նոյն ատեն մղում մի զգացի
ներքին շարժմամբ՝ սոյն իսկ այս քահանայիս դիմե-
լու և իր օգնութիւնն խնդրելու՝ որում մեծապէս
կարօտութիւն ունէի:

Դասախօսութիւնն աւարտելէն ետև՝ իր դրասե-
նեակն գնացի, և դեռ բոլորովին սիրտս ելած քանի
մի խօսքով բացատրելէն ետև թէ ինչ երջանկու-
թիւն իմացել էի իր խօսքերն լսելով՝ աղաչեցի որ
իրեն յարմար երևցած ժամանակ մի որոշէ հետն
խօսակցելու, ո՛վ լինելս իրեն իմացնելով և ձեր ա-
նունն ալ յիշելով. զոր իբրև լսեց սիրով մի ժպտե-
ցաւ՝ կարծես թէ երիտասարդութեան քաղցր յի-
շատակներ իր միտքն կը նորոգուէին, և հրաւիրեց
որ վաղուան օրն երթամ զինքն տեսնելու: Անմիջա-
պէս երկրորդ օրն գնացի զինքն տեսնելու, և որով-
հետև միտքս դրել էի սիրտս բոլորովին իրեն բանա-
լու, և մտացս և սրտիս ամեն յուզմունք իրեն իմացը-
նելու՝ այսոր համար քիչ մի այլայլած էի. և ամեն
բան իրեն զրուցեցի առանց դարձուածքի և առանց
բան մի պահելու, որպէս վստահութիւնս գրաւող
բժշկի մի: Ինքն առանց խօսքս կտրելու մտադրու-
թեամբ ինձ մտիկ առնելէն ետև, երբ լռեցի՝ ծանր և
սիրալիր ձայնով մի ասաց. « Սիրելի պաշտօնակիցս,
ձեր կենաց վէպն գրեթէ իմս ալ է. ձեզ պէս ես ալ

ճշմարտութեան ծարաւովն պապակած՝ զինքն ամեն
իմաստասիրական դպրոցաց մէջ բնտռեցի, գոնէ այնոց
մէջ որ այս անուանս արժանի են. և թէպէտ վար-
ժապետաց հանճարոյն և պերճախօսութեան վրայ
կը զարմանայի՝ բայց ուղածս չգտի: Հոգիս սնունդ
տուող և առաջնորդ մի կը բնտռէր, և միտքս զանա-
զան և հակառակ կարծեօք ծփեալ էր, և չգիտելով
թէ ո՛ւր դադարի՝ յընտրողականութենէ անկաւ 'ի
տարակուսութիւն կամ 'ի սկեպտականութիւն. և
անտի ալ թերևս ուրիշ տեղեր կը մոլորէր, եթէ
բարեբաղդաբար Աւետարանին չդառնայի՝ նախ ան-
շուշտ մասնաւոր շնորհիւ՝ որ զիս առ այն ածէր, և
երկրորդ նաև հետզհետէ հերքելով այն ամեն վար-
դապետութիւններն՝ զորս վնասով անձինս փորձած
էի, և իմացել էի թէ ո՛րչափ անկարող էին մտացս և
սրտիս պիտոյքն յագեցնելու »:

« Երբ 'ի քրիստոնէութիւն դարձած լինելս իմա-
ցայ՝ ուղեցի այնոր աղբիւրներն ճանաչել, և սկսայ
սուրբ Գիրքն ընթեռնուլ ոչ պարսաւադէտ և բծա-
խնդիր մտքով, այլ ընդհակառակն վստահութեամբ՝
որ եթէ աստուածային խօսքն էր այնոր մէջ բովան-
դակածն՝ անշուշտ իմ սրտիս պիտի խօսէր՝ իւր զօ-
րութեամբն թափանցելով և իւր լուսովն լուսաւո-
րելով. ուստի պարզմտութեամբ զայն կ'ընթեռնուի՝
անկեղծ փափաքով ընդդրկելու զճշմարտութիւնն
եթէ այնոր մէջ հանդիպէի: Եւ յիրաւի ամեն օր
ընթերցմունքս և մտածականս յառաջ վարելով՝ լաւ
գրոց և բարի խրատուց օգնութեամբ սակաւ ժամա-
նակէն իմացայ որ մանկութեանս հաւատքն սրտիս
մէջ նորէն կը ծնանէր: Այն ատեն առանց սպասե-
լու որ երևակայութեանս ալէծուփ տարակոյսներն
բոլորովին դադարին, և առանց վհատելու առջիս
ելած մթութիւններէն և առերևոյթ հակախօսու-
թիւններէն՝ շիտակ գործադրութեանն դիմեցի և
Եկեղեցւոյ հետ հաշտուեցայ »:

« Յետոյ ինքզինքս Հարց և Վարդապետաց գրուածոց ընթերցմանն տուի. և կրօնից հին և նոր ջատագովաց գլխաւոր պաշտպանութիւններն ծայրէ 'ի ծայր կարդացի: Եւ երբ զգացի որ կատարեալ և անթերի համոզուած էի, և ճանաչելով որ Աստուծոյ մարդու և համագոյից վերաբերեալ ամեն կարեւոր ճշմարտութիւններն՝ աւելի պարզութեամբ և ամբողջութեամբ կ'ուսուցանէր քրիստոնէութեան վարդապետութիւնն՝ քան թէ ուրիշներն, միշտ ցանկացած լինելով կեանքս նուիրելու 'ի հետազօտութիւն յաւիտենական ճշմարտութեան և առ 'ի ուսուցանել զնոյն այլոց, հետեւցուցի որ լաւագոյն էր աշակերտ լինել Յիսուսի Քրիստոսի՝ քան որ և է ուրիշ վարդապետի. և այս եղև պատճառն որ որոշեցի պաշտօնեայ լինել բանի նորա և սպասաւոր, առ 'ի ունել զիշխանութիւն և զշնորհս խոստացեալս առ այնոսիկ որ խօսին յանուն նորա: Այսպէս ահա ես որ վարժապետ էի իմաստասիրութեան՝ դարձայ և եղէ քահանայ՝ առանց դադարելոյ 'ի լինելոյ իմաստասէր. վասն զի նուիրական դիտութեանց և Եկեղեցւոյ վարդապետութեանց մէջ դտի ամենէն բարձրագոյն իմաստասիրութիւնն և զիմաստութիւն գերմարդկային »:

Համառօտ ասելով, սիրելի վարժապետս, այնչափ համ առի այս քահանայիս խօսակցութենէն՝ որ հրաման խնդրեցի իրմէ նորէն գալու զինքն տեսնելու, որում և բարեսիրութեամբ հաւնեցաւ, և ամիս մի դրեթէ ամեն օր այս տեսակ նիւթոց վրայ կը խօսէինք, և օր աւուր եռանդս և յոյսս կ'աւելնար: Եւ որովհետև ամեն բանէն յառաջ ինձ յանձնել էր՝ ամեն օր գլուխ մի Աւետարան կարդալ և մտածել, և ես ալ իրեն առարկել էի թէ մէջն շատ մթին բաներ կը գտնէի՝ որ զիս կը շուարեցնէին, ինքն պարտաւորեց զիս որ այս դժուարութիւններս 'ի դիր անցընեմ,

որպէս զի յետոյ կարասցուք 'ի միասին զայնս լուծանել. վասն զի ասաց խոնարհութեամբ, միտքս դրած չեմ որ պիտի կարողանամ աստուածային խօսքին ամեն խորունկ բաներն ձեզ բացատրել. Եւ այս ծանօթութիւններս զորս խղճմտութեամբ գրի կ'առնուի՝ մեր ամեն աւուր խօսակցութեանց նիւթ լինէին. և շատ կը զարմանայի և կ'ուրախանայի տեսնելով որ իմ մտացս մութ երևցածներն երթալով կը լուսաւորէին, տարակոյսներս կը փարատէին՝ երբեմն նաև ճիշդ այն միջոցին երբ կ'ուզէի զայնս առաջարկել, այնպէս որ ես ալ ոչ տեսանէի թէ որ բանն էր զիս արգիլողն, և չէի հասկանար թէ ինչպէս չեմ հասկացած:

Ահա այս կերպով հաւատքս նորէն ինձ դարձաւ՝ նոյն եռանդեամբ ինչ որ մանկութեանս ժամանակ՝ բայց աւելի լուսաւորեալ, այնպէս որ կարեմ զայն արդարացնել և պաշտպանել թէ առաջի մտացս և թէ առաջի մարդկան: Եւ շուտով հետեւեցայ օրինակին և խրատուն այնորիկ՝ զոր Աստուած ետ ինձ 'ի հրեշտակ առաջնորդ, և հոգիս խոստովանութեամբ նորոգելէն ետև՝ որով իմ յանցանացս երկարժամանակեայ ծանր բեռն վրայէս նետելով թեթեւցայ, մեծ ուրախութիւն զգացի աստուածային կենաց հաղորդելով՝ երբ երկնային հացն ճաշակեցի՝ որ շնորհեալ է աստուածահաճոյ մարդկան: Յետոյ՝ թէպէտ և առաջնորդս զիս բոլորովին ազատ թողուց, և զիս քահանայական ճամբայն մտնելու չստիպեց, սակայն ես կամակար և ինքնայօժար կամ մանաւանդ ներքին շարժմամբ զայն որոշեցի, որովհետև առանց խիղճս չտրտմեցնելու՝ չէի կարող այն ներքին ձայնին հակառակիլ: Ահաւասիկ հիմա՝ համալսարանի վարժապետ լինելուս տեղ՝ Տաճարի նուիրեալ աշակերտ մի եմ, և շատ երջանիկ եմ մտացս և սրտիս խաղաղութիւնն գտնելով, և ինքզինքս կը պատրաս-

տեմ ուսմամբ, եկեղեցական կրթութեամբ, աղօթքով և քահանայական առաքինութեանց աշակերտութեամբն աշխատելու՝ յուսամ բոլոր ուժովս և նուիրմամբ անձինս օգնականութեամբ Բարձրելոյն՝ 'ի զարգացումն Թագաւորութեան Աստուծոյ 'ի վերայ երկրի, և վասն բարւոյ նմանեացս թէ յայսմ աշխարհի և թէ 'ի հանդերձեալն։

Կարծեմ, սիրելի վարժապետս՝ որ զայս առնելով զմասն բարին ընտրեցի՝ որ ոչ բարձցի բնաւ յինէն։ Թեթևամտութեամբ չդործեցի որպէս տեսանէք, և աւելի բանավարութեամբ այս որոշմունքս արարի քան թէ խանդիւ մտաց՝ որով յուսամ թէ աւելի հաստատուն լիցի։ Ներեցէք ինձ ձեզ խորհուրդ չհարցանելուս համար այս ճգանցս մէջ. որովհետև վախցայ որ զձեզ չտրտմեցնեմ ձեր ճամբէն դուրս ճամբայ մի բռնելով. մանաւանդ որ հակաճառելու ալ կամք չունէի և ներհակախօսութենէ ալ կը վախէի՝ որ զմեզ կարէին իրարմէ հեռացնել, զոր ամենևին ոչ կամէի, որովհետև սիրովս և երախտագիտութեամբս միշտ անբաժան պիտի մնամ 'ի ձէնջ։ Իմ միայնութեանս մէջ և յետոյ սուրբ պաշտօնիս կատարման ժամանակ պիտի չդադրիմ ձեր վրայ ալ կոչելու այն շնորհքն՝ զոր ես բարեբաղդաբար ընկալայ, որպէս զի ձեր այնքան բարի և ուղիղ հոգին ալ՝ որ միշտ ճշմարտութեան և արդարութեան սիրող եղած է՝ ինքն ալ Բարձրելոյն լուսովն լուսաւորուի, և օր մի ձեր մտաց և սրտին պանծալի բարեմասնութեանց վրայ աւելցնէք քրիստոնէի առաքինութիւնն ալ իբրև փառք և պսակ ամենայնի։

—

Վերջաբանին մէջ տեսնուեցաւ վարժապետին բարի վախճանաւն՝ որ կենաց առոյգ հասակին մէջ մեռեալ էր՝ իւր մտաւորական կարողութիւններն ամբողջ և լի հաւատով և կրօնից ամեն օգնութիւններովն՝ որ աշակերտին եռանդուն աղօթքն լսելի եղած էր։ Թերևս միոյն փրկութիւնն միւսոյն զոհադործութեան գինն ու արժէքն էր։

Վիրոֆլէ, 2 Յունիս 1867։

Ն. Օ. Կ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

—

Արդի վիճակ 7
Ինչպէս ճանաչելու է հանդերձեալ աշխարհի իրերն . . 12
Յետահայեաց տեսութիւն 15
Իմաստասէրն և ժողովրդապետ 19
— — (շարայարութիւն) 23
— — (շարայարութիւն) 27
Կէտ մահուան 30
Մահուան առջև ի՞նչ կարեմք առնել 34
Վերջին տեսաւորութիւն 39
Յետին օգնութիւն 43
Թաղումն 48
Մեռելոց հետ հաղորդակցութիւն 54
Երազ 58
Մեռելադարձ ուրուականք և ոգիներ 61
Երկիւղ մահու 66
Շրջող սեղանք 71
Մագնիսութեան փորձ 77
Կաթողիկեայ յիշատակութիւն 81
Նախախնամութիւն 89
Յիշատակութիւն անցելոց 94
« Զո՛ ոք ասեն զինէն թէ իցեմ » 100
Արդեօք Յիսուս Քրիստոս իմաստասէ՞ր մի է 104
Զմիաբանութիւն 109
Քրիստոսի գործոց զօրութիւնն 111
Քրիստոսի զօրութեան բնութիւնն ի՞նչ է 115
Արդեօք Քրիստոս գաղափա՞ր ինչ է կամ անձն առասպելեալ 119
Վերջապէս մտադրութեամբ քննեմք 125
Քրիստոնէութեան իմաստասիրութեան գաղափարն . . 128
Երրորդութիւն 131
Բանաւորականութիւն 135
Պլատոնականութիւն 139
Միութիւն անհուն 143

Տեսութիւն 'ի վերայ Երրորդութեան 150
— — (լարայարութիւն) . . 153
— — (լարայարութիւն) . . 159
— — (լարայարութիւն) . . 164
Դիպուած մի 167
Տատամսութիւն 172
— (լարայարութիւն) 177
— (լարայարութիւն) 181
Լուծումն խնդրոյն 184
Անուշահոտութիւն հոգւոյ 188
Նոր խնդիր 192
Աստուած մարդացեալ 194
Միջնորդ կամ միջին եզրն 197
Ի՞նչ պէտք էր միջնորդ, ազատարար և փրկիչ 199
Ուստի՞ է չարն 202
— (լարայարութիւն) 207
Փոխանցութիւն նախկին չարի 218
Աստուած ո՛րպէս մարդացաւ 227
ՄԱՐԻԱՄ 231
— (լարայարութիւն) 235
Մկրտութիւն 241
Գաղափար մկրտութեան 244
Զօրութիւն մկրտութեան 249
Նոր քննութիւն 253
Քրիստոսի իջանելն 'ի դժոխս 258
Յարութիւն և Համբարձումն 262
Դատաստան վերջին 266
— — (լարայարութիւն) 271
Աղջիկ մի որ կարմեղական կուսան կ'ուզէ լինել . . . 278
Ուխտք կրօնաւորութեան 288
— — (լարայարութիւն) 296
— — (լարայարութիւն) 303
Խօսակցութիւն ընդ կարմեղական կուսանի 311
— — (լարայարութիւն) 320
Հաշտութիւն 326
Կնքահայր 330
Դատաստան վերջին (Վերոտին յաւելուած) 333
Հրեշտակք 338
Աբքայութիւն 343
Դժոխք 350
Յաւիտենականութիւն պատժոց 355
— (լարայարութիւն) . . . 376

Խղճմտանաց արթննալն 388
Անհանգստութիւն և տագնապ 396
Քաւարան 402
Յարութիւն մարմնոյ 412
— (լարայարութիւն) 417
— (լարայարութիւն) 429
Ներքին ալէկոծութիւն 441
Սքանչելիք կամ Հրաշք 446
Զգուշաւոր քննութիւն 457
Հնարաւորութիւն սքանչելեաց 460
Սարսափելի յարձակումն և Անգութ յաղթութիւն . . 470
Տպաւորութիւն առաջին հաղորդութեան 480
Վերջին հարուած 485
Վերջաբան 489
Նամակ Եւգինէոսի Ն. 490

10 n

0027363

766

